

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԶԵՌԱԳՐԱՏՈՒՆ
(ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)

Բ Ա Ն Բ Ե Ր
Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ի

4

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն

1958

Լ. ԽԱՉԻԿՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ԱՆՑՅԱԼՈՒՄ
ԵՎ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆՑ*

Հայ ժողովուրդը իր կյանքի ու մաքառման երկար ու ձիգ դարերում ստեղծել ու ծառանդություն է թողել մեզ գրավոր մեծ կուլտուրա: Հայերեն հաղարավոր մագաղաթյա ու հին թղթյա ձեռագրերը փայլուն վկայական են մեր ժողովրդի ստեղծագործ շանքերի, այդ ձեռագրերի էջերում շարքաշ ու շանասեր հաղարավոր գրիչներ գրոշմել են մեր ժողովրդի պատմության, հարևան ժողովուրդների հետ նրա ունեցած քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կապերի մասին բազմաբովանդակ փաստաթղթեր, ընդօրինակել ու ապագա սերունդներին են հանձնել փիլիսոփայության, տիեզերագիտության, բժշկության, ալքիմիայի, գեղարվեստական գրականության և գիտության ու արվեստի այլ բնագավառների մասին համաշխարհային արժեք ներկայացնող հուշարձաններ:

Հայ ժողովրդի ստեղծած ձեռագիր դանձերից պահպանվել ու հասել են մեզ միայն փշրանքներ և դրանք էլ անցել են հրի ու սրի միջով, ակնատես լինելով այն եղևոններին, որոնք անպակաս են եղել հայ ժողովրդի պատմության:

Տասնյակ հաղարավոր ձեռագրեր են ոչնչացվել օտարերկրյա նվաճողների կողմից. այդ մասին կան մեծ թվով վստահելի տվյալներ. այսպես՝ 1170 թվականին սելջուկ-թուրքերին հաջողվում է խաբուսթյամբ գրավել Սյունիքի ամենաամուր և անմատչելի համարված Բաղարերդ ամրոցը, որտեղ «վասն անառիկ ամբութեանն» հավաքել էին Սյունիքի բոլոր վանքերի սրբությունները և հատկապես Տաթևի վանքի ավելի քան 10.000 ձեռագրերը: Եվ այդ բոլորը գրավվում ու ոչնչացվում է կիսավայրենի նվաճողների կողմից. «...դանհամար և դաննման սրբութիւնս,— գրում է պատմիչը,— և սպաս եկեղեցւոյն Տաթևոյ՝ փարթամ և հարուստ աթոռոյն, խաշ և վկայարանք յոսկոյ և յարծաթոյ, և անգին ակամբք և անհուն մարգարտով զարդարեալ, և կտակարանք յոլովք, որք թուով աւելի քան զ10.000, զորս ամբարեալ էին անդ: Ամենայն առ հասարակ գերի վարեցան և ցան և ցիր եղեն ընդ երեսս աշխարհի» (Ստ. Օրբելիան, Պատմութիւն նահանգին Սիսական, 1910, էջ 335—336):

Հաղարավոր ձեռագրեր են ոչնչացվել նաև սելջուկ-թուրքերին հաջորդող նվաճողների՝ մոնղոլների, օսմանյան թուրքերի և մյուս բարբարոս ասպատակողների կողմից:

* Ձեկուցված է Մատենադարանի Գիտական խորհրդի Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեզյուցիայի 40-ամյակին նվիրված ընդլայնված նիստին, 1957 թ., նոյեմբերի 29-ին:

Ողբերգական է եղել նաև Պետական մեր Մատենադարանի հիմքը կազմող էջմիածնի Մատենադարանի պատմությունը:

Հայտնի է, որ երկարատև դադարից հետո էջմիածինը կրկին սկսում է զգալի դեր կատարել հայ ժողովրդի կյանքում 1441 թվականից հետո, երբ կաթողիկոսական աթոռը Սսից տեղափոխվում է այնտեղ: Էջմիածնում և նրա մոտակայքում գտնվող վանքերում սկսում են ընդօրինակվել, հատկապես 17-րդ դարի ընթացքում, հարյուրավոր ձեռագրեր, որոնցից շատերը այսօր էլ պահվում են մեզ մոտ. և աստիճանաբար էջմիածնի վանական գրատունը դառնում է Հայաստանի ամենահարուստ գրատներից մեկը:

1668 թվականին շարադրված մի ընդարձակ հիշատակարանից տեղեկանում ենք, որ Փիլիպպոս կաթողիկոսի աթոռակալության տարիներին (1633—1655) շինարարական մեծ աշխատանքներ են կատարվում էջմիածնում. նրա եռանդուն գործունեության շնորհիվ վանքը հարստանում է ոսկյա և արծաթյա սպասներով, կերպասեղենով, ձեռք են բերվում նաև «զգրեանց բազմութիւնս զանազան մատենից, առ ի լրումն հոգևոր և մարմնաւոր ախորժակաց հասարակաց»: Փիլիպպոսին հաջորդող Հակոբ Զուղայեցի կաթողիկոսը (1655—1680), ինչպես հաղորդում է նույն հիշատակագիրը, շարունակում է շենացնել վանքը սպասներով ու ձեռագրերով. նա գրում է. «Սովաւ և ի ձեռն սորին յաւելան և սպասք յոլովք և անօթք բազմաթիւք մեծի տաճարիս. ընդ որս և մատենից, դումարութիւնք ի մի ոչ սակաւք, և նոցին խոկացողք և ի նոյնս պարապօղք յոգնակաճառք...» (Ձեռ. № 981, էջ 500ր և 502ա: Հմմտ. նաև «Արարատ» ամսագիր, 1875, էջ 373, 375 և 1888, էջ 417, 420)*:

Էջմիածնի Մատենադարանը Հակոբ Զուղայեցու ժամանակ կարգավորված հաստատություն էր և գտնվում էր հատուկ պաշտոնյայի — «գրքապանի» հսկողության ներքո: 1662 թվականին Մատենադարանի գրքապանն էր Ստեփանոս Լեհացու աշակերտներից՝ Ներսես սարկավազը: «Այլ և զիս տարորոշեալս ի սոցունց՝ զգրքապան և զծրօղ մատենիս զՆերսէս յիշել մաղթեմ» — գրել է այս Ներսեսը իր ընդօրինակած ձեռագրերից մեկի հիշատակարանում (ձեռ. № 110, էջ 467 ր):

Էջմիածնի Մատենադարանի կարգավորյալ վիճակի մասին վկայում են նաև բազմաթիվ ձեռագրերի մեջ պահպանված հին կնիքները, որոնք ունեն «Գիրքս սր. էջմիածնա է» մակագրությունը (տե՛ս օրինակ, ձեռ. № 686, էջ 222բ, ձեռ. № 667, էջ 388բ և այլն):

Գծրախտաբար 18-րդ դարի ընթացքում էջմիածինը բազմիցս ենթարկվում է թալանի պարսիկ իշխողների կողմից, այնպես որ 19-րդ դարի սկզբներին

* Այս նույն տարիներին էջմիածնում հավաքված գրասեր ու գիտնական վարդապետների մասին ուշագրություն արժանի տվյալներ է հաղորդում նաև Ստեփանոս Լեհացին, Դիոնիսիոս Արիսպազացու աշխատությունների 1662 թ. կատարած իր նոր թարգմանություն հիշատակարանում: Նա գրում է, որ թարգմանությունը կատարել է «ի խնդրոյ բարեմիա եղբարցն, որք ի սուրբ աթոռս էջմիածնին...: Քանզի զայսու ժամանակաւ բազումք էին երևելիք վարդապետք բաշարանք, բանաստեղծք, աստուածային գրոց բաջ զիտունք և հմուտք, յորոց մի էր և Առաքել վարդապետն՝ բաջ բարունի և վիպասան, որ զժամանակագրութիւնս հայրապետաց և թագաւորաց զեղեցկահարմար բանիւք գրոշմեաց և իւր յիշատակն անջնջելի կթող» (ձեռ. № 5171, էջ 368բ—369ա): Առ. Դավրիժեցու «Պատմութիւն» մեջ ևս կան հետաքրքրական տվյալներ էջմիածնի Մատենադարանի և գիտուն վարդապետների մասին (տե՛ս «Պատմութիւն», 1884, էջ 233, 263 և ն):

Էջմիածնի հարուստ Մատենադարանից մնացել էին միայն աննշան քանակությամբ ձեռագրեր:

1814 թվականին Նիկոլայ Պետրովիչ Ռուսյանցեին ուղղած իր մի նամակում Ներսես Աշտարակեցին դաժնացած գրում է. «Բայց ապաքախտ եմք առաւելապէս մեր... զի յաւուրս մեր բաղձահարուստ գրատուն Այրարատեան Աթոռոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի... կողոպտեալ յաւար մատենցաւ... Այո՛ արդարեւ երջանիկ բախտաւորութիւն համարեալ լինէր, եթէ գրատուն Արարատեան Աթոռոյն նախկին իւր հաստատութեամբն լսէր զՁեր այդպիսի քաղցր ձայն հրաւիրանաց ի կող հանդիսի Ձերումդ բաղձացեալ ամենասիրելի գրատան (կնյաղ Ռուսյանցեք խնդրել էր իր բացած գրադարանի համար ուղարկել հայերեն ձեռագրերի ընդօրինակութիւններ — Վ. Խ.), բայց զի համատարած բնութիւն աշխարհի յայսմիկ դարու տարարախտ արար և զԱթոռ հայկազնեայց առաւել ևս ի մասինս այսմիկ (խոսքը ձեռագրերի մասին է — Վ. Խ.) ազաշեմ զերկուս զայսոսիկ գրքոյկ փոքրիկ իբրև ընծայ կամ մանաւանդ նշմարանք շերմեռանդութեան կապտեալ գրատան աթոռոյն Արարատեան՝ ընկալնուլ մարդասիրարար» (Վարդան, Պատմ. Մոսկվա, 1861, Յառաջարան Մկրտիչ Էմինի):

Էջմիածնի Մատենադարանի պատմության համար նոր շրջան է սկսվում 1828 թվականից հետո, երբ Արևելյան Հայաստանը, ազատագրվելով պարսկական լծից, մտնում է ռուսական պետության հովանու տակ:

Հովհաննես կաթողիկոս Կարբեցին 1833 թվականին Գորպատի համալսարանի պրոֆ. Գ. Կլոսսիուսին գրած իր կոնդակում հայտնում է, որ «անգաղբում նվաճումների և սրածութիւնների շնորհիւ հայ ազգն ու նրա գրականութիւնն այն շափով սպառված և ոչնչացված են եղել, որ հազարավոր գրքերից հազիվ մի հազար հատ ժառանգութիւն է մնացել մեզ մեր նախնիքներից»: «Այն օրերից, — շարունակում է կաթողիկոսը, — երբ իմ հայրենիքը հանգստացել է ռուսաց կայսրների բարերար զայնսոնի տակ, հայերը ձեռնարկել են հավաքելու իրենց գրականութիւն հիշատակարանները» (տե՛ս Ն. Շահազիզ, Գիվանեաշատուր Արովյանի, Երևան, 1940, էջ 45—46 և Каталог книгм Эчмиадзинской библиотеки, изданный Г. Броссе, СПб, 1840, էջ 46—48):

Էջմիածնի Մատենադարանի կարգավորման գործով 1828 թ. զբաղվում է Մանուէլ Գյումուշխանեցին: «Ի վերայ սեղանատան, — գրում է նրա գործակիցներից Մ. Մսերյանը, — է գրատունն, յորում դնի բաղձութիւն տպագիր և գրչագիր մատենից՝ նորոց և հնոց: Այս գրատունն զուրկ գոյով ի յատուկ պաշտպանողէ և միանգամայն անկեալ ի ձեռս տգիտաց՝ կայր անխնամ. մինչև բաղձաց յընտիր մատենից ի կորուստ վարիլ և կիսոցն փտիլ. և այն՝ մինչև ցամն տեսնն 1828, յորում ժամանակի եկեալ Մանուէլ վարդապետ Կիւմիւշխանեցի ի Ղրիմոյ և տեսեալ զգրատունն յայնպիսի վիճակի խանդարման՝ եմոյժ զայն ի նորոգ կարգ և ի վայելչութիւն, աշխատակցութեամբ իմ և այլ երկուց վարդապետաց, ըստ հրամանի Ներսէս արքեպիսկոպոսի...»:

Ինչքան է տեսել այդ «կարգն ու վայելչութիւնը» որոշ չէ, բայց հայտնի է, որ 1837 թ., երբ Նիկոլայ I կայսրը այցելից էջմիածին, գրքերը դարձյալ խառն ի խուռն, անդուկների մեջ լցված, պահվում էին հանդերձատանը «թողի մեջ շաղախված» (Երիցյան, Ամ. հայ. կաթող. մասն Բ., 1895, էջ 441):

Գրանից հետո միայն, 1837 թվականին, Սինոդի հրամանով Հովհաննես կաթողիկոս Շահխաթունյանը զգալի աշխատանք է տանում Մատենադարա-

նի կարգավորման դժով և կազմում է էջմիածնում հավաքված ձեռագիր ու տպագիր գրքերի առաջին ցանկը, որը ուսերեն ու ֆրանսերեն թարգմանություններով ու առաջարանով լույս է տեսնում Պետերբուրգում, ակադ. Գ. Բրոսսեի աշխատակցությամբ, 1840 թվականին (տե՛ս Каталог книгъ Императорской Библиотеки и др. в У. С. П. Петербурга, 1898, էջ 120 և հտ.): Այդ ցանկում համառոտակի թվարկված են 312 անուն ձեռագրեր:

Նույն Հովհաննես Շահխաթունյանը մեծ ջանք է գործ դնում Մատենադարանը հարստացնելու ուղղությամբ, 1838 թվականին եկեղեցական գործերով մեկնելով Շամախի, նա խնդրում է կաթողիկոսից և ստանում իր անվամբ կոնդակ այն մասին, որ հանձնարարված է իրեն վերադարձնելու պայմանով էջմիածին բերել բոլոր այն ձեռագրերը «որ հարկաւոր դատեսցին մուծանելոյ ի տիպ, և կամ վասն հնութեանցն արժանաւորութեան առ համեմատութեան ընդ նոյնատեսակ մատեանս գրանոցի աթոռոյս»:

Նրա շնորհիվ Մատենադարանը հարստանում է բազմաթիվ նոր ձեռագրերով:

Շահխաթունյանի կազմած և Բրոսսեի հրատարակած համառոտ ցանկը, շատ պակասավոր լինելով, չէր կարող երկար ժամանակ բավարարել գիտության պահանջները, նամանավանդ, որ ձեռագրերի քանակը Մատենադարանում տարեց տարի ավելանում էր: Ընդարձակ ու խնամքով պատրաստված ձեռագրաց ցուցակի կարևորության մասին ուսական պաշտոնական անձինք մի քանի անգամ դիմումներ են անում կաթողիկոսներին: Այդ դիմումների մղումով 1860 թ. հոկտեմբերին Մատթեոս կաթողիկոսը հանձնարարում է գրադարանապետ Դանիել վարդապետ Շահնազարյանցին և երկու այլ վարդապետների՝ դասակարգել գրատան գրքերը և «կազմել սխառեմատիկ ցուցակներ և որոշել գրքերը ըստ լեզուների և առարկաների, նշանակելով առանձնապես օրինակների հնություն և բովանդակությունը»:

Այսպիսով կազմվում է և 1863 թվականին տպագրվում հրատարակչի անունով Կարենյան կոչված «Մայր ցուցակ ձեռագիր մատենից, գրադարանի սրբոյ աթոռոյն էջմիածնի» ցուցակը, որի մեջ նկարագրված են 2340 ձեռագրեր:

Էջմիածնի Մատենադարանի ձեռագրերի աճը ավելի մեծ ծավալ է ընդունում հետագա տասնամյակներում: Աղղային հնությունների, բանահյուսության, ժողովրդական ծեսերի ու սովորույթների նկատմամբ առաջացած ընդհանուր հետաքրքրության պայմաններում՝ ձեռագրերի պահպանման, նկարագրության ու կենտրոնացման գործով սկսում են զբաղվել, մի շարք կուլտուրական ու եկեղեցական հաստատություններից բացի, նաև առանձին անհատներ:

Մեր ձեռագրական բաժնում պահպանված հին ցանկերի ու ցուցակների ավյալներով 1863—1881 թթ. ընթացքում Մատենադարանը հարստանում է 331 արժեքավոր ձեռագրերով (գրանցից 88-ը պատկանում էին Տայքի ու Տիխիսի հանգուցյալ առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսին, 89-ը Կարենյան ցուցակի գլխավոր կազմող Դանիել կաթողիկոսին, 82-ը Սարգիս Զալալյանին, 14-ը Համազասպ քահանա Տեր-Ավետիքյանին, մնացածը՝ «աստի և անտի»):

1892 թվականին արդեն Մատենադարանում կար 3158 ձեռագիր:

1897 թվականին՝ 3338 ձեռագիր:

1906 թվականին՝ 3788 ձեռագիր:

Իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1913 թվականին՝ 4060 ձեռագիր:

Այս նույն տասնամյակներում ձեռագիր հավաքածուներ են ստեղծվում Բիբլիոսի ներսիսյան դպրոցում, Կարինի Սանասարյան դպրոցում, Մոսկվայի Լազարյան Տեմարանում, Նոր-Նասիֆջևանում, Պետերբուրգում և այլ վայրերում:

Էջմիածնի Մատենադարանի ճոխացման գործում մեծ ու գնահատելի աշխատանք են անում բանասեր-հոգևորականներ Սահակ Ամատունին, Մեսրոպ Տեր-Մուխիայանը, Գարեգին Հովսեփյանը և ուրիշներ: Ռուսաստանում և Եվրոպայի այլ երկրներում բարձրագույն կրթություն ստացած մի շարք բանասերներ 1880-ական թվականներից սկսած զգալի աշխատանք են կատարում նաև Էջմիածնի Մատենադարանի մեծարժեք ձեռագրերի ուսումնասիրման և հրատարակման ուղղությամբ:

Մատենադարանի պատմությունը նոր ու լուսավոր հունի մեջ է մտնում միայն Հայաստանում Սովետական կարգերի հաղթանակից՝ 1920 թ. նոյեմբերի 29-ից հետո:

ՀՍԽՀ Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով՝ բոլոր կուլտուրկրթական հիմնարկությունների հետ մեկտեղ պետականացման է ենթարկվում նաև Էջմիածնի Մատենադարանը:

1921 թ. փետրվարի 5-ի դեկրետով հանձնարարվում է Լուսժողովում՝ Աշոտ Հովհաննիսյանին Մատենադարանի բազայի վրա ստեղծել կուլտուր-պատմական ինստիտուտ, որը «նպատակ պիտի ունենա գիտական հիմքերի վրա դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրաների ուսումնասիրության գործը և միաժամանակ մասսաների սեփականություն դարձնել հնությունց, այն բոլոր հիշատակարանները, որոնք գիտական և գեղարվեստական նշանակություն ունեն և կարող են աղբյուր դառնալ կուլտուրական նոր արժեքների ստեղծագործության»:

Ինստիտուտում սկսված աշխատանքը ընդհատվեց փետրվարյան ավանտյուրայի օրերին: Մատենադարանի պաշտպանության համար զենք վերցրած երիտասարդ գիտնական, Էջմիածնի կուլտուրական հիմնարկների կոմիսար Լ. Լիսիցյանին՝ գաղազած դաշնակիները բանտարկում են, և նա սպանվում է 1921 թվականի փետրվարի 18-ին՝ մի խումբ հարբած մուսուլմանների կողմից:

Մատենադարանում աշխատանքները վերսկսվում են ավանտյուրայի վերացումից հետո. 1921 թվականի ընթացքում լույս են ընծայվում՝ կեղծ-Շաղուհ Բազրատունու Պատմությունը, Արրահամ Խոստովանողի «Վկայք Արևելից»-ը և այլ աշխատություններ, նյութեր են հավաքվում Էջմիածնի գիտ. ինստիտուտի «Թանրերի» համար (որի 1—2 միացյալ համարը լույս է տեսնում 1922 թ.), կաղմակերպվում են մի շարք դասախոսություններ և այլն:

Սկսվում է նաև դրադարանի, արխիվային փաստաթղթերի ու ձեռագրատան կարգավորումը:

Այս ժամանակ Մատենադարանում պահվում էին միայն 1915 թվականին Վասպուրականից (Վանից, Կտուցից, Աղթամարից և այլ վայրերից) բերված 1545 համար ձեռագրերը (որոնց շարքում ցուցակազրված էին նաև արաբատառ ձեռագրեր, հնատիպ գրքեր ու պատառիկներ), ինչպես նաև Թավրիզից ստացված 83 ձեռագրերը և Մատենադարանի կողմից ձեռք բերվածները՝ ընդամենը 1730 ձեռագիր:

էջմիածնի Մատենադարանի բուն հավաքածուն, բաղկացած 4060 ձեռագրերից, այդ ժամանակ պահվում էր Մոսկվայի հայկական եկեղեցում:

Պետական Մատենադարանի վարչությունը 20-ական թվականներին զբաղված էր հիմնականում տարրեր վայրերից ձեռագրեր հավաքելու և ձեռագրական ֆոնդը, արխիվը և զբաղարանը հարստացնելու կարևոր աշխատանքով:

1920-ական թվականներին Մատենադարանի վարչության, հատկապես Սենեքերիմ Տեր-Հակոբյանի եռանդուն գործունեության հետևանքով, Լուսժողկոմ Ասքանազ Մոսվյանի օժանդակությամբ՝ Մոսկվայից ստացվում են պատերազմի ժամանակ այնտեղ տարված ձեռագրերը. Մատենադարանի ձեռագրական հավաքածուի մեջ են մտնում նաև Լազարյան ձեռարանի 219 ձեռագրերը, Գևորգյան ձեռարանի 56 ձեռագրերը և մի շարք այլ, մեծ ու փոքր հավաքածուներ: Նոր թափ է ստանում Հայաստանի շրջաններից ձեռագրեր հավաքելու կարևոր աշխատանքը:

Ձեռագրեր են հավաքվում նաև ՀԽՍՀ Գրական թանգարանում (Գրական թանգարանի հավաքածուն—բաղկացած 1154 ձեռագրերից—1938 թվականին միացվում է Մատենադարանին):

Հարյուրավոր ձեռագրերով հարստանում են նաև Մատենադարանի օտար լեզուներով ձեռագրերի, պատառիկների և հմայիլների ֆոնդերը. այնպես որ այսօր—Մատենադարանի պետականացման 37-րդ տարում—ձեռագրական մեր հավաքածուն աճել է գրեթե երեք անգամ. մենք այժմ ունենք 9690 հայերեն ձեռագիր, 675 օտար լեզուներով ձեռագիր, 1838 պատառիկ, շուրջ 3000 պահպանակ-պատառիկ, 155 հայերեն հմայիլ:

Համապատասխանորեն աճել են նաև Մատենադարանի արխիվային, հին տպագիր գրականության, մամուլի ու զբաղարանային բաժինները:

Այսպիսով, պարզ է դառնում, որ հարյուրամյակների պատմություն ունեցող մեր Մատենադարանը իսպառ քայքայման վիճակից դուրս է գալիս 1828 թվականից հետո, երբ Արևելյան Հայաստանը թռթափելով պարսից բռնապետական լուծը՝ մտնում է Ռուսական կայսրության կազմի մեջ: Նա բուռն վերելքի ու զարգացման շրջան է ապրում միայն Հոկտեմբերյան Մեծ սոցիալիստիկ հեղափոխության և Հայաստանում Սովետական կարգերի հաստատումից հետո:

Սովետական Մատենադարանը տոնում է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ սոցիալիստիկ 40-ամյակը ոչ միայն իր ձեռագրական ֆոնդերի հսկայական աճը բացահայտող ցուցանիշներով:

Սովետական իշխանության տարիներին մեծ աշխատանք է տարվել Մատենադարանում նաև 1) ձեռագրերի պահպանման, բուժման ու վերանորոգման, 2) ձեռագրերի գիտական նկարագրության ու ցուցակագրման և 3) ձեռագիր բնագրերի հրատարակման և ուսումնասիրության գծով:

Համառոտակի անդրադառնանք այդ բնագավառներին.

Հայկական ձեռագրերի շարքաշ ընդօրինակողները՝ միջնադարյան գրիչները, իրենց հիշատակարաններում, որոնք մեջ արժեքավոր տվյալներ էին հաղորդում ձեռագրերի արտադրման հանգամանքների ու ժողովրդի կյանքի ծանր պայմանների մասին, հաճախ դիմում են իրենց ապագա ընթերցողներին ու խնդրում լավ խնամք տանել ձեռագրերի նկատմամբ:

«Ո՛վ, քահանայք, առաջինք և յետինք, լաւ խնամով պահեցէք և կարդացէք, զի զիրքն մարդոյ հօգի է և կեանք. իմ դատաստանն, թէ գրեանքս շէին՝

և ա աշխարհըս ամէն ի կապաշտութիւն անկանէր»—գրում է Կարապետ գրիչը 1413 թվականին:

«Եւ ով որ որ հանդիպի այսմ տառիս կարգալով, կամ տեսանելով, կամ գաղափարելով, նախախնամելով պահեսցէ զգիրքս և լաթով բռնեսցէ և մի իշխեսցէ զրոցէս պարսպ թուղթ կարել»—խնդրում է նրան ժամանակակից Սամուել գրիչը:

«Եւ ով որ,— գրում է մի այլ գրիչ,— զպատուերքս ի տեղ պահէ, և խնամով և լաթով բռնէ, և ձէթ և մոմ շկաթեցուցանէ՝ օրհնի յաստուծոյ» և այլն:

Իրենց գրքերի ապագա տերերին ուղղված այս խրատները, դժբախտաբար, ցանկալի արդյունք թիշ էին տալիս: Միջնադարյան վանքերին կից գրատներում ու պահեստներում, խոնավութեան, վատ խնամքի ու անբարենպաստ պայմանների շնորհիվ, ոչնչանում ու ոչնչացվում էին հազարավոր ձեռագրեր:

Մանոթանանք այս հայտարարությունը հաստատող մի-երկու փաստի հետ:

Գրիգոր Դարանաղեցին իր ժամանակագրության մեջ, խոսելով Երզնկայի մտաերթում գտնվող վանքերում պահվող ձեռագրերի մասին, գրում է. «Եւ բազում գրեանք (կան) ի յնրկանի վանս, և ի Կայիփոսին, այլ նմանապէս և յԱւագն վանքն՝ այլ առաւելապէս: Բայց ի Լուսաւորիչն ոչ կայ այժմ. վասն ամայի անապատ լինելոյն և սաստիկ ձմեռան ձեանն, որ վասն ահի թալանաւորացն ի յայրս և ի Երպա վիմաց թաքուցանելով, յանկարծ ձիւնն ծածկելով և հողմոց հոսմանց զայրս և զժերպս լնելով և կորուսանելով զվարդապետական գրեանսն: Որպէս տեսի մէկ գիրք մեծ, որ այնչափ փառեալ էր և ապականեալ և ջնջեալ ամենայն գրոյ նշմարանքն, որ մէկ բան և գրուց չէր ընթեռնուիր, այնպէս էր կորեր և ջնջուեր նորա գրեանքն» (ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1915, էջ 510—511):

Վատ խնամքի հետևանքով ջնջվում էին հազարավոր արժեքավոր ձեռագրերի «գրոյ նշմարանքն» և նրանք կամ թաղվում էին հողի տակ, կամ էլ հրո ճարակ դառնում:

ԺԶ դարի կեսերին՝ «ի դառնութեան ժամանակիս, որ այլազգիքն կու նեղացնէին» Մշոյ սուրբ Կարապետի վանականները վանքի Մատենադարանի բազմաթիվ ձեռագրերը պահեցին «ի դարան սուրբ Կարապետին և անփոյթ արարին, զի զլիսաւոր ոչ գոյր»: Տարիներ անցան և երբ կրկին բացին դարանը, տեսան, որ «փրղեալ էր թէ գիրքեր ու թէ աստուածաշունչ ու թէ աւետարան, և կայր որ ի կարդալ չէր գալ՝ անփոփեցին ի հողն»:

Լսելով այս մասին Միմեոն սարկավագը, որ գրասեր մեկն էր, հողի տակից հանելով բերել է տալիս այդ գրքերը Համթի և այն ինչ հնարավոր էր՝ նորոգում ու կրկին հանձնում է սուրբ Կարապետի վանքին:

Հրաշքով փրկված այդ ձեռագրերից է նաև Թորոս Ռոսլինին վերագրվող, հիասքանչ մանրանկարներ ունեցող ավետարանը, որն այժմ պահվում է մեր Մատենադարանում № 9422-ի տակ: Նրա մանրանկարները թիշ են տուժել վանքի խոնավ դարանում և հողի մեջ պահվելուց. և եթե այսքան թանկագին ձեռագիրը վանքի տղետ վանականները հնարավոր են համարել թաղել հողի տակ, որպես արգեն «մահացած» ձեռագիր, ապա ինչպե՞ս կվարվեին նրանք սովորական, մանրանկարներ չունեցող ձեռագրերի նկատմամբ, ըստ ինքյան հասկանալի է:

Մեծաքանակ ու հնագույն ձեռագրերի տղետ վանականների կողմից ոչըն-

չացվելու բազմաթիվ փաստերից ծանոթանանք վերջերս միայն հայտնի դարձած իրոք ողբերգական մի փաստի հետ: 1777 թ. Հաղբատի առաջնորդ է դառնում ոմն Աբրահամ Թեքիրդաղցի. սա իր «լալիրչ ու ազահ» սարկավազ Պողոսի միջոցով հանել է տալիս Ջրաղացի ձորի մեծ քարայրում պահվող անհամար ձեռագրերը. «Եւ ահա զայնչափ բազմութիւն մատենից,— գրում է դեպքերին գրեթե ժամանակակից մեկը,— չգիտեմ յի՞նչ պատճառս Աբրահամ վարդապետ ամսօրեայ ժամանակօք աշխատեալ ընդ սարկաւազի իւրում բովանդակ ի վայր իջուցանէ, և բերեալ աստ ի վանքս դնէ ի ներքնայարկն զանգատան. և յոչ բաւեալ տեղոյն զբովանդակն տանել՝ լնու և յայլ զանազան տեղիս՝ ի խորանս և ի մատրունս. յորմէ օր ըստ օրէ պակասեալ, ցրուեալ և յափշտակեալ ի գոզոց, և յամենեցունց, սրոց մի անգամ հասին ձեռք. այժմ և ոչ տեսրակ մի ի նոցունց երևի...»

Ասի յակնատեսից, թէ վերոյիշատակեալ Պետրոս սարկաւազ ըզյուրովս ի մատենից անտի, որ փտեալք էին ըստ մասին, կամ ցրուեալք ի թերթս թերթս և ի տեսրակս, ժողովեալ առ հասարակ հանդէպ զանգատան դրան՝ իբրև տասն կամ երկուտասան ոտնաչափ թանձրութեամբ, հուր էարկ և այրեաց զամենայն իբրև զանպիտան» («Քաղմավէպ», 1956, էջ 109—110):

Այսպիսով, բարբարոսաբար ոչնչացվում են միջնադարյան հայկական հրելատուրայի ամենախոշոր օջախներից մեկի՝ Հաղբատի մեծահարուստ մատենադարանի ձեռագրական զանձերը:

Տխուր փաստ ունենք նաև էջմիածնի մատենադարանի և արխիվի պատմական մեծ արժեք ներկայացնող բազմաթիվ փաստաթղթերի զայրացուցիչ ոչնչացման մասին: 1821 թվականին, երբ եփրեմ կաթողիկոսը զանվում էր Հաղբատի վանքում, ներսես Աշտարակեցու կարգադրութեամբ էջմիածնից Հաղբատ են տարվում երեխ քնա փաստաթղթեր: Դրանց «արժեքավորումն» ու «ընտրությունը» հանձնվում է մի քանի երիտասարդ սարկավազների (որոնց թվում նաև Մ. Թաղիադյանին). նրանց հանձնարարվում է ընտրել ու պահել միայն պարտամուրհակները, կալվածագրերը և նման կարգի թղթերը, որոնք անտեսական նշանակություն ունենին («յորս գտանէաք զթիւ և զհնչիւն դրամոց»), իսկ ողջ մնացածը, տարիներ հետո դառնորեն ու մեծ ափսոսանքով հիշում է Մ. Թաղիադյանը, «ժողովեալ ի հուր՝ յաճիւն դատէաք» («Ճանապարհորդութիւն ի Հայս», էջ 333—334):

Վերը առիթ ունեցանք նշելու, որ Պարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրումից հետո որոշ քաղեր են արվում էջմիածնի Մատենադարանի զանձերի պահպանման գործը բարվոքելու ուղղութեամբ:

1837 թվականին ընդարձակում են գրատունը, միացնելով նրան երկու գմբեթաբաժին, որով և հնարավորություն է ստեղծվում իրար վրա սեղմված գրքերը դասակարգել ըստ բովանդակության՝ առանձին բաժիններով: Այս մասին Հովհաննես Ծախաթունյանը գրում է. «...Այլ գուրով տեղին տակափն փորր՝ գրեա թէ ի վերայ միմեանց կուտակեալ կաշին մատեանքն. վասն որոյ յանցեալ 1837 ամի զերկու գմբեթաբաժին տեղի ևս ի համբարանոցէն՝ որ կից յարևելից նորա, բաժանեալ միացուցին ընդ այս գրանոց, և եղև երկու յարկ գրանոցն և ընդարձակեցաւ տեղի մատենիցն, ուստի և մատեանքն նոր ի նորոյ կարգադրեցան ըստ նիւթոյն՝ ի մետասան բաժինս...»:

Մակայն նույնիսկ այս միջոցառումներով ձեռագրերի պահպանման գործը շատ հեռու էր դուրս բավարար համարվելուց: Մատենադարանը հանձնված էր

այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք, ինչպես հայտնում է Սահակ Ամատունին 1892 թվականին, «կուտեցին ի գլուխ Մատենադարանին զվնաս մեծ՝ մերկացուցանելով զայն ի բազում սխտանի մատենից, որք տարապարտ ի կորուստ գնացին է զի ի ձեռս օտար և անբարեխիղճ արանց, և է զի ի ձեռս իսկ հսկողաց Մատենադարանին»:

Ձեռագրերի պահպանման համար նորմալ պայմաններ ստեղծելու գործով անցյալում ևս մտահոգվողներ եղել են. սակայն այդ մեծ նպատակի համար վանքի ղեկավարությունը անհրաժեշտ չէր համարում տրամադրել նույնիսկ շնչին միջոցներ: Ձեռագրերը, մինչև 1910 թվականը էջմիածնում պահվում էին այնպիսի մի շենքում, որը ոչնչով չէր հարմարեցված համաշխարհային նշանակություն ունեցող կուլտուրական արժեքների պահպանման համար: Ձեռագրերը փշանում էին և՛ խոնավությունից, և՛ թուղթ ոչնչացնող միջատներից ու միկրոօրգանիզմից: Այս մասին հետաքրքրաշարժ տեղեկություններ է հաղորդում Ն. Մառը 1893 թվականի մայիսի 8-ին Գ. Տեր-Մկրտչյանին՝ գրած նամակում: Նա գրում է. «... Ի մասնավորի էջմիածնա Մատենադարանի վերաբերմամբ սխտի ասեմ, որ նրա ներքին կողմ չէ հավասարապես լուսավորված. և համոզված եմ, որ չլուսավորված կողմը պահվող ձեռագիրներն ամենամեծ վնաս են կրում, մանավանդ պատի մեջ հարմարված խոնավ պահեստների մեջ: Վերջիններից հարկավոր է ձեռագիրներն տեղափոխել առանձին պատրաստված պահարանները. իսկ երբ ակնարկված պատերը պարապ կմնան (Հաղարապատին կողմը)՝ պատերին մեջ լուսամուտները պատրաստել, որ վնասակար խարամանի սերունդ ճճի, ցեցեր և այլն՝ անհետացած և ջնջված լինեն ի սպառ, զորությունը քարի արամազական լուսո և արեգակին:

Ավա՛ղ, որ ես տկար եմ և անընդունակ գոնեա հիմա փոքր լումայով ամենասիրելի Մատենադարանին հօգնություն հասնել. մի քանի հարյուրյակ բավական է բոլորովին շար Ա(հ)րիմանի ձեռքից փրկելու (համար) այն թանգարանը, որի իսկական արժեքը գնահատել միայն ապագային է թողյալ»: (Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. № 218, վավ. 16):

Հայկական ձեռագրերը «շար Ահրիմանի ձեռքից փրկելու» մտահոգությամբ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներում գրվում են հոգվածներ, խոսվում է նաև այն մասին, որ Մատենադարանի համար անհրաժեշտ է կառուցել հատուկ շենք: Ի վերջո 1910 թվականին էջմիածնում կառուցվում է այն շենքը, որը կանգուն է մինչև օրս: Այստեղ ձեռագրերը պահվում են մինչև 1939 թվականը — մինչև Մատենադարանի տեղափոխումը Երևան:

Չնայած այն բանին, որ 1910 թվականին էջմիածնում կառուցված շենքը նախագծվել էր հատուկ Մատենադարանի համար, սակայն ձեռագրերի պահպանմանը հատկացված դահլիճը՝ իր չափերով ու դիրքով բնավ հարմար չէր այդ նպատակին: Այն գտնվում էր շենքի ամենախոնավ ու արև չտեսնող մասում, զուրկ էր օդափոխության տարրական միջոցներից և այլն:

Ձեռագրերի պահպանման գործը պատշաճ բարձրության վրա դնելու մտահոգությամբ Սովետական Հայաստանի կառավարությունը 1939 թվականին Մատենադարանը էջմիածնից տեղափոխեց Երևան, ժամանակավորապես հատկացնելով նրան Ալ. Մյասնիկյանի անվան Պետական գրադարանի նորակառույց շենքի 2-րդ հարկի մի մասը և վերին հարկը գրեթե ամբողջությամբ: Միայն այստեղ՝ Երևանում՝ հնարավորություն ստեղծվեց ձեռագրերի պահպանու-

թյունը կազմակերպել գիտական սկզբունքներով: Ձեռագրերը տեղադրվեցին մի մեծ, օդառատ ու շոր սրահում, որտեղ օդի ջերմաստիճանը և հարաբերական խոնավությունը միայն շնչին տատանումներ են տալիս ձեռագրերի պահպանության համար գիտության կողմից մշակված օրինակելի նորմերից:

Նոր շենքում բավարար պայմաններ ստեղծվեցին նաև Մատենադարանի արխիվային բաժնի տասնյակ-հազարավոր փաստաթղթերի, հնատիպ գրքերի, մամուլի և դրականության պահպանման համար. առաջին անգամ Մատենադարանի դարավոր պատմության մեջ՝ ստեղծվեց միկրոթիոլոգիական, քիմիական ու լուսանկարչական լաբորատորիա և կազմատուն՝ քայքայված ու հիվանդ ձեռագրերի բուժման ու վերանորոգման, արժեքավոր ձեռագրերի լուսանկարման և անկազմ ձեռագրերը կազմելու նպատակներով:

Այդ լաբորատորիան իր գոյություն 17 տարիներում խոշոր աշխատանք է տարել ձեռագրերի ու փաստաթղթերի երկարակեցությունը ապահովելու ուղղությամբ:

Բոլոր ձեռագրերը ենթարկվել են թերթային մաքրման և ախտահանման: Հիվանդ ձեռագրերից շատերը բուժվել են գիտության կողմից մշակված սկզբունքներով, հույժ քայքայված, վարակված թղթյա ձեռագրերից մի քանիսը ամբողջով են ժելատինային լուծույթով և շուրջ 120 ձեռագրեր դուրս բերվել ցեմենտացված միճակից ու վերանորոգվել: Միկրոթիոլոգիական լաբորատորիան փորձեր է կատարում թղթի քայքայում առաջացնող միկրոօրգանիզմների դեմ էֆեկտիվ պայքար կազմակերպելու ուղղությամբ, զբաղվում է հին կազմերի շորացած կաշիների էլաստիկությունը վերականգնելու և բազմաթիվ այլ գործնական կարևոր նշանակություն ունեցող աշխատանքներով:

Հարյուրավոր անկազմ ու կազմահան ձեռագրեր և հազարավոր տպագիր գրքեր կազմվել են Մատենադարանը էջմիածնից Երևան տեղափոխելուց հետո և այլն:

Այսպիսով, հորելյանական այս օրերին, մենք առանց չափազանցության կարող ենք արձանագրել, որ համաշխարհային կուլտուրայի գանձարանում իրենց պատշաճ տեղը դրավող հայերեն ձեռագրերի կորուստից փրկելու և նրանց, պահպանման համար նորմալ պայմաններ ստեղծելու մեծ միջոցներ ու ջանքեր պահանջող աշխատանքները գիտական հիմքերի վրա դրվեցին միայն Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո:

Սակայն Կոմունիստական պարտիան ու Սովետական կառավարությունը, ըստ արժանվույն գնահատելով հայերեն ձեռագրերի գիտական նշանակությունը, պատրաստում են մեղ համար մի նվեր, որին երազել անգամ չէին կարող անցյալի մեր կուլտուրայի գործիչներն ու գրասեր հասարակայնությունը:

Մեր մայրաքաղաքի ամենաաչքի ընկնող տեղերից մեկում բարձրացել է արդեն բազալտե մի կոթող—ապագա Մատենադարանի շենքը, որտեղ ձեռագրերի պահպանման և ուսումնասիրության համար ստեղծվում են առաջնակարգ պայմաններ:

Մի քանի խոսք ձեռագրերի գիտական նկարագրության և ցուցակագրման աշխատանքների մասին.

Միջնադարյան մի գրիչ իրավացիորեն նկատել է, որ «Գիրք փակեալ կուռք են»: Չարքաշ գրիչներից շատերն են մտածել այդպիս. իրենց հիշատակարաններում քազմիցս նշելով, որ «եթէ խնդրեսցեն դսա վասն կարգալոյ կամ օրի-

նակելոյ, մի խնայեսցին, վասնզի զսա այսր աղազաւ եմ գրել, զի ամենեքեան օգտեսցին»:

Գրքերը և արխիվային փաստաթղթերը կուռք շղարձնելու, մեր ձեռագրական ֆոնդերը գիտական հասարակայնության օգտագործմանը հանձնելու համար մեր ժամանակներում խիստ անհրաժեշտ են բարձրորակ ցուցակները, նկարագրություններն և անոտացիաները:

Արդեն ասացինք, որ էջմիածնի Մատենադարանի միակ ցուցակը, 1863 թվականին լույս բնծայված ցուցակն է եղել, որտեղ համառոտակի և բազմաթիվ սխալներով թվարկվել են այն ժամանակ էջմիածնում գտնվող ընդամենը 2340 ձեռագրերը: Այն կոչվում է «Մայր ցուցակ», սակայն ըստ էության համառոտ ցանկից ավելի տվյալներ չի պարունակում:

1864 թվականին, լինելով Պետրոպոլիտոլյան բերդի կալանավոր, ռուսացիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանը զգալի աշխատանք է կատարել Կարենյան «Մայր ցուցակի» հիման վրա էջմիածնի Մատենադարանի ձեռագիր նյութերի ուղեցույց սիստեմատիկ ցուցակ կազմելու գծով: Այդ նպատակով նա լրացրել է 371 քարտ, յուրաքանչյուրի վրա գրելով ձեռագրերում հանդիպող հեղինակների անունները (ինչպես նաև գիտության տարրեր բնագավառների վերնագրեր), և տվել է այն ձեռագրերի համարները, որոնցում ընդօրինակված են տվյալ հեղինակի աշխատանքները: Դժբախտաբար Նալբանդյանի աշխատանքն անավարտ է մնացել. նրա կազմած քարտերը, որոնք այժմ պահվում են ՀՍՍՌ Գրականության թանգարանում (Նալբանդյանի արխիվ, թղթ. № 22), վկայում են, թե հայագիտության զարգացման համար որպիսի նշանակություն է վերագրել Նալբանդյանը հայերեն ձեռագրերի թեմատիկ ցուցակներին (Մ. Ավդալբեգյան «Թանասիրական ճշգրտումներ», «Ճեղհկազիր», Հասարակական գիտություններ, 1957, № 1, էջ 97—100):

Ձեռագրերի և արխիվային փաստաթղթերի ցուցակագրման ու նկարագրման աշխատանքները Մատենադարանում գիտական հիմքերի վրա դրվելիցին միայն սովետական կարգերի հաղթանակից և Մատենադարանի պետականացումից հետո:

Տարիների համառ աշխատանքի շնորհիվ այժմ Մատենադարանը իր ֆոնդերից օգտվողների տրամադրության տակ է դրել մի շարք ցուցակներ, մատենագիտական ուղեցույցներ, անոտացիաներ ու քարտադրանքներ:

Համառոտակի թվարկենք դրանք.

Ձեռագրական բաժին

1) Բոլոր ձեռագրերը նկարագրված են գույքաձևատյաններում: Ճուրաքանչյուր ձեռագրի նկարագրության մեջ տվյալներ են տրված ձեռագրի թերթերի քանակի, մեծության, նյութի, կաղմի, վիճակի, գրության ժամանակի, վայրի, դրչի, ստացողի և նորոգողի մասին: Տրված է նաև ձեռագրի վերնագիրը, եթե այն պարունակում է մի բնագիր, և համառոտակի, միայն կարևոր նյութերի թվարկումը, եթե ձեռագիրը ժողովածու է այլևայլ բնագրերի:

2) Բացի վերոհիշյալից, ձեռագրերը ունեն մայր քարտեր, նույն տվյալներով:

3) Ստեղծվել են պատմագրության, փիլիսոփայության, բերականագի-

տուժյան, աշխարհագրության, տիեզերագիտության, բժշկության, ալքիմիայի, գեղարվեստական շափածո գրականության, գեղարվեստական արձակի և այլ գիտությունների վերաբերող ուղեցույց ցուցակներ:

Թվարկված ցուցակներից յուրաքանչյուրում այբբենական դասավորության մեջ գրված են այն հեղինակների անունները, որոնցից աշխատություններ են հասել գիտության տվյալ մասնաճյուղին վերաբերվող: Այնուհետև, հեղինակի մասին համառոտ տեղեկություններից հետո, թվարկվում են նրա աշխատությունները և այն ձևագրերի համարներն ու էջերը, որոնցում ընդօրինակված են խնդրի առարկա աշխատությունները:

Մատենագիտական ուղեցույց այդ ցուցակները մեծ շափով օգնում են Մատենադարանի ձևագրերը ուսումնասիրող մասնագետներին, և նրանք, առանց ժամանակի կորստի, հեշտությամբ կարողանում են գտնել իրենց հետաքրքրող նյութերը շուրջ 10 հազար ստվարածավալ ձևագրերի մեջ:

Այս ցուցակներից մեկը—փիլիսոփայական գրականության ցուցակը—արդեն լույս է տեսել և ըստ արժանվույն գնահատվել կենտրոնական ու տեղական մամուլում:

4) Ստեղծվել են նաև ճառերնախնդրների ու Գանձարանների մեջ եղող նյութերի ցուցակներ, ինչպես նաև ցուցակ ծիսական գրքերի (Ավետարաններ, Հայսմավուրքներ, Մաշտոցներ և այլն):

5) Ուսումնասիրողները մեծ շափով օգտագործում են նաև ձևագրերի նյութերի ընդարձակ քարտարանը, որտեղ նույնպես քարտերը դասավորված են ըստ գիտության մասնաճյուղերի, ինչպես և ձևագրերի ժամանակագրական քարտարանը:

Արխիվային բաժին

1) Արխիվային բաժինն ունի իր ֆոնդերի ուղեցույց ցանկը և 2) բոլոր ֆոնդերի (Կաթողիկոսական, Երիցյանի, Անհատական արխիվների, Լազարյանների արխիվի, Սինոդի և այլն) փաստաթղթերի անոտացիոն ցուցակները:

Այս ցուցակներում նկարագրված են ու անոտացիայի ենթարկված արխիվային բոլոր փաստաթղթերը առանձին-առանձին: Այնպես որ ուսումնասիրողը միայն այս ցուցակները ձեռքի տակ ունենալով, առանց փաստաթղթերին դիմելու, հեշտությամբ գտնում է շուրջ 200.000 արխիվային փաստաթղթերի ծովում իրեն հետաքրքրող հարցերին վերաբերող նյութերը*:

Աշխատելով Մատենադարանի արխիվում ակադ. Ն. Տարլին 1944 թվականին Մատենադարանի այցելուների մատչանում այս ցուցակների մասին գրել է. «Շատ արխիվներ կարող էին սովորել այստեղ դարմանալի խելացի ու լրիվ այսպիսի գույքամատչաններ կազմելու գործը»:

* Պետ. Մատենադարանի արխիվային բաժնի հիմնական ֆոնդերն են.

1. Կաթողիկոսական դիվան—պարունակում է 35,761 վավերագիր.

2. Անհատական արխիվներ—պարունակում է 36,743 վավերագիր.

3. Կուլտուրական հիմնարկների ֆոնդ—պարունակում է 17,120 վավերագիր.

4. Էջմիածնի սինոդի ֆոնդ—պարունակում է շուրջ 100,000 գործ և վավերագիր:

Արխիվային բաժնի ֆոնդերը տարեց տարի ճոխանում են նոր ձևեր բերվող վավերագրերով:

3) Արխիվային բաժինը ստեղծել է նաև իր նյութերի թեմատիկ քարտաբանը, որը սակայն մեծ չափով լրացման ու ճշտման կարիք է զգում:

Գրադարան և մամուլի բաժին

Գրադարանն ու մամուլի բաժինն ունեն.

1) Գույքամատյաններ:

2) Հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով բոլոր գրքերի, օրաթերթերի և ամսագրերի ցուցակներ ու քարտարաններ:

3) Հնատիպ գրքերի մանրամասն տվյալներով մաշք քարտեր ու ցուցակ: Վերջերս սկսված են աշխատանքներ հայագիտական գրքերի ուղեցույց կազմելու գծով:

Մենք թվարկեցինք այստեղ Մատենադարանում գոյություն ունեցող ցուցակներից ու քարտարաններից միայն կարևորները: Այս թուղթիկ թվարկումն իսկ ցույց է տալիս, որ Մատենադարանի ֆոնդերի նկարագրության ու ցուցակագրման գծով Սովետական իշխանության տարիներին զգալի աշխատանք է տարվել:

Կատարված այդ աշխատանքի շնորհիվ է մասամբ, որ մեր ձեռագրական դանձերը դադարել են «կուռք» լինելուց և մեծ չափով նպաստել են սովետական հայագիտության զարգացմանը:

Բնագրերի հրատարակման և ուսումնասիրման գծով մինչև սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում զբաղվում էին անհատ մարդիկ, իրենց ձեռներեցությամբ, հաճախ մեծ զրկանքներ ու դժվարություններ հաղթահարելով:

Ստեփանոս Մալխասյանցը նշանավոր բանասեր Նորայր Բյուզանդացուն 1903 թ. դեկտեմբերի 30-ին գրած նամակում, խոսելով «Պատմագիրք հայոց» մեծարժեք շարքի հրատարակիչ-բանասերների առջև ծառայած նյութական դժվարությունների մասին, հայտնում է, որ նրանք «մաշքների հին գրականության օգտին ու պատվին նվիրվելով և հանգանակության ու մուրացկանության միջոցով դրամ հավաքելով» մեծ զրկանքներով են միայն կարողանում աշխատել հայագիտության բնագավառում:

Արժե ծանոթանալ նաև Ն. Բյուզանդացու նամակին (տե՛ս «Մշակ», 1904, № 254, Ստ. Մալխասյանցի «Մոռացված թէ ոչ» հոդվածը), որտեղ ծերունի ու բազմավաստակ բանասերը իր ծանր վիճակի մասին ի միջի ալոց գրում էր. «Արդարև գրեթե 45 տարի է, որ պարապած եմ և կպարապիմ հայերեն մատենագրության և լեզվի, «ամբողջ կեանքս մաշեցուցած եմ» (ձեր իսկ խոսքերով)՝ դմեր հին հեղինակաց աղավաղյալ բնագիրներն հարդարելու և լուսարանելու: Անբնդհատ և անխոնջ աշխատությանս պտուղն եղած է՝ ընդ ամենայն երկու հազար երկու հարիւր (2.200) ֆրանկ»:

«Ըմ ժամանակիս հայոց անդրաշուքներն և անտարբերությունն,— դառնացած իր վիճակից գրում է նշանավոր բանասերը,— ի գերեզման հուղարկեց զիմ սիրելի ամուսինս, իմ ժամանակիս հայոց անդրաշուքներն և անտարբերությունն վաղուց սովամահ սատակած էր և զիս...»:

Այսպիսի պայմաններում, բնականորեն, էջմիածնի Մատենադարանի ձեռագրական դանձերի հրատարակության և ուսումնասիրման գծով զբաղվում էին

միայն մի քանի էնտուզիաստ քանասերներ և նրանց աշխատանքը՝ պատահական ու միակողմանի բնույթ էր կրում:

Հայագիտության համար մեծ նշանակություն ունեցավ «Պատմագիրք հայոց»-ի դիտական բնագրերի շարքի հրատարակման ուղղությամբ անցյալի մեր նշանավոր քանասերների կողմից կատարված աշխատանքը: Մ. Աբեղյանի, Գալուստ Տեր-Մկրտչյանի, Սա. Մալխասյանցի, Ս. Կանայանցի, Ս. Հարությունյանի անձնվեր ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ հրատարակել Ղազար Փարպեցու (1904), Ազաթանգեղոսի (1909) և Մովսես Խորենացու (1913) Պատմությունների դիտական բնագրերը:

Գալուստ Տեր-Մկրտչյանը «Արարատ»-ի էջերում և առանձին բրոշյուրներով լույս ընծայեց Անանիա Շիրակացու և այլ հեղինակների մի շարք աշխատությունները, հանգուցյալ ակադեմիկոսներ Հ. Մանանդյանն ու Հ. Աճառյանը լույս ընծայեցին «Հայոց նոր վկաները» սովորածավալ ու արժեքավոր ժողովածուն, Կ. Տեր-Մկրտչյանը և Ն. Տեր-Մինասյանը հայտնաբերեցին և հրատարակեցին վաղ շրջանի եկեղեցական պատմության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող աստվածաբանական մի-երկու կարևոր բնագրեր (Իրինէոս, Տիմոթէոս Կուլ, Կնիք հաւատոյ և այլն), արժեքավոր հրատարակություններ տվեցին նաև Ն. Մառը, Մ. Տեր-Մովսիսյանը, Գլուստ Աղանյանցը և ուրիշներ:

Սակայն կատարվածը չնչին մի քան էր Մատենադարանի ձեռագրերի ընձեռած հնարավորությունների հետ համեմատած:

Անշափ դժվար է մեկ հազորդումով թեկուզ և բնդհանուր դադափար տալ այն մասին, թե ինչ հսկայական աշխատանք է տարվել Մատենադարանի նյութերի հրատարակման և ուսումնասիրման գծով Սովետական իշխանության տարիներին:

Մատենադարանի նյութերի հիման վրա հրատարակված՝ բնագրերի, հոդվածների և ուսումնասիրությունների քանակը, ոչ լրիվ տվյալներով, անցնում է 600-ից: Բացի տպագրված աշխատություններից, մեր նյութերի հիման վրա գրվել են տասնյակ արժեքավոր դոկտորական ու թեկնածուական դիսերտացիաներ, որոնց մի մասը, չպետք է կասկածել, նույնպես հրատարակվելու են առաջիկայում:

Հիշատակենք հայ հին ու միջնադարյան այն պատմիչներին, որոնց երկերի դիտական հրատարակությունները լույս ընծայվեցին Սովետական իշխանության տարիներին: Դրանք են՝ Կորյուն, Եղիշե, Սեբեոս, Հովհ. Մամիկոնյան, Կեղծ-Շապուհ, Վրաց պատմություն, Զաքարիա Ազուլեցի, Արրահամ Երևանցի և այլն: Եթե սրանց ավելացնենք 13—18-րդ դարերի 62 (35 + 27) ժամանակագրական մանր բնագրերը, որոնք զետեղված են «Մանր ժամանակագրություններ» խորագիրը կրող սովորածավալ 2 հատորների մեջ, ինչպես նաև 14 և 15-րդ դարերի հիշատակարանների ժողովածուները, ապա պարզ կլինի այն զնահատելի աշխատանքը, որ կատարվել է պատմագրական սկզբնաղբյուրների հրատարակության գծով ռևոլյուցիայից հետո:

Ամենակարևորը, սակայն, այն է, որ Մատենադարանի ձեռագրերը, որոնց ուսումնասիրությամբ անցյալում զբաղվում էին միայն հայագետ-քանասերները, սովետական տարիներին գրավեցին նաև մեծ թվով փիլիսոփաների, կերպարվեստագետների, երաժիշտների, բժիշկների, քիմիկոսների, մա-

թեմատիկոսների և գիտության այլ շյուղերի պատմությամբ զբաղվող տասնյակ գիտնականների ուշադրությունը:

Առանց շահագանցության կարելի է ասել, որ հայկական ձեռագրերը նոր միայն սկսեցին ծառայիչ գիտությանը իրենց անսպառ հնարավորությունների շահով:

Հրատարակվեցին բազմաթիվ արժեքավոր բնագրեր և ուսումնասիրություններ, որոնք նոր լույս են սփռում միջնադարյան գիտության ու կուլտուրայի տարրեր բնագավառների վրա, դրանցից են, օրինակ, Անանիա Շիրակացու, Սարկավազի և այլ հեղինակների տիեզերագիտական, մաթեմատիկական ու տոմարագիտական աշխատությունները (հրատարակիչներ Ա. Աբրահամյան, Գ. Պետրոսյան, Լ. Սիմյոնով և այլք), Թեոնի, Զենոնի, Հերմեսի, Հովհաննիսյանի և Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական աշխատություններն ու մեկնությունները (Հ. Մանանդյան, Վ. Զալոյան, Ս. Արևշատյան և այլք), Ամիրգոսվյաթի «Փզուտ բժշկութեան» մեծարժեք բնագիրը, ինչպես և բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ բժշկության պատմության տարրեր բնագավառների մասին (Ստ. Մալխասյանց, Լ. Հովհաննիսյան, Գ. Հարությունյան, Ա. Կժոյան, Խ. Մելիք-Փարսադանյան և այլք), ալքիմիայի պատմությանը վերաբերվող աշխատություններ (Կ. Ղաֆադարյան, Տ. Ղազանչյան, Ա. Հարությունյան), միջնադարյան հայ մանրանկարչության պատմության մասին կարևոր ուսումնասիրություններ (Լ. Գուռնովա, Աս. Մնացականյան, Սվիրին, Ռ. Գրամբյան, Նիկոլայայա, Տ. Իզմաիլովա և այլք), կրթության, խաղաղագիտության ու թատրոնի պատմության տարրեր էտապները չուսաբանող աշխատություններ (Գ. Լևոնյան, Ռ. Աթաբեկյան, Գ. Գոյան և այլք) և բազմաթիվ այլ բնագրեր ու հետազոտություններ:

Մեծ աշխատանք կատարվեց նաև միջնադարյան նշանավոր բանաստեղծների ու արձակագիրների թողած հարուստ ժառանգության ուսումնասիրության ու հրատարակման գծով: Լույս տեսան Զրիկի, Հովնաթան Նաղաշի, Սայաթ-Նովայի և այլ բանաստեղծների ստեղծագործությունների գիտական բնագրերը, Մխիթար Գոշի առակները, «Գուսանական ժողովրդական երգեր» և «Միջնադարյան հայկական ժողովրդական երգեր» արժեքավոր ժողովածուները (Մ. Արեղյան, Աս. Մնացականյան, Շ. Նաղարյան, Է. Պիվաղյան և այլք) ու բազմաթիվ այլ բնագրեր ու հետազոտություններ:

Զգալի աշխատանք տարվեց նաև արխիվային փաստաթղթերի հրատարակության և ուսումնասիրության գծով. լույս տեսան «Կալվածագրեր» և «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները» (պրակ 1) ժողովածուները և բազմաթիվ վավերագրեր՝ Աշ. Հովհաննիսյանի, Արզ. Հովհաննիսյանի, Մ. Ներսիսյանի, Վ. Պարսամյանի և ուրիշների գիտահետազոտական բնույթի աշխատություններում:

Ուրախալի է նշել, որ բնագրերի ու ուսումնասիրությունների հրատարակության աշխատանքով ռեսպուբլիկայի այլ գիտական հաստատությունների հետ մեկտեղ զբաղված է նաև Մատենադարանի փոքրաթիվ կոլեկտիվը:

Թվարկված կարևոր հրատարակությունների մի զգալի մասը կատարվել է Մատենադարանի աշխատակիցների կողմից կամ նրանց գործոն մասնակցությամբ: Մատենադարանի աշխատակիցներից շատերը աճել ու դարձել են ճանաչված բանասերներ (Աս. Մնացականյան, Շ. Նաղարյան), իսկ երիտասարդ աշխատակիցների մեջ կան կարող ուժեր, որոնք զբաղվում են և առաջիկայում

ավելի մեծ շափով պետք է զբաղվեն ազբյուրագիտական ու քանասիրական հետազոտություններով (Կ. Յուզբաշյան, Ս. Քոլանջյան, Մ. Մխիթարյան, Ս. Լալաֆարյան, Գ. Արզարյան, Ռ. Արրահամյան և այլք):

Մատենադարանի գիտական հասունության մասին վկայում են «Մատենադարանի բանբերի» հրատարակված 3 դրբերը, ինչպես նաև այս՝ 4-րդ գիրքը:

Պայմանագրային կարգով Մատենադարանի հետ սերտ կապված են մի շարք անվանի գիտնականներ: Նրանց ու Մատենադարանի աշխատակիցների ջանքերով հրատարակության են պատրաստվում կարևոր բնագրեր և հետազոտություններ, որոնցից են Կիրակոս Գանձակեցու «Պատմության» գիտական բնագիրը (կազմող՝ Կ. Մելիք-Սահանջանյան), Մովսես Կաղանկատվացու «Պատմության» գիտական բնագիրը (կազմող՝ Վ. Առաքելյան), Արիստոտելի «Կատեգորիաների» 6-րդ դարի անանուն մեկնության բնագիրը (կազմողներ՝ Վ. Չալոյան, Ս. Լալաֆարյան և Ս. Արևշատյան), Մատենադարանի պարսկերեն հրովարտականների 2-րդ սյրակը (կազմող՝ Հ. Փափազյան), Կոստանդ Չուղայեցու առևտրական ձեռնարկը (կազմող՝ Հ. Անասյան), Վարդան Այգեկցու առակների գիտական բնագիրը (կազմող՝ Է. Պիվազյան) և մի շարք այլ բնագրեր:

Թվարկվածով, անշուշտ, չեն սպառվում Մատենադարանում հրատարակության պատրաստվող բնագրերը, սակայն նրանց մասին խոսելու փոխարեն փոքր ինչ կանգ առնենք առաջիկա տարիներին Մատենադարանում կատարվելիք ամենակարևոր ու հրատապ աշխատանքների վրա:

Մեր Մատենադարանը դեռևս չունի իր ձեռագրերի տպագիր Մայր ցուցակը: Գոյություն ունեցող և մեր կողմից վերը թվարկված ցուցակներն ու մատենագիտական ուղեցույցները մեծ շափով դյուրացնում են գիտնականների աշխատանքը, սակայն նրանք բնավ չեն կարող փոխարինել Մայր ցուցակին:

Ձեռագրերի մանրամասն ցուցակ կազմելու անհրաժեշտությունը զգացվում է վաղուց ի վեր, և մենք առաջիկայում, ստանալով գիտական աշխատողների համապատասխան հաստիքներ, մեր հիմնական ուժերը պետք է կենտրոնացնենք ձեռագրերի Մայր ցուցակի ստեղծման աշխատանքների վրա:

Խոշոր և տեխնիկապես հագեցված զբաղարաններում վաղուց ի վեր կիրառվում է ձեռագրերի ու տպագիր դրբերի միկրո-ֆոտո պատճենահանումը: Ձեռագրերի կյանքը երկարացնելու նպատակով մենք աստիճանաբար պետք է պատճենահանենք միկրո-ֆոտոյի միջոցով նաև մեր բոլոր արժեքավոր ձեռագրերը: Այս աշխատանքը, սակայն, մեզ մոտ կատարվում է կուտար ձևով, լուսանկարչական վատորակ ու հնացած ապարատներով, ուստի ցանկալի արդյունք չի տալիս: Առաջիկայում ամեն ջանք պետք է դործ դրվի համապատասխան ապարատուրա ձեռք բերելու և ձեռագրերի լուսանկար-պատճենահանման դործը պատշաճ բարձրության վրա դնելու համար:

Հայտնի է, որ մեզ հասած շուրջ 25 հազար հայերեն ձեռագրերի կեսից ավելին գտնվում է մեր ռեսպուբլիկայի սահմաններից դուրս, մեծ մասամբ արտասահմանյան երկրներում (Հորդանան, Իտալիա, Ավստրիա, Իրան և այլն):

Միջնադարյան շատ հեղինակների ու բնագրերի ուսումնասիրության համար Հայաստանից դուրս գտնվող ձեռագրերը կարևոր, երբեմն վճռական, նշանակություն ունեն: Ուստի, մենք պետք է ավելի լավ իմանանք հայերեն ձեռա-

գրերի այլ հավաքածուների բովանդակությունը և անհրաժեշտության դեպքում կարողանանք ստանալ կարևոր բնագրերի լուսանկար պատճենները:

Այս ուղղությամբ որոշ աշխատանք մեզ մոտ կատարված է: Այժմ մենք ունենք Վրաց թանգարանի ձեռագրական քաժնի 240 հայերեն ձեռագրերի մանրամասն ցուցակը (կազմել է մեր աշխատակից Ս. Լալաֆարյանը), Վրաստանի Կենտրոնական պատմական արխիվի շուրջ 50 ձեռագրերի ցուցակը (մեր հանձնարարությամբ կազմել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկը և տպագրվում է «Բանբերի» այս համարում), ունենք նաև տվյալներ Բաքվում, Մոսկվայում և Լենինգրադում պահվող հայերեն ձեռագրերի մասին և այլն: Սակայն շատ քիչ բան գիտենք հայկական ձեռագրերի արտասահմանյան այն հավաքածուների մասին, որոնց ցուցակները կամ բնավ չեն հրատարակվել, կամ էլ հրատարակվել են թերի:

Անտարակույս, միջոցներ պետք է գտնել այս թերությունը ևս վերացնելու: Մատենադարանում այժմ համապատասխան պայմաններ չեն ստեղծված գիտական սպասարկման համար: Ձեռագրերի և արխիվային վավերագրերի ուսումնասիրությամբ ղրադված գիտնականները աշխատում են մի միջանցուկ դահլիճում: Ձեռագրերի մի մասը պահարաններում դարսված են հրկու խիտ շարքերով և այլն:

Համապատասխան պայմաններ չկան նաև Մատենադարանի մյուս բաժիններում՝ շենքի անբավարար ծավալի պատճառով:

Մրանք, սակայն, ժամանակավոր թերություններ են: Եվ մի քանի ամիս և Մատենադարանը կտեղափոխվի իր նոր շենքը, որտեղ ստեղծվում են իդեալական պայմաններ և՛ ձեռագրերի պահպանման, և՛ ցուցադրման, և՛ գիտական աշխատողների պարասպմունքների համար:

Սովետական Միության մեջ մեր Մատենադարանը առաջինն է, որի համար կառուցվում է հատուկ ու հարմարագույն շենք: Եվ այս պերճախոս փաստը բավական է ցույց տալու համար, թե Կոմունիստական պարտիան ու մեր հարազատ կառավարությունը ինչպիսի հոգատար վերաբերմունք ունեն անցյալի կուլտուրական հուշարձանների պահպանման ու հայագիտության զարգացման նկատմամբ:

Հայկական ձեռագրերը, հայ բազմաշարշար ժողովրդին բախտակից, անցնելով հազարամյա ճանապարհ, փրկվելով հարյուր ու մեկ հրերից ու սրերից, ասլրում ու վերակենդանանում են այսօր Մատենադարանում, իրենց մեջ թաքցրած հոգևոր դանձերով հարստացնելով հաղթանակած պրոլետարիատի առաջավոր ու հումանիստական կուլտուրան:

Ա. ԴԱՆԱԼԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՇՆԵՐԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԳՐԱՎՈՐ
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ինչպես ուրիշ երկրներում, այնպես էլ Հայաստանում, բանավոր ձևով ստեղծված առածների ու ասացվածքների հետ միասին, որոնք կազմել են ժողովրդի ավանդական բանահյուսության տվյալ ժանրի հիմնական հարստությունը, գոյություն են ունեցել նաև գրավոր աղբյուրներից առաջ եկած առածներ ու ասացվածքներ: Իրանց համար հիմք են ծառայել տարբեր դարերի աշխարհիկ ու կրոնական, պատմական ու փիլիսոփայական, հրապարակախոսական ու ղեղարվեստական դանազան գրական հուշարձանների (թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական) մեջ առկա բազմաթիվ իմաստալից ասույթներ, պատկերավոր արտահայտություններ կամ աֆորիզմներ, որոնք տարբեր ուղիներով ու ձևերով մուտք գործելով բանավոր ավանդության մեջ և ձևաք բերելով բանահյուսական գույն ու երանդ, ժամանակի ընթացքում դարձել են ժողովրդական առածներ ու ասացվածքներ:

Իրավոր ասույթների ու աֆորիզմների ներթափանցումը ժողովրդական բառ ու բանի մեջ, ընդհանրապես, ստեղծագործական բավական բարդ մի երեվույթ է: Այն տեղի է ունենում երկար ժամանակի ընթացքում, միջնորդավոր դանազան օղակներով: Այդ երևույթը սերտորեն կապված է տվյալ ժողովրդի ապրած միջավայրի, նրա պատմական ճակատագրի, ուրիշ ժողովուրդների հետ ունեցած քաղաքական, կուլտուրական շփման ու հարաբերությունների հետ:

Ժողովրդի մեջ սովորաբար ընդունելություն են գտնում ու տարածվում են այնպիսի գրավոր ասույթներ կամ աֆորիզմներ, որոնք իրենց բովանդակությամբ հարադատ ու համահնչուն են լինում նրա մեծամասնության աշխարհայացքին ու աշխարհազգացողությանը, ճաշակին ու հոգեբանությանը, այնպիսի գրավոր ասույթներ կամ աֆորիզմներ, որոնք իրենց ատաղձով ու ակունքներով, ավել կամ պակաս շափով, կապված են լինում բանավոր խոսքի ավանդների հետ:

Իրա հետ միասին գրավոր աղբյուրներից հասարակական լայն շրջանների մեջ երբեմն թափանցում են նաև այնպիսի ասույթներ կամ աֆորիզմներ, որոնք դրսևորում են տիրապետող դադափարախոսության ազդեցությունը և ժողովրդի որոշ շերտերի աշխարհայացքի դասակարգային ու պատմական սահմանափակությունը:

Հայաստանում հայտնի հնագույն գրավոր հուշարձաններից ժողովրդական առած-ասացվածքների համար նյութ են մատակարարել միջազգային բնույթի երեք հուշարձան, որոնք շնայած իրենց օտար ծագմանը, պատմական դեպքերի բերումով, տարածում ու ընդունելություն են գտել մեզանում:

Այդ հուշարձաններից առաջինը Աստվածաշունչն է իր Հին ու Նոր կտակարաններով:

Տասնյակ դարերի ընթացքում ստեղծված, մշակված ու խմբագրված մի գիրք է դա, որն արտացոլում է իր մեջ վաղնջական ժամանակների ժողովրդական առասպելների, ավանդույթյունների ու կրոնական սիստեմների բազմազան շերտավորումները: Քրիստոնեական միֆոլոգիայի այդ հանրագիտարանը հարուստ նյութ է տալիս հնագույն մի քանի ժողովուրդների, մասնավորապես հին երբայեցիների, կյանքի ու կենցաղի, տնտեսական, քաղաքական հարաբերությունների, փիլիսոփայական հայացքների, իրավական նորմերի, հավատալիքների, վիպական ու քնարական ստեղծագործությունների վերաբերյալ: Հին կտակարանը, ուր վերարտադրված են հրեական ժողովրդի հեռավոր անցյալի դեպքերն ու գեմքերը, աչքի է ընկնում իր գերազանցապես աշխարհիկ բովանդակությամբ: Նոր կտակարանի համար, որը կապված է քրիստոնեության առաջին շրջանի անց ու դարձերի հետ, ավելի բնորոշ են կրոնա-բարոյախոսական մոտիվները:

Հանդիսանալով աշխարհի հնագույն ու տարածված գրավոր հուշարձաններից մեկը, Աստվածաշունչը դարեր շարունակ նշանակալից դեր է խաղացել քրիստոնեությունն ընդունած բազմաթիվ ժողովուրդների հոգևոր կյանքում, յուրովի ազդելով նրանց կրոնական հայացքների, ավանդական բանահյուսության, բարոյագիտական ու գեղագիտական ըմբռնումների, լեզվի ու գրականության վրա:

Անուրանալի է Աստվածաշունչի դերը նաև հայ ժողովրդի կյանքում: Թարգմանվելով հայերենի գեոևս 5-րդ դարում, Սահակի, Մաշտոցի ու սրանց ավագ աշակերտների ձեռքով, Աստվածաշունչը քրիստոնեական կրոնի քարոզի հետ դուրընթաց մեղանում ծառայել է նաև լուսավորության և ուսման տարածման գործին: Նրա միջոցով Մաշտոցն ու իր բազմաթիվ աշակերտները գրագիտություն են տարածել Հայաստանում:

Շնորհիվ իր բազմակողմանի ու հարուստ բովանդակության, պարունակած հետաքրքիր և միաժամանակ պարզ ու մատչելի գրույցների, պատմվածքների, առակների ու երգերի, Աստվածաշունչը երկար դարերի ընթացքում տարածված գիրք է եղել Հայաստանում:

Աստվածաշունչի և մասնավորապես Ավետարանի մասին հայ ժողովրդի մեջ այն կարծիքն է եղել, որ դա իր տեսակի մեջ բացառիկ մի ստեղծագործություն է. «Գիրք շատ կա, ամժա մինն էլ Ավետարանին տեղը բռնիլ չի» — ասել են դարաբազցի հայերը, ընդգծելով այն առավելությունը, որ ունեցել է նրանց աչքում Ավետարանը: «Ավետարանի կուղկեմեն է խոսում», — ասել են թիֆլիսեցի հայերը, երբ ուղեցել են ակնարկել մեկի ճշմարտախոս լինելը: Մի քանի ուրիշ վայրերում՝ ճշմարտություն, իմաստություն, ավետիք, բարի համբավ հայտնող մարդու համար ասել են. «Երան չէ, Ավետարան է»: Շատ սովորական ու տարածված է եղել Հայաստանում «Ավետարանի կողին գրած խոսք» արտահայտությունը՝ անսուտ խոսք իմաստով:

Աստվածաշունչն իր բազմակարգ մասերով (Հին ու Նոր կտակարաններ, Ավետարան) Հայաստանում տարածվել է նախ հարյուրավոր գրչագիր օրինակ-

¹ Գ. Բ ա ռ խ ու ղ ա թ յ ա ն, Բարոյական առածներ, Տփլիս, 1898, էջ 12:

Գ. Տ ե թ - Ա ղ ե թ ս ա ն դ թ յ ա ն, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885, էջ 79:

Ս ա. Մ ա լ խ ա ս յ ա ն ջ, Հայերեն բացատրական բառարան, հ. Ա, Երևան, 1944, էջ 295:

ներով, իսկ ապա (տալազրական գյուտից հետո) տասնյակ դարար ու աշխարհարար հրատարակություններով, որոնք լույս են տեսել զանազան ժամանակ, զանազան վայրերում:

Պատերազմի, գաղթի, տեղահանության և առհասարակ որևէ աղետի (հրդեհ, հեղեղ և այլն) ժամանակ, Հայաստանի բնակիչների առաջին հոգսերից մեկը եղել է փրկել իրենց տան Աստվածաշունչը կամ Ավետարանը: Ժողովուրդը բերնե-բերան և սերնդից-սերունդ հաղորդել է այն աննկուն շանքերի մասին, որ գործադրել են նրա զավակները՝ թշնամու կողմից գերված Ավետարանն ազատագրելու համար:

Աստվածաշնչի աղբյուրությամբ հնուց Հայաստանում ստեղծվել ու պատմվել են բազմաթիվ ժողովրդական ավանդություններ ու դրույցներ՝ Ադամի ու Եվայի, Նոյան տապանի ու ջրհեղեղի, Կայնի ու Արելի, Ռուսու կալի, Հոր Երանելու, Եղիա մարգարեի, Գավիթ թագավորի, Մարիամի ու Հովսեփի, Քրիստոսի ու նրա առաքյալների հրաշագործությունների մասին և ուրիշ նմաններ: Այդ ավանդություններից ու դրույցներից շատերը կապվելով Հայաստանի աշխարհագրական միջավայրի, ժողովրդի կենցաղի, հոգեբանության, նրա կյանքում տեղի ունեցած պատմական անց ու դարձերի հետ, ձևոք են բերել տեղային յուրահատուկ գծեր:

Նույն ճանապարհով հայ ժողովրդի մեջ մուտք են գործել, տեղայնացվել, նրա բառ ու բանի հետ համադրվել ու ձուլվել են նաև հնագույն մի քանի ժողովուրդների բանահյուսությունից սերող աստվածաշնչյան բազմաթիվ պատգամներ ու թևավոր խոսքեր:

Դրան նույնատեղ է, նախ և առաջ, այն հանգամանքը, որ և՛ Աստվածաշունչի և՛ Ավետարանի լեզուն եղել է ո՛չ թե մեր որոշ մատյաններին հատուկ խրթին դրարարը, այլ բավական պարզ ու հասկանալի գրավոր մի լեզու, որը թիշ է տարբերվել ժամանակի ընդհանուր խոսակցական լեզվից:

Պակաս կարևոր դեր չի խաղացել նաև այն հանգամանքը, որ հիշյալ հուշարձանները եղել են այն եզակի գրքերը, որոնք ընթերցվել են ոչ թե մի անգամ, այլ եկեղեցու միջոցով դարեր շարունակ պրոպագանդվել են հասարակական լայն շրջանների մեջ:

Հին կտակարանից ծագումն առած հայկական առածների ու ասացվածքների մեջ աչքի են ընկնում գլխավորապես մարդկային-հասարակական և կենցաղային հարաբերություններին ու երևույթներին վերաբերող հիմնականում աշխարհիկ բնույթի ստեղծագործություններ: Դրանց համար հիմք են հանդիսացել զանազան մարգարենների ու առաքյալների պատգամները, Սիրաքի առածները և հատկապես Սողոմոնի հռչակավոր առակները, որոնց հեղինակը մեզանում համարվել է խելքի ու իմաստության շափանիշ-օրինակ, նյութ դառնալով բազմաթիվ ժողովրդական դրույցների ու ավանդությունների:

Խելոք մարդուն բնութագրելու և նրա նկատմամբ իրենց ունեցած դրական վերաբերմունքը բացահայտելու համար, Հայաստանի տարբեր զավառների բնակիչներն ասել են. «Իսկը (իսկական) Սողոմոն իմաստունն է», «Սողոմոն իմաստունի խելքն ունի», «Սողոմոն իմաստունի քովին կուգա» և այլն:

Սողոմոնին վերագրվող «առակ» կոչված այլաբանական խոսքերից, երբեմն նրանց ավանդական հեղինակի անվան հիշատակմամբ («Սողոմոն իմաստունն ասել է» և ուրիշ ձևերով), իսկ հաճախ էլ առանց դրան, մեզանում, իբրև ժողովրդական առածներ կամ ասացվածքներ, գործ են ածվել շատերը:

Այդպիսիներից մեկն է, օրինակ, «Լաւ է բարեկամ մեծավոր, քան զեղբայր հեռաւոր»¹ առակը, որի իմաստն այն է թե՛ մարդկային հարաբերությունների մեջ հիմնականը ո՛չ թե արչունակցական կապն է, այլ հասարակական, կենցաղային մոտիկությունը, մտերմությունը:

Արա ժողովրդական նմանակները Հայաստանում հայտնի են՝ «Մոտիկ հարեանը լավ ա, քանց հեռու բարեկամը», «Լավ դրկիցը դեշ բարեկամեն լավ է», «Արտակից հարեանը անսիրտ ախպորից լավ ա» և նման ուրիշ ձևերով²:

Հայկական առածների շարքն անցած սոցումոնյան մի այլ առակ է՝ «Որ փորէ խորխորատ բնկերի իւրում՝ ինք լցցէ զնա»³ բարոյախոսական խրատ-նախազգուշացումը՝ ուղղված շարագործ մարդկանց, որի նպատակն է դարձի բերել նրանց վատ ճանապարհից:

Սույն առակը մեղանում ասվում է ժողովրդական այս և նման տարբերակներով. «Ուրըշի հոր փորողը, ինքը կրնկնի մեշը», «Հոր փորողը՝ ինքը կրնկնի մեշը», «Իր ձեռքով հոր փորէ, ինքը գեպիք ննզնի» և այլն⁴:

Սոցումոն իմաստունին վերադրված առակներից Հայաստանում տարածված է եղել նաև՝ «Լաւ է անուն բարի, քան զվեծուրիւն բազում, և քան զարծար և զոսկի» առակը⁵, ուր հակադրված են իրար լավ անունն ու ունեցվածքը՝ առաջինի նախապատվությունը: Արտահայտելով «բարի անուն» ունեցող ընչազուրկ խավերի տրամադրությունները, այս առակը սիրով ընկալվել է մեր հասարակության լայն շրջաններում և ձեռք է բերել մեծ ժողովրդականություն: Այն Հայաստանում հայտնի է հետևյալ տարբերակներով. «Բարի անունը լավ ա, քանց աշխարհի դանձը», «Լավ ա անուն բարի, քան դանձ աշխարհի», «Անունը թանկ արժե, մալը ձեռքի կեղտ է», «Տուն ու տեղ սե փող շարժի, մարդիս անունն է գովելի» և այլն⁶:

Սոցումոնի առակներից, Սիրաքի ասույթներից և Հին կտակարանի մյուս գրքերից ծագած հայկական առած-ասացվածքներից են նաև հետևյալները. «Ունևորին՝ շատ բարեկամ, շունևորին՝ քիչ բարեկամ» ՀԱ⁷, 7 (ըստ Հին կտակարանի՝ «Բարեկամք մեծատանց բազումք», Առակ, ԺԳ):

«Աշխարհի շինողն ու քանդողը լիզուն է», ՀԱ, 18 (ըստ Հին կտակարանի՝ «Մահ և կեանք ի ձեռս լեզուի», Առակ, ԺԸ):

«Հարուստին խոսքը անցուկ կրլա, աղքատինը՝ մոռցուկ», ՀԱ, 7 (ըստ Հին կտակարանի՝ «Խօսեցաւ մեծատուն և ամենեքեան լեցին», Սիրաք, ԺԳ):

«Ուտքով ընկնողը կելնա, լեզվով ընկնողը չելնա», ՀԱ, 18 (ըստ Հին կտակարանի՝ «Լաւ է յտաից դայթակղել՝ քան ի լեզուէ», Սիրաք, Ի):

«Խաչիս (անխառն) ոսկին բովքմբ բեկու կանի» (հայտնի դառնալ), ՀԱ, 46 (ըստ Հին կտակարանի՝ «Ի հուր փորձի ոսկի», Սիրաք, Բ):

«Պապեր ժուռ (աղոխ) կերան, թոռներուն աղուն հարվեցալ», «Հերերը ժուռ կերան, որդիերանց ատամն առալ», ՀԱ, 11 (ըստ Հին կտակարանի՝ «Հարք աղոխ կերան և որդուց ատամունք առան», Եզեկ., ԺԸ) և այլն:

¹ Հին կտակարան, Առակք Սոցումոնի, գլուխ ԺԸ:

² «Հայկական առածանի», 1951, էջ 8—9:

³ Հին կտակարան, Առակք Սոցումոնի, գլուխ ԻԶ:

⁴ «Հայկական առածանի», էջ 92:

⁵ Հին կտակարան, Առակք Սոցումոնի, գլուխ ԻԲ:

⁶ «Հայկական առածանի», էջ 126, 179:

⁷ ՀԱ — «Հայկական առածանի»:

Հին կտակարանի հետ միասին մեզանում ժողովրդական առածների ու ասացվածքների համար առաջ նյութ է տվել նաև Նոր կտակարանը կամ Ավետարանը: Մատթեոս, Մարկոս, Դավիթ և Հովհաննես ավետարանիչներին վերագրվող մի շարք այլաբանական և ուղղակի նշանակություն ունեցող արտահայտություններն ու ասույթները, իբրև «Ավետարանի կողին գրված» խոսքեր, երբեմն բառացի, երբեմն էլ փոփոխված ձևով, մտել են ժողովրդի մեջ և առածի կամ ասացվածքի կերպարանք ընդունելով ավանդվել բերանից-բերան ու սերնդից-սերունդ:

Անհրաժեշտ է, սակայն, նկատել, որ հակառակ Հին կտակարանյան առած-ասացվածքների, ուր գերիշխում է աշխարհիկ ոգին, Ավետարանից ծագած առածների ու ասացվածքների մեջ ավելի է զգալի կրոնա-բարոյախոսական տարրը, մի հանգամանք, որ բխում է հիշյալ երկու հուշարձանների բովանդակության առանձնահատկություններից:

Հայկական առածների շարքը ներթափանցած ավետարանական նմանօրինակ պատգամներից մեկն է՝ «Որ համբերեսցէ՛ ի սպառ՝ նա կեցցէ»¹ արտահայտությունը, տիպիկ քրիստոնեական մի բարոյախոսություն, որն ստեղծված է հասարակության ճնշված ու հալածված խավերին մխիթարելու, նրանց՝ հուսահատությունից և մանավանդ ընդվզումից հեռու պահելու համար: Մի բարոյախոսություն, որով եկեղեցու հայրերը դարեր շարունակ ձգտել են թմբեցնել աշխատավոր ժողովրդին հեռավոր ապագայի մշուշոտ անուրջով:

Այս պատգամը մեզանում ասվել է՝ «Համբերությունը կյանք է», «Համբերե, որ համ բերե», «Համբերե օր բերանդ համ դա» և այլ վարիանտներով²:

Նույն տիպի ավետարանական մի պատգամ է նաև՝ «Հալառե՛ Բո կեցուցին Բեզ»³ արտահայտությունը, որով քրիստոնեական եկեղեցին հորդորել է ժողովրդին հավատարիմ մնալու իր սկզբունքներին և կյանքում դժվարության հանդիպելիս՝ հենվելու հավատի վրա:

Այս պատգամի քանահյուսական խմբադրություններն են մեզանում՝ «Հավատ ունիս՝ շատ կապրիս» և «Անհավատ բանին մի հավատա» ասացվածքները⁴:

Վերոհիշյալ և նույն կարգի կրոնա-բարոյախոսական պատգամների հետ միասին, Ավետարանը նյութ է տվել նաև ոչ քիչ թվով աշխարհիկ բնույթի առածների ու ասացվածքների: Ահա մի քանի նմուշ գրանցից.

«Ժրան աչքի գերանը թողած, ուրիշի շտին է ման գալի», «Ժրան աչքի գերանը չի տեսնում, խալխի աչքի մազն ա տեսնում», 2Ա, 80 (ըստ Նոր կտակարանի՝ «Հան նախ գգերանդ յականէ քումմէ, եւ ապա հայեսցիս հանել զշիզն յականէ եզրօր քոյ», Մատ., Է):

«Բերանը սրտին էվելցուկը կը գուրցէ», 2Ա, 117 (ըստ Նոր կտակարանի՝ «Ի յակելուածոյ սրտի խօսի բերան», Մատ., ԺԲ): «Ուղտը կուլ կուտան, մժղուկը կը քամեն», 2Ա, 190 (ըստ Նոր կտակարանի՝ «ԳՄժղուկս քամէր և զուղտս կլանէր», Մատ. ԻԳ):

«Ծառն իր պտղեն կը ճանաչվի», 2Ա, 129 (ըստ Նոր կտակարանի՝ «Ծառի պտղոյ իւրմէ ճանաչի», Դու., Զ): «Լացի վիրշը ուրախութիւն է», 2Ա, 157 (ըստ Նոր կտակարանի՝ «Երանի որ լան այժմ, զի ծիծաղեսցին», Դուկ., Զ) և այլն:

¹ Նոր կտակարան, Ավետարան ըստ Մատթեոսի, գլուխ Ժ:

² «Հայկական առածանի», էջ 106:

³ Նոր կտակարան, Ավետարան ըստ Մատթեոսի, գլուխ ԺԷ:

⁴ «Հայկական առածանի», էջ 152:

Աստվածաշնչից փոխ առնված իր առածների ու ասացվածքների մեջ՝ հայ ժողովուրդը ընդհանուր առմամբ հավատարիմ ու հարազատ է մնացել վերջիններիս հիմքն հանդիսացող ասույթների բովանդակությանն ու էական իմաստին, և խմբագրել ու փոխել է զլիսավորապես դրանց ձևը (լեզուն, ոճը)։ Սակայն եղել են դեպքեր էլ, երբ նա երկրայությամբ ու քննադատությամբ վերաբերվելով «Ավետարանի կողին գրված» այս կամ այն խոսքի գաղափարական բովանդակությանը, փոխել է այն, դնելով նրա մեջ նոր իմաստ ու ըմբռնում։

Այսպես, օրինակ, Աստվածաշնչյան «Աստուած ողորմած է» հայտնի արտահայտությունը¹, որը մեղանում տարածված է եղել «Աստված ողորմած է», «Աստուց մինձ, օղորմութիւնը շատ», «Աստո՞ծ մե՞ծ աս, ողորմութիւնը հազար» և այլ տարածված ձևերով², ունի նաև՝ «Աստված ողորմած է ըսողը անոթի կը մնա», «Աստված ողորմածը՝ խեղձ մարդը մոգոնած է» այլիմաստ ձևերը³, որոնց բովանդակությունը տրամագծորեն հակադիր է ասածու ողորմածության վերաբերյալ եղած կրոնական ըմբռնմանը և դրսևորում է աշխատավորական խավերի մեջ խմորվող աթելիստական տրամագրությունները։

Ոչ պակաս բնորոշ մի ուրիշ օրինակ է՝ «Աստված արու և էգ արար, բա վարդապետներին ո՞վ արար»⁴ ժողովրդական սրամիտ հարցում-ասացվածքը՝ հորինված նոր կտակարանի՝ «Աստուած արու և էգ արար»⁵ արտահայտության կապակցությամբ, որի մեջ բացահայտված է ժողովրդի բացասական վերաբերմունքը հոգևոր պաշտոնյաների նկատմամբ։

Նոր կտակարանից ծագող «Համբերությունը կյանք է» վերևում հիշված ասացվածքի հետ միասին, հայ ժողովուրդը ստեղծել ու գործ է ածել նաև «Ավետի համբերությունը իշի մարտիրոսություն է»⁶ ասացվածքը, որի մեջ դրսևորվել է սպառված համբերությամբ ժողովրդի մարդկանց ընդվզումը գործնական կյանքում իրեն շարդարացրած ավետարանական պատգամի դեմ։

Աստվածաշնչից հետո, հայկական առածների ու ասացվածքների համար կարևոր ազդյուր են հանդիսացել անտիկ աշխարհի նշանավոր իմաստասերներից՝ Արիստոտելի, Սոկրատի, Պլատոնի, էպիկուրի, Դիոգենեսի և մյուսների ասույթները կամ աֆորիզմները, որոնք մեղանում հայտնի են եղել «արտաքնոց» կամ «Նախնի իմաստասիրաց» «բանք» ընդհանուր կոչումով («Բանք խրատականք», «բանք իմաստասիրաց», «բանք խրատուց» և այլն)։

Հիշյալ հեղինակների ամբողջական գործերի հետ միասին այդ «բանքերը» շատ վաղ շրջանում (5—6-րդ դարեր)⁷ թարգմանվել են հայերեն և մեծ ու փոքր շարքերով, ձեռագրից-ձեռագիր ու դարից-դար անցնելով հասել են մինչև մեր օրերը⁸։

¹ Հին կտակարան, Բ օրենք, գլուխ Գ։

² «Հայկական առածանի», էջ 149։

³ Նույն տեղում, էջ 152։

⁴ Նույն տեղում, էջ 154։

⁵ Նոր կտակարան, Աւետարան ըստ Մարկոսի, գլուխ Ժ։

⁶ «Հայկական առածանի», էջ 106։

⁷ Հ. Հ ա կ ո վ ո ս ս, Վ. Տ ա շ յ ա ն, Մատենադրական մանր ուսումնասիրությունը, մասն Ա, Վիեննա, 1895, էջ 213—218։

⁸ Միայն Երևանի Պետական Մատենադարանում այդ շարքերի թիվը 50-ից ավելի է։ Ըստ իրենց գրչության ժամանակի դրանք վերաբերում են 13—19-րդ դարերին։ Առանձնապես շատ են 17—18-րդ դարերի ձեռագրերը։

Քննության առարկա ստեղծագործությունները աչքի են ընկնում իրենց բաղմազան ու հետաքրքիր բովանդակությամբ, արծարծած՝ հասարակական, բաղաբական, բարոյական, կենցաղային խնդիրներով (Խշխանություն, օրենք, ունեցվածք, փող, իմաստություն, ուսում, բարեկամություն, արիություն, դաստիարակություն, պատիվ, փառք, բախտ, գեղեցկություն, կյանք, մահ): Նրանց մեջ սուր քննադատության է ենթարկված մարդկային ազահությունը, շողոքորթությունը, երեսպաշտությունը, խորամանկությունն ու նենդությունը, զրվատված են ազնվությունն ու արդարությունը, շիտակությունն ու անաշտությունը և այլն: Ունենալով սեղմ ծավալ, ժողովրդական բառ ու բանն հիշեցնող պատկերավոր ու աֆորիստական ձև, նրանք հեշտ ընկալվել ու արմատ են բռնել մարդկանց հիշողության մեջ:

Անտիկ աշխարհի իմաստասերների «Բանք»-երի հայ գրչազիր մատյաններում գրաված մեծ տեղը բացատրվում է նրանց բովանդակության ու ձևի նըշված հատկություններով: Նույն այդ հատկությունների շնորհիվ էլ նրանք գրչազիր մատյաններից թափանցել են նաև ժողովրդական բանավոր խոսքի սահմանները, մտել հասարակական ավելի լայն շրջանների մեջ և բերանից-բերան ու սերնդից-սերունդ հաղորդվելով ու փոփոխվելով վեր են ածվել ժողովրդական առած-ասացվածքների: Վերջիններիս մի շարք նմուշները մենք գտնում ենք Հայաստանի տարբեր շրջաններում և հայաբնակ զանազան վայրերում գրի առնված առածների մեջ: Բերենք մի քանի օրինակ.

«Աղքատը հացի կարոտ է, հարուստը՝ ամեն բանի», ՀԱ, 7 (ըստ Արիստոտելի՝ «Աղքատութիւն բազում ընչից է կարօտ, իսկ ազահութիւն ամենայնի», Սոփ.¹, 24):

«Լացացնողիդ կշտին կաց, ծիծաղացնողից փախ», կամ՝ «Նստիր էնոր կուշտ, որ լացու, մը նստիր էնոր կուշտ՝ որ խնդացու», ՀԱ, 127 (ըստ Պլուտարքոսի «Խնդող պարտ է ընդ՝ արտմեցուցանելն, քան ընդ շողմողելն», Սոփ., 42):

«Ժր դաղըրը (հարզը) չզխացողը, ուրիշինը ո՞նց կիմանա», ՀԱ, 126 (ըստ նույնի՝ «Որ վասն անձին անբարի խորհի, այլում բարի ոչ կարէ խորհել», Սոփ., 9):

«Ճղլղանից շին վախենա, սուա ու փուսից կը վախենան», ՀԱ, 72 (ըստ Սոկրատի՝ «Ի լուելութենէն պարտ է առավել երկնշիլ, քան թէ ի ձայնէն», Սոփ., 37):

«Սրտանց բարեկամը սև օրվան համար ա» կամ «Բարեկամը նեղ օրին կը հանչցվի», ՀԱ, 9 (ըստ Նրինոսի՝ «Բժիշկ և բարեկամ զայն համարեա, որ ի նեղութեան օգնել կարեն», Սոփ., 50) և այլն:

Հայկական առածների ու ասացվածքների համար աղբյուր ծառայած մյուս հնագույն գրավոր հուշարձաններից, անհրաժեշտ է հիշատակել նաև Խիկար իմաստունի հայանի «Պատմությունը», ուր նկարագրված է Ասորեստանի Սենեբերիմ արքայի նախարար ու դպիր՝ խորագետ ու բաղմահմուտ Խիկարի կյանքը և բերված են նրա բաղմաթիվ՝ կենսական, բարոյադիտական, կենցաղային ու այլ կարգի խրատները ուղղված իր որդեգիր Նաթանին: Կրելով իր վրա ավան-

¹ Այս և հաջորդ «Բանք»-երը բերում ենք «Սոփերը հայկական»-ի Ա. գրքից (1853 թ. Վենետիկ), ուր «Բանք խրատուց նախնի իմաստասիրաց» ընդհանուր վերնագրի տակ ազգագրված են բաղմաթիվ այդպիսի «Բանքեր» (էջ 9—70), որոնք բաղված են՝ «հինգ և ավելի» գրչազիր մատյաններից:

դական բանահյուսության անժխտելի կնիքը, գրավոր այս հուշարձանը իր մի շարք մոտիվներով սերտորեն կապված է Հին ու Նոր կտակարանների հետ: Ակնհայտ ու աներկրայելի է հատկապես Խիկարի խրատների և Հին ու Նոր կտակարանների մեջ առկա առակների նմանությունը: Որոշ առնչակցություն է նկատված նաև Խիկարի «Պատմության» և «Հաղար ու մեկ գիշերներ» հայտնի հեքիաթաշարքի մեջ:

Նախ Արևելքում, ապա նաև եվրոպական ազգերի մոտ լայն տարածում գտած այս երկը շատ հնուց ժողովրդականություն է վայելել նաև Հայաստանում: Թեև մինչև այժմ չի պարզված Խիկարի «Պատմության» հայերեն թարգմանության թվականը, բայց այն ընդհանուր առմամբ համարվում է մի հին բնագրի (ասորի կամ հույն) թարգմանություն, հար և նման հայերեն ուրիշ շատ հին թարգմանությունների¹:

Խիկար իմաստունի «Պատմության» Հայաստանում վայելած մեծ ժողովրդականության մասին են վկայում աշխարհի զանազան մատենագրարաններում չքված նրա բազմաթիվ հայերեն գրչագիր օրինակները և մասնավորապես Երևանի Պետական Մատենագրարանում պահպանված նրա մի քանի տասնյակ ձեռագրերը՝ «Խրատք Խիկարայ իմաստնոյ, զոր ետ քրոջ որդոյն իւրոյ Նաթանայ» և ուրիշ վերնագրերի տակ, որոնք վերաբերում են 14, 17, 18 և 19-րդ դարերին:

Այդ են վկայում նաև Խիկարի «Պատմության» մի շարք հայերեն հրատարակությունները՝ լույս տեսած զանազան ժամանակ (1708, 1731, 1792, 1820, 1834, 1857, 1898 թթ.) զանազան վայրերում (Պոլիս, Թիֆլիս, Լոնդոն):

Հարուստ ու բազմազան է Խիկար իմաստունին վերագրված խրատների բովանդակությունը: Նրանց մեջ սրամտորեն մերկացված է մասնավոր սեփականատիրական կարգերում իշխող հասարակական կարծիքի դասակարգային աշատու ու կողմնակալ բնույթը, դատապարտված են կովարար ու արյունատուշտ, ազահ ու աչքածակ, տգետ ու ամբարտավան մարդիկ, մեծարված ու զնահատված են խելոքներն ու իմաստունները, վեր է հանված խոհեմությունը, համեստությունը և մարդկային այլ առաքինություններ:

Ինչպես նշվեց վերևում, Հայաստանում մեծ տարածում է ունեցել Խիկարի «Պատմությունը», իսկ նրա հերոսը վայելել է լայն ժողովրդականություն ու համբավ: Խելոք մարդուն բնորոշելու համար մեզանում հաճախ ասել են՝ «Խիկարի պես իմաստուն է», «Խիկարի խելքն ունի», «Խիկարի պես խելացի խրատներ կուտա», «Թե հերը Սողոմոն իմաստունն է, տղեն Խիկարի խելքն ունի» և այլն²:

Ըստ այսմ էլ Խիկարի խրատները դարձել են ժողովրդական առածներ ու ասացվածքներ և իրրև այդպիսիք մտել հասարակական շրջանառության մեջ:

Վաղարշապատի, Աշտարակի, Օշականի, Շիրակի, Ախալցխայի, Թիֆլիսի, Ջանգեղուրի, Ղարաբաղի, Պոլսի, Ալաշկերտի, Վանի, Մոկսի, Բուլանխի, Դիարբեքիի հայերի կողմից ասված Խիկարյան այդպիսի առած-ասացվածքներից են հետևյալները և բազմաթիվ ուրիշ նմաններ:

¹ Հ. Հ ա կ ո վ Ր ո ս, Վ. Տ ա շ յ ա ն, Մատենագրական մանր ուսումնասիրությունը, մասն երկրորդ, Վիեննա, 1901, էջ 123—128:

² Մտ. Մ ա լ ի ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հատոր Բ, Երևան, 1944, էջ 263 և այլուր:

«Աղբրտին տղան օձ կերավ, քսին՝ անօթի էր. հարքստին տղան կերավ, քսին՝ դեղ էր» կամ՝ «Հարուստ մարդը օձ կերավ, ասին՝ դեղ ա, աղքատը կերավ, ասին՝ սոված ա», ՀԱ, 6 (ըստ Խիկարի՝ «Մեծատան որդին թէ օձ ուտէ՝ կասեն թէ վասն բժշկութեան կերաւ և թէ աղքատն ուտէ՝ կասեն թէ սովալլուկ մեռանելոյն կերաւ», ԳՊ, 102)¹:

«Իմաստունի հետ քար քաշե, հիմարի հետ փլավ մի ուտի» կամ՝ «Եկելոք մարդու հետ քար կրելը լավ է, քանց գժի հետ փլավ ուտելը», ՀԱ, 58 (ըստ Խիկարի՝ «Լաւ է իմաստուն մարդոյն հետ քար կրելն, քան զանգետին հետ նիստ՝ որ ասեն՝ թէ եկու ի վեր», ԳՊ, 94):

«Ինչ որ ասես, էն կը լսես», ՀԱ, 91 (ըստ Խիկարի՝ «Մի ասեր և մի լսեր», ԳՊ, 108):

«Աչքածակի աչքը մենակ հողով կը կշտանա», ՀԱ, 69 (ըստ Խիկարի՝ «Աչք մարդոյ ազահ է, ոչ կշտանայ զանձով՝ մինչև լցւի հողով», ԳՊ, 96):

«Վարը նստի, որ վերեր քեզ տեղ տան», ՀԱ, 55 (ըստ Խիկարի՝ «Ի վայր նիստ՝ որ ասեն՝ թէ եկու ի վեր», ԳՊ, 94):

«Արին թափողը՝ արնով էլ կէթա», ՀԱ, 93 (ըստ Խիկարի՝ «Մի հեղուր զարին մարդոյ, զի մի այլքն հեղձցեն զարին քո», ԳՊ, 94):

Այսպես և շատ ուրիշներ:

Կարելի է հիշատակել ուրիշ գրավոր հուշարձաններ ևս, որոնք նյութ են տվել հայկական առածներին, սակայն դրանց դերը ավյալ գեպքում երկրորդական է, ուստի բավարարվենք բերվածով:

Քննության առարկա գրավոր ասույթների կամ աֆորիզմների ժողովրդականացման գործում, քացի այդ ասույթները կամ աֆորիզմները պարունակող երկերի հայերեն թարգմանություններից, զգալի դեր են խաղացել նաև տարբեր դարերի հայ պատմիչներն ու գրողները: Իրենց գրվածքներում զանազան առիթներով մեջ բերելով հիշյալ ասույթները կամ աֆորիզմները, նրանք դրանով իսկ նպաստել են վերջիններիս տարածմանը՝ դռնալով յուրահատուկ միջնորդներ:

Հայ պատմիչների ու գրողների պատմա-հայրենասիրական ու այլ տիպի գործերի ընդհանուր բովանդակության հետ այդ ասույթները կամ աֆորիզմները գրագետ մարդկանց միջոցով թափանցել են ժողովրդի մեջ և ստեղծագործաբար յուրացվել նրա կողմից: Այսպես, օրինակ.

Հին կտակարանի՝ «Որ փորէ խորխորատ ընկերի իւրում՝ ինք լցցէ զնա» հայտնի առակը գտնում ենք՝ Եղիշեի, Գրասխանակերտցու և Ուխտանեսի մոտ («Նոցա էր փորեալ զխորխորատ, դուք ընդէ՛ր լցէք յառաջագոյն», «Եւ այսպէս դուրն զոր եւ փորեաց եւ պեղեաց Հասան, ի նոյն ընկլուղաւ զոր եւ գործեաց», «Գուրն զոր փորեաց եւ պեղեաց՝ ինքն անկցի ի խորխորատն» ձևերով)²:

Հայ ժողովրդի մեջ այս առակը, ինչպես նշվեց վերևում, տարածված է՝ «Ուրիշի հոր փորողը, ինքը կրնկնի մեջը» և այլ նմանակներով³:

Խիկարի ոչ պակաս հայտնի՝ «Որդեակ, եղեր ինձ որպես կացին՝ որ կտրէր

¹ «Գիրք պատմութեան որ կոչի Պղնձէ քաղաք և Բանք խրատականք և օգտակարք Խիկարայ իմաստնոյ, և այլ բանք պիտանիք», Կ. Պոլիս, 1792:

² Եղիշէ, Վենետիկ, 1889, 42, Հ ո վ հ. կթ դ., Երուսաղեմ, 1867, 241, Ու խ տ ա ն է ս, Էջմիածին, 1871, 74:

³ «Հայկական առածանի», էջ 10:

զծառն: Ասէ ծառն. եքէ յինէն շէիր՝ ոչ յաղքէիր դու» խրատը, Վարդան Այգեկցու առակներից մեկի մեջ օգտագործված է հետևյալ ձևով. «Հիւսուեք մտան ի մայրիս եւ սկսան կոտորել զծառ եւ զտունկ. եւ նորա հառաչելով ասեն՝ Զի՞նչ է այս զոր գործեն ընդ մեզ: Եւ նոճին ասէ. Վ՛այ է մեզ, ով եղբարք, զի ի մեզանէ (է) որ կարէ զմեզ. զի կոթն ի մայրոյս է»¹:

Հայ ժողովրդի մեջ երկարյան վերորերջալ խրատը գործածվել է՝ «Ծառը գանգառ գնաց ասածու մոտ կացնիցը որ իրան կըտրում ա, ասեց՝ կոթը քեզանից ա», «Ծառը կացնի կոթ չը տար, իրան մահ ու մեռ շըկար» և այլ նմանակներով²:

Այսպես և շատ ուրիշներ:

Բերված փաստերը ակնառու կերպով ցույց են տալիս աստվածաշնչյան և մյուս գրավոր ասույթների ու մեր բազմաթիվ ժողովրդական առած-ասացվածքների միջև գոյություն ունեցող նմանությունները:

Ճիշտ չէր լինի կարծել, թե այդ բոլոր նմանությունները այն սովորական դուզադիպություններից են, որպիսիք հաճախ հանդիպում են և՛ գրականության և՛ մանավանդ ժողովրդական բանահյուսության մեջ: Նմանօրինակ առանձին դուզադիպությունների հնարավորությունն, իհարկե, չի կարելի բացառել: Սակայն ավյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թե այդպիսի մոտավոր, սովորական դուզադիպությունների, այլ, հիմնականում, բառացի ու տեքստուալ համընկումների ու նույնությունների հետ:

Աստվածաշունչը, անտիկ աշխարհի իմաստասերների «Բանքերը» և երկարի «Պատմությունը» միջազգային բնույթի այն գրավոր սկզբնաղբյուրներն են, որոնց զգալի ազդեցությունը դիտված է թե՛ արևելյան և թե՛ եվրոպական ժողովուրդների ավանդական բանահյուսության և բառ ու բանի վրա:

Ուրիշ ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը ևս յուրացրել է բնություն առարկա գրավոր հուշարձանների միջոցով իրեն հասած հին երբայեցիների և հնադարյան մի երկու ուրիշ ազգերի (ասորիներ, հույներ) թեավոր խոսքերն ու պատկերավոր արտահայտությունները և ստեղծագործաբար վերամշակելով դրանք մտցրել է իր բնաշխարհիկ առածների ու ասացվածքների շարքը:

Այդ խոսքերի ու արտահայտությունների մեջ նա գտել է իրեն հուզող հասարակական, բարոյական, կենցաղային, կրոնական շատ հարցերի պատասխանը, արտահայտված ժողովրդական մտածողությանն հատուկ հարադատ ու հասկանալի ձևերով:

¹ Ն. Մ ա ո, Ժողովածույր առակաց Վարդանայ, հատ. Բ, 123:

² «Հայկական առածանի», էջ 10:

Ի. ԱՔՈՒՂԱԶԵ

10-ՐԴ ԴԱՐԻ ՎՐԱՑԵՐԵՆ ՄԻ ԶԵՌԱԳՐԻ ՀԱՅԵՐԵՆ
ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

10-րդ դարից մեզ են հասել մի շարք վրացերեն ձեռագրեր: Այդ ձեռագրերի մի մասը ընդօրինակվել է բուն վրաստանում, իսկ մյուս մասը՝ Պաղեստինի, Սինայի և Աթոս լեռան վրաց մենաստաններում: Հատկապես մեծ թվով ձեռագրեր են պահպանվել վրաստանի Տաո և Կլարջեթի գավառներից, որոնցից մի քանիսի գրությունները թվականները հայանի են, իսկ մնացածներինը սրոշվում են հնագրական կամ այլ լրացուցիչ տվյալների հիման վրա: Վերջիններիս թվին է պատկանում այն ձեռագիրը, որը մեր աշխատության համար հետաքրքիր նյութ է պարունակում:

Մեր ուսումնասիրության համար անհրաժեշտ նյութ ընձեռող ձեռագիրը իրենից ներկայացնում է օրհներգերի ժողովածու, այսպես կոչված «ՈՂՅՈՒՆՈՂ — յատկար», կազմված վրաց օրհինալ և թարգմանական երգերից վրաց հայտնի օրհներգագիր Միքայել Մոդրեկիլու կողմից: Միքայելի սույն ժողովածուն (S—425) բաղկացած է 544 մազաղաթյա մեծագիր (35,5×30,5 սմ) էջերից¹: Ձեռագրում պահպանված հիշատակարանների մեջ Տաո-Կլարջեթում գործող պատմական անձնավորությունների հիշատակությունը հնարավորություն է տալիս ձեռագիրը ընդօրինակած համարել 978—988 թվականներին²: Տաո-Կլարջեթում գրված այս հուշարձանը, 10-րդ դարի մյուս ձեռագրերի նման, որոնք, սակայն, իրենց բովանդակությամբ զիջում են Միքայելի ձեռագրին, ի միջի այլոց մեծ արժեք է ներկայացնում նաև այն պատճառով, որ նրա մեջ ընդօրինակված օրհներգերի ճնշող մասը գրված է նեմային նշաններով, այսինքն կրած ժրտական խաղերով, որոնց վերծանումը, շնայած մինչև այժմ կատարված փորձերին, դեռևս չի հաջողվել³:

Ժողովածուի տարրեր էջերում, օրհներգերի տների վերջում, երբ վերջին բառից հետո բավական ազատ տեղ է մնացել, տեղ-տեղ, բնագրի գրչի ձեռքով գրվել են հայերեն առանձին բառեր կամ ֆրազներ: Հայերեն գրությունների թիվը 29 է, դրանք գրված են կարմիր ու սև թանաքով բոլորագիր երկաթագրով, բացի մեկից, որը դուռ բոլորագիր է: Ահա դրանց ամբողջ ցուցակը համապատասխան տեղերի նշումով (տրվում է նաև բնագրի նմանահանությունը):

¹ Ի. Ա. Բ. Ուլաձե, *Վրաց գրության նմուշներ (հնագրական ալբոմ, վրացերեն)*, Քրիլիսի, 1949, էջ 98—101 (նմուշներ) և էջ 304—305 (տեղեկութ.):

² Կ. Կեկելիձե, *Վրաց գրականության պատմություն, հին մատենագրություն, հատ. II*, 2-րդ հրատարակություն (վրացերեն), Քրիլիսի, 1941, էջ 155:

³ I. B. Thibaut. *Нотные знаки в грузинских рукописях*. «Христианский Восток», т. III, вып. II, Петроград. 1915, стр. 207—212.

Էջ, տող	տեքստի վերջին վրացերեն բառերը	չարունակված հայերեն բառերը
1. 7,1 (ներքևից)		ՏՐ ՈՂՈՐՄԷ ՄԻՔԱՅԼԻ, ԱՄԷՆ
2. 42,1 »	...լմրտիսա սամոտեցո	ԴՐԱՆՏ ԱՅ
3. 44,1 »	...լիլի ֆյալոմաա	ՄԷԾ ՈՂՈՐՄՈՒԹՆ
4. 47,20	...Շարի	ՅՈՂ
5. 48,4	...լիլիֆոման սժալման	ՄԻ ԿԻՈՍ(կարմիր թանաքով)
6. 55,9	...լտիսա սիՇյուաո	ԲԱՆՏԱՅ
7. 55,11	...ալիլեղեղե	ՓԱՌԱԲԱՆԷԻՆ
8. 58,11		ԾՆՈՒՆԴ ՔՍԻ
9. 58,27	...քրիստեսա	ՅՍ ՔՍ ՏՐ ԱԾ
10. 60,1 (ներքևից)		ՏՐ ՊԱՀԵ Ի ՉԱՐԵ
11. 76,1 »	...ճրֆյինջալեա	ԲՐԾԿԻՆՎԱԼԷՍԱ
12. 86,7	...քմաա զ Ի	Ք
13. 160,1 (ներքևից)	...գանաախա	ՆՈՐՈԳԵՅ
14. 187,1 »	...ֆինամորթեղ'իսասա	ԿԱՐԱՊԷՏ
15. 204,20	...գանանատլնա սլունի ճլեղնի	ՂՈՒՍՍԻՈՒԷՐԷՅ ՉԱՆՉՆ ՉՄԷՐ
16. 204,25	...սոլլիսանի	ՉԱՇԽԱՐՀԻ
17. 206,1 (ներքևից)	...լի և յաՇի սրլլի	ԱԾ ԵՒ ՄԱՐԴ
18. 228,19	...ճարիաճ ՄԱՐԻԱՄ	ՄԱՐԻԱՄ
19. 229,1 »		ՏՐ ՈՂՈՐՄԷ ՄԻՔԱՅԼԻ
20. 266,1 »	...ճեղի ֆյալոմիսաա	ՉԷԹ ՈՂՈՐՄՈՒԹԷՆ
21. 277,21	...ֆյալոմաա	ՈՂՈՐՄՈՒԹԻՆ
22. 283,15	...գալիլեղե	ՓԱՌՔ
23. 284,13	...գալոմիտ ճալիլեղե	Փառս տաճր
24. 362,1 (ներքևից)		ՄՈՒՍԷՍ (կարմիր թնք)
24ա. 367,1	ժե ալլա...	ՅԱՐԷԻ ՔՍ
25. 470,17		ՏՐ ՈՂՈՐՄԷԱ
26. 472,1 (ներքևից)		ՏՐ ՊԱՀԵ Ի ՉԱՐԷ
27. 516,1 »		ՏՐ ՈՂՈՐՄԷ ՍՏԷՓՆԱ
28. 532,1 »		ՏՐ ՈՂՈՐՄԷ ՄԻՔՅԼԻ
29. 542,1 »	...ճեճլեսր	ԽՈՒԷՐՏԱԿԷՅԵՐ

Վարժ ձեռքով գրված սույն հայերեն հիշատակագրությունները նույն թանաքով են, ինչ-որ բուն ձեռագրի տեքստը: Կասկածից դուրս է այն, որ այդ հիշատակագրությունները պատկանում են նրանց, ովքեր ընդօրինակել են վրացերեն բնագիրը: Հետևաբար, անվիճելիորեն, թե՛ վրացերեն տեքստը և թե՛ հայերեն հիշատակագրությունները գրված են միևնույն ժամանակ, այսինքն, ինչպես նշեցինք վերևում, 10-րդ դարի վերջին քառորդում:

Պարզ կարելի է հասկանալ, թե ինչ են ներկայացնում իրենցից հետևյալ հիշատակագրությունները՝ ՏՐ ՈՂՈՐՄԷ ՄԻՔԱՅԼԻ, ԱՄԷՆ (1), ՏՐ ՊԱՀԵ Ի ՉԱՐԵ (10), ՏՐ ՈՂՈՐՄԷ ՄԻՔԱՅԼԻ (19), ՏՐ ՈՂՈՐՄԷԱ (25), ՏՐ ՊԱՀԵ Ի ՉԱՐԷ (26), ՏՐ ՈՂՈՐՄԷ ՍՏԷՓՆԱ (27), ՏՐ ՈՂՈՐՄԷ ՄԻՔՅԼԻ (28): Ձեռագիրն

1. մի : ողորմե : միբլանի : վմբն : ։ ։

2. անձեռեն եւմապղս : ԳՐԱՅՍԻ ԱՅ ։

3. ան բղտապս ։ ՄԵԾՈՂՈՄՈՐԹՆ ։

4. բապտի : ։ ՅՈՂ ։

5. աղջրամծե՛ ևեամծե՛ : ՄԻ ԿԵՈՍ ։

6. անեն եղբայրս : ԲԱՆՄ ԱՅ ։

7. անձիջճղե : փԱՌԱԲԱՆԵՆ ։

8. ՏՄՈՐՄԻ ՔՄԻ ։

9. Բանկղե : ՅԱՔՍ ՄԻ ԱՅ ։

10. մի ԳԱՆԵՒՉԱՐԵ ։

11. անե կիբարեղբաղե : ԲՈՇՆԵՍԱՎԵՍԱ

12. ԿՕ Գ ։ Գ Ի

13. շեմե արտ : ։ ։ ԵՈՐՈԳԵՅ ։

14. ԿԱՄԱՊԵՄ ։

15. արե՛նե՛տան : ևաբան բապղե՛ն : ԳՐԻՍԱՎՈՒՐԵՅ ։ ԶԵՆՁՆ ԶՄԵՐ ։

16. ևարտեան : ԶԱՆՈՒՎՐԱԻ ։

17. ան ան կղ եկաբա : ։ ։ ։ ԱՅ ԵՐ ՄԱՐԳ ։

18. ձեռամ : ԿԱՐԻՈՒՄ ։ ՄԱՐԻՎԱՐ ։

19. մի ողորմե : միբլանի ։

20. նզա բաբապղե ։ ։ ։ ։ ԳԵՂՈՂՈՄՈՐԹՆ ։ ։ ։

ընդօրինակող գրիչներից մեկը, որ Միքայել Մողրեկիլու հետ միասին հիշվում է վերը բերված հիշատակագրությունների մեջ, պետք է լինի Ստեփանը. այս երկու գրիչները, ինչպես տեսնում ենք, աղերսում են աստծուն ողորմել իրենց և դերձ պահել շարից, մի բան որ ընդհանրապես սովորական է միջնադարյան բոլոր գրիչների համար:

Մեր կարծիքով ձեռագրի գրիչներից մեկն է նաև 24-րդ հիշատակագրության մեջ հիշված ՄՈՒՍԷՍ-ը:

8-րդ հիշատակագրությունը ՄՆՈՒՆԴ ՔՄԻ նշում է այն տոնը, որին նվիրված է օրհներգի ամբողջ տեքստը:

21. ԲԿԵՐՈՒՄՅԱՆ ԿՆՆՆԵՐ ԵՎ ՈՂԵՐՈՒՄՆԵՐ

22. ԿՆՆՆԵՐ ԵՎ ՈՂԵՐՈՒՄՆԵՐ

23. ԿՆՆՆԵՐ ԵՎ ՈՂԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՂԵՐՈՒՄՆԵՐ

24. ԺՈՒՍԷՍ

25. ԺՐՈՂՈՒՄՆԵՐ

26. ԺՐՈՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՂԵՐՈՒՄՆԵՐ

27. ԺՐՈՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՂԵՐՈՒՄՆԵՐ

28. ԺՐՈՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՂԵՐՈՒՄՆԵՐ

29. ԿՆՆՆԵՐ ԵՎ ՈՂԵՐՈՒՄՆԵՐ

11-րդ հիշատակագրությունը՝ ԲԲԿԵՐՈՒՄՅԱՆ ԿՆՆՆԵՐ ԵՎ ՈՂԵՐՈՒՄՆԵՐ ներկայացնում է համապատասխան տողի վրա նրանից առաջ գտնվող վրացերեն բնագրի վերջին բառի (ծՐՄԿԵՆՅԱՆ) տրանսլիտերացիան:

Մնացած 19 հիշատակագրությունները, վերջինիս նման, ներկայացնում են իրենցից առաջ գտնվող վրաց բնագրի վերջին բառերի վերարտադրությունը, սակայն ոչ թե տրանսլիտերացիայի ձևով, այլ գրեթե հայերեն ճշգրիտ թարգմանությամբ:

Ինչպես տեսնում ենք, այդ հիշատակագրությունները որևէ անմիջական կապ չունեն վրաց օրհներգերի ժողովածուի բուն տեքստի հետ: Գրիչների կողմից դրանք ներկայացված են միմիայն այն նպատակով, որպեսզի ցույց տան, թե բացի վրացերենից, իրենք տեղյակ են եղել նաև օտար գրչության: Տասկարգեթում 10-րդ դարում գործող վրաց գաղթի համար օտար լեզուներից առաջին հերթին մատչելի էր հայերենը և ապա հունարենը: Ի միջի այլոց այդ ոլորտը կերպով երևում է նաև մեր բերած հիշատակագրություններից, որոնցից մի քանիսի կողքին գետեղված են հունարեն համապատասխան բառեր: Վրաց գաղթի հայերեն գրչության իմացությունը մեծ չափով նպաստում էր այն հանգամանքը, որ ինչպես առաջ, նույնպես և այդ ժամանակ նրանց միջավայրում կային դավանաբանորեն հազորդակից հայեր, որոնք հատկապես իրենց մայր հայրենիքում գործունեության ասպարեզը կորցնելուց հետո (դավանաբանական հողի վրա)՝ հետզհետե կորցնում էին իրենց մայրենի լեզվի, առաջին հերթին ժամանակի գրական լեզվի, իմացությունը և ձուլվում վրացիների հետ:

Մոտիկ ծանոթությունը ժողովածուի հայերեն հիշատակագրությունների լեզվին, անկասկած, վկայում է այն մասին, որ նրանց գրանցողները տիրապետում են հայերենին, հնարավորություն ունեն իրենց միտքն արտահայտել հայերեն լեզվով, ինչպես նաև թարգմանել ընդօրինակվող վրաց բնագրի բառերը, երկու դեպքում էլ հայկական լավ գրչությամբ: Չնայած այս բոլորին, նրանց կողմից մեջ բերված հայերեն բառերի ու խոսքերի ձևերը բնորոշ չէին այն ժամանակվա հայերեն գրական լեզվի համար: Հիշատակագրությունների լեզուն օժտված է ավելի կենդանի խոսակցական հայերեն լեզվի հատկություններով, քան թե ժամանակի գրական լեզվի: Նրանց շեղումները հայերեն գրական լեզվի

բերականական նորմաներից բացահայտում են բարբառի որոշ նշաններ թե՛ ձևաբանության և թե՛ հնչյունաբանության տեսակետից: Քանի որ այդ հիշատակագրությունները գրվել են Տառ-Կլարչեթում, հետևաբար դրանց մեջ նկատվող բարբառային երևույթները կարելի է ընդունել 10-րդ դարի Տայքի հայերեն լեզվի-բարբառի համար իրրև բնորոշ հատկություն:

Վերը բերված հիշատակագրությունների մեջ Տայքի հայերեն բարբառին բնորոշ հնչյունաբանական նշանները հետևյալներն են.

1. Որոշ ձայնավորների վերածվելը երկբարբառի:

Ու ձայնավորը բառամիջում Ր բաղաձայնից, առաջ վերածված է երկբարբառի: Այսպես՝ իրրև անվանկարար տարր մեկ դեպքում Ո ձայնավորից հետո ավելացվում է է, իսկ մյուս դեպքում այն դառնում է ու և հետո նյունակես ավելացվում է է: Առաջին և երկրորդ դեպքերի համար ունենք միայն մեկական օրինակներ (15 և 29)՝ ղուսաւոէրէց ← լուսաւորեաց. խաւէրտակէցեր ← խորտակեցեր: Նման երևույթներ այսօր էլ գոյություն ունեն նաև վանի, Ուրմիայի և Մարաղայի հայերեն բարբառների մեջ¹:

2. Որոշ երկբարբառների վերածվելը ձայնավորի:

Ոչ երկբարբառը փակ վանկում վերածված է ո ձայնավորի: Այս դեպքի համար մեր ձևագրի տակ ունենք միայն մեկ օրինակ (5), այն է՝ կիոս ← կոյս: Այստեղ նկատվում է հնչյունաբանական մեկ այլ երևույթ ևս, որի մասին կխոսվի ստորև:

Ը երկբարբառը փակ վանկում պատահում է իրրև ի ձայնավոր: Սրա համար էլ ունենք մեկ օրինակ (21)՝ սղորմութին ← սղորմութիւն: Այս երևույթը շատ է տարածված Երևանի և Ղարաբաղի արդի հայերեն բարբառներում²:

Յա երկբարբառը, որ ներկայացված է է կամ Ե ձայնավորով, օտար չէ նաև արդի հայերեն մի շարք բարբառների համար³: Այս երևույթի օրինակները բաց վանկում հետևյալներն են՝ սղորմէ (1, 19, 27, 28) և պահէ/է (10, 26) ← սղորմեա, պահեա (հրամայական եղանակի 2-րդ դեմք), իսկ փակում՝ նորոգեց (13), ղուսաւոէրէց (15) և սղորմութէն (20) ← նորոգեաց, լոսաւորեաց (անցյալ կատարյալ 3-րդ դեմք) և սղորմութեան (սեռական հոլով): Հրամայական եղանակի 2-րդ դեմքի ձևը (ներգործական կերպի բայերի համար) վերը նշված ձևով կա նաև միջին հայերենում⁴: Անցյալ կատարյալի 3-րդ դեմքի վերը նշված ձևը նույնպես սովորական է միջին և նոր հայերենի համար: Միջին հայերենին օտար չէ նաև -իւն-ով վերջացող անունների սեռական հոլովի -են/էն վերջավորությունը⁵:

3. Որոշ ձայնեղ բաղաձայնների խլացումը:

Դ ձայնեղ բաղաձայնը մեկ դեպքում (6) բառի վերջում վերածված է ա խուլ բաղաձայնի՝ բանա (Ա₁) ← բանդ (Ա₂):

4. Ետնալեզվային բաղաձայնի փմայնացումը:

Կ-ի քմայնացման մեկ օրինակ ունենք (5)՝ կիոս ← կոյս: Ետնալեզվային հույակ բաղաձայնների (գ, կ, ք) քմայնացումը արդի հայերեն բարբառների հա-

¹ Ա. ր. Ղ ա ր ի ր յ ա ն, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 116—117:

² Նույն տեղում, էջ 119:

³ Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայ բարբառագիտություն, 2-րդ մաս, Մոսկվա—Նոր-Նախիջևան, 1911, էջ 16:

⁴ Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 249:

⁵ Նույն տեղում, էջ 250:

մար էլ հազվագյուտ չէ: Այս երևույթին հանդիպում ենք Վանի, Ուրմիայի, Ղարաբաղի և այլ բարբառներում¹:

5. Շեշտադրությամբ պետք է բացատրել ա-ի սղումը սեռական հոլովում, ձևադրում պահպանված հետևյալ հատուկ անվան մեջ՝ Ստեփնա ← Ստեփանայ: Շեշտը այստեղ (27) երևի գրված է վերջից 3-րդ վանկի վրա:

6. Բացի վերոհիշյալ այն դեպքերից, որոնք վերաբերում են զուտ ձևաբանությանը (հրամայական եղանակի 2-րդ դեմքի, անցյալ կատարյալի 3-րդ դեմքի և -իւն վերջավորությունն ունեցող անունների սեռական հոլովի ձևերին), հիշատակադրությունների մեջ մեկ դեպքում (23) ներկա ժամանակի առաջին դեմքի սպասելի -մէ վերջավորության փոխարեն ունենք -նէ՛ տանէ ← տամէ (նկատենք նաև, որ բոլորագրով գրված այս բառի ն տառը գրված է վրացերեն բոլորագրով): Այս ձևի նման փոփոխություն հանդիպում ենք գեոևս միջին հայերենում², որը սովորական է արդի հայերենի համար:

Ինչպես տեսնում ենք, հայերեն գրական լեզուն լավ շտիրապետելու հետևանքով, 10-րդ դարի վրացերեն ժողովածուի գրիչների հիշատակադրությունների մեջ նկատվող լեզվական երևույթները կրում են բարբառային բնույթ: Այն հանգամանքը, որ ձևադրի գրիչները թերավարժ են եղել հայկական գրությունների մեջ, մեզ հնարավորություն ընձեռեց բացահայտել իրենց ժամանակի Տայքի հայերեն կենդանի խոսակցական լեզվի՝ Տայքի բարբառի մի քանի բնորոշ կողմերը:

Վրաց դպիրների կողմից գրած հիշյալ հիշատակադրությունների մեջ, ինչպես սպասելի էր, նկատվում են վրաց լեզվի ազդեցության հետքերը: Ս և է տառերը գործածված են մեկը մյուսի փոխարեն (պահե ի շարե ← պահէ ի շարե, ողորմէա ← ողորմեա, այնպես ինչպես այդ տեղի է ունեցել վրաց գրականության մեջ 10-րդ դարում: Այսպես նաև շ հնչյունը մի դեպքում ներկայացված է ղ-ով (դուաւտէրեց), իսկ մյուս դեպքում շ-ով (բրժկինվալէեսա, վրացերենում կա միայն մեկ տեսակի շ), կամ էլ վ-ի տեղ լ-ի գործածություն (Մուաէս ← Մովսէս), և վերջապես մեկ դեպքում «տանք» բայի գրչության մեջ հայկական ն-ի տեղ վրացերեն նուսխա-խուցուրի ն-ի սպրդումը հաստատում է այն, որ ընդօրինակողների համար հարազատ է եղել վրաց լեզուն ու դպրությունը, իսկ հայերենը, որով նրանք տեղ-տեղ կատարել են հիշատակադրություններ նրանց համար եղել է ոչ հարազատ, բայց միաժամանակ գործնականորեն (իրևե խոսակցական լեզու) հասկանալի ու գործածական:

Տառ-Վլարշեթում 10-րդ դարի 70-ական թվականներին ընդօրինակված մի ձևագիր էլ, որ վրաց բանասիրության մեջ հայտնի է Շատերդդի ժողովածու (Տ—1141) անունով, ունի ժողովածուի գրչի՝ Իոանէ Բերայի ձևերով գրանցված մի քանի հայերեն հիշատակադրություններ: Այդ հիշատակադրությունների ֆոտո-պատճենները կցելով ժողովածուի մեջ ղեռնդված «Երգ երգոցի» Հիսոդիտոսի մեկնությանը՝ հրատարակել է ակադեմիկոս Ն. Մառը (ТР, книга III, էջ XXVIII—XXX):

Միքայել Մոգրեկիլու երգարանի մեջ տեղ գտած հայերեն հիշատակադրություններում տեղի ունեցած վերը հիշված բարբառային երևույթները որոշ

¹ Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի պատմության, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 243:

² Ա. Բ. Ղ ա ռ ի բ յ ա ն, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 133, նաև Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 250:

շափով կրկնվում են նաև Իոանն Բերայի հիշատակագրությունների մեջ: Այսպես, օրինակ՝

1. Որոշ երկրաբառների վերածվելը ձայնավորի:

Բերան մի տեղ գրում է «Աժ որհնէ Բերայն գրագիրս, ամին»: Այստեղ «որհնէ» գրել է սպասելի «արհնեա» ձևի փոխարեն: Եւ երկրաբառը վերածված է է ձայնավորի, այնպես ինչպես այդ մենք տեսանք երգարանի հիշատակագրությունների մեջ (պահե/է, ողորմէ ← պահեա, ողորմեա): Բերան, ինչպես և երգարանի գրիչը, գիտե հիշված բայերի հրամայական եղանակի երկրորդ գեմքի նաև գրական ձևերը: Օրինակ՝ Միքայելի մոտ «ողորմէա» (25), իսկ Բերայի մոտ «ոգնիա» ← ազնեա: Բերայի կողմից եւ երկրաբառի այսպիսի գործածությունը վկայում է այն մասին, որ 10-րդ դարի 70-ական թվականներին այդ երկրաբառի արտասանությունը եղել է իսկ ձևով:

Վերը բերված օրինակներով հաստատվում է նաև այն, որ ա երկրաբառը 10-րդ դարում արտասանվել է իբրև ո, այսինքն աւ-ը վերածվել է ո ձայնավորի:

2. Որոշ ձայնեղ բաղաձայնների խլացումը:

Իբրև հիշատակագրություն բերված «Հայր մեր» աղոթքի հայկական տեքստի սկզբներում հիշվող «սուրբ» բառը Բերան գրել է «սորփ» ձևով, այսինքն վերջին ձայնեղ ք-ն ներկայացված է իբրև շնշեղ-խուլ փ: Ուրեմն ձայնեղ բաղաձայնը նրա մոտ որոշ դեպքերում խլացած է, մի բան, որ մենք տեսանք նաև երգարանի հիշատակագրությունների մեջ՝ բանտ ← բանդ:

Ի տարբերություն Մողրեկիլու ժողովածուի հայերեն հիշատակագրությունների, Բերայի մոտ մենք հանդիպում ենք հնչյունաբանական այլ երևույթների ևս: Այսպես, շեշտ ունեցող ե-ն ներկայացված է ին ձևով. օրինակ՝ «Հայր մեր»-ի փոխարեն «Հայր միեր»: Նման երևույթ նկատվում է նաև հայերենի ժամանակակից բարբառների մեջ, ինչպես, օրինակ՝ վանի, Ուրմիայի և Նոր Բայազետի բարբառներում¹:

Բերայի հիշատակագրություններում վրաց գրական լեզվի ազդեցության հետքերն ավելի են նկատելի, քան թե երգարանի հիշատակագրություններում: Օրինակ՝ ո և ր տառերը վրացերենի ազդեցությամբ գրված են միայն փափուկ ր-ով (արնէ ← առնէ) և «ամին» փոխարեն «ամին»-ի: Այս կապակցությամբ չի կարելի չհիշել Ն. Մառի գնահատականը Բերայի վերաբերյալ՝ «Но познания этого грузина в книжном армянском, не смотря на его умение каллиграфически выводить армянские буквы, были, очевидно, весьма слабы»²: Եվ իբրք, երբ մենք համեմատում ենք երգարանի հիշատակագրությունների լեզուն Բերայի հիշատակագրությունների լեզվի հետ, պարզ կերպով տեսնում ենք, որ Բերայի գիտելիքները ժամանակի հայերեն գրական լեզվի բնագավառում անհամեմատ թույլ են:

Ահա թե ինչպիսի արժեքավոր նոր տվյալներ են հաղորդում մեզ վերը հիշված 10-րդ դարի վրացերեն ձեռագրերի հայերեն հիշատակագրությունները հայերեն լեզվի Տայքի բարբառի որոշ առանձնահատկությունների մասին: Այս-

¹ Ա. ր. Ղ ա ր ի ր յ ա ն, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 110:

² Н. М а р р, Инполит, Толкование Песни-Песней. „Тексты и разыскания по армяно-грузинской филологии“, книга III, СПб, 1901, էջ XX.

պես ուրեմն, հնում հայերեն բարբառների գոյությունը մեր կարծիքով պետք է համարել անվիճելի:

Հայանի է, որ Ց-րդ դարի հայ ահանավոր հեղինակ Ստեփանոս Սյունեցին տեղեկություն է հաղորդում այն մասին, որ Հայաստանի սահմանակից շրջաններում, այդ թվում նաև Տաշքում, գոյություն են ունեցել տեղական խոսվածքներ: Մեր կարծիքով Միքայել Մողրեկիլու և Բերայի հիշատակագրությունների բարբառային առանձնահատկությունները լրացուցիչ հնարավորություն են տալիս Սյունեցու տվյալը մեկնելու ոչ այն առումով, որ նա ականարկել է տեղական բնիկների հին լեզուների մասին, ինչպես կարծել են որոշ հայ և օտարազգի հայագետներ¹, այլ ժամանակի հայ լեզվի բարբառների մասին:

¹ Տե՛ս այդ մասին Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 128—133:

Ս. ԲԱՐԵՈՒԳԱՐՅԱՆ

«ԷԶՄԻԱԾՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ» ԳՐԶՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

Ինչպես հայտնի է հայկական ձեռագիր մատյանների մեջ «Էջմիածնի ավետարան» ընդհանրապես, կամ «փղոսկրե ավետարան» անունով հայտնի հուշարձանը իր հնությամբ, գրչությամբ, մանրանկարներով և մանավանդ փղոսկրե կաղմով՝ ուրույն և պատվալուր տեղ է գրավում մեր միջնադարյան ձեռագիր դանձերի շարքում:

Այդ կոթողի մասին հայ և օտարազգի բանասերները գրել են մի քանի ուսումնասիրություններ¹, սակայն ձեռագրի «կենսագրության» մի ամենակարևոր հարցը, նրա գրչության վայրի խնդիրը, մնացել է գեռևս չուժված և անորոշ:

Ձեռագիրն ունի ընդարձակ հիշատակարան, որի մեջ հիշատակված է գրչության վայրը՝ Նորավանք, ստացողը՝ «Ստեփանոս կրանաւոր և անարժան քահանայ հայկաղնեա» և գրիչը՝ Յովհաննէս. գրչության թիվը՝ ՆԼԸ=989:

Մի երկրորդ հիշատակարան էլ հայտնում է, որ ավետարանը ՌԿԲ=1213 թվականին, ոմն Գուրծին, վահրամի որդի, գնել է և նվիրել Մազարդա վանքին — ս. Ստեփանոսին. այնուհետև հայտնի է նաև, որ այդ վերջին կայանից ավետարանն էջմիածին է փոխադրել Մակար եպիսկոպոսը (հետո կաթողիկոս). ձեռագիրն այժմ պահվում է Պետական Մատենադարանում — № 2374 (229):

Առաջին հայացքից թվում է, թե այս կարևոր հուշարձանի «կենսագրությունը» վերաբերող բոլոր տեղեկությունները լրիվ են և անորոշ ոչինչ չկա. սակայն հիշատակարանում որպես գրչության վայր անորոշ ձեռով Նորավանք հիշատակումը քստ ինքյան առիթ է տալիս անորոշության:

Բանն այն է, որ մեր մատենագրության մեջ հիշատակություններ կան շորս Նորավանքերի մասին՝ շինված տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում, իսկ որ էլ ավելի դժվարացնում է խնդիրը՝ դա այն է, որ մինչև վերջին տասնամյակները այդ շորս Նորավանքերից միայն մեկի տեղն էր հայտնի: Ձեռագրի հիշատակարանի առաջին պարբերության մեջ դավարանվում է վանքի հիմնադիրը, որը «թողեալ զհայրենական շքեղաշքութիւնն, քանոն կրանից միանձանց եղեալ, յերկրի զանձարմնոյն քերեալ արինակ՝ Նոցին եղև հազորդ, թողլով յերկրի իւրայնոցս աշակերտելոց արինակ գնացից կենաց պողոտային, և սանդուխս ի վերինն Սիւսն, զանուանեալ Նորս վանս՝ հիմնարկեալ ի սմա վկայարան նոյնանուն իւր սրբոյ նախավկային Ստեփանոսի»:

Իսկ ստացողն իր մասին հազորդում է. «Իսկ ես յետին և ամենանուսաս

¹ Տե՛ս Մ տ ր շ ի գ ո Վ ո՛ կ ի, Էջմիածնի ավետարանը, էջ 16, 1892, Վիեննա, Թարգմ.-Վ. Պիլեգրիկճեան, նաև՝ «Հանդէս Ամսօրեայ», 1891, էջ 206:

Ստեփանոս՝ մուլտրական կրանաւոր և անարժան քահանայ նորին աշակերտ և եղբարորդի հայկազնեա»¹։

Այս մանրամասնութիւնները պարզում են Ա. որ Նորավանքը հիմնադրել է ոմն Ստեփանոս, Բ. որ Նորավանքում շինված եկեղեցին կոչվել է Նախավկա Ստեփանոս, Գ. որ ձեռագրի ստացողը վանքի հիմնադրի եղբորորդին է՝ նույնպէս Ստեփանոս սնունով և Դ. որ վանքի հիմնադրի համար գործածված «Թողեալ զհայրենական շքեղաշքութիւնն», իսկ ձեռագրի ստացողի համար՝ «Հայկազնեա» անականներն ապացուցում են ազգական երկու Ստեփանոսների իշխանական ծագումը։

* * *

Ձեռագրի հիշատակարանի այս հիմնական տեղեկութիւններն ի նկատի ունենալով, այժմ քննենք, թե մատենագրութեան մեջ հիշատակված շորս Նորավանքերից ո՞րը կարող է համընկնել այս փաստերի հետ։

Մեկ Նորավանքի մասին տվյալ կա Մովսէս Կաղանկատուացու պատմութեան մեջ։ Տոհակայ գալառի (Խաչենի) տեր Ատրներսէ՛ը դառնում է տեր նաև Գեղարքունիք գալառին, ապա դերվում է և քշվում Պարսկաստան 9-րդ դարի վերջերին, սրա կին Սպրամբ՝

«Մեծածախ տենշմամբ շինէր զՆորավանս ի գալառին Սողէից ամենապայծառ դարդուք»²։

Պարզ է, որ այս Նորավանքի ոչ հիմնարկողի անունը և ոչ էլ այլ մանրամասնութիւնները ոչ մի կերպ չեն համընկնում հիշատակարանի Նորավանքի հիմնարկողի անվան և մանրամասնութիւնների հետ, հետևաբար ձեռագրի դրշութեան վայրի խնդիրը պարզարանելու համար այս Նորավանքը հաշվի առնվել չի կարող։

Այս վանքի տեղը այժմ անհայտ է։

Մեր խնդրի համար ավելի կարևոր են Սյունյաց պատմիչ Ստ. Օրբելյանի հաղորդածները։ Պատմիչն իր աշխատութեան մեջ հիշատակում է Սյունյաց աշխարհում գոյութիւն ունեցող երեք Նորավանքերի մասին, երկուսը Վայոց Ձորում և մեկը՝ Բղենո (Բղեան) գալառում։

Վայոց Ձորի առաջին Նորավանքը Ամաղու գյուղի մոտի հռչակավոր վանքն է, իսկ երկրորդը միայն մի անգամ է հիշատակվում, առաջինից անմիջապէս հետո «միւս Նորավանք» ձևով, առանց որևէ այլ մանրամասնութեան (զլ. ԿԲ), հետևաբար մեր խնդրի համար որևէ օժանդակութիւն ընձեռել չի կարող. մանավանդ, որ տեղն էլ անհայտ է։ Դրան հակառակ առաջին Նորավանքի, Ամաղու գյուղի մոտի, մասին պատմիչը շատ բնութարան է և մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում իր աշխատութեան բազմաթիւ էջերում, որից բացի նրա հիմնարկմանը, նկարագրութեանն ու պատմութեանը նվիրում է երկու հատուկ գլուխներ (ԿԳ—ԿՆ). հուշարձանի և՛ տեղն է հայանի և՛ բազմաթիւ շինութիւնների մեծ մասը տարրեր վիճակում կանգուն են մինչև այժմ էլ. այս բոլորը առիթ են տվել «էջմիածնի ավետարանը» ուսումնասիրողներից ոմանց հենց այս Նորավանքն էլ համարել ավետարանի դրշութեան վայրը։

¹ Գ ա ռ ե դ ի ն Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա. Անթիլիաս, 1951, էջ 155։

² Մ. Կ ա ղ ա ն կ ա տ ու ա ջ ի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 389։

Ըստ պատմիչի «Յառաջ քան բազում ժամանակօք, վաղ աւուրքք և հնազոյն ամօք, ի նեղ և անձուկ ձորակին այնմ» գոյութիւն են ունեցել երկու եկեղեցիներ ս. Կարապետ և ս. Փոկաս անուններով: Միայն Օրբելյանների տիրապետութեան ժամանակ նորավանքն սկսում է արագ կերպով ծաղկել ու հոգեւոր կենտրոն դառնալ, այսպէս՝ եպիսկոպոս Սարգիսը 1216—1223 թվականներին շինում է եկեղեցի «Հրաշագան յօրինուածովք յանուն սրբոյ նախավկային»¹ (Ս. Ստեփանոսի), որից հետո կարճ ժամանակի ընթացքում կառուցվում են, Օրբելյան իշխանների օժանդակութեամբ, ս. Կարապետ, ս. Գրիգոր, Աստվածածին եկեղեցիները նաև գալիթ ու այլ շէնքեր և վանքը դառնում է Այունիքի եպիսկոպոսանիստ կենտրոն և Օրբելյան տոհմի դամբանատուն:

Համեմատելով այս տեղեկութիւնները «Էջմիածնի ավետարանի» հիշատակարանի հետ, միայն մի կետ ենք դանում, ուր նրանք համընկնում են, դա նախավկա Ստեփանոս անունով եկեղեցու հիշատակութեան փաստն է, սակայն, ինչպէս տեսանք հիշատակարանի մէջ, նրա հիմնադիրն է Ստեփանոսը և կառուցվել է անպայման մի քանի տասնյակ տարի առաջ քան կղզիեր ավետարանը 989 թ., որովհետև ստացող Ստեփանոսը պարզ հայտնում է, որ ինքը փանչի հիմնադիր Ստեփանոսի աշակերտն ու եղբորորդին է, այսպիսով վանքի կառուցումը 10-րդ դարի կեսերից ուշ լինել շէր կարող: Մինչդեռ Ամաղուի նորավանքի ս. Ստեփանոս եկեղեցին կառուցել է Սարգիս եպիսկոպոսը, Օրբելյան իշխանի օժանդակութեամբ 1216—1223 թթ. մոտ 200 տարի ավետարանը գրվելուց հետո, հետեւաբար այս միակ նման կետը ևս կորցնում է իր արժեքը «Էջմիածնի ավետարանի» գրչութիւնը Ամաղուի նորավանքի հետ կապելու համար: Այնպէս որ Սարգիսովսկու կարծիքը թե «նորավանքն Վայոց-Ձոր դաւառին մէջ է, և նորավանքից ս. Ստեփանոս եկեղեցին կը յիշուի նաև Մղուներու արշավանաց ժամանակ, երբ նրկում այնտեղ թաղուեցաւ հիշատակարանին համեմատ մեր Աւետարանն ալ այս եկեղեցու խորանին համար էր»² կորցնում է իր արժեքը:

Ստ. Օրբելյանի հիշատակած երրորդ նորավանքը պատմիչը տեղադրում է Բղենո (Բղեան) գավառի մէջ. այս հուշարձանի հիմնադրմանն ու պատմութեանը նվիրել է մի հատուկ գլուխ — «Վասն շինութեան նորավանքից որ ի գաւառին Բղենոյ» (գլ. Խէ): այդտեղ հաղորդվում է, որ Սիսական տոհմից (իշխանազուն) Գևորգ քահանան իր Ստեփանոս որդուն մանկութիւնից տվել էր կրթութեան. Ստեփանոսը մեծանալով ձեռնադրվում է քահանա և կամենում է շինել վանք ու եկեղեցի, որպեսզի նրա առաջնորդն էլ ինքը լինի: Փնտրում և գտնում է Կատարոյ վանքի թիկունքում հարմար տեղ «յոյժ գեղեցիկ և վայելուշ՝ ի մէջ երկու ձորոց ի վերայ հարթ սասոյ միոյ» և Հրահատ իշխանի օժանդակութեամբ շինում է եկեղեցի, գալիթ և սրահ, 936 թ. մահանում և թաղվում է իր ձեռակերտում 970 թ.: Ստեփանոսին հաջորդում են որպէս վանահայրեր՝ Հրահատը, ապա Քրիստափորը, որ Ստեփանոսի եղբորորդին էր: Հետագայում այդտեղ շինվում են այլ շէնքեր ևս:

Մինչև վերջերս ոչ միայն այս նորավանքի, այլև Բղեան գավառի տեղը մնացել էր անհայտ: Խնդիրն այն է, որ Ստ. Օրբելյանի պատմութեան գավա-

¹ Ստ. Օրբելյան, անդ, 344:

² Սարգիսովսկի, Էջմիածնի ավետարանը, էջ 18: Հեղինակի այս սխալի աղբյուրը ձեռագրի առաջին ուսումնասիրող Ա. Ս. Ուվարովն է, տե՛ս նրա Эчмнадзинская библиотека—Пятый арх. с'езд в Тифлисе, Москва 1879, стр. 352—353.

ուսացանկերի մեջ այս դավառը տեղ չի գտել և մեկ անգամ միայն այս, նույնպես անհայտ, նորավանքի առնչությամբ հիշատակված լինելով՝ հնար չի եղել դավառի տեղադրումը գտնել: Նույնիսկ հմուտ տեղադրող Ալիշանի ուշադրությունից վրիպել են պատմիչի աշխատության մեջ գտնվող մանրամասնությունները, որոնց հիման վրա կարելի է ճիշտ տեղադրել Բղեան դավառը¹: Նախ ասենք, որ Ստ. Օրբելյանը քանիցս ասում է, որ Սյունյաց բոլոր դավառները չի հիշատակում, այսպես՝ «Բայց այլ ևս ունի գաւառս յոլով գորս ոչ յիշեցաք. է՛ որ փոխեալ են անուանք սոցա. է՛ որ յայլ և այլ գաւառս բաժանեալ են»²:

Պատմիչը նկարագրելով՝ Սմբատ Օրբելյանի նվաճումների հաջորդականությունը Սյունիքում, ասում է. «էառ և թափեաց զերկիրն Որոտան բովանդակ մինչև ի սահմանն Բորոտնայ և Բղենոյ, յորում և կայր ընդ աւեր աթոռն Միւնեաց Տաթև»³:

Պատմիչի այս հաղորդումից սլարդ երևում է, որ Բղենո դավառի տեղը Որոտանի ափին է, հատկապես այք, ուր գտնվում է Տաթևի վանքը, որն այդ նկարագրությամբ գտնվում էր հենց Բղենո դավառի մեջ. և իրոք, Տաթևը հետադաշում էլ մերթ շարանդ և մերթ Մղուկ դավառների մեջ է հիշատակվում, դրան ապացույց կարող է լինել և այն, որ պատմիչը հիշատակում է Բղենո բերդ, և Բղեան գյուղ՝ Մղուկ դավառի մեջ⁴, ու Բողյան գյուղ՝ շարանդ դավառի մեջ⁵:

Սակայն պատմիչի հաղորդած այս բոլոր տեղեկությունները Բղենո դավառի և Բղենո նորավանքի մասին հաստատվեցին Հուշարձանների պահպանության կոմիտեի 1934 թ. գիտարշավի ընթացքում:

Առաջնորդվելով զրոգ Ակսել Բակունցի հաղորդած տեղեկություններով, հորիսի շրջանի երիցաթումբ (այժմ Բարձրավան) գյուղի սահմաններում, Որոտանի այք ափին գիտարշավը հայտնաբերեց մինչ այդ անհայտ մի հուշարձան, որի տեղադրությունը, կանդուն շենքերի նկարագրությունը և մանավանդ արձանադրությունների բովանդակությունը միանգամայն համապատասխանում են Ստ. Օրբելյանի նկարագրած Բղենո նորավանքի հետ:

Այս Հուշարձանը գտնվում է Տաթևից մոտ 15 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, Բարձրավան և Շուռնուխ գյուղերի արանքում, լեռնային մի բազուկի նեղ ծայրին, շրջապատված կուսակաճ անտառներով: Հուշարձանի կանդուն խումբը բաղկացած է իրար կից չորս մասերից, կենտրոնում մի փոքրիկ եկեղեցի՝ 3,20×3,20 մետր ծավալով, որին հյուսիսից և հարավից կցված են նույն երկարության, բայց ավելի նեղ՝ մատուռաձև շենքեր, այս բոլորի առաջ արևմուտքից մի շատ գեղեցիկ գավիթ — սրահ, որի արևմտյան ճակատը ձևավորվում է երեք, մեծ խնամքով ու գեղեցիկ քանդակներով զարդարված կամարներով, որոնց մեջտեղինը բաց է և ավելի բարձր: Այս փոքրիկ հուշարձանը իր ճարտարապետական ձևերով և մանավանդ բազմաթիվ և բազմաձև քանդակներով արվեստի մի շքնաղ կոթող է⁶:

¹ «Սիսական», էջ 278:

² Օրբելյան, անդ, 13:

³ Նույն տեղում, 411:

⁴ Նույն տեղում, 510:

⁵ Նույն տեղում, 517:

⁶ Հուշարձանի մասին առաջին անգամ գրել է Գ. Սարգսյանը, տե՛ս «Էջմիածին» № 3, 1952:

Այժմ պակասավոր շինարարական արձանագրությունը հետևյալն է.

Ի ԹՎ(ԻՆ) ՀԱ(ՅՈՅ) Ի: ՇԺԱ: (=1062) Ի ԹԱԳԱԻՈՐ-
ՈՒ(ԹԵԱՆ ՔԻ ՊՍ)/ԱԿԵԱԼ ԱՐՔԱՅԻՆ ԳՐԻԳՈՐՈ ԵՒ
ՀԱՅՐ(ԱՊԵՏՈՒԹԵԱՆ)/ ՏՆ ՅՈՎԱՆՆՈՒ ՍԻՒՆԵԱՅ ԵՊԻՍ-
ԿՈՊՈՍԻ Ե (Ի.....)/ ՄԲ ՈՒԽՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒ-
ԹԲ ԵՒ ՋՏՆ(.....)/ ԱՇԽԱՏՈՒԹԲ ՀԻՄՆԱՐԿԵԱԼ
ԵԿԵՂԵ(ՅԻՍ.....)/ ՓՈԽՄԱՆ ՅԱՇԽԱՐՀԷՍ ԹԵՐԱ-
ԿԱՏԱՐ (ՄՆԱՅԵԱԼ ԷՐ, ԵՍ)/ ՀԱՅՐ ԳԻՈՐԳ ՀՐԱՄԱ-
ՆՈՎ ՔԻ ՊՍԱԿԵԱԼ Թ(ԱԳԱԻՈՐԻՆ ԿԱՏ)/ԱՐԵՅԻ ՇԻՆՈՒԹԲ.
ԵՒ ԱԻՐՀՆԵՅԻ ՅԱԻԳՆ(ԱԿԱՆՈՒԹԲ ՔԻ)/ՊՍԱԿԵԱԼ ԹԱ-
ԳԱԻՈՐԻՆ.

Մի քանի այլ արձանագրությունների մեջ էլ հանդիպում է Օրբելյանի՝ հիշատակած, երկրորդ շինարար Հովհաննեսի անունը:

Իսկ 1948 թ. Պետական թանգարանի կողմից նույն վայրն ուղարկված գիտարշավի ժամանակ հաջողվեց գտնել մի առավել ևս կարևոր արձանագրության հետևյալ բեկորը.

ՅՀ..... ՆՈՐԱՎԱՆԻՅ ՁԵՌՆ ՏՆ ՍՏ(ԵՓԱՆՈՍԻ)
:ՅՁԴ: (=935) ՄԻԱԿՐԱԻՆՔ

Այս վերջին արձանագրությունը որմնախոյակի մաս է, ներկա կանգուն շենքերի մասերից չէ, հետևաբար պատկանում է նրանց հյուսիսում միայն հիմնապատերը մնացող ավերակներին, որը հենց Բղենո Նորավանքի ս. Ստեփանոս եկեղեցին է, շինված ըստ Ստ. Օրբելյանի 936 թ. հայր Ստեփանոսի կողմից:

Պատմիչի նկարագրության համաձայն Բղենո Նորավանքում շինարարություն է կատարվել երկու հերթի. առաջին անգամ Ստեփանոսի ձեռքով հիմնադրվում է Նորավանքը և շինվում եկեղեցին, գավիթ և սրահ.

«Բայց յետ սակաուց և շինեցաւ եկեղեցի յոյժ գեղեցիկ յօրինուածօք... ի հայր Գէորգայ և ի Յովհանիսէ քահանայէ»¹:

Մեջ բերված արձանագրական նյութը լիովին համընկնում է պատմիչի նկարագրությանը և ճշտորեն որոշում երկրորդ հերթի շինության «յետ սակաուց»-ի ժամանակը, այն է՝ 1062 թ.:

Այս հուշարձանների հայտնաբերումով որոշվում է թե՛ Բղեան գավառի և թե՛ Բղենո Նորավանքի ճիշտ տեղագրությունը, մյուս կողմից՝ ճշտորեն որոշվում «Էջմիածնի ավետարանի» գրչության վայրի խնդիրը:

Ինչպես տեսանք ձեռագրի հիշատակարանը հաղորդում է, որ այն գրվել է Նորավանքում, որը հիմնադրել էր Ստեփանոսը և որի եկեղեցին էլ կոչվում էր ս. Ստեփանոս. ըստ հիշատակարանի հիմնադիր Ստեփանոսը և նրա եղբորորդի Ստեփանոս քահանան իշխանազուհներ են:

Ստ. Օրբելյանի հաղորդածները Բղենո գավառի Նորավանքի մասին և նրանց հաստատությունը նորահայտ հուշարձանի տեղագրության, նկարագրության, ժամանակի և մանավանդ արձանագրությունների միջոցով, հաստատում

¹ Օրբելյան, անդ, 246:

են, որ բոլոր մեր նկարագրած Նորավանքերից միայն այս, Բղենո Նորավանքն է, որը ըստ ամենայնի համադաստասխանում է հիշատակարանի բովանդակությանը¹, հետևաբար «Էջմիածնի ավետարանը» գրված է Բղենո գավառի Նորավանքում, Տաթևին մոտիկ, այժմ Գորիսի շրջանի (հին Հաքանդ գավառ) Բարձրավան և Շառնուխ գյուղերի սահմանների մեջ գտնվող այս նորահայտ հուշարձանում²:

* * *

«Էջմիածնի ավետարանի» գրչության վայրի որոշումը ոչ միայն լրացնում է այդ ձեռագրական կոթողի «կենսագրությունը», այլև առավել արժեքավորում և՛ ձեռագրի և՛ թե մանավանդ, նրա գրչության վայրի կուլտուրական նշանակությունը:

Ինչպես վերևում պարզեցինք, Բղենո գավառի այս նորահայտ Նորավանքում երկու հերթ են շինարարություններ կատարվել. առաջինները 935—936 թվականներին և երկրորդ հերթին՝ 1062 թվականներին: Ձեռագիր ավետարանի գրչության ժամանակը՝ 989 թ. ընկնում է դրանց արանքում: Առաջին հերթին կառուցված շենքերից այժմ հիմնապատեր և շուրջը ցրված բեկորներ են միայն մնացել: Այս շենքերի ճարտարապետական ու գեղարվեստական լրիվ պատկերը կպարզվի միայն պեղումների միջոցով, թեև, ցրված բեկորներից դատելով, կարելի է նշել, որ դրանք բարձրարվեստ կառուցումներ են եղել:

Ձեռագրի գրչությունից 73 տարի հետո կառուցված և այժմ կիսականգուն հուշարձանները, բացի ճարտարապետական ինքնատիպ և բարձրարվեստ գործ լինելուց, իրենց դարդաքանդակների առատությունը և վարպետությունը արվեստի մեծարժեք նմուշներ են: Դրանցից առանձնապես հետաքրքիր և ձևագրի մանրանկարների հետ առավել առնչություն ունեցողները սրբաքանդակներն են, որոնց նկարագրությունը և լուսանկարները դնում ենք այստեղ, ձեռագրի մանրանկարչությունն ուսումնասիրողներին օժանդակած լինելու համար:

1. Հավանաբար Գ. Լուսավորիչ, հուշարձանի բակում, սրահի դիմաց, ընկած է մուգ՝ հուշարձանի երեսպատման քարի տեսակից, մի սալաքար, 113×67 սմ մեծությամբ, մեջտեղից շեղակի կտարված-բաժանված երկու մասի-բարի հարթ մակերեսի վրա քանդակված է բարձրագիր, կանգնած վիճակում մի մարդ, ուղիղ դիրքով, երեսով դեպի դիտողը, ստներն իրար մոտ, աչ ձեռքը բարձրացրած՝ բութ մատը քիչ բաց, ամուլ դեպի դիտողը, ձախ ձեռքը կրծքին: Գլուխը լուսապսակի մեջ, երկար մազերով, դեմքին նույնպես մազեր և ոչ երկար

¹ Այս հուշարձանի անհայտությունն է եղել պատճառը, որ «Էջմիածնի ավետարանի» ուսումնասիրողները Օրբելյանի կողմից սրա մասին հաղորդածները սխալմամբ վերագրել են Ամադուի հայտնի Նորավանքին և այն համարել ձեռագրի գրչության վայրը: Բազմահմուտ տեղագրող Ալիշանը դերժ է մնացել այդ սխալմունքից, թեև հուշարձանի տեղը չի գտել—«Արդ զանձանոթս այս կամ զըննելի Նորավանս (Բղենո—Ս. Բ.) ծանուցանե յիշատակագիր հոշակեալ փղոսկրապատ Աւետարանին Էջմիածնի, զրելոյ յամի 989»: («Միսական», էջ 203—204):

² Այն միակ անհամադաստասխանությունը, որ ավետարանի ստացող Ստեփանոսն իրեն վանքի հիմնադիր Ստեփանոսի եղբորորդի է անվանում, իսկ Օրբելյանի մոտ Ստեփանոսի եղբորորդի է հիշատակված Քրիստափորը հեշտություն կարելի է բացատրել: Դրանք երկու եղբայրներ են, Քրիստափորը զարձել է վանահայր և դրա համար էլ հիշվում է Օրբելյանի կողմից:



Նկ. 1. Հովանարար Գրիգոր լուսավորիչ:

մորուք: Ոտները բորիկ են և բոլոր մատները մշակված: Ներքնազգեստը երկար է և ծածկում է նաև ոտները, բաց թողնելով միայն թաթերը. ներքնազգեստը ուղղահայաց լայն ծալքերով է և ներքևում եզերվում է երիզով, վզի մոտ նա պիրկ է և առջևում ունի նեղ բացվածք, որը նույնպես երիզված է վզի շրթունքի հետ: Սրա վրա հագած ունի վերնազգեստ, որը հասնում է մինչև սրունքները, նույնպես ուղղահայաց, բայց ավելի նեղ ծալքերով, ներքևի մասում առաջի փեշերը

ավելի բարձր և նույնպես երիզված: Կրժքի վրա վերնազգեստը լայն բացված է, որի տակից երևում են ներքնազգեստի կրժքի մասը, վերնազգեստն ունի լայն օձիք, որը երիզված է անկյուններով: Վերնազգեստի թևերը լայն են և վերջանում են լայն երիզով, թողնելով հետ ծալվածի տպավորություն: Աջ ձեռքի բարձր դիրքի պատճառով վերնազգեստի այդ թևը ավելի կարճ է երևում: Վերնազգեստի վրայից հագած ունի կարճ, մինչև ծնկները ծածկող թիկնոց, որը ծածկում է աջ ուսը միայն և ճարմանդվում է կրժքի վրա աջ թևի տակով: Թիկնոցի փեշերը առջևի մասից կտրվում են դեպի հետ, առաջացնելով հինդ լայն, շեղակի ծալքեր: Աջ ուսից իջնում է մի ժապավեն, որն անցնելով թիկնոցի տակով, ներքևից դուրս է գալիս:

Նկատի ունենալով այն, որ նա գտնվում է բակում, սրահի կամարի դիմացը և այն, որ ուրիշ ոչ մի տեղ նա տեղադրվել չի կարող, բացի սրահի արտաքին ճակատից՝ ենթադրում ենք, որ տեղավորված է եղել սրահի կենտրոնական և հարավային կամարների աղեղների արանքում:

2. Հրեշտակ. Սրահում կատարված մասնակի մաքրման ընթացքում երևան եկավ մի հրեշտակի բարձրաքանդակի կես մասը, սպիտակավուն քարի վրա՝ 69 սմ լայնությամբ: Այդ սալաքարի վրա նախ քանդակված է բարձրադիր խորան, լայն կամարով, որի կենտրոնում, վերևից քիչ ավելի ցածրադիր եռանկյունի, կամարը երկու ծալքերով հենվում է երկուական կիսասյուների վրա, որոնք ավարտվում են երկատիճան խոշակներով: Կամարի ծալքերը հատվում անցնում են այդ խոշակների վրայով: Այս խորանն իր ամբողջությամբ նմանեցրած է մեր մանրանկարչական նման գործերին:

Խորանի մեջ քանդակված է հրեշտակ, որի իրանից վեր եղած մասն է մնացել: Գլխարաց է, լուռապսակով շրջապատված մազերը ճակատի վրա կտրված են, զեղեցկորեն սանրված ճակատի վրա՝ կազմելով փունջ: Նտևի մասում խոպոպներն իջնում են մինչև ուսերը: Նայում է դիտողին, սակայն, ընդհանրապես, շեղված է դեպի ձախ, որի պատճառով էլ ձախ ականջի վրա մազերը կարճ են ձևավորված: Աջ ձեռքը բարձրացրած է և ձախ ուսի մոտ ցույց է տալիս ձախ կողմը: Բաց են այդ ձեռքի ցուցամատն ու միջին մատը: Թևերը մշակված են զեղեցիկ, մանր փետուրներով. վերնազգեստը հաստ գործվածքի տպավորություն է թողնում, նեղ ու հաստ երկշերտ օձիքով եզերված, նույնպես է եզերված նաև թևի ծալքը. կրժքի վրա լայն բացված վերնազգեստի տակից երևում է ներքնազգեստը՝ վերևում նկարազրված վերնազգեստի ոճով:

Եթե այս բարձրաքանդակը տեղից ընկնելուց հետո է միայն սրահի մեջ տարվել (ուր բոլորովին ծածկված էր), ապա պիտի կարծել, որ նա սրահի արտաքին երեսին պետք է նախօրոք տեղավորված լիներ և անհավանական չէ, որ գույգ կաղմեր № 1 բարձրաքանդակի հետ և արդեն իր դիրքով էլ, դեպի ձախ պարզած ձեռքով, ասացուցում է, որ այդ կողմից պիտի ունենար մի այլ ֆիգուր: Միակ արդելքը այս ֆիգուրներին մի խումբ համարելով՝ քարերի գույնի տարրերությունն է, (№ 1-ը գորշ գույնի է, իսկ № 2-ը սպիտակավուն): Եթե այս երկու քանդակները մի խմբի շեն պատկանում, այն դեպքում երկու տարրեր խմբերի մասեր են, որոնցից առաջիմ մեկական հատ են հայտնաբերված:

3. Աստվածածին և հրեշտակ. Մատուռի հարավային պատին, դրսից, (հարավային դահլիճի մեջ) նրա արևմտյան վերին անկյունում, քիվի տակ, ազուցված է մի քառակուսի սիպտակավուն քար, 82×82 սմ մեծությամբ: Այդ սալաքարը պատի մակերեսից դուրս ընկած է ազուցված, որով ավելի ցայտուն է



Նկ. 2. Հրեզանով:



Նկ. 3. Ագիաուճառ:

երևում: Աջ կողմում կիսակամար խորանի մեջ կանգնած է Աստվածածինը, կրեաով դեպի դիտողը, աջ ձեռքը կրծքին, ձախը վեր բարձրացրած, ափը դիտողին: Գլուխը լուսապսակի մեջ: Գլխին գցած ունի զլխաշոր, որն իջնելով ներքև փաթաթվում է կրծքի վրա լսթ ծալքերով: Գլխաշորի տակից երևում են մազերի խոպոպիկները ճակատի վրա և, երկու փունջ էլ կողքերից իջնում են մինչև ուսերը: Հապին ունի երկար զգեստ՝ ուղղահայաց ծալքերով. զգեստը

ծնկներէն վար մի հորիզոնական երիզով բաժանուած է երկու մասի, ներքևի մասի ծալքերը զարդարուած են երկզիծ եռանկյունիներով:

Զգեստի փեշերի տակից երևում են ոտների մերկ մասները, շատ լավ մշակուած եղունգներով:

Աստվածամոր ձախից՝ քառակուսի խորանի մեջ՝ կանգնած է մի հրեշտակ, թեքուած դեպի Աստվածածինը, սակայն դեմքը ուղիղ դիտողին: Չախ ձեռքով, որի ճկույթն ու մատանու մատը ծալուած են, ցույց է տալիս Աստվածածին, պարզած այդ ձեռքի մատները հանդուած են խորանները բաժանող կիսասյունի վրա: Աջ ձեռքով բարձրացրել է դաւազան, վերին ծայրում խաչ, բռնել է գաւազանի կենտրոնից. մազերի խոստովիկներն իջնում են մինչև ուսերը, ծածկելով ականջները: Հազին ունի շեղ ծալքերով զգեստ, որի ձախ փեշն սնցնում է աջի վրա, բայց ճարմանդ կամ կոճակ չկա: Ոտներին ունի երկարավիղ կոշիկներ, վերին շրթունքները սրունքների վրա ծալուած: Կոշիկները սրածայր են: Փետրավոր թևերը ականջների մոտից հասնում են մինչև կրունկները. թևերի վերին մասում փետուրները մաքր են, իսկ ներքեում երկար և միակաուր: Երկու ֆիգուրներն էլ անհամաշափ կառուցուածք ունեն, ոտների մասերը իրանի համեմատութեամբ կարճ են: Մարմնի մասերի ու հագուստների մանրամասնութեաների ռեալիստական մշակման տեսակետից այս բարձրաքանդակը իր տեսակների մեջ լավագույններից է: Բարձրաքանդակը իր սկզբնական տեղումն է և լավ պահպանուած. Աստվածածնի քթի մասն ունի թևթև ջարդուածքներ: Բարձրաքանդակի շրջանակի վերին և աջ կողմի շրթունքին կա լավ պահպանուած հետևյալ արձանագրութեանը.

ՈՒՐԱԽ ԼԵՐ ՈՒ ԲԵՐԿՐԵԱԼ ՏՐ ԸՆԴ ՔԵԶ


ԱԶԱՅԱՒԱՍԻԿ ԿԱՄ ԱՂԱԽԻՆ ՏՆ.

4. Աստված և երկու հրեշտակ. Մատուռի հյուսիսային պատին, դրսեց (հյուսիսային դահլիճի մեջ), նրա արևմտյան վերին անկյունում, քիվի տակ, ազուցուած է մի բարձրաքանդակ 103×59 սմ մեծութեան: Սա բաղկացած է երկու սպիտակաւուն սալ քարերից, իրար հետ լավ միացրած, ներքևինն ավելի փոքր է, 44 սմ բարձրութեամբ: Բարձրաքանդակի սալքաբը պատի մակերեսից դուրս է ազուցուած: Կենտրոնում քանդակուած է աստված, երկու կողքերին միմի հրեշտակ, բոլորն էլ կանգնած վիճակում և նայում են դիտողին: Հրեշտակները կանգնած են պատուանդանի վրա և բարձր են, բայց ընդհանրապես ավելի փոքր են, քան կենտրոնական ֆիգուրը: Աստված ունի լուսասպակ, որի վրա երեքթևյան խաչ. գլուխը բաց է, ալիքաձև մազերն իջնում են ճակատին, իսկ ետևից թափուած թիկունքի վրա: Աջ ձեռքը ծալքավոր վերնազգեստի տակից բարձրացել և հանդուած է կրծքին, ափը դիտողին, բութը ծալած՝ մյուսները բաց. ձախ ձեռքը վերնազգեստի տակ է և աննկատ: Հագած ունի երկար ծալքավոր զգեստ, որի փեշերը հասնում են սրունքներից ցածր և զարդարուած են զուգահեռ և հատուղ գծերով: Առջևում փեշերի միացման տեղում կա երկար ալիքավոր ժապավեն, որը հասնում է մինչև փեշերի ներքին կզրը: Փեշերի տակից երևում են ոտները: Ոտներին ունի հողաթափեր, երեսները բոլորովին բաց, բութ մատի և ճկույթի արանքից վեր են բարձրանում լարկապիշներ, որոնք կրունկից եկող մի այլ լարկապով ձգուած են, բայց անցնելով դրանից ծածկուած են փեշերի տակ:



Նկ. 4. Աստված և երկու հրեշտակ:

Կենտրոնական ֆիգուրի աջից կանգնած հրեշտակը բաց գլխով է, խոստովաները հասնում են մինչև ուսերը, ձախ ձևորբ բարձրացրել է գլխից վեր, ափով դեպի դիտողը, մատները՝ բաց: Աջով բռնած ունի դավազան, որը հասնում է կրծքից մինչև զգեստի թղանցքը. դավազանի վերին ծայրը սուր է. հագած ունի երկար, ծալքավոր զգեստ, որի տակից երևում են բորիկ ոտները: Աջ թևը երեք լայն ու առաջ հակված փետուրներով վեր է բարձրացել, ձախը՝ մի մեծ փետրի ձևով՝ կանառակից ուղղվում է դեպի կենտրոնական ֆիգուրը: Աստուծու ձախ



Նկ. 5. Հիսուս և հուշարձանի մուտքի շրջանակը, մեանդրի զարդով:

Կողմում քանդակված հրեշտակը նույն գիրքով է և հազուադասով, իր տեղի համեմատ աջ ձևերը վեր և ձախում դավադան: Բոլոր երեք ֆիգուրներն էլ անմազ և անմորուք գեմքով են:

Շրջանակը ներքևում զարդարված է երկրաչափական երկթեղ զարդերով՝ շրջանակներ և դրանց մեջ խաչավորումներ: Շրջանակը իր վերին և կողերի



Նկ. 6. Հիսուս:

շրթունքներին ունի արձանագրություն, վերին սալքարի սահմաններում և վերից վար տառերի դասավորությամբ. ձախ կողմը և վերինը ընթեռնելի¹:

ԱՄ : Բ : ՀՐՇՏԵԿ
ԵՐԵԻԵՅԱԻ ՆՄԱ...

¹ Տեղի նեղության պատճառով անհնար է ղիմացից նկարել. նկարված է կողքերի պատճառով էլ Ֆիգուրները շեղակի են:

5. Հիսուս. Մատուռի արևմտյան պատին, դրսից, գլխավոր մուտքի հյուսիսային վերին կողքին, նրա շրջանակին հավասար բարձրութիւն ապուցված է պատի երեսպատման քարերին հավասար մի սպիտակավուն փոքր սալքար 62×39 սմ մեծութեան: Քարի ամբողջ մեծութեամբ քանդակված է բարձրագիր խորան, կողքերի սյուները ներքևում զույգ են և կեսի մոտ սլակվում են խոյակներով. այդ ներքևի սյուները տափակ են, կեսից վեր սյուները դառնում են մեկական և սլակվում դարձյալ խոյակով, որոնց վրա հանդուս են կամարի կրունկները: Կամարի աղեղը զարդարված է կլոր, կոճակաձև զարդերով: Աղեղից դուրս մնացած սալքարի վերին անկյունների մեջ եռաթերև արմավենիկներ: Սյուներն իրենց ներքևի մասում երկճյուղ են և ներքև ծայրով դառնում են աջ ու ձախ, այդ ճյուղավորման տեղում գոտևորվելով ժապավենով: Աջ կողքի սյուների կենտրոնում եղած խոյակի վրա քանդակված է վառվող մոմ, որը վերին ծայրով հասնում է մինչև երկրորդ խոյակի տակը: Խորանի մեջ նստած է Հիսուսը գլխաբաց, լուսապսակով շրջապատված, որի մեջ եռաթև խաչի քանդակ: Մազերը երկար են և թափված են ուսերի վրա, ունի երկար և նրբորեն մշակված մորուս: Հագին ունի ծալքավոր զգեստ. աջ բազուկի վրայով անցնում է երկթև ժապավեն, ցածրում ոլորվելով իրար: Զախ ձեռքում բռնել է ավետարան, սյունի վրա, քանդակված մոմի հանդեպ. աջք բարձրացրել է կրծքին, ասիով դուրս. մատանու մատը միացրած րութին, մյուսները բաց. օրհնելու դիրքով: Ոտներին հագած ունի հողաթափներ, երեսները բաց, առանց կապերի: Սալքարի ձախ մասի շրթունքները չարդված են և շրջանակի կիսասյուները եղծված: Վերևի և աջ կողքի երեսպատման քարերի թափված լինելու հետևանքով, այս սալքարը շարժված է տեղից և ընկնելու ենթակա է:

Այս բարձրաքանդակի աջ կողմի երեսպատման քարն ընկած է, հավանաբար դրա վրա ևս քանդակ սլափի լիներ և այդ դեպքում բարձրաքանդակների այս խումբը կլիներ «խնդրվածքի» կամ «քարեխոսի» ձևակերպում:

6. Աստվածածին և Հիսուս. Մատուռի ներսում, նրա հյուսիսային պատի արևմտյան մասում, դեպի հյուսիսային կողմնակի դահլիճը տանող մուտքի կամարի կրունկը բռնող երկար ու բարձրագիր քարի վրա հաստատված է մի սպիտակավուն սալքար 57×46 սմ մեծութեան, պատի մակերեսից դուրս: Այդ սալքարի վրա քանդակված են երկու ֆիգուր, աջում Մարիամ և ձախում՝ Հիսուս (դիտողի կողմից), երկուսն էլ կանգնած փիճակում. Աստվածածնի գլուխը շրջապատված է լուսապսակով, երկար մազերը թափվում են ուսերին, ձախ ձեռքը հանդուս է կրծքին, աջք բարձրացել է մինչև ուսը, ասիով դիտողին: Հագած ունի երկար, ծալքավոր զգեստ, որը ծածկում է նաև ոտները, այդ զգեստի վրա ձգված է թիկնոց, որի տակից բարձրանում են թևերը: Աստվածածնի ձախ կողմում Հիսուսն է կանգնած, թեքված դեպի Մարիամը, ձախ ձեռքով բռնել է ավետարանը, աջով ցույց է տալիս Աստվածածնին (ցուցամատն ու մատանու մատը պարզած, մյուսները խուփ), գլխին ունի լուսապսակ, որի մեջ եռաթև խաչի քանդակ, գլխաբաց է, մազերը ձախ կողմից թափվում են ուսերին, մորուսն ու բեխերը երկար և լավ մշակված. հագին ծալքավոր երկար զգեստներ:

Բարձրաքանդակն իր նախնական տեղումն է և անփնաս:

7. Յուդարեւ կանայք. Այս քանդակը հայտնաբերվել է հուշարձանի շուրջը մասնակի պեղումներ կատարելու ժամանակ. մենք տեղում չենք տեսել, հետևաբար չենք նկարագրում. (լուսանկարն ստացել ենք Հարությունյան Ս. Մնացականյանից):



Նկ. 7. Յուզարեր կանայք:

Համեմատելով այս պատկերաքանդակները «Էջմիածնի ավետարանի» մանրանկարչական սրբապատկերների հետ, առաջին իսկ հայացքից նկատվում է շատ սերտ կապ և նմանություն:

Այդ կապն ու նմանությունը ոչ միայն նրանց ընդհանուր, կրոնական բովանդակության մեջ է, այլև սյուժեների դասավորության, քանդակների և մանրանկարների ֆոնների ճարտարապետական և օրնամենտալ ձևավորման, ֆիզուրների մանրամասների անհամաչափության, դիմադծերի սառնության և

զրեթե սնուցարժույթյան մեջ: Երկու դեպքում էլ Ֆիզուրների մարմնամասերը— մատներ, եղունգներ, մազեր— նույնպես և զգեստների մանրամասները մշակված են բծախնդիր մանրամասնությամբ, իսկ ձեռագրի մանրանկարների ֆոնի սլաշաձև կամարներով խորանները, միևնույն կոմպոզիցիայի զույգ Ֆիզուրները զույգ խորանների մեջ դնելու, հարդարանքի մեջ մեանդրի զանազան այլաձևությունների օգտագործումը՝ սերտորեն առնչվում են և՛ բարձրաքանդակներին, և՛ հուշարձանի մուտքերի կամարներին, և նրանց շրջանակները վարդարող մեանդրի վերին աստիճանի վարպետներն քանդակված և այլաձև օրինակներին:

Այլ տեղերում բարձրաքանդակ սրբապատկերները մեր հուշարձանների մուտքերի ճակատներին են տեղավորված լինում սովորաբար, այստեղ հուշարձանի պատերին են սեղեֆ կերպով ազուցված, դասից և ներսից, իրարից հեռու ու անշատ և թողնում են պատերից կախված նկարների տպավորություն:

Ընդհանուր առմամբ հուշարձանի պատկերաքանդակները գրաֆիկ ու զրբբային են և մանրանկարից օրինակված լինելու տպավորություն են թողնում:

Այս բոլորն ապացուցում են, որ այս նորահայտ նորավանքում 10—11-րդ դարերում ծաղկել է զրչագրական, մանրանկարչական և պատկերաքանդակների բարձր արվեստ, սերտորեն կապված իրար հետ և արժանի լուրջ ուշադրության:

Գ. ԱՐԳԱՐՅԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄՆԵՐ

1. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՐԵՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Միջնադարյան հինգ պատմիչներ՝ Ստեփանոս Ասողիկը, Մխիթար Անեցին, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին և Մխիթար Այրիվանեցին հիշում են Սերեոս անունով մի պատմիչ, որը գրել է Հերակլի պատմությունը՝ «Պատմութիւն Հերակլի, որ ի Սերիոսէ եպիսկոպոսէ ասացեալ»: Ուխտանեսը այդ նույն Պատմութիւնը հիշում է առանց Սերեոսի անունը տալու: Ո՞վ է եղել Սերեոսը, ի՞նչ ծախալ է ունեցել նրա Պատմութիւնը՝ հիշյալ աղբյուրները չեն նշում: Սերեոս և Հերակլ անուններից բացի պատմիչներն ուրիշ ոչ մի մանրամասնութիւն չեն հաղորդում: Միայն Ուխտանեսն է, որ վրկանի մարզպան Ամրատ Բազրատունու մասին խոսելիս մի փոքր ակնարկ է անում Հերակլի պատմության բովանդակության մասին:

1842 թվականին Հովհաննես Շահխաթունյանը էջմիածնի ձեռագրերից մեկում հանդիպում է մի անխորագիր բնագրի, որի հետ ծանոթանալուց հետո ենթադրում է, որ այն Սերեոսի Պատմութիւնն է: Բնագրի վրա մակագրում է. «Սերէոսի եպիսկոպոսի պատմութիւն ի Հերակլին»: Այդ օրվանից սկսած, գրիչներն սկսում են անհայտ հեղինակի անվերնագիր գործը ընդօրինակել Սերեոսի անունով, իսկ բանասերները անվերապահօրեն հետևում են Շահխաթունյանի ենթադրությանը:

Սերեոսի անձնավորությունը պարզելու նպատակով Շահխաթունյանը որոնում է այդ անունը կրող գրավոր հիշատակարաններ, և հայ հարուստ մատենագրության մեջ միայն մի տեղ՝ «Կանոնք Գունայ սուրբ ժողովոյն» կոչվող բնագրի վերջում պատահում է «Տէր Սերէոս եպիսկոպոս Բազրատունեաց» ստորագրությունը: Առանց փաստերի, միայն ենթադրությունների հիման վրա, այս Սերեոսին նա դարձնում է Հերակլի պատմության հեղինակ: Այնուհետև, ձեռագրում գտնվող անխորագիր բնագիրը սկսում է հրատարակվել (7 անգամ, տարբեր լեզուներով) որպես Բազրատունյաց Սերեոս եպիսկոպոսի «Պատմութիւն ի Հերակլին» աշխատություն:

Պատմության վերջին հրատարակության խորագիրն այլևս չի կրում Հերակլի անունը: Այն տպագրված է որպես «Սերէոսի եպիսկոպոսի պատմութիւն»¹, առանց Հերակլի: Այս նորաձեռությունը պատկանում է Ստ. Մալխասյանցին, որն այդ առթիվ գրում է. «Հերակլ անունը չէ համապատասխանում Պատմության բովանդակությանը. Հայոց նախնական պատմությունը, Պարթևներն ու Արշակունիները, մարզպանները, Խոսրով Անուշըրվան, արարական

¹ Սերէոսի եպիսկոպոսի պատմութիւն, Երևան, 1939:

արշավանքները, Հայոց դավանության թուլթը և այլն ոչ մի կապ չունին Հերակլի հետ, որի մասին խոսում է հեղինակը յուր գրքի տասը գլխում միայն, իսկ մյուս քառասուն գլուխները Հերակլին չեն վերաբերում¹:

Այս իրողությունը Մալխասյանցից առաջ նկատել են Հ. Գաթրճյանը, Ն. Ակինյանը և ուրիշներ: Սակայն նրանք բոլորն էլ ընդունել են Շահխաթունյանի ենթադրությունը և աշխատել զանազան բացատրություններով հաշտեցնել Պատմության բովանդակության և մատենագիրների նշած «Պատմութիւն ի Հերակլն» վերնագրի միջև գոյություն ունեցող հակասությունը:

Գաթրճյանի կարծիքով, Սերեոսն սկզբում գրել է Հերակլի Պատմությունը, «բայց միանգամ սկսելէն յետև, ինչպէս բնականապէս կը պատահի, յառաջ և վերջն ալ շատ յարակից բաներ շարեր է»², որի հետևանքով գրվածքի բովանդակությունը փոխվել է, իսկ վերնագիրը մնացել «Պատմութիւն ի Հերակլն»: Ն. Ակինյանը Գաթրճյանի այս կարծիքին ավելացրել է իրենք. Սերեոսը իր Պատմության մեջ նվազում է սասանյան աշխարհավեր թագավոր Խոսրով Ապրվեզին և խոստանում գրել նրա պատմությունը, ուստի գրքի վերնագիրը եղել է «Պատմութիւն յԱպրուէզն Խոսրով», սակայն հետագայում պատմիչներից մեկը Ապրվեզի անունը ջնջել և վերնագրում ավելացրել է բարեպաշտ Հերակլի անունը³:

Ակինյանի ենթադրությունը կրկնել է նաև Ստ. Մալխասյանցը⁴: Այս ենթադրությունները զուրկ են հիմքից: Նրանք բխում են ոչ թե պատմիչների վկայած փաստից, այլ՝ ենթադրարար Սերեոսի Պատմությունը համարվող մի գրքի վածքի բովանդակությունից: Միայն ենթադրությունների վրա հենվելով չի կարելի շտապապես վեց հավաստի և ճշմարիտ պատմիչների, որոնք միաբերան վկայում են, որ Սերեոսի գրած Պատմությունը եղել է հատկապես Հերակլի պատմությունը:

Շահխաթունյանի հայտնաբերած գրվածքում Հերակլի գործերի նկարագրությանը առաջին անգամ հանդիպում ենք ԱԹ գլխում, որին հաջորդող ԱԳ, ԱԵ, ԱԶ գլուխները դարձյալ ոչ մի կապ չունեն Հերակլի հետ: Հերակլին չեն վերաբերում նաև գրքի վերջին՝ ԽԱ-Ծ գլուխները: Այսպիսով, Հերակլի պատմությունը համարվող այս գրքում Հերակլին են վերաբերում ընդամենը 6 գլուխ, մնացած 44 գլուխները այլ բովանդակություն ունեն⁵: Պարզ է, որ այս Պատմությունը չէր կարող կոչվել «Պատմութիւն ի Հերակլն»: Այն չէր կարող կոչվել նաև «Պատմութիւն յԱպրուէզն Խոսրով» (ինչպես առաջարկել է Ակինյանը), որովհետև գրքում հենց հեղինակի կողմից պարզորոշ նշված են Խոսրով Ապրվեզի պատմության սահմանները, որին նախորդում և հաջորդում են նրա հետ շտանշվող բազմաթիվ գլուխներ:

¹ Անդ, էջ 25:

² «Սերեոս», Շարաթական լուրեր, Վիեննա, 1852, էջ 83:

³ «Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 334:

⁴ Մ ե Ր է ո ս, Երևան, 1939, էջ 181, ծան. 35:

⁵ Հերակլի անունը հանդիպում է նաև հայ, հույն և պարսիկ թագավորների ժամանակագրական ցանկում (գլ. Գ), ինչպես նաև գրքի բովանդակությունը ներկայացնող Ե. գլխում: Սակայն, ինքնըստինքյան հատկանալի է, որ ինչպես ժամանակագրական աղյուսակը, այնպես և գրքի ընդհանուր ցանկը չէին կարող որեէ նշանակություն ունենալ՝ գիրքը Հերակլի անունով կոչելու հարցում:

Ներկա Պատմությունը բաժանված է երեք սրոշակի մասերի. 1. Հայոց պատմությունը՝ սկսած Հայկից ու Բելից մինչև է դար: 2. «Վէպ ի կործանիչն և յապականողն Խոսրով»: 3. «Բարձումն Սասանականին և մուտ որդուցն Իսմայելի յաշխարհն Հայոց»:

Հեղինակն ինքը հետևյալ կերպ է ներկայացնում իր Պատմության բովանդակությունը. «Բայց զայն ամենայն որ ի Պերոզի ժամանակն ևղեալ շարութիւն, և զառ ի Խոսրովայ (Անուշըրուվանայ—Գ. Ա.) զապատամբութիւնն զՎարդանայ, և զգարացն Պարսիցն զապատամբելն ի յՈրմզդիէ, զմահն Որմզդայի և զԹազաւորելն Խոսրովայ. զմահն Մարկայ և զԹազաւորելն Փոկասայ. զանունն Եգիպտոսի. զկոտորածն Աղեքսանդրի. զղիմելն Հերակղի ի կողմանս հիւսիսոյ առ արքայն Բէտալացոց... զմահն Խոսրովայ. զԹազաւորելն Կաւատայ... և թէ որպէս յանկարծարէն շարժեցան բանակքն Իսմայելի, և ի վայրկեան ժամանակի վաճելով զգարութիւն թազաւորացն երկոցունց՝ կալան յՅեղիպտոսէ... և յեղերէ ծովուն մեծի արեւմտից մինչև ի դուռն թազաւորութեանն Պարսից զամենայն քաղաքս Միջագետաց Ասորոց...—զայս ամենայն կամեցայ ի ձեռն գրոյս այսորիկ կարճառաւ ձեզ վիպասանել»¹:

Պերոզից մինչև իսմայելիցիներն արշավանքներն ընկած ժամանակամիջոցն ընդգրկում է մոտ 15 պարսիկ և հույն թագավորների երկուհարյուրամյա տիրապետության պատմություն: Այսպիսի ընդհանուր բովանդակություն ունեցող Պատմությունը, անշուշտ, չէր կարող կոչվել մեկ մարդու անունով—լինի դա Հերակլ, լինի՝ Ապրվեզ:

Այս գրվածքի համար Շահխաթունյանի ընտրած վերնագիրը («Սերէոսի Լայիսկոպոսի պատմութիւն ի Հերակլն») շեղում է ուշադրությունը գրվածքի բուն բովանդակությունից:

Վերնագրի անհամաձայնությունից բացի, Շահխաթունյանի ենթադրությունը դեմ են խոսում նաև բաղձաթիվ բնագրական փաստեր:

Նշենք նրանցից մի քանիսը:

Ուխտանեսը Սմբատ Բագրատունու մասին գրում է. «Բազում պատերազմունս վանեալ և վատեալ ի Հայս, ի Տոյնս և ի Պարսիկս՝ որպէս ցուցանէ քեզ Պատմութիւնն Հերակղի»²: Ներկա «Հերակլի պատմությունում» ոչ մի հիշատակություն չկա Սմբատի՝ Հայաստանում և Բյուզանդիայում վարած բազում պատերազմների մասին: Այստեղ Սմբատը մասնակից է միայն պարսկական ներքին պատերազմներին, որոնք ոչ մի առնչություն չունեն բյուզանդական պատմության հետ: Մինչդեռ Բյուզանդիայում վարած պատերազմներն են, անշուշտ, որ Սմբատին մասնակից են դարձրել Բյուզանդական պատմություններ և տեղ տվել բյուզանդական կայսր Հերակլի պատմության մեջ: Եթե միայն պարսկական ներքին կռիվներով սահմանափակվին Սմբատի գործերը՝ նա Հերակլի պատմության մեջ անէլիք չէր ունենա:

Ուխտանեսը Սմբատի մասին հայտնում է նաև հետևյալ տեղեկությունը. որը դարձյալ բացակայում է ներկա Սերևոսից. «Եւ Սմբատն՝ զորմէ ասացաք, թէ մարդպան էր Հայոց»³:

Այս տեղեկությունը հաստատում է նաև Ասողիկը⁴, որը Ուխտանեսին ծա-

¹ Սերէոս, Երևան, 1939, էջ 24:

² Ուխտանէս, Պատմութիւն հայոց, հատ. 2, Վսղարշապատ, 1871, էջ 56:

³ Անդ, էջ 17:

⁴ Ստ. Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 85:

նոթ չի եղիլ և իր տեղեկությունը քաղել է, հավանաբար, նույնպես Հերակլի Պատմությունից:

Զ. Պատկանյանը Սերեոսի Պատմության հետ միասին հրատարակել է Ք. Արծրունու, Ասողիկի, Դրասխանակերացու և Վարդանի Պատմություններից դանազան հատվածներ, որոնք նրա կարծիքով, քաղված են ներկա Սերեոսի Պատմությունից: Բացի Ասողիկից՝ հիշյալ պատմիչներից և ոչ մեկը չի նշում իր աղբյուրը: Հնարավոր է, որ նրանք, իրոք, օգտվել են ներկա Սերեոսից: Միայն Ասողիկն է, որ որոշակի նշում է՝ «Պատմութիւն Հերակլի, որ ի Սերիոսէ եպիսկոպոսէ ասացեալ»: Տեսնենք, արդյոք Ասողիկի հատվածները, որոնք հրատարակված են որպես Սերեոսից վերցված քաղվածքներ, իրականում համապատասխանում են ներկա Սերեոսին, թե վերցված են մի այլ աղբյուրից, որը մեզ չի հասել: Ահա, այդ հատվածներից մեկը:

Ս Ե Բ Ե Ս Ս

Եւ եղև ի ՍՍ. ամի թագաւորութեան Սոսրոյայ որդւոյ Կաւատայ՝ ապստամբեաց Վարդան և ի բաց կեաց ի ծառայութենէ թագաւորութեանն Պարսից հանդերձ միարանութեամբ ամենայն Հայաստանեալք: Սպանեալ զՍուրէնն մարդպան լանկարծաւրէն ի 'եօլին քաղաքի՝ ապին դաւար բազում և գնացին ի ծառայութիւն Յունաց՝:

Ա Ս Ո Ղ Ի Կ

Եւ ապա Սոսրոյ՝ արքայն Պարսից զՍուրէն ոմն ազգական իւր, որում անուն էր Ճիհովր-Վշնասպ՝ հանէ ի հազարապետութիւն Հայոց: Որ կկեալ կալաւ զերկիրս մեր, յոյժ հարստահարելով զնախարարս Հայոց. զի շնայր ընդ կանայս ազատաց, ոչ առնելով զայրն տէր կնոջ իւրոյ: Ընդ որ զայրացեալ Վարդանայ բղնշխի՝ որդւոյ Վասակայ, որ էր յազգէն Մամիկոնէից՝ սպասեալ զիպոյ ժամանակի՝ սուսերահար անէր զՍուրէն մարդպան, (և) լերկիր կործանէր յամի քառասուն և միերորդի թագաւորութեան Սոսրոյու, որ էր ամ եօթներորդ թագաւորութեան Յուստիանոսի, յամսեանն արեղի քսաներկուսն ամսոյն, որ է փետրուարի, լաւուր կրկնքարաթւոյ: Եւ իշխանք Հայոց համօրէն ապստամբեալ ի Պարսից՝ ձեռն կտուն ի Յունականն՝:

Ինչպես տեսնում ենք, Ասողիկի նամանությունը Սերեոսի հետ շատ ընդհանուր է: Ծիհովր Վշնասպ անունը, «շնայր ընդ կանայս ազատաց» փաստը, Սուրենի սպանման ամսաթիվը և այլ տվյալներ բացակայում են ոչ միայն ներկա Սերեոսից, այլև մեզ հայտնի բոլոր հայկական աղբյուրներից: Հունական աղբյուրների, ինչպես նաև Անանիա Շիրակացու մի վկայության համաձայն՝ Սուրեն մարդպանին սպանել է Զաւրակ (Զաւրակ, Զօրակ) Կամսարա-

¹ Պետք է լինի՝ Նիհովր Վշնասպ (տե՛ս պրոֆ. Մարկիվարաի անտիպ աշխատությունը „Die Provinz Parskohajkh“, որը պահվում է Մատենադարանում):

² Պատմութիւն Սերէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Ս. Պետերբուրգ, 1879, էջ 167:

³ Ս Ե Բ Ե Ս Ս, Երևան, 1939, էջ 26—27:

կանր¹: Ասողիկը չի օգտվել նաև այս աղբյուրներից: Կնշանակի նրա ձեռքի տակ եղել է այն Պատմությունը, որը «Պատմութիւն տիեզերականի» առաջաբանում նշված է «Պատմութիւն Հերակլի, որ ի Սերիոսէ եպիսկոպոսէ ասացեալ» վերնագրով:

Նույն իրողութիւնն է հաստատում նաև Ասողիկի բերած Հայոց դավանութեան Թուղթը², որը նույնպես մի շարք բանասերների կողմից (Ք. Պատկանյան, Ստ. Մալխասյանց, Ն. Ակինյան և ուրիշներ) դիտվում է որպես ներկա Սերեոսից քաղված հատված: Այս Թուղթը ամենապերճախոս ապացույցն է այն բանի, որ Ասողիկն օգտվել է ոչ թե ներկա Սերեոսից, այլ բուն Հերակլի Պատմությունից: Ներկա Սերեոսը Թուղթը քաղել է բազմաթիվ կրճատումներով: Նրա բաց լնդած հատվածները խնամքով ընդօրինակվել և մեղ են հասել Ասողիկի միջոցով: Ի դեպ՝ Ասողիկի մոտ գտնում ենք այդ նամակի կեսը միայն: Թղթի կապակցութեամբ Ակինյանը գրում է. «Ո՛րչափ փոփոխուած է Սերիոսի բնագիրը՝ բառերու և նախադասութիւններու իսկ անկմամբ»³:

Սերեոսի Պատմության ուսումնասիրութեամբ զբաղված գանազան բանասերներ՝ Սերեոսի բնագրում Շահխաթունյանի ենթադրութեանը դեմ գնացող հատվածները հաճախ վերագրել են գրիչներին կամ ժամանակի ոչնշացնող ձեռքերին: Ստացվում է այնպես, որ այս գրվածքում շատ քիչ բան է մնացել անաղարտ, մեծ մասը կամ փոփոխվել է, կամ ոչնշացել: Ներկա դեպքում՝ Ասողիկի բացահայտած տարբերութիւնները միայն «բառերու և նախադասութիւններու անկմամբ» չեն սահմանափակվում: Կան այլ կարգի տվյալներ, որոնք ապացուցում են, որ Ասողիկը իր Թուղթը վերցրել է այլ աղբյուրից: Ինչ վերաբերում է Ասողիկի Պատմության մեջ ներկա Սերեոսին հիշեցնող որոշ նմանութիւններին՝ ապա պետք է ենթադրել, որ այդպիսիք գալիս են այն ընդհանուր աղբյուրից, որից օգտվել են և՛ Սերեոսին վերագրվող երկի հեղինակը, և՛ Ասողիկը:

Սերեոսին վերագրվող Պատմության հեղինակի մասին խոսելիս շպեռ է աչքաթող անել նաև այն կարևոր հանգամանքը, որ ամբողջ գրվածքի մեջ ոչ մի հիշատակութիւն չկա Գվինի 645 թ. ժողովի մասին, որին մասնակից էր Բաղրատունյաց Սերեոս եպիսկոպոսը: Եթե այս եպիսկոպոսը իսկապես ներկա գրվածքի հեղինակը լիներ՝ ապա դժվար թե ամբողջ Պատմության մեջ գտնեմեկ անգամ չակնարկեր այդ ժողովը:

Բաղրատունյաց եպիսկոպոս Սերեոսի անվան հետ անհարիր է նաև ներկա գրվածքի հեղինակի թշնամական ոճը՝ ներսես Շինող կաթողիկոսի նկատմամբ. «Ի սրտի իւրում ծածկեալ ունէր զթիւնս դաւանութեան, և խորհէր հաւանեցուցանել զհայս Քաղկեդոնի ժողովոյն», «Եւ այսպէս շարժեաց կաթողիկոսն զճշմարիտ հաւատս սրբոյն Գրիգորի... Եւ զսուրբ և զվճիտ և զականակիտ աղբերացն պղտորեաց զչորս... մասնէր զմի մի յեպիսկոպոսացն, և բեկանէր ահիւ»⁴:

¹ «Հանդէս ամսօրեայ», 1913, էջ 69—72: Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Երևան, 1944, էջ 228, «Յաղագս հարցման և լուծման»:

² Ստ. Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 91—98:

³ Հմմտ. Սերէոս, Երևան, 1939, էջ 121—126:

⁴ «Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 222—223:

⁵ Սերէոս, Երևան, 1939, էջ 144:

Մերևոսը, որ Ներսես կաթողիկոսի հետ միասին ստորագրել է «Կանոնք Գունայ սուրբ ժողովոյն» փաստաթուղթը և Ներսեսի հրավերով երկու անգամ մասնակցել է Դվինի ժողովներին¹, եթե նույնիսկ ծածուկ հակակրանք տածեր զեպի Ներսես Շինող կաթողիկոսը՝ դարձյալ չէր համարձակվի նրա կենդանության օրոք այսպիսի համարձակ մեղադրանքներ—փաստորեն՝ անեծքներ—կարգալ նրա հասցեին:

Նշված փաստերը բացահայտում են Մերևոսի իրական Պատմության մասին պատմիչների հաղորդած տեղեկությունների և Մերևոսին վերագրվող ներկա գրվածքի միջև դոյություն ունեցող լուրջ անհամաձայնությունը և առիթ են տալիս մտածելու երկի իրական հեղինակի մասին:

Այս տեսակետից առանձին նշանակություն է ստանում քննարկվող գրքվածքի մասին մի նորահայտ տեղեկություն, որը վերաբերում է Մերևոսին վերագրվող բնագրի մայր ձևագրին:

Այս թանկարժեք ձևագիրը պահվում է Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանում՝ № 2639 (նախկին № 611, Կարենեան ցուցակ № 2463): Այն՝ միաժամանակ Ղազար Փարպեցու Պատմության և Թղթի մայր ձևագիրն է: Այստեղ են հավաքված նաև Կորյունի, Ազաթանգեղոսի, Եղիշի, Խորենացու և Մեսրոպ Վաչոցձորեցու երկերի լավագույն օրինակներ: Ձևագիրը հիմնականում ընդօրինակվել է մի շատ հին ձևագրից, որը ժ է դարում արդեն քրքրված է եղել և այժմ դոյություն չունի: Ձևագիր ժողովածուի առաջին և մանրամասն նկարագրությունը պատկանում է Գալուստ Տեղ-Մկրտչյանին²: Այնուհետև, տարբեր առիթներով նրան անդրադարձել են Ստ. Մալխասյանցը³, Մ. Արեղյանը⁴, Ն. Ակինյանը⁵, Ե. Տեղ-Մինասյանը⁶ և ուրիշներ: Ժողովածուն ամենուրեք ներկայացված է որպես մի կուռ ամբողջություն, ընդօրինակված 1672 թվականին, երկու գրիչների՝ Պողոս Գավրուցու և Գրիգոր երեցի կողմից:

Ձևագիրն ընդօրինակվել է Բաղեշի Հովհաննու Կարապետի (Ամբղուլու) վանքում: Ժամանակին այդ վանքում գտնված ձևագրերի ցուցակում, որը կազմել է հայտնի մատենագետ և Բաղեշի դպրոցի ականավոր ուսուցիչ Վարդան Բաղիշեցին, ժողովածուի բովանդակությունը ներկայացված է այսպես. «Ազաթանգեղ, Մովսէս, Եղիշէ, Ներսէսի պատմութիւն, Ղազարու Փարպեցոյ և Խոսրովու»⁷: Այս տեղեկությունից երևում է, որ Վարդան Բաղիշեցու օրոք ձևագիրը այլ տեսք է ունեցել, քան այժմ: Հետևաբար ժամանակի ընթացքում գիրքը փոփոխություն է կրել և այլևս չի կարող դիտվել որպես ամբողջովին 1672 թվականի գործ:

¹ Դվինի երկու ժողովների (645 և 648) մասին տե՛ս Օրմանյան, Ազգապատում, պրակ. 1, Կ. Պոլիս, 1912, էջ 712, 717—720 և այլն:

² «Արարատ», 1891, էջ 147—155 և «Արարատ», էջ 542—549:

³ Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն հայոց, Տիգրիս, 1904, էջ Ե—Զ: Մերէսի կախկոպոսի Պատմութիւն, Երևան, 1939, էջ Թ:

⁴ Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց, Տիգրիս, 1913, էջ ԺԵ—ԺԶ: Կ օ ր ւ ւ ն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 20—21:

⁵ «Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 3—6, 100. 1952, էջ 44—45 և այլն:

⁶ Եղիշէի վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ XXIV—XXXVI:

⁷ Ամբղուլու գրքերի ցուցակը՝ հետևյալ վերնագրով. «Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամբրղուլու՝ համարով անջինջ յիշատակ գրեալ իմօքս ձևաձք Վարդանայ վարդապետին»,—գտնվում է Մատենադարանի № 737 (նախկին № 639) ձևագրում:

Վարդանի կազմած ցուցակի համաձայն՝ ժողովածուում Ղազար Փարպեցու Պատմությանը պետք է հաջորդեր միայն մեկ բնագիր, որը Վարդանը Խոսրովի անունով է ներկայացրել, մինչդեռ իրականում այնտեղ կան երկու անխորագիր բնագրեր, որոնցից առաջինը այժմ վերագրվում է Սերեոսին, իսկ երկրորդը Կորյունի գրած Մաշտոցի վարքն է: Ակինյանը ժողովածուն ամբողջությամբ համարելով 1672 թվականի գործ՝ գրում է «Վարդան իր գրացուցակին մէջ... չէ անդրադարձած, թե ձեռագրին մէջ... կայ նաև Սերեոսի (կամ Եսերեոսի) Պատմութիւնն ի Հերակղ, վասն զի այն անխորագիր էր, իսկ յաջորդ գրուածքը... որ Կորիւնն է՝ համարած է գործ Խոսրովու...»¹:

Այսպիսով, Ակինյանը կարծում է, թե № 2639 ձեռագրում 120 մեծագիր էջեր գրադեցնող Սերեոսի Պատմությունը Վարդան Բաղիշեցին կարող էր իր ցուցակում չգրանցել միայն այն պատճառով, որ այն խորագիր չուներ (կարծես թե ձեռագրաց ցուցակներում գրանցվում են միայն խորագիր ունեցող երկերը), իսկ ընդամենը 14 թերթից բաղկացած Մաշտոցի վարքը, որը ձեռագրում դարձյալ անհեղինակ է՝ Վարդանը մտցրել է ցուցակի մեջ, որովհետև գիտեցել է, որ նրա հեղինակը... Խոսրովն է: Կարճ ասած, Ակինյանը համոզված է, որ ցուցակում նշված Խոսրովի գործը Մաշտոցի վարքն է²:

Խոսրովի կապակցությամբ մեր հետազոտությունները այլ արդյունք տվեցին:

Ձեռագրի մանրակրկիտ ուսումնասիրությունից ստարգվեց, որ Խոսրովի անունով նշված բնագրին հաջորդող Մաշտոցի վարքը գրված է նախորդ բնագրից տարրերվող մի այլ ձեռագրով³: Այս նոր գրչության հեղինակն է Գրիգոր վարդապետը, որը ծնվել է 1670 թվականին⁴: № 2639 ձեռագիր ժողովածուն

Այն՝ որոշ աղճատումներով աղագրվել է «Աբարատ» ամսագրում (Վաղարշապատ, 1903, էջ 178—189): Թուցակի գրություն ժամանակի մասին ձեռագրերը տվյալներ չունին: Ակինյանը՝ հայտնի չէ, թե ինչ աղբյուրներից օգտվելով՝ գրում է. «1673-ին կազմած է ինքը (Վարդանը—Գ. Ա.) Ամիրտուզ գրքերու ցուցակը» («Հ. ամս.», 1952, էջ 34): Թուցակում հանդիպող գրքերից երկուսը (Հովհ. Կոստանդնուպոլսեցու «Քերականությունը», Պոդոս Փիրուսավել) լույս են տեսել 1674 և 1675 թվականներին և այդպիսով հերքում են Ակինյանի կարծիքը: Մենք կարող ենք ցուցակի անխախտ ժամանակ նշել 1675—1704 թվականները (վերջինս Վարդանի մահվան թվականն է): Եվ բանի որ ցուցակում գրանցված գրքերի տարբերակները կանոնավոր հերթականությամբ հասնում են մինչև 1675 թվականը և այլևս չեն շարունակվում՝ կարելի է ենթադրել, որ ցուցակը գրվել է 1675 թվականին կամ նրանից մի քանի տարի հետո:

¹ «Հանդես ամսօրեայ», 1952, էջ 44—45: Տե՛ս նաև նույն տեղում, 1923, էջ 100:

² Խոսրովի մասին մի այլ կարծիք է հայտնել Ամբղոյու ձեռագրաց ցուցակը հրատարակող Ս. Տեր-Հակոբյանը: Տեղեկություն չունենալով Ամբղոյու ձեռագրերի այդ ցուցակում գրանցված գրքի և № 2639 ձեռագրի նույնության մասին՝ նա կարծել է, թե Վարդանի նշած Խոսրովի գործը՝ Խոսրով Թարգմանչի «Պատմութիւն սրբոյն Սահակայ» երկը պետք է լինի («Աբարատ», 1903, էջ 179):

³ Այդ նույն ձեռագրով գրված ուրիշ բնագրեր մենք հայտնաբերեցինք Մատենադարանի № 2078 և 2771 ձեռագրերում: № 2078 ձեռագրի 472ա թերթում այս նոր գրչի մասին գրված է. «Յիշեցէր... և զիս զանարժան Գրիգոր գրիչս և միւս ծեր տէր Գրիգորն, որ օգնեաց ինձ և հասոյց յուարտ»: Այստեղ նշված «միւս ծեր տէր Գրիգորը» ոչ այլ որ է, բան № 2639 ձեռագրում Փարպեցու և ներկա «Սերեոսի» բնագրերն ընդօրինակող Գրիգոր երեցը: Այդ ապացուցվում է նրանով, որ № 2078 ձեռագրում այս Գրիգոր երեցի ձեռագրով ընդօրինակված է մի ընդարձակ բնագիր: Եվ այս բնագրի կապակցությամբ է, որ երիտասարդ գրիչը խնդրում է հիշել «միւս ծեր տէր Գրիգորն, որ օգնեաց ինձ և հասոյց յուարտ»:

⁴ Ակինյան, Բաղիշի գյուրջը, Վիեննա, 1952, էջ 323:

կազմելու ժամանակ (1672 թվականին) նա եղել է ընդամենը երկու տարեկան: Հետևաբար, Մաշտոցի Վարքը նա կարող էր ընդօրինակել առնվազն 1685 թվականին, երբ 15 տարեկան էր:

Այս թվականից մոտ 10 տարի առաջ Վարդան Բաղիշեցին արգեն կազմել էր Ամրդուլու վանքում գանձող ձեռագրերի ցուցակը, որտեղ գրանցել էր № 2639 ձեռագիրը՝ առանց Մաշտոցի Վարքի:

Փաստերը ցույց են տալիս, որ Մաշտոցի Վարքը՝ ընդօրինակվելուց հետո էլ՝ երկար ժամանակ գտնվել է մի այլ ձեռագրում, որից հետո նոր է այնտեղից պոկվել և ներմուծվել № 2639 ձեռագրի մեջ: Ըստ որում՝ ներմուծումը կատարվել է № 2639 ձեռագրի կազմը քանդելու գնով: Այս փոփոխության հետքերը այժմ պարզ երևում են ձեռագրի վրա¹:

Այսպիսով, հասկանալի է դառնում, թե ինչու Ամրդուլու ձեռագրաց ցուցակում № 2639 ձեռագրի բովանդակությունը նշելիս Վարդանը Մաշտոցի Վարքը չի նշել:

Միաժամանակ բացահայտվում է մի շատ ուշագրավ փաստ՝ № 2639 ձեռագրում Փարպեցու Պատմությանն ու Բղթին հաջորդող անխորագիր բնագիրը, որը 1842 թվականին Հովհ. Շահխաթունյանի կողմից վերագրվել է Սերեոսին, Ամրդուլու ձեռագրաց ցուցակում նշված է «Խոսրովու» անունով:

Մեզ հայտնի չէ, թե Վարդան Բաղիշեցին որտեղից է վերցրել Խոսրովի անունը: Փաստն այն է, որ նա այդ անունը նշում է առանց կասկածի, որպես հայտնի իրողություն, մյուս նշանավոր պատմիչների հետ միասին. «Ազաթանդեղ, Եղիշէ, Ներսէսի պատմութիւն, Ղազարու Փարպեցոյ և Խոսրովու»:

«Խոսրովու» Պատմությունը (այժմ Սերեոսին վերագրվող) որևէ առանձին տվյալ չունի, որը Վարդանին հիմք տար՝ առանց ուրիշ փաստ ունենալու՝ այս Պատմությունը կոչելու հատկապես Խոսրովի անունով:

¹ Անհրաժեշտ ենք համարում նշել այդ փոփոխությունը պատկերող մի բանի փաստեր:

№ 2639 ձեռագիրը բազկացած է 47 պրակներից, որոնցից վերջինը Վարքն է: Վարքից բացի, նախորդ բոլոր պրակները իրար պիճնդ կարգած են չընդհատվող հաստ թելերով, որոնք 5 տարբեր տեղերում հյուսվում են իրար և անցնում 46 պրակների մեջքերի վրա բացված 5 ընդհանուր ակոսների միջով: Պրակները միացնող թելերը փոխանակ 46-րդ պրակից հետո շարունակվելու 47-րդ պրակի մեջ՝ դուրս են գալիս 46 պրակներից (որովհետև 47-րդ պրակի մեջքի վրա ակոսներ չկան) և անմիջապես մտնում են կազմի դաճած կտորի տակ: Այսպիսով, կազմի հետ միացված են միայն 46 պրակները, իսկ Վարքը մնում է կազմից անջատ: Ուրեմն ձեռագիրը կազմելու ժամանակ Վարքը կազմարարի ձեռքի տակ չի եղել և ձեռագիրը կազմվել է առանց նրա: Հետագայում ձեռագրի կազմը քանդել են և վերջին պրակին միացրել Վարքը: Միացումը կատարված է բարակ և անհամեմատ ավելի նոր թելերով, որոնք ձեռագիրը կազմելու ժամանակ գործածության մեջ չեն եղել: Վարքի վրա նկատվում են նրա մայր ձեռագրից մնացած 11 ասեղի անցքեր, որոնցով անցել են այդ ձեռագիրը կարող թելերը: Այս ձեռագիրը ունեցել է 25×18,5 մեծություն, մինչդեռ № 2639 ձեռագրի մեծությունն է՝ 25,5×19,3: Վարքը իր վրա կրում է իր մայր ձեռագրից եկող ուրույն համարակալություն: Կազմարարական ակոսների բացակայությունը Վարքի վրա ենթադրել է տալիս, որ նրա մայր ձեռագիրը դեռ հիմնական կազմ չի ունեցել, երբ իրենից հեռացրել են Վարքը: № 2639 ձեռագրի բոլոր 46 պրակները անխորհր համարակալված են կազմարարի կողմից, իսկ Վարքի պրակը ոչ մի համարակալություն չունի: № 2639 ձեռագրում գանձող բոլոր բնագրերը նկարագրագրված են հայանի ծաղկող Սահակ Վանեցու կողմից, որը Բաղեշում է գանձել մինչև 1676 թվականը: Վարքը ոչ մի նկարագրագրություն չունի: Այն գրված է բոլորովին տարբեր թղթի վրա, տարբեր ոճով և մնացած բնագրերից առանձնանում է իր անշուք գրությունը և թղթերի եզրերի անխնամ կարգավորով:

Պատմության մրա կարելի էր հենվել, եթե այն հանդիսանար խոսքով անունով մի նշանավոր անձնավորության գործերի պատմությունը, մի բան, որ իրականությունը չի համապատասխանում: Այնտեղ, ճիշտ է, հանդես են գալիս յոթ տարրեր խոսքովներ, սակայն հենց այս հանգամանքը ապացուցում է, որ բազմաթիվ խոսքովների առկայության դեպքում սոսկ խոսքով անունը, առանց որևէ տարրերիչ մականվան, չէր կարող գործածվել այդ խոսքովներից հատկապես մեկը ներկայացնելու համար: Ինչ վերաբերում է խոսքով Ապրվելին՝ ապա, ինչպես ասվեց, նրա գործերի նկարագրությունը կազմում է Պատմության միայն մեկ հատվածը, որից հետո և առաջ զետեղված գլուխները պատմում են հայոց, հույների, պարսիկների, արաբների և այլ ժողովուրդների ունեցած քաղաքական և եկեղեցական դարավոր փոխհարաբերությունների մասին:

Այսպիսով, խոսքով անունը ներկա Պատմության կապակցությամբ Վարդանին հայտնի է եղել, ինչպես երևում է, մի այլ աղբյուրից, որը այժմ մեզ հայտնի չէ: Այդ անունը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է Պատմության հեղինակին:

Որոշ տվյալների համաձայն՝ անցյալ դարի 40-ական թվականներին խոսքովի անունը կրող պատմության մի ձեռագիր գտնվելիս է եղել Աստրախանում: 1847 թ. ապրիլի 25-ին այդ մասին Հովհաննես Եպիսկոպոս Շահխաթունյանը ներսես Աշտարակեցուն գրում է. «Վեհափառ Տէր, որպէս զիտէք և արդէն լսեմ ևս եթէ Վեհափառութիւն Ձեր ունի առաքել զյիշեալ (Մատթէոս) արքեպիսկոպոսն նախ ի յԱստրախան... ոչ աւելորդ համարիմ խնդրել խոնարհարար, յանձնել յատկապէս նոյն արքեպիսկոպոսին Մատթէոսի և դայն, զի ի գնալ նորա անդր հասու լիցի գրատան եկեղեցւոյն Սուրբ Աստուածածնի... Լուեալ է իմ թէ՛ անդ յԱստրախան դտանի անուանեալն խոսքով պատմագիրք առ տեղւոյն բնակիչ Գրիգոր Ամիրազովն՝ մնացեալ առ ինքն ի հօրեղբօրէ իւրմէ յԱրահամէ: Սոյն Գրիգոր վախճանեալ գոյով արդէն՝ կայ որդի նորին Արահամ անուն՝ փեսայ տան Շամխարեանց, և ունի զգուտար դստեր Գանիէլի Շամխարեանց: Հասու լիցի յատկապէս և այսմ, որ կարծի զիւր քանկագին, զի անուն և եր լսի ի կարգի անգիտ եեղինակաց ի մեզ (ընդդժումներն ամենուրեք մերն են—Գ. Ա.), և անձանօթ է ամենեկին ցարդ յազդէ մերմէ և յայլոց»¹:

Հայ մատենագիրների շարքում խոսքով անունը նորություն չէ: Հայտնի են հինգ տարրեր խոսքովներ՝ խոսքով թարգմանիչ (Մահակ Պարթևի աշակերտն է, գրել է «Պատմութիւն սրբոյն Սահակայ հայրապետին»)², խոսքով պատմագիր (ապրել է 9—10 դարերում)³, խոսքովիկ թարգմանիչ կամ խոսքով Հոհոթ (10 դարի մատենագիր, գրել է դավանաբանական թղթեր և զանազան այլ գործեր)⁴,

¹ Ա. Ս ե դ ր ա կ յ ա ն, Հովհաննես Եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը՝ Ս. Պետրբուրգ, 1898, էջ 174—175:

² «Պատմագիրք հայոց» («Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 56): Չարբհասնայան, Հայկական հին պատմություն, Վենետիկ, 1897, էջ 295: Ահառայան, Հայոց անձնանուններ և բառարան, հատ. Բ, Երևան, 1944, էջ 533, և այլն:

³ Կ. Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, էջ V: Մ ի. Ա յ ր ի վ ա ն և ց ի, Պատմութիւն մամանակագրական, Պետրբուրգ, 1867, էջ 27: Մատենագրարանի ձեռագիր № 126, թերթ 255ր: Ա ա դ ա ր Չ ա հ կ ե ց ի, Գիրք Աստուածաբանական, որ կոչի գրախոս ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 646: Ա հ ա ռ յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 534, և այլն:

⁴ Գ. Հ ո վ ա կ ի յ ա ն, խոսքովիկ թարգմանիչ, Վաղարշապատ, 1899:

Խոսքով Անձևացի (Գրիգոր Նարեկացու հայրը, ժ դարի մատենագիր)¹,
Խոսքով գիտնական (ժ դար)²:

Այս Խոսքովներից երկրորդը հիշատակվում է որպես Բ դարի պատմիչ
Ղևոնդ երեցին նախորդող պատմագիր: Այսպիսով նա մտանում է Վարդան
Բաղիշեցու նշած Խոսքովին («Սերևոսին»), որի գրվածքը, խակապես, Ղևոնդի
Պատմության նախորդն է հանդիսանում: Այս երկու Պատմությունների կապն
այնքան ակնհայտ է, որ բանասեր Բ. Սարգսյանը նույնիսկ կարծիք է հայտ-
նել, թե Սերևոսին վերագրվող Պատմության Բ. դպրությունը հանդիսացել է
Ղևոնդի Պատմության սկիզբը. «Այնտեղէն կսկսի Արարացւոց պատմութիւնը,
ուր կաւարտի Անանունի («Սերևոսի» — Գ. Ա.) Բ դպրութիւնը»³:

Կիրակոս Գանձակեցին այս Խոսքովին հիշատակում է Ղևոնդից անմիջա-
պես առաջ. «Եւ Պատմութիւն սքանչելի առն Կորեան: Եւ Խոսքով: Եւ Ղևոնդ
երիցու Պատմութիւն»: Մխիթար Այրիվանեցին նրան հիշում է Թովմա Արծրու-
նու առջև. «Խոսքով, Թովմայ վարդապետ»: Մատենագրարանի № 126 ձեռագրում
(թ. 255 ր) գտնվող մի ցուցակում⁴ նույնպես Խոսքովը հիշատակված է Ղևոն-
դից առաջ. «Խոսքով Կորովին և զոր ինչ պատմեաց: Ղևոնդ, որ զղալն Մահ-
մէտի պատմէ լիապէս»: Այս ցուցակը միևնույն ժամանակ հայտնում է Խոս-
քովի մականունը՝ Կորովի: Հայ պատմագիրների մի այլ ցուցակում նույնպես
Խոսքովը հիշատակված է Ղևոնդ երեցից անմիջապես առաջ⁵: Այդպես է նաև
Սահակ Չահկեցու ցուցակում:

«Եօթներորդ՝ Բիզանդ վայրախօս,

Եւթներորդ՝ Խոսքով,

Իններորդ՝ Ղևոնդ»⁶:

¹ Խոսքովու Անձևացեաց եպիսկոպոսի մեկնութիւն աղօթից պատարագին, Վենետիկ,
1869: Մեկնութիւն ժամակարգութեան, Օրթագյուղ, 1840:

² Ա. Տ ա յ ա ն, ՀԱԲ, հատ. Բ, էջ 535:

³ «Բաղմազէպ», 1915, էջ 38:

⁴ Ծուցակի հեղինակն ու գրութեան ժամանակն անհայտ են: Չեռագիրը ընդօրի-
նակված է 1709 թվականին:

⁵ «Յանկ պատմագրաց հայոց» (Ալիշան, Հայաստան, մաս Ա, Վենետիկ, էջ 13):

⁶ Ալիշանը Խոսքովի մասին գրում է. «Ղևոնդ՝ ութներորդ դարու պատմիչն է՝ Արա-
րացւոց գործոց. առաջ կամ ետեւ՝ անտարակոյս երեի Խոսքով անուամբ պատմիչ մի, հա-
ւանօրէն Ս. Սահակի վարքը գրող» («Հայաստան», 1901, էջ 64): Մեծանուն բանասերը
Խոսքովին համարում է «հաւանօրէն Ս. Սահակի վարքը գրող», հենվելով Մխիթար Այրի-
վանեցու հետևյալ ցուցակի վրա. «Ներսէս, Սահակ, Կորիւն, Սայակայ, Խոսքով, Թովմայ վար-
դապետ». (Մխ. Այրիվանեցի, Պատմ. ժամանակագր., Պետերբուրգ, 1867, էջ 37):
Ալիշանի կարծիքով «Սայակայ» բառի առջև եղել է «Պատմութիւն» բառը, որը հետագայում
ընկել է: Եթե այս ենթադրութեանը հավատանք՝ հատվածը կհարգացիկ այսպես. «Ներսէս,
Սահակ, Կորիւն, Պատմութիւն Սայակայ, Խոսքով, Թովմայ վարդապետ»: Այսպիսի ընթեր-
ցումից հետո էլ «Սայակայ պատմութիւնը» ոչնչով չի աննշիլի Խոսքովի հետ: Այն կարող
է վերաբերել միայն Կորյունին, այսպես. «Կորիւն՝ Պատմութիւն Սայակայ»: Բ. Պատ-
կանյանը այդպես էլ թարգմանել է. «Нерсес и Саак, Корюи (Жизнеописание Саака).
Хосров, Тома Арцруни Варданет». (Мх. Айрив., Хрон. истор., Петербург, 1869, стр.
364). Ալիշանի ենթադրութեան դեմ է խոսում նաև հետևյալ փաստը: Մխ. Այրիվանեցին
իր ցանկում բոլոր պատմիչներին (55 պատմիչ), առանց բացառութեան, հիշատակում
է միայն անուններով, առանց նրանց գրած պատմությունները նշելու: «Պատմութիւն»
բառը այս ցուցակում ոչ մի տեղ չի գործածվում և, հետևաբար, չէր կարող գործածվել
միայն և միայն Խոսքովի Պատմության կապակցութեամբ: Այդ բառի գործածությունը
ցուցակում հավանական կլիներ միայն այն դեպքում, եթե ավյալ Պատմության հեղինակը
հայանի չլիներ և նրա փոխարեն գործածվեր Պատմության վերնագիրը:

Սերեոսին վերագրվող Պատմության որոշ տվյալներ ցույց են տալիս, որ նրա հեղինակը եղել է Հռիփսիմեի տաճարին և Կոմիտաս կաթողիկոսին մոտ կանգնած մի անձնավորություն: Այդ են ապացուցում տաճարի շինությանը և Կոմիտասի դրագրություններին նվիրված գլուխները: Այն ժամանակ, երբ պատմության մեջ ոչ մի հիշատակություն չկա ժամանակակից քաղաքական և եկեղեցական բազմաթիվ կարևոր իրադարձությունների մասին¹, այդ միևնույն ժամանակ՝ Պատմության մեջ մանրամասն շարադրված են Կոմիտաս կաթողիկոսի և Մողեստոս երեցի երկար ու բարակ նամակները, ինչպես նաև առանձին ուշադրություն է նվիրված Հռիփսիմեի տաճարին, որի վանահայրն է եղել Կոմիտասը: Ըստ որում՝ հեղինակն ընտրել է Կոմիտասի ձեռնարկած զանազան շինարարական միջոցառումներից հատկապես Հռիփսիմեի տաճարի վերաշինությունը, որի աշխատանքներին ականատես է երևում հենց ինքը՝ հեղինակը:

Հռիփսիմեի տաճարի նկատմամբ ցուցաբերվող այս առանձնահատուկ վերաբերմունքը մեզ հղում է դեպի Հռիփսիմեի տաճարի միաբան Խոսրովիկը, որն ըստ Ալիշանի, տաճարի վանահայր է զարձել Կոմիտասից անմիջապես հետո² և որը, հավանաբար, հենց նույն Խոսրով պատմագիրն է (Խոսրով և Խոսրովիկ անունները հաճախ փոխարինաբար են գործածվում):

Մեր այս ենթադրության օգտին է խոսում, վերոհիշյալ փաստերից բացի, նաև Հռիփսիմեի գերեզմանի մատրան որմի վրա փորագրված մի արձանագրություն, որի մեջ Խոսրովիկը Հռիփսիմեին դիմում է, համարյա, նույն ոգեշունչ սճով, ինչպիսին հանդիպում ենք Սերեոսին վերագրվող Պատմության հեղինակի մոտ:

Սերեոսին վերագրվող Պատմություն.

«Ո՛վ մարգարիտ, որ ոչ ծովածին, այլ մարգարիտ, որ ծնեալ ի թագաւորանկան ազգէ...» և այլն³:

Խոսրովիկի արձանագրություն

«Ո՛վ հրաշափառ և երջանիկ վկայ անբաժանելի ծոցածին հօր...» և այլն⁴:

Արձանագրության տակ ստորագրել են երեք հոգի. «Յակովբ քահանայ սուրբ կաթողիկե արհիեպիսկոպոսարանին: Ես Խոսրովիկ ծառայ սուրբ Հռիփսիմեի սուրբ ուղղին: Ստեփաննոս»: Պարզ երևում է, որ բնագիրը կազմել է անձամբ Խոսրովը: Ի տարբերություն մյուսների՝ նա արձանագրության մեջ իր մասին գրել է՝ «Ես Խոսրովիկ»: Այս հանգամանքը հետաքրքիր է նաև նրանով, որ Խոսրովիկին բացահայտում է որպես գրողի: Նրան է հանձնարարվել կազմել արձանագրության բնագիրը, կնշանակի՝ նա հայտնի է եղել որպես գրող, մատենագիր⁵:

¹ Դվինի 645 թ. ժողովը, վրաց բաժանումը, հայ և հարևան եկեղեցիների փոխհարաբերությունները և այլն:

² Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 238:

³ Սերեոս, Երևան, 1939, էջ 89:

⁴ Առաքել Դավթիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 328:

⁵ Խոսրովիկի մատենագիր լինելը հնարավոր է համարել նաև Ալիշանը («Այրարատ», էջ 238), սակայն նա Խոսրովիկին նույնացրել է Խոսրով Թարգմանչի հետ, որը Ալիշանի մոտ ամենուրեք հանդես է գալիս որպես Ս. Սահակի վարքը գրող հեղինակ: Ի դեպ՝ այս Խոսրովին Ալիշանը մերթ ոչում է Ե զարուս («Այրարատ», էջ 238, «Հայագատում», էջ 51), մերթ՝ Թ («Հայագատում», էջ 64: Այստեղ հայտնվում է, որ Ղևոնդ պատմիչից շատաջ կամ կակ անտարակոյս երևի Խոսրով անուամբ հին պատմիչ մի, և հաւանօրէն Ս. Սահակի վարքը գրող»):

Վերը ասացինք, որ Ալիշանը Խոսրովիկին համարել է տաճարի վանահայրը՝ Կոմիտասից հետո: Նույն կարծիքն է հայտնել նաև Աճառյանը¹: Մենք դժվարանում ենք բաժանել բանասերների կարծիքը Խոսրովիկի վանահայրության մասին, որովհետև արձանագրության մեջ այդ առթիվ ոչինչ չի ասված: Մեզ համար անառարկելի է մնում այն, որ Խոսրովիկը Հոփոսիմեի տաճարի միաբաններից մեկն է եղել: Եվ նա է, հավանաբար, Սերեոսին վերագրվող Պատմության հեղինակը: Մոտ կանգնած լինելով կոթողիկոսարանին՝ նա այնտեղից է վերցրել Կոմիտասի և Մողեստոսի նամակները, ինչպես նաև Վահրամ Մեհրեանդակի երկու նամակն ու Մուշեղի պատասխանը, Կոստանդին կայսրին ուղղված Գավանուսյան թուղթը և այլն: Այս պաշտոնական գրադրությունները միայն կաթողիկոսարանում կարող էին գտնվել:

Ամփոփելով մեր ասածները՝ մենք գտնում ենք, որ անհիմն պետք է համարել Շահխաթունյանի ենթադրությունը այն մասին, թե իր գտած գրվածքի հեղինակը Բագրատունյաց եպիսկոպոս Սերեոսն է: Միջնադարյան պատմիչների վիպությունները Սերեոսի Պատմության մասին՝ չեն համապատասխանում Շահխաթունյանի հայտնաբերած ձեռագրում գտնվող այն անխորադիր գրվածքին, որի վրա նա մակագրել է «Սերէոսի եպիսկոպոսի Պատմութիւնի Հերակլն»: Այս անհամապատասխան վերնագիրը մինչև այժմ սքողել է բննարկվող պատմական հետաքրքիր գրվածքի բուն բովանդակությունը, որն է՝ հայոց քնդհանուր պատմություն: Ժէ՛ գարի ախանավոր մատենագետ-ուսուցիչ Վարդան Բաղիշեցին ներկա երկի հեղինակ է նշում Խոսրով անունով մեկին, որը, մեր կարծիքով, Հոփոսիմեի տաճարի միաբան Խոսրովիկն է: Կիրակոս Գանձակեցու, Մխիթար Այրիվանեցու, Ղազար Ջահկեցու ցուցակներում, ինչպես նաև մյուս անտիպ և տպագիր աղբյուրներում հիշատակվող Խոսրովը, ամենայն հավանականությամբ այս նույն Խոսրովիկն է: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Սերեոսի գրած Հերակլի պատմությունը դեռ չի գտնված:

2. «ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ի ՀԵՂԻՆԱԿԸ ՎԱՐԴԱՆ ԲԱԳԻՇԵՑԻՆ ՉԷ

Մատենադարանի ձեռագրերում հանդիպում են տարբեր ժամանակներում կազմված մատենագիտական ցուցակներ, որոնք պարունակում են արժեքավոր տվյալներ հայ մատենագրության հայտնի և անհայտ նմուշների մասին: Նրանց օգնությամբ երբեմն բացահայտվում են բանասիրությանը վերաբերող կարևոր իրողություններ:

Այդպիսի ցուցակներից մեկը՝ «Պատմագիրք հայոց» խորագրով, գետնդրված է Մատենադարանի № 2271 ձեռագրում, որի գրության ժամանակն է 1724 թվականը²:

¹ Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Երևան, 1944, էջ 541:

² Այս ուշագրավ մատենագիտական երկի ուսումնասիրությունը ժամանակին մեզ հնարավորություն տվեց բացահայտելու «Պատմութիւն վասն ազգին նետոզաց» գրվածքի իսկական հեղինակին (Գրիգոր պատմիչ), ինչպես նաև՝ ճշտելու մի բանի բանասիրական հարցեր:

«Պատմագիրք հայոց»-ին նվիրված մեր զիտողությունները ամբողջությամբ կարդացել ենք Երևանի Պետական համալսարանի ուսանողների զիտական կոնֆերանսում՝ 1946 թ. գարնանը, ապա՝ նույն թվականի հունիս ամսին այն ներկայացրել ենք Համալսարանի Պետական քննական հանձնաժողովին որպես զիպլոմային աշխատանք:

Ն. Ակինյանը այս երկը հրատարակել է որպես Վարդան Բաղիշեցու գործ¹:

Վարդանը ժ.է դարի ամենահմուտ մատենագետներից մեկն է: Նա կազմել է Բաղեշի Ամրոցու վանքում պահվող ձեռագիր և տպագիր գրքերի ցուցակը²: Ըստ Ակինյանի՝ նրան է պատկանում նաև «Վասն պատմադրաց հայոց» խորագիրը կրող մի այլ մատենագիտական ցանկ³: Վարդանը վերանորոգել և ընդօրինակել է տվել բազմաթիվ գրքեր, հավաքել և հայանի է դարձրել հայ մատենագիրների երկերը, վանքերում հիմնադրել է մատենադարաններ, ավանդել է պատմություն և գրականություն⁴: Վարդանին ենք պարտական Ղազար Փարպեցու Պատմության և Սերևոսին վերագրվող երկի մայր ձեռագրի համար, որն ընդօրինակվել է նրա հանձնարարությամբ և այժմ պահվում է Մատենադարանում (ձեռագիր № 2639): Այս ձեռագիր ժողովածուում գտնվում են նաև Կորյունի, Ազաթանդեղոսի, Խորենացու, Եղիշեի և Մեսրոպ Վաչոցձորեցու երկերի լավագույն օրինակները:

Ինչպես տեսնում ենք, Ակինյանը բավականաչափ հիմքեր է ունեցել՝ Վարդանին «Պատմագիրք հայոց»-ի հեղինակը համարելու համար. «Ո՛վ կարող է ըլլալ ցանկերուս հեղինակը այս ժ.է դարուն: Միակ անձ մը կը ցցուի այս շրջանիս մեր առջև, որ բոլոր թափով հետամուտ է պատմական գրականության, որ ոչ աշխատանք և ոչ դրամ կը խնայէ կազմելու լիակատար հարածոյք մը հայ և օտար պատմագիրքերու և դանոնք օրինակութեամբ մատչելի ընելու ընդհանուրին: Այդ Վարդան Վ. Բաղիշեցին է»⁵:

Ինչքան էլ հավանական լինի բազմալատտակ դիտնականի այս ենթադրությունը՝ փաստերը մերժում են այն: «Պատմագիրք հայոց»-ի ուշագիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն հորինել է մի անհայտ հեղինակ, որը Վարդան Բաղիշեցու հետ կապ չունի:

Քերհնք մեր ասածը հաստատող մի քանի փաստեր:

1. «Պատմագիրք հայոց»-ում հանդիպում ենք այսպիսի մի հատվածի. «Պատմագիրք սուրբ ժողովոյն Եփեսոսի և Քաղկեդոնի և ամենայն թուղթք, որ ի նոսա ընթերցան, թարգմանեալ եղև ի լատինացոց լեզուէ, ձեռամբ Գեորգոսյ Կոստանդինուպոլսեցոյ ի ժամանակս քուականութեան հայոց ՌՃԿ»⁶:

Այս հատվածից պարզ երևում է, որ «Պատմագիրք հայոց»-ի հեղինակը ՌՃԿ (1711) թվականին կենդանի է եղել:

Վարդան Բաղիշեցին, սակայն, մահացել է 1704 թվականին: Հետևաբար նա չէր կարող լինել այս գրվածքի հեղինակը:

¹ «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 55—63: «Բաղեշի գպրոցը», Վիեննա, 1952, էջ 294—307:

² «Արարատ», 1903, էջ 178—189:

³ «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 63—65:

⁴ Վարդանի գործունեության մասին մանրամասն տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 17—66:

⁵ «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 53:

⁶ Նույն տեղում, 1952, էջ 61: Ակինյանը, ստանց որևէ փաստի, ՌՃԿ (1711) թվականին վերաբերող տեղեկությունը համարում է հետագա ներմուծում. «...Կրնանք մտածել, թէ Մոսկէս Զուղայեցի (№ 2271 ձեռագիր ժողովածուի կազմողը—Փ. Ա.) յաւելուածներ մուծած ըլլայ իր օրինակին մէջ»: № 2271 ձեռագիրք և «Պատմագիրք հայոց»-ի ընթացիկը նման ենթադրություն տնկելու հիմք չեն տալիս:

2. «Պատմագիրք հայոց»-ի տվյալներից երևում է, որ նրա հեղինակը ծանոթ է եղել Նղիշի Վարդանանց պատմության միայն թերի օրինակին. «Նղիշէ վարդապետ, որ է պատմութիւն նահատակութեանց սրբոց, Ղևոնդեանցն և Վարդանանցն. թէպէտ և զպատերազմունսն սրբոյն Վարդանայ, որ նախան զնահատակիլն, րսա պատմագրաց, այժմ ոչ գտանի ուրեք, զոր արարեալ է ևս սրբոյն Նղիշէի»¹:

Ինչպես տեսնում ենք, «Պատմագիրք հայոց»-ի հեղինակի ձեռքի տակ եղած Նղիշի Պատմությունը քովանդակել է միայն նահատակությունների պատմությունը, իսկ պատերազմի նկարագրությունը «այժմ ոչ գտանի ուրեք»:

Այս տվյալը հակասում է Վարդան Բաղիշեցու մասին մեր ունեցած տեղեկություններին:

Մատենադարանում, ասացինք, պահվում է Վարդան Բաղիշեցու պատվիրով բնագործի ված № 2639 ձեռագիր ժողովածուն, որտեղ, ի թիվս մյուս բնագրերի՝ զետեղված է նաև Նղիշի Վարդանանց պատմությունը: Ի տարբերություն «Պատմագիրք հայոց»-ի հեղինակի ձեռքի տակ գտնված օրինակի, այստեղ Վարդանանց պատմության բնագիրը լրիվ է: Այսպիսի բնագրի մասին Վ. Բաղիշեցին չէր կարող գրել. «զպատերազմունսն սրբոյն Վարդանայ... այժմ ոչ գտանի ուրեք»: Պարզ է, որ այս խոսքերի հեղինակը բոլորովին ուրիշ անձնավորություն է:

3. «Պատմագիրք հայոց»-ում Ղազար Փարպեցին ներկայացված է այսպես. «Ղազար Փարպեցի. ճարտասան պատմագիրք. սկիզբն արարեալ ի մահուանէ սրբոյն Սահակայ (439 թ.—Գ. Ա.) մինչև ի մահն Ջենոնի կայսեր»²: Իրականում Փարպեցու Պատմությունն սկսվում է Արշակունյաց թագավորության քաժանումից (387): Իսկ Ջենոն կայսեր մասին ոչ մի հիշատակություն չկա այնտեղ: Կնշանակի՝ «Պատմագիրք հայոց»-ի հեղինակը կամ ճիշտ պատկերացում չի ունեցել Փարպեցու Պատմության մասին, կամ էլ ձեռքի տակ ունեցել է Պատմության աղճատ մի օրինակ: Մինչդեռ Վարդան Բաղիշեցուն պատկանած № 2639 ձեռագրում գտնվող Փարպեցու Պատմության բնագիրը լրիվ է: Ուստի նա չէր կարող այդ երկի մասին սխալ տեղեկություններ հաղորդել:

Այսքանն էլ բավական է ցույց տալու համար, որ Վարդան Բաղիշեցին «Պատմագիրք հայոց»-ի հեղինակը չէ:

Այժմ օգտակար լինի՞ր՝ անհրաժեշտ ենք համարում ճշտել «Պատմագիրք հայոց»-ի տպագիր բնագրում տեղ գտած մի քանի սխալ ընթերցվածներ:

Նկատի ունենալով, որ «Պատմագիրք հայոց»-ը հրատարակված է Մատենադարանի № 2271 ձեռագրի հիման վրա՝ ճշտումները կկատարենք այդ ձեռագրի և տպագիր բնագրի համադրության միջոցով:

«Հանդէս Ամսօրեայ» 1952, էջ 56—62 Ձեռագիր № 2271, 213բ—215ա

էջ 56/ տող 24 արքայիւ

տող 29 արարեալ

57/16 ի ՌՃՄԹ քիւիւն

տ. 28 ի ԳՃԶ

213բ/ տող 2 արքայիւն

տող 5 առեալ

տ. 19 ի ԳՃՄԹ քուիւն

214ա/1 ի ԳՃԼ

¹ «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 56:

² Անդ:

58/12 վասն քարարաց	տ. 12 վասն ազգին քարարաց
տ. 28 նոյն	214ա/23 սոյն
տ. 59 եկեղեցատիկայ	214բ/12 եկեղեցատիկայ
61/3—6 որ...երկուքն...երեւին	215ա/11—13 զոր...գերկուսն...
անուանին...եղեն	երկի...անուանի...եղև
62/33 որ	215բ/19 զորս

Մտտ 20 սխալ ընթերցվածքներից մենք նշեցինք միայն 9-ը: Մնացածները երկրորդական նշանակություն ունեն:

3. Է. ԴԱՐՈՒՄ ԶԱՔԵՈՍ ՊԱՏՄԻՉ ՉԻ ԵՂԵԼ

Հայ բանասիրությանը հայտնի է է դարի մի պատմիչ՝ Զաքեոս անու-
նով. «Զակքէոս պատմագիրք», Բ հատոր, սկսեալ ի բանից առաքելոց, մինչև
ի ՃԾ թիւ¹: Ալիշանը «Հայագատում»-ում նրան հատկացրել է առանձին հատ-
ված, սրտեղ գրել է. «երկրայութեամբ է-՛՛ Դարու կամ հնագոյն ևս համարիմք
այս անձանոթ անձը, որոյ յիշատակը՝ միայն Նոր Զուղայի ձեռագրաց ցանկի
մի մէջ նշանակուած է, իբր եկեղեցական պատմիչ...»²: Նույն պատմչի մասին
Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ում ասված է. «Զակքէոս,
անձանոթ պատմիչ է դարու. գրել է եկեղեցական պատմություն՝ սկսած առաք-
յալներից մինչև 700 թ.: Զեռագիրը գանձվում է Նոր Զուղայի գրադարանում...»³:

Ինչպէս տեսնում ենք, Զաքեոսի գոյությունը հաստատվում է մի ձեռագրի
միջոցով, որը «գանձվում է Նոր Զուղայի գրադարանում»: Ըստ Ալիշանի՝ այդ
ձեռագրում հիշատակվում է Զաքեոսի միայն անունը և երկի բովանդակությու-
նը, իսկ Աճառյանը հայտնում է, որ Զաքեոսի ամբողջ գործն է գանձվում Նոր
Զուղայի գրադարանում:

Մեր նպատակն է ցույց տալ, որ է դարում Զաքեոս պատմիչ գոյություն
չի ունեցել:

Սկսենք «Նոր Զուղայի ձեռագրաց ցանկից»:

1839 թ. փետրվարի 29-ին Ստեփանոս քահանա Տեր-Հոհանյանցը Վենե-
տիկի Մխիթարյան ուխտի արքահայր Սուքիաս Սոմային ուղղած իր նամակում
հայտնում է, թե ինքը գտել է ձեռագրաց մի ցուցակ, որը, հավանաբար, Նոր
Զուղայի Ամենափրկիչ վանքում պահվող ձեռագրերի ցուցակն է⁴: Նամակի
հետ միասին նա Վենետիկ է ուղարկում իր գտած ցուցակի ընդօրինակությունը:
Հետագայում Ալիշանը, Զարրհանալյանը և ուրիշ բանասերներ օգտվելով այդ
վավերագրից՝ ամենուրեք այն ներկայացրել են որպէս իսկապէս Նոր Զուղայի
ձեռագրաց ցուցակ:

Սակայն այժմ արդեն հայտնի է, որ այս վավերագիրը ոչ թե որևէ առան-
ձին վանքում պահվող ձեռագրերի ցուցակ է, այլ հանդիսանում է հենց նույն
«Պատմագիրք հայոց» երկը, որի սկզբնագիրք, ինչպէս ասացինք, գանձվում է
Մատենադարանի № 2271 ձեռագրում:

¹ Ալիշան, Հայագատում, Վենետիկ, 1901, էջ 72:

² Անգ:

³ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Երևան, 1944, էջ 202:

⁴ Ա. թ ա ն ա ս, Ժ ա ո թ և թ ու զ թ թ, Վենետիկ, 1899, էջ 2—է: Տե՛ս նաև «Հանդէս
ամսօրեայ», 1932, էջ 54:

Տեր-Հոհանյանցը «Պատմագիրք հայոց»-ը ներկայացնելով որպես նոր Զուղայի ձեռագրաց ցուցակ՝ շփոթի մեջ է դրել բանասերներին: Զարմանալի է, սակայն, որ վերջիններս չեն նկատել Տեր-Հոհանյանցի ցուցակի և «Պատմագիրք հայոց»-ի նույնությունը: Հայտնի է, որ Տեր-Հոհանյանցի նամակից դեռ 44 տարի առաջ՝ 1795 թվականին Հակոբ Այուբյանը Մադրասում հրատարակել էր «Պատմագիրք հայոց»-ի բնագիրը¹:

Բանասերների թյուրատեսությունը, թերևս, կարելի է բացատրել նրանով, որ Այուբյանը «Պատմագիրք հայոց»-ի բնագիրը հրատարակել է բազմաթիվ սեփական հավելումներով և կրճատումներով, որոնք այլափոխել են բնագիրը և այն հեռացրել Տեր-Հոհանյանցի ցուցակից: Բացի այդ՝ Այուբյանը «Պատմագիրք հայոց»-ը հրատարակել է իր հոդվածի հետ խառն, առանց սահմանազատման, որով սպաժարություն է ստացվում, թե այն՝ Այուբյանի սեփական հոդվածն է և ոչ թե առանձին վավերագիր:

Ի տարրերություն Մատենադարանի № 2271 ձեռագրում գտնվող բնագրի, որը «Պատմագիրք հայոց»-ի ամենահին և ամենաանաղարտ օրինակն է, Տեր-Հոհանյանցի ցուցակը լի է կղել սխալ ընթերցվածքներով, որոնք երբեմն բոլորովին աղճատել և անհասկանալի են դարձրել բնագիրը: Այդպիսիներից է, օրինակ, «Շապուհ պատմագիրք. որ է Ռմբլզաբերալայ ստրատելատին...»², փոխանակ՝ «Շապուհ պատմագիրք. որ է Պատմուրխն սրբոյն Սմբատայ ստրատելատին...» և այլն:

Այս աղճատումներից մեկի արդյունք է, ահա, «է դարու պատմիչ Զակրէոսը»:

Երբևեք Զաքեոսին վերաբերող հատվածները՝ «Պատմագիրք հայոց»-ի անաղարտ բնագրի և Տեր-Հոհանյանցի օրինակի համադրությամբ:

Տեր-Հոհանյանցի օրինակ

Ձեռագիր № 2271

«[Զակրէոս պատմագիրք.] Բ հատոր. Զաքէոս պատմագիրք. Բ հատոր սկսեալ ի բանից Առաքելոցն մինչև սկսեալ զինի բանից տաքլին մինչև ի ճԾ թիւ»³:
 «[ՅՈՒՆԻՍԿՈՒՄԻՆՆԻՍ ԹԻՒՆՆԻՍ]»:

Այս համադրությունից երևում է, որ Տեր-Հոհանյանցի օրինակում սկզբնադրի առկիին բառը սխալմամբ ընթերցվել է առաքելոցն, մինչդեռ պետք է լիներ Առաքելին: Ապա՝ սկզբնադրի ՌՃԾ տառերը Տեր-Հոհանյանցի օրինակում դարձել են ի ճԾ, որով 1701 (ՌՃԾ) թվականի փոխարեն ստացվել է 701 (ճԾ) այսինքն՝ ուղիղ 1000 տարվա կորուստ: Այս կորուստի հետևանքով Զաքեոսը ՃԸ դարից տեղափոխվել է Ը դար և դարձել «է—Ը դարու կամ հնագոյն ես» մի եկեղեցական պատմիչ, որը գրել է «առաքելիների պատմությունը»: Երականում «Պատմագիրք հայոց»-ում նշված Առաքելը ՃԷ դարի նշանավոր պատմիչ Առաքել Գավրիժեցին է, որի Պատմությունը շարունակող և իրոք մինչև 1701 թվականը («մինչև ՌՃԾ թուին») հասցնող Զաքեոսը ոչ այլ որ է, բան Զաքարիա Սարկավազը, որը հայտնի է նաև Զաքեոս անունով: Նա «Պատմագիրք հայոց»-ում նշված է հենց Առաքել Գավրիժեցուց անմիջապես հետո («զինի բանից Առաքելին»):

Այսպիսով, հերքվում է Զաքեոս պատմիչի գոյությունը է դարում:

¹ «Ազգագրութ», Մադրաս, 1795, էջ 188—192:

² Ալիշան, Հայագրատու, էջ 80: «Հանդէս ամսօրեայ», 1952, էջ 54:

³ «Հայագրատու», էջ 72:

Կ. ՅՈՒՋՐԱՇՅԱՆ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵԿ
ՏԱՐԸՆԹԵՐՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ՝

ՎՌԱՆԳՔ ԵՎ ՈՋ ՓՌԱՆԿՔ

Ինչպես հայտնի է, Արիստակես Լաստիվերտցու «Պատմության» բնագիրը հրատարակվել է առաջին անգամ 1844 թ., Վենետիկում, հինգ ձեռագրի համեմատությամբ¹։ Հաջորդ՝ Վենետիկի 1901 թ. և Թիֆլիսի 1912 թ. հրատարակությունները արտատպություն են։ Եվ ահա, այդ հրատարակության համապատասխան տեղում կարդում ենք, որ հայոց 503 թվականին (1054/55), երբ սելջուկները արշավել էին Անգղրկովհաս, Բաբերդի մոտ նրանց հանդիպում է «զունդ մի ի զօրացն հոռոմոց, որ կոչին փռանկը, որք յանգէտս միմեանց ի դիմի հարեալք ճակատեցան»²։

«Փռանկը» (ֆռանկներ) բառի վրա չի կասկածել ոչ աշխարհաբար թարգմանիչը³ և ոչ ֆրանսերեն թարգմանիչը։ Վերջինս ծանոթագրության մեջ նշում է, որ այդ ժամանակ Եվրոպայի տարբեր մասերից եկած բազմաթիվ ֆռանկներ, հատկապես նորմաններ, ծառայում էին բյուզանդական բանակում⁴։ Միայն ահազ. Բրոսեն, անգրագառնալով Ար. Լաստիվերտցու «Պատմության» համապատասխան էջերին, նկատում է, որ Բաբերդի ճակատամարտում մասնակցություն ունեցան ֆռանկները «կամ ավելի շուտ վարյագները (varégués), որոնք կազմում էին հունական բանակի օժանդակ միավոր»⁵։ Թե ինչ ճանապարհով է եկել հեղինակը այդ, ինչպես ստորև կտեսնենք, ճիշտ եզրակացությունը՝ գծվար է ասել։

Փորձենք քննության առնել այդ նախադասությունը։

Ձեռագիր տարրնթերցվածքները տալիս են «Ֆռանկը»⁶, «Ֆռանկը»⁷ ձևերը, որոնք խմաստը չեն փոխում։

¹ Պատմություն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցույ, Վենետիկ, 1844:

² Պատմություն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցույ, Թիֆլիս, 1912, էջ 97:

³ Արիստակես Լաստիվերտցու վարդապետի հայոց պատմությունը, թարգմանեց Մինաս քահանա Տեր-Պետրոսյանց, Աղեքսանդրոպոլ, 1893, էջ 97:

⁴ Histoire d'Arménie comprenant la fin du royaume d'Ani et le commencement de l'invasion des seldjoukides par Arisdagués de Lasdiverd, traduite par M. Evariste Prud'homme. Paris, 1864. էջ 95:

⁵ M. Brosset, Histoire de la Géorgie, 1-ère partie, S. Petersbourg, 1849, էջ 323, ծան. 4:

⁶ Պատկան Մատենադարան, Հայերեն ձեռագրաց հավաքածու, № 3160, թ. 252ր, № 3502, թ. 401ր, № 1482, թ. 101ա, № 4584, թ. 67ա, № 3070, թ. 195ր, № 6437, թ. 71ա:

⁷ Մատենադարան, № 1895, թ. 39ր, № 2796, թ. 37ա. Վիեննայի Մխիթարյան Մատենադարան, № 114, էջ 88. № 288, թ. 36ր, № 306, թ. 39ա, № 551, թ. 67ր, № 623, թ. 135ր, № 827, թ. 38ր: Վիեննայի ձեռագրերի ավյալները ինձ սիրալիր կերպով հաղորդեց ահանափոր բանասեր Ներսես Ակիմյանը, որին օգտվում եմ հանդամանքից հայտնելու իմ շնորհակալությունը:

Այդ նախադասությունը, սակայն, տարօրինակ է հնչում: Ֆոանկները Հայաստանում հայտնի էին առնվազը Շիրակացու ժամանակներից: Այդ բառը միշտ ցույց է տվել ազգային պատկանելություն: Ինչո՞ւ Լաստիվերացին այդպիսի բարդ ձևով պիտի արտահայտեր իր միտքը՝ հոսմեական գունդ, որոնք ֆոանկներ են կոչվում: Տարօրինակությունը, սակայն, վերանում է, երբ դիմում ենք մեկ ձևադրի ևս, ուր համապատասխան տեղում ասված է «գունդ մի ի դօրացն հոսմոց, որ կոչին վռանգլ»¹: Ձեռագիրը Մովսես Խորենացու, Ասողիկի և Արիստակես Լաստիվերացու երկերի ժողովածու է, արտագրվել է ոմն Յոհան դրշի կողմից (թ. 242ր): Գրչագիրը երկու անգամ նորոգվել է, 1567 թ. Իգնատիոս բահանա Ղարասուեցու և 1684 թ. գրիչ Գավրիլ Շնճդուկի ձեռքով: Լաստիվերացու աշխատության մասը (թթ. 242ր—311ր) ենթարկվել է միայն մասնակի նորոգման, տեղ-տեղ վնասված թերթերի վրա թուղթ փակցվել և գրությունը վերականգնվել է: Գրչագիրը արտագրվել է հմուտ ձեռքով, առանց տառասխալների: Բառանշատում շունի, մի քանի քառ դալիս են մեկը մյուսի հետևից: «Է» հնչյունը դրեթե ամենուրեք արտահայտվում է «լ» տառով՝ այդ, Խրայիդ ևն: Գրության մեջ պահպանված են եղ, կորեւն, մեւք արխայիկ ձևերը: «Աւ» երկբարբառը երբեք «օ»-ով չի արտահայտվում՝ զաւր, աւրէն ևն, բացառությամբ մեկ տեղի (թ. 190ր), որը նորոգված է:

Նկատի ունենալով այդ հանգամանքները և հատկապես գրչության ձևը կարելի է համոզված ասել, որ ձեռագիրը ԺԳ, ամենաուշը ԺԳ դարից է և հանդիսանում է, այսպիսով «Պատմության» մեկ հասած հնագույն գրչագիր օրինակը²:

Արդ, ինչ է նշանակում «վռանգր», ովքե՞ր են այդ վռանգները, որոնք մասնակցում են Լաստիվերացու նկարագրած Հակատամարտին:

«Վռանգ» բառը տառադարձված հունարեն Βόραγγος-ն է. Βόραγγος կոչվում էին այն ուռ-սկանդինավ վարձկանները, որոնք գալիս էին Կիևյան Թուսիայից Քյուզանդիա և 10-րդ դարի վերջերից կազմում մի հատուկ զորամաս: Թուսական տարեգրությունները նրանց անվանում էին վարչագներ, варязи:

Այդ բառի հայերեն ձևը մենք չենք դոնի ոչ բառարաններում, ոչ էլ հատուկ ուսումնասիրություններում, նվիրված հայերենի փոխառություններին հունարենից³: Ըստ երևույթին պետք է ենթադրել, որ այդ բառը առանձնապես տարածված չի եղել, ինչպես և առհասարակ տարածված չեն եղել հունարենից փոխառված բառերի մեծ մասը⁴: Այնուամենայնիվ, եթե այդպիսի քաջ հայ-

¹ Մատենադարան, № 2865, թ. 279ա:

² Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Մովսեսի Խորենացու Պատմության հայոց աշխատությանը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Տփլիս, 1913, էջ ԺԹ—ԻԱ, այստեղ սխալմամբ նշված է, որ Կարենյան ցուցակում ձեռագիրը գրանցված է 242 համարի տակ, մինչդեռ ցուցակում այդ ձեռագիրը առհասարակ չկա:

³ C. Brockelmann. Die griechischen Fremdwörter im Armenischen. „Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft“ XLII, 1893, Heft. I. հայերեն թարգմ. «Հանդէս ամսօրեայ» 1894, հունվ. փետր. մարտ, մայիս. H. Hübschmann. Armenische Grammatik, Leipzig, 1837, էջ 322—389. H. Thumb. Die griechischen Lehnwörter im Armenischen, „Byzantinische Zeitschrift“, IX, 1900, Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 5—53. նույնի Греческие заимствования в армянском языке. „Византийский вестник“, т. II, 1949.

⁴ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 49:

կարան, ինչպիսին էր Արիստակես Լաստիվերտցին, օդադործել է այդ բառը, ապա պետք է մտածել, որ այն հասկանալի էր հայ ընթերցողին:

Հունարեն բառը տառադարձված է հայերեն՝ համաձայն տառադարձման ընդհանուր օրինաչափություններին: Հունարեն β-ն դառել է վ, ինչպես Βασίλειος — Վասիլ: Երկու γ-ն (γγ) հունարեն հնչում են նգ, ու վերջավորությունը ընկել է, այդ դարձյալ տարածված երևույթ է Βούλγαρος — բուլղար¹: Հունարեն ρ-ն կարող է դառնալ «ա» և «բ»: Առաջին α-ն սղվել է, նամանավանդ, որ հունարեն արտասանում էին նաև Βράγγος²:

Վաանդների հետ կապված պրորբիմը հուզել է բազմաթիվ պատմաբանների, ըստ որում այդ հարցը ֆնուլյան առարկա է դարձել նախ և առաջ ուսական պետության հնադուլն պատմության կապակցությամբ: Այդ հարցում բախվում էին նորմանական տեսության կողմնակիցների և հակառակորդների կարծիքները: Իր սպառիչ լուծումը այդ պրորբիմը ստանում է 1874—1875 թթ., երբ հռչակավոր ուսա բյուզանդապետ ակադ. Վ. Գ. Վասիլևսկին հրատարակեց իր «Варяго-русская и варяго-английская дружина» գրքական ուսումնասիրությունը³: Զնայած հողվածի պատկանելի հնություն, ակադ. Վասիլևսկու հիմնական թեզերը մնում են անհերքելի:

Համեմատելով ամենատարբեր աղբյուրներ, ակադ. Վասիլևսկին ապացուցում է, որ վաանդների զորամասի կորիզը կազմում էին ոչ թե սկանդինավները, այլ ուսաները: Բյուզանդական պատմիչների համար Ρως և Βραγγοս անունները հոմանիշ էին: Վաանդները գալիս էին Կոստանդնուպոլիս Կիևյան Ռուսիայով: Ռուսիայում այդ ուսա-սկանդինավ զրուծիներին կոչվում էին варяг-ներ (սկանդ. vaeringjar վարձկաններ՝ բառից), իսկ Բյուզանդիայում — Βράγγοι: Վաանդների մի մասը ծառայում էին որպես կայսեր թիկնապահներ, բայց մեծամասնությամբ, կազմելով հատուկ զորամաս, նրանք բանակում էին ասիական սահմաններում կամ հարավային Իտալիայում:

11-րդ դարի կեսերից վաանդների հետ մեկտեղ բյուզանդական բանակում սկսում են ծառայել նաև ֆրանկները, այսինքն հարավ-իտալական նորմանները, իսկ 11-րդ դարի վերջերից՝ վաանդների զորամասում հիմնականում ծառայում են ախ շանգլիացիները, որոնք նորմանական արշավանքի հետևանքով լքում էին հայրենիքը:

Վերջ նշեցինք, որ սելջուկների և վաանդների միջև եղած ճակատամարտը, որը նկարագրում է Ար. Լաստիվերտցին, տեղի է ունենում Բաբերդի մոտ՝ մի երկրամասում, որը վաանդների սովորական բանակատեղին էր:

Սլ իրոք, հայտնի է, որ 1021—1022 թթ. ձմեռը վաանդների զորամասը անց է կացնում Տրապիզոնի մոտ⁴: Վաանդները մասնակցում են Բերկրի քաղաքի պաշարմանը 1033 թ.⁵:

¹ Տե՛ս Н. Нübссhтaнп. նշվ. աշխ. էջ 326—327:

² Տե՛ս В. Г. Васильевский, Советы и рассказы византийского боярина XI века. „Журнал Министерства Народного Просвещения“, ч. ССХVI, 1881, էջ 319, ծան. 1:

³ В. Г. Васильевский, Варяго-русская и варяго-английская дружина в Константинополе XI и XII веков. „Труды В. Г. Васильевского“, вып. I, СПб. 1908.

⁴ В. Г. Васильевский, նշվ. աշխ. էջ 211—212:

⁵ Անդ, էջ 215:

11-րդ դարի կեսերից վուանգների զորամասի հետ հիշվում են նաև ֆրանկներ, որոնք կազմում են նույնպես դաշնակիցների մի գունդ:

1048 թ. վուանգները և վարձկան ֆրանկները կանգնած էին Փոքր Ասիայի խորքում¹: Ուստի անսպասելի չէ, որ Լաստիվերտցու նկարագրած ճակատամարտում մասնակցում է վուանգների գունդը: Այդ փաստի մասին խոսում է ոչ միայն հայ, այլև բյուզանդական պատմիչը:

Անդ հետաքրքրող դեպքը տեղի է ունեցել Տուղրուլ-բեկի հայտնի արշավանքի ժամանակ, երբ սելջուկները ասպատակեցին ողջ Հայաստանը, հասնելով մինչև Աբխազիա և Պարթևարի լեռները՝ հյուսիսում, Ճաննեթի՝ այն է Խաղափրի անտառները՝ արևմուտքում, Սիմ լեռը՝ հարավում: Տուղրուլ բեկը պաշարեց Մանազկերտը, բայց չկարողացավ գրավել և նահանջեց, ճանապարհին սվիբելով Արժկե քաղաքը²:

Ինչպես հայտնում է Արիստակես Լաստիվերտցին, այդ արշավանքը տեղի է ունեցել հայոց 503 թ., այսինքն մեր թվարկության 1054—1055-ին: Նախորդ տարում սելջուկները գրավել էին Կարսը և սրի մատնել ժողովրդին, ըստ որում աղատվել էին միայն նրանք, ովքեր փախել էին միջնաբերդ³:

Տուղրուլ բեկի այդ արշավանքի մասին խոսում է նաև 11-րդ դարի հույն պատմիչ Հովհաննես Սկիլիցյան⁴: Սակայն մեզ հետաքրքրող դեպքը արձագանք է գտել մի այլ տեղում: Սկիլիցյան նկարագրում է Տուղրուլ բեկի և սելջուկյան այլ զորավարների՝ Իրրահիմի և Կուտուլմուշի միջև եղած կռիվները: Ասում է, որ Կուտուլմուշը փորձեց բարեկամանալ Բյուզանդիայի հետ և այդ նպատակով դեսպաններ ուղարկեց կայսրին: Միաժամանակ Կուտուլմուշը մտաեցավ Կարսին, պաշարեց այն, գրավեց ամբողջ քաղաքը, բացի միջնաբերդից⁵:

Այդ դեպքից հետո Տուղրուլ բեկ սուլթանը հետապնդելով Կուտուլմուշին դալիս է Իրերիա (Վրաստան): Բյուզանդական կայսրը (այդ ժամանակ դահա-կալում էր Կոստանդին Մանուիլը — 1042—1055) արևմուտքից կանչում է զորավար Միրաչելին. «Երբ նա եկավ, — հայտնում է պատմագիրը, — ժողովեց Խաղափրայում և Իրերիայում ջրված ֆրանկներին և վուանգներին և կասեցրեց սուլթանի առաջխաղացումը» (ὅς ἐκεῖ γενόμενος ἐν τῇ Χαλδία καὶ Ἰβηρία Φραγγούς καὶ Βαράγγους ἀγροχῶς, κωλύειν ἤπειχετο τὸν ἐνόντα τρόπον τὰς ἐκδρομὰς τοῦ σουλτάνου)⁶:

Համայնեցիկների հենց այդ հաջողությունն է նկատի ունի Արիստակես Լաստիվերտցին, երբ ասում է. «և յողորմութենէն աստուծոյ զօրացան գունդն

¹ Cedreni, Historiarum compendium, ed. Bonn., II, 1839, էջ 597. В. Г. Васильевский, 2-й. изд. էջ 318—319:

² Տե՛ս The Encyclopedia of Islam, fasc. K., Leyden-London, էջ 829, և Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. 3-րդ, Երևան, 1952, էջ 47—49:

³ ԺԶ զլուխը, որը վերնագրված է «Վասն գալոյն Սուլթանայ» և ուր նկարագրվում է Տուղրուլ բեկի արշավանքը, սկսվում է այսպես՝ «զկնի այս պատմութեանս, ի զայ տարւոյն էր Թուսկանիս մերոյ ամբ հինգհարիւր երեք...» (Ար. Լաստիվերտցի, էջ 93): Նախորդ զլուխը նվիրված է Կարսի պաշարմանը, որը այսպիսով տեղի է ունեցել հայոց 502-ին, այն է՝ 1053/54 թթ.:

⁴ Cedreni, էջ 590—593:

⁵ Անդ, էջ 606: Տե՛ս նաև Ար. Լաստիվերտցի, էջ 92 «և թէ որ ժամանակս յամուրն ելանել որ ի վերայ քաղաքին կայ, նա միայն սպրեցաւ»:

⁶ Cedreni, էջ 606:

Հուսմոց (իմա՝ «որ կոչին վռանդք») և յաղթեալ թշնամեացն զգլուխ զօրոն սպանին և զբազումս ընդ նմա, և զայսն ի փախուստ դարձուցեալ, զսո և զզերի զամենայն թափեցին, բայց փախստէիցն զհետ ոչ իշխեցին յերկարել, բանդի երկեան թէ զուցէ ծանր զօրու հանդիպեցին»¹:

Անդրադառնալով Սկիւիցայի վկայակոչած տեղին, ակադ. Վասիլևսկին գտնում էր, որ վռանքների և սելջուկների բախումը տեղի է ունեցել 1053 թ., ելնելով, ըստ երևույթին, Կարսի պաշարման թվականից²:

Արիստակես Լաստիվերոցու հաավածի ճիշտ ընթերցումը հնարավորութուն է տալիս ճշտելու այդ ճակատամարտի ժամանակը. այն տեղի է ունեցել Տուզրուլ բեկի արշավանքի ժամանակ, այսինքն 1054 թ.³:

Արդյո՞ք քննության առնված հատվածը Արիստակես Լաստիվերոցուց միակ տեղն է հայ աղբյուրներում, որտեղ հիշատակվում են բյուզանդական վռանդները:

Ինչպես հաղորդում են հույն և արաբական պատմիչները, երբ Վարդ Փոկասը ապստամբություն էր բարձրացրել Վասիլ Բ Բուլղարասպանի դեմ, բյուզանդական կայսրի հրամանատարության ներքո կար մի ուսական զորամաս, որին Բյուզանդիա էր ուղարկել Վասիլի զաշնակից Կիևյան իշխան Վլադիմիրը⁴: Ռուսական զորախումբը եկավ Վասիլի քրոջ՝ Աննայի և Վլադիմիրի ամուսնանալու օրոք, երբ Ռուսիան պիտի քրիստոնեություն ընդուներ: Առաջին ճակատամարտը, որին մասնակցեց ուսական զորամասը, Խրիստոպոլիս բաղաքի ճակատամարտն էր, որը տեղի էր ունեցել 988 թ.⁵:

Ահա այդ ուսաներին է հիշում Ասողիկը, երբ պատմում է Վասիլ Բ կայսեր զալստյան մասին Տաշք՝ 1000 թվականին: Վասիլին ներկայանում են ափսազաց թագավոր Բագրատը և վրաց թագավոր Գուրգենը: Գուրգենի մեկնելու օրը հունական բանակում մի ընդհարում է տեղի ունենում: Այս կապակցությամբ պատմագիրը Ռուզաց հետևակազնդի մասին պատմում է հետևյալը. «Եւ սպա բոլոր ազգն Ռուզաց, որ ի տեղուոն յայնմ՝ շարժեցան ի պատերազմ. (զի էին նորա արք Զմ (6000) հետևակամարտք, նիզակ և ասպար ի ձեռս նոցա, զորս էր խնդրեալ թագաւորին Վասիլ ի թագաւորէն Ռուզաց, յորժամ եւ զքոյրն իւր կնութեան նմա, յորում ժամանակի և հաւատացին նորա ի Քրիստոս)»⁶:

Նույն այդ ուսաներին հիշում է վերջապես նաև Արիստակես Լաստիվերոցին Վասիլ Բ-ի արևելյան արշավանքի մասին խոսելիս: Ըստ նրա պատմածի, կայսրին դիմավորում է «ազատագունդ զօրքն Տալոց» և նա մեծ պարգևներ

¹ Ար. Լաստիվերոցի, էջ 92:

² Անդ, էջ 97:

³ В. Г. Васильевский, *Удф. աշխ.* էջ 321:

⁴ Μεταξύ Ψέλλου Βυζαντινῆς ιστορίας ἐκατονταετηρίαι, ed. C. Sathas, „Bibliotheca graeca medii aevi“, IV, Parisiis, 1874, էջ 10. Cedreni, էջ 444. Ioannis Zonarae Annales, ed. Bonn., II, էջ 221. В. Р. Розен. Император Василий Болгаробойца. Извлечение из летописи Яхъи Антиохийского, СПб., 1883, էջ 23—24. Примечания, էջ 194—205:

⁵ В. Р. Розен, *Удф. աշխ.*, էջ 198. В. Г. Васильевский, *Удф. աշխ.*, էջ 199. М. В. Левченко. Очерки по истории русско-византийских отношений. М. 1956, էջ 355—356:

⁶ Ստեփանոսի Տարօնեցու Սոսղկա՞ Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 276—277:

է շնորհում ազատներին: Այնուհետև կայսրը շարժվում է Ադոբի աշխարհը-
Հավաճիչ ամբոցը. «Եւ ոչ գիտեմ յորպիսի պատճառանաց ընդ միմեանս անկեալ
արեմտական զօրն, որ կոչի Լուուզք, և ազատագունդն, և ի նմին տեղոջ մեռան
յազատացն երեսուն այր ի յոյժ պատուարաց»¹:

Այդ սուզները կամ ըսուզները, որոնք 988 թ. կել էին Բյուզանդիա և
մասնակցել 1000 թ. դեպքերին, այն վրանդներն են, որոնց զորագունդը հիշա-
տակված է Արիստակես Լաստիվերացու «Պատմութեան» մեջ²:

Մենք տեսնում ենք, որ մեր հեղինակը նույն վրանդներին մի տեղ անվա-
նում է «ըսուզք», իսկ մյուս տեղում՝ «վրանդք»: Այստեղ նա հետևում է բյուզան-
դական գրական տրադիցիային. ինչպես ասացինք հույն պատմիչները նույն
զորագունդը անվանում էին և Ῥῶς, և Βορραγγος: Խոսելով վրանդ գին-
ժորների մասին, այդ երկու բառը նրանք օգտագործում էին իբրև հոմանիշների,
և երբևէր մենք տեսնում ենք նաև հայ հեղինակի մոտ:

Վրանդներին հիշում է նաև Մատթեոս Ուռհայեցին:

Ինչպես վկայում են վրաց աղբյուրները, վրաց թագավոր Դավիթ Բ Շինա-
րարի (1089—1125) զորքում կային և վրանդներ, որոնք մասնակցել են
1121 թ. օգոստոսի 15-ին Բրիլիսիի մոտ տեղի ունեցած ճակատամարտին³:
Ելնելով այդ հանգամանքից Ս. Տ. Երեմյանը առաջարկում է ուղղել Մատթեոս
Ուռհայեցու «Ժամանակագրութեան» հրատարակված բնագրի համապատաս-
խան տեղը, ուր թագավորական զորքերում հիշատակվում են փրանդներ⁴: Նա
գտնում է, որ շփոթությունը գոյացել է Վ և Վ տառերի նմանությունից և փրանդ
բառի փոխարեն առաջարկում է կարդալ վրանդ կամ վրանդ: Այդ դեպքում
Մատթեոս Ուռհայեցու վկայությունը պիտի ընթերցվի՝ Դավիթը «...ունէր և
այլ զօրս ի Խափշախաց թագաւորէն արս տասն և հինգ հազար քաջս և ընտիրս
և յազգէն Ալանաց արս հինգ հարիւր և վրանդ (կամ ավելի հիշար՝ վրանդ)
հարիւր»⁵:

Արիստակես Լաստիվերացու մոտ հայտնաբերած «վրանդք» ձևը առավել
համոզիչ է դարձնում Ս. Տ. Երեմյանի սրամիտ սրբագրությունը:

Այսպիսով պարզվում է, որ վրանդները մի քանի անգամ հիշատակվում են
11—12-րդ դարերի հայկական աղբյուրներում և հայ պատմագիրներից Ասողի-
կը, Ար. Լաստիվերացին և Մատթեոս Ուռհայեցին տեղյակ լինելով վրանդ-
առական զորախմբի գոյության մասին, հաղորդում են ուշադրավ ավյալնեք
նրա գործունեության վերաբերյալ:

¹ Ա. ր. Լաստիվերացի, էջ 4:

² Տե՛ս В. Г. Васильевский, նշվ. աշխ., էջ 200—203:

³ Карлис Цховреба (История Грузии), грузинский текст, т. I, издал С. Кау-
ч и ш в и л и, Тбилиси, 1955, էջ 301:

⁴ С. Т. Еремян. Юрий Боголюбский в армянских и грузинских источниках.
«Գիտական աշխատություններ Երևանի Պետական համալսարանի», XXIII, 1946, էջ 390:

⁵ Հմմ. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութեան, Վաղարշապատ, 1898
էջ 350:

Լ. ԱԶԱՐՅԱՆ

1173 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆԴՈՐԻՆԱԿՎԱԾ ՆԱՐԵԿԸ ԵՎ ՍԿԵՎՈՒՅԻ
ՄԱՆՐԱՆԿԱՐՋԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Կիլիկյան Հայաստանում շուրջ 200 տարվա ընթացքում ստեղծված մանրանկարչական արվեստը յուրահատուկ տեղ է զբաղում հայկական միջնադարյան կուլտուրայի պատմության մեջ: Սկսած 12-րդ դարի առաջին քառորդից մինչև 14-րդ դարի 2-րդ կեսը (մինչև կիլիկյան հայկական պետության անկումը) այնտեղ ստեղծվեցին մանրանկարչական արվեստի այնպիսի հուշարձաններ, որոնց սիստեմատիկ և մանրազին ուսումնասիրությունը մեծապես կարող է նպաստել հայագիտությանը վերաբերող մի շարք հարցերի պարզաբանմանը: Կիլիկյան մանրանկարչական արվեստը հայ միջնադարյան կուլտուրայի զարգացման դադաթներից է: 13-րդ դարի երկրորդ կեսին կիլիկյան մանրանկարչությունը հասավ այնպիսի կատարելության, որ գուրս գալով ազգային շրջանակներից այն համարձակ կերպով մրցում էր (երբեմն նույնիսկ դերազանցում) ինչպես բյուզանդական, այնպես էլ մյուս երկրների մանրանկարչական արվեստի հետ:

Հայկական մանրանկարչությունն ուսումնասիրողները կիլիկյան մանրանկարչության հուշարձանները սովորաբար դիտել են որպես մի ամբողջական դպրոցի արդյունք: Մինչդեռ այդ հուշարձանների ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կիլիկիայում գոյություն է ունեցել առնվազն երեք ինքնուրույն դպրոց, որոնք մի ամբողջություն կազմելով հանդերձ, որոշակիորեն տարբերվում են միմյանցից թե ոճական առանձնահատկություններով, և թե իրենց կատարած պատմական դերով: Այսպես, կիլիկյան մանրանկարչության զարգացման ամենավաղ շրջանում (12-րդ դարի առաջին քառորդ) հանդես է գալիս Գրադարկի վանքը. այստեղ ձևավորված գրքի զարգացման արվեստը դեռ շատ դժերով կապված է բուն Հայաստանի մանրանկարչության հետ¹: 12-րդ դարի երկրորդ կեսը կիլիկյան մանրանկարչական արվեստի ինքնուրույն ոճի ձևավորման շրջանն է: Այս շրջանում լայն զործունեություն են ծավալում Սկևռայի և Մլիճի գրչատները (սкрипторий): Սկևռայի դպրոցն այն գլխավոր օջախն էր, որտեղ կազմավորվեցին կիլիկիայի մանրանկարչության նոր ոճի հիմնական դժերը: Եվ, վերջապես, 13-րդ դարի երկրորդ կեսում գլխավոր կենտրոնը դառնում է Հոռմկլան և նրան զուգահեռ զարգացող, բայց ոճային առանձնահատկություններով միանգամայն տարբեր, այսպես կոչված, «Արքանդրայր Հովհաննեսի դպրոցը» (Ակներ, Գոներ և Բարձրբերդ): Այս շրջանում

¹ Գրադարկի մասին տե՛ս Լ. Ա. զ ա ղ ա ն, Գրադարկի դպրոցի նշանակությունը կիլիկյան մանրանկարչության մեջ (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», № 5, 1957):

Հռոմկլան իր ազդեցությունը տարածում է համարյա բոլոր դպրոցների վրա, այդ է պատճառը, որ 13-րդ դարի 3-րդ քառորդում կիլիկյան մանրանկարչական արվեստը հանդես է գալիս ընդհանուր միասնական ոճով: Հռոմկլայի գրչատներում ստեղծված փառահեղ մանրանկարներով ձեռագրերը իրենց բարձր արվեստով իրավամբ հայ մանրանկարչության ամենակատարյալ ստեղծագործություններն են համարվում:

14-րդ դարի սկզբից կիլիկյան հայկական պետության թուլացման հետ մեկտեղ անկում է ապրում նաև կիլիկյան մանրանկարչական արվեստը:



Սկևռան լինելով լամբրոնյան իշխանների հոգևոր և կուլտուրական կենտրոնը, 12-րդ դարի երկրորդ կեսից դարձավ նաև կիլիկյան մանրանկարչական արվեստի հիմնական օջախներից մեկը:

Վանքի հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: Սակայն հնարավոր է, որ (ինչպես ենթադրում է Ալիշանը) այն դոյություն է ունեցել դեռ նախքան իշխան Օշինի լամբրոնին տիրելը (1073): Ալիշանը ասում է, որ իշխան Օշինը գալով լամբրոն «գտնալ զանառիկս ամայացեալ շինէր ըստ կարի և պատրաստեաց նախ ի ծայր բերդիս հանգստարան սուրբ և զլխաւոր Առաքելոցն նախնեաց»¹: Հայտնի չէ նաև վանքի ճիշտ տեղը, սակայն աղբյուրները վկայում են, որ այն գտնվել է «առընթեր հայրենատուր ամրոցի տէրանց մերոց» լամբրոնի»: Գիտենք նաև, որ այնտեղ են եղել ս. Փրկիչ և ս. Նշան եկեղեցիները, իսկ Աստվածամորը նվիրված մեծ եկեղեցին կառուցել է Օշին երկրորդը, հավանաբար 1153 թվականին²: 1175 թ. Ներսես լամբրոնացու եպիսկոպոս ձեռնադրվելու կապակցությամբ, այնտեղ կառուցվել է մի աղոթարան («տաճար աղօթից»), որը պատմիչի վկայությամբ զարդարված է եղել որմնանկարներով («Ամենապատիւ վայելչութեամբ շինեալ էր զտաճար աղօթից ի սուրբ ուխտս (Սկևռա) և նկարագրութեամբ պատկերաց զարդարեալ»)³: Այս վկայությունը մինչև օրս հայտնի միակ ստույգ փաստն է Կիլիկիայում եղած հայկական որմնանկարչության մասին, և առիթ է տալիս ենթադրելու, որ Կիլիկյան Հայաստանում, հատկապես լամբրոնում, որմնանկարչությունը տարածված արվեստ է եղել: Բուն Հայաստանի ավելի վաղ շրջանի մի շարք հուշարձանների պատերին պահպանված որմնանկարչության նմուշները (Անի, Աղթամար, Տաթև և այլն) վկայում են, որ Հայաստանում խորթ չի եղել այդ արվեստը: Հավանաբար Կիլիկիայում որմնանկարչության զարգացմանը նպաստել է նաև լամբրոնյան իշխանների և հոգևորականության մոտ հարաբերությունները բյուզանդացիների հետ:

Սկևռայում բավական զարգացած է եղել նաև կիրառական արվեստը: Պահպանված ոսկեզրած արծաթի փոքրիկ պահարանը (այսպես կոչված «սրբարանն Սկևռայի») 13-րդ դարի կիրառական արվեստի լավագույն նմուշներից է. այն պատվիրել է Կոստանդին Ա. կաթողիկոսը 1283 թվականին և նվիրել Սկևռայի վանքին⁴:

¹ Սկևռայի մասին տե՛ս Ալիշան, Սխուռան, էջ 97—107.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Մանրամասն տե՛ս «Միտուան», էջ 107—112: Այժմ գտնվում է Լենինգրադի էրմիտաժում:

Սկևռան առանձին նշանակություն ստացավ ներսես կամբրոնացու օրոք (1153—1198): Գաստիարակվելով ներսես Շնորհալու ձեռքի տակ, կամբրոնացին դեռևս երիտասարդ հասակում մեծ համբավ է վայելում որպես գրող և դիտնական: Կիրակոս Գանձակեցին զովատելով կամբրոնացու բազմալատասակ գործունեությունը, հայտնում է նաև, որ նա «շխնեաց և եկեղեցի հրաշազան ի վանքն՝ որ կոչի Սկևռայ, հուպ ի բերդն անառիկ կամբրոն, և կարգեաց զպաշտօն վանիցն ըստ օրինակի այլոց...»¹: Պատահական չէ, որ ոչ միայն Սկևռայի մանրանկարչական դպրոցին պատկանող ամենահին ձեռագիրը, այլև այդ դպրոցի մյուս լավագույն հուշարձանները հիմնականում կապվում են ներսես կամբրոնացու անվան հետ: Ինչպես վկայում են հիշատակարանները, հաճախ կամբրոնացին ինքն էր բնտրում ընդօրինակվող ձեռագրերի նախատիպը և հանձնարարում մանրանկարիչներին զարդարել դրանք մանրանկարներով:

12-րդ դարի 70-ական թվականներից հետո Սկևռայի գրչատներից դուրս եկած ձեռագրերի բարձր արվեստը, որն այնքան խոշոր նշանակություն ունեցավ կիլիկյան մանրանկարչության նոր ոճի զարգացման համար, անկասկած ունեցել է իր նախապատրաստական շրջանը, որի մասին, ցավոք, ոչինչ չենք կարող ասել ձեռքի տակ նյութեր չունենալու պատճառով:

Սկևռայի դպրոցին պատկանող մեզ հայտնի հնագույն մանրանկարչական արժեք ներկայացնող ձեռագիրը թվագրվում է 1173 թվականով: Այդ ժամանակից մեզ հայտնի են երեք մանրանկարիչներ, որոնք աշխատել են Սկևռայի և Մլիճի գրչատներում: Դրանք են՝ Վարդան քահանան, Կոստանդինը Կ. Ռ. Շ. Ի. Կ. մականվամբ և Գրիգոր Մլիճեցին: Այս երեքը Սկևռայում աշխատող մանրանկարիչների երկու սերնդի ներկայացուցիչներ են: Վարդանը և Կոստանդինը պատկանում են ավագ սերնդին, իսկ Գրիգորը, որը 1173 թվականին ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում իրեն համարում է նրանց աշակերտը՝ կրտսեր սերնդին:

Մանրանկարիչ Վարդանի ստեղծագործությունները մեզ չեն հասել: Նրա մասին տեղեկություններ են հայտնում Կոստանդինը և Գրիգորը: Իր իսկ ձեռքով գրած հիշատակարանում Գրիգորն ասում է, որ Վարդանն ու Կոստանդինը իրենց «բարի կամաբ ամանդակ եղեն գրչիս՝ բանիւք և գործովք»²: Բացի այդ, նրանք երեքով միասին ծաղկել են 1173 թ. Տիգրանակերտի Ավետարանը: Այնուհետև Գրիգորը հայտնում է, որ Վարդանը վախճանվեց այդ նույն 1173 թ. («զՎարդան աստուածամերձ քահանայ, որ բարեոք ծերութեամբ հանդեալ ի Քրիստոս յիշեսցիք»)՝ Վարդանի մասին հիշատակում է նաև Կոստանդինը 1193 թվականին ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում («Ողորմեա, Քրիստոս, Վարդանայ»): Ահա այն ամենը, ինչ գիտենք Վարդան քահանայի մասին: Այս բոլորից կարելի է ենթադրել, որ Վարդանի գործունեության ժամանակաշրջանը ընկնում է 12-րդ դարի 35—70-ական թվականներին և, որ Վարդանի ու նրա ժամանակաշրջանի մեզ անհայտ մանրանկարիչների ստեղծագործություններում արտացոլվել են 12-րդ դարի վերջին տասնամյակում Սկևռայում իր ձևավորումը ստացած մանրանկարչական ոճին նախորդող շրջանի առանձնահատկությունները:

¹ Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ջ ի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 102—103:

² Հիշատակարանը տե՛ս Գ. Հ ո վ ս ե ի յ ա ն, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, հատ. Ա, էջ 433—460:

³ Երևանի Մատենադարանի № 1368 ձեռագիրը, էջ 132ա:

Ավագ սերնդի մյուս ներկայացուցչի՝ Կոստանդինի աշխատանքներից մեկ հայտնի է միայն մեկը: Դա Վենետիկի Մխիթարյանների մոտ պահվող 1193 թվականի վերահիշյալ № 1635 ավետարանն է, որը Կոստանդինն ընդօրինակել է Ներսես Լամբրոնացու և նրա եղբայր Հեթումի համար: Ամենաինչ հավանականությամբ այս ձեռագիրը նրա վերջին գործերից է, քանի որ 1193 թվականից հետո այլևս չենք հանդիպում Կոստանդինի անվանը և դիտենք, որ նա դեռ 1174 թվականին արդեն «պատուական ծերունի» էր¹: Այլիշանք հայտնում է, որ Կոստանդինը ծաղկազարդել է մի այլ ձեռագիր ևս, որի գրիչն էր Սամվելը, սակայն տեղեկություն չի տալիս այդ ձեռագրի ոչ ժամանակի և ոչ էլ գրչության վայրի մասին:

Համեմատաբար ավելի շատ տվյալներ կան երկրորդ սերնդի ներկայացուցիչ Գրիգոր Մլիճեցու մասին: Սրա անվան հետ են կապվում հինգ ձեռագրերի մանրանկարներ, որոնք զարդարված են 1173 թվականից սկսած մինչև 1215 թվականը (մինչև Գրիգորի մահը): Գրանցից հնագույնը 1173 թվականի վերահիշյալ ավետարանն է, որի ծաղկազարդմանը, ինչպես ասացինք, մասնակցել են նաև Վարդանը և Կոստանդինը: Հիշատակարանում նշվում է, որ ընդօրինակելու համար «լուսինական շնորհաց զՆերսես (Լամբրոնացին—Լ. Ա.) սուրբ և քնտրեալ քահանա՝ զորդին մեծաւոր Սեւաստիոսի պարոն Աւշնի...»: (Մինչև առաջին համաշխարհային պատերազմը այս ձեռագիրը գտնվում էր Տիգրանակերտի ս. Կիրակոս եկեղեցում)²:

Նույն այդ 1173 թ. Գրիգորը Ներսես Լամբրոնացու պատվերով ծաղկազարդում է նաև Գրիգոր նարեկացու «Ողբերգության մատյանի» այն փառահեղ օրինակը, որը Պետ. Մատենադարանում պահվող հարյուրից ավելի նարեկներից հնագույնն է: Մի տարի անց, 1174 թ. Գրիգորը աշխատում է Հոռմկլայում՝ Ներսես Շնորհալու համար ծաղկազարդելով մի Ավետարան (մինչև առաջին համաշխարհային պատերազմը գտնվում էր Թոխատում)³: Թե որքան է Գրիգորը մնացել Հոռմկլայում՝ հայտնի չէ, բայց 1197 թ. մենք նրան նորից տեսնում ենք Սկևռայում, որտեղ ավարտում է Ստեփանոս քահանայի համար Մլիճի վանքում սկսած կվովի հայտնի Ավետարանը: Այս տարիներին արդեն Գրիգորը հռչակված էր որպես գրիչ և մանրանկարիչ⁴: Հավանաբար նույն Ստեփանոսի պատվերով է գրված և պատկերազարդված նաև Գրիգորի վերջին աշխատանքը՝ 1215 թվականի Ավետարանը (Նոր-Զուղայ, Ամենափրկիչ եկեղեցի), որը մանրանկարչի մահվան պատճառով թերի է մնացել: Այդ թերին լրացրել է անհայտ մի մանրանկարիչ, Տարսոն քաղաքում 1216 թվականին: Այդ առթիվ գրված հիշատակարանում Գրիգորը մեծարվում է

¹ Տե՛ս 1174 թ. Թարսոսի ավետարանի հիշատակարանը, գրված Գրիգոր Մլիճեցու կողմից (Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Յիշատակարանը, էջ 458):

² S. Der-Nersessian, Manuscrits Arméniens illustrés des XII, XIII et XIV siècles, Paris, 1947, p. 50: Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Յիշատակարանը, էջ 445—448: Ս ր ո ս ա ն ձ ա ե ա ն ց, Թ ո ռ ո ս Ա զ ր ա ր, Կ. Պոլիս, 1884, հատ. Բ, էջ 442—444:

³ Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Յիշատակարանը, էջ 453—460:

⁴ Ե՛ր ձեռն մեծանշանկ գովեալ գրչի որ գեր ի վերոյ ևւ անհաս գտաւ ի սեռս մեր ոչ մեյանաւ միայն, այդ ևւ երանգոց ևւ զեղոց նկարադարդ վայելչութեամբ»: Ձեռագրի մասին տե՛ս Ն. Ա կ ի ն յ ա ն, Սկևռայի Ավետարանը (Էջնիզես Ամսօրեայ, 1930): Ակինյանն էլ նրան անվանում է «Մլիճեցի», մյուսներից տարբերելու համար:

որպես հանրահռչակ նկարիչ: Հիշատակարանի հեղինակը հայտնում է նաև, որ Գրիգորը մահացավ ծերության հասակում¹:

* * *

Երևանի Պետական Մատենադարանի 1173 թվականին գրված նարեկը (№ 1568) հետաքրքիր է ոչ միայն նրանով, որ այն Գրիգոր նարեկացու «Ողբերգության մատյանի» մեզ հասած հնագույն ձեռագիրն է, այլ առավել շափով իր գեղարվեստական ձևավորմամբ և ճոխ մանրանկարներով: Այս իմաստով 1173 թ. նարեկը առանձին տեղ է գրավում, ինչպես կիլիկյան, այնպես էլ ողջ հայ մանրանկարչության պատմության մեջ:

Ուսումնասիրվող ձեռագիրը գրված և պատկերազարդված է ներսես Լամբրոնացու համար՝ Գրիգոր Մլիճեցու ձեռքով: Պահպանված համառոտ հիշատակագրություններում չի նշվում գրչության վայրը: Ելնելով այն փաստից, որ ձեռագրի ստացող ներսես Լամբրոնացին այդ տարիներին գեոևս ուսանում էր Հոռմկլայում, Գ. Հովսեփյանը այն դիտում է որպես Հոռմկլայի մանրանկարչական դպրոցի հուշարձան²: Ծիշտ է, ձեռագիրը գրվել է ներսես Լամբրոնացու պատվերով և, ամենայն հավանականությամբ, հենց Հոռմկլայի գրչատներից մեկում, բայց դա գեոևս բավարար հիմք չի կարող ծառայել ձեռագրի մանրանկարները դիտելու որպես Հոռմկլայի մանրանկարչական դպրոցի արտադրանք: Չնայած 12-րդ դարի 60-ական թվականներից սկսած Հոռմկլայում նույնպես ծավալվում է գրչության և մանրանկարչության արվեստը, սակայն փաստերը ցույց են տալիս, որ սկզբնական շրջանում, Հոռմկլայում ձեռագրեր գրելու և ծաղկելու համար նկարիչներ և գրիչներ են հրավիրվել այլ վայրերից, հատկապես արդեն հռչակ վայելող Սիկեայից: Վերը նշեցինք, որ Գրիգորը, որի գործունեության հիմնական վայրը եղել է Սիկեան և մասամբ էլ Մլիճը, աշխատել է նաև Հոռմկլայում:

Ուստի հնարավոր է, որ 1173 թվականին ընդօրինակված նարեկը ևս գրված ու պատկերազարդված է Հոռմկլայում: Սակայն նկատի առնելով, որ մանրանկարիչ Գրիգորը եղել է Սիկեայի դպրոցի նշանավոր վարպետներից մեկը, անկախ գրչության վայրից, մենք բավականաչափ հիմք ունենք ձեռագրի մանրանկարները դիտելու որպես Սիկեայի դպրոցի արտադրանք:

Պետ. Մատենադարանի № 1568 ձեռագիրը (մեծ. 15,2×11,5 սմ) գրված է լավորակ մագաղաթի վրա, գեղեցիկ, մանր երկաթագրով: Սկզբի էջերը զարդարված են երկու երկսյուն խորաններով, որոնց զարդարանքները աչքի են

¹ «Արդ եզև սկիզբն գրչութեան սորա ի թվարեութեանս Հայկազեան ազգիս Ոկհ (1215)... ձեռամբ Գրիգորի մեծահռչակ գրչի ի սուրբ ուխտն Սկիճոայ կոչեցեալ, զոր և հասեալ ի վերջ սորա ոչ կարաց կատարեալ, զի հասարակաց բնութիւնս զիւրն պահանջեաց, մեռաւ ի բարւոք ծերութեան, զոր և Տէր Յիսուս հանդուսցէ զնա ընդ Սուրբս իւր: Իսկ սա մնացեալ թերահատար ի տարակուսանս ընկնց գյառաջ ասացեալ ստացաւ զս սորա, իսկ իմ տեսեալ զնա յայնպիսի տարակուսանս կամեցայ լնուլ զգտակա առեալ թէ-պէտ և ոչ կատարեալ յարհեատս, սակայն ազաւինեալ յԱստուած և յազաւթս... ձեռս եղեալ կատարեցի զսա... եզև կատարումն սորա ի թուին Ոկհ (1216) ի բազարս Տարսոն»: Քարեղին քահանայ Կիրակոսյան, նոր Զուգայի մատենադարան («Արարատ», 1910, էջ 884—885):

² Գ. Հովսեփյան, նյութեր և ուսումնասիրություններ, նյութ-Յորք, 1943, պրակ Բ., էջ 16—17:

ընկնում արտակարգ նրբությունը: Սյուները նկարելիս մանրանկարիչը աշխատել է դրանք նմանեցնել մարմարի: Սյուների երկու կողմերում կան ոճավորված ծառեր, որոնց վրա նստած են մեծ վարպետությունը նկարված թռչուններ՝ զանազան դիրքերով: Նման թռչուններ կան նաև վերին քառանկյունների



Նկ. 1. 1173 թ. Նարեկի անվանաթերթը
Նկարիչ Գրիգոր Մլիճեցի (Երևան, ձեռ. № 1568, էջ 8ա):

վրա: Կոմպոզիցիայի տեսակետից հոյակապ է լուծված ներքևի մասում կիսաշրջանի մեջ զետեղված արագիլ հոշոտող արծիվը: Հայկական զարդարվեստին բնորոշ կենսազմային և քառանկյունավոր զարդերը ծածկում են քառանկյան մնացած տարածությունը: Չնուազիցը ճոխացնում են նաև զեղեցիկ լուսանցազարդերը և գլխազարդերը: Իրենց նրբությունը ավելի աչքի են ընկնում անվանաթերթերը (նկ. 1,2): Էջը զարդարող առանձին էլեմենտների կազմակերպման մեջ նկարիչը հանդես է բերում արտակարգ ճաշակ և զեղարվեստական հյուսվածքի նուրբ զգացողություն:

Վերին մասում զետեղված «Ս»-ի նման գլխազարդերը, հրաշալի գլխա-

տառերը¹ և լուսանցազարդերը փորրիկ էջի մակերևույթի վրա դասավորված են խիստ հարմունիկ ձևով: Էջի ձևավորման բոլոր էլեմենտները ի մի առած կազմում են կոմպոզիցիոն հոյակապ մի ամբողջություն: Տպավորությունն ուժեղանում է գունաչին նրբին դամմաչով, որը կազմվում է սուկյա ֆունի վրա մուգ կանաչ, կապույտ, բաց մանիշակագույն, կարմիր ներկերի երանդներից: Հայ-



Նկ. 2. 1173 թ. Նարեկի անվանաթերթը:
Նկարիչ Գրիգոր Մլիճեցի (Երևան, ձև. № 1568, էջ 56):

կական մանրանկարչությանը բնորոշ եռատերևները և կիսարմախները, կեռագծային զարդերի հեռ գուգակցված, կազմում են ձևագիրը զարդարող զարդապատկերների հիմնական մոտիվները: Նուրբ և զեղեցիկ գծանկարով, միանգամայն բնական ձևերով, գույների ակնհաճ համադրություններով նրանք՝ ստեղ-

¹ Հատկապես ուշադրության արժանի է Տա էջի զլխատառը (նկ. 1), որը ներկայացնում է արագի՛ կոտրվ ձուկ բռնած, նրա պոչը վերջանում է խաչը բռնած մարդու ձևերով: Այս հաղվագյուտ մոտիվ է հայ մանրանկարչության մեջ: Օդտագործվել է խաչքարերի զարդաքանդակներում: Բջնիում գտնվող մի ամբողջ խումբ խաչքարերի վրա քանդակված կենտրոնական խաչերի ներքևի մասը վերջանում է նման երկու ձևերերով, որոնք բռնել են ավելի փոքր խաչեր:

ծում են հայկական մանրանկարչության մեջ մինչ այդ շահնդիպող մի նոր որակ: Նարեկի անվանաթերթերի և գլխատառերի ծաղկադարձումը աչքի է ընկնում ոչ միայն դարդապատկերների ճոխությունը, այլև կատարման բարձր տեխնիկայով:


1173 թ. Նարեկի ձեռագրման պատմական խոշոր արժեք ներկայացնող մասը՝ Գրիգոր Նարեկացու շորս դիմանկարներն են: Այդ դիմանկարները արժանի են հատուկ ուշադրության, դրանցով ուսումնասիրվող ձեռագիրը դառնում է նշանակալից երևույթ ամբողջ հայկական մանրանկարչության պատմության մեջ¹:

Առաջին դիմանկարը (նկ. 3) Նարեկացուն ներկայացնում է որպես փիլիսոփա: Նա նստած է բարձր թիկնոց ունեցող բազմոցի վրա, ձեռքին ունի մատյան: Այս մանրանկարը իր կոմպոզիցիայով (հորինվածքով) ամբողջապես հիշեցնում է հատկապես բյուզանդական պատկերագրության (ИКОНОГРАФИЯ) մեջ սովորական դարձած նստած ավետարանիչների պատկերները (ինչպես հայտնի է պատկերագրության մեջ ավետարանիչները սովորաբար նույնացվել են անտիկ փիլիսոփաներին): Երկրորդ մանրանկարում (նկ. 4) Նարեկացին կանգնած է կանաչազարդ դաշտում, ձեռքերը մեկնել է դեպի Քրիստոսը՝ ազոթողի դիրքով: Վերջինս պատկերված է վերևի աջ անկյունում և օրհնում է Գրիգորին: Երկու մանրանկարներումն էլ Նարեկացին հագած է սև թիկնոց, տակից մուգ շագանակագույն երկար շապիկ, դեմքը նկարված է ընդհանուր կանաչավուն երանգներով: Մանրանկարները ամփոփված են նուրբ ծաղկազարդված շրջանակների մեջ: Գույների ընդհանուր մասշտաբնը երկու մանրանկարներում էլ ստեղծում է համապատասխան տրամադրություն: Երանով մանրանկարիչն ասես ցանկացել է ընդգծել Գրիգոր Նարեկացու մենակության ողբերգությունը, որով և հագեցած է ողջ «Ողբերգության մատյանը»:

Երրորդ մանրանկարում (նկ. 5) Գրիգոր Նարեկացին պատկերված է որպես սուրբ-ձգնավոր: Այստեղ նույնպես նա կանգնած է հասակով մեկ դեմքով դեպի դիտողը: Նարեկացու պատկերը ամփոփված է մի կամարի տակ, որը հենված է կիլիկյան մանրանկարչությանը բնորոշ խոյակներ ունեցող բարակ սյուների վրա: Նման կամարները բնորոշ են ավելի վաղ շրջանի հայկական ձեռագրերում պատկերված ավետարանիչների դիմանկարներին²: Աջ ձեռքին Նարեկացին բռնած ունի ոսկեղօծ մի գիրք (անշուշտ «Մատեան»-ը), ձախում խաչ: Ուսերից սիմվոլի ծալքերով, ցած է իջնում բաց վարդագույն թիկնոցը, սրի տակից երևում է երկնագույն շապիկը: Նարեկացու հանդիսակաց և անշարժ գիրքը, նրա արտասովոր հանդիսավոր տեսքը, դունային պայծա

¹ Ն. Սվիրինը իր «Миниатюра древней Армении» աշխատության մեջ (М—Л, 1939, էջ 49, 54) կիլիկյան մանրանկարչության պատմությունը սկսում է 1173 թ. Նարեկով: Հիմնականում ճիշտ գնահատական տալով ինչպես ձեռագրի մանրանկարներին, այնպես էլ նրանց պատմական նշանակությանը, հեղինակն իր եզրակացությունները հիմնավորում է միայն անվանաթերթերի գորդապատկերներով: Անհասկանալի պատճառներով նա չի խոսում Նարեկացու դիմանկարների մասին, որոնք սեր կարծիքով կարևոր տեղ են զբաղում հայկական մանրանկարչական արվեստի պատմության մեջ: Անհրաժեշտ են համարում նշել նաև, որ մյուս ուսումնասիրողները նույնպես (հատկապես Գ. Հովսեփյանը), ուշադրություն չեն դարձրել այս դիմանկարների վրա (տե՛ս Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, Նյու-Յորք, 1943, պրակ Բ., էջ 16—17):

² Հմմտ. Պետ. Մատենադարանի № 7737 ձեռագիրը և Տյուրինդենի համալսարանի 1113 թվականի ձեռագիրը (M. A. XIII, 1):



Նկ. 3. 1173 թ.: Գրիգոր Նարեկացի փելիստիա (ձեռ. № 1568),
Նկարիչ՝ Գրիգոր Մլինեցի:

յամման (սպիտակ, բաց երկնագույն, բաց վարդագույն և դեղին), ի տարբերություն նախորդ դիմանկարների, ստեղծում են յուրահատուկ հանդիսավոր տրամադրություն: Չնայած մանրանկարի վրա եղած մակագրության—«Սուրբն Գրիգոր ճգնաւոր», այնուամենայնիվ, ամբողջ կերպարի մեջ ճգնավորին բնորոշ քիչ բան կա:

Վերջապես վերջին մանրանկարը (նկ. 6) պատկերում է գահի վրա բազմած Հիսուս Քրիստոսին, որ հանդիսավորությամբ օրհնում է իր առջև գետնատարած Գրիգոր Նարեկացուն:

Առաջին երկու և չորրորդ դիմանկարներին անմիջապես հաջորդող հարակից էջերը զարդարված են ճոխ գլխազարդերով, լուսանցազարդերով և գլխատառերով: Այդ էջերի նոր հատվածի սկիզբ հանդիսացող առաջին տողերը (բան. Ա, ԺԸ, ՄԳ) գրված են սսկով: Պետք է ենթադրել, որ ծաղկազարդված էջերը դիմանկարների հետ մեկտեղ ձեռագրում տեղավորված են միտումնավոր կերպով: Հավանաբար ձեռագրի պատրաստողները (ստացողը, մանրանկարիչը և գրիչը) ընդգծելով երկի որոշ հատվածները, փորձել են «Ողբերգության մատյանը» առանձին գլուխների բաժանել: Երրորդ դիմանկարը («Սուրբ Գրիգոր ճգնաւոր») մյուսներից տարբերվում է բացի վերը նկարագրված առանձնահատկություններից նաև նրանով, որ նախորդող հարակից ամբողջ թերթի վրա ուրիշի ձեռքով գրված է Գրիգոր Նարեկացու կենսագրությունը, իսկ անմիջապես հաջորդող տեքստը (բան. ԼԴ), ի տարբերություն մյուսների, շունի գլխազարդ:

* * *

Հանրահայտ է, որ դիմանկարները նորություն չեն հայ մանրանկարչություն մեջ: Մեր ձեռագրերից շատերի մեջ կան ձեռագրերի պատվիրատուների, իսկ երբեմն նաև գրիչների ու մանրանկարիչների դիմանկարներ: Այս դեպքում ծաղկողի նպատակն է եղել հավերժացնել պատվիրատուի, գրչի կամ իր (ծաղկողի) հիշատակը: Ուսումնասիրվող դիմանկարներում, թերևս առաջին անգամ հայ մանրանկարչական արվեստի պատմության մեջ, մենք հանդիպում ենք մի այնպիսի երևույթի, երբ նկարիչը փորձում է լուծել պատկերագրության հետ կապ չունեցող խնդիրներ: Ուշագրության արժանի է նաև այն, որ միջնագարում հայ աշխարհիկ բովանդակություն ունեցող ձեռագրերը սակավաթիվ դեպքերում էին միայն ծաղկազարդվում: Ուստի սխալված չենք լինի, եթե ասենք, որ այս առումով 1173 թ. Նարեկը հայ մանրանկարչության պատմության մեջ մի ուշագրավ երևույթ է:

Գրիգոր Նարեկացին միջնագարյան հայ պոեզիայի խոշորագույն գեմքերից մեկը, մի կողմից մնալով միջնագարյան միստիկական աշխարհայացքի շրջանակներում, մյուս կողմից հանդիսացավ մեր աշխարհիկ պոեզիայի հիմնադիրը: Դրանով նա նոր դարադուլիս բացեց հայ գրականության պատմության մեջ: Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների մեջ կրոնական անհատապաշտության և միստիցիզմի հետ մեկտեղ երևան են եկել նաև աշխարհիկ և համամարդկային զգացմունքներ: Խորը, սուբյեկտիվ զգացումներով հագեցված «Ողբերգության մատյանի» մեջ արտացոլվել է սեռալ մարդը, իր ներքին բարդ ապրումներով: Այս բոլորը հիմք է տալիս հայ գրականության որոշ պատմա-

բանների նարեկացու պոեզիայում տեսնել արևմտա-եվրոպական վերածնունդը կանխող մի շարք մոմենտներ¹:

Հայտնի է, որ հետազայում «Ողբերգության մատյանը» դիտվել է սոսկ որպես երկյուղած աղոթքների մի ժողովածու, իսկ ինքը՝ Գրիգոր Նարեկացին՝ դասվել է սրբերի շարքը: Փաստերը ցույց են տալիս, սակայն, որ մասնավորապես Կիլիկիայում «Ողբերգության մատյանը» տարածված է եղել ոչ որպես այդպիսի երկ, այլ դիտվել է որպես աշխարհիկ բովանդակություն ունեցող գեղարվեստական-փիլիսոփայական մի աշխատություն: Ընդհանրապես 12-րդ դարի ընթացքում Կիլիկիայում մեծ հետաքրքրություն է առաջացել դեպի Գրիգոր Նարեկացին: Նրա «Մատյանի» մասին գրվում են հատուկ մեկնություններ, իսկ հեղինակի մասին կենսագրականներ (Ներսես Լամբրոնացի և Գրիգոր Սկևռացի):

Այս բոլորը վկայում է այն մասին, որ ժամանակի ըմբռնմամբ Նարեկացու մեջ մարմնացել են խոշոր մտածողի, աստվածաբանի և խոշորագույն բանաստեղծի բոլոր հատկությունները: Ստեղծվել է հավաքական մի կերպար, որը և հետագայում դասվել է սրբերի շարքը: Ահա այս նույն սկզբունքներով է առաջնորդվել մանրանկարիչ Գրիգոր Մլիճեցին՝ Գրիգոր Նարեկացուն պատկերելիս:

Իր առջև դրված խնդրի բարդությունը (այն է՝ մանրանկարչությանը հատուկ սահմանափակումների շրջանակներում պատկերել մի այդպիսի քարոհերպար) նկարչին հարկադրել է ստեղծագործական խնդրի լուծման նոր ձևեր որոնել: Եվ ահա, մեկ սինթետիկ դիմանկարի փոխարեն նկարիչը ստեղծել է շորս ինքնուրույն պատկերներ, որոնցից յուրաքանչյուրը առանձին վերցրած արտահայտում է Նարեկացու բնորոշ կողմերից մեկը: Իր նպատակին հասնելու համար մաճրանկարիչը դիմել է նաև պարզաբանող մակագրությունների կիրառմանը: Այսպես, օրինակ՝ առաջին մանրանկարի վրա մակագրված է՝ «Գրիգոր փիլիսոփա», երկրորդի վրա՝ «Գրիգոր հսկող», այսինքն աղոթող, մեղքերին թողություն խնդրող², երրորդն ունի «Սուրբ Գրիգոր ճգնաւոր» մակագրությունը: Ինչպես վերը նշեցինք, այս մանրանկարում շնայած Նարեկացին ներկայացված է որպես ճգնավոր, սակայն նրա ողջ կերպարի մեջ քիչ բան կա ճգնավորին հատուկ: Վերջին պատկերի վրա եղած մակագրությունը, բացի «Յս քս» բառերից, ջնջվել է ու դարձել անընթեռնելի:

Ակամայից միտք է ծագում. պատահական է արդյոք դիմանկարների նման դասավորությունը: Արդյոք այստեղ չի՞ արտահայտվել Նարեկացու այն հիմնական գաղափարը, որ կարմիր թելի նման անցնում է «Ողբերգության մատյանի» միջոցով:

Այս կասկածից միայն ուշադրավ է «Ողբերգության մատյանի» ՀԲ բանի այն հատվածը, որտեղ բանաստեղծը թվարկում է իրեն վերագրված կոչումները. «Պես վաճից կոչեցայ՝ յանձինս դատախազ ուրբի ուրբի անուանեցայ, և զգովեսան առ Աստուած եղծի. բարի ասացայ առ եղկութեանն ժառանգութիւն. սուրբ վկայեցայ ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի Աստուծոյ արդար դատանեցայ ամենաքն իրօք ամբարիշտս. հեշտացայ ի գովեստ մարդկան, դի ծաղր եղէց յատենին Քրիստոսի, յաւազանէ կոչեցայ արքուն, և ես ի

¹ Մ. Ա. ր. և դ. յ. ան, Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1943, հատ. 2; Մ. Մ. կ. ր. յ. ան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1950:

² ՏԵՄ հ. Ա. հ. ա. յ. ան, Անձնանունների բառարան, հատ. 1, էջ 519 և շարունակությունը:



Նկ. 4. 1173 թ. Նարեկ Գրիգոր Նարեկացին հանդ (Մատ. ձեռ.
N 1568); Նկարիչ՝ Գրիգոր Մլիճեցի

բուն մահու ննջեցի. ի փրկութեանն աւուր հսկող յորչորջեցայ, բայց զգաստութեանն աչս կափուցի»¹:

Այսպիսով, նկարչի կողմից պատկերված կերպարների բացատրությունը առաջին հերթին մենք գտնում ենք իրեն իսկ Գրիգոր Նարեկացու մոտ:

Հավանաբար Նարեկացու դիմանկարները պատկերելիս, նրա էությունը քմբռնելու գործում, նկարչին մեծ օգնություն է ցույց տվել Ներսես Լամբրոնացին: Անհավանական չէ նաև, որ պատկերների դասավորության և առանձին կերպարների բաժանման գաղափարը նույնպես պատկանել է Լամբրոնացուն:

Որքանով էլ վերը հայտնված կարծիքները թեական լինեն, այնուամենայնիվ, հանձնես աչս շորս դիմանկարների մեր առջև առկա է մի հետաքրքիր երևույթ, որի նախորդը չի եղել հայկական մանրանկարչության մեջ: Աչքի առաջ ունենալով այն իրողությունը, որ հայ միջնադարյան արվեստը, տվյալ դեպքում մանրանկարչությունը, մինչ այդ երբեք այդպես համարձակ կերպով չէր փորձել դուրս գալ կղերա-եկեղեցական աշխարհայեցողությունից ու պատկերադրությանը բնորոշ սահմանափակություններից, մենք կարող ենք ճիշտ գնահատել մանրանկարիչ Գրիգորի գործի նորարարության նշանակությունը: Մինչ այդ մանրանկարչությունն իր առջև նպատակ է ունեցել կրոնական աշխարհայացքի տարածումը: Մինչդեռ մանրանկարիչ Գրիգորը փորձում է նորություն մտցնել առաջին հերթին թեմայի մեջ, իր ստեղծագործության առանցքը դարձնելով անհատ մարդուն: Այլ պարագայում նշված երևույթը թերևս կարող էր հիմք դառնալ մի մեծ առաջընթացի, որը խոշոր նշանակություն կունենար հայկական միջնադարյան արվեստի պատմության մեջ: Սակայն Գրիգորը հանդես է գալիս պատմական ախպիսի մի ժամանակաշրջանում, երբ անհրաժեշտ նախադրյալներ չկային արվեստի նման զարգացման համար: Բացի այդ, կիրիկյան մանրանկարչության արվեստն այդ ժամանակ դեռ գտնվում էր ձևավորման ընթացքի մեջ՝ բուն Հայաստանի հնավանդ ձևերից դեպի կիրիկյան մանրանկարչության նոր ոճին անցնելու շրջանում: Այս բոլորից էլ հետևում են այն հակասությունները, որ դրություն ունեն նկարչի մտահղացման և արտահայտչական ձևերի ու կարողությունների միջև: Այս բնագավառում նա շարունակում է մնալ միջնադարյան մանրանկարչության բնորոշ սահմանափակումների շրջանակներում: Նոր բովանդակություն հաղորդելու համար մանրանկարիչը չի դաել արտահայտչական նոր ձևեր:

* * *

Կիրիկյան մանրանկարչական գալրոցների մեջ (Դրազարկ, Հոռմկա, Ակնեք, Գոնեք և այլն) Սկևռան ունի իր առանձնահատուկ նշանակությունը և պատմական տեղը:

12-րդ դարի առաջին քառորդում Դրազարկի գրչատներում զարդարված գրքերի մանրանկարչության մեջ գեուև գերիշխում էին բուն Հայաստանից փոխառնված հնավանդ ձևերը (տե՛ս Տյուրինգենի համալսարանի գրադարանում պահվող 1113 թվականի Ավետարանը², Երևանի Պետ. Մատենադարանի

¹ Գ. Ն ա ռ ե կ ա ջ ի, Մատենադարանի պատմություն, Երուսաղեմ, 1868, էջ 284: (Ընդգծումները մերն են—Լ. Ա.):

² Ուսումնասիրել է Ի. Սարժիգովսկին, տե՛ս Kleinarmenische Miniaturenmalerei. Die Miniaturen des Tübinger Evangeliers, MA XIII, 1, vom J. 1113, bezw. 893 n. chr., Tübingen, 1907.


№ 7737 Ավետարանը¹ և այլն): Գրազարկի մանրանկարչական դպրոցում շքատեղծվեց նոր և ինքնուրույն ոճ, սակայն այդ դպրոցի հուշարձանները սրպես կիլիկյան մանրանկարչության զարգացման առաջին էտապի գործեր՝ հիմք հանդիսացան 12-րդ դարի վերջին քառորդի կիլիկյան մանրանկարչության համար: Սկեռայի և Մլիճի գրչաաններում ձևավորված գրքի պատկերազարդման արվեստը հաջորդ շրջանն էր, երբ մշակվեցին կիլիկյան մանրանկարչության ինքնուրույն ոճի հիմնական առանձնահատկությունները: Հենց սա է Սկեռայի դպրոցի պատմական նշանակությունը: Այս երկրորդ շրջանի նվաճումների հիման վրա միայն հնարավոր դարձավ այն բարձր վերելքը, որ ապրեց կիլիկյան մանրանկարչական արվեստը 13-րդ դարի երկրորդ հիսնամյակում:

Ինչպես վերը արդեն նշված որոշ փաստերը, այնպես էլ 1166 թվականին Հոռոմկլայում գրված և պատկերազարդված Ավետարանը (Պետ. Մատենադարան № 7347) ցույց են տալիս, որ այս շրջանում Սկեռայում և Հոռոմկլայում ստեղծված մանրանկարչական հուշարձանները իրենց ոճական առանձնահատկություններով շատ մոտ են իրար: Նյութերի բացակայությունը հնարավորություն չի տալիս լայն կերպով լուսարանել այս երկու մանրանկարչական դպրոցների փոխհարաբերությունները: Սակայն սլարդ է, որ 12-րդ դարի երկրորդ կեսում Սկեռան և Հոռոմկլան սերտորեն կապված են եղել իրար հետ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանը, ինչպես ասացինք, բուն Հայաստանից ժողովրդածախնայական ոճից մանրանկարչության նոր ոճի անցման շրջանն է: Այդ առումով բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում ինչպես Գրիգոր Մլիճեցու պատկերազարդած 1173 թվականի Նարեկը, այնպես էլ Հոռոմկլայում գրված 1166 թվականի Ավետարանը: Այս երկու ձեռագրերի մանրանկարները որոշակի պատկերացում են տալիս այս անցման շրջանի ոճական առանձնահատկությունների մասին: Հնավանդ ձևերը հանդես են գալիս գլխավորապես մարդկային կերպարներ պատկերելիս (նկ. 3—7): Նստած ավետարանիչների և Նարեկացու անշարժ դիրքը, շոր և համեմատաբար կոպիտ մեկնարանված հագուստի ծալքերը, որոնց մեջ կորչում են մարմնի առանձին մասերը, նրանց դարձնում են անկենդան և զրկում ծավալայնությունից: Ընդհանուր ոսկյա ֆոնը միջավայրը դարձնում է անորոշ, իսկ կոմպոզիցիան զրկում է խորությունից ու տարածականությունից: Այս բոլոր առանձնահատկությունները ցույց են տալիս, որ մանրանկարիչը դեռևս գտնվում է ավելի վաղ շրջանին բնորոշ սովորույթների ազդեցության տակ, մի հանգամանք, որը զրկում է Գրիգոր Նարեկացու շորս դիմանկարները դիտել սրպես կիլիկյան վաղ շրջանի ձեռագրերի և 12-րդ դարի վերջում ձևակերպվող նոր ոճի միջև ընկած անցման շրջանի գործեր:

Կիլիկյան մանրանկարչական նոր ոճը ավելի ցայտուն հանդես է գալիս ինչպես 1173 թվականի Նարեկի զարգապատկերներում (գլխազարդերի, լուսանցազարդերի, գլխատառերի և հատկապես անվանաթերթերի և խորանների ծաղկազարդման ժամանակ—նկ. 1,2), այնպես էլ մի շարք այլ ձեռագրերի ձևավորման ժամանակ, որոնք գրված և պատկերազարդված են Գրիգոր Մլիճեցու Նարեկից մոտ 2 տասնամյակ հետո: Հարկ է նշել, որ Նարեկի զարգանկարներում, ի տարբերություն նույն ձեռագրում եղած Գրիգոր Նարեկացու դիմանկարների, արդեն ոչինչ չի մնացել 10—11-րդ դարի և 12-րդ դարի սկզբը-

¹ ՏՄ՝ Ա. А. Дурнова, Древнеармянская миниатюра, Ереван, 1952, таб. 24, 25.



Նկ. 5. 1173 թ. Գրիգոր Նարեկացի սուրբ-նշանավոր (ձեռ. № 1568).
Նկարիչ՝ Գրիգոր Մխիթարյան:





Նկ. 6. 1173 թ. Նարեկ Գրիգոր Նարեկացին և Քրիստոսը
(ձեռ. N 1568): Նկարիչ՝ Գրիգոր Մլիճեցի

ների հայկական ձևադրերին բնորոշ մոնումենտալությունից: Յավոք, մենք ոչինչ չենք կարող ասել ժամանակագրական տեսակետից 1173 թ. նարեկին շատ մոտ կանգնած և Գրիգոր Մլիճեցու ձևաքով ծաղկազարդված մյուս երկու ձևադրերի գեղարվեստական ձևավորման մասին (ինչպես արդեն նշել ենք):



Նկ. 7. 1166 թ. Ավետարանից, Ղուկաս ավետարանիչ
(Նրեան, ձև. № 7347, էջ 164ր):

դրանցից 1173 թ. Ավետարանը, մինչև առաջին համաշխարհային պատերազմը գտնվում էր Տիգրանակերտի ս. Կիրչակոս եկեղեցում, իսկ 1174 թ. Ավետարանը՝ Քոխատի սուրբ Երրորդություն եկեղեցում):

12-րդ դարի երկրորդ հիսնամյակի Կիլիկիայում գրքի գեղարվեստական ձևավորման ոճը բնութագրելու համար մենք ունենք երեք ձևազիր, որոնք գրվել և պատկերազարդվել են Սիևաչի և Մլիճի գրչատներում: Դրանք են՝ Բալ-

Յիմորի Ավետարանը 1193 թվականից (Բալթիմոր Վալտերի հավաքածու № 532, առաջ պահվել է Ն. Նախիջևանում)¹, Վենետիկի Մխիթարյանների մոտ պահվող Ավետարանը 1193 թվականից (№ 1635)², և այսպես կոչված Լվովի Ավետարանը 1197 թվականից³: Այս երեք ձեռագրերի մանրանկարները արտահայտում են 12-րդ դարի կիլիկյան մանրանկարչության արդեն ձևակերպված ոճը, որը բավական սրբազորոշ հանդես էր եկել դեռևս 1173 թվականի Նարեկի զարդաստեղերներով:

Այս ձեռագրերից առաջինը՝ Բալթիմորի Ավետարանը, գրվել և պատկերազարդվել է Կարախնո (Կարեն) բերդի մոտ գտնվող Պողոսական վանքում: Գրչի և ծաղկողի անունները հայտնի չեն: Զեռագրի գրչության վայրը կարելի է վիճելի համարել, քանի որ Կարախնո բերդի և Պողոսական վանքի ճիշտ տեղը նույնպես հայտնի չէ: Ս. Տեր-Ներսիսյանը նշում է Մլիճի գավառը, սակայն հիշատակարանում ակնարկվում է, որ ձեռագիրն ստացող եպիսկոպոս Կարապետը ապրում էր կաթողիկոս Գրիգորի մոտ, իսկ, ինչպես հայտնի է, վերջինիս աթոռանիստ վայրը Հոտմկլան էր: Այսպիսով, հնարավոր է, որ ձեռագիրը գրված լինի Հոտմկլայի մոտակայքում: Բալթիմորի Ավետարանն ունի ճոխ զարդարված խորաններ, գլխազարդեր և լուսանցազարդեր: Ս. Տեր-Ներսիսյանի վկայությամբ այդ զարդանկարներում գերիշխում են պարզ երկրաչափական մոտիվները, իսկ գունային գամման հիշեցնում է 1173 թ. ձեռագիրը: Թեպետ Բալթիմորի և Վենետիկի ձեռագրերը գրվել են նույն թվականին (1193) և նրանց մանրանկարներում կան ընդհանուր շատ դժեր, սակայն մի շարք դեպքերում նրանք տարբերվում են իրարից: Նոր ոճը ավելի պարզորոշ կարելի է դիտել Վենետիկի 1193 թ. և Լվովի 1197 թ. Ավետարաններում, որոնք և հանդիսանում են այս շրջանի հիմնական և բնորոշ հուշարձանները:

Վենետիկի 1193 թվականի Ավետարանը գրվել և ծաղկազարդվել է Ներսես Լամբրոնացու և նրա եղբայր Հեթումի համար, Սկևռայում, Կոստանդինի ձեռքով: Այս ձեռագիրը զարդարված է խորաններով, գլխազարդերով, լուսանցազարդերով և երկու տերունական պատկերներով («Մկրտություն» և «Խաչելություն»), որոնք առաջին անգամն են հանդիպում կիլիկյան մանրանկարչության մեջ:

Լվովի 1197 թ. Ավետարանը գրված և պատկերազարդված է մեզ արդեն ծանոթ Գրիգոր Մլիճեցու ձեռքով: Բացի հարուստ խորաններից, գլխազարդերից և լուսանցազարդերից, ի տարբերություն Վենետիկի, ձեռագիրն ունի նաև չորս ավետարանիչների դիմանկարներ: Ուշադրության արժանի է Մատթեոսի Ավետարանի անվանաթերթը, որտեղ փոքր քոչորակների մեջ պատկերված են Հիսուսը, Գավթիթը, Աբրահամը, Իսահակը և Հակոբը (Քրիստոսի տոհմաբա-

¹ S. Der-Nersessian, նշված աշխատությունը, էջ 51, նույն հեղինակի «Armenia and the Byzantine Empire» Harvard, 1947, 121—122, Գ. Հ ո ղ ո ս և Գ յ ա ն, Յիշատակարանը, էջ 565—570 և ուրիշներ:

² 1193 թ. Վենետիկի ձեռագիրը մանրամասն ուսումնասիրել է Ս. Տեր-Ներսիսյանը, տե՛ս «Manuscripts Arméniens illustrés», էջ 50—86 պատ. XVI—XXXIII, նաև Հ. Բ. Ս ա ռ գ ո ս յ ա ն, Մայր ցուցակ, հատ. 1, էջ 549—560:

³ «Հանդես ամսօրեայ», 1930, էջ 95—112 և 210—236, ն. Ակինյանի «Սկևռայի Ավետարանը» հոդվածը: «Revue des Etudes Arméniennes», VII fig. 1—4: Զեռագիրը մինչև 1930 թ. գտնվել է Լվովի հայկական եկեմեցուսի:

նությունը)¹: Գրիգորը ձեռագրի պատկերազարդումը սկսել է Մլիճի վանքում և ավարտել Սկևռայում:

Այս երկու ձեռագրերը ոճական իմաստով շատ մոտ են իրար և ունեն մի ընդհանուր սկզբնաղբյուր: Ընդհանրությունը արտահայտվում է ինչպես կատարման ոճի, այնպես էլ մի շարք զարդապատկերների բնագավառում, որոնք իրենց սկզբունքներով կապվում են բուն Հայաստանի ավանդների հետ:

Անհրաժեշտ է նշել, որ 11-րդ դարում գրված մի շարք ձեռագրեր, որոնք պատկերազարդված են եղել Կիլիկիայից դուրս, խոշոր նշանակություն են ունեցել ինչպես վերը հիշատակված ձեռագրերի ծաղկազարդման, այնպես էլ ընդհանրապես կիլիկյան մանրանկարչության ձևավորման գործում: Դրանք են, այսպես կոչված, Կարսի Ավետարանը (Երուսաղեմ, № 2556)², Տրապիզոնի Ավետարանը (Վենետիկ, № 1400) և, հատկապես, Սերաստիայի Ավետարանը (Երևան, Մատենադարան, № 311): Այս ձեռագրի մանրանկարներում և զարդապատկերներում առաջին անգամ հանդիպում ենք մի շարք այնպիսի մոտիվների, որոնք հետագայում բնորոշ են դառնում կիլիկյան ձեռագրերի համար: Այսպես, օրինակ՝ Վենետիկի և Լվովի ձեռագրերի համար բնորոշ դույզ թռչուններից կազմված խոյակները առաջին անգամ հանդիպում են Կարսի Ավետարանում³: Նման խոյակներ կան նաև 1166 թ. Ավետարանում (Երևան, Մատենադարան, № 7347, նկ. 8): Այս տիպի խոյակները հետագայում սովորական են դառնում ընդհանրապես կիլիկյան մանրանկարչության համար: Կարելի է նշել նաև խորանների կողքից բարձրացող ոճավորված ծառերը, որոնք Ս. Տեր-Ներսիսյանի կարծիքով, Կարսի և Տրապիզոնի ձեռագրերում հանդիպող խորանների երկու կողքերին տեղավորված ականտի մեծ տերևների հետագա զարդացման արդյունք են⁴:

Վերը նշված ձեռագրերից 12-րդ դարի վերջի կիլիկյան մանրանկարչության ձևավորման համար ամենանշանակալիցը հանդիսանում է Սերաստիայում գրված 1066 թվականի Ավետարանը (Երևան, Մատենադարան, № 311)⁵, որը պատկերազարդել է մանրանկարիչ Գրիգոր Ակոռեցին: Այս ձեռագիրը անշուշտ հայանի է եղել ինչպես Սկևռայում և Մլիճում, այնպես էլ Հոռմկլայում աշխատող մանրանկարիչներին: 1193—94 թվականներին գրված հիշատակադրությունից իմանում ենք, որ 12-րդ դարի հիսնական թվականներից հետո ձեռագիրը ընկել է Կիլիկիա, դառնալով նախ Ներսես Ծնորհալու, ապա Լամբրոնի և Պապեոնի տեր Բակուր Սևաստիանոսի սեփականությունը:

Մանրանկարիչ Գրիգոր Մլիճեցին Սերաստիայի ձեռագրի հետ կարող էր ծանոթ լինել դեռ 1173—74 թթ., երբ աշխատում էր Հոռմկլայում, պատկերազարդելով Ներսես Ծնորհալու համար Տիգրանակերտի Ավետարանը: Նույն ձևով էլ այդ ձեռագրի հետ կարող էր ծանոթանալ նաև Կոստանդինը: Հետաքրքիր է, որ Տիգրանակերտի ձեռագրի մեզ հայտնի միակ մանրանկարը (Մարկոսի ավետարանի անվանաթերթը)⁶, շատ բանով հիշեցնում է Սերաստիայի Ավետարանի համապատասխան մանրանկարները: Վենետիկի և Լվովի ձեռա-

¹ Ն. Ա. Կիլիկյան, նշված աշխատությունը, էջ 98:

² Մանրանկարները տե՛ս A. Tchobanian, La Roseraie d'Arménie, Paris, 1929, III


³ Տե՛ս նույն տեղում, էջ 104; S. Der-Nersessian, Manuscrits Arméniens illustrés, pl. XIX. Ն. Ա. Կիլիկյան, նշված աշխատությունը, պատ. 2.

⁴ S. Der-Nersessian, Armenia and the Byzantine Empire, էջ 123—124.

⁵ Տե՛ս Գ. Հովսեփյան, Նախնայաց հիշատակներ, «Արարատ», 1910:

⁶ Տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանը, էջ 455, պատկ. 28:

գրերի անվանաթերթերը սնվիճելի աղացույցներ կարող են ծառայել մեր այն մտքին, որ Սեբաստիայի Ավետարանը այդ երկու ձեռագրերի համար հանդիսացել է որպես սկզբնաղբյուր: Այսպես, օրինակ՝ ուսումնասիրվող ձեռագրերի գլխատառերը իրենցից ներկայացնում են ավետարանիչների խորհրդանիշները:



Նկ. 8. 1166 թ. Ավետարան, խորան (Երևան, ձև. № 7347, էջ 5բ):

Մարկոսի Ավետարանը սկսվում է «Ս» տառով: Սեբաստիայի ձեռագրում այն պատկերված է որպես թևավոր մի առյուծ (նկ. 9, Մարկոսի խորհրդանիշը), որի մեջքին կանգնած է պատանի Քրիստոսը (էմանուէլ) այս գլխատառը նույնությամբ կրկնված է Լվովի Ավետարանում (նկ. 10), իսկ վենետիկի ձեռագրում թեպես և բացակայում է Քրիստոսի ֆիգուրան, իսկ առյուծը պատկերված է որոշ ձևափոխումներով, պարզ է սակայն, որ այն նույնպես արտանկարված է Սեբաստիայի ձեռագրից¹: Նույնը կարելի է ասել նաև մյուս գլխա-

¹ Տե՛ս S. Der-Nersisian, *Manuscrits Arméniens illustrés*, pl. XXVII.

տառերի մասին: Գծրախառքար Սեբաստիայի ձեռագրում պահպանված է միայն երկու անվանաթերթ. սակայն «Բ» տառի համարյա նույն ձևի կրրկնությունը Լվովի, Վենետիկի¹ և Մատենադարանի 1166 թվականի ձեռագրում (նկ. 11) վկայում են այն մասին, որ դրանք ունեցել են մի ընդհանուր նա-



Նկ. 9. 1066 թ. Մարկոսի ավետարանի սկիզբը.
Նկարիչ Գրգոր Ակոսեչի (Երևան, ձեռ. № 311, էջ 83ա):

խատիպ: Վենետիկի ձեռագրի խորաններից մեկի քառանկյան վերևում պատկերված սիրամարդկերը, նույնպես հիշեցնում են Սեբաստիայի ձեռագիրը: Սեբաստիայի ձեռագրի գլխազարդերի հիմնական զարդապատկեր կազմող եր-

¹ Համեմատիր S. Der-Nersessian, նույն տեղում, pl. XXIX, Ա. կ ի ն յ ա ն, նշված աշխատությունը, պա. 11:

կարապոչ և երկարավիզ թռչունները (նկ. 12), որոնք միահյուսվում են բուսական մոտիվների հետ, կրկնված են նաև Վենետիկի ձեռագրում¹:

Օրինակները կարելի է բազմացնել, ապացուցելու համար, որ Կոստանդին և Գրիգոր Մլիճեցի մանրանկարիչները ծանոթ են եղել Սերաստիայի Ավետարանին:



Նկ. 10. 1197 թ. Լվովի Ավետարանի՝ Մարկոսի ավետարանի սկիզբը.
Նկարիչ՝ Գրիգոր Մլիճեցի:

րանին և շատ բան են փոխ տանել այդ ձեռագրից: Սակայն չպետք է շփոթանալ Սերաստիայի Ավետարանի դերը 12-րդ դարի երկրորդ կեսի կիրիկյան մանրանկարչության ձևավորման ասպարեզում: Պետք է նկատի ունենալ մի հանգամանք ևս, որ Վենետիկի և Լվովի ձեռագրերը այդ բոլոր ընդհանուր գծերի հետ մեկտեղ զգալիորեն տարբերվում են Սերաստիայի Ավետարանից: Գրիգորի և Կոստանդինի ստեղծագործության հիմնական ակունքները վերջիվերջո մնում են ինչպես բուն Հայաստանից փոխ առնված ավանդները, այնպես էլ այն սկզբունքները, որոնք մշակվել են Կիրիկիայում 12-րդ դարի առաջին քառորդում: Լվովի 1197 թ. ձեռագրում Գրիգոր Մլիճեցու կողմից նկարված ավետարանիչների պատկերների աղյուսակ ծածկով, սոխաճաման գմբեթներով, եռանկյունաձև ֆրոնտոններով և հարթ կառուցվածքներով հարտաբազմապատկան

¹ Համեմատիր նկ. 12 և S. Der-Nersessian, նույն տեղում, pl. XVII:

Ֆոնը, հիշեցնում է Տյուրինգենի համալսարանի գրագարանում պահվող 1113 թվականի Ավետարանը¹: Այս բոլորի հետ մեկտեղ մի շարք գարդապատկերներ իրենց սկզբներով կապվում են ամենավաղ շրջանի հայկական ար-



Նկ. 11. 1166 թ. Յովհաննու ավետարանի սկիզբը.
(Երևան, ձեռ. № 7347, էջ 255ա):

վեստի հուշարձանների հետ (քանդակագործության, ճարտարապետության և ավելի վաղ շրջանի ձեռագրերի), օրինակ, եռատերևները, ալամատի տերևները, խաղողի ողկույզը և տերևը, կենդանական մոտիվները (առյուծ, արծիվ և այլն),

¹ Համեմատիր՝ J. Strzygowski, Kleinarmenische Miniaturenmalerei. Die Miniaturen des Tübinger Evangeliiars MA XIII, 1, vom J. 1113, bezw. 893, n. chr. Tübingen, 1907, Tafel VII, IX և Ն. Ա. Կ. Ի. Ն. յ ա ն, նշված աշխատությունը, նկ. 6, 7, 8, 9, 10:

ծիածանին նմանվող և երկրաչափական զարդապատկերները, խորանների քառակուսյան մեջ եղած կամարները, շերտավոր գծերը և այլն: Այս մոտիվները պատկերված են վերամշակման ենթարկվելով, հատկապես ձևերի նրբացման և գծանկարի հատակեցման ուղղությամբ, լայն կերպով օգտագործվում են կիլիկյան մանրանկարիչների կողմից: Հետագայում սրանք դառնում են կիլիկյան մանրանկարչության համար բնորոշ գծեր:

Այս շրջանի կիլիկյան մանրանկարչական արվեստի և Կոստանդինի ու Գրիգոր Մլիճեցու ստեղծագործության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է կանգ առնել նաև թեմատիկ մանրանկարների վրա: Դրանք այնքան էլ շատ չեն: Բացի Լվովի Ավետարանի շորս ավետարանիչների պատկերներից, մենք ունենք նաև երկու թեմատիկ մանրանկարներ՝ Վենետիկի ձեռագրում («Մկրտություն» և «Խաչելություն»):

Գրիգոր Մլիճեցին նստած ավետարանիչներ պատկերելիս հիմնականում պահպանում է բյուզանդական պատկերազրահան սխեման¹: Նրանց հագուստի լայն ու շոր մեկնարանված, կոտրատվող գծերով ծալքերը և անշարժ դիրքը հիշեցնում են ավելի վաղ շրջանի հայկական ձեռագրերի ոճը և որոշ առումով էլ կապվում Սերաստիայի Ավետարանի հետ: Իսկ իրենց կատարման տեխնիկայով և ընդհանուր մեկնարանությունները հիշեցնում են Գրիգոր Նարեկացու քննարկված շորս դիմանկարները: Սակայն, եթե Նարեկացու դիմանկարները նկարիչ Գրիգորի ստեղծագործության վաղ շրջանի արդյունքն են և արտահայտում են անցման կտապը, ապա ավետարանիչների պատկերները մի նոր առաջընթաց են նրանց նկատմամբ:

Ավելի հետաքրքիր են Վենետիկի ձեռագրի տերունական պատկերները: Հայտնի է, որ վաղ շրջանի կիլիկյան ձեռագրերը տերունական-թեմատիկ մանրանկարները շունեն: Առաջին անգամ դրանց հանդիպում ենք Վենետիկի ձեռագրում²: Դրանցից առաջինը՝ «Մկրտություն»³ ներկայացնում է այդ թեմայի սովորական դարձած պատկերազրահան սխեման: Ի տարբերություն ավելի վաղ շրջանի հայկական մանրանկարչության համար բնորոշ ծանր, մեծադուխտ և թիկնավետ մարմինների, որոնց առանձին մասերը կորչում են հագուստի ծալքերի մեջ, այստեղ պատկերված մարմինները իրենց երկարաձիգ ձևերով, հագուստի ոճավորված ծալքերով, հրեշտակների զեղանազ դիրքով, ընդհանուր թեթևությունով և գծային բնույթով, հիշեցնում են 11-րդ դարի բյուզանդական ձեռագրերի մանրանկարները (Վաստիկանի N 394 ձեռագիրը, Ֆլորենցիայի Mad Palat N 224 Ավետարանը և այլն)⁴: Մյուս մանրանկարում

¹ Տե՛ս ն. Ա. Կ. Ն. յ ա ն, նշված աշխատությունը, նկ. 6, 7, 9, 10:

² Ճիշտ չէր լինի այդ երկու թղթ վերադրել բյուզանդական ձեռագրերի անմիջական ազդեցությանը: Հանրահայտ է, որ ավելի վաղ շրջանի հայկական ձեռագրերին խորթ չեն տերունական-թեմատիկ մանրանկարները: Ինչպես ճիշտ կերպով նկատել է գեո Ս. Տեր-Ներսիսյանը (տե՛ս նրա «Armenia and the Byzantine Empire») բյուզանդական ազդեցությունը կիլիկիա է ներթափանցել առաջին հերթին բուն Հայաստանի ձեռագրերի միջոցով: Դրանց լավագույն ազդեցությունները կարող են հանդիսանալ Տրապիզոնի, Կարսի և Սերաստիայի ավետարանները: Սակայն չպետք է բոլորովին բացառել նաև հետագա տարիների ընթացքում կիլիկիայի գրչատներում աշխատող վարպետների մոտ շփումը բյուզանդական մանրանկարչական արվեստի հետ, որը չէր կարող անհետանալ մնալ երկու կողմերի համար էլ:

³ Տե՛ս S. Der-Nersessian, Manuscripts Armeniens illustrés, pl. XXVI.

⁴ Տե՛ս В. Н. Лазарев, История Византийской живописи, Москва, 1948, т. II, таб. 150 6, 152.

(«Խաչելություն»—նկ. 13) նույնպես հիմնականում պահպանված են հանրահայտ կոմպոզիցիոն սկզբունքները: Մական խաչի երկու կողմերից սավառնող հրեշտակները, Քրիստոսի գլխի թևիկ թևրվածքը ձախ ուսի վրա, մարմնի խիստ ճզումը և հատկապես լաց լինող Հովհաննի և Աստվածամոր կերպար-



Նկ. 12. 1066 թ. Ղուկասի ավետարանի սկիզբը.
Նկարիչ՝ Գրիգոր Մլիճեցի (երևան, ձեռ. № 7347, էջ 135ա):

ների խորը էմոցիոնալ արտահայտությունը ցույց են տալիս, որ մանրանկարիչը ձգտել է ուժեղացնել սյուժեի ողբերգական կողմը: Այս առումով մանրանկարիչը ցուցաբերում է ուշագրավ ինքնուրույնություն, որոշ առումով կանխելով այն նորամուծությունները, որոնք դիտվում են «Խաչելության» պատ-

կերպարության մեջ, ինչպես հայկական, այնպես էլ բյուզանդական 13-րդ դարի ձևադրերում¹:

Այսպիսով, վերը շարադրածից երևում է, որ մանրանկարիչներ Կոստանդինը և Գրիգոր Մլիճեցին սոսկ ընդօրինակողներ չեն, որոնք մեխանիկորեն վերարտադրել են իրենց նախորդների նվաճումները: Նրանք Կիլիկյան մանրանկարչության մեջ մտցրեցին բավական էական նորույթներ: Չնայած ոճական շատ ընդհանրությունների, երկուան էլ մնում են որպես միանգամայն ինքնուրույն ստեղծագործողներ: Կոստանդինը, Վենետիկի 1193 թվականի Ավետարանում համաշափությունների և առանձին թեմաների հորինվածքի բնագավառում հանդես է բերում արտակարգ զգացողականություն: Գրիգորը լինելով նրա կրտսեր ժամանակակիցը և մասամբ էլ աշակերտը՝ չի կրկնում իր ուսուցչին: Ավելին, նրա վաղ շրջանի ստեղծագործություններում արդեն (հատկապես Նարեկում) զգացվում է ոչ միայն աշակերտի առավելությունը ուսուցչի նկատմամբ, այլև այն, որ նա փորձում է լուծել բոլորովին նոր, մինչ այդ շրջափված խնդիրներ (Նարեկացու դիմանկարները). իսկ կվովի 1197 թվականի Ավետարանի մանրանկարներում նկատում ենք որակի բարձրացում: Չնայած դրան, պետք է նշել, որ Գրիգորը շունի կոմպոզիցիայի այնպիսի զգացողականություն, որը դիտելի է նրա ավագ ժամանակակիցի և ուսուցչի մոտ:

Կոստանդինը և Գրիգորը կիլիկյան մանրանկարչական արվեստի պատմության մեջ մի նոր էտապ են բացում: 1173 թվականի Նարեկի մանրանկարները ցույց են տալիս, որ այդ տարիներին արդեն Սկևռայում մշակվել էին գրքի ձևավորման արվեստի կիլիկյան գաղտնի բնորոշ ու հիմնական սկզբունքները: Հետագա տարիներին վերջնական մշակման է ենթարկվում մանրանկարչական այդ ոճը, ավելի պարզորոշ են հանդես գալիս նրա ինքնատիպ կողմերը, այդ գաղտնի հատուկ նրբագույն ու պճնազեղ ձևերով:

Նոր ոճը առաջին հերթին արտահայտվել է խորանների, զլխազարդերի և անվանաթերթերի ծաղկազարդման բնագավառում: Հիմնովին վերափոխվում է նրանց ողջ բնույթը: Այսուհետև նրանք կորցնում են իրենց նախկին ճարտարապետական կառուցվածքային էությունը, վերածվելով ճոխ ծաղկազարդված և ավելի ներգաշնակ ու բարեկազմ ձևերով մի զարդարանքի: Իրար դեմ դիմաց էջերի վրա խորանները տեղափորվում են համաշափ ձևով և բնկալվում որպես մի ամբողջություն: Չնայած որ նրանք համարյա նույնությամբ կրկնվում են, բայց օգտագործված մոտիվների որոշ մասնակի փոփոխությունները բազմազանություն են մտցնում նրանց մեջ: Պահպանելով բուն Հայաստանի բնորոշ միակենտրոն, աստիճանաբար աճող կամարները, անկյունազծային շերտերը, բուսական, երկրաչափական և կենդանական մոտիվները, դրանք հարմոնիկ ձևով տեղափորելով խորանների բառանկյան մեջ՝ մանրանկարիչները ստեղծում են պարզ, գյուրբնկալ կոմպոզիցիոն մի ամբողջություն: Բարակ և նուրբ սյուները, որոնց վրա հենվում են խորանների վերին քառանկյունները կորցնում են ծավալայնությունը և վերջնականապես զրկվելով իրենց ճարտարապետական նշանակությունից հաճախ վեր են անվում երկրաչափական հյուսվածքավոր զարդապատկերների: Ճոխ զարդարված ուղղանկյունները կարող են շատ ծանր թվալ նման բարակ սյուների համար: Սակայն այդ սյուների երկու կողմերում տեղափորված ծառերը պահպանում են հավասարակշռությունը:

¹ В. Н. Лазарев, *История искусства*, т. 1, с. 161:

Անհրաժեշտ է նշել նաև խոյակների որոշ զարգացումը և բազմադանուբյունը: Դրանց համար օգտագործված մոտիվները հիմնականում փոխ են առնված ազգային ձևերից (զազանների դիմակներ, ականափ տերև, զույգ թռչուններ, որոնք առաջին անգամ հանդիպում են Տրապիզոնի Ավետարանում և այլն): Միան-



Նկ. 13. 1193 թ. Ավետարանից, «Խաչելութ յուն».
Նկարիչ՝ Կոստանդին (Վենետիկ, ձեռ. № 1635):

գամայն յուրահատուկ են մարդկային ֆիգուրներ և ավետարանիչների խորհրդանիշներ ներկայացնող խոյակները (Վենետիկի 1193 թ. Ավետարանը): Բացառիկ նրբությամբ և ճաշակով են ծաղկազարդվում նաև անվանաթերթերը: Էջի վրա համաշափ ձևով դասավորված դեկորատիվ առանձին հատվածները (ծաղկազարդված զլխազարդը, լուսանցազարդը և զլխատառը) ստեղծում են հավասարակշռված և սլարդ կոմպոզիցիա: Ավետարանների առաջին էջերի

¹ Տե՛ս S. Der-Nersessian, *Manuscripts Armeniens illustrés*, pl. XXII, XXIII.

ձևավորման բնագավառում պահպանվում է ընդունված հիմնական սկզբունքը, սակայն «Ա»-ածե գլխազարդի ներքևի մասը հատվում է մի եռակամարով, որի կենտրոնում երբեմն տեղավորում են խաղողի ողկույզ¹: Հատկապես աչքի է ընկնում նուրբ գեղադրական գծանկարը: Լուսանցազարդերը հիմնականում կաշմում են հայկական ձևազրկերին բնորոշ մոտիվներից, սակայն այն տարբերությամբ, որ նրանք այստեղ ավելի բազմազան են և ավելի նուրբ՝ իրենց ձևերով ու գծանկարով: Որպես նորություն հաճախ հանդիպում են այնպիսի լուսանցազարդեր, որոնք խորհրդանշում են համապատասխան տեքստի բովանդակությունը: Երբեմն նրանք ավելի կոնկրետ բնույթ են կրում (ձուկ, աղավնի, Քրիստոս-էմանուել, Հովհան Մկրտչի գլուխը և այլն)²:

Առանձին հատվածների ու մոտիվների ռեալիստորեն պատկերումը, կատարման բարձր տեխնիկան, որը երբեմն հասնում է ոսկերչական նրբության, գրքերի ձևավորմանը հաղորդում են յուրահատուկ ճոխություն:

12-րդ դարի երկրորդ հիսնամյակում կիլիկյան ձևազրկերի հմայքը և նրբագեղությունը ավելի է ուժեղանում ներկերի վառ կոլորիտով, որը ստեղծվում է կապույտ, վառ կարմիր, բաց վարդագույն, բաց մանիշակագույն, դեղին և կանաչ գույների համադրություններից:

Այսպիսով, 12-րդ դարի երկրորդ հիսնամյակում Սկևռայի և Մլիճի վանքերի գրչատներում աշխատող վարպետների ետևն գործունեությամբ աստիճանաբար ձևավորվում է հայ մանրանկարչության կիլիկյան դպրոցը, բուն Հայաստանի հնավանդ ձևերի ստեղծագործական յուրացման ու փայլուն զարգացման հիմքի վրա:

* * *

Նյութերի բացակայությունը հնարավորություն չի տալիս մեզ ավելի ամբողջական ձևով պատկերելու 13-րդ դարի առաջին կեսի կիլիկյան մանրանկարչությունը: Սկևռայի դպրոցին պատկանող մեզ հասած փոքրաթիվ ձևազրկերը առանձնապես գեղարվեստական արժեք չեն ներկայացնում: 13-րդ դարի առաջին քառորդի հուշարձաններից ամենաարժեքավորը պետք է համարել 1215 թ. Ավետարանը, որը պահվում է Նոր-Ջուղայի Ամենափրկիչ եկեղեցու գրադարանում: Այդ ձևազրկի մանրանկարները, ինչպես արդեն նշել ենք, պատկանում են մեզ ծանոթ Գրիգոր Մլիճեցուն³: Մյուս մեզ հայտնի հուշարձանը դա Երևանի Մատենադարանի № 5528 ձևազրկն է, ընդօրինակված 1216 թվականին, գրիչ Բարսեղի կողմից: Այս ձևազրկի փոքրաթիվ և միագույն զարդարանքները գեղարվեստական առանձին արժեք չեն ներկայացնում: Սրանց պետք է ավելացնել նաև Վենետիկի Մխիթարյանների մոտ պահվող 1233 թվականի Ավետարանը (№ 1131/39)⁴, որը գրված և ծաղկազարդված է Լամբրոն բեր-

¹ S. Der-Nersessian, նույն տեղում, pl. XXIX, XXV. Ն. Ա. կ. ի ն յ ա ն, նշված աչխ. նկ. 8:

² 13-րդ դարի կիլիկյան ձևազրկերում այս սկզբունքը ավելի է զարգանում: Լուսանցազարդերը թեմատիկ մանրանկարների բնույթ են ստանում: Ս. Տեր-Ներսիսյանը ելնելով 9-11-րդ դարերի բյուզանդական ձևազրկերից, կզրակացնում է, որ, չնայած արևելյան ծագմանը՝ այս սկզբունքը Կիլիկիա է թափանցել բյուզանդական ձևազրկերի միջոցով: Տե՛ս S. Der-Nersessian, Manuscripts Arméniennes illustrées, pl. XXXI, XXXII.

³ Ձևաքի տակ շունենալով անհրաժեշտ նյութեր, ոչինչ չենք կարող ասել այս ձևազրկի մանրանկարների մասին (տե՛ս «Արարատ», 1910, էջ 884—885):

⁴ Նկարազրկությունը տե՛ս Բ. Մարգարյան, Մայր ցուցակ, հատ. 1, էջ 401—404:

դում, Հակոբ գրչի կողմից: Ձեռագիրն ունի մեկ խորան, շորս գլխազարդ և լուսանցազարդեր, որոնք կատարված են երբեմն մեկ, երբեմն երեք գույներով (մոխրա-կանաչագույն, խամրած կարմիր և երբեմն էլ դեղին):

Չնայած, որ 12-րդ դարի երկրորդ հիսնամյակում վերջնականապես ձևավորվեց կիլիկյան մանրանկարչական արվեստը, սակայն նրան անմիջապես հաջորդող 13-րդ դարի առաջին կեսը կիլիկյան մանրանկարչության պատմության մեջ հանդիսանում է մի տեսակ գաղարի շրջան: Ձեռագրերի փոքրաթիվ լինելը և նրանց գեղարվեստական ձևավորման ցածր որակը բնորոշ է ոչ միայն Սկևռային, այլև Կիլիկիայի մյուս վանքերի դրշատներին (Գրազարկ, Հոռմկլա և այլն): Այսպիսով, այդ ժամանակավոր գաղարը ընդհանուր մի երևույթ էր Կիլիկիայի համար և պայմանավորված էր ժամանակաշրջանի պատմական իրադարձություններով:

Մի կողմից Լևոն Բ թագավորի թագադրությունից հետո (1198 թ.) շուրջ 13 տարի տևող (1203—1216) անընդհատ ռազմական ընդհարումները խաչակիրների և հատկապես Բոհեմոնդ Գ-ի հետ Անտիոքին տիրելու համար, ինչպես և Իկոնիայի սուլթանության դեմ վարած պատերազմները, մյուս կողմից՝ Լևոնի մահվանից հետո (1219 թ.) դահի շուրջը ծագած ֆեոդալական տարրեր խմբակցությունների պայքարը, որը տևեց մոտ 6 տարի, ժամանակավորապես խանգարեցին հասարակական կյանքի նորմալ ընթացքը և նրա հետ կապված արվեստի զարգացումը: Սկսած 1226 թ., Հեթում առաջինի երկարատև թագավորության շրջանում (1226—1270) և հատկապես այն բանից հետո, երբ նա դիվանագիտական ճանապարհներով կարողացավ խուսափել մոնղոլների հետ պատերազմելուց և փրկել Կիլիկիան մոնղոլական արշավանքներից, սկսվում է մի տեսակ քաղաքական հանգստի շրջան: Այս հանգամանքը մեծ շափով նպաստել է երկրի տնտեսական և կուլտուրական զարգացմանը: Դրանով էլ պետք է բացատրել այն, որ Կիլիկիայի մանրանկարչական արվեստը իր զարգացման բարձրագույն աստիճանին հասավ 13-րդ դարի երկրորդ հիսնամյակում:

Չնայած անհրաժեշտ քանակության ձեռագրերի բացակայությունը և եղածների համեմատաբար գեղարվեստական ցածր որակը ցույց են տալիս, որ Սկևռան 13-րդ դարում չի հանդիսանում կիլիկյան մանրանկարչական արվեստի առաջատար դպրոցը (ինչպիսիք էին այդ ժամանակ Հոռմկլան, Ակները, Գրոները և Բարձրբերդը), այնուամենայնիվ նա միշտ էլ համարվել է Կիլիկիայի կուլտուրական խոշոր կենտրոններից մեկը:

13-րդ դարի երկրորդ կեսի Սկևռայի դպրոցի հուշարձաններից մեկ հայտնի են շորս ձեռագրեր, որոնք պահպանվում են Նրեանի Պետ. Մատենադարանում:

1263 թ. փոքրիկ Ավետարանը (№ 8590), որ ծաղկազարդել է Ավգսենտ արեղան, աչքի է ընկնում վարպետորեն կատարված անվանաթերթերով: Առանձնապես ուշադրության արժանի է ներկերի ճաշակով օգտագործումը: Ոչ հարուստ կոլորիտը հիմնականում կազմվում է նուրբ երկնագույն գույնից, սակայն ֆոնի վրա, որը երբեմն թարմացվում է դեղին և կարմիր երանգներով: Մնացած երեք ձեռագրերը գրված և ամենայն հավանականությամբ պատկերազարդված են Մտեփանոս քահանայի ձեռքով: Դրանցից առաջինը 1278 թ. փոքրիկ Նրգարանն է (№ 759), որն ունի միայն մեկ գլխազարդ, գլխատառեր և միագույն լուսանցազարդեր: Մյուսը 1290 թվականի Ավետարանն է (№ 2630): Այս վերջին ձեռագրերի մանրանկարներից 13-րդ դարում կատարվել են միայն անվա-

նաթերթերը և գլխատառերը: Դրանք թեպետ միազույն են, բայց կատարված են մեծ վարպետությամբ: Մնացած մանրանկարները (ավետարանիչների պատկերներ և խորաններ) անկասկած կատարված են շատ ավելի ուշ՝ 16—17-րդ դարերում:



Նկ. 14. 1293 թ. Ավետարանից, Մատթևոսի ավետարանի սկիզբը.
(Երևան, ձեռ. № 5784, էջ 13ա):

13-րդ դարի երկրորդ կեսի Սկևռայի դպրոցի ոճը բնութագրող հիմնական հուշարձանը սկետք է համարել նույն Ստեփանոս զրչի կողմից 1293 թվականին ընդօրինակված Ավետարանը (№ 5784, նկ. 14,15): Այս ձեռագիրը վարդարված է տերունական պատկերներով, որոնք տեղավորված են գրքի սկզբում: Լուսանցքներում նկարված են մարգարեների և բիրչիական հերոսների պատկերներ: Ավետարանների սկզբներին կան նաև ավետարանիչների պատկերներ: Ինչպես վկայում է 357 էջի վրա գրված հիշատակարանը, ձեռագիրը 1445 թ. մի ոմն Տեր-Սարգսի պատվերով նորից է պատկերազարդվել Թիֆլիսում, մանրանկարիչներ Մանվելի, Հովհաննես քահանայի և Սիոն քահանա-

ի ձեռքով: Մրանք էլ 1445 թ. կատարել են ձեռագրի բոլոր տերունական նկարները, լուսանցքներում եղած մանրանկարները և ավետարանիչ Մարկոսի պատկերը: Ավետարանիչներ Մատթեոսի, Ղուկասի և Հովհաննեսի պատկերնե-



Նկ. 15. 1293 թ. Ավետարանից, Մատթեոս ավետարանիչ.
(Երևան, ձեռ. № 5784, էջ 12բ):

րը, անվանաթերթերը և խորանները, կատարվել են 1293 թվականին, հավանաբար Ստեփանոսի ձեռքով: 1445 թ. մանրանկարները իրենց ոճական առանձնահատկություններով որոշակիորեն տարբերվում են 13-րդ դարի կիրիկյան ձե-

¹ Ա. Ն. Մփրթինը իր «Миниатюра древней Армении» աշխատության մեջ (էջ 70—72) ձեռագրի բոլոր մանրանկարները վերագրում է 1293 թվականին: Մինչդեռ հիշատակարանում պարզորոշ կերպով նշված է, որ մանրանկարների մեծ մասը կատարված է 1445 թվականին զերը հիշված մանրանկարիչների ձեռքով և ոչ թե կիրիկյան, այլ Թիֆլիսում: Այդ հաստատվում է նաև մանրանկարների ոճական առանձնահատկություններով:

ուսուցիչի ուսուցիչ: Իրենց շոր գծանկարով, ընդհանուր գրաֆիկական բնույթով, ոսկու առատությամբ և դույնների շափաղանց սլաքառություններ նրանք ուղղակիորեն կապվում են 14-րդ դարի կիլիկյան մանրանկարչության, մասնավորապես Սարգիս Պիծակի ստեղծագործության հետ: Մինչդեռ վերը հիշված ավետարանիչների պատկերները, հարուստ ծաղկազարդված անվանաթերթերը և խորանները միանգամայն համապատասխանում են 13-րդ դարի ոճին: Բացի այդ, բուսական, երկրաչափական և այլ մոտիվները, որոնք օգտագործված են խորանների ծաղկազարդման համար, միանգամայն նույնն են 13-րդ դարի ձեռագրերի համապատասխան մոտիվների հետ: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում նստած ավետարանիչների պատկերները (Մարկոս, Ղուկաս, Հովհաննես): Նրանց մեծազույգ ծանր ձևերը, մարմնի առանձին մասերն ընդգծող հազուադեպ լայն ծալքերը, հարտարապետական ֆոնը որոշ առումով այդ մանրանկարները մոտեցնում են Բրիտանական թանգարանում պահվող 1282 թ. Ավետարանին, որը ծաղկազարդել է մանրանկարիչ Հովհաննեսը Գրազարիում¹:

Սկեռայի դպրոցի հետագա շրջանը պատկերելու համար մենք շունենք անհրաժեշտ նյութեր, սակայն 14-րդ դարի սկզբից կիլիկիայում ընդհանրապես գերիշխող է դառնում գրաֆիկական ոճը, որի գլխավոր կենտրոնն էր Սիսը:

Ամփոփելով մինչև այժմ մեր ասածները Սկեռայի մանրանկարչական դպրոցի մասին՝ կարող ենք եզրակացնել, որ կիլիկյան մանրանկարչական արվեստը իր հիմնական ու բնորոշ գծերով կազմավորվեց 12-րդ դարի երկրորդ կեսին: Սկեռայի պատմական դերը կայանում է նրանում, որ այդ ժամանակաշրջանում նա հանդիսացավ կիլիկյան մանրանկարչության ինքնուրույն ոճի ձևավորման հիմնական օջախը: 1173 թվականի նարեկը այդ ձևավորման ընթացքում գրավում է յուրահատուկ տեղ, կրելով իր վրա անցման շրջանի առանձնահատկությունները: Այդ ձեռագրի զարգացման պատկերներում նոր ոճը հանդես է եկել ավելի կազմակերպված ձևով, իսկ Գրիգոր Նարեկացու շրջադիմանկարները դեռ պահպանում են հնավանդ որոշ ձևեր: Բացի այդ նարեկացու այս դիմանկարները իրենց էությունով տարբերվում են ընդհանրապես հայկական ձեռագրերում եղած դիմանկարներից: Այս առումով նրանք հայկական մանրանկարչության մեջ հանդիսանում են արտակարգ երևույթ:

¹ Ձեռագրի նկարագրությունը տե՛ս F. Conybeare, A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, 1913, p. 17—18.

Ավետարանիչների պատկերները տե՛ս A. Tchobanian, La Roseraie d'Arménie, т. III.

Բ. ՉՈՒԳԱՍՉՅԱՆ

ՖՐԻԿԸ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՔԱՌՅԱԿԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Հայ և պարսկալեզու գրականության թյունների հարաբերության հետաքրքիր փաստերից մեկը Ֆրիկի դիվանում հայատառ պարսկերենով գրված քառյակի առկայությունն է, որին, ինչպես պարզվել է, հաջորդում է հայերեն թարգմանությունը: Խնդիրը այն է, որ այս քառյակը պարսկերենից հայերեն թարգմանված, առաջին մեղ հայանի, առաջին չափածո գործն է և, այդ առումով իսկ, հետաքրքրություն են ներկայացնում նրա հետ առնչվող մի շարք հարցեր:

Քառյակի միակ ձևագիրը գտնվում է Բողիկյան ձեռագրատանը պահվող Ֆրիկի դիվանում F 16 թվահամարի տակ: Այն առաջին անգամ հրատարակվել է 1941 թվականին Երևանում լույս տեսած Ֆրիկի Բանաստեղծությունների ժողովածուի 13-րդ՝ «Նորին Ֆրիկանն ասացեալ» ֆերթվածի մեջ¹, հաջորդում է՝

«Ապա թէ չօգտիս լիւրմէս, նա հաշուէ թէ ինքս է քամիք

Յիմարքն ու լանդէտքն ի մօա, սա չարծէ ափով մի թրիք» առղերին և նախորդում է՝

«Ի սուրբ սեղանոյն վերա, քան զաղէկն, այլ իրք չի զենն

Ջնիխարն ու զվատուն հզրայրք աստուծոյ զայն երբ զըրբլեն»² առղերով սկսվող հատվածին և գրանցից անշատված է գծիկով:

Քառյակը երկրորդ անգամ հրատարակվել է 1952 թ. Նյու-Յորքում Տիրայր արքեպիսկոպոսի հրատարակած Ֆրիկի Դիվանում²: Այստեղ ևս այն հաջորդում է վերոհիշյալ ֆերթվածի (Դիվանում՝ Ի) նույն առղերին, առանց որևէ անշատման նշանի, սակայն մի տարբերությունով. հրատարակիչը՝ նկատելով, որ ձեռագրում քառյակին հաջորդող հատվածը նրանից անշատված է մի տող բաց տարածությամբ և ունի տարբեր վերջահանգիլ՝ են և թիւն, այդ հատվածը լրիվ անշատել է նախորդ մասից և դարձրել երկու առանձին ֆերթված, որով ձեռագրի մի ստեղծագործությունը վերածվել է երեքի (Ի, ԻԱ, ԻԲ):

Հիշված այս երկու ժողովածուներում քառյակը տպագրված է ձեռագրի պես աղավաղված: Դիվանի հրատարակիչ Տիրայր արքեպիսկոպոսը, որ հսկայական ջանք է թափել Ֆրիկի ստեղծագործությունները ճշտելու և ի մի ժողովելու գործում, աշխատել է այն թարգմանել տալ. ինչպես ինքն է հայտնում՝ նա հաճախ է գիմել պարսիկ բանասերների, որպեսզի թարգմանեն

¹ Ֆրիկ, Բանաստեղծություններ: Ժողովածուն համեմատություններով, ծանոթագրություններով և բառարանով կազմեցին Ֆիլոլոգիական դիտությունների թեկնածու Մ. Մկրչյան և Ե. Թորոսյան, Երևան, 1941, էջ 86:

² Ֆրիկ, Դիվան: Ի լույս բնօրինակից առաջին անգամ ամբողջական բնագրով, ուսումնասիրությամբ, ծանոթություններով, հավելվածներով և բառարանով Տիրայր արքեպիսկոպոս, Նյու-Յորք, 1952, էջ 353: (Հետագայում՝ Ֆրիկ, Դիվան...):

քառյակը, բայց բնագրի խաթարված լինելը նրանց հնարավորութունը չի տվել այդ անելու: Ի վերջո Տիրալրի խնդրանքով քառյակի հիմնական մասը, բացի սկզբի երեք բառերից (Յարմուտ պախի էշխի) վարպետներն վերծանել և վերականգնել է նյու-յորքացի իրանագետ Միհրդատ Թիրյաքյանը¹:

Քառյակի վերջնական վերծանումը 1956 թ. Երևանում կատարեցին Վ. Ավթանդիլյանը և Հ. Փափազյանը, որոնք ոչ միայն կարգացին քառյակի սկզբի երեք աղավաղված բառերը, այլև կարողացան նկատել, որ քառյակին անմիջականորեն հաջորդող չորս տողերը նրա իսկ թարգմանությունն են. մի բան, որ վրիպել էր Տիրալրի, Մ. Թիրյաքյանի և Ֆրիլով գրողվող մյուս բանասերների ուշադրությունից: Սուրե քերում ենք Փափազյանի և Ավթանդիլյանի վերջնականապես վերականգնած տեքստը պարսկերեն և թարգմանությունը ժամանակակից հայերենով, ինչպես նաև Ֆրիլի Դիվանում եղած թարգմանությունը՝ ըստ Բողևյան ձևագրի:

در مطبخ عشق جز نکورا نکشند
لا غر صفتان وز شتخو را نکشند
گر عاشق صادقی ز کشتن مگریز
مردار بود هر آنچه ویرا نکشند

Միրո զոհարանում լավից բացի ոչ մեկին չեն զոհում.
Աննկարագիր և վատարարո մարդկանց չեն զոհում.
Եթե անկեղծ սիրահար ես, զոհվելուց մի խուսափիր.
Պիղծ կլինի այն, որին չեն զոհում²:

Ի սուրբ սեղանոյն վերալ քան զաղէկն այլ իրք չի զենեն,
Զնիխարն ու զվատուն, կըբայրք աստուծոյ զայն և՞ որ զըբըլեն:
Թ՛ողորդ սիրելի ես զու, հանց արա, որ զքեզ չհոտեն,
Դիտեմ՝ անպիտան զաւնալ այն մատաղն, որ զինքն չը զենեն³:

Քառյակի վերծանումը մի շարք հետաքրքիր և կարևոր հարցեր է առաջադրում. ո՞վ է եղել քառյակի հեղինակը, ինքը Ֆրիլը, թե մի այլ բանաստեղծ, ո՞վ է թարգմանել այն հայերենի, Ֆրիլը, թե՞ պարսկերեն ու հայերեն լեզուներին քաջամուտ մի այլ անձնավորություն, ինչ որ մի գրիչ. և ի վերջո՞ և՞ որ է կատարվել թարգմանությունը:

Տիրալր արքեպիսկոպոսը հայտնում է, որ այդ հարցերը մնում են անլույծ, որովհետև նրա բանասեր բարեկամը (Մ. Թիրյաքյանը) հայտնել է, թե չով է քառյակիս հեղինակը, կը ցավիմ որ ինձ հայտնի չէ՞⁴:

Քառյակի հեղինակի մասին վերջնական խոսք չեն ասել նաև Վ. Ավ-

¹ Ֆրիլ, Դիվան..., էջ 124:

² Վ. Ավթանդիլյան, Հ. Փափազյան, Ֆրիլի «Դիվանի» պարսկերեն քառյակը, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտութ.), 1956, № 3, էջ 88—89: Քառյակի վերջին տողը նպատակահարմար է թարգմանել՝

Պիղծ կլինի այն [կենդանին], որին չեն մորթում.

որովհետև պարսկերեն کشتن նշանակում է և՛ զոհել և՛ մորթել. տվյալ զեպրում պետք է վերջինը հասկանալ:

³ Ֆրիլ, Դիվան..., էջ 354:

⁴ Անդ, էջ 124:

թանդիլյանն ու Հ. Փափաղյանը, որովհետև, ինչպես իրենք են գրում, ձևաքի տակ չեն ունեցել միջնադարյան պարսիկ բանաստեղծների ստեղծագործությունների լիակատար հրատարակությունները, իսկ Մատենադարանում պահվող պարսկերեն բանաստեղծությունների և քառյակների ձևագիր մատյաններում և առանձին, ոչ ամբողջական ժողովածուներում նրանց կատարած պրպտումները որևէ արդյունքի չեն հանգել: Մակայն նրանք, ելնելով քառյակի վերջին տողում կատարված համեմատությունից, որը արտահայտում է մուսուլմանական հասկացողություն, իրավացիորեն ենթադրել են, որ քառյակի հեղինակը չի կարող Ֆրիկը լինել, «ալլ ալն ամենայն հավանականությամբ պատկանում է 10—13-րդ դդ. պարսիկ քառյակագիրներից որևէ մեկին»¹:

Պարսկալեզու աղբյուրներում ֆրիկյան քառյակին մեզ հաջողվեց հանդիպել 1935 թ. Թեհրանում լույս տեսած Մոհամադ Ալի Թարբիաթի «Աղերբալջանի գիտունները» գրքում:

14-րդ դարի վերջերին Մերձավոր Արևելքում սկիզբ է առնում հորուֆյան աղանդավորական շարժումը, որը շատ արագ տարածվում է՝ սկսած Խորասանից մինչև Միջերկրականի ափերը: Շարժումը, որը ըստ պրոֆ. Պետրուշևսկու «Ժայռահեղ շիիզմ» էր, հիմնականում արհեստավորական բնույթ էր կրում և իր սուր ծայրով ուղղված էր ընդհանրապես ֆեոդալականության, պաշտոնական իսլամական կրոնի և մասնավորապես թիմուրյան բռնակալության դեմ²: Շարժման ղեկավարը՝ Ֆազլուլահ Նախմին, հայտնի է որպես ժամանակի Արևելքի խոշոր մտածողներից ու բանաստեղծներից: Մոհամադ Ալի Թարբիաթը՝ խոսելով այս անձնավորության մասին, հետևյալ տեղեկություն է հաղորդում, որտեղ ֆրիկյան պարսկերեն քառյակի հեղինակ հայտարարվում է Ֆազլուլահ Նախմիի աղջիկը (անունը հայտնի չէ):

«791 թ. զիկադդա ամսի վեցին [1394 թ. սեպտեմբերի 2], հինգշաբթի օրը Միրանշահը, Թեյմուրի երրորդ որդին, հոր հրամանով Ֆազլուլահին Շիրվանից իր մոտ կանչելով, ժամանակի հոգևորականների ֆեթվայով մահապատժի ենթարկեց: Նրա ոտքերին պարան կապելով՝ փողոցներում ու շուկայում քաշ տվեցին: Գերեզմանը Նախիջևանի Ալանշակ օլքայում է: Ֆազլուլահի մահից հետո նրա գաղափարները տարածվեցին ողջ իսլամական աշխարհում, իսկ նրա փոխանորդներն ու տեղակալները, ինչպես Ալի ալ-Ալան և Սելիդ Իմադ էդ-Դին Նասիմին և ալլք, փախչելով Անատոլիա, բեքթաշիների մենաստաններն ու հենարանները մուտք գործեցին և հորուֆյան աղանդը բեքթաշիների հավատքի փոխարեն տարածեցին: Քանի որ բեքթաշիները միամիտ էին և զուրկ գիտելիքներից, առանց գիտակցելու՝ նրանց գաղափարները ընդունեցին և այս կապակցությամբ բավականին արյուն թափվեց և սարսաղ-ղեցիկ ոճիրներ տեղի ունեցան...»

Ձեռնշահ խանի օրոք Ֆազլուլահի աղջիկը և Յուսուֆ անունով մեկը Թավրիզում նորից սկսեցին հորուֆյան աղանդը քարոզել, բայց մոտ հինգ հարյուր հոգու հետ միասին մահապատժի ենթարկվեցին և հրկիզվեցին: Այս քառյակը Ֆազլուլահի աղջկանն է.

¹ Վ. Ա. Վ. թ ա ն դ ի լ յ ա ն, Հ. Փ ա փ ա ղ յ ա ն, էջ 89:

² Հորուֆյան աղանդի մասին մանրամասն տես՝ Проф. И. П. Петрушевский, Государства Азербайджана в XV веке (Сборник статей по истории Азербайджана, Баку, 1949) և Мухтәсәр Азербайҷан әдәбийяты тарихи, Баки, 1943.

در مطبخ عشق جز نکو را نکشند
 لاغر صفتان زشت خو را نکشند
 گر عاشق صادقی ز کشتن مگر نیز
 مردار بود هر آنچه او را نکشند»¹

Ինչպես տեսնում ենք սա նույն ֆրիկյան քառյակն է՝ մի Կ-ի և Գ-ի տարբերությունը, որ տառացի ճշգրտությունը վերծանված է վերոհիշյալ բանասերների կողմից:

Թարբիաթի սուլն հաղորդումը, որի սկզբնաղբյուրը դժբախտաբար նա չի նշել, ամբողջությամբ մեջ է բերված Թեհրանի համալսարանի դասախոս դոկտոր Սադիկ Քիայի «Գորգաներենի բառացանկ» աշխատության մեջ, որը լույս է տեսել 1951 թ.²: Այս ուսումնասիրության առաջարկում կենսագրական նոր փաստեր են բերված հորուֆյան աղանդի հիմնադրի և նրա հետևորդների մասին, որոնք սակայն որևէ նոր խոսք չեն ավելացնում մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ:

Թարբիաթի սկզբնաղբյուրի հարցը կարծես լուծվում է «Թեհրանի համալսարանի գրականության ֆակուլտետի հանդեսի» 1954 թ. դեկտեմբերի համարում լույս տեսած դոկտ. Սադիկ Քիայի հոդվածով: Հեղինակը իր այս աշխատանքում նոր ու հարուստ նյութեր է հրապարակում հորուֆյան աղանդի մասին: Նա Անկարայի համալսարանի պատմության ու լեզվի ֆակուլտետի դրադարանում պահվող № 1297 ձեռագրից, որին ինքը «Թավրիզի գերեզմաններ» խորագիրն է տվել, քաղվածաբար մեջ է բերել մի հատված, որը ոչ միայն սեղմ ու ճշգրիտ տեղեկություններ է տալիս հորուֆյան աղանդի վերաբերյալ, այլև հաստատում է Թարբիաթի հաղորդումը ֆրիկյան պարսկերեն քառյակի հեղինակի մասին: Դոկտ. Քիայի օգտագործած այս ձեռագրում պակասում են ժողովածուն կազմողի ու գրչի անունները, ինչպես և գրչության վայրն ու ժամանակը, բայց ըստ հեղինակի՝ այն պետք է գրված լինի 17-րդ դարի կեսերին: Այս մատյանի էջ 3-ում հետևյալն է ասված.

«Փիր Թորաբի գերեզմանը, աստված հոգին լուսավորի, Թավրիզի նորար թաղամասում: Նորարի շուկայից հրապարակ գնալիս, աջ թևի վրա, մի գերեզման կա: Այսպես են ասում, թե նա մտազործ է եղել, և մի օր նրան աջնալիսի տրամադրություն է համակել, որ աստծու երկյուղից նա այնքան է ողբացել, որ փոխադրվել է [իմա՝ մահացել է]: Մուլանա³ Ֆաղլուլան Նաիմի Հորուֆիի աղջիկը, որին Ջհանշահ թագավորի օրոք բազմաթիվ հորուֆյանների հետ մահապատժի ենթարկեցին, այդ նույն գերեզմանում է թաղված: Այս

¹ محمد علی تربیت، دانشمندان آذربایجان، تهران، ۱۳۱۴، ص ۳۸۷—۳۸۸.
 Մ ո հ ա մ ա դ Ա լ ի Թ ա Ր Բ ի ա Թ, Ազերբայջանի գիտունները, Թեհրան, 1935, էջ 387—388:

² آزه نامه گرگانی از دکتر صادق کیا، تهران، ۱۳۳۰، ص ۲۷.
 Գորգաներենի բառացանկ, կազմեց դոկտ. Սադիկ Քիա, Թեհրան, 1951, էջ 27:

³ Մ ո լ ա ն ա գիտական կոչում է, որ մուսլմանական երկրներում տրվում էր այն դատավորներին ու անձանց, որոնք հարգվում էին հասարակությունից որպես գիտուն ու իմաստուն:

քառյակը նրա բանաստեղծությունն է՝ Այս խոսքերին հաջորդում է մեր քառյակը, իսկ շարունակության մեջ պատմվում է Ֆազլուլլահի մահապատժի, նրա թաղման վայրի² և Ջհանշահի կազմակերպած կոտորածի մի քանի այլ մանրամասնությունների մասին, տվյալներ, որոնք լիովին համընկնում են թարրիաթի հաղորդած տեղեկություններին, ուստի և հակամետ ենք կարծելու, որ նա ձեռքի տակ է ունեցել «Թավրիդի գերեզմաններ» անվանված սկզբնաղբյուրը և կամ վերջինիս մի այլ ընդօրինակությունը: Հետևաբար պետք է եզրակացնել, որ քառյակը Ֆազլուլլահ Նախմիի ազջկան վերագրվում է միայն մի սկզբնաղբյուրի հիման վրա:

1870 թ. Կոստանդնուպոլսում «Նասիմի դիվանի» («Նասիմի դիվանը») խորագրով լույս են տեսել 14—15-րդ դդ. աղբյուրներից առնված բանաստեղծ իմադ էդ-Դին Նասիմիի աղբյուրներն ու պարսկերեն հատընտիր բանաստեղծությունները: Դոկտ. Սադիկ Քիան վերոհիշյալ իր հոդվածում համոզիչ կերպով ցույց է տալիս, որ այս ժողովածուի մեջ հրատարակված բանաստեղծությունների մի մասը Ֆազլուլլահ Նախմիի և այլ հորուֆյան բանաստեղծների ստեղծագործություններն են: Եվ ահա, այստեղ ևս, էջ 8-ում, ինչպես հաղորդում է դոկտ. Քիան³, հրատարակված է մեր խնդրո սուարկա քառյակը՝ հետևյալ վերատառությամբ, «Որպես խողովանդեղար (արարիչ աստված) հուշակված մեծ սելիդի խոսքերից», բայց դժբախտաբար հարգելի դոկտորը չի նշում, թե այս խոսքերը ո՛ւմ հասցեին են ասված՝ Ֆազլուլլահի⁴, թե՞ Նասիմիի:

Պետք է նշել, որ ժխտելով իսլամի պաշտոնական դոգմաների և ծեսերի մեծ մասը, հորուֆյանները աշխարհի ու մարդու մասին լուրօրինակ տեսակետներ էին առաջ քաշում: Նրանք ընդունում էին աստվածության պարբերական մարմնավորումը (Մոլխես, Հիսուս, Մահամեդ, Ալի և այլն): Ըստ նրանց արաբական այբուբենի տառերը (արաբերեն՝ حروف — հորուֆ) կյանքի զարգացման պարբերական ցիկլերի միասիքական արտահայտությունն են, իսկ զարգացման լուրաքանչյուր ցիկլ նշանավորվում է աստվածության նոր մարմնացումով: Համաձայն հորուֆյան ազանդի՝ տառերը մեկնում են նաև տիեզերքի զադանիքները, իսկ տառերի զադանիքները միանում են մարդու հետ, արտահայտվում են մարդկանց դեմքի վրա: Հետևաբար՝ ընդունելով տառերի սրբությունը և նրանց արտացոլումը մարդու դեմքի վրա, հորուֆյանները գեղեցիկ մարդու դեմքը սուրբ էին համարում, իսկ գեղեցիկ նկատմամբ տածվող սերը՝ պաշտամունք:

Հորուֆիության մեջ հիմնականը մարդու անհատականության գնահատումն էր. մարդը՝ բարոյապես կատարելագործվելով, կարող է հասնել աստծո աստիճանին, ինքը դառնալ աստված, հետևաբար մարդու ազատությունը հիմնական նախադրյալ է:

¹ دکتر صادق کیا، آ گاهیهای تازه از حر و فیان، مجله دانشکده ادبیات دانشگاه

۱۳۳۳ سال دوم شماره ۲ تهران Դոկտ. Սադիկ Քիան, «որ տեղեկություններ հորուֆյանների մասին, «Թեհրանի համալսարանի դրահանության ֆակուլտետի հանդես» (ԹՀԳՀ), հ. 2, № 2, 1954, էջ 40: Ըստ ոմանց Փիր Թորաբին Ֆազլուլլահի ազջկա մեուսինն էր (տե՛ս անդ, էջ 42):

² Այս աղբյուրում Ֆազլուլլահի թաղման վայրը նշվում է Ալանջակի (Երնջակի) քանդակ գյուղը:

³ ԹՀԳՀ, 1954, հ. 2, № 2, էջ 63:

Հորուֆյանների այս ուսմունքի լույսի տակ հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ Ֆաղլոլլահը և նրա հետևորդները իրենց աստված էին համարում. նասիմին իր շատ գործերում, որոնք նվիրված են Ֆաղլոլլահին, նրան աստծու մականվամբ է հիշատակում՝ رَبِّ الْعَالَمِينَ — «երկու աշխարհների տեր»¹, իսկ իր մահվան ժամանակ (նրան մորթազերծ են արել 1417 թ. Հալիպում), ինչպես պատմում են, անընդհատ կրկնելիս է կղի իր ուսուցչի՝ Ֆաղլոլլահի խոսքերը. «ես եմ աստվածը»²:

Այստեղից պարզ է դառնում, որ նասիմիի վերահիշյալ «Երվանում» քառյակին նախորդող վերատառությունը վերաբերում է Ֆաղլոլլահ նասիմիին, հատկապես, որ քառյակը ընկած է «Երվանի» այն հատվածում, որտեղ բերված են ոչ թե նասիմիի, այլ մյուս բանաստեղծների գործերը, իսկ որպես «արարիչ աստված» հորուֆյության մեջ ամենից շատ նասիմին էր հռչակված. նրա հեղինակության ու մեծության առաջ խոնարհվել են բոլոր հորուֆյանները, իսկ աղանդավոր բանաստեղծները մեծ ազդեցություն են կրել նրանից, աշխատել են կրկնել ու տարածել նրա գաղափարները, անգամ նրա ստեղծագործութայինների ազդեցության տակ հետևել են նրա կիրառած բանաստեղծական հնարանքներին³: Թերևս սրանով իսկ պետք է բացատրել, որ Ֆրիկյան պարսիկերեն քառյակի յուրովի կրկնությանն ենք հանդիպում Հալիպական ՍՍԽ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատան (Մատենադարանի) արաբատա հավաքածուի № 517-ի տակ պահվող նասիմիի աղբրեշանքերն բանաստեղծութայինների ձեռագիր մատյանի⁴ հետևյալ երկրորդում.

گر عاشق ایسنک صدق ایله اول دلبر ایچون گل
جان ایله جهان اورتیه قوی ترک سر ایله

(Թե անկեղծ սիրահար ես, արի հանուն այն սիրունու
կյանքդ ու հողիդ մեջտեղ դիր և գլխիցդ ձեռք վերցրու):

Ինչպես տեսնում ենք այստեղ ևս զոհվելու նույն գաղափարն է արծարծված, ինչ քառյակում, և պատահականութուն չէ, որ թե՛ այս երկրորդի և թե՛ քառյակի 3-րդ տողի սկզբի բառերը միևնույնն են

(گر عاشق صادقی = گر عاشق ایسنک صدق ایله):

Այս բոլոր փաստերը ապացուցում են, որ խնդրո սուարկա քառյակը մեծ տարածում է ունեցել հորուֆյանների մեջ և թերևս նրանց նշանաբաններից է կղի:

Արդ, եթե իսկապես քառյակի հեղինակը վերը հիշված անձնավորութուններից որևէ մեկն է, ապա այն պետք է հորինված լինի 1386 թվականից (աղանդի սկզբնավորման տարեթիվը) ոչ շուտ և 15-րդ դարի կեսերից (Ֆաղլոլլահ նասիմիի աղջկա մահապատժի ժամանակաշրջանը) ոչ ուշ:

¹ أفر با یجان ادبیاتی، سید عماد الدین نسیمی، باکی ۱۹۲۶، ص ۲۲، ۲۶...
Աղբրեշանական գրականութունը, Սեյիդ իմադ էդ-Դին նասիմի, Բարու, 1926, էջ 22, 26 և հան.:

² Антология Азербайджанской поэзии, Москва, 1939, стр. XXV.

³ Səh N. A r a s l ы, Фəдакар шаир (Имадеддин Нəсими), ЭААз.Ф нəшрийəтй. Баки, 1942 և ԹՀԳՖՀ, 1954, հ. 2, № 2, էջ 63:

⁴ Երևանի Մատենադարանում այս մատյանի զոյության մասին սիրող մեզ հայտնեց ընկ. Հ. Փափաղյանը:

Մինչև այն ժամանակ, երբ դեռ չէր հայտնաբերվել քառյակի հայերեն թարգմանությունը Ֆրիկի բանաստեղծությունների մեջ, եղած փաստերի հիման վրա հնարավոր էր եզրակացնել, որ քառյակի հեղինակը կամ Ֆազլուլահը և կամ իր աղջիկն է, և հետագայում որևէ գրչի կողմից այն մուծվել է Ֆրիկի դիվանը: Բայց ներկայումս, երբ մեր առջև է նաև հայերեն թարգմանությունը, նման ենթադրություն անել չի կարելի, որովհետև քառյակի թարգմանիչը՝ Ֆրիկը, համարյա մի ամբողջ դար առաջ է ապրել, քան Ֆազլուլահն¹ ու նրա աղջիկը:

Թերևս հնարավոր է ենթադրել, որ ինքը Ֆրիկն է պարսկերեն քառատողի հեղինակը, որովհետև, ինչպես փաստերն են ցույց տալիս, նա շատ լավ տիրապետել է պարսկերեն լեզվին: Բայց այս փաստարկը ժխտվում է Ֆրիկի ողջ ստեղծագործության ոգով, որը միանգամայն հակասում է քառյակի պարսկերեն բնագրի մեջ արտացոլված միտախփական սիրո հասկացողությանը: Հայ թարգմանիչը սրանից խուսափելու համար և որպեսզի այդ սերը, ինչպես Կոստանդին Երզնկացին կասեր «ի մարմին» չհասկացվի, չաղավաղելով հանդերձ քառյակի գաղափարական հենքը՝ զոհվելու գաղափարը, «սիրո զոհարան» (բնագրում՝ խոհանոց)» խոսքերը թարգմանել է՝ «ի սուրբ սեղանոյն վերայ», իսկ վերջին տողի մուսուլմանական սովորությունը՝ «Գիղձ կլինի այն [կենդանին], որին չեն մորթում» շատ նուրբ և վարպետորեն փոխարինել է քրիստոնեականով՝ «Գիտեմ՝ անպիտան դառնալ այն մատաղն, որ զինքն չը զենեն»:

Հնարավոր է նաև մի այլ ենթադրություն. միգուցե թե պարսկերեն քառյակը և թե նրա հայերեն թարգմանությունը հետամուծ են, որևէ գրչի բանահաճույքի արդյունք: Բայց սա ևս ժխտվում է, երբ մանրամասն քննութան ենք առնում ԻՍ. բանքը ամբողջությամբ վերցրած:

ՆՈՐԻՆ ՖՐԿԱՆՆ

ԱՍԱՅԵՍԱՆՔ

Ի սուրբ սեղանոյն վերայ քան զաղէկն այլ իրք չի զենեն,
 Զնիխարն ու զվատուն², եղբայրք, Աստուծոյ զայն և՞ բբ զըրբլին:
 5 Թ՛ողորդ սիրելի ևս դու, հանց արա, որ զքեզ չհոտեն,
 Գիտեմ՝ անպիտան դառնալ այն մատաղն, որ զինքն չը զենեն³:

Գեմ զայս դու գիտես, եղբայր, որ լեզուց ըզքեզ կու կոչեն,
 Դու հանցեզ ճարակ արա, որ անդէն ըզքեզ չի զենեն:
 Թէ խելք ու բասար ունիս և քըննես ամէն շահ ու զէն,
 10 Լինիս դու աստէն մատաղ, որ անդէն ըզքեզ զըրբլին:

¹ Ըստ պրոֆ. Մինորսկու Ֆազլուլահ Նախմին ծնվել է 740/1339 թ. և Միքանշահի կողմից մահապատժի է ենթարկվել 804/1401 թ. (տե՛ս Bulletin of the School of Oriental and African Studies University of London, 1954, vol. XVI, part 2, էջ 273): Նախմինի մահապատժի պրոֆ. Մինորսկու նշած թվականը չի համընկնում Անկարայի վերք բերված ձևազրի հիշած թվականին, որը 796/1394 թ. է:

² Այս վերնագիրը Տիրայր արքեպիսկոպոսի հավելումն է:
³ Տիրայր արքեպիսկոպոսը ձևագիր բնագրի զվատուն ուղղել է զվատում, որը սխալ է. պարսկերեն բնագրում چشت جو «վատարար» է նշանակում, հետևաբար պետք է թողնել բնագրի զվատուն ձևը:

⁴ Քառյակը տալիս ենք, ինչպես 110 էջում, ըստ Բողլեյան ձևագրի:

Թէ չար, թէ բարի գործեալ յարէ աւր զամէն կու գրբէն,
Յորժամ որ դիւան դընեն՝ զայն դաւթարն յատաշ կու բերեն:
Զինչ որ քեզ վերայ մընայ չար մարդոյ՝ ի գէմ կառնեն.
Ում խելք ի վերայ լինի, զայն պարտիքն աստէն վըճարեն:

15 Բարաթ մի աստի առնուն, որ լէզուց ի հուն ցուցանեն,
Թէ չէ կ՞բր Զաաիկ լինի, որ ամէնն ուտեն ու խըմեն:
Լինիս դու ի մեծ զընդան, չար ուզողքն ըզքեզ կու կախեն,
Պահանջեն ըզգործքըն քո, զինչ արեր աստէնս՝ կու դիտեն:

Նախապես ասացինք, որ Տիրայրի կազմած Դիվանի Ի, ԻՍ, ԻԲ քերթձ վածները Բողոքեյան ձևազրում մի ամբողջութիւն են կազմել: Ուշագիր ընթերցումը ցույց է տալիս, որ բացի վերջահանգերի ձևական տարբերութիւննից, այդ քերթվածներից յուրաքանչյուրը առանձին մի բանաստեղծութիւն է իր սեփական սյուժեով, որտեղ բանաստեղծը մի կոնկրետ հարց է դնում, զարգացնում և հասցնում է տրամաբանական վախճանի, բայց այդ երեք բանքերը մի ընդհանուր գաղափարական գիծ ունեն. դա հանդերձյալ կյանքի ապահովման հարցն է, որին հասնելու համար, նախ՝ Ի բանքում հորդոր է արվում այս աշխարհում (աստէնս) բարութիւն, լավութիւն անել, որպեսզի այն կյանքում (անդէն) քարութեան հասանիք, այնուհետև ԻՍ, բանքում զարգացվում է այս կյանքում (աստէնս) զոհաբերվելու (մատաղ լինելու) գաղափարը, որպեսզի անդրշիրխմյան կյանքում (անդէն) մարդը ընդունելի լինի, ի վերջո՝ ԻԲ բանքում խորհուրդ է արվում պահքով ու արտասուքով թողութիւն որոնել, գթառատ ու առանց նենդութիւն լինել, որպեսզի այս աշխարհից (աստի) ելնելուց հետո անհատը անմահութիւն գտնի, որովհետև հանդերձյալ կյանքին արժանի է միայն բարեգործ, անձնագոհ և պահքով ու արտասուքով իր կյանքը անցկացնողը և ոչ թե մեծատունը:

Սակայն չնայած գաղափարական ընդհանուր գծին՝ այս քերթվածներից հատկապես առաջին երկուսը (Ի, ԻՍ) լեզվաարտահայտչական միջոցների կիրառմամբ, հատկապես բառապաշարով, նույնպես շատ ընդհանրութիւններ ունեն: Այսպես.

1) Նույն բառերով համարյա նույն մտքերի կրկնութիւններ.

ա) «Թէ խելք ու բասար ունիս» (բանք Ի, տող 46, բանք ԻՍ, տող 9)¹:

բ) «Ճարակ դուք հանցեզ արէք» (Ի, տող 34).

«Դու հանցեզ ճարակ արա» (ԻՍ, տող 8).

գ) «Ջանա աստէնս ճար արա, որ չըլինիս յանդէն խտակիք» (Ի, տող 7).

«...Դու հանց արա, որ գքեզ չի խտեն» (ԻՍ, տող 5):

2) Այնպիսի օտար բառերի օգտագործում, որ բնորոշ է միայն Ֆրիկինուսեկ—اميد, փոշըմնել—شیمان شدن, բաղբիր—تدبير, դումաշ—فماش, բասար—بصر (Ի).

դԵՐԵԼ—قبول, բասար—بصر, գեև—زبان, դիւան—دیوان, դաւքար—دفتر, բարաթ—برات, գեղան—زندان (ԻՍ):

Ստեղծագործական այս ողջ հենքի վրա թարգմանված քառյակը ինչ-որ ավելորդութիւն չէ, ընդհակառակը այն կազմում է ԻՍ, բանքի անքակտելի մասը, ավելին՝ ողջ բանքը կառուցված է հենց քառյակում զարգացվող գա-

¹ Տողերի թիվը նշանակում ենք ըստ Ֆրիկի դիվանի:

դափարի վրա և բխում է նրանից: Բայց քառյակում և նրա շարունակության մեջ միայն գաղափարական բովանդակությունը չէ, որ ընդհանուր է, ընդհանուր են նաև նրանց տաղաչափությունը, լեզվաարտահայտչական միջոցներն ու բառապաշարը:

ա) Ինչպես թարգմանված քառյակը, այնպես էլ ողջ բանքը գրված են 7—3—5 ստքով: Այս չափը բնորոշ է Ֆրիկի ողջ ստեղծագործությանը. «Դիվանում» նրան վերագրված 51 բանաստեղծություններից 27-ը այս չափով է գրված:

բ) Թե՛ թարգմանված քառյակը և թե՛ ողջ բանքը գրված են նև վերջահանգով:

գ) Թե՛ քառյակի և թե՛ նրա շարունակությունը կազմող ողջ հատվածի բառապաշարը նույնն է:

դ) Թարգմանված քառյակի և բանքի մնացյալ հատվածի մեջ, ինչպես Ֆրիկի մյուս գրվածքներում, հաճախակի է օգտագործված որ շաղկապով ստորագրասական երկրորդական նախադասություն. օրինակ՝

Թ՛ ողորդ սիրելի ևս դու, հանց արա, որ գքեզ չհոտեն (տ. 5)

Գիտեմ անպիտան դառնալ այն մատաղն, որ գինքն չի զենեն (տ. 7)

Գեմ դայս դու գիտես, եղբայր, որ լէգուց գքեզ կու կոչեն (տ. 8)

Այսպես են կազմված նաև 10, 15, 16 տողերը:

Բերված փաստերը, թվում է, բավարար ապացույց են, որ քառյակի թարգմանիչը նույն ինքն է ո՛վ հորինել է ԻՍ. բանքի մնացած հատվածը: Իսկ այս բանաստեղծությունը համեմատության դնելով Ֆրիկի մյուս, հատկապես ԺԶ, ԺԷ, ԺԸ, ԺԹ, Ի քերթվածների հետ, աներկբայելիորեն գալիս ենք այն եզրակացության, որ քառյակի թարգմանիչը կարող էր լինել ոչ այլ ոք, քան այս բանաստեղծությունները հորինողը, իսկ քանի որ Ֆրիկն է գրանց հեղինակը, ուրեմն և կարող ենք հաստատապես ասել, որ քառյակի թարգմանիչը Ֆրիկն է:

Արդ, եթե Ֆրիկն է քառյակի թարգմանիչը, ապա այն կարող է թարգմանված լինել միայն 13-րդ դարի երկրորդ կիսում, իսկ քառյակի հեղինակ կարող է լինել մինչ այդ ժամանակը ապրած որևէ բանաստեղծ:

Այսպիսով հանձին Ֆրիկի, մենք գործ ունենք ոչ միայն տաղանդավոր բանաստեղծի, այլև շնորհալի թարգմանչի հետ, որը ոչ միայն քաջ խմացել է իր մայրենի լեզուն, այլև տիրապետել է ժամանակի ամենահարուստ լեզուներից մեկին՝ պարսկերենին¹:

Վերը շարագրած բոլոր փաստերն ու հանգամանքները մեզ իրավունք են տալիս եզրակացնելու:

1. Մի քանի օտար աղբյուրների հաղորդումները Ֆրիկյան պարսկերեն քառյակի հեղինակի վերաբերյալ վերջնականապես չի լուծում քառյակի հեղինակի ինքնությունը, այնքանով որ հեղինակ համարվող անձանց ապրած ժամանակաշրջանը ավելի ուշ է, քան նրա թարգմանչի ժամանակը:

2. Քառյակի թարգմանիչը միջնադարյան մեր տաղանդավոր բանաստեղծ Ֆրիկն է:

¹ Ֆրիկի թարգմանիչ լինելու հանգամանքը մի ավելորդ անգամ մերժում է Տիբայր արքեպիսկոպոսի այն անհիմն պնդումը, թե «Ֆրիկը գպրոց չէ տեսել, անգրագետ է» (տե՛ս «Դիվան», էջ 19):

Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՏԱԹԵՎԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ԵՎ
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԸ

Անդրկովկասի ժողովուրդները 13-րդ դարի երկրորդ քառորդի ընթացքում ապրեցին իրենց բազմադարյան պատմության ևս մի ողբերգական շրջադարձ: Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը իրար հաջորդող արյունահեղ ասպատակությունների զոհ դարձան ու ընկան թաթար-մոնղոլական ծանր լծի տակ: Ավատական մասնատվածությունը, երկպառակությունները և անդրկովկասյան ֆեոդալների միջև միասնության բացակայությունը խաղացին իրենց օրհասական դերը: Մոնղոլների արյունառուշտ հրոսակախմբերը շհանդիպեցին լուրջ դիմադրության ու հաստատեցին իրենց գերիշխանությունը, ընդհատելով նվաճված երկրների նորմալ պատմական զարգացումը: Զավթիչների աննախագեպ ավերածությունները, կողոպուտը և ահարեկման վրա հիմնված արյունոտ քաղաքականությունը հանգեցրին այդ ժամանակ արդեն բարձր զարգացած Անդրկովկասի ժողովուրդների տնտեսության ու մշակույթի հետընթացքին ու անկմանը:

Առանձնապես ծանր կացության մեջ ընկավ Հայաստանը, որն առաջինն ընդունեց մոնղոլական հորդանների հարվածները: Հրով ու սրով անցան զավթիչները խաղաղ քաղաքների ու գյուղերի վրայով, մորեխի նման, ինչպես ասում է այդ անցքերի ականատես Կիրակոս Գանձակեցին, ծածկեցին նրանք Հայաստանի արգավանդ դաշտերն ու հովիտները, խժռելով իրենց ճանապարհին ամեն ինչ: Ամբաջնելով իրենց գերիշխանությունն Հայաստանում, նրանք կարգեցին այնպիսի անտանելի հարկային սխտեմ, որ ամառայան ամբողջ նահանգներ ու մարդեր: Հուսալքման ծայր տատիճանի հասած շինականները, արհեստավորները և ազնվազարմ տոհմիկները սկսեցին հորդ զանգվածներով թողնել հայրենի երկիրն ու գաղթել հեռավոր օտար վայրեր: Գա հայ ժողովրդի պատմության այն վշտալի էջերից մեկն է, որն արձանագրել է մեր հայրենակիցների զգալի հատվածի աշխարհով մեկ հողմացրիվ լինելու գույժը:

Հայաստանի միմիայն փոքրիկ մասը՝ պատմական Սյունիքը, որն այն ժամանակ ընդգրկում էր Զանգեզուրն ու Լեոնային Ղարաբաղի և Նախիջևանի մի մասը, մնաց համեմատաբար բարվոք վիճակում: Սյունյաց Օրբելյան իշխանները, մասնավորապես նրանցից ամենաեռանդունը՝ մեծ իշխան Սմբատ Օրբելյանը, ճկուն դիվանագիտության միջոցով կարողացավ մոնղոլների գերագույն Մանղու խանից ստանալ ենչուի իրավունք և պաշտպանել իր տիրույթները մոնղոլ զորավարների ու հարկահանների կողոպուտից ու անօրեննություններից: Սիսական (Սյունյաց) նահանգը հանվանե հայտարարվեց մեծ խանի անձնական տիրույթ, իսկ երկրի փաստացի տերը դառավ Օրբելյանների տոհմը, որը միա-

ժամանակ կարողացավ արտոնություններ ձեռք բերել նաև հայ եկեղեցու համար: Այդ ժամանակաշրջանում Սյունիքի իշխաններն ու եկեղեցին դառնում են խոշոր հողատերեր: Առանձնապես արագանում է վանքապատկան տիրույթների աճը: Հայաստանի այլ մասերից Սյունիք է դիմում մոնղոլ կեղեքիչներից փրկություն փնտրող հայ բնակչությունը:

Սյունիքում ստեղծված համեմատաբար բարենպաստ տնտեսական դրության շնորհիվ հայ ժողովրդին երկրի այս մասում հաջողվում է ժամանակավորապես կանխել բազմադարյան մշակույթի անկումը, իսկ դրա որոշ մասնաճյուղերը, առանձնապես փիլիսոփայությունը, զարգացնել ու բարձրացնել նոր աստիճանի: Սյունիքում հիմնադրված Գլաձորի (1280—1338) և Տաթևի (1345—1415) համալսարանները դարձան լուսավորության և փիլիսոփայական մտքի խոշորագույն օջախներ:

Գլաձորի, իսկ հետո Տաթևի համալսարանների հիմնադրումը Սյունիքում քայքայելով է միաժամանակ փիլիսոփայական և աստվածաբանական կրթություն ունեցող մարդկանց պատրաստման անհապաղ անհրաժեշտությունը, որոնք հարկավոր էին հայ իշխանների շահերի և հայ եկեղեցու դադափարական հիմքերի պաշտպանության համար:

Վերոհիշյալ համալսարանների առավել ընդարձակ բաժանմունքներն էին աստվածաբանական ֆակուլտետները, որտեղ բացի աստվածաբանական առարկաներից խորապես ուսումնասիրում էին հին հունական փիլիսոփայության խոշոր ներկայացուցիչների գործերը, զբաղվում էին նաև բնագիտության, մաթեմատիկայի, ճարտասանության, մանկավարժության հարցերով, ինչպես և մանրանկարչությամբ ու գրչության արվեստով: Գլաձորի և Տաթևի բարձրագույն դպրոցների սաների թվումն են բազմաթիվ նշանավոր փիլիսոփաներ, պատմաբաններ, բանաստեղծներ, նկարիչներ, եկեղեցական գործիչներ:

Այդ համալսարանները վանական դպրոցների հետ միասին մեկ դարից ավելի հաջորդաբար ոչ միայն կենդանի են պահել անցյալի մշակութային տրադիցիաները, այլև զգալի ավանդ են մուծել միջնադարյան հայ կուլտուրայի զանձարանը: Սյունիքում այդ ժամանակաշրջանի հայ մշակույթի ասպարեզում աշխատած ականավոր իմաստասերների, գրողների և կրոնական-քաղաքական գործիչների թվին են պատկանում Ստեփանոս Օրբելյանը, որը գրել է արժեքավոր պատմական գործ՝ «Պատմութիւն նահանգին Սիսական», Ներսես Մշեցին՝ Գլաձորի համալսարանի հիմնադիրը, նրա աշակերտ Եսայի Նշեցին, որը փոխարինեց իր ուսուցչին համալսարանի ղեկավարի պաշտոնում և իր մանկավարժական գործունեությամբ նպաստեց փիլիսոփայական կուլտուրայի վերածնությանը, Հովհան Որոտնեցին՝ Տաթևի համալսարանի հիմնադիրը, որը թողել է հարուստ փիլիսոփայական ժառանգություն, նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին, որը պայծառ էջ գրեց հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ և իր ստեղծագործության մեջ մարմնավորեց Տաթևի դպրոցի լավագույն գծերը, նրա աշակերտներ Մատթեոս Զուղայեցին և Առաքել Սյունեցին, որոնք թողել են հետաքրքիր գրական և փիլիսոփայական ժառանգություն, և շատ ուրիշներ:

Անհնարին է մեկ հողվածի մեջ լուսարանել այդ մտածողներից ամեն մեկի ստեղծագործությունը, և այդ սրատճառով մենք հատկապես անդրադառնում ենք Տաթևի դպրոցի կարկառուն ներկայացուցիչներին՝ Հովհան Որոտնեցուն և Գրի-

գոր Տաթևացուն, առանձնապես երկրորդի փիլիսոփայությանը, որպես այդ ժամանակաշրջանի առավել վառ ու բազմակողմանի մտածողի:

Տաթևի համալսարանի նախորդ՝ Գլաձորի բարձրագույն դպրոցը մեծ դեր է խաղացել միջնադարյան Հայաստանի իմաստասիրական մշակույթի վերածնության գործում: Ժամանակակիցներն այն անվանում էին «երկրորդ Աթենք»: Սակայն Գլաձորի համալսարանի ներկայացուցիչները՝ Ներսես Մշեցին և Եսայի Նշեցին գերազանցորեն զբաղվում էին մանկավարժական և աստվածաբանական-մեկնողական գործունեությամբ: Զթողնելով փիլիսոփայական գործեր, նրանք սակայն խորապես ծանոթացնում էին իրենց սաներին անտիկ փիլիսոփայությանը: Այստեղ, Գլաձորի համալսարանում արտադրվեց հին ձեռագրից, Զենոնի «Յաղագս բնութեան» աշխատությունը, որը պահպանվել է մինչև մեր օրերը միայն հին հայկական թարգմանությամբ և վերջերս հրատարակվել է մեր կողմից ուսանողների՝ Գլաձորի շրջանավարտներից մեկը օգտագործել է իր ավարտական ատենախոսության մեջ Զենոնի աշխատությունը:

Գլաձորի և Տաթևի դպրոցների միջև կապող օղակ է հանդիսանում Հովհան Ռրոտնեցին (1315—1386): Գլաձորի համալսարանում Եսայի Նշեցու ղեկավարությամբ նա փիլիսոփայության հետ մեկտեղ ուսումնասիրում էր աստվածաբանություն, քերականություն, բնագիտություն և օտար լեզուներ: Այստեղ հիմնովին սերտել էր նա անտիկ փիլիսոփաների և վաղ-քրիստոնեության շրջանի՝ Արիստոտելի, Պլատոնի, Պորփյուրի, Ոլոմպիագորոսի, Յամբլիխոսի, Նեմեսիոսի, Բարսեղ Կեսարեցու և այլոց գործերը: Իր լայն գիտելիքների համար ժամանակակիցները կոչում էին նրան «Հայոց եռամեծ փիլիսոփա և վարդապետ»: Նա մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն գիտության հարցերում, այլ նաև կարևորագույն եկեղեցական հարցերի լուծման ժամանակ, մոնղոլների հետ ունեցած դիվանագիտական հարաբերություններում և այլն:

Եսայի Նշեցու մահվանից հետո նա միառժամանակ եղավ Գլաձորի համալսարանի ղեկավար: Համալսարանի փակվելուց հետո Ռրոտնեցին իր աշակերտների հետ տեղափոխվեց Տաթև ու հիմնադրեց այստեղ միջնադարյան հայ մշակույթի խոշորագույն օջախներից մեկը՝ Տաթևի համալսարանը: Այստեղ Ռրոտնեցու գիտական ու մանկավարժական գործունեությունը ստանում է մեծ թափ: Իր մանկավարժական երկարատև գործունեության ընթացքում նա աճեցրեց բազմաթիվ տաղանդավոր աշակերտներ, որոնք հարստացրին իրենց գործերով հայ փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի սլառամությունը:

Ռրոտնեցին վախճանվել է 1386 թվականին ու թաղվել Ապրակունիսի վանքում:

Հովհան Ռրոտնեցու թողած ժառանգությունը հարուստ ու բազմազան է: Պետական Մատենադարանի ձեռագրական ֆոնդերում պահպանվում են Ռրոտնեցու բազմաթիվ աշխատություններ, ճառեր ու քարոզներ, որոնք կարևոր նշանակություն ունեն նրա աշխարհայացքի բնութագրման համար: Հսկայական հետաքրքրություն են ներկայացնում Ռրոտնեցու փիլիսոփայական գործերը:

1 Զենոն Իմաստասէր, Յաղագս բնութեան, թարգմանությունը զբաղաբից ուսանողների, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Արևշատյանի, «Բանբեր Մատենադարանի», հատ. 3, Երևան, 1956, էջ 315—342:

որոնք հասել են մեզ բազմաթիվ ձեռագիր օրինակներով: Որոտնեցու փիլիսոփայական գործերն են. 1) Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի, 2) Համառօտ լուծմունք «Պերի արմենիաս» («Յաղագս մեկնութեան») գրոցն Արիստոտէլի, 3) Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց (Յաղագս տարերաց), 4) Հաւաքումն յայտնարանութեան ի Փիլոնէ իմաստնոյ, 5) Համառօտ վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի:

Այս հինգ աշխատութիւններից երեքը՝ «Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի», «Համառօտ վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի» և «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց («Յաղագս տարերաց»)» հրատարակվեցին վերջերս ռուսերեն թարգմանությամբ հանդերձ:

Անդրադառնանք Որոտնեցու փիլիսոփայութեան մի բանի, առավել կարևոր կողմերին: Նախ և առաջ քննենք, թե ինչպես է նա լուծում փիլիսոփայութեան հիմնական հարցը, աստժո և բնութեան, ողու և նյութի փոխհարաբերութեան հարցը:

Ըստ Որոտնեցու, աստված ստեղծել է աշխարհը ոչնչից: «Ստեղծանելն է առնել ինչ յոչնչէ», — գրում է նա իր «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց» աշխատութեան մեջ¹: Ընդունելով այս գրույթը որպես իր օնթոլոգիայի հիմք, նա հերքում է բոլոր այլ գրույթները, որոնք շեղվում են իր այդ թեզից: Ըստ նրա, «այլ կերպիւ ստեղծանէ արհեստն, և այլ կերպիւ՝ բնութիւնն, և այլ կերպիւ՝ կարողութիւնն աստուծոյ»²: Աստված, ստեղծելով որևէ բան, ի տարբերութեան արհեստի և բնութեան, տալիս է իրերին ոչ միայն «գոյացական տեսակ և պատահական ձև», «այլ և զնիւթն ստեղծագործէ, զի ոչ ինչ կարօտանայ հիման»³: Բնութեանը, մատերիան իր բոլոր հատկանիշներով ստեղծված է աստժո կողմից, «զի նա միայն ունի զգերազանցութիւն և նա միայն է կատարեալ էութիւն, անակիզքն և անվախճան»⁴:

Սակայն դրանով չի սպառվում Որոտնեցու փիլիսոփայութեան բնութագիրը, որովհետև անդրադառնալով տրամաբանութեան և իմացարանութեան հարցերին, իսկ դրանք կազմում են նրա ստեղծագործութեան խոշորագույն մասը, նա հեռանում է աստվածաբանական գրույթներից: Դիմելով Արիստոտէլի գործերին, նա, ի հակադրութեան իր ժամանակակից «ուսուցիչներին», պաշտպանում է արիստոտէլյան ուսմունքի մատերիալիստական, առաջադիմական կողմը: Իր «Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի», «Համառօտ լուծմունք «Պերի արմենիաս» գրոցն Արիստոտէլի» և «Համառօտ վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի» աշխատութիւններում, արծարծելով ընդհանուր հասկացութեանների խնդիրը և իմացութեան ընթացքի հարցերը, Որոտնեցին, շնայած իր տատանումներին, վերջին հաշիվով նոսրինալիստական լուծում է տալիս եղակիի (մասնավորի) և ընդհանուրի փոխհարաբերութեան հարցին, նույն ժամանակ ընդգծելով զգայութեանների էական, առաջնային դերը իրական աշխարհի ամեն մի առանձնակի գոյի իմացման գործում: Որոտնեցին ասում է, թե «զգայութիւնն ընդ մարմնոյն է եղեալ և է ի մարմնի, որպէս աչքը,

¹ Յ ո վ հ ա ն Ո Ր Օ ա ն ե ց ի, Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց, առաջաբանն ու հրատարակումը Ս. Արևշատյանի և Ս. Լալաֆարյանի, թարգմանութեանը զբարբարից ռուսերեն Ս. Արևշատյանի, «Բանբեր Մատենադարանի», հատ. 3, էջ 354:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 355:

⁴ Նույն տեղում:

խակ զգալին նախ է քան զքո մարմինդ: Եւ տես ի յԱդամ, զի նախ ամենայն զգալիքն եղեն և յետոյ մարդն կազմեցաւ: Արդ, ի բառնալ ամենայն զգալեաց բառնի և քո մարմինդ և ընդ մարմնոյդ բառնի և զգայութիւնդ, ապա թէպէտ բառնաս զգայութիւնդ՝ դեռ ևս մարմինդ է, և թէ մարմինդ բառնաս՝ զգալիքն ամենայն գոն»¹: Այստեղ, ինչպէս տեսնում ենք, երևան է գալիս Որոտնեցու փիլիսոփայութեան մատերիալիստական տենդենցներից մեկը, որովհետև ընդունելով զգայական կոնկրետ իրերի սեպականութիւնն ու առաջնութիւնը, նա գտնում է, որ զգայութիւնը երկրորդային ու ածանցյալ է:

Անդրադառնալով իմացութեան ուստիճանին, Որոտնեցին գրում է. «Իմացողքն, որ ունին զիմացմունսն հաւասար ամենեքեան, մի և նոյն կերպիւ զնախագաղափարին զտիպն ընդունին: Եւ ամենեքեան, որ զնոյն տիպ ունին և զնոյն իմացմունս, մի և նոյն իրն է առ ամենեւեան. օրինակ քեզ որպէս կնիք մատանոյ հարեալ ի բազում մոմս. ամենայն մոմքն զմի և զնոյն սլատկեր ունին ձեացեալ յինքեանս և մի և նոյն սլատկերն է յամենայն մոմսն կընքեալ: Այսպէս մի և նոյն իրն և իմացմունքն են առ ամենեւեան»²:

Ինչպէս տեսնում ենք, իմացարանութեան հարցերում Որոտնեցին հեռանում է այն աստիճանական դիրքերից, որոնց վրա նա կանգնած էր օնթոյոգիայի խնդիրները լուծելիս, և կարեւորագույն փիլիսոփայական հարցերին պատասխանում է սենսուալիզմի և մատերիալիզմի դիրքերից: Ընդունելով զգայարանների միջոցով ընկալվող իրերի առաջնութիւնը, նա զգայութիւնը համարում է երկրորդային. զգայութեան առկայութիւնը կամ բացակայութիւնը չի կարող ազդել օբյեկտիվ աշխարհի գոյութեան վրա: Միջնադարյան մտածողի համար, թեոլոգիայի գերիշխանութեան պայմաններում, մտածողութեան և արտաքին իրականութեան փոխհարաբերութեան հարցի նման գրվածքն ու լուծումը վկայում է միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական մտքի զարգացման բարձր մակարդակի մասին:

Որոտնեցու ծառայութիւնը կայանում էր նրանում, որ նա, լինելով միջնադարյան իմաստասեր, փորձում էր իմացարանութեան և տրամաբանութեան բնագավառում փիլիսոփայական հարցերին տալ աստիճանութիւնից անջատ, անկախ նշանակութիւն: Սակայն իմացարանութեան հարցերում Որոտնեցու փիլիսոփայութեան սենսուալիստական շիթը և մատերիալիստական տենդենցները, գոյութիւն ունեցող պայմանների հետևանքով, նրա մոտ զուգորդվում էին նման հարցերի իդեալիստական լուծման հետ օնթոյոգիայի բնագավառում:

Հովհան Որոտնեցու գործի արժանի շարունակողը հանդիսացավ նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին (1346—1409), որը փոխարինեց իր ուսուցչին Տաթևի համալսարանի ղեկավարի դերում:

Տաթևացու ստեղծագործութիւնը խարսխվում է Հայաստանի նախորդ շրջանի (10—13-րդ դդ.) իմաստասիրական մտքի նվաճումների վրա, երբ ֆեո-

¹ Յ ո վ հ ա ն Ո Ր Ո Ւ Ն Ե Յ Ի, Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի, հավաքական տեքստը, առաջարանն ու ծանոթագրութիւնները Վ. Կ. Չալոյանի, Թարգմ. Ա. Ա. Ադամյանի և Վ. Կ. Չալոյանի, Երևան, 1956, էջ 136:

² Յ ո վ հ ա ն ու Որոտնեցոյ Համառօտ լուծմունք «Պերի արմենիաս» գրոցն (Արիստոտէլի), հաւաքեալ ի Գրիգորէ աշակերտէ, Պետ. Մատենադարան, ձև. № 4268, էջ 150բ—151ա:

գալիզմը Հայաստանում ապրում էր իր ծաղկման շրջանը: Սակայն գաղափարական հաջորդման այդ գիծը գալիս էր դեպի Տաթևացին ոչ անմիջականորեն, այլ իր ուսուցիչ Հովհան Որոտանեցու հարուստ փիլիսոփայական ժառանգության միջնորդությամբ:

Մինչև վերջին ժամանակներս Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները հատուկ գիտական քննության առարկա չէին դարձել: Այդ հարցում նա բախտակից էր բազմաթիվ խոշոր միջնադարյան փիլիսոփաներին, որոնք դեռ սպասում են իրենց ուսումնասիրողներին:

Գրիգոր Տաթևացին ապրել ու ստեղծագործել է ահեղ նվաճողների պայքարի թատերարենա դարձած Հայաստանի տնտեսական և քաղաքական դեպրահացիայի մոայլ ժամանակաշրջանում: Փրկվելով Լանկ-Թամուրի և Թոխթամիշի ավաղակային հորդաններից ու թուրքմենական ցեղերի ավերիչ ասպատակություններից, Տաթևացին ստիպված էր իր աշակերտների հետ միասին հաճախ տեղից տեղ փախչել: Սակայն, չնայած դրան, նա երբեք չի թողել իր գիտական և հասարակական գործունեությունը, աշխատելով ամեն կերպ երկարացնել հայ մշակույթի օջախների՝ Տաթևի համալսարանի, Ապրակունիսի, Սաղմոսավանքի, Մեծոփի վանական դպրոցների կյանքը: Թերևս նրա ժամանակակիցներից քչերն են այդքան պարզ գիտակցել, որ տվյալ պատմական պայմաններում ազգային մշակույթի պահպանումն ու զարգացումը հոշոտված Հայաստանի համար գրեթե միակ միջոցն էր ընդդիմանալու ահեղ, բայց տաքս ու բիրտ զավթիչներին: Քննադատելով թաթարա-մոնղոլական նվաճողների կրոնը, Տաթևացին միաժամանակ քաղաքական գնահատական է տալիս ու իր վերաբերմունքն է ցուցաբերում օտարերկրյա գերիշխանության հանդեպ: «Օրէնք ձեր, — ասում է Տաթևացին նվաճողների հասցեին, — արտաքոյ ամենայն օրինաց է, և արտաքոյ օրինացն անօրէնութիւն է, և անօրէնութիւն ոչ կարէ փոխել զօրէնս (մեր) և ոչ լինի նոր օրէնք»¹:

Իսկ դիմելով հայրենակիցներին, նա պատկերում է աննկուն իմաստունի կերպարը և խրատում է ամբարել իրենց հողում գիտելիքներ ու փիլիսոփայական իմաստություն, որովհետև, ինչպես գրում է նա, «իմաստասէրն զշորս յաղթէ. նախ՝ բնական յախտից, երկրորդ՝ արտաքին հակառակաց, երրորդ՝ տգիտութեան»²:

Տաթևացին իր ժամանակվա խորը և ինքնատիպ փիլիսոփաներից էր, որն ամփոփելով և ներծծելով նախորդ շրջանի հայ մտածողների թողած ժառանգությունը, հարստացրեց հայ փիլիսոփայական միտքը նոր գաղափարներով և բարձրացրեց այն ավելի բարձր մակարդակի: Լինելով Ֆեոդալական գաղափարախոսության ներկայացուցիչ, Տաթևացին փիլիսոփայական բազմաթիվ կարևորագույն հարցերում շեղվում էր կրոնական — աստվածաբանական լուծումից ու տալիս իր ժամանակի համար առաջադիմական յուրօրինակ մեկնաբանումներ: Փոքր տեղ չի զբաղում Տաթևացին նաև որպես 14-րդ դարի աչքի ընկնող մանկավարժ, մանրանկարիչ և քաղաքական — եկեղեցական գործիչ, որն ակտիվ մասնակցություն է ունեցել այդ ժամանակաշրջանի Հայաստանի գաղափարական և քաղաքական կյանքին:

¹ Գր. Տ ա թ է ա գ ի, Գիրք հարցմանց, Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 9247, էջ 22ր:

² Գր. Տ ա թ է ա գ ի, Լուծումն համառոտ ի տեսութիւնն Դաւթի (Անյաղթի), Պետ. Մատենադարանի ձեռագիր, № 1695, էջ 31ա:

Տաթևացին միջնադարյան Հայաստանի ամենաբեղմնավոր փիլիսոփաներից մեկն է: Նա թողել է բազմաթիվ ծավալուն գործեր, որոնց մեջ ընդգրկված են այդ ժամանակվա փիլիսոփայական գիտելիքների համարյա բոլոր բնագավառները: Նրա աշխարհայացքի բնութագրման համար ամենակարևոր նշանակություն ունեցող գրվածքներից են «Հարցմանց գիրքը», որն ավարտվել է 1397 թ., հրկհատոր «Քարոզութեան գիրքը» (ավարտված է 1407 թ.), «Ոսկեփորիկը», Արիստոտելի, Պարսիուրի, Դավիթ Անհաղթի գործերի մեկնությունները, ինչպես նաև բազմաթիվ աստվածաբանական աշխատություններ և մեկնություններ, որոնք հարուստ նյութ են պարունակում նրա փիլիսոփայական և սոցիալ-բաղադրական հայացքների լուսաբանման համար:

Անհրաժեշտ է նշել, որ Տաթևացու ստեղծագործության մեջ փոքր տեղ չի գրավել աստվածաբանությունը, մի բան, որ լիովին բնական ու անխուսափելի է միջնադարյան գիտնականի և փիլիսոփայի համար: Սակայն այստեղ էլ, բրիստոնեական դոգմատիկայի շատ հարցերում նա մոծում էր անտիկ մտածելակերպի հասկացություններն ու մոտիվները և տալիս իր օրիգինալ մեկնաբանումները:

Տաթևացու փիլիսոփայության մեջ աստվածաբանական կեղևի տակ զգացվում է անտիկ փիլիսոփայական մտքի շունչը, իսկ էմպիրիկ-սենսուալիստական և մատերիալիստական տենդենցները վկայում են նրա՝ միջնադարյան սխոլաստիկայի քարացած շրջանակներից դուրս գալու ձգտման մասին:

Արդեն սկզբից միջնադարյան փիլիսոփայի համար ելակետային՝ աստվածաբանության և փիլիսոփայության, հավատի և իմացության փոխհարաբերության հարցում Տաթևացին շեղվում է եկեղեցու կողմից ընդունված հարցադրումից: Հարելով «Ճշմարտության երկվություն» թեորիային, նա սահմանադատում է փիլիսոփայության և աստվածաբանության բնագավառները: Աստվածաբանությունը, ըստ Տաթևացու, անսահմանափակ կերպով իշխում է հավատի գործերում և չի խառնվում գիտության հարցերին: Գիտությունը իր հերթին չի խառնվում հավատի գործերին: Փիլիսոփայության և գիտության օբյեկտն են բնությունը, նրա օրինաչափությունները¹: Իր այս լուծումով Տաթևացին փաստորեն ազատում է փիլիսոփայությունը աստվածաբանության խնամակալությունից և միջնադարի պայմաններում առաջադիմական քայլ է կատարում, լայնացնելով գիտության իրավունքները:

Սակայն, ըստ Տաթևացու, «ներգործական իմն մշտաշարժ բնատրեալ ելոյ զօրէն վերընթաց հրոյ բանեղէն իմացումն մարդոյ, ոչ ոնելով դուլ մինչ յեղբրիլ առ կայումն կատարման իւրոյ»²: Այդ պատճառով մտքի ազատությունն օրինական է միայն այն դեպքում ու միայն այն մակարդակի վրա, քանի որ այն չի դիպչում թեոլոգիայի առարկային: Հավատի բնագավառը մտնող գիտությունն իր մեջ պարունակում է հերձված, որի զարգացումն ու առաջխաղացումը պիտի խսկույն ևեթ արգելակվի:

Փիլիսոփայության հիմնական հարցում—աստծո և աշխարհի, ոգու ու բնության փոխհարաբերության հարցում Տաթևացին կանգնած է իդեալիստական-թեոլոգիական դիրքերի վրա: Աստված, ըստ Տաթևացու, «է սկիզբն ամենայն գոյացութեանց, զի ի նմանէ են սկսեալ և յառաջ եկեալ ամենայն բնու-

¹ Տե՛ս Գր. Տ ա թ է ա յ ի, Գիրք քարոզութեան (Ամարան հատոր), Կ. Պոլիս, 1741, էջ 72 և 617:

² Գր. Տ ա թ է ա յ ի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 2:

Քիւնք արարածոց երեւելաց և աներևութից»¹: Տաթևացին այս հարցում, ինչպես և բոլոր միջնադարյան փիլիսոփաները, չէր շեղվում եկեղեցական գաղափարախոսութիւնից:

Սակայն դրանում չէ Տաթևացու փիլիսոփայութեան նշանակութիւնը: Իդեալիստորեն լուծելով փիլիսոփայութեան հիմնական հարցը, Տաթևացին միաժամանակ յուրովի է բմբռնում աստվածութեան ֆունկցիաները և օրիգինալ մեկնաբանութիւն է տալիս բնութեան գոյութեանը ու նրա օրինաչափութիւններին:

Ըստ Տաթևացու, բնութեան գոյութեան հիմքում ընկած են չորս տարրեր՝ հուրը, օդը, ջուրը և հողը, որոնցից և կազմվում է բնութեան ամբողջ բաղմագանութիւնը: Այդ տարրերը, ըստ Տաթևացու, ունեն մշտնջենական գոյութիւն²:

Բայց եթե բնութիւնը նյութական է և նրա գոյութեան հիմքը կազմող տարրերը մշտնջենական են, ապա ինչպե՞ս վարվել աշխարհի արարչագործութեան գաղափարի հետ: Իրավացի՞ են արդոք հույն փիլիսոփաները, որոնք պնդում են, թե ոչնչից չի կարող առաջանալ որևէ ինչ: Այս, աստվածաբանութեան համար վտանգավոր ու գայթակղիչ, հարցին Տաթևացին տալիս է դրական պատասխան: Նա գտնում է, որ անտիկ փիլիսոփաները իրավացի են, երբ ասում են, թե ոչ-գոյից երբեք չի կարող առաջանալ որևէ գոյ, բայց դա, շարունակում է Տաթևացին, չի հակասում եկեղեցու ուսմունքին, որովհետև կան երկու տեսակի ոչ-գոյեր: Մեկը միշտ էլ ոչ-գոյ է, որովհետև ոչ իրականում (ճերգործութեամբ) ոչ էլ հնարավորութեան մեջ (գործութեամբ) գոյութիւն չունի. և այդպիսի ոչ-գոյից իհարկե ոչինչ չի կարող ստեղծվել: Բայց կա երկրորդ տեսակի ոչ-գոյ, որը թեև ներգործութեամբ գոյութիւն չունի, սակայն գործութեամբ, այսինքն պոտենցիալում ունի գոյութիւն, և այդ երկրորդ տեսակի ոչ-գոյից ստեղծվել է ամեն ինչ: Այդպիսի ոչ-գոյից աստված ստեղծել է աշխարհը³:

Բայց ինչ է իրենից ներկայացնում այդ երկրորդ, պոտենցիալ ոչ-գոյը, այսինքն որն է այն սուբստրատը, որից ստեղծվում է բնութիւնը: Ըստ Տաթևացու, պոտենցիալ ոչ-գոյը, նախ, աստծո միտքն է, որի մեջ աշխարհը գոյութիւն ունի մինչև արարչագործութիւնը⁴, և, երկրորդ, պոտենցիալ ոչ-գոյի շարքին է պատկանում անորակ նյութը⁵, որին տալով ձև և որակ, աստված ստեղծում է բնութիւնը: Այնպես որ իրավացի են հին հույները, որոնք ասում են, թե ոչընչից չի կարելի ստեղծել որևէ ինչ. չէ որ աստված ստեղծել է աշխարհը իր մտքից և որակազուրկ նյութից: Բայց նույն ժամանակ իրավացի է նաև եկեղեցին, որը պնդում է, թե աստված ստեղծել է աշխարհը ոչնչից, որովհետև աստծո նախագաղափարն և որակազուրկ նյութը պատկանում են ոչ-գոյի շարքին, թեև երկրորդ ձևի՝ պոտենցիալ ոչ-գոյի: Չնայած այն բանին, որ Տաթևացին այստեղ ձգտում է հաշտեցնել անհաշտելի բեռներ, կրօնը՝ գիտութեան հետ, այնուամենայնիվ իր այդ երկու տեսակի ոչ-գոյերի թեորիայով նա աշխատում է

¹ Գր. Տ ա թ է ա յ ի, Ոսկեփորիկ, Կ. Պոլիս, 1746, էջ 15:

² Տե՛ս «Գիրք հարցմանց», էջ 180, 181 ևն:

³ Նույն տեղում, էջ 173:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 111:

մեղմել աշխարհի արարչագործության մասին եղած կրոնական թեզի անհեթեթությունը, յուրօրինակ մեկնելով բնության մշտնջենական գոյությունը:

Իր ժամանակի համար Տաթևացու այդ կոնցեպցիայի առաջադիմական բնույթը ակնհայտ է: Բայց նույն ժամանակ այստեղ երևում է և նրա անհետևողական լինելը և աղանդից խուսափելու ձգտումը: Այդ ավելի ակնբախ կդառնա, եթե մենք հիշենք, որ նրանից երկու դար առաջ մի այլ միջնադարյան մտածող Իբն-Ռոշդը (Ավեռոեսը) բացելուց ժխտեց արարչագործությունը ոչնչից, հաստատելով բնության՝ աստծո հետ «հավետակից» գոյության գաղափարը:

Փիլիսոփայության և թեոլոգիայի, գիտության ու հավատի բնագավառների բաժանմանը համապատասխան, Տաթևացին ընդունում է իմացության երկու ձև՝ «բնական» և «շնորհական»։ Եթե վերջինիս առարկան աստվածային ճշմարտություններն են և այն համբնկնում է հավատին, ապա երկրորդ ձևը՝ «բնական» իմացությունը գործ ունի բնության ու նրա օրինաչափությունների հետ: Այս «բնական» իմացությունը, այսինքն գնոսեոլոգիան, կազմում է Տաթևացու փիլիսոփայության ամենահետաքրքիր ու արժեքավոր մասը: Այստեղ առավել պարզությամբ են դրսևորվում նրա փիլիսոփայության առաջադիմական, մատերիալիստական տենդենցները: Սա հենց այն բնագավառն է, որտեղ միջնադարյան մտածողը առավելագույն ազատություն է վայելում:

Տաթևացին առաջ է քաշում շատ կարևոր հարց՝ աշխարհի ճանաչելիության հարցը: Հինգ զգայարաններն ու բանականությունը, ըստ Տաթևացու, լիովին բավական են աշխարհը ճանաչելու համար: Մարդն ունի ճիշտ այնքան զգացություններ և բանական ճանաչման ընդունակություններ, ինչքան անհրաժեշտ է ամբողջ բնությունն ընդգրկելու համար: «Իմաստուն մտօք թափանց անցանեմք ընդ բնաւ ոլորտս երկնի և երկրի. և ոչ ինչ արտաքոյ մնայ ի լուսոյ իմաստութեան», — ասում է Տաթևացին¹: Գիտությունը մարդուն տալիս է գերիշխանություն բնության նկատմամբ, նրան հնարավորություն է ընձեռում բնությունից օգուտ քաղել ինչպես իր մարմնի, այնպես էլ հոգու համար: «Իմաստութեամբն տիրեմք ծովու և ցամաքի, և բազում բարութիւն հոգւոյ և մարմնոյ ի նմանէ ծնանի», — ասում է նա²: Անթիվ մոլորությունների և սխալների միջով բանականությունը զգայարանների օգնությամբ ձգտում է ճշմարտության և միայն հասնելով նրան՝ բավաբարվում է:

Բանականությունը, միտքը անկաշառ են ու անվախ, և որ ամենակարևորն է, աստծուց անկախ են: Միջնադարյան մտածողի համար զարմանալի հանդերձությամբ Տաթևացին խիզախում է խոսել մարդկային բանականության սուվերենության մասին. «Արդ՝ միտքն անպատկառ և աներկիւղ դատաւոր է, զի յաստուծոյ ոչ երկնչի, վասն զի անձնիշխան է: Եւ ի մարդկանէ ոչ ամաչէ, զի ծածուկ է: Եւ ոչ առնու կաշառ, զի անկարօտ է: Եւ ոչ տղէտ, զի միշտ տեսող է: Վասն այն ճշգրիտ և ուղիղ դատէ»³:

Այստեղ Տաթևացին մեկ անգամ ևս շեշտում է մտքի, բանական իմացու-

¹ Գր. Տ ա թ է ա գ ի, Գ ի բ բ ք ա ռ ո գ ու թ է ա ն (Չմերան հատոր), Կ. Պոլիս, 1740, էջ 187:

² Գր. Տ ա թ է ա գ ի, Գ ի բ բ հ ա ռ ց մ ան ց, Պ ե տ. Մ ա տ ն ն ա գ ա ռ ա ն, ձ ե ո. № 9247, էջ 178բ:

³ Գր. Թ գ ո ռ ի՝ ա շ ա կ ե ռ տ ի ե ո ա մ ե ծ ի Յ ո վ հ ա ն ն ու Որոտնեցւոյ և քաջ զիտապետի Համառոտ հաւաքումն Յառակաց զրոցն Սողոմոնի, Պ ե տ. Մ ա տ ն ն ա գ ա ռ ա ն, ձ ե ո ա գ ի բ № 1264, էջ 376բ:

թյան ինքնուրույնությունն ու անկախությունը, սահմանազատելով այն «շնորհական» իմացությունից, հավատից ու լայնացնելով գիտության սահմանները և շրջանակները:

Իմացության պրոցեսը, ըստ Տաթևացու, սկսվում է զգայական փորձից: Զգայարանները անմիջական կապ են հաստատում մարդու գիտակցության և արտաքին աշխարհի միջև և, տեղեկություններ հավաքելով իրերի ու երևույթների մասին, հաղորդում են դրանք բանականությանը: «Գործ զգայարանացն է զարտաքինս ի ներքս զգալ... Արդ, ամենայն որ զգալի է ի ներքս՝ ի սմա է. ձայն, դոյն, հոտ, համ, ծանր և թեթև, և ոչ ինչ է արտաքոյ սորայ՝¹, — ասում է նա «Հարցմանց գրքում»:

Որպեսզի իմացության պրոցեսը տեղի ունենա, անհրաժեշտ են երկու պայման, «այսինքն», զի զգայութիւն առողջ իցէ, և զգալի առաջի եղեալ իրն յստակ: Ապա թափանցէ յինքն ի սոցանէ պարզ տեսութիւն: Ապա թէ ոչ՝ ոչ կարէ միտքն յստակապէս տեսանել սորօք»²: Բաղմիցս ընդգծելով իր այս սենսուալիստական միտքը, Տաթևացին հայտարարում է, որ բանականությունը, որ իմացության երկրորդ, բարձր աստիճանն է, իր գործունեության մեջ կախված է զգայարաններից, ինչպես արհեստավորն իր գործիքներից:

Միջնադարի պայմաններում Տաթևացին ժխտում է բնածին գաղափարների գոյությունը: Մտքի և հոգու բովանդակությունը կազմվում է արտաքին աշխարհի ազդեցության շնորհիվ, այն էլ ոչ անմիջականորեն, այլ զգայարանների միջոցով: «Հոգի մարդոյն՝ բանական, որպէս անգիր պնակիտ է, կամ լուացած մազաղաք, որ զինչ գրեն ի վերայ, զայն առնու»³: Տաթևացին նաև ասում է, որ «ի բնութենէ բնականապէս մերկ և դատարկ եմք յամենայն բարեաց՝ ի մարմնաւորէն և ի հոգևորէն, զի... զամենայն յետոյ ստանամք... զմարմնոյ պէտն աշխատութեամբ, և զհոգւոյն՝ առաքինութեամբ և կրքութեամբ»⁴:

Միտքը, բանականությունը, ըստ Տաթևացու, միայն զգայարաններից է ստանում տեղեկություններ արտաքին աշխարհի մասին, միայն նրանց միջոցով է կապվում աշխարհի հետ: Բայց, եթե զգայարանները ճանաչում են իրերի միայն որակը, քանակը, ձևը և այլ հատկանիշները, ապա միտքը հենվելով դրանց վրա, ճանաչում է իրերի էությունը (գոյացությունը):

Բանական ճանաչողության պրոցեսում, ասում է Տաթևացին, պիտի լինել զգույշ, որովհետև այն, ինչ որ հանդես է գալիս որպես գոյացություն մի իրի մեջ, մեկ ուրիշի մեջ կարող է լինել միայն պատահումն, հատկանիշ, «որպէս, ջերմութիւն ի հուրն գոյացութիւն է, և ի անորակ մարմին՝ պատահումն, և տերևն ըստ ինքեան գոյացութիւն է, և ի ծառն պատահումն»⁵: Զարգացնելով գիտելիտիկայի այս փոքր նշույլը, Տաթևացին ասում է, որ մարդկային ճանաչողությունը չի կարող մի անգամից ընդգրկել որևէ իր, առավել ևս ամբողջ բնությունը: «Մեք մասամբ տեսանեմք և մի զկնի միոյ, և առաւել և պակաս գիտութեամբ, և ըստ իրին փոփոխմամբ, ...մեր տեսութիւնս էութեանն հետեի,

¹ Գր. Տ ա թ է ա ջ ի, Գիրք հարցմանց, էջ 179:

² Նույն տեղում, էջ 143:

³ Գր. Տ ա թ է ա ջ ի, Գիրք քարոզութեան (Ամարան հատոր), էջ 454 (ընդգծումը մերն է—Ս. Ա.):

⁴ Նույն տեղում, էջ 105:

⁵ Գր. Տ ա թ է ա ջ ի, Գիրք հարցմանց, էջ 169:

զի նախ իրն լինի, և ապա մեք տեսանեմք»¹: Միայն այն իրը կամ երևույթը կարող է ճշմարիտ ճանաչված համարվել, որի անհրաժեշտ պատճառն ու օրինաչափությունը ճանաչված են: «Ամենայն ինչ որ լինի, ունի պատճառ, և նախ է պատճառն քան զպատճառելին... և եթէ որքան (միտքն թափանցէ) ի հարկաւոր պատճառէ, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ»²:

Ճշմարտությունը, ասում է Տաթևացին, մտքի և արտաքին օբյեկտի համապատասխանության մեջ է: Իր քննադատությունն ուղղելով միջնադարյան սեպուխի և միաժամանակ պլատոնական կոնցեպցիայի դեմ, Տաթևացին սովեր և արտացոլում է համարում ոչ թե նյութական իրերը, այլ մարդու միտքը: Եթե ամեն ինչ, ինչ որ մենք ասում ենք, — գրում է Տաթևացին, — ճշմարիտ լիներ, ապա ոչ թե մեր միտքը կհետևեր իրերին, այլ իրը կհետևեր մտքին, մի բան, որը հայտնապես սուտ է, որովհետև ոչ թե մնացականն է հետևում ոչ մնացականին, այլ ընդհակառակը՝ հետքերն են գոյանում ոտքերի շարժումից, և ոչ թե ոտքերը հետքերից, սովերը՝ մարմնից, և ոչ թե մարմինը՝ սովերից: Ապա ուրեմն պարզ է, որ ոչ թե միտքն է վկայում իրի գոյության ճշմարտության մասին, այլ իրն է որոշում այս կամ այն մտքի ճշմարտությունը³: Ահա ինչպիսի պարզությամբ ու որոշակիությամբ է լուծում Տաթևացին իմացարանության ամենահիմնական խնդիրը:

Տաթևացու իմացարանության մատերիալիստական տենդենցները առավել ևս ուժեղանում են, երբ նա դնում է միջնադարյան փիլիսոփայության համար բանավեճի առարկա դարձած մասնավորի և ընդհանուրի փոխհարաբերության հարցը, այսպես կոչված ունիվերսալիաների խնդիրը: Ելնելով իր սենսուալիզմից, Տաթևացին այդ հարցը լուծում է նոմինալիզմի դիրքերից: Մասնավորը, առանձնակին, ըստ Տաթևացու, նախորդում է ընդհանուրին և հանդիսանում այս կամ այն իրի ու երևույթի մասին ընդհանուր հասկացություն, գաղափար կազմելու հիմքը: «Անհատ, — գրում է Տաթևացին, — է մանաւանդ և իսկազոյն և նախկին գոյացութիւն»⁴: Ռեալ գոյություն ունեն միայն առանձին մասնավոր իրեր, որովհետև նրանց ամբողջությունից կախված է ամբողջ բնության գոյությունը, որովհետև «բոլոր բնութիւն ի մի անհատն է և անհատն՝ ի բոլոր բնութիւն»⁵: Անհատ գոյացությունները գոյություն ունեն մինչև մարդը և նրա ընկալումից անկախ: Իրերի բազմությունը սեպ է անհատ գոյացությունների սեպականության շնորհիվ, որովհետև «ամենայն բազմութիւն ի միակէ ժողովի, որպէս տեսակ յանհատէ, և զիմն՝ ի կիտէ, և բազում թիւք՝ ի միոյն»⁶:

Տաթևացին մեղադրում է նոր-պլատոնական Պորփյուրին այն բանի համար, որ նա աղավաղել է առաջին ու երկրորդ գոյացության փոխհարաբերության հարցի արիստոտելյան լուծումը: Ի հակադրություն Պորփյուրի, Տաթևացին գտնում է, որ սեպն ու անհատը հետևում են անհատին, բայց ոչ ընդհակա-

¹ Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 118:

² Նույն տեղում, էջ 10:

³ Նույն տեղում, էջ 8-9:

⁴ Նույն տեղում, էջ 550:

⁵ Նորին Գրիգորի Տաթևացու լուծումն համառոտ ի տեսութիւնն Դաւթի (Անյաղթի), Պետ. Մատենադարան, ձեռ. № 1695, էջ 30ր:

⁶ Գրիգորի աշակերտի կաթնածին Յովհաննու սրբոյն, Տեսութիւն ի բանն մարգարէին, Պետ. Մատենադարան, ձեռագիր № 1743, էջ 450ր:

ասկը: Ենախ գոյացութիւն ասէ զանհատն, — դրում է Տաթևացին, — և երկրորդ՝ պատեակն և դստն. և պատուական, զի սեռն և տեսակն զօրութեամբ ունին, և անհատն ներդործութեամբ զնոսա. և լաւագոյն, զի ի ժողովիլ անհատիցն լինի տեսակն և սեռն, և (ի) բառնիլ անհատիցն բառնին և նորա»¹:

Մասնավորը, ըստ Տաթևացու, պարունակում է իր մեջ ընդհանուրի հիմնական առանձնահատկութիւնները, և այդ պատճառով առանձին, մասնավոր գոյի ճանաչման պրոցեսում մարդու մոտ աստիճանաբար ստեղծվում է տվյալ իրի մտածական պատկերը, որն արդեն արատրահված է կոնկրետ իրից: «Ոմն անհատ, — ասում է Տաթևացին, — ունի զհասարակ բնութիւն լիով յիւրում առանձնութեան»²: Օրինակ, ճանաչելով առանձին մարդուն, բացահայտելով նրա էական, բոլոր մարդկանց բնորոշ հատկանիշները՝ բանական, մահկանացու լինելը, մենք ճանաչում ենք և մարդուն ընդհանրապես:

Ինչպես տեսնում ենք, Տաթևացին կանգնած է «շափավոր» նոմինալիզմի, ավելի ճիշտ կոնցեպտուալիզմի դիրքերում և չի համարում ընդհանուրը դատարկ ձայն, ֆիկցիա, ինչպես «ծայրահեղ» նոմինալիստները: Ունիվերսալիստները, ընդհանուր հասկացութիւնները իրերի անուններ են, որոնք գոյութիւն ունեն միայն մարդու մտքում, բայց նրանք դուրկ չեն օրջեկտիվ նշանակութիւններից: Բանականութիւնը, բազմաթիւ իրերից արատրահելով նրանց ընդհանուր գծերը, տալիս է իրերին անուններ, խմբավորում է նրանց ըստ սեռերի և տեսակների: Մասնավորը, որպես «խակագոյն գոյացութիւն», որպես «մանաւանդ և նախկին գոյ» հիմք է հանդիսանում մարդու մտածողութեան մեջ ընդհանուր հասկացութիւնների՝ այդ երկրորդային և անմարմին գոյացութիւնների առաջացման համար:

Սենսուալիզմը և ունիվերսալիստների խնդրի նոմինալիստական լուծումը սրոշում են Տաթևացու ամբողջ իմացարանութեան բնույթը, որովհետև մասնավորի և ընդհանուրի փոխհարաբերութեան հարցը նրա մոտ անխզելիորեն կապված է կարեւորագույն իմացարանական հարցի՝ նյութի և գիտակցութեան փոխհարաբերութեան հարցի լուծման հետ: Ահա ինչպես է ամփոփում նա իր իմացարանական կրեդոն. «Մեր մասամբ տեսանեմք, և մի զկնի միոյ, և առանկ և պակաս գիտութեամբ, և ըստ իրին փոփոխմամբ: ...Մեր տեսութիւնս էութեանն հետևի, զի նախ իրն լինի և ապա մեր տեսանեմք»³:

Այսպիսով, Տաթևացու իմացարանական հայացքների հիմնական բովանդակութիւնը կայանում է հետևյալում. զգայական ճանաչողութիւնը ռացիոնալ ճանաչողութեան հիմքն ու միջոցն է հանդիսանում: Եթե զգայութիւններն ընկալում են մասնավոր, առանձնակի գոյեր, ապա բանականութիւնը ճանաչում է իրերի մեջ ընդհանուրը, բացահայտում է նրանց օրինաչափութիւնները: Ծանաչողութիւնը օրջեկտիվ, սեռալ իրականութեան արտացոլումն է: Հենց սրանում, կեցութեան և գիտակցութեան իդեալիստական նույնացումից հրաժարվելով՝ մեջ է նոմինալիստ Տաթևացու դիրքավորման արժեքը: Այդ արժեքը մեզ համար ավելի պարզ կդառնա, եթե մենք հիշենք, որ նոմինալիզմը մատերիալիստական մտածողութեան առաջին առկայծումն է միջնադարյան սխոլաստիկ փի-

¹ Գր. Տաթևացի, Լուծումն համառօտ ի տեսութիւնն Դաւթի, Պետ. Մատենադարան, ձեռագիր № 1695, էջ 47ա:

² Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 74:

³ Նույն տեղում, էջ 118:

լիսոփայություն մեջ, դեռ ավելին, որ «նոմինալիզմը առհասարակ մատերիալիզմի առաջին արտահայտությունն է»¹:

Տաթևացու նոմինալիզմի ու սենսուալիստական իմացաբանության հետ սերտորեն կապված է նրա հոգեբանությունը, նրա ուսմունքը հոգու մասին: Եթե ունիվերսալիաների խնդրի լուծման մեջ նա դեմ է դուրս գալիս նորսլլատոնական Պորֆյուրին, ապա այստեղ, անցնելով հոգու բնության զննությանը, նա որոշակիորեն ընդդիմանում է Պլատոնի հոգեբանական ուսմունքին ու հայտարարում է, որ վերջինը մոլորվում է, երբ կարծում է, թե հոգին առաջնային է և նախորդում է մարմնին²: Պաշտպանելով հին ստոյիցիզմի տեսակետը, Տաթևացին գտնում է, որ մարմինն ու հոգին առաջանում են միաժամանակ սերմնային հեղուկից: Նրանք ունեն ծագման մի աղբյուր և սկիզբ: «Եւ թէ ոք ասիցէ, զին՝ չ է այն մի սկիզբն գոյութեան մարդոյ, պատասխանեմք, եթէ սերմնական զօրութիւն, որ է ի մեզ. նոյն է սկիզբն գոյութեան մարդոյ, զի է սկիզբն նիւթական մարմնոյ կազմուածոյն և է սկիզբն ծննդեան հոգւոյ»³: Իր թեզի հիմնավորման համար Տաթևացին դիմում է աստծո օգնության: Բնութագրելով մարդու զարգացման էտապները, նա գրում է. «Ըստ նիւթոյ կազմութեան համանդամայն է և երևումն ոգոյ. զի յորժամ անկատար է նիւթն, միայն կերակրիլն երևի ի նմա: Եւ յորժամ կազմի զգայութիւնն, շունչն երևի ի նմա: Եւ յորժամ ձևանայ ի կերպ մարդոյ, յայնժամ բանական հոգին երևի ի նմա ի խնամոցն աստուծոյ: ...Ապա ուրեմն համանդամայն ի միասին է հոգւոյ և մարմնոյ լինելութիւնն»⁴:

Համարելով, որ ոչ ամեն մի, այլ միայն կատարյալ մարդկային մարմինը կարող է բանական հոգու կրողն հանդիսանալ, Տաթևացին 14-րդ դարի պայմաններում դնում է ուղղաձև քայլվածքի նշանակության հարցը հոգու գործունեության, հոգեկան բնդունակությունների գրսեորման համար: Նա ազոտ կերպով կռահում է, որ ուղղաձև կեցվածքը, իսկ այդ կապակցությամբ և աշխատելու հնարավորությունը, ձեռքերը աշխատանքի գործիք դարձնելու հնարավորությունը ինչ-որ շատ կարևոր դեր են խաղում մարդու կյանքում, համենայն դեպս անհամեմատ նպաստավոր կերպով տարբերում են մարդուն կենդանիներից: Տաթևացին գրում է. «Մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք գլխակոր են իբրև զժառայ և հազաճոյ, և մարդն ուղղաձև իբրև ազատ և թաղաւոր: ...Ի վեր է զլուխն, զի լեզուն և ձեռն սպասաւորեսցեն բանի և գործոյ: Զի թէ կորագլուխ էր մարդն և երկոքին ձեռքն ի յերկիր հաստատեալ, ոչ կարէր գործել: Եւ պիտանանայր լեզու երկայն և շրթունք ստուար, զի ժողովեսցէ զկերակուր. և յայնժամ ոչ կարէր սպասաւորել բանի որպէս այժմ»⁵:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, Տաթևացին տալիս է մարդու բնության իր՝ բիրլիական պատկերացումներից տարբերվող սեփական ըմբռնումը, նա հանձարեղորեն կռահում է, որ աշխատանքն ու մտածողությունը, որոնք հոգու բնդունակությունների արտահայտությունն են հանդիսանում, անխզելիորեն կապված են ուղղաձև քայլվածքի հետ: Տաթևացին ողջամիտ նատուրալիստա-

¹ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том. III, стр. 157.

² Տե՛ս Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 252:

³ Նույն տեղում, էջ 254:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 233:

կան մուտեցում է ցուցարեքում ոչ միայն մարդու կենդանիներից էապես տարբերվելու արմատների խնդրին, այլև փորձում է հոգու մասին իր ուսմունքը գնել գիտական, և ոչ թե կրոնական հողի վրա: Միայն այդ փորձը վկայում է արդեն մեր միջնադարյան փիլիսոփայի խիզախության ու մտքի խորության մասին, մի փիլիսոփայի, որը մի քանի գլխով բարձր էր կանգնած իր հայ ժամանակակիցներից:

Հետևելով Արիստոտելին, Տաթևացին դառնում է, որ հոգին ունի դրսևորման երեք ձև — բուսական (տնկական), կենդանական և բանական: Մարմինը որոշում է հոգու այս կամ այն տեսակի առկայությունը: Մարդն ունի բոլոր երեք տեսակները, մինչդեռ բույսերն՝ մեկ տեսակ, իսկ կենդանիները երկու՝ բուսական և կենդանական: Կենդանական հոգին, ըստ Տաթևացու, բանական հոգու երեան գալու հիմքն ու անհրաժեշտ պայմանն է: Սակայն, եթե բուսական և կենդանական հոգիները նյութական են և մահանում են մարմնի հետ միասին, ապա բանական հոգին ունի աննյութ և անմահ բնություն: Բայց շնայած վերջին սյնդմանը, Տաթևացին ձգտում է դուրս գալ տրադիցիոն հոգեբանության շրջանակներից: Նա համարում է, որ հոգին չի կարող գոյություն ունենալ մարմնից դուրս, որովհետև «մարմնաւորն զհոգևորն նշանակէ, զի մարմնաւորն պիտոյ է հոգևորին. որ զմարմնաւորն ոչ գործէ, նոյնպէս և ոչ (գործէ) զհոգևորն»¹: Մի այլ տեղում Տաթևացին ասում է, որ «մի գոյութիւն է մարդն՝ բազազրեալ ի հոգւոյ և ի մարմնոյ. ոչ է սբարտ երկու լինիլ սկիզբն, այլ մի էութեան մի է սկիզբն: ...Նախ զի նիւթն այն (իմա՝ սերմն) ունի առ ինքն բնական զկենդանութիւն տնկականին. և տնկականն մասն է զգայականին. և զգայականն՝ բանականին: Եւ սոքա ոչ որոշին ի բոլորէն, զի մի են էութեամբ ի մարդն, թէպէտ այլ են ներգործութեամբ: Երկրորդ՝ զի զօրութեամբ ունի զհոգին յինքեան ծածկեալ, որ յետոյ ներգործութեամբ երևի»²:

Այսպիսով, մենք տեսնում ենք այստեղ Տաթևացու անհետևողականության ևս մի արտահայտություն: Մի կողմից, հոգու անմահության ու աննյութականության տրադիցիոն ընդունում, իսկ մյուս կողմից՝ ի հեճուկս եկեղեցական գաղափարաբանության, նյութի հետ հոգու անմիջական կապի և մարմնից կախված լինելու աներկրա սյնդում: Ըստ նրա, «հոգի մարդոյն բանական է անզիր սնակիթ կամ լուսացած մազազաթ»: Գիտելիքները ձեռք են բերվում հոգու կողմից օրյեկտիվ աշխարհի ներգործության շնորհիվ, բայց ոչ անմիջականորեն, այլ զգայարանների միջոցով: Հոգին շունի ոչ մի բնածին առաքինություն: Այն ձեռք է բերվում նրա կողմից առաքինի գործողությունների միջոցով, ինչպես գիտելիքները՝ զգացությունների, կենսական փորձի և կրթության միջոցով:

Տաթևացու հոգեբանական կոնցեպցիան, նրա սենսուալիստական իմացաբանության հետ միասին, վկայում է ոչ միայն նրա՝ 14-րդ դարի կրոնական իդեոլոգիայի իշխանության սպայմաններում ապրած հեղինակի խիզախությունը և մտքի խորությունը, այլ նաև սխոլաստիկայի քայքայման պրոցեսի սկիզբը:

Իր սոցիալ-քաղաքական հայացքներում Տաթևացին նույնպես հանդես է գալիս որպես ինքնատիպ և իր ժամանակի համար առաջվոր մտածող: Նա հանդես է գալիս բունակալության և ֆեոդալական երկսլառակությունների դեմ, պաշտպանում է ազգային անկախության գաղափարը և ձգտում է փրկել ժողովրդական մասսաները իշխանների ազահությունից ու կամայականություններից:

¹ Գր. Տ ա թ է ա ջ ի, Գիրք քարոզութեան (Սմարան հատոր), էջ 115:

² Գր. Տ ա թ է ա ջ ի, Գիրք հարցմանց, էջ 253—254:

րից: Սակայն միաժամանակ այստեղ երևում է և կեղեցու ներկայացուցիչը, վանական վարդապետը, որը վախենում է ժողովրդական շարժումներից և արդարացնում է ֆեոդալական հիերարխիան:

Ըստ Տաթևացու, հասարակությունը նման է մի օրգանիզմի, որտեղ ամեն մի անդամ կատարում է իր որոշակի ֆունկցիան: Առանց անդամների համագործակցության հասարակությունը չի կարող գոյություն ունենալ: Առանց հպատակի իշխան չի կարող լինել, ինչպես որ գլուխ՝ առանց մարմնի: Տաթևացին գրում է. «որպէս իմացումն պէտս ունի զգայութեանց և նոքօք ճանաչէ զգոյն և լսէ զխօսս և առնու զհոտ և զայլն, նոյնպէս և իշխանին՝ աչք և ականջ և բերան՝ իւր իշխեցեալքն են. զի խորհրդով նոցա արասցէ զամենայն բան: Եւ որպէս գլուխն մարմնոյն է պիտանի, նոյնպէս և մարմինն՝ զլիսոյն»¹: Տաթևացին իր միտքը հանդիսանում է այն բանին, որ հասարակական հարմոնիան կախված է գլխի նկատմամբ մարմնի հպատակության և հնազանդության աստիճանից, այսինքն ավատատերերին ժողովրդական մասսաների հլու-հնազանդ լինելու աստիճանից: Եվ այդ պատճառով իշխող կարգերի դեմ ուղղված աղանդներն ու ժողովրդական շարժումները Տաթևացին համարում է հասարակական հարմոնիայի խախտում:

Սակայն հասարակական հարմոնիան խախտում են ոչ միայն աղանդավորական շարժումները, այլ նաև իշխանների անհազուրդ ազահությունը, որոնք ինքնիշխան կառավարում են երկիրը և կեղեքում են ժողովրդին: Տաթևացին դատապարտում է ֆեոդալական երկպառակտումներն ու իշխող դասակարգերի եսասիրական քաղաքականությունը, որոնք իրենց ազահությամբ և անմիտ, չափ ու սահման չունեցող շահագործմամբ ժողովրդի զժգոհությունն են առաջացնում, քանզի լով այն հիմքը, որի վրա կառուցված է հենց իրենց բարեկեցությունը: Մոնղոլ զավթիչներին ու հայ իշխաններին, որոնք կեղեքում են ժողովուրդը, Տաթևացին անվանում է գող ու հափշտակող²:

Տաթևացին արձանագրում է աշխատավորների աղետալի վիճակը և մեղադրում է դրանում իշխող դասակարգերը: Իշխանավորների ազահության ու արատավոր բարքերի վերացումը, ըստ Տաթևացու, հասարակությանը կրուժի քայքայումից ու անկարգություններից: «Իշխան առաւել զօրէնս մոռանայ զաստուածային... իշխան վասն կաշառաց զայս մոռանայ»³:

Տեսնելով ճնշման ու աղքատության տակ հեծող ժողովրդական մասսաների անտանելի վիճակը, Տաթևացին հակված է արդարացիելու նրանց մեղքերը: «Իսկ խառնիճաղանջն ներելի ողորմութեան է, զի ի մեղքն ոչ կամաւ գնայ, այլ ի հարկէ կարօտութեան, որպէս ասէ Առակ՝ զողասցէ, զի լցուցէ զանձն քաղցեալ: Իսկ իշխանն կամաւ դործէ զմեղս, զի շունի ինչ կարօտութիւն, վասն այն կրկին պատժի ի կրկին կեանս»⁴:

Ինչպես տեսնում ենք, Տաթևացու հայացքներում իր յուրատեսակ արտացոլումն է գտել ժողովրդական մասսաների զժգոհությունը՝ առաջ եկած թաթարա-մոնղոլական զավթիչների և նրանց հետ գործակցած հայ ավատատերերի կեղեքիչ քաղաքականության հետևանքով: Անհանգստացած ավատականության

¹ Գր. Տ ա թ է ա յ ի, Գիրք քարոզութեան (Ամբարն հատոր), էջ 423:

² Նույն տեղում, էջ 26:

³ Գր. Տ ա թ է ա յ ի, Համառօտ հաւարումն յԱռակաց գրոցն Սողոմոնի, Պետ. Մատենադարան, ձեռագիր № 1764, էջ 283բ:

⁴ Նույն տեղում:

երերուն վիճակից, որի հեռատես ու ողջամիտ գաղափարախոսն է ինքը, Տաթևացին դայրադին մեղադրանքներ է շարտում լիտիացած իշխանավորների երեսին. «Եւ մերս առաջնորդք և իշխանք հոգևոր կամ մարմնաւոր, որք ինքնիշխանութեամբ կատարէին զգործն առանց խորհրդակցի, վասն որոյ բարձեալ է իշխանութիւն, և աւերեալ երկիրն, և տարագրեալ են ժողովուրդքն մեր ի վերայ երկրի, և ցրուեալ յամենայն ազգս»¹: Ամբողջ պատասխանատուությունը երկրի ավերման ու ժողովրդի ողբերգական դրութեան համար Տաթևացին դնում է ավատատերերի վրա, որոնք օգտագործում են իրենց իշխանությունը ոչ թե «աստծո կամքի» կատարման, այլ իրենց ստոր ցանկությունների ու կրքերի բավարարման համար: Իսկ խոր համակրանքն ու ցավակցությունը աշխատավոր ժողովրդական մասսաների նկատմամբ, աշխատավոր գյուղացիութեան, որպէս հասարակութեան ամենաօգտակար հատվածի փառաբանումը, շունչորների մեղքերը նրանց աղքատութեամբ արդարացնելու ձգտումը, տալիս են Տաթևացու սոցիալ-քաղաքական հայացքներին, շնայած դրանց քրիստոնեական-եկեղեցական բնույթին, որոշ չափով դեմոկրատական երանդ:

Բացառիկ հետաքրքրութեան է ներկայացնում այն հանգամանքը, որ Տաթևացու սոցիալ-քաղաքական կոնցեպցիայի ելակետային դրութեան է հանդիսանում «ընդհանրական բարօրութեան», որն աստվածային սահմանադրութեան է և որին հավասարապէս արժանի են բոլոր մարդիկ: Պետական իշխանութեան նպատակը այդ ընդհանուր բարօրութեան զարգացումն է: Իրավունքը, պետական օրենքները մարդկային, և ոչ թե աստվածային սահմանումներ են, և այդ պատճառով օրինադիր մարդու անկատարութեանը արտահայտվում է օրենքների մեջ: Ինչքան ավելի նեղ է օրինադրողների շրջանը, այնքան ավելի մեծ է հեռացումը «ընդհանրական բարօրութեան» աստվածային սկզբունքից: Հասարակաց բարօրութեանը շի կարող ապահով լինել միահեծան իշխանութեան պայմաններում: Հասարակութեան շահերից ելնելով, հնացած օրենքները պետք է փոխվեն, բայց ոչ ըստ ինքնակալի բմահաճույքի, այլ հասարակութեան մեծամասնութեան որոշմամբ ու համաձայնութեամբ: Տաթևացին գրում է. «Մարդս ոչ է ինքնարաւական, այլ կարօտ է ստեղծիլ և միմեանց օգնական լինիլ. որպէս յայտ է ի գեօղս և ի քաղաքս, որք ի մի վայր ժողովիմք և զկարօտութիւն միմեանց լնումք: Նոյնպէս պարտ է ի խորհուրդն կցորդիլ միմեանց և զուղիղն գտանել... Որպէս մին մարդ կարէ զմիոյ տան շինութիւն խորհիլ, այլ մի մարդն զբազմացն ոչ կարէ, վասն այն պարտ է բազմաց ի մի վայր ժողովել և զբազում երկրին զօգուան գտանել»²: Տաթևացին մեղադրում է ինքնակալութեանն ու իշխող դասակարգերն այն բոլոր աղետների ու դժբախտութեանների համար, որոնք վիճակվել են Հայաստանին, կոչ է անում հաշվի նստել ժողովրդական մասսաների շահերի հետ, որովհետև նրանց բարեկեցութեանից է կախված ամբողջ հասարակութեան բարօրութեանը:

Դժվար է դերագնահատել Տաթևացու այս գաղափարների նշանակութեանը նրա սոցիալ-քաղաքական հայացքների բնութագրման և նրա փիլիսոփայութեան առաջադիմական տենդենցների ըմբռնման համար:

Մեծ է Տաթևացու փիլիսոփայութեան նշանակութեանը հայ միջնադարյան մշակույթի պատմութեան մեջ: Ստեղծագործորեն յուրացնելով և հարստացնե-

¹ Գր. Տ ա թ է ա գ ի, Գ ի ռ ք ք ա բ ո ղ ու թ ե ա ն (Ա մ ա բ ա ն հ ա տ ո ռ), է ջ 424:

² Ն ու լ յ ն տ ե ղ ու մ, է ջ 423:

լով իր նախորդների փիլիսոփայական ուսմունքները, Տաթևացին իր նոմինալիզմով ու սենսուալիզմով նպաստում էր սխոլաստիկայի քայքայմանը: Նա իրավամբ կանգնած է մի շարքում այնպիսի խոշորագույն միջնադարյան մտածողների հետ, ինչպիսիք են Աբու Ալի իբն-Սինան, Իբն Ռոշդը, Պիեռ Աբելյարը, Վիլյամ Օկկամը և ուրիշներ:

Գրիգոր Տաթևացին միջնադարյան վերջին խոշոր հայ փիլիսոփան էր, որի ստեղծագործությունը հանդիսանում էր միջնադարյան հայ մշակույթի բազմադարյան դարդացման արդյունքը: Շատ հնարավոր է, եթե Հայաստանը ունենար զարդացման նորմալ պայմաններ, շենթարկվեր անընդհատ ավերածությունների, ապա Տաթևացու և նրա անմիջական նախորդների փիլիսոփայության մեջ ծլած առաջադիմական դալար ճյուղերը մեկ-երկու դարից հետո կտային նոր որակ և միջնադարյան սխոլաստիկան կտապալվեր հիմնովին, ինչպես այդ եղավ արևմտանվրուպական փիլիսոփայության մեջ 16—17-րդ դարերում: Սակայն, ինչպես գիտենք, Հայաստանի պայմանները շափազանց անբարենպաստ էին և Տաթևացուց հետո մինչև 18-րդ դարի վերջը տիրեց խորը անկում:

Այդ հանգամանքը առավել ևս բարձրացնում է Տաթևի դպրոցի և մասնավորապես Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական ժառանգության արժեքը: Այդ ժառանգությունը նշանակալից ավանդ է հայ փիլիսոփայական և սոցիալ-քաղաքական մտքի, Սովետական Միության ժողովրդների միջնադարյան մշակույթի ողջ պատմության մեջ:

...

...

...

...

...

...

...

...

...

Ա.Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

18-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԳՐՎԱԾ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԳՐԱՅԻՆ
ԵՐԿՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

ԽՆԴՐԻ ԼՈՒԹՅՈՒՆԸ

1768—1774 թթ. տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմների ժամանակ և հաջորդ տարիներին մի նոր թափով հրապարակ իշավ թուրք-պարսկական բռնակալական լծից՝ Ռուսաստանի օգնությամբ՝ Հայաստանն ազատագրելու հարցը: Ռուսական մի շարք ականավոր գործիչներ ձևանամուխ եղան լուրջ միջոցառումների: Հայ ժողովրդի անունից նրանց հետ սերտ հարաբերությունների մեջ մտան հատկապես Հովհաննես Լազարյանը և Հովսեփ արքեպիսկոպոս Արղուիսյանը: Համապատասխան կապեր ստեղծվեցին Հայաստանում և Հայաստանից դուրս գտնվող հայության գլխավոր կենտրոնների հետ: Մշակվեցին ռազմական ծրագրեր, սկիզբ առան նույնիսկ մարտական որոշ գործողություններ, և փորձեր եղան հայ-ռուսական քաղաքական դաշնագրեր կնքելու ուղղությամբ: Պահպանվել ու մեզ են հասել այդ նպատակով գրված դաշնագրերի երկու նախագծեր: Չնայած ո՛չ այդ նախագծերն այն ժամանակ ընդունվեցին և ո՛չ էլ Հայաստանի ազատագրումն իրագործվեց, բայց և այնպես դրանք, որպես պատմական վավերագրեր, ունեն կարևոր նշանակություն:

Մասնագետները վաղուց է, ինչ զբաղվում են այդ նախագծերի ուսումնասիրությամբ: Պարզված է, որ նրանցից մեկը գրվել է հնդկահայ գործիչ Շահամիր Շահամիրյանի և նրա համախոհների, իսկ մյուսը՝ ռուսահայ գործիչներ Հովսեփ Արղուիսյանի, Հովհաննես Լազարյանի ու նրանց համախոհների կողմից:

Այսպես Հայաստանն այդ նախագծերում տարբեր ձևով է պատկերված. առաջին նախագծի համաձայն, ազատագրումից հետո, Հայաստանում պիտի ստեղծվեր հայկական առանձին պետություն՝ բուրժուա-դեմոկրատական կարգերով. իսկ երկրորդի համաձայն՝ ռուսահպատակ ֆեոդալական միապետություն: Նախագծերում առկա են նաև այլ հակասություններ՝ պայմանավորված վերոհիշյալ հիմնական տարբերություններով:

Այսօր, բուրժուա-դեմոկրատիայի կողմից ընդունված բացատրության համաձայն, նշված նախագծերի պարունակած հակասությունները դիտվում են որպես լուրջ հայ հասարակական հոսանքների ու նրանց պարագլուխների ունեցած գաղափարական տարբեր հայացքների արտահայտություն: Փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ այս կարծիքը կարոտ է վերանայման: Խնդիրը նրանումն է, որ մինչ այժմ հանդամանորեն չի ուսումնասիրված քննարկվող նախագծերի ծագման պատմությունը. մասնագետներն իրենց ուշադրությունն ամբողջապես կենտրոնացրել են մի կողմից Շ. Շահամիրյանի, իսկ մյուս կողմից՝ Հ. Արղուիսյանի

և նրանց համախոհների վրա, աշխատելով սահմանազատել նրանց, որպես գաղափարական հակառակորդների, միանգամայն աչքաթող անելով ուսական ցարիզմի քաղաքականությունը: Մինչդեռ դաշնագիրը կնքվելու էր ցարական Ռուսաստանի հետ, որը իշխող ու թելադրող կողմը լինելով, գերազասում էր ազատադրվելիք երկրներին ոչ թե անկախություն շնորհել, այլ կցել իրեն: Այս քաղաքականությամբ ցարիզմը հետապնդում էր նաև իր քաղաքական դիրքը ամրապնդելու և Ռուսաստանի սահմաններն ապահովելու նպատակը:

Մի շարք նորահայտ փաստեր, ինչպես նաև հայտնի վավերագրերի ուշադիր վերանայումը, ցույց են տալիս, որ Հ. Լազարյանը և Հ. ԱրղուՅյանը ոչ միայն դեմ չեն եղել Շ. Շահամիրյանի ծրագրին, այլև առաջին հերթին նրա նախագիծն են ներկայացրել քննության. որը սակայն մերժվել է՝ չհամապատասխանելով ցարական կողմի պահանջներին: Դաշնագրի երկրորդ նախագծով Հ. ԱրղուՅյանը, իր համախոհների հետ միասին, աշխատել է հաշվի առնել թելադրող կողմի պահանջները:

Ահա հենց այս հիման վրա էլ նշված երկու նախագծերում ապագա Հայաստանը պատկերված է տարբեր ձևով:

Ցարիզմի և իր ազատագրման համար պայքարող հայ ժողովրդի շահերի բախումը անտարակույս ունի սոցիալական հիմք: Ինչ վերաբերում է հայ ժողովրդի ներսում եղած այն ժամանակվա սոցիալական պայքարին, ապա մեզ հայտնի են բազմաթիվ փաստեր, որոնք ցույց են տալիս՝ մի կողմից շահագործող ու շահագործվող դասակարգերի, մյուս կողմից հենց իրենց՝ տիրող դասակարգի տարբեր խավերի միջև եղած ներքին անդուլ պայքարն ու հակասությունները: Սույն հոդվածում սակայն, խնդրի այս կողմի քննությամբ զբաղվել չենք կարող:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ վերանայելով քիչ առաջ ակնարկված հարցերը, մենք բոլորովին էլ այնպես չենք մտածում, թե առհասարակ Շ. Շահամիրյանը, Հ. ԱրղուՅյանը, Հ. Լազարյանը, ինչպես նաև Մարգար Խոջենցը, Եփրեմ արքեպիսկոպոսը և ուրիշները բոլոր հարցերումն էլ կանգնած են եղել նույն դիրքերի վրա և միշտ էլ ունեցել են նույն հայացքներն ու գաղափարները: Դա էլ բոլորովին այլ խնդիր է, արժանի հատուկ ու մանրակրկիտ քննության:

ԵՐԿՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որպեսզի մեր առջև դրված հարցը պատշաճորեն բացատրվի, կարիք կա նախ ծանոթանալու դաշնագրերի նշված երկու նախագծերի հետ:

Առաջին անգամ հրատարակվել և մասնագետների ուշադրությունն է գրավել Հովսեփ ԱրղուՅյանի անվամբ ճանաչված նախագիծը: Մ. Աղաբեկյանը 1866 թվականին «Ծիլն Աւարայրի»-ում¹ հրատարակելով Կոստանդնուպոլսի պատրիարքարանի գիվանդապիր Գեորգ էֆենդուց ստացած այդ նախագծի մի քննարկնակությունը, գրում է, որ նրա հեղինակն է Հ. ԱրղուՅյանը: Հրատարակիչը տեղյակ չի եղել, որ գոյություն է ունեցել նաև հայ-ուսական դաշնագրի մի այլ (Շ. Շահամիրյանին պատկանող) նախագիծ:

¹ «Ծիլն Աւարայրի», 1866, զեկտեմբեր, ժ.Բ, էջ 620—622:

Նույն նախագծի մի ուրիշ օրինակ դրանից հետո հրատարակվել է 1877—1878 թվականներին՝ Ազ. Երիցյանի կողմից¹: «Այս վկայագիրը հանած է Արղուիսիանց Յովսէփ արքեպիսկոպոսի չիշատակարանից», գրում է հրատարակիչը, որը նույնպես ծանոթ չի եղել Շ. Շահամիրյանի նախագծի հետ:

Արխիվային թղթերում, այդ նախագծի բնագրի գոյություն մասին, արժեքավոր վավերագրի է հանդիպել Վ. Պարսամյանը: Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո, երբ հայ գործիչները դանշագրի ձև էին որոնում, Հ. Արղուիսյանի թոռներից մեկը (Կ. Արղուիսյան) խաշատուր կազարյանին գրել է. «Պապիս (իմա Հովսէփ Արղուիսյանի) թղթերի մեջ ես գտա մի տեսակ պայմանագիր, որը պետք է կնքվեր ուսև և հայ ժողովուրդների միջև... գրված հանդուցյալ պապիս ձևով... նրա մեջ խոսվում է թագավորության մասին, հայկական թագավորի մասին, որի ընտրությունը թողնվում է գերիմաստ թագուհու կամքին...»²:

Անշուշտ Ազ. Երիցյանը ձեռքի տակ ունեցել ու հրատարակել է պայմանագրի սույն նամակի մեջ հիշված օրինակը:

Դաշնագրի այս վարիանտի առանձին պահպանված այլ ընդօրինակություն հայտնի չէ: Սակայն հայտնի են նրա այնպիսի օրինակներ, որոնք երևան են գալիս Շ. Շահամիրյանի նախագծի հետ միասին: Այս խմբագրությամբ դաշնագիրը մեզ հայտնի է երեք օրինակով, որոնք բոլորն էլ ունեցել են նույն սկզբնաղբյուրը (սրանց մասին քիչ հետո): Այս օրինակներում ևս նախագծի հեղինակն է համարվում Հովսէփ Արղուիսյանը: Հեղինակի հարցում միաբան են նաև ուսումնասիրողները: Սակայն Հ. Արղուիսյանը սերտորեն համագործակցում էր Հ. կազարյանի հետ և դաշնագրի այդ նախագիծը գրել է նրան հաշվի առնելով, ուստի Հ. կազարյանը նույնպես, իրավամբ, դիտվում է որպես նրա հեղինակներից մեկը:

Թե ե՞րբ է գրվել Հ. Արղուիսյանի նախագիծը, այդ մասին նշված ընդօրինակություններում համապատասխան տվյալներ չկան: Ազ. Երիցյանը հայտնում է, որ այն «գրված է 1790 թվականին»: 1789—1790 թվականների հետ է կապված այդ նախագիծը նաև վերոհիշյալ այն երեք աղբյուրներում, ուր նրա հետ զուգակցված է նաև Շ. Շահամիրյանի նախագիծը: Բայց այդ տվյալները ճիշտ չեն, թե՛ Ազ. Երիցյանը և թե՛ մյուս 3 աղբյուրների բուն հեղինակը, իրենք են փորձել որոշել նրա ժամանակը և ընկել են թյուրիմացության մեջ: Այս հարցը լուծված է Ա. Ռ. Հովհաննիսյանի կողմից. նա ապացուցել է, որ Հ. Արղուիսյանի նախագիծը գրվել է 1783 թվականին³:

Որպեսզի նախագծի գրության տարեթվի կապակցությամբ կասկած չմնա, հարկ ենք համարում մեջ բերել Ա. Ռ. Հովհաննիսյանի վկայակոչած փաստերից մեկը:

Հ. Արղուիսյանը 1784 թվականի հոկտեմբերին գրած իր նամակներից մեկում ասում է.

¹ «Փորձ», երկրորդ տարի, № 1, էջ 367—396:

² Վ. Ս. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոեդովը և հայ-ուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 146, 150:

³ А. Р. И о а н н и с я н, Россия и армянское освободительное движение в 80-го-дах XVIII столетия, Ереван, 1947, стр. 47

«Յանցեալ ամին, մինչդեռ սորա յոյժ ջերմ էին փրկութիւն մերազնէիցն և երկրին, մեք դաշնագրութեան տեսակ և կամ նիւթ ինչ պատրաստեալ էաք...»¹, Կնշանակի, իրոք, Շ. Արղությանի նախագիծը գրվել է 1783 թվականին:

Այժմ՝ վերևում նշված այն 3 աղբյուրների մասին, որտեղ Շ. Արղությանի նախագիծը երևան է գալիս Շ. Շահամիրյանի նախագծի հետ միասին:

Առաջին օրինակը հրատարակված է 1899 թվականին «Դիւան հայոց պատմութեան» գրքի 4-րդ հատորի հավելվածում²: Հրատարակութեան ներկայացնողը (Հովհաննես քահանա Մկրչյան) վերջում զետեղել է հետևյալ տողերը.

«Յանօր. Զայս տեսակ դատի ի գրական ծրարս Տ. Ներսէս ս. պատրիարքի Կ. Պօլսոյ զինի մահուան նորին, որ թուի թէ ի հաւաքածոյից Տ. Կարապետ Շահնազարեանց վարդապետի էր ստացեալ, զի գաի զսա ընդ կոնդակաց Ներսէս Ե կաթողիկոսի (առ Շահնազարեանց) ի մի ծրար պարուրեալ»³:

Դրա հիման վրա էլ Գյուտ քահանա Աղանյանցը կարծել է, թե այդ տեսակի հեղինակը Կ. Շահնազարյանն է. «...մեր հրատարակած հատուածը, — գրում է նա, — անշուշտ Շահնազարյանի նման մի գիտնականի գրչից կարող էր բղխել»⁴: Ինչպես կտեսնենք ստորև, այս ենթադրութիւնը ճիշտ չէ:

Երկրորդ օրինակը պահպանվում է Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի արխիվում և ունի հետևյալ խորագիրը. «Դաշնագիր հայոց ընդ ռուսաց վասն վերահաստատելոյ զթագաւորութիւն հայոց»⁵:

Համեմատութիւնից պարզվում է, որ այս և առաջին (Շահնազարյանին վերագրված) օրինակը ծագել են նույն սկզբնաղբյուրից⁶:

Նորահայտ այս ընդօրինակութեան մեջ, խորագրից անմիջապես հետո, հիշատակութիւն կա այն աղբյուրի մասին, որից ընդօրինակված են դաշնագրի նախագծերը. «Ի պատմութեանց Սահակայ վարդապետի Տարօնեցոյ» — գրված է այնտեղ: Ընդօրինակութեան վերջում կա նաև այսպիսի նշում. «Հատոր II, երես 349»: Կնշանակի, Սահակ Տարօնացու անվամբ եղել է բավական ընդարձակ (երկու կամ ավելի հատորներից բաղկացած) մի պատմական երկ, որն այժմ կորած է: Նրա անունն էլ, որքան գիտենք, առաջին անգամն է հայտնի դառնում:

Երրորդ օրինակը գտնվում է Վարդան Օձնեցու «Պատմութիւն նոր, քաղաքական և եկեղեցական, Հայաստան աշխարհի» աշխատութեան մեջ, որը գրված է 1847—1868 թվականներին⁷: Այս անտիպ երկում կա հատուկ գլուխ «Տաղապս դաշնագրութեան հայոց և ռուսաց վասն կանգնելոյ զթագաւորութիւնս

¹ Զեռագիր № 4496, էջ 229:

² «Դիւան հայոց պատմութեան», Դ, Թիֆլիս, 1899, էջ 731—737:

³ Նույն տեղում, էջ 744:

⁴ Նույն տեղում, էջ ԺԷ:

⁵ Պետ. Մատենադարան, Կաթող. զիվան, թղթ. 5, վավ. 55:

⁶ Համոզվելու համար մեջ բերենք ու համեմատենք այդ երկու օրինակների սկզբնաղբյուրները: Նորահայտը սկսվում է այսպես. «Արդ, մինչ վրդովեալ էր տէրութիւն պարսից յերեսաց Օսմանեանց, և դաշխարհս հայոց աւերէին օր ըստ օրէ երբեմն լեկզիբ և երբեմն գաւառական իշխեցողք պարսից՝ ելուզակելով...»: Ընդհանրապես են նաև առաջին օրինակի համապատասխան տողերը՝ զըշաղբերին հատուկ մասնակի տարբերութիւններով. «Արդ, մինչ վրդովեալ էր թագաւորութիւնն պարսից, և դաշխարհս հայոց աւերէին օր ըստ օրէ երբեմն լեկզիբ և երբեմն գաւառական իշխեցողք պարսից՝ ելուզակելով...»:

⁷ Զեռագիր № 4331, թերթ 1ա:

հայոց և վասն մահուան Սիմէօն կաթողիկոսի ևս և դաշանց վրաց ընդ ուսաց»¹: Մեկ էջ գրավող բացատրությունից հետո, Վ. Օձնեցին մեջ է բերել մեզ հետաքրքրող դաշնագրի նախագծերը՝ նույն հաշորդականությամբ (թերթ 59ա—62բ): Այս օրինակի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Լեոն. նա ծանոթ լինելով նաև «Դիւան»-ում տպվածին, գրում է. «Այս թղթերը մենք հանում ենք վարդան արք. Օձնեցու «Հայոց պատմութիւն»-ից (ձեռագիր էջմիածնի Մատենադարանում)...»²: Համեմատությունից սակայն պարզվում է, որ նա նորից վերահրատարակել է «Դիւան»-ում տպագրվածը՝ բաց թողնելով Հ. Արղուիսյանի և Շ. Շահամիրյանի նախագծերի մեջ եղած հետևյալ կարևոր պարբերությունը.

«Ձայս գրեցաւ ի կողմանէ հայոց և ի ձեռն Յովսէփ արքեպիսկոպոսի մատուցաւ կայսերուհոյն. յիշատակի ի մերում (!) անձանօթ նամակի, թէ Գրիգոր Ալէքսանդրիչ Պատեմկինն ջանայր ըստ ամենայնի ի դուխ տանել զայս գործ, և յորդորէր միշտ զկայսերուհին զինքն կացուցանել թագաւոր ի վերայ Հայոց, յաղագս որոյ հրամանաւ կայսերուհոյն ի կողմանէ ուսաց գրեցաւ առ այս դաշնագիր համաձայն գրութեանց դաշանց հայոց օրինակ զայս»: Նույնը գրում ենք նաև Վ. Օձնեցու «Պատմության» մեջ³: Լեոն այս դուրս թողնված պարբերության տեղ գրել է միայն երեք բառ «Ի կողմանէ ուսաց»: Ըստ որում, առաջին նախագծի սկզբից բացված շաղկերանները այստեղ չեն փակվում և նոր շաղկերաններ էլ՝ երկրորդի համար՝ չեն բացվում: Ուստի Հ. Արղուիսյանի և Շ. Շահամիրյանի նախագծերը Լեոնի ստեղծած կապով («Ի կողմանէ ուսաց») ձուլվում են իրար, թողնելով այն սխալ տպավորությունը, թե նրա օգտագործած օրինակում ևս այդպես է եղել: Սակայն նման բան չկա և ոչ մի օրինակում: Բոլորի մեջ էլ այդ դաշնագրերը ներկայացված են որպես տարբեր վավերագրեր:

Լեոնի խմբագրումը կարող է մեծ թյուրիմացություններ առաջացնել, ուստի պետք է շմոռանալ այդ հանգամանքը:

Հենց վերևում մեջ բերված վկայություններից երևում է, որ սերտ կապ կա Սահակ Տարոնացու և Վարդան Օձնեցու պատմությունների միջև: Թե ո՞վ է ում աշխատությունից օգտվել, այժմ դժվար է որոշել, բայց որ նրանք իրար հետ սերտ աղերս ունեն՝ անառարկելի է: Նրանց հետ համընթաց է նաև «Դիւան հայոց պատմութեան» 4-րդ գրքում հրատարակված օրինակը (որը թերի է), ուստի այդ երեք օրինակները համագոր են և ծագել են մի մայր աղբյուրից:

Մայր աղբյուրի հեղինակը իր բացատրությունների մեջ թույլ է տվել մի քանի սխալներ. մեզ համար կական նշանակություն ունի դրանցից մեկի ճշտումը: Նրա մեկնաբանությամբ Հ. Արղուիսյանի նախագծին հաշորդող մյուս

¹ Ձեռագիր № 4331, թերթ 56բ:

² Լեոն, Հայոց պատմություն, 3, Երևան, 1946, էջ 826:

³ Վ. Օձնեցու մոտ այսպես է. «Ձայստոսիկ տասն և ինն յօղուածով գրեալ մատուցաւ կայսերուհոյն ի ձեռն Յովսէփ արքեպիսկոպոսի երկայնարագուկ Արղուիսեանց՝ Յիշատակի ի միում անձանօթ նամակի, թէ Գրիգոր Ալէքսանդրիչ կնիազ Պատեմկինն ջանայր ըստ ամենայնի ի դուխ տանել զայս գործ և յորդորէր միշտ զկայսերուհին՝ զինքն կացուցանել թագաւոր ի վերայ հայոց» (Գեո. Մատենադարան, ձեռագիր № 4331, թերթ 60բ):

(Շ. Շահամիրյանի) նախագիծը, իբր թե, գրվել է ուսաների կողմից՝ ի պատասխան Ղ. Արղուսյանի գրածի:

Լեոն անդրադարձել է մայր աղբյուրի հեղինակի կողմից ստեղծված այս խառնաշփոթությանը, սակայն չի կարողացել լուծել հանգույցը: Նա գրել է. «Թե ե՞րբ և ին՞չ հանգամանքների մեջ են գրվել այս երկու թղթերը — շատ դժվար է որոշել: Ա. Երիցյան («Փորձի» հիշած համարում) ասում է, թե առաջին թուղթը գրված է 1790 թվականին, մինչդեռ Գյուլտ քահանայի «Դիւանին» նայելով, նա գրված պիտի լինի 1789-ին: Ավելի մութ են երկրորդ թղթի հանգամանքները. նա իբրև թե, փոխանակված պիտի լինի առաջին թղթի հետ, մինչդեռ ասված է, թե նա գրված է 1779-ին և ուսաներից թարգմանված է 1786-ին: Այսպիսով ահա խառնակություն է ստացվում և մենք չենք կարող ասել, թե ինչ բանակցությունների հետևանք են այդ թղթերը»¹:

Նույն այս հարցին Լեոն անդրադարձավ նաև իր 1919—1920 թվականներին գրած, բայց 1946 թվականին հրատարակված «Հայոց պատմության» 3-րդ հատորում՝ վերոհիշյալ վավերագրերը դիտելով որպես մի ամբողջություն: Ըստ նրա այդ երկու նախագծերն էլ ներկայացվել են հայերի կողմից և երկուսն էլ գրվել են նույն անձանց (Ղ. Արղուսյան և Ղ. Կազարյան) կողմից: «Առանձնապես հետաքրքրական են երկու թղթեր, որոնք հասել են մեզ այդ ժամանակից և որոնք, անշուշտ, նույն երկու գործիչների հեղինակությունն են», — գրում է նա՝ նկատի առնելով մատնանշված նախագծերն ու անձանց²:

Թ. Ավդալբեգյանն էր, որ առաջին անգամ նկատեց նշված նախագծերի հետ կապված շփոթությունը: 1922 թվականին «Նորք» ամսագրում «Հայ ազատագրական շարժման երկու հոսանք 18-րդ դարի վերջում» խորագիրը կրող հոդվածում, նա դիպուկ փաստարկումներով ցույց տվեց, որ ուսական կողմին վերագրված նախագիծը ոչ ուսաներն են գրել (ինչպես վկայում է մայր աղբյուրի հեղինակը), և ոչ էլ Հովսեփ Արղուսյանն ու Հովհաննես Կազարյանը (ինչպես ենթադրել է Լեոն), այլ՝ Շ. Շահամիրյանը և նրա ընկերները:

Բանասիրական այս հաշող գյուտը հետագայում անվերապահ կերպով ընդունվեց ու ամրապնդվեց մի շարք ուսումնասիրողների կողմից:

Եվ եթե մինչ այդ՝ նշված նախագծերի մեջ գաղափարական տարբերություն չէր նկատվել, ապա այնուհետև, իրավամբ, մասնագետներն սկսեցին բարձրացնել նաև այդ հարցը: Եվ նորից առաջինը Թ. Ավդալբեգյանն էր, որ նույն հոդվածում դիտել տվեց այդ երկու նախագծերի մեջ եղած գաղափարական տարբերություններն ու հակասությունները: Թ. Ավդալբեգյանի կարծիքով իր տված նոր պարզաբանումից հետո «հայ-ուս հարաբերությունները և բանակցությունները բոլորովին նոր կերպարանք են ընդունում: Չենք տեսնում այլևս միապաղաղ ազգություն: Նկատվում են հակադիր հասարակական հոսանքներ՝ դասակարգային խրամատավորված աշխարհայացքներով...»

Առաջին վավերագիրն արտահայտում է հայ կալվածատեր դասակարգի — մելիքների, բարձր հոգևորականության ու վաճառական դասից ազնվականու-

¹ Լեոն, Յովսեփ կաթողիկոս Արղուսեան, Թիֆլիս, 1902, էջ 143—148:

² Լեոն, Հայոց պատմություն, 3, Երևան, 1946, էջ 826:

Յյան հասած «իշխանների» տենչանքները «ազնվական շոշերի իդեոլոգիայի» մարմնացումը, շոշեր, որոնց «պարագլուխն էին Հովսեփ եպիսկոպոս Արղությանն ու իշխան Հովհաննես Լազարյանը»:

Մյուս հոսանքը, որի ղեկավարն ըստ Թ. Ավդալբեգյանի հնդկահայ առաջավոր բուրժուազիան էր, ուզում էր ստեղծել «ոչ թե հայերենի ինքնակալություն, այլ Հայաստանի դեմոկրատիկ հանրապետություն»¹:

Չնայած Լեոն չէր նկատել, որ այդ երկու նախագծերի միջև կան գաղափարական խորը տարբերություններ, բայց նրա մտա ևս նման դասակարգում կար: Նա իրար էր հակադրում մի կողմից երկու նախագծերը միասին առած՝ որպես մի ամբողջություն, իսկ մյուս կողմից՝ «Յորդորակ» և «Որոգայթ փառաց» աշխատությունները:

Նրա կարծիքով ևս «հայ քաղաքական միտքը 18-րդ դարի երկրորդ կեսին պարզած ուներ երկու ծայրահեղ թևեր, որոնք մարմնացնում էին հայացքների ծայրահեղ հակադրությունը — կարմիր-հանրապետական և պահպանողական-ավատական»²:

Այս հարցին Լեոն անդրադարձավ նաև հետագայում. խոսելով հնդկահայ բուրժուազիայի առաջադիմական գործունեության մասին, նա ավելացնում է «Կար և նրա հակադրությունը — հյուսիսը... որ նույնպես... պատրաստում էր Հայաստան ազատելու իր ծրագիրը, որ Հնդկաստանի բուրժուազիայի ծրագրին չէր նմանվում և նմանվել էլ չէր կարող, քանի որ ներկայացնում էր քաղաքական բոլորովին տարբեր միջավայր: Այդ Պեաերբուրգն էր, ցարական ճորտատիրական մայրաքաղաքը»³:

Հետագայում, հատկապես Թ. Ավդալբեգյանի հոդվածից հետո, ուսուհայկական դաշնագրային այդ նախագծերի մասին խոսողները (օրինակ, Վ. Պարսամյան⁴, Հ. Ութմազյան և Վ. Հակոբյան⁵, Գ. Գրիգորյան⁶ և այլք) առանձնահատուկ ուշադրությամբ ընդգծեցին նրանց միջև նկատված գաղափարական տարբերությունները, այն բացառությամբ, ինչ տվել էր Թ. Ավդալբեգյանը (մասնակի շեղումներով):

Որ նշված նախագծերում առկա են գաղափարական և քաղաքական խորը հակասություններ, դա, ինչպես նշեցինք, անառարկելի է, սակայն, ինչ վերաբերում է այդ հակասությունների բուն հեղինակների վերաբերյալ հայտնված և ընդունված կարծիքին, ապա դա է հենց, որ կարոտ է վերանայման: Այդ հանդամանքը ցույց տալու նպատակով նախ վկայակոչենք այն փաստերը, որոնց համաձայն Հ. Արղությանը և Հ. Լազարյանը՝ ապագա Հայաստանին վերաբերող իրենց պահանջներով շեն հակադրվել Ծ. Շահամիրյանին, այլ ընդհակառակը՝ պաշտպանել են նրա ձգտումները:

¹ «Նորք», 1922, Երևան, էջ 159—160:

² Լեո, Հայոց պատմություն, 3, Երևան, 1946, էջ 834:

³ Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, առաջին մաս, դասախոսություններ, Երևան, 1926, էջ 92:

⁴ Վ. Պարսամյան, Յարիզմի դադութային քաղաքականությունը Հայաստանում, 1, Երևան, 1940, էջ 47—49:

⁵ Հ. Ութմազյան և Վ. Հակոբյան, Հայ ազատագրական գաղափարների երկու կենտրոն և երկու ծրագիր 18-րդ դարի երկրորդ կեսին (Երևանի Պետ. համալսարանի «Ուսանողների գիտական աշխատությունների ժողովածու» № 3, 1941, էջ 71—161):

⁶ Գ. Հ. Գրիգորյան, Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից, Երևան, 1957, էջ 143—146:

Հ. ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ԵՎ Հ. ԼԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՐՔԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԻ ԵՎ Շ. ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ՄՐԱԳՐԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Քննարկվող նախագծերում առկա են երկու հիմնական տարրերություններ, որոնցից մեկը վերաբերում է ազադա Հայաստանի պետության անկախության հարցին, իսկ մյուսը՝ պետական սխտեմին:

Ծանրանանք այդ հարցերի վրա առանձին-առանձին:

Ինչպես ակնարկվեց վերևում, Շ. Շահամիրյանի նախագծի համաձայն, Հայաստանը, օտար լծից ազատագրվելուց հետո, պիտի դառնար անկախ պետություն, իսկ ըստ Հ. Արղուսյանի նախագծի՝ Ռուսաստանին ենթակա-հպատակ պետություն:

Հարց է առաջանում. իրո՞ք Հ. Արղուսյանը, Հ. Լազարյանը և նրանց համախոհներն իրենք էին ցանկանում անկախ Հայաստանի փոխարեն ստեղծել հպատակ Հայաստան, թե նրանք ստիպված էին այդպես վարվելու:

Առաջին անգամ բարձրացվող այս կարևոր հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է իմանալ, թե հանուն ինչպիսի՞ Հայաստանի էին պայքարում նրանք՝ նախքան Հ. Արղուսյանի կազմած նախագիծը:

Այս առումով կարևոր նշանակություն ունի Մովսես Սառաֆյանի զեկուցագիրը:

1769 թվականին, ռուս-տաճկական պատերազմի երկրորդ տարին, Ռուսաստանում բնակվող հայ հասարակության ներկայացուցիչները, այդ թվում նաև Հովհաննես Լազարյանը, Մովսես Սառաֆյանի միջոցով ու նրա անունից, ռուսական արքունիքին են ներկայացնում 14 կետից բաղկացած մի զեկուցագիր, որի մեջ նախատեսվում էր ռուսական և հայկական զորամասերի համատեղ զործողություններով ազատագրել ողջ Հայաստանը և այնտեղ Ռուսաստանի հովանու ներքո հիմնել հայկական ինքնուրույն պետություն՝ հայ թագավորով¹:

Հովհաննես Լազարյանը Հայաստանի ազատագրության և հայկական անկախ պետության մասին նույն հույսերն էր փայփայտում նաև հետագայում: Հ. Արղուսյանի վկայությամբ «թուին 1780 յունվարի մուսն Իւան Պետրովիչ Գորիչն» այցելում է իրեն և Հովհաննես Լազարյանին՝ տեղեկություններ ստանալու համար «վասն պարսից երկրացն»: Հաջորդ օրը՝ «Յունվարի 2 ննարալ պոսոճիկ Ալէքսանդր Վասիլիչ Սուվորովն եկն առ մեզ ի տեսութիւն. և մեր ազնիւ ազայ Յովհաննէսն ընդ նմա ի վերայ նոյն նիւթոյն և ի վերայ երկրացն մերոց բազում հարցմունս արար...»: Հունվարի 3-ին Սուվորովն է իր մտկանշում Հ. Լազարյանին և Հ. Արղուսյանին. այս անգամ ավելի որոշակի է դրվում հայկական պետություն ստեղծելու հարցը. Սուվորովը գրական պատասխան է տալիս. «Եւ յոյս մեծ առեալ ի բանիցն նորին՝ խնդութեամբ ելաք և նոյն յուսովն մնամք այժմ ընկալնուլ զխոստացեալն ի ժամանակի իւրում», — գրում է Արղուսյանը: Ուշագրավ է, որ հայկական պետություն ստեղծելու նպատակով Սուվորովը կարգադրել է «Ազայ Յովհանիսին գրել ի Զուղայ էմին Աղային», այսինքն Հովսեփի էմինին, որ նա անմիջապես մեկնի իրենց մոտ²:

¹ А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945, стр. 265—277.

² «Դիւան հայոց պատմութեան», Թ, Թիֆլիս, 1911, էջ 23—24:

Հետաքրքրական է իմանալ, թե այդ ժամանակ ինչպե՞ս են պատկերացել ապագա Հայաստանի քաղաքական ստատուսը Հովհաննես Լազարյանը և Հովսեփ Արղուժյանը: Այս հարցի պատասխանը շարադրված է 1780 թվականի հունվարի 10-ին՝ նույն գործիչների կազմած այն զեկուցագրում, որը Հովհաննես Լազարյանի միջոցով ներկայացվել է Սուլտրովին: Զեկուցագրի հեղինակները գտնում են, որ Հայաստանը պիտի ազատագրվի սեփական զորամասերի միջոցով, Ռուսաստանի օժանդակությամբ: Ազատագրումից հետո ստեղծված անկախ Հայաստանը միշտ պետք է երախտագիտությամբ հիշի Ռուսաստանի փրկարար օգնությունը: Ահա հատվածաբար, այդ կարևոր վավերագրի թարգմանությունը.

«Հայաստանը մի քանի դար է ինչ գրկվել է իր թագավորից և առանձին կառավարությունից...: Բայց եթե ազգից մի որևէ գլխավոր դուրս գա, շատ հեշտ միջոցով կարող է Հայաստանը նորից վերականգնել...: Եթե ժողովրդի բնորոշյամբ կամ բարձրագույն (կայսրուհու) բարեհաճությամբ ազգից մի գլխավոր դուրս գար, առաջին անգամի համար բավական կլինեն, որ նա կարողանար հաստատվել Գերբենդում և նրան օգնություն տրվեր տիրելու Շամախուն և Քանձակին, այն ժամանակ Ղարաբաղից և Սյնախից, որոնք անկասկած կմիանան, բավականաչափ զորք հավաքելով, կարող է գալ նրեանն ու ուրիշ քաղաքները գրավել: Երա համար հարկավոր է երկու կամ երեք հազարից՝ ոչ ավելի զորք երկու տարվա բնթացքում, մինչև որ այդ գլխավորը կգրավի նրեվանը... Բայց հայոց գլխավորն սկզբում պիտի ունենա մի քիչ թնդանոթաձիգ և հետևակ զորք, որպեսզի կարողանա պաշտպանել և ապահով լինել, մինչև որ ազգային զորքը կստվորի կանոնավոր կրթություն և այնուհետև նա ինճը կարող կլինի ամբացնել իր սահմանները և պաշտպանվել թյուրքիայի և Պարսկաստանի հարձակումներից...: Երբ հայ ժողովուրդը կհամախմբվի իր կառավարության իշխանության տակ և մի քիչ էլ կտարածի իր սահմանները, այն ժամանակ կստանա ավելի մեծ եկամուտներ, քանի որ կունենա առատ բերքեր տվող շատ տեղեր և մշտապես կսպասի 15-ից մինչև 20 հազար զորք, իսկ թուրքերի կամ Պարսկաստանի դեմ պատերազմ լինելու դեպքում ժամանակով կարող կլինի գործ ածել մինչև 65.000 և ավելի: Բացի դրանից՝ նույն ազգը պարտավորվել կարող է, հարկավոր դեպքում, Ռուսաստանին տալ զորք այնքան, որքան կարող կլինի ամեն մի անգամ, և միշտ երախտապարտ կմնա Ռուսաստանին իր փրկության և վերածնման համար...»¹:

¹ Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, II. Москва, 1838, стр. 68—70.

Վավերագիրը հրատարակված է սուսերեն. մենք մեջ ենք բերում Լեոյի կատարած թարգմանությունից (I, և ս, Հայոց պատմություն, 3, Երևան, 1946, էջ 832—833: Ընդգրկումները մերն են—Ա. Մ.):

«Собрание актов»-ի նշված հատորում սույն վավերագրի հեղինակի անունը չի նշված: Լեոն, սակայն, իր աշխատության մեջ այն համարում է Հ. Լազարյանի գրչի արդյունք: Ա. Ռ. Հովհաննիսյանը հետազոտում Սուլտրովի արխիվում հայտնաբերեց այդ վավերագրի բնագիրը. «Нота господина Ивана Лазарева» խորագրով, գրված 1780 թվականի հունվարին (տե՛ս նրա «Россия и арм. освобод. движение» աշխատությունը, 1947, էջ 23):

Կարծում ենք, որ այդ զեկուցագիրը կազմվել է Հ. Լազարյանի և Հ. Արղուժյանի համատեղ ջանքերով, որովհետև նրա գրվելուց առաջ և հետո (հատկապես 1780 թվականի

Այս զեկուցագրում, ինչպես տեսնում ենք, նախատեսված է անգամ, որ Հայաստանն ազատագրող զորամասերի ղեկավարը պետք է լինի «ազգից», այսինքն ազգությամբ հայ: Զեկուցագրի շարադրումից ընդամենը 7 օր առաջ Հ. Լազարյանը, Հ. Արղուսյանը և Սուվորովը նույնիսկ ընտրել էին հայ այն զործիչին, որը իրենց կարծիքով հրամանատարն էր լինելու Հայաստանն ազատագրող զորքերի: Դա Հովսեփ Էմինն էր, որը նամակով շտապ հրավիրվում էր Ռուսաստան:

Այս և մի շարք այլ փաստեր ոչ մի հիմք չեն տալիս կարծելու, որ իբր թե Հ. Լազարյանը և Հ. Արղուսյանը չեն ձգտել ստեղծելու անկախ հայկական պետություն, կամ հակառակորդ լինելով այդ կարգի իղձերի, ցանկացել են Հայաստանը դարձնել սոսկ Ռուսաստանից կախյալ մի մարզ:

Հորց է առաջանում. հապա ինչո՞ւ 1783 թվականին նրանք կաղմեցին այնպիսի նախագիծ, որտեղ դեմ դուրս եկան և՛ իրենց, և՛ Հայաստանի ազատագրման համար պայքարող մյուս զործիչների ցանկություններին:

Այս հարցի պատասխանը գտնում ենք Հ. Արղուսյանի մի նամակում, նրա նախագիծում, ինչպես և այլ վավերագրերում:

Ակնարկված նամակը գրված է 1786 թվականին և ուղղված է Շ. Շահամիրյանին: Այնտեղ ասված է, որ 1783 թվականին, երբ ռուսական կողմը պահանջեց դաշինք կնքել, այդ նպատակով, որպես հայկական կողմի լիազոր, խորհրդակցությունը ներկայացավ Հ. Լազարյանը՝ նպատակ ունենալով պաշտպանել Շ. Շահամիրյանի պահանջները, որոնք սակայն մերժվեցին:

«...Երբ սոքա (իմա ռուսները) հրարորոք ջերմեռանդութեամբ լցեալ ի խորհուրդ զմեզ հրաիրէին սուրհանդակաւ, մեք զազնիւ ազայ Յովհաննէան Եղիազարեան յառաջադրէլցլաք, զի լիցի ի մէջ խորհրդոյն ի դիմաց բոլոր հասարակութեանն հայոց: Ըստ որում, գրեցելոցդ մտաց զօրութիւնն նա զիտէր, և կարո՞ղ էր զբաղցանս Բոյ լցուցանել. նոքա տեղի ոչ ետուն մուծանել զնա ի խորհուրդս: Եւ մինչ մեք զՖանի գլուխս դաշանց յառաջադրութիւնս աբարաք և բարժմանե[ա]լ ետուք ի ցուցս, այժմ պատասխանեցին, թէ թագաւորք ընդ թագաւորաց կարեն դնել զդաշինս. ազգի ձերում ո՞վ է թագաւորն, որն համարձակիցի զդաշինս խնդրել...»¹:

Հետաքրքրական է իմանալ, թե Հ. Լազարյանն ինչ էր ներկայացրել խորհրդակցության մասնակիցներին: Նամակում այդ մասին միայն մի ակնարկ կա. «նոքա տեղի ոչ ետուն մուծանել զնա ի խորհուրդս»: Կնշանակի, Հ. Լազարյանը ձեռքին ունեցել է ինչ-որ ծրագիր, նախագիծ, որը սակայն չի մուծվել ի խորհուրդս», մերժվել է: Այդ ծրագիր-նախագիծը բովանդակություն մասին էլ կա որոշ ակնարկ, որից երևում է, թե այն եղել է Շ. Շահամիրյանի բաղձանք

հունվարին) նրանք միասին էին մտածում ու խորհրդակցում այն հարցի մասին, որին նվիրված է զեկուցագիրը: Ուշադրով է, որ զեկուցագրի մի օրինակը պահպանվում է Հ. Արղուսյանի թղթերում (տե՛ս Մատենադարանի արխիվ, Լազարյանների ֆոնդ, թղթապանակ 109, գործ 22, թերթ 63—64):

Մ. Ներսիսյանը ելնելով այդ փաստից, գրում է. «Это обстоятельство говорит о том, что Аргутинский, если не принимал участие в составлении этой записки, то, по крайней мере, знал о нем» (М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, I, Ереван, 1956, стр. 55).

¹ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 2699, թերթ՝ 102ա:

լցնուլ մի վավերագիր: Ակնարկ կա նաև այն մասին, թե ինչու է մերժվել այն: Հ. ԱրղուՅյանը հայտնում է, որ Շ. Շահամիրյանի բաղձանքների մերժումից հետո, ինքն է կազմել նոր նախագիծ և ներկայացրել քննության: Ուստի, ծագած հարցի տրամաբանական պատասխանը պարզ է. ուսական կողմը ծանոթացել է Հ. Լազարյանի ներկայացրած դաշնագրի նախագծի բովանդակության հետ, անընդունելի է համարել այն, թելադրել է իր կամքը և Հ. Լազարյանին պատվիրել, որ հայերը հաշորդ անգամ ներկայանան ուրիշ նախագծով:

Նման պարագաներում հարցն ինքնին պարզ է դառնում, երբ նկատի ենք առնում Շ. Շահամիրյանի և Հ. ԱրղուՅյանի նախագծերի բովանդակության հիմնական հարցերը: Այդ նախագծերից առաջինում ազատագրվելիք Հայաստանը պատկերված է որպես անկախ և ինքնուրույն պետություն, իսկ մյուսում՝ հաշվի են առնված ցարիզմի քաղաքական ու տնտեսական պահանջները: Համոզվելու համար կանգ առնենք Հ. ԱրղուՅյանի նախագծի մի քանի կետերի վրա:

Այդ նախագծի Դ կետի համաձայն հայ-ուսական կնքվող դաշինքը լինելու էր «հավիտենական»: Հայաստանը միշտ պիտի համարվեր Ռուսաստանի հպատակը: Դա ուղղակի կերպով ասված է նախագծի Զ կետում — հայերի կողմից.

«Հպատակութիւն մեր այնպէս եղիցի, որպէս լինիւր երբեմն Յունաց և Պարսից, տալով ի յարբունիս հարկացն և ի հանքաց, ոսկւոյ և արծաթոյ, և ի ժամանակի պատերազմի յօգնութիւն միմեանց հասանեն որքան և հարկն պահանջեսցէ»:

Այսինքն, Հայաստանը թուրք-պարսկական լուծը թոթափելուց հետո, պիտի հպատակվեր Ռուսաստանին այնպես, ինչպես առաջ Բյուզանդիային և Պարսկաստանին է հպատակվել, տալով համապատասխան հարկեր և ունենալով որոշակի պարտավորութիւններ:

Ն կետի համաձայն, հայկական թագավորի ժառանգներից մեկը միշտ պիտի գտնվեր ցարական արքունիքում որպես պատանդ. «Ի ժառանգաց թագաւորութեանն մինն զնիցի ի դրունս կայսեր»:

Ուշագրավ է նաև է կետը, որի համաձայն հայկական թագավորը միշտ պիտի բնակվեր ուսական արքունիքի կողմից և ազգությամբ կարող էր լինել կամ ուս կամ հայ:

Հասկանալի է, որ նման պայմաններում ոչ մի խոսք չէր կարող լինել ապագա Հայաստանի ինքնուրույնության և անկախության մասին:

Ցարական պաշտոնյաները բնականաբար, պիտի ցանկանային, որ հպատակ Հայաստանում ևս հաստատվին ճորտատիրական կարգեր՝ Ռուսաստանի օրինակով: Հ. ԱրղուՅյանի նախագծից երևում է, որ, իրոք, Ռուսական կողմը առաջադրել է նաև այդպիսի պահանջ, որը սակայն վերջիններիս կողմից, հանգամանալից պատճառաբանությամբ, մերժվել է:

Խոսքը վերաբերում է նախագծի ԺՆ կետին, ուր ասված է.

«Ի նորոգել իշխանութեան մերոյ մի՛ լինիցին ծառայք իշխանաց (ստրուկք), որք կարիցեն զմի մի վաճառել ի նոցանէ...»:

Հ. ԱրղուՅյանը նպատակահարմար է գտել նախագծի սույն կետի վերջում տալ այսպիսի ուշագրավ բացատրություն: Հույները, — ասված է այնտեղ, — նվաճեցին Հայաստանը և կամեցան ծառա (իմա՝ ճորտ) դարձնել հայերին, բայց հայերը գերադասեցին մտնել Բաղդադի խալիֆի իշխանության տակ,

որպեսզի հորտ չդառնան: «Յոյնք յորժամ տիրեցին մեզ զկնի անկման թագաւորութեան Արշակունեաց՝ կամեցան զմեզ սեփական ծառայ իշխանաց իւրեանց առնել. ուստի ազգ մեր ոչ հաճեցաւ առ նոսա, այլ մտին ընդ իշխանութեամբ Բաղդասաու ետլֆաչին, զի ազատ մնասցեն»¹:

Միանգամայն հասկանալի ձևով այստեղ զգուշացվում է ուսական կողմին՝ այն վտանգը, որ կարող էր առաջանալ Հայաստանում ճորտություն հաստատելու դեպքում: Եթե ճորտությունից խուսափելու համար քրիստոնյա հույների իշխանությունից հայերը դուրս են եկել և մտել մահմեդական խալիֆի հովանու տակ՝ ապա չի բացառվում, որ նման բան կարող է տեղի ունենալ նաև առաջիկայում, զգուշորեն ցանկացել է ասել Արղությանը:

Կարելի է ուշադրություն դարձնել Հ. Արղությանի նախազօծի նաև այլ կետերի վրա, սակայն բավարարվենք այսբանով:

Նշենք միայն, որ նույնիսկ 1786 թվականին, երբ արդեն մերժված էր Հ. Արղությանի նախազօծն էլ, նա Հայաստանի մասին մտածելիս, նորից արժարժում էր նրա ինքնուրույնության գաղափարը: Շ. Շահամիրյանին ուղղված վերոհիշյալ (1786) նամակում, նա հեղնելով էջմիածնի կաթողիկոսին և նրա համախոհներին, գրում է, որ նրանք ուսաներից «միայն հայցեն, թէ զմեզ փրկեցէք», շմտածելով սեփական նախաձեռնության մասին: Նրանք չեն հասկանում, որ «երբ փրկեն սրով, ըստ օրինի բագուուաց, հարկաւորին ծառայ առնել իւրեանց»²:

Անշուշտ, այս միտքը հավասարապես պատկանում էր նաև Հ. Լազարյանին, որովհետև այդ ոգով է գրված նրանց 1780 թվականի ղեկուցագիրը:

Այսպիսով, մենք կարող ենք ավարտված համարել դաշնագրային նախազօծերի զլիսավոր երկու խնդիրներից մեկին՝ ապագա Հայաստանի քաղաքական ստատուտին վերաբերող հարցի բնութիւնը: Իրենց ղեկուցագրի մեջ Հ. Լազարյանը և Հ. Արղությանը այս հարցում պաշտպանել են նույն այն տեսակետը, ինչ Շ. Շահամիրյանը՝ իր նախազօծում: Ուստի, սխալ կլիներ այս խնդրում դատել Հ. Լազարյանին, Հ. Արղությանին՝ իրենց համախոհներով և հակադրել նրանց՝ Շ. Շահամիրյանին ու նրա համախոհներին:

Այժմ անդրադառնանք երկրորդ հարցին:

Ինչպիսի՞ հասարակական ու սոցիալական կարգեր պիտի հաստատվեն ազատագրվելիք Հայաստանում:

Դաշնագրի երկու նախազօծերում այս հարցի շարժը արժարժված են միանգամայն տարբեր տեսակետներ: Շահամիրյանի նախազօծի համաձայն, ապագա ինքնուրույն, անկախ Հայաստանում պիտի հաստատվեն բուրժուա-գեմոկրատական կարգեր, երկիրը պիտի ղեկավարվեր ընտրովի նախարարության կողմից: Հ. Արղությանի նախազօծի համաձայն՝ Ռուսաստանին ենթակա, ինքնուրույնությունից դուրկ Հայաստանում պիտի հաստատվեն միապետական կարգեր՝ Ռուսաստանի կողմից նշանակվող թագավորի ղլխավորությամբ:

¹ Է. Ե. Ո, Հայոց պատմություն, 3, Երևան, 1946, էջ 828: Այս կետը կարծես Շ. Շահամիրյանի «Նշաւակ»-ի մեջ գտնվող հայ-ուսական դաշնագրի 6-րդ կետի ընդարձակ շարադրությունը լինի. «Զ-երրորդ. Ի յազգէ մերմէ մի լինիցի ծառայ, այլ միաբան ազատ» («Տեարակ որ կոչի նշաւակ», Մաղբաս, 1783, էջ 57):

² Պետ. Մատենադարան, ձեռագիր № 2699, թերթ 102ա, ժամանակ՝ 1786:

Մինչև օրս այնպես է բացատրված, որ դա, իբր արդյունք է նախագծերի հեղինակների տարբեր մտածելակերպի, փաստերը, սակայն, այստեղ ևս այլ բան են ցույց տալիս: Հ. ԱրղուՅյանի վերոհիշյալ (1786) նամակում խոսված է նաև այդ մասին: Պատասխանելով Շ. Շահամիրյանին, Հ. ԱրղուՅյանը գրում է.

«Իսկ դոր ինչ պատկանի առ շրջահայեաց խոհեմագոյն և երկայնամիտ խորհուրդն Ձեր, զոր գրէք մեզ՝ զգուշ լինել ի դաշնագրութեան, շինել իշխանութիւն մեր ի ձեռս ծերակուտից՝ որպէս երջանիկ կողմանցն երոպիացոց, առ այդ զի՛նչ պատասխանեմ որպէ՛ս ազնուութեան Ձերոյ, նման[ա]յլէս և մերս նուաստութեան. ոչ եթէ ձեռնս միայն սառի, այլև սիրտս. բոլոր անձն իմ սարսափումն կալնու: Բայց զայդմանէ շի՛ք որ խորհող և մտածող ազգի մերում. ըստ որում անձանօթ է նոցա իրն զօրութեան և բարութիւնն, որ ծածկեալ կայ ի ծերակուտական իշխանութեան»¹:

Այսինքն, Հ. ԱրղուՅյանը սաստիկ վշտացած է, որովհետև իր շրջապատում և Հայաստանում շկան Շ. Շահամիրյանի նման մտածողներ: Ոչ ոք չի ըմբռնում այն ուժն ու առավելությունները, որոնցով օժտված են ծերակուտական կարգերը: ԱրղուՅյանը հեզնում է էջմիածնականներին, որոնք լոկ ազատվելու մասին են մտածում, հաշվի չառնելով ոչ այդ ազատագրման եղանակները (հայերի զործունյա մասնակցութեամբ) և ոչ էլ ապագա Հայաստանում ստեղծվելիք կարգերը:

Այնուհետև նա գրում է, թե ինքը 1783 թվականին դաշնագիր կնքելու նպատակով լիազորել էր Հ. Լազարյանին, որպեսզի նա ներկայացներ ուսաներին Շ. Շահամիրյանի ծրագիրը, սակայն ուսական կողմը մերժել է այդ պահանջները և այլն (տե՛ս վերևում):

Այսպիսով, պետք է եզրակացնել, որ Հ. ԱրղուՅյանն ու Հ. Լազարյանը համամիտ են եղել Շահամիրյանին նաև ապագա Հայաստանի կառավարման «ծերակուտական» կարգերի խնդրում:

Ռուսական արքունիքը, սակայն, մերժել է դաշնագրի ինչպես առաջին (Շ. Շահամիրյանի), աճյալիս էլ երկրորդ (Հ. ԱրղուՅյանի) նախագծերը: Այդ նախագծերի մերժումից հետո, վշտացած և ելք որոնող Հ. ԱրղուՅյանը հորդորում է Շ. Շահամիրյանին՝ նամակագրական կապ պահպանել Պոտյոմկինի հետ, համոզել ու կաշառել նրան, որպեսզի հայ ժողովրդի համար երջանկություն բերող նրա (Շ. Շահամիրյանի) բաղձանքներն իրագործվեն:

«Այլ անդէն դարձուցանիմ զբանս իմ ի պատասխանիս ազնուութեան Ձերոյ, զի եթէ վեհագոյն խորհուրդն այն գրէիր ինքնակալին մերոյ պայծառափայլ քեհաղ Գրիգոր Ալէքսանդրիչ Պօտեմկինին, որպէս յառաջ գրած եմ քեզ, շատ մեծ բարեբարութիւն առնէր բոլոր ազգի քում...»: Դու կարող ես նամակդ ուղարկել մեզ, գրում է նա, իսկ մենք «որպէս և գրեալ իցես»՝ համեմատ այնմ լցուցուք և ինքնին զնացեալ ի կայսերական դուռն՝ մատուցուք»:

Այստեղ ևս փաստերը, ինչպես տեսնում ենք (և դեռ կտեսնենք), խոսում են այն մասին, որ ո՛չ Հ. Լազարյանը և ո՛չ էլ Հ. ԱրղուՅյանը դեմ չեն արտահայտվել Շ. Շահամիրյանի նախատեսած «ծերակուտական» կարգերին: Բանակցությունների ժամանակ նրանք նույնիսկ պաշտպանել են այդ նույն տե-

¹ Պետ. Մատենադարան, ձեռագիր, № 2699, թերթ՝ 102ա:

սակետը: Հետևապես բոլորովին հիմք չկա քննարկվող նախագծերում առկա հակասությունները բացատրել հասարակական իրարամերժ ու խրամատափորված այնպիսի հոսանքների առկայությամբ, որոնցից մեկի պարագլուխներն էին իբր թե Հ. Լազարյանն ու Հ. Արղուսյանը, իսկ մյուսինը՝ Շ. Շահամիրյանը:

Հ. ԼԱԶԱՐՅԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՔՆՆՈՒԹՅԱՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ
Շ. ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Իրոք, խիստ ուշագրավ երևույթ է բացվում մեր առաջ. Հ. Արղուսյանը և Հ. Լազարյանը ոչ միայն չեն պայքարել Շ. Շահամիրյանի նախագծի դեմ, այլև ընդունել են այն և բանակցությունների ժամանակ, սկզբից հենց այդ ոգով էլ ներկայացել են ցարական կողմին:

Ավելին, կարծում ենք, որ Հ. Լազարյանը առաջին անգամ ուսական արևունիքին ներկայացրել է ոչ այլ ինչ, քան հենց այն նախագիծը, որը գրվել է Շ. Շահամիրյանի կողմից:

Որպեսզի կարողանանք համոզվել այս բանում, հարկ կլինի նախ ցույց տալ, որ ա) Շ. Շահամիրյանի նախագիծը գրվել է 1783 թվականից առաջ և 1783 թվականին գտնվել է Հ. Լազարյանի ձեռքին, հետևապես այն կազմվել է անկախ 1783 թվականին հրավիրված դաշնագրային հանձնախմբի նիստերից: Եվ ապա բ) Շ. Շահամիրյանի նախագիծը թարգմանված է եղել ուսերեն, որպեսզի ներկայացվի քննության: Եվ իրոք այդ նախագիծը ներկայացվել է քննության: Վերջնենք առաջին հարցը:

Բարեբախտաբար Շահամիրյանի նախագծի գրության տարեթիվը հնարավոր է լինում պարզել առանց դժվարության: Այդ նախագծի մեղ հասած 3 ընդօրինակություններից երկուսի վերջում որոշակի ասված է, որ այն գրվել է «յամի տեան 1779»¹:

Բ. Ավդալբեգյանը չի կասկածել այդ թվականի (1779) վրա: Նա գրում է. «Նրկրորդ վավերագիրը գրված է 1779 թվին»²: Հետագայում, այդ հարցով պրազվողներից մի քանիսը փորձեցին վերանայել երկրորդ նախագծի ստեղծման ժամանակի հարցը, սակայն նրանցից և ոչ մեկը պատշաճորեն չհիմնավորեց (և չէր կարող հիմնավորել) իր կարծիքը:

Շ. Շահամիրյանը չէր կարող 1783 թվականի դեպքերի կապակցությամբ նախագիծ գրել, թեկուզ և այն պատճառով, որ այն ժամանակներում նամակը Ռուսաստանից Հնդկաստան էր հասնում մոտ մեկ տարվա ընթացքում, և մեկ տարի էլ պետք էր նրա պատասխանը ստանալու համար: «Թղթոց մերոց երթևեկութիւնն առ միմեանս երկու ամն հազիւ հասանի» գրում է Հ. Արղուսյանը՝ Հնդկաստանում գտնվող Ստեփանոս նվիրակին³: Այդ ևն ցույց տալիս նաև նամակագրական կոնկրետ կապերը: Հետևապես, և թե Շ. Շահամիրյանը Հ. Ար-

¹ Երրորդ ընդօրինակության մեջ 1779-ի փոխարեն գրված է «1777»: Այս տարբերությունը մեզ համար այժմ էական նշանակություն չունի, որովհետև երկու դեպքում էլ դորժ ունենք այնպիսի ավյալների հետ, որոնք ցույց են տալիս, թե Շ. Շահամիրյանի նախագիծը գրվել է 1783 թվականից առաջ: Բացի դրանից, ինչպես տեսանք, այդ երեք ընդօրինակություններն էլ ծագել են մի մայր աղբյուրից, հետևապես եղած տարբերություններից (մեր կարծիքով «1777»-ը) գրչական վրիպակի արդյունք է:

² Տես նշված աղբյուրը, էջ 158 (տողատակ):

³ «Իրան հայոց պատմութեան», Թ, Թիֆլիս, 1811, էջ 101:

դուքյանի համապատասխան նամակը՝ գրված 1783 թվականին ստանար 1784-ին, սպա նրա պատասխանը կհասնեն 2. Արդուքյանին 1785 թվականին՝ Մինչդեռ այդպես չի եղել: Արդուքյանի վերոհիշյալ նամակից տեղեկանում ենք, որ, իրոք, նա 1783 թվականին գրել է նման նամակ Շահամիրյանին, վերջինս էլ, սակայն, նրան ուղարկել է ոչ թե նախագիծ, այլ պատասխան նամակ:

Դա որոշակի կերպով երևում է նույն 1786 թվականի նամակից, ուր Արդուքյանը գրում է.

«Գրեք մեզ զգուշ լինել ի դաշնադրութեան. շինել իշխանութիւն մեր ի ձեռս ծերակուտից»: Արդ, Շահամիրյանի «ծերակուտական» հայացքների մասին երբ էին լսել և որտեղից էին ծանոթ 2. Լազարյանն ու 2. Արդուքյանը: Պարզվում է, որ այդ մասին նրանք վաղուց են իմացել՝ ստացած լինելով Շահամիրյանի հատուկ թղթերը: Այդ նամակում (1786) 2. Արդուքյանը նշում է, թե զրանից 3 տարի առաջ, 1783 թվականին, երբ դաշնագիր կնքելու հարցը առաջին անգամ դրվել է քննության, 2. Լազարյանը այնտեղ է ներկայացել Ե. Շահամիրյանի պահանջները կատարելու պատրաստակամութեամբ. «զրեցնելով մտաց զօրութիւն (այսինքն «ծերակուտության» մասին) նա դիտէր և կարող էր զբաղցանս քոյ լցուցանել»: Այստեղից բոլորովին պարզ է, որ Շահամիրյանի նախագծի կետերը հայտնի են եղել 2. Արդուքյանին ու 2. Լազարյանին 1783 թվականից առաջ, անկախ այդ թվականին դաշնագիր կնքելու խնդրով դումարված նիստերից:

Որ այդ վավերագիրն ստեղծվել է 1783-ից առաջ՝ երևում է նաև Ե. Շահամիրյանի առաջարկից՝ իր ծրագիրը հայկական միջավայրում քննելու և ընդունվելուց հետո հրատարակելու մասին. «Արդ եթէ հաճոյ թուեսցի կամաց Հայրապետին և իշխանաց և տանուտէրանց հայոց՝ յայսմանէ տպեսցի 200 հատ», — գրել է նա: Խոսք անգամ չկա այդ նախագիծը ռուսական կողմին շտապ ներկայացնելու մասին: Ըստ որում, առաջարկվող քննությանը պիտի մասնակցեն կաթողիկոսը, իշխանները, տանուտեղները: Այդպիսի համահայկական քննության արդյունքներն էլ պարզ է, որ հայտնի կդառնային առնվազն մի տարուց հետո: Արդ, մի թե նման առաջարկ կարող էր արվել 1786 թվականին, երբ զրանից 3 տարի առաջ արդեն մերժվել էին Ե. Շահամիրյանի ծրագրի հիմնական կետերը: Ուստի հասկանալի է, որ Ե. Շահամիրյանի այդ նախագիծը գրված է եղել ոչ թե ցարական կողմին անմիջապես ներկայացնելու նպատակով, այլ հայ ժողովրդի մեջ այդ ուղղութեամբ համապատասխան նախապատրաստական աշխատանք տարած լինելու դիտավորութեամբ:

Հարց է առաջանում. արդյոք 1783 թվականից առաջ Ե. Շահամիրյանն արդեն արևելահայության հետ սկսել էր խոսել իր «ծերակուտական» ծրագրի մասին:

Փաստերը ցույց են տալիս, որ այո: Դեռևս 1773 թվականին հրատարակված «Յորդորակ»-ի մեջ համապատասխան ակնարկ արդեն արված էր: Ավելի բացահայտ ձևով Շահամիրյանն ու իր կուսակիցները «ծերակուտության» մասին գրեցին Սիմեոն կաթողիկոսին 1773—74 թվականներին: Այդ մասին տեղեկանում ենք Սիմեոն կաթողիկոսի պատասխանի համառոտագրությունից, ուր ասված է, թե հնդկահայ զործիչները՝ «Նախ պաղատէին կամակից լինիլ ինքեանց...: Եւ թուղթ գրել առ կայսերուհին ռուսաց, և զօրինակ թղթոյն ևս գրեալ էին, թէ այսո՛ւ օրինակաւ պարտիս գրել...: Եւ ըստ երոպացւոցն զկանոն և

զսահման դնել ազգիս՝ թարգմանեցուցանելով ի նոցունց, վասն աշխարհավարութեան և զինուորութեան արհեստի և կարգադրութեան դատարանաց և այլոց: Եւ նախարար մի կացուցանել բոլոր ազգիս, որ թարց խորհրդոյ ծերակուտին և աւելի կամ սլակաս քան զսահմանն թէ արասցէ ինչ՝ կորուսցէ զզուլս իւր: Եւ այն նախարարն ժամանակաւոր լիցի, և ի միւս ամիսն՝ ուրիշ նախարար կացուցի: Ուսուցանէին ի վերայ այսց և զկերպ ի հաւան ածելոյ զբոլոր ազգս, ընտրել յամենայն դաւառաց զԲԲ արս խոհեմս, որք ի Ղարաբաղ առ Մելիքսն երթեալք՝ տացին նոցա զընդունելութիւնս իւրեանց, և ընդունելին նոցա՝ բոլոր դաւառացն լիցին ընդունելիք: Եւ բազում այսպիսի բանք...»¹:

Հասկանալի է, որ այդ ժամանակ և հաջորդ տարիներին Շ. Շահամիրյանը իր մերձավորների հետ միասին առավել համարձակ ու ազատորեն նման հարցերով պիտի զիմեին Հ. Լազարյանին և Հ. Արղությանին: Ուստի և միանգամայն հասկանալի է, որ 1783 թվականից առաջ Հ. Լազարյանի ձեռքի տակ անտարակույս եղել են Շ. Շահամիրյանի ծրագրերը ապագա Հայաստանի կառավարման սիստեմի մասին:

Այժմ անդրադառնանք մյուս հարցին. թարգմանվե՞լ է արդյոք այդ նախագիծը ուսերեն և ներկայացվե՞լ է քննության:

Նախագծի վերջում այդ մասին կա հետևյալ նշումը.

«Թարգմանեաց դաշանց բանս ի դաշանց մատենէ՝ ուսաց 1786 ամի ի Պետերբուրգ Եղիազար Շամիրեան նոր-Ջուղայեցի»²:

Այդ նախագծի նորահայտ ընդօրինակության մեջ, որի մասին խոսվեց վերևում, սույն նշումն ունի հետևյալ ձևակերպումը.

«Գրեցաւ դաշնագիրս յամի տեառն 1777 և թարգմանեցաւ ի դաշանց մատենէն ուսաց յամի տեառն 1785 ի Ս. Պ. Բուրգ, ձեռամբ նոր-Ջուղայեցի Եղիազարու Շամիրեան»³:

Այստեղ որոշակի կերպով ասված է, որ այդ վավերագիրը ոչ թե ընդօրինակված է Շ. Շահամիրյանի գրած հայերեն օրինակից, այլ թարգմանված է ուսերենից: Ինքը՝ Շ. Շահամիրյանն ուսերեն չգիտեր և գրում էր հայերեն. կնշանակի նրա նախագիծը հետո է թարգմանվել ուսերեն, որից էլ՝ կրկին հայերեն:

Այն վկայությունը, որի համաձայն այդ վավերագրի հիմքը գտնվելիս է եղել ուսական արխիվներում և հայերենի է թարգմանվել «ի դաշանց մատենէն ուսաց», վկայում է նրա քննարկման ներկայացված լինելու մասին: Վերհիշելով նաև այն տվյալը, ըստ որի Հ. Լազարյանը դաշնագրի հարցը քննարկող խորհրդին է ներկայացել Շ. Շահամիրյանի բաղձանքներն ի կատար ածելու մտադրությամբ, այլևս կասկած չենք ունենում՝ համոզվելու, որ Շ. Շահամիրյանի նախագիծը Հ. Լազարյանի ձեռքով ներկայացվել է քննարկման և մերժվելով մնացել է ուսական ինչ-որ «դաշանց մատյանում»: Անտարակույս դաշնագրի այդ նախագիծը հայերենից ուսերեն է թարգմանել Հ. Լազարյանը կամ թարգմանվել է նրա և Հ. Արղությանի հանձնարարությամբ՝ ուրիշի կողմից: Իսկ այն նշումը, որի համաձայն այդ նախագիծը 1786 թվականին նորից հայերեն է թարգմանվել, ինքնին վկայում է, որ այդ ժամանակ արդեն այն հետա-

¹ «Դիւան հայոց պատմութեան», Է, Թիֆլիս, 1908, էջ 575:

² Լ և ռ, Հայոց պատմություն, 3, Երևան, 1946, էջ 830:

³ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, կաթող. զիվան, թղթ. 5, վավ. 55:

բերություն էր ներկայացնում որպես արժեքավոր, բայց հնացած մի փաստաթուղթ:

Հ. ԱՐՂՈՒԹՅԱՆԸ, Հ. ԼԱԶԱՐՅԱՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱԽՈՇՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՆԷԼ ԵՆ ՆԱԵՎ «ՅՈՐԴՈՐԱԿ» ՈՒ «ՈՐՈՂԱՅԹ ՓԱՌԱՑ» ԳՐԳԵՐԸ

Մեր առաջ ինքնարերարար բարձրանում է մի ուրիշ հարց: Եթե Հ. Լազարյանը, Հ. Արղուիսյանը և նրանց համախոհները պաշտպանել են Շ. Շահամիրյանի նախադիժը, ապա, բնականաբար, նրանք պիտի պաշտպանեին նաև «Յորդորակ» և «Որողայթ փառաց» գրքերը, որոնց մեջ խտացված էին Շ. Շահամիրյանի և նրա գինակիցների ծրագրերը՝ ապագա Հայաստանի մասին: Այդ մասին էլ կան բավարար վկայություններ:

Ուշադրության արժանի են, օրինակ, վերևում նշված 1786 թ. նամակի աջ տողերը, ուր Հ. Արղուիսյանը խոսում է «Յորդորակ» գրքի մասին: Գիտենք, որ Շ. Շահամիրյանի և նրա համախոհների քաղաքական ծրագրի առաջին խոշոր արտահայտությունը եղավ այդ աշխատությունը: Դա այն գիրքն էր, որ Միմենոն կաթողիկոսը հրամայեց այրել, իսկ նրա հեղինակին՝ բանադրել: Հովսեփ Արղուիսյանն ու Հովհաննես Լազարյանը սակայն, ջերմորեն ընդունել են այդ ուշադրավ գիրքը, հորդորել են Պատյամկիսին թարգմանել տալ այն ու տպագրել սուսերեն և հայերեն լեզուներով: Ահա թե ինչ է գրում այդ մասին Հ. Արղուիսյանը Շ. Շահամիրյանին.

«Ի Ձէնչ զարդարեցեալ և տպեցեալ «Յորդորակն» յառաջին հատոր, զորմէ մեր և ազնիւ ազայ Յովհաննէս Եղիազարեանն պատմեալ էաք պայժառափայլ բնեալ Գրիգոր Ալէքսանտրովիչ Պոտեմքինն ընդ այլ ազգաց օգուտ ջանիցն Ձերոց և կամեցողութեանց, նա ալժմ հրամայեալ է, զի զայն որդորական տետրակն թարգմանեսցեն ի բարբառ ուստաց: Վարդան անուն ոմն թարգմանէ. ի Երևանայ եկեալ յիշեալ պարոն Ստեփանն, յամս երկուս որ զոչով աստ, հրմտացեալ լեզուի սոցայ թարգմանութեան սղալանքն ուղղէ: Դեռ անկատար է. խօստացեալ է բնեազն յետ կատարմանն տպել հայերէն և ուստերէն: Եթէ ի կատար հասուցեն՝ գրեցից ազնուոյդ...»¹:

«Յորդորակ»-ի կապակցությամբ արժանի են հիշատակության նաև Աղազար Նազարեթի (Լազարյան) 1777 թվականին գրած հետևյալ տողերը՝ ուղղված Շ. Շահամիրյանին. «Երանի թէ հաջողեսցի երբեք մեր ազգին այնպիսի բարեբախտութիւն և վիճակ, յորում զերծեալ ազատեցին ի վեհերոտեալ թմրութենէ ծուլութեան իւրեանց և յտան կացցեն ի սիրտ երկրի իւրեանց և ի ազատութեան... Նախ պարտ է ազգին մերոյ, մանաւանդ ի Սղնաղ և ի Ղարաբաղ եղելոցն, ունիլ լուսաւորութիւն մտաց, և թողեալ զսնտի ունայնահաւատութիւն իւրեանց և դոռոզութիւն, կրթեալ և վաստակեալ ի մրցմունս զխտութեան, պատմութեան և աշխարհածանօթութեան, և լինել հասու մտօք այնմ նիւթոյ և բանից, զորոց հառէ բարեյիշատակ որդին քոյ Յակոբ ընդ դաստիարակն իւրոյ հանճարամիտ Մովսէսի (խոսքը «Յորդորակ»-ի մասին է)»²:

¹ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 2699, թերթ՝ 104ր, ժամանակ՝ 1786:

² «Տեղեկագիր», 1956, № 6, էջ 126:

Հ. Արղուիսյանի նամակներից մեկում, որն ուղղված է Հնդկաստանում գտնվող Տեր Ստեփաննոս նվիրակին և գրված է 1786 թ. հոկտեմբերի 10-ին, կարդում ենք. «Դեսպա-

Դա նույնպես ցույց է տալիս, որ այն ժամանակ առհասարակ Լազարյաններն ու նրանց մոտ կանգնած մարդիկ բացասական վերաբերմամբ չեն ունեցել դեպի հնդկահայ գործիչները և նրանց «Յորդորակ»-ը: Նույն նամակում Աղազար Նազարեթը Շ. Շահամիրյանին դիմում է այսպիսի տողերով.

«Վերջապէս այլ դի՛նչ ևս ասացից ամենասիրելի իմոյ բարեկամիտ, զի զոր էոյ է հայցուած և սէր, այն և մեր իսկ է ցանկութիւն և հոգոյ տառապանք, միայն թէ աստուած ինքն յաջողեսցէ, կամ բարեբախտ ուրուր հանդիպմամբ, կամ ազգի հետևողութեամբ և արիութեամբ, յորոց մի և դու ճանաչես օրհնելոյ ի յազգս մեր, վասնորոյ արժան է ոչ միայն զ՛եզ գովել, այլև յաղօքս յառնել վասն էոյ, զի սիրովն քոյ և յօրդորանօք արք բազումք բոբբոքեցին, և ի նոյն զմիմեանս յորդորեսցեն առ ի փրկութեան յանուրց հայկազեանցս, ամէն»¹:

Հնդկահայ գործիչների քաղաքական գրականութեան գլուխ գործոցը, ինչպես հանրահայտ է, հանդիսացավ Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ը: Եվ այն բոլոր գաղափարները, որոնք առկայծում էին «Յորդորակ»-ում, նրաներկայացրած դաշնագրային նախագծում, նամակներում, իրենց լրիվ ու սերճախոս արտահայտություններ գտան այդ երկհատոր ստեղծագործության մեջ: Ուշագրավ է իմանալ, ի՞նչ դիրք բռնեցին այդ գրքի նկատմամբ Հ. Արղուսթյանը և Ռուսաստանում գտնվող ուրիշ հայ գործիչներ:

1787 թվականին Շ. Շահամիրյանը ընդօրինակել է տալիս «Որոգայթ փառաց»-ի 3 օրինակ և ուղարկում մեկը՝ Դուկաս կաթողիկոսին, մեկը՝ վրաց Հերակլ II թագավորին, իսկ երրորդը՝ Հովսեփ Արղուսթյանին: Առաջինի ճակատագիրը մեզ անհայտ է, ինչ վերաբերում է վերջին երկուսին, ապա գրանք 1788 թվականին հասնում են Հ. Արղուսթյանին: Չնայած նրան պատվիրված է լինում այդ ձեռագրերից մեկն ուղարկել Հերակլին, բայց նա ծանոթանալով «Որոգայթ»-ի բովանդակության հետ, այնքան բարձր է գնահատում այն, որ այդ օրինակը տալիս է Աստրախանում ընդօրինակելու և միայն ընդօրինակությունն է ուղարկում Վրաստան: «Առ պարոն Փիլիպպոսն» գրված նամակում 1788 թվականի նոյեմբերի 28-ին Հ. Արղուսթյանն ասում է. «Ընդ պարոն Բօղղան Վասիլիչին ընկալայ զերկօքին թուղթսն քոյ՝ ընդ Շամիրամ Աղայի թղթոյն և ընդ «Յորդորայթ փառաց» անուանեալ գրքոյն... Ես բարւոք համարեցի առ իս պահելն և օրինակելն, ապա առաքել առ նա (իմա՝ առ արքայն վրաց): Եթէ այժմ առանց օրինակն առնելոյ առաքեմ՝ ի կորուստ է գնալոց այս պատուական գանձս, զի վիրքն ոչ կարեն դիտել և պահել զսա: Այսպէս և իւրն գրեցի ահա, զոր ուղևորել խնդրեմ, զի միամտեսցի շուտով: Թեհնեալ եղիցի բարի դիտաւորութիւնք նորա, զորս ունի առ խղճալի ազգս մեր: Ոհ, քէ յամենայն ուրեք գնոգի նորա ունիցէին ազգ մեր...»²:

Նին ահա ընդհակառակութիւն գրեցի վասն քոյ, ընծայ առաքեցի վեց հատ լաւ ետղուղք և Բ հատ «Հաւատով խոստովանիմք» տետրն, զոր հայերէն ընդ առևաց թարգմանութիւնն տպեալ են: Խնդրեցի, որ ում հարկ է ասացէ սաստիւ՝ չարգելեն ծախելն աստէն առաքեալ գրեանքն և կամ այրել և այլ բանք շատ» («Գիւան հայոց պատմութեան», Թ, Թիֆլիս, 1911, էջ 65): Արղայր խոսքն այստեղ «Յորդորակ»-ի մասին չէ՞, որը Սիմեոն կաթողիկոսի հրամանով պիտի վաճառատեղերից հավաքվեր և այրվեր: Եթե այդպես լինի, ապա այս վկայությունը հատուկ նշանակություն կստանա:

¹ Նույն տեղում, էջ 127:

² Պետ. Մատենադարան, ձեռագիր № 2949, թերթ՝ 92բ—93ա, ժամանակ՝ 1788: Երևի այդ նամակը գրելիս նա դեռ «Որոգայթ»-ի մյուս օրինակը չէր ստացել: Շուտով

ԱրդուՅյանն այնքան բարձր է գնահատում «Ռրոզայթ»-ը, որ օրհնում է Շ. Շահամիրյանին, նրա նման մտածելու շնորհք ցանկանալով ողջ հայությանը:

Փաստերը ցույց են տալիս, որ նա ջանքեր է գործադրել Աստրախանում «Ռրոզայթ փառաց»-ը հրատարակելու համար: 1790 թվականի հոկտեմբերի 5-ի նամակում՝ ուղղված Փիլիպպոս Մանուչարյանին՝ Հ. ԱրդուՅյանը գրում է.

«...Շամիրամ աղայն որպէս քեզ, նոյնպէս և մեզ գրեալ է... վասն տպման «Ռրոզայթ փառաց» գրեոյն՝ յիշատակ Յակօբ որդւոյն իւրոյ. ժԲ հատ զրկել իւրն, մնացեալն լինել տպարանին: Գիրքն այն առաքելոց եմ Թաղղէոս վարդապետին սրբագրել և տպել, որպէս և գրեցի իւրն»¹:

1791 թվականի ապրիլի 4-ին Հնդկաստանի նվիրակ Ստեփաննոսին՝ Հ. ԱրդուՅյանը հայտնում է.

«Քանի մի գիրք տպեցաւ. պատարագի աղօթքն ևս զերծան. այժմ սաղմոս և ժամագիրքն տպեն Ստեփան Աղաբարի: Յետ այնորիկ՝ Շամիրամ աղայի «Ռրոզայթ փառաց» գիրքն, Հայելի Աստուածաշունչ և Թելամարն...»²:

Որոշ մասնագետներ հիմք ունենալով այս վկայությունները ընկել են տարակուսանքի մեջ: Օրինակ, Թ. Ավդալբեկյանը գրում է. «Ի դեպ, խիստ հետաքրքրական է, որ ԱրդուՅյանը 1791 թ. 4/IV նամակում գրում է, թե Ռուսաստանում ինքն ի շարս այլ գրքերի տպել է տալիս նաև «Շամիրամ աղայի Ռրոզայթ փառաց գիրքն: Գոնն մեզ այսպիսի մի հրատարակություն հայտնի չէ»³:

Չնայած բավական լուրջ ընթացք է ստացած եղել «Ռրոզայթ փառաց»-ի հրատարակման գործը, բայց և այնպես այն չի իրականացվել: Հավանաբար այդ հարցում որոշ դժվարություններ են ծագել գրաքննչական օրգանների միջամտությամբ: Հ. ԱրդուՅյանի նամակները խոսում են նաև այն ժամանակ գոյություն ունեցած տեխնիկական դժվարությունների մասին: Ավելի հավանական պատճառ կարող է համարվել «Ռրոզայթ փառաց»-ի հնդկական հրատարակությունը՝ տեղի ունեցած 1789—1790 թվականներին: Երևի 1791 թվականին Հ. ԱրդուՅյանին են հասել Հնդկաստանում տպագրված օրինակները և նա հրաժարվել է նույնը Աստրախանում տպագրելու մտադրությունից:

Կարևորը սակայն այն է, որ Հ. ԱրդուՅյանը ձեռնարկել է «Ռրոզայթ փառաց»-ի հրատարակությունը:

Պարզվում է, որ հետագայում ևս, երբ նորից հրատարակի վրա էր Հայաս-

տանում է նաև երկրորդ օրինակը, սակայն հավատարիմ մնալով իր որոշմանը, արտագրել է տալիս և արտագրածն ուղարկում Հերակլին: Այդ 3 օրինակներն էլ այժմ պահվում են Մատենադարանում (ձեռագիր №№ 3101, 3102 և 7886): Հնդկաստանից ստացվածներն են №№ 3101 և 3102 ձեռագրերը: № 3101-ի վերջում Հ. ԱրդուՅյանը գրել է. «Մէկ հասն սորին կաու պարօն Յարութիւն Դիւանովին Մնացականեանց, որ նոր օրինակեցէ ուղթութեամբ. ի 1789 յունվարի 20 ի Հաշտարխան» (թերթ 176բ): Այստեղից պարզ է, որ այդ ժամանակ նա ունեցել է ոչ թե մեկ, այլ ավելի օրինակներ, այլպես չէր գրի «Մէկ հասն սորին...»: Մեր ստուգումներից պարզվեց, որ № 7886 ձեռագիրն էլ հենց այն օրինակն է, որ արտագրվել է Հարություն Դիւանով Մնացականյանի ձեռքով և ուղարկվել Վրաստան: Այդ ձեռագրի կազմի վրա կան վրացերեն բառերի հետքեր (ապացույց՝ գրքի վրացական միջնադարում դանված լինելու): Ա. Ռ. Հովհաննիսյանի ուսումնասիրության մեջ («Տեղեկագիր», 1948, № 3, էջ 11—25) այս ձեռագրերի նկատմամբ եղած ճշտումները կարող են վերանայման:

¹ Պնտ. Մատենադարան, ձեռագիր № 2949, թերթ՝ 195բ—196ա, ժամանակ՝ 1790:

² «Դիւան հայոց պատմութեան», Թ., Թիֆլիս, 1911, էջ 119—120:

³ «Տեղեկագիր» ՀՍԽՀ Գիտություն և արվեստի ինստիտուտի, 1930, № 4, էջ 46:

տանի ազատագրության հարցը, Հ. Արղուժյանի հաշորդ նվիրեմ արքեպիսկոպոսի հրամանով Պետերբուրգի հայ դործիչներից Մարգար Խոջենց Երևանցին 1805 թվականին հրատարակության է պատրաստում «Որոգայթ փառաց»-ը: Նա նախ այդ օրենսդրքի խառն կետերը հիմնովին վերագասավորում է ըստ առանձին բնագավառների, վերաշարադրում է այն՝ ծայրից-ծայր՝ գրագետ լեզվով, կցում է նրան «Նշառակ»-ը՝ որպես երրորդ հատոր և առաջին հատորի ամբողջ նյութը, մասերի բաժանելով, առնում իմաստալից ենթախորագրերի տակ: Այսպիսով նա ավարտուն տեսք է տալիս Շ. Շահամիրյանի մշակած և հավարած կանոններին:

Մ. Խոջենցը գրքի սկզբում իր կողմից տված բացատրության մեջ ուղղակի ասում է. «Սոյն դիտաւորութիւն ունի շարադրեալ զգիրքս այս», այսինքն՝ «հետևի վերստացման զկորուսեալ ազատութիւն և զիշխանութիւն... ի յօգուտ ազգին՝ վասն յապագայ ժամանակի, յորում հաճեացի տէր վերականգնել զանկեալ իշխանութիւն արիական քաջացն հայոց»¹:

Թե որքան խորն է ըմբռնել Մ. Խոջենցը «Որոգայթ փառաց»-ի բուն էությունը, երևում է այդ դործի առաջին մասում՝ նրա ավելացրած ենթախորագրերից: Օրինակ.

«Յաղագս յորդորանաց, որ հրաւիրէ զազգս մեր արիանալ և ի միաբանութիւն յօղելով հաստատել զօրէնս և լինել ծերակոյտ մի ինքնակալ ի բնիկ յերկրի մերում»²:

կամ՝

«Յաղագս, թէ որպէս պարտ է կարգել զօրէնս և զկառավարիչս օրինաց, և թէ մի՛ թաղաւորեսցէ ինքնակալ որ բնաւ, այլ միայն օրէնքն»³:

Իսկ դա նշանակում է, որ Հայաստանում ըստ այդմ պիտի ստեղծվեն բուրժուա-դեմոկրատական կարգեր, իշխանությունը պիտի գտնվեր Շ. Շահամիրյանի երազած «Տունն Հայոց»-ի ձեռքում:

Վերջապես, պահպանվել են բազմաթիվ նամակներ, որոնք խոսում են Հայաստանի ազատագրման հարցում Հ. Արղուժյանի, Հ. Լազարյանի և Շ. Շահամիրյանի քաղաքական համերաշխության մասին: Այն սերտ կապը, որ եղել է հատկապես Շ. Շահամիրյանի և Հ. Արղուժյանի միջև, վավերագրերի այն առատությունը, որ վերաբերում է նրանց կապին, դեռևս ի հայտ չի բերել ոչ մի փաստ, ուր երևար նրանց գեթ շնչին հակադրությունը միմյանց՝ վերոհիշյալ խնդրի կապակցությամբ:

Այս առումով ուշադրավ են հատկապես այն նամակները, որոնք գրված են դաշնագրային նախադժերի վերաբերյալ կամ շոշափում են այդ հարցը: Բոլոր դեպքերումն էլ տեսնում ենք, որ Հ. Արղուժյանը հանգամանորեն խորհրդակցել է Շ. Շահամիրյանի հետ, տեղեկացրել նրան իրերի դրությունը: Օրինակ, վերը հիշված 1786 թվականի նամակից երևում է, որ Հ. Արղուժյանը 1783 թվականին անմիջապես գրել է Շ. Շահամիրյանին դաշնագրի հարցի մասին.

¹ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 1477, էջ 2:

² Նույն տեղում, էջ 9:

³ Նույն տեղում, էջ 18: Պատրաստում ենք հատուկ ուսումնասիրություն՝ նվիրված իր ժամանակի հայ իրականության մեծաժառանգ և առաջադեմ հեղինակ Մարգար Խոջենց Երևանցու կյանքին ու գործունեությանը:

«...Որպէս գրեալ եմ առ Չեզ 1783 թուին և յապրիլի 24, թէ տէրութիւնս այս կամի այցելութիւն առնել տարաբախտ աշխարհին մերոյ, որոյ յազագաւ բազմիցս դիրս յուսադրականս և դեսպանս առաքեցան յայտնի և ի ծածուկ...»¹:

Նույն 1786 թվականին Հ. Արղությանը Հ. Լազարյանին գրած նամակում հայտնում է, որ «Շամիրամ աղային զամենայն որպիսութիւն մեր գրած եմ և խնդրեալ եմ, որ ընծայ ինչ առաքել քննազին և կամ մեծին: Այսմ յունվարի 1-ին գրեալ է մեզ մխիթարութիւն և հաճութիւն գրեցելոցն իմոց...»²:

Ավելի ուշագրաւ է Փիլիպպոս Մանուչարյանին ուղղված նամակը՝ գրված նույն առիթով և նույն 1786 թվականին, որ Հ. Արղությանն ասում է. «Ազնիւ Շամիրամ աղայն գրեալ էր մեզ զգանազան յուսադրական բանս և զմխիթարութիւնս և այլ խորհրդական դիտաւորութիւնս վասն յառաջակայ կարգադրութեան, որ կայր վասն տարաբախտ աշխարհին մերոյ...»³:

Այսպիսին են մեզ ծանոթ փաստերը: Դրանք միահամուռ վկայում են այն մասին, որ Հ. Լազարյանը, Հ. Արղությանը և նրանց համախոհները՝ ինչպես հայ-ռուսական դաշնագրի նախագծեր կազմելու տարիներին, այնպես էլ դրանից առաջ ու հետո, Հայաստանի ազատագրման հարցում իրենց քաղաքական կապերի ողջ ընթացքում չեն հակադրվել Շ. Շահամիրյանին և նրա համախոհներին: Նրանք աշխատել են միացյալ ուժերով լուծել ամենազլխավոր ու առաջնահերթ հարցերը: Շ. Շահամիրյանի ծրագիրն իր մի մասով համընկել է Հ. Լազարյանի և Հ. Արղությանի պահանջների հետ, իսկ մյուս մասով նորութուն հանդիսանալով հանդերձ պաշտպանվել նրանց կողմից՝ ուսս պաշտոնյաների հետ բանակցութիւններ վարելու առաջին շրջանում:

Ա Մ Փ Ո Փ Ո Ի Մ

Այսպիսով բոլոր փաստերը վկայում են մի բան, որ հայ-ռուսական դաշնագրային նախագծերի մեջ առկա հակասութիւնները իրականում ծնվել են դաշնագիրը կնքող երկու կողմերի շահերի և ձգտումների մեջ առկա հակասութիւններից:

Ռուսական ցարիզմը ցանկանում էր լայնացնել ու ամրապնդել իր հարավային սահմանները: Այդ ճանապարհի վրա նա, հանդիպելով հայկական հարցին, որոշում է ընթացք տալ նաև դրան: Սակայն նրան ձեռնադր էր Հայաստանն «ազատագրել» ոչ թե ըստ հայ ժողովրդի երազանքի, այլ ըստ իր սեփական շահերի: Հայ ժողովրդի ներկայացուցիչները, ընդհակառակը, ձգտում էին վերականգնել հայկական պետութիւնը:

Եվ ահա, երբ 1783 թվականին ուսս գործիչները դիմում են հայ ժողովրդի ներկայացուցիչներին համապատասխան դաշինք կնքելու, նրանց է ներկայանում Հ. Լազարյանը այն նախագծով, որը հայտնի է Շ. Շահամիրյանի անվամբ: Ռուսական կողմը, նկատի առնելով այդ նախագծի բովանդակութիւնը, որ նախատեսված էր ինքնուրույն հայկական պետութիւն՝ «ձերակուտական»

¹ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 2699, թերթ 101ա:

² Նույն տեղում, № 2949, թերթ 23ա (էջ 41):

³ Նույն տեղում, թերթ 21բ (էջ 38):

կարգերով, մերժում է այն, պահանջելով նոր նախագիծ: Հ. Արղությանը նույն թվականին ստիպված կազմում է այդ նոր նախագիծը:

Հայ գործիչները մեծ հոանդով պայքարում էին դեթ այս երկրորդ նախախաղձի իրականացման համար¹: Այս շահագրգռվածության հիմքում ընկած էր երկու հանգամանք: Նախ, որ թուրք-պարսկական բռնակալությունից՝ Ռուսաստանի օգնությամբ, թեկուզ և ամբողջապես ցարիզմի պահանջների համաձայն, ազատագրվելն այն ժամանակ անհամեմատ գերադասելի էր: Այլ՝ հայ գործիչները, մի կերպ հաշտվելով ցարիզմի պահանջների հետ, հույս են ունեցել հետագայում իրականացնել հայկական ինքնուրույն պետության ստեղծելու գաղափարը:

Վերջացնելով մեր խոսքը անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայ-ուսական դաշնագրի նախադժերի հետ առնչվող հարցերի քննարկման ժամանակ ծառանում է նաև մի այլ հարց. ինչ հիմքերի վրա էին Հ. Լազարյանը, Հ. Արղությանը և ուրիշները պաշտպանում Շ. Շահամիրյանի և նրա համախոհների քաղաքական հայացքները, ինչպիսի՞ հակասություններ կարող էին ծագել հետագայում նրանց միջև, երբ Հայաստանի ազատագրումը՝ թուրք-պարսկական լծից՝ իրականանար:

Այս հարցի պատասխանը պահանջում է առավել հանդամանորեն ուսումնասիրել այն ժամանակվա քաղաքական իրադրությունները, մանրամասնորեն քննության առնել Հ. Արղությանի, Հ. Լազարյանի և նրանց ղինակիցների հասարակական գործունեությունը, Շ. Շահամիրյանի հետ ունեցած նրանց և ուրիշների նամակագրական բոլոր կապերը, ինչպես նաև մի շարք այլ խընդիրներ, որոնք մինչև օրս կամ բոլորովին կամ բավարար չափով չեն ուսումնասիրվել:

¹ Այս կազակցութեամբ ավելորդ շնք համարում մեջ բերել Հ. Արղությանի 1784 թվականին Ստեփան Երևանցուն ուղղած մի նամակի հետևյալ ուշագրավ տողերը.

«Յուսամ, զի ազնիւ ազայ Յովհաննէսն եկեալ իցէ և նովաւ իցես տեսեալ զպայծառափայլ խնամակալն մեր: Հոգեորդի, ոչ եթէ դու գեֆութաթ, այսինքն գեստան և կամ միջնորդ ևս յՆրեանու, այլև բոլոր ազգին հայոց և ոգորմելի մելիքացն Ղարաբաղու, որք մինչև ցայսօր լցին ազազակաւ յականջս գոցա և մեր: Եւ մեր բոլոր թղթոց թարգմանութիւնն (որպէս Վարդանն գիտէ) առ դոսա է, ուրեմն և ի գիմաց նոցա պարտիս բողբելահա հասեալ է ժամ, կամ փառաւորեսցի ազգ մեր կամ կանգնեսցի քստ ձերունույն և կամ անկեալ գլորեսցի: Ուրեմն, պնդեա զմէջս բոյ արիական հողւով... անձիդ, ընտանեացդ և բոլոր ազգիդ յիշատակ...: Համարեա թէ կէս կեանքս մաշեցաւ և մաշի դեռևս յազազս ազգայնական զանազան պատճառաց...» (Պետ. Մատենադարան, ձեռագիր № 4496, էջ 238):

Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ Ն Ե Ր

Ս. ՔՈՂԱՆՋՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ԵՐԿԱԹԱԳԻՐ ՊԱՏԱՌԻԿՆ
ՈՒ ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ

Վերջերս ավարտվեց Պետ. Մատենադարանում պահպանվող 1836 հա-
յերեն ձեռագիր պատառիկների գիտական մշակման գործը, որի վրա մենք
աշխատում էինք ավելի քան երեք տարի շարունակ:

Մատենադարանի հայերեն ձեռագիր պատառիկների հավաքածուն գոյա-
ցել է երկար տարիների ընթացքում: Պատառիկները հավաքվել են ձեռագրերի
մնացորդներից, ժամանակին ձեռագրերի պահպանակների վերածված և ապա
անշատված հատվածներից, ձեռագրերից պատահականորեն ընկած թերթերից,
անբարեխիղճ մարդկանց կողմից ձեռագրերից պոկված մասերից, ձեռագրերի
էջանշաններից (այսինքն ընթերցման թերթը ցույց տալու համար օգտագործված
կտորներից) և այլն, և այլն:

Մատենադարանի պատառիկների մի զգալի մասը անցյալում հավաքվել է
էջմիածնի մատենադարանում, մի ուրիշ մասը բերվել է Վանի շրջանից, Լիմ
անապատից, Աղթամարից, Կաուց կղզուց, Տաթևի վանքից, Անիի՝ ակադ. Ն. Մա-
ռի հիմնած թանգարանից, Թիֆլիզի Ազգագրական ընկերությունից, Ներսիս-
յան դպրոցից, «Էումա» հանգեսի խմբագրությունից, Հայաստանի հնություն-
ների պահպանության կոմիտեից, Թավրիզից և այլն, և այլն: 1928 թվականին
մի շարք արժեքավոր պատառիկներ է բերել Մոսկվայի Կաղարյան ձեմարանից,
Մովեսական Հայաստանի երբեմնի Լուսժողկոմ Ասքանաղ Մոսկվայնը: Պատա-
ռիկների հավաքման գործում շնորհակալ աշխատանք են կատարել նաև Խաչիկ
Վ. Գաղյանը, Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, Գարեգին Հովսեփյանը, Երվանդ Շա-
հազիզը, Կարո Ղաֆազարյանը և ուրիշներ:

Մեր պատառիկների շարքում գտնվում են ձեռագրերի բեկորներ, որոնք
հանվել են Հաղբառի մոտ գտնվող մի քարանձավից, Սաղմոսավանքի այրից
և այլն: Նրանց մեջ կան բոլորովին սևացած, փտած, կողքերից այրված և կամ
ընչված հատվածներ, որոնց ընթերցումը և բովանդակության ճշտումը շատ
զժվարություններ է ներկայացնում:

Գարերի խորքից արյան և մոխրի միջով մինչև մեր օրերը հասած յուրա-
քանչյուր ձեռագիր պատառիկ, լինելով հավերժորեն կորստյան մատնված մի
հնագարյան ձեռագրի վերջին բեկորը, անգնահատելի արժեք է ներկայացնում
ընդհանուր հայագիտության համար:

Մենք մեր աշխատանքների ընթացքում նախ վերստուգեցինք և պարզե-
ցինք ճշտված համարվող պատառիկների ինքնությունը և կատարեցինք ան-
հրաժեշտ եղող նոր լրացումներ: Բայց մեր հիմնական ուշադրությունը դարձ-

րինք բուրսովին անհայտ ու շվերժանված ձեռագիր պատառիկների վրա, և մեզ հաջողվեց պարզել նրանց զգալի մասի բովանդակությունը:

Այսպիսով, մեզ հայտնի դարձան բացի հնագրական մեծ արժեք ունեցող հատվածներից նաև հայ նշանավոր մատենագիրներ՝ Ազաթանգեղոսի, Խորենացու, Փարպեցու, Եղիշեի, Սերեոսի և ուրիշների աշխատություններից հնագույն բեկորներ ու թարգմանական գործերի պատառիկներ:

Մատենադարանի պատառիկները նկարագրելու ժամանակ պարզվեց, որ անցյալում մի ձեռագրի մաս կազմող զանազան թերթեր զետեղված են եղել բուրսովին իրարից տարբեր համարների տակ: Մենք ելնելով ինչպես նրանց հնագրական տվյալներից, այնպես էլ բովանդակությունից, ի մի բերելով նրանց, զետեղեցինք մի համարի տակ: Բաղձաթիվ օրինակներից հիշենք միայն մեկը. — մի ժամագրքի բեկորներ, որոնք զետեղված էին իրարից անհամեմատ հեռու 3 տարբեր համարների տակ (№ № 1321, 1437 և 1508), նկատի առնելով նրանց նույն գրչության պատկանելը և անցյալում մի մայր ձեռագրի մասեր լինելը, միացրինք 1321 համարի տակ:

Պատառիկների պատմության համար հետաքրքրական է այն փաստը, որ անցյալում նույն ձեռագրից մաս կազմած զանազան բեկորներ մենք այժմ գտնում ենք թե՛ պատառիկների հավաքածուում և թե՛ ձեռագրերի կողերին կարված պահպանակների շարքում: Այս առթիվ անհրաժեշտ ենք գտնում հիշատակել Գարեգին Ա. կաթողիկոսի կողմից 1946 թ. հրատարակված Կյուրեղ Նրուազեմացու «Կոշումն ընծայութեան» աշխատությունը բովանդակող պահպանակները, որոնք անվիճելիորեն 9-րդ դարի վերջերի գրչության են պատկանում և 1953 թ. Բեյրութից իր հետ բերելով Մատենադարանին հանձնեց հայրենադարձ Կարապետ Բիտեճյանը, ըստ որի հայտարարության այդ ավետարանը իր հնագրության պահպանակներով երկար ժամանակ պահպանվել է Կեսարիայի Պենտուսա գյուղում, Բիտեճյանների ընտանիքում: Օրերես մեզ հայտնի դարձան նույն ձեռագրի երբեմնի մաս կազմած 3 անուն պատառիկներ ևս, որոնցից մեկը բերվել էր Անիից, ակադ. Մառի հիմնած թանգարանից, իսկ մյուս երկուսը՝ երկար ժամանակ պահվել էին էջմիածնի մատենադարանում: Իհարկե, նման օրինակները հաճախակի կարող են դառնալ, հատկապես այն ժամանակ, երբ ուսումնասիրվեն նաև Մատենադարանի ձեռագրերի կողերին կարված շուրջ 2000 պահպանակները:

Հնարավոր եղավ նաև գտնել որոշ պատառիկների մայր ձեռագրերը և պատառիկները զետեղելով կրկին նրանց մեջ լրացնել ցարդ «թերի» համարված մի քանի ձեռագրեր:

Մեր կողմից վերժանված պատառիկների մեծ մասը համեմատել ենք կամ գիտական հրատարակությունների և կամ ամենաընտիր տպագրված գրքերի հետ, իսկ նրանց անտիպ լինելու դեպքում բաղդատել ենք Մատենադարանում պահպանված լավագույն ձեռագիր օրինակների հետ, նշել ենք պատառիկների բովանդակությունը, տվյալ տպագիր հրատարակության և կամ ձեռագիր օրինակի համապատասխանող էջերը, երբեմն համառոտակի ցույց ենք տվել ուղղագրական կամ բնագրագիտական տարբերությունները:

Մատենադարանի հավաքածուի 1836 հատակոտորներից 667-ը գրված է մազազաթի վրա, իսկ մնացյալ 1169 հատը՝ թղթի վրա:

Ըստ բովանդակության, պատառիկները կարելի է բաժանել հետևյալ կերպ.

Աստվածաշնչի մասեր (Հին կտակարան, Նոր կտակարան, Ավետարան), Ճաշոց գրքերի հատվածներ, պատառիկներ՝ Հայսմավուրքից, Մաշտոցներից, Շարականներից, Գանձարաններից, Սաղմոսներից, Ճառընտիրներից, ժամագրքերից, ինչպես նաև քարոզ-խրատ-մեկնության հատվածներ, Խորհրդատետար-պատարագամատույցներ, Տոնացույց-տոնապատճառներ, Աղոթամատույցներ, լուծմունք, Մանրուամունք, Ոսկեփորիկ, վարքագրություն-վկայարանություն և հարանց վարք, բժշկարան-ղեղագրեր, քերականներ, աշխարհագրական և այլ պատառիկներ:

Հայ անվանի մատենագիրների աշխատություններից պետք է հիշատակել հետևյալ պատառիկները, որոնցից զգալի մասը անցյալում վերծանված չի եղել. Ազաթանգեղոսից՝ 6 անուն պատառիկներ՝ բոլորն էլ գրված մազադաթի վրա, երկաթագրով, Եղիշեից՝ 7 անուն պատառիկներ, Մովսես Խորենացու Պատմությունից՝ 5, Ղազար Փարպեցու Պատմությունից՝ 1, Հովհան Մամիկոնյանից՝ 1, Սերեոսից՝ 1, Մեսրոպ Վայոցձորեցուց՝ 1, Կիրակոս Գանձակեցուց՝ 2, Մովսես Կաղանկատվացուց՝ 1, Հացունյաց խաչի պատմությունից՝ 2 և այլն:

Հայ հեղինակների աշխատություններից պետք է հիշատակել նաև «Յաճախապատում» աշխատության հնագույն նորահայտ պատառիկները, որոնք պատկանում են 9-րդ դարի զրչության, Ստեփաննոս Սևանցու կազմած Մաշտոց կաթողիկոսի վարքը, Գրիգոր Նարեկացու Ողբերգության մատյանից 8 պատառիկներ, ինչպես նաև տաղերից մի պատառիկ, Գրիգոր Մագիստրոսից մի հատված՝ «Պատասխանի թղթոյն կաթողիկոսին ասուրուց Յաղագս թոնդրակեցուց» գրվածքից, Անանիա Շիրակացու, Առաքել Սյունեցու գործերից, Վարդան Այգեկցու առակներից և այլն:

Թարգմանական գործերից են Կյուրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկերեբանի, Եվսեբիոս Կեսարացու, Գրիգոր Աստվածաբանի, Սոկրատ Սրբուստիկոսի, Նոննոսի, և ուրիշների աշխատություններից զանազան պատառիկներ:

Մատենագարանի ձեռագիր պատառիկները կարևոր նշանակություն ունեն հայերեն գրերի հին տեսակները ուսումնասիրելու տեսակետից, հատկապես այն պատճառով, որ մեր ամենահին ձեռագրերը դարերի արհամարքներին զոհ են դնացել և այժմ աշխարհում մեզ հասած հնագույն հայերեն ձեռագիրը, դա Մատենագարանում պահպանվող կազարյան կոչված Ավետարանն է, գրված 887 թ. Սահակ Վանանդեցու կողմից: Բայց Մատենագարանում գտնվող ինչպես պատառիկներում, այնպես էլ պահպանակներում կան այնպիսի հատակոտորներ, որոնք շատ ավելի հին են քան մեր թվակիր հնագույն գրչագիրը:

Պատառիկները մեծ արժեք ունեն հատկապես մեր հնագույն հեղինակների աշխատություններում հետազայում ներմուծված սխալները ուղղելու գործում: Փաստ է, որ 5-րդ դարի և հետագայի մեր նշանավոր հեղինակների գործերը մեզ հասել են միայն ուշ շրջանի արտագրությունների միջոցով: Այս է պատճառը, որ հաճախ սխալներ և կամ հավելումներ են մուտք գործել մեր նշանավոր հեղինակներից ոմանց գործերում: Պատառիկներում, սակայն, կան հատվածներ Ազաթանգեղոսից, Մովսես Խորենացուց, Եղիշեից և այլ հեղինակներից, որոնք ընդօրինակված են 8—10-րդ դդ. և անհամեմատ հին են, քան հիշյալ հեղինակներից մեզ հասած ամբողջական ձեռագիր աշխատությունները:

Հրատարակության համար պատրաստում ենք Մատենադարանի ձեռագիր պատասխանների հնագրական և բնագրագիտական արժեքին նվիրված մի առանձին ընդարձակ աշխատություն: Առայժմ, սույն հոդվածով ցանկանում ենք կանգ առնել պատմահայր Մովսես Խորենացու Պատմության մեզ հասած հնագույն միայն մի քանի պատասխանների վրա: Խորենացու Պատմության այդ բեկորները արժեքավոր են ոչ միայն հնագրական առումով, այլ հատկապես բացառիկ նշանակություն ունեն բնագրագիտական տեսակետից:

* * *

Մատենադարանի հայերեն ձեռագիր պատասխանների հավաքածուում զբառնրվում են նաև Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց» հոյակապ աշխատության մի քանի հնագրային երկաթագիր մագաղաթյա պատասխաններ: Ինչպես հայտնի է հայ բանասիրությանը, Խորենացու Պատմության մեզ հասած հնագույն ամբողջական ձեռագիրը, դա Մատենադարանում 2865 համարի տակ պահպանվող ձեռագիրն է, արտագրված ՇԴ դարում: Այսպիսով, միանգամայն պարզ է, որ Խորենացու Պատմության յուրաքանչյուր պատասխիկ հայտնաբերումը, մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել հայ բանասիրությանը, ոչ միայն այն բանի համար, որ նրանք լինելով գրված մեսրոպյան երկաթագրով, բազմաթիվ հարյուրամյակներով հին են, քան մեր հիշատակած Խորենացու հնագույն ամբողջական ձեռագիրը, այլև այդ պատասխանները բնագրագիտական տեսակետից հնարավոր է, որ լուրջ ճշտումներ ընձևեն Խորենացու բնագրում և մաքրեն այն հետագա դարերում արտագրողների կողմից կատարված ընդմիջարկություններից և աղավաղումներից:

Մովսես Խորենացու նորահայտ պատասխաններից առաջինը, դա № 314 հատակոտորն է: Սա անցյալում համարվել էր Ճաշոց գրքի մաս: Այդ պատասխիկը հին խմբագրությամբ հասած մի ճառընտրի մասնիկ է: Պատասխիկում կան հատվածներ Աստվածաշնչի նոր կտակարանից (Պողոսի Բ Կորնթ. Բ 14) Գավթի Դմնեցու նահատակությունից: Նրբորդ հատվածը վերաբերում է Նիկիայում գումարված տիեզերական եկեղեցական ժողովին և համապատասխանում է Մովսես Խորենացու Պատմության գիտ. հրատարակության Բ գրքի Դ գլխին (էջ 240—241): Մագաղաթյա սույն պատասխիկը երկայուն է, տողերի քանակն է 20—23, նա վերևից ու մի կողմից կտրված է, որի պատճառով մի շարք տողեր և տառեր զտհ են գնացել: Պատասխիկը ներքևի կողմից ևս պատասխանաված է, որի պատճառով էլ պակասում է երեք տող: Պատասխիկի մեծությունն է 26×18,5 սմ: Մագաղաթը տեղ-տեղ գեղնած է ու սևացած: Ինչպես երևում է պատասխիկի վրայի անցքերից, նա ժամանակին գործ է անվել մի այլ ձեռագրի կողերին որպես պահպանակ: Պատասխիկը գրված է միջին մեսրոպյան երկաթագրով և իր հնագրական տվյալներով պետք է որ գրված լինի Շ—ՃԱ դարերում:

Խորենացու Պատմությանը վերաբերող մեր երկրորդ պատասխիկը, դա № 1221 երկու թերթերից բաղկացած հատակոտորն է, որը Խորենացու Պատմության երկրորդ գրքի ցանկն է: Գրված է մագաղաթի վրա միջին մեսրոպյան երկաթագրով: Պատասխիկի մեծությունն է 21×16,5 սմ և 23×14,5 սմ, իսկ տողերի քանակն է 13—19: Այս հատակոտորներն էլ անցյալում որպես պահպանակ են օգտագործված եղել: Սրանք հավանական է, որ Խորենացու պատա-

պիկներին մեջ հնագույնը լինեն և պատկանում են Թ—Ժ դդ. գրչության: Սույն պատասխիկները երկու անգամ են արժանացել հրատարակության¹: Խորենացու սույն ցանկում բացակայում են Պատմության երկրորդ գրքից երեք գլուխներ²:

Խորենացու Պատմության երրորդ մեր պատասխիչը, դա № 1376 հատակոտորն է և ապահովարար Ճառընտրի մաս է: Պատասխիչում կա մի հատված նոր կտակարանից (Պող. Եբբ. ԺԳ.), իսկ Խորենացուց մեջ է բերված «Վկայարանութիւն Նունեա և Մանեա և ընկերացն» հատվածը, և որը համապատասխանում է պատմահոր գիտական հրատարակության երկրորդ գրքի 29 գլխին (էջ 231—232): Պատասխիչը երկայուն է, մեծությունն է 25,5×21,5 սմ, նրա տողերի քանակն է 24 և զբված է մագաղաթի վրա միջին մեսրոպյան երկաթագրով: Սույն պատասխիչն էլ ժամանակին օգտագործվել է որպես պահպանակ: Հատակոտորի բնագրում կան լեզվական և ուղղագրական տարբերություններ, որոնք մեր կարծիքով բարբառային մուծումների արդյունք են. դրանցից են՝ օրինակ, փոխանակ գիտական հրատարակության «Հոփսիմեայ» ձևի, պատասխիչում գրված է՝ «Հոփսիմեա» և կամ Միհրանի տեղ գրված է «Միխրանա» են: Պատասխիչը պատկանում է Ժ—ԺԱ դդ. գրչության:

Խորենացու պատմության չորրորդ պատասխիչը, որը ուզում ենք թվել և մեր առաջ նպատակ ենք դրել հատկապես նրան նվիրել մեր սույն հոդվածը, դա մեր Մատենադարանի պատասխիկների հավաքածուի № 1411 հատակոտորն է: Սա բաղկացած է երկու թերթից, որոնց մեծությունն է 29×20 և 25×20 սմ: Գրված է մագաղաթի վրա միջին մեսրոպյան երկաթագրով: Սույն պատասխիչն էլ ժամանակին օգտագործվել է որպես պահպանակ: Տողերի քանակն է 21: Պատասխիչը համապատասխանում է Խորենացու պատմության գիտ. հրատարակության երրորդ գրքի ԾԱ, ԾԲ և ԾԷ գլուխներին (էջ 324—326 և 334—335) և բովանդակում է հետևյալ նյութերը.

Թուղթ Արտաշրի առ Վուամշասպուհ, Յաղագս Դանիէլի նշանագրաց, Թուղթ

¹ Սյն առաջին անգամ հրատարակել է Մատենադարանի Ձեռագրական բաժնի նախկին վարիչ Հ. Մանվելյանը «Գրական թերթ»-ում, 1938, № 51 (Երևան): Կրկին հրատարակել է, կցելով նաև Խորենացու Պատմությունը բովանդակող երկու պահպանակներ, պրոֆ. զոհտ. Ա. Աբրահամյանը, «Էջմիածին», 1—2, 1950, էջ 44—57:

² Չենք կարող համաձայն լինել պրոֆ. Ա. Աբրահամյանի այս պատասխիկ մասին հայանած կզրակացության Գ կետի հետ. ըստ որի «Պատասխիկների համեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ պատմահոր երկրորդ գրքի երեք գլուխները հետագա դարերում մացված ընդմիջարկություն են հանդիսանում» (պրոֆ. զոհտ. Ա. Աբրահամյան՝ «Խորենացու պատմության մագաղաթյա հնագույն պատասխիկները», «Էջմիածին», 1—2, 1950, էջ 57): Մատենադարանում կան Խորենացու մեզ հայտնի ձեռագրեր, որոնց ցանկերում դարձյալ չկան հիշյալ երեք գլուխները, սակայն նրանց համեմատությունը լրիվ գտնվում է հիշյալ ձեռագրերում: Այս հարցում պրոֆ. Ա. Աբրահամյանը միանգամայն ճիշտ էր վերաբերվել իր կզրակացության նախորդող էջում, երբ գրել էր հետևյալը. «Մեզ մնում է պատասխանել մի հարցի ևս. նշված երեք գլուխները պակասում են միայն գլխացանկում, թե բուն պատմության մեջ ուս նրանք չկան: Պատասխիկի հիման վրա, դժբախտաբար, մենք ի վիճակի չենք պատասխանել այդ հարցին, որովհետև մեր ձեռքի տակ չունենք պատմության տեքստը, սակայն Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 1439 ձեռագիրը ունի այդ գլուխների պատմությունը, միայն դրանք առանձին խորագրի տակ չեն գրված, այլ միացված են մյուս գլուխներին» (նույն տեղում, էջ 56):

Սահակայ առ Անատոլիոս, և Թուղթ Թէոդոսի առ Սահակ: Պատառիկը իր հնագրական հանգամանքներով պատկանում է Ժ—ԺԱ դարերին:

Վերջերս հնագրական մանրագնին համեմատության միջոցով մեզ հայտնի դարձավ, որ վերոհիշյալ, պատառիկի գրչությունը ունեցող երկու այլ բեկորներ գտնվում են Մատենադարանի № 9324 ձեռագրում (որը մեծ մասամբ հնատիպ Մաշտոց է) և, որոնք մի ժամանակ օգտագործվել են որպես պահպանակ, բայց այժմ արդեն անշատված են: Պատառիկները գրված են մագաղաթի վրա միջին մեսրոպյան երկաթագրով: Նրանց տողերի քանակն է 18—21, իսկ մեծությունն է 26×18,2 սմ և 25,3×19,7 սմ: Գրությունն է երկսյուն, 1ա թերթը մասամբ եղծված է:

Այսպիսով պարզվում է, որ թե՛ ձեռագրի պահպանակները և թե՛ քիչ առաջ վերևում հիշատակված պատառիկի երկու թերթերը երկաթագրով գրված Մովսես Խորենացու ամբողջական մի ձեռագիր պատմության մաս են կազմել, սակայն այժմ ամբողջ ձեռագրից զանազան ճանապարհներով մեզ են հասել միայն 4 թերթ, այն էլ մասամբ կտրատված վիճակում:

Եթե Խորենացու № 1411 պատառիկները վերաբերում են պատմության երրորդ գրքի ՄԱ, ՄԲ և ՄԶ գլուխներին, ապա սույն պահպանակները պատկանում են պատմության առաջին գրքի Գ գլխին և երրորդ գրքի վերջին մասին: Այդ վերջին հատվածը Խորենացու ողբից է¹:

Պատառիկների հավաքածուի 1385 համարի տակ գտնվում է նաև Խորենացու պատմության մի այլ թերթ: Այն գրված է թղթի վրա, բոլորգրով, տողերի քանակն է 29, գրությունն է երկսյուն. մեծությունն է 27×31 սմ, պատառիկի վերևի մասը մասամբ վնասված է, որի հետևանքով մի քանի բառեր կտրված են: Սույն թերթը համապատասխանում է Մ. Խորենացու գիտ. հրատարակության առաջին գրքի ԺԵ—ԺԶ գլուխներին (էջ 49—52) և բովանդակում է հետևյալ նյութերը. — «Յաղագս Արայի և մահուանն նորա պատերազմաւ ի Շամիրամայ» գլխի վերջի մասը «Թէ որպէս յետ մահուանն Արաի Շամիրամ շինէ գրադաքն և զանպարտակ զհառչն և զիւր [տունն]» գլխի սկզբի մասը:

Մատենադարանի № 1875 ձեռագրի երկծալ մեկ թերթանոց պահպանակը ևս Մովսես Խորենացու պատմությունից է, գրված է միջին մեսրոպյան երկաթագրով՝ մագաղաթի վրա, տողերի քանակն է 29, մեծությունն է 33,3×33 սմ: Տեղտեղ մասամբ եղծված ու սևացած է: Հատվածի խորագիրն է «Վկայաբանութիւն սրբոցն Նունեայ և Մանեայ, Մովսիսի Խոյաբունացոյ պատմութիւնէ» համապատասխանում է Խորենացու գիտական հրատարակության Բ գրքի 22 գլխին (էջ 231—234)²:

¹ Մ. Խորենացու այս վերջին երկու պահպանակները հրատարակվել են դարձյալ պրոֆ. Ա. Աբրահամյանի կողմից («Եջմիածին», 1—2, 1950, էջ 44—57): Հրատարակված հոդվածում պահպանակների համարը գծաթառաքար սխալ է նշանակված. նշված է որպես № 9234, այնինչ պետք է լինի 9324: Նույնպես խառնված են նաև սյունակները. էջ 51-ի «Առաջին պատառիկ, երկրորդ էջ, երկրորդ սյունակ»-ը պետք է տեղափոխել էջ 52, իսկ այնտեղ գետնգրված «Առաջին պատառիկ, երկրորդ էջ, առաջին սյունակ»-ը պետք է տեղափոխել էջ 51: Նկարագրության մեջ ևս (էջ 45) երկրորդ պատառիկի բովանդակությունը շփոթված է առաջին պատառիկի հետ: Հրատարակված բնագրում մի շարք բառեր մասամբ եղծված լինելու պատճառով չեն կարգացվել, որոշ թվով կտրված տառեր վերականգնելիս չեն առնված փակագծերի մեջ, ևն: Մենք այդ պահպանակները ևս սույն հոդվածում հրատարակում ենք հնարավոր եղածին չափ հարադատորեն:

² Ակադ. Ստ. Մալխասյանցը իր «Խորենացու անղծվածի շուրջը» (Երևան, 1940, էջ 127) գրքում վերահիշյալ պատառիկից մի քանի մեջբերումներ է արել:

* * *

Խորենացու Պատմության վերահիշյալ նորահայտ պատանիկներից մի քանիսի, (որոնք դեռ չեն դարձել գիտական ուսումնասիրության առարկա) արտաքին հանգամանքները նկարագրելուց և գրչության ժամանակը մոտավորապես որոշելուց հետո, այժմ աշխատում ենք հարազատորեն մեջ բերել նրանց բնագրերը, զետեղելով նաև պատանիկներից երկուսի լուսանկարները: Բնագրերի տողատակին նշում ենք այն կարևոր տարրերությունները, որոնք կան մեր պատանիկների համեմատությամբ Խորենացու պատմության գիտական հրատարակության մեջ («Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց», աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913 թ.), փակագծերում նշում ենք նաև Խորենացու Պատմության գիտական հրատարակությունը պատրաստողների կողմից օգտագործված այն բոլոր տարրերակները, որոնք համընկնում են պատանիկների ընթերցվածքներին: Այս դեպքում մենք պահում ենք հրատարակիչների կողմից ընդունված պայմանական նշանները:

Պետ. Մատենադարանի № 9324 ձեռագրի պահպանակ
(Խորենացու գիտ. հրատ. առաջին գիրք, գլ. Գ—Դ, էջ 12—13)

էջ 1ա, 1-ին սյունակ

ՅՍԿԶԲԱՆՆ. (Բ)ԱՅՅ
ՍԿՍԱՅՅ ԹԵՊԵՏ ԵՒ ԶԱ
(Ն)ԻԻ. ՄԻԱՅՆ ԹԵ ՈՔ
ՇՆՈՐՀԱԿԱԼ ԻՄՈՅ ԳՏԱ
5 ՆԻՅԻ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՅ.
ՍԿՍԱՅՅ ՅՈՐՈՅ ԵՒ ԱՅ
ՂՔՆ ՈՐՔ ՅԵԿԵՂԵՅԻՈՂ
ԵՒ ՈՅՔ ԸՍՏ ՔԻ ԱԻԵ
ԼՈՐԴՔ ՀԱՄԱՐԵԱԼ ԶԱՐ
10 ՏԱՔՆՈՅՆ ԵՐԿՐՈՐԴԵԼ
ՅԱՂԱԳՍ ՍԿԶԲԱՆՆ Ա.
ՌԱՍՊԵԼՍ, ԲԱՅՅ ԵԹԵ
ԶԿՆԻՍՆ ԶԺԱՄԱՆԱԿՍ
ԻՆՉ ԱՐԴԵԻՔ ԵՒ ԶԱՐՍ

էջ 1ա, 2-րդ սյունակ
(...ՀԵԹԱՆՈՍԱ)

ԿԱՆ ԶՐՈՒՅԱ(ՏՐՈՒԹ)
ԻԻՆՍ. ՍԱԿԱՅՆ ԵՒ Ի
ՆՈՅԱՆԷ ԶՈՐ ԻՆՉ
ՀԱԻԱՍՏԻՆ ԿԱՐԾԵՄՔ
5 ԱՌՆՈՒԼ:
Դ. ՅԱՂԱԳՍ ԶԻ ՈՉ ՍԱԿՍ ԱԴԱ
ՄԱՅ ԵՒ ԱՅՂՈՅ ՆԱՀԱՊԵՏԱ
ՅՆ ՄԻԱՐԱՆԻՆ ԱՅՂՔ(Ն) Ի
ՊԱՏՄԱԳՐԱՅ.*
10 ՅԱՂԱԳՍ ԱՐՄԱՏՈՅՆ
ՀԱՆՈՒՐՅ ՄԱՐԴԿՈՒԹԵ
ԱՆ. ԿԱՄ ԹԵ ՀԱՃՈՅ
ՈՒՄԵՔ ԹՈՒԵՍՅԻ ԱՍԵԼ
ԾԱՅՐԻՆ. ՊԱՐՏ ԷՐ ՄԵՉ

1 Ի սկիզբն (c սկզբանն)

2 սակայն սկսայց

3 թէ, չիք՝ ոք

4 շնորհակալ ոք մերոցս

5 աշխատութեանցս (Տխ գտանիցի լեալ
աշխատութեանց)

6 եւ սկսայց

6-7 այլքն

8-9 աւելորդ համարելով (աՅ համարեալ)

12 ևթէ

13 ժամանակս

14 արդեօք

* 6-9 տողերը՝ կարմիր թանաքով:

1 Հեթանոսականն

7 եւ այլոց

8 միաբանեցան

8 այլքն

11 հանուր (Տխ)

11-12 մարդկութեանս

12 թէ

13 թուիսցի (Տխ)

15 ՅԱՅՏՆԻՍ (ՈՐՈՒՄ) ԵՒ ԱԾ(ԱՅ)
 ԻՆՔՆ Ի ՃԱՀ ԳԱՅՅԵՆ
 ՊԱՏՄՈՒԹԻԻՆՔՆ ԲԱ
 ՆԻՅ, ՄԻՆՉԵՒ Ի ՀԱՐ

15 ՍԱԿԱԻ ԻՆՉ ԱՆՅԱՆԵԼ
 ԲԱՆԻԻՔ. ԹԵ ԸՆԴԵՐ ՀԱ
 ԿԱՌԱԿ ՀՈԳԻՈՅՆ (ԵՈՐ)
 ՀԵ(ԱԼ ԱՆՄԻԱԲԱՆԵՅԱՆ)



17 պատմութիւնք

16 բանիւ

16 թէ

16 քնդէք

№ 9324 ձեռագրի պահպանակ

Լջ 1բ, 1-ին սյունակ

Լջ 1բ, 2-րդ սյունակ


ԵՒ ՉԲԱՉՄԱՎԻՊԷՆ. ԵՒ
 ՉԱԲ(Ի)ԻԴԵՆԵԱ. ԿԱՄ Չ
 ՆՈՅՆ ԻՆՔՆ ՆԱԻԱԿԱՌՈՒ
 ՅԷՆ. ԵՒ ՉԱՅՂՈՅ ՆԱՀԱ
 5 ՊԵՏԱՅՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՎԱ
 ՍՆ ԱՆՈՒԱՆՅՆ ԵՒ ԺԱՄԱ-
 ՆԱԿԱՅ. ԱՅՂ ԵՒ ՎԱՍՆ
 (ՈՉ) ՍԿԻՉԲՆ ՉԱՌ Ի
 ՄԷՆՉ ՀԱԻԱՏԱՐՄԱՅԵ
 10 ԱԼՆ ԿԱՐԳԵԼՈՅ ԱՉԳԻՍ
 ՄԱՐԴԿԱՆ. ՔԱՆՉԻ Ա
 ՍԷ Ա(ԲԻԻԴԵ)ՆՈՍ ՀԱՆ
 ԳՈՅՆ ԱՅՂՈՅ ԱՅՍՊԷ(Ս)
 (ԵՒ) ՉՆԱ ԱՄԵՆԱԿԱԼՆ
 15 ԱԾ(Ե)ՅՈՅՅ ՀՈՎԻԻ ԵՒ Ա
 ՌԱՉՆՈՐԴ ԺՈՂՈՎՐ
 ԴԵԱՆՆ ՅԵՏ ՈՐՈՅ Ա
 ՍԷ ԲԱԳԱԻՈՐԵԱՅ

ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ՎԱՍՆ
 ՆՈՅԻ ԱՅՂՈՎ ԱՆՈՒԱ
 ՄԲ ՎԱՐԻՆ. ԵՒ ԺԱՄԱ
 ՆԱԿԱԻՔ ԱՆԲԱԻՔ
 5 ԹԵՊԷՏ ԵՒ ՎԱՍՆ ՉՐ
 ՈՅՆ ՍԱՍՏԿՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՐԿՐԻ ՉՈՅԳ ՀՈԳԵ(ԻՈ)
 ԲԱՅՆ ՄԻԱԲԱՆԻՆ ԲԱ
 10 ՆԻՅ. ՆՈՅՆԳՈՒՆԱԿ
 ԵՒ ՉԹԻԻ(Ս) ՆԱՀԱՊԵՏԱ
 ՅՆ Ժ ՔՍԻՍՈՒԹՐԱԻ
 ՀԱՆԴԵՐՉ ԹՈՒԷ. ՈՐ
 ՈՉ ՄԻԱՅՆ ԸՍՏ ԲՈԼ
 15 ՈՐՄԱՆ ԱՍԻ ՅԱՐԵԳ
 ԱԿՆԷ ՉՈՐԵՔԺԱՄԱ
 ՆԱԿԵԱՆ ԸՍՏ ՄԵՉ ԼԻ
 ՆԵԼՈՅ ՏԱՐԻՈՅ(Ն). ՀԵՌԱ



1 չիք՝ ա. եւ
 2 զԱբիւղինայ
 3—4 զնուակառուցէն
 4 և զայլոց
 6 անուանց
 7 այլ և
 9—10 հաւատարմացեալս
 10—11 ազդի մարդկան (Ա)
 12 այլոցն
 14 ամենախնամն փխ. ամենակալն-ի:

1 և յաղագս փխ. եւ վասն-ի
 2 այլով (e)
 4 ժամանակօք
 5 թէպէտ
 7 վասն ազականութեան
 9—10 բարբառին բանից, փխ՝ միարանին
 բանից (Ա)
 12 Բախտութեաւ
 13 թուեն
 15—16 քսա բոլորման առ ի յարեղականէ



Նկ. 1. Պետ. Մանենդարանի № 9324 ձևագրի պահպանակ, էջ 1րդ

Պետ. Մատենադարանի ձեռագիր պատարիկ N 1411
(Խորենացու գիտ. հրատ. Երրորդ գիրք, գլ. ԾԱ, ԾԲ, էջ 324—326)

էջ 1ա, 1-ին սյունակ

էջ 1ա, 2-րդ սյունակ

(...ԽԱՂԱՂԱ)

ՄԱՍՆ ՊԱՐՍԻՅ ՎՌԱ

ՄԱՅ. ԵՒ ԶՄԱՍՆ

ՅՈՒՆԱՅ ԱՐԿԱԴԵԱՅ:

ՄԸ. ՅԱՂԱԳՍ ԳԱՆԻԵԼԻ ՆՇԱՆԱԳՐԱՅ:

5 ՅԱՅՆՄ ԺԱՄԱՆԱԿԻ

ՀԻՒԱՆԴԱՅԵԱԼ ԱՐԿԱԴ

ԵՒ ՇԱՐԺՄԱՆՅ ԱՀԱԳ

ՆԻՅ ԵՒ ՀՐԿԻԶՈՒԹ

ԵԱՆՅ ԵՂԵԱԼ Ի ԲԻԻԶ

10 ԱՆԴԻՈՆ ՈՐ ՅԱՂԱԳՍ

ՄԵԾԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՇՓՈԹԵԱԼ ԼԻՆԷՐ

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՆՆ

ՅՈՒՆԱՅ. ԵՒ ԶԱԻՐՔՆ

15 ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ ՊԱՍ

ԵՐԱԶՄԵԻՆ ԵՒ ԸՆԴ

ՊԱՐՍԻՅ. ՎԱՍՆ ՈՐ

ՈՅ ՎՌԱՄ ՀՐԱՄԱՅ

ԵԱՅ ՎՌԱՄՇԱՊՀՈՅ

20 ԹԱԳԱԻՈՐԻՆ ՀԱՅ

ՈՅ ԻԶԱՆԵԼ Ի ՄԻԶԱ

ՅՈՒՅԵԱԼ ԿԱՐԳԵՍ(ՅԷ)

ԶՆՈՍԱ. ԵՒ ՀԱՄ(ԱՐ)

ԵՐԿԱՔԱՆԶԻԻՐՈՅ(Ն)

ՀԱՏՅԷ ԳՈՐԾԱԿԱԼ(ԱՅՆ)

5 ԵՒ ԻԶԱՆԵԼ ՆՈՐԱ (Ի ԿԱՐ)

ԳԵԼ ԶԱՅՍ ԱՄԵՆ(ԱՅՆ)

ՈԶ ՓՈՔՐ ԻՆԶ ԿՐ(ԷՐ)

ԶԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

ՎԱՍՆ ՔԱՐՏՈՒՂԱ(ՐԻ)

10 ԶԻ ՄԻՆԶԵԻ ԳՆԱ(Յ)

ՄԵՍՐՈՐ ՅԱՐՔՈՒ(ՆԱ)

ԿԱՆ ԴՐԱՆԷՆ ՈԶ Ո(Ք)

Ի ՀԱՐՏԱՐԱՅ ԳՏ(Ա)

ՆԷՐ ԲԱՆ Ի ԳՊՐԱ(Յ)

15 ՔԱՆԶԻ ՊԱՐՍԿԱՆ(ԱԻՆ)

ՎԱՐԵԻՆ ԳՐՈՎ.

ՎԱՍՆ ՈՐՈՅ ՄԱ(S)

ՈՒՅԵԱԼ ԱՌ ԱՐՔ(ԱՅՆ)

ՈՄՆ ՀԱՐԷԼ ԱՆՈ(ԻՆ)

20 ԿՈԶԵՅԵԱԼ. Խ(ՈՍ)

ՏԱՆԱՅՐ ՀԱՅԿ

| | | | | | | | | | |

| | | | | | | | | | |

1 գմասինն Պարսից

2—3 և գմասինն Եունաց

4 ԾԲ Յաղագս Դանիելեան նշանագրու-
թեանն (ցհտ Դանիելի, Կ1 նշանագրաց)

14 զօրքն

15—16 պատերազմէին

16—17 ընդ պարսս (Խ)

19—21 Վասմշապէոյ մերում Թաղաւորի
իջանել

5 Եւ իջեալ

8 աշխատութիւն

9 յաղագս վիս. վասն ի

10 զի մինչ զնաց.

11 մեարսոյ

12 ոչ զօք

14 անդ վիս. բան-ի

15 Պարսկականաւն

16 վարէին

18—19 առ արքայն քահանայի ուրումն

Հարէլ անուն (Ա)

Պատասխիկ № 1411

Էջ 1բ, 1-ին սյունակ

Էջ 1բ, 2-րդ սյունակ

(ՆՇԱՆԱ)

- ԳԻՐ ԼԵԶՈՒԻ ՅԱՐ
- (Մ)ԱՐԵԱԼ Ի ԴԱՆԻԵԼԷ
- (Ե)ՊԻՍԿՈՊՈՍԷ ՅԻՒՐ
- (Մ)Է ՄԵՐԶԱՒՈՐԷ. ԶՈՐ
- 5 (ՈՎ) ԱՆՓՈՅԹ ԱՐԱՐԵ
- (Ա)Լ ԱՐՔԱՅԻՆ ԵՒ ԵԼ
- (Ե)ԱԼ Ի ՀԱՅՍ ԳՏԱՆԷ
- (Ժ)ՈՂՈՎԵԱԼ ԱՌ ՄԵԾՆ
- (Ս)ԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՐ
- 10 (Զ)ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ
- (ԶԱ)ՄԵՆԱՅՆ ՀՈԳԱԼ ԶԸ
- (Գ)ԻԻՏ ԳՊՐՈՒԹԵԱՆ
- (Հ)ԱՅՈՑ. ԶՈՐ ԱՐՔԱՅ
- (ԻՆ) ԶԳԱՅՈՒՅԻՆ.
- 15 (ԵԻ) ՆԱ ՊԱՏՄԵԱՅ ԶԱ
- (ՍԱ)ՅԵԱԼՆ ՎԱՆԱԿԱՆ
- (ԻՆ). ԶՈՐ ԻՐՐԵԻ ԼՈՒԱՆ
- (Թ)ԱԽԱՆԶԵԻՆ ԶՆԱ
- (ՓՈ)ՅԹ ԶԱՅՆՊԻՍԵԱ
- 20 (ՅՆ) ԱՌՆԵԼ ՊԻՏՈՅԻՑ
- (ՎԱՍ)Ն ՈՐՈՑ ԱՌԱՔԵԱՅ .

- ԶԱՅՐ ՄԻ ՊԱՏՈՒՍ
- ԿԱՆ ՅԱՇԽԱՐՀԷՍ ԵՒ
- ՀԱԻԱՏԱՐԻՄ ԻԻՐ. ԽԱ
- ՂՈՒՆԻ ԱԶԳԱԻ ՎԱՐՃԻՃ
- 5 ԱՆՈՒՆ ՅՈՅԺ ՓԱՓԱ
- ԳԱԻ ԶՆՈՐԻՆ ԳՈՐԾՈՑ
- ԱՌ ՀԱՔԷԼՆ ԱՅՆ. ԶՈՐ
- ԱՌԵԱԼ ԵՒ ԵՐԹԵԱԼ ՆՈ
- ՎԱԻ ՀԱՆԴԵՐՉ ՔԱԶԱ
- 10 ՄՏԱՅԵԱԼ Ի ԴԱՆԻԷԼԷ
- ԿԱՐԳԵԱԼ Ի ԶԵԻՈՑ ԱԻ
- ՐԻՆԱԿԻ ՅՈՒՆԱԿԱՆ
- ԻՆ ԶՎԱՂՆԶՈՒՅ ԳՐԵԱԼ
- ՇԱՐԱԳԻՐՍ ՏԱՌԻՑ
- 15 ԵԿԵԱԼ ԵՏՈՒՆ ՅՄԵԾՆ
- ՍԱՀԱԿ ԵՒ ՅՄԵՍՐՈՐ.
- ՈՐՈՑ ԱՌԵԱԼ ԵՒ ԹԵԻ
- ԱԾԵԼՈՎ ԸՆԴ ՆՈՍԱ.
- ԵՒ ՏՂԱՅՍ ԶՈՄԱՆՍ ՍԱ
- 20 ԿԱԻՍ ՏԵՂԵԿԱՅԵԱԼ
- ԳԻՏԱՅԻՆ ՈՉ ԼԻՆԵԼ

1 լեզուաց ասնել նշանագիր.
 3—4 յիւրմէ
 6 արքայի (ա/կ)
 9 Մեսրոպ (cef)
 10—11 դամենայն կաթողիկոսութեան (d)
 13—14 զոր զգացուցին արքային (Ա/թ)
 15—16 պատմեաց նոցա զասացեալսն
 18 թախանձէին

2 յաշխարհիս փիս. յաշխարհէս-ի
 3—4 խազունի ազգաւ Վահրիճ անուն
 (Ա. Վարճիճ)
 5—6 յոյժ փափազող նորին դործոյ
 9—10 քաջ հմտացեալ
 10 Դանիելէ
 11 կարգեալ ըստ ձևոյ
 11—12 օրինակի
 13 զվազնջուցն (Տիւժ)
 14 շարագիր
 16 և Մեսրոպ
 17 որոց ուսեալ փիս. որոց ասեալ-ի
 19—20 Եւ չիբ, ազայոց զամս սակաւս
 փիս. ազայս զոմանս սակաւս

ՏՐԱԾՈՒՄԻ ԶԱՐ
ԵՍԵՄԻ ԴԱՐԵԼԷ
ԿԱՊՈՊՈՍԷՅՐԻ
ԵՄԵՂԱՐԻ Է ԳՈՐ
ԿԱՖՈՅՆԱԿԱՐԵ
ԿԱՐԱՅԻՍԵՒ ԵԼ
ԿԵՏԻՑԱԳՐԱԵ
ԿՂՈՊԵԼԿԱՊԵՏԻՆ
ԿՏԱԿԵԿԵԿՈՐ
ԿՅԱԿՈՊՈՍԻՄԻՆ
ԿԵՍԵՆՏԻԿԱԳՐԵ
ԿԻՄԿԱՊԻԿԵԿԱՆ
ԿՅՈՒՆ ԳՈՐԿԱՐԵՅ
ԳՂԱՅԻՆ ՅՈՒՆ
ԿԱՊՈՍԿԱՅԻՆ
ԿԵԼԿԱՊԿԱԿԱՆ
ԳՈՐԿԵՐԵՒՈՒՆ
ԿՈՒՆԶԵՐՆՈՒՆ
ԿՅՈՒՆԿԱՊՈՍԵՆ
ԿՈՒՆԿԱՊՈՍԻՆ

128 (116)

ՉԱՅԻՐԵԿԱՐՈՒՄ
ԿԱՅԻՆԿԱՐՏԵԱՆԵ
ՏԱՐԱՐԵՐԻՄԻ ԽԱ
ԿԱՐԱՐՉԳԱՎԱՐՆԻՃ
ԿԱՊՈՍ ԶՈՅՆԻՃ
ԳՐԱԳՈՐԿԱՆԿԱՅ
ԿԱՏԱԵԼԿԱՅՆ ԳՈՐ
ԿԱՅԱՆԵԿԵԿԱՅԿԱ
ԿԱՏԱՐԵՐԻՄԻ ԿԱՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ
ԿԱՐԿԱՐՆԵՐՆԻՅ

Նկ. 2. Պետ. Մատենադարանի պատասխիկ N 1411:

Պատասխիկ N 1411

(Խորենացու գիր. հրատ. երրորդ գիրք, գլ. Ծ է, էջ 334—335)

էջ 2ա, 1-ին սյունակ

էջ 2ա, 2-րդ սյունակ

[ԹՈՒՂԹ ՍԱՀԱԿԱՅ
ԱՌ ԱՆԱՏՈՂԻՈՍ]

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԱ
ՊԵՏ ՀԱՅՈՅ ՔԱԶԻ ԶԱԻ
ՐԱՎԱՐԻԴ ԱՆԱՏՈՂԻ
ԽՆԴԱԼ. ՇՆՈՐՀՈՒՆ

5 ԻՄ ՅԱՅ ՅԱՂԱԳՍ ՔԵԶ
ՊԱՏՐԱՍՏԵԼՈՅ ՄԵԶ
ՅԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ.

ՎԱՍՆ ՈՐՈՅ ԶԳԱՅՈՒՅԱ
ՆԵՄ ԶՀԱՅԹԱԹԱՆՍ

10 ՄԵՐՈՅ ՆԵՂՈՒԹԵԱՆՍ.
ԱՌԱՔԵՅԻ ԶՈՒՍՈՒՅՈ
ՂԴ ՄԵՐ ԶՄԵՍՐՈՐ, ԵԻ
ԶԹՈՌՆ ԻՄ ԶՎԱՐԴԱՆ
Ի ԴՈՒՌՆ ԱՐՔՈՒՆԻ.

15 ԵԻ ԱՂԱԶԵՄ ԶՔՈ ՔԱԶ
ՈՒԹԻՒՆԴ ԶԵՌՆՏՈՒ ԼԻ
ՆԵԼ ՃԱՆԱՊԱՐՀԻԴ
ՈՂԶ ԼԵՐ.

ԶԱՅՍ ՏԵՍ ԱՆԱՏՈՂ

20 ԵԱ. ՄԻԱՆԳԱՄԱՅՆ
ԵԻ ԶԼՈՒՐ ԱՌԱՔԻՆՈՒ

ՇԵԱԼ ՈՐ ՅԱՌԱԶԱԳ(Ո)
ՅՆ ՀՆԶԵԱԼ ԶՆՄԱ(ՆԷ)
ՈԶ ՓՈՔՐ ԱՐԱՐ ՆՈՅ(Ա)
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ, (ՄԻ)

5 ՆԶԵԻ Ի ԶԵՌՆ ՓՈՓՈ(Խ)
ԸՆԹԱՅԻՅ ԳՐԵԼՈՎ (Զ)
ԳԱՅՈՒՅԱՆԷՐ ԿԱՅ

ՍԵՐ. ԱՌ(Ն)ՈՒ ՀՐԱՄ(ԱՆ)
ԱՐԺԱՆԱՊԷՍ ԱՌԱ(Ք)

10 ԵԼ ՓՈՒԹՈՎ. ՎԱՍՆ (Ո)
ՐՈՅ ԱՐԳԵԼԵԱԼ Ի ՔԱ(ՂԱ)
ՔԻՆ ՄԵԼԻՏԻՆԻ ԶՔ(ԱԶ)
ՄՈՒԹԻՒՆ ԱՇԱԿԵՐ(ՏԱ)
ՅՆ ԶՈՐՍ ԸՆԴ ԻՆՔ(ԵԱՆ)

15 ԱԾԵԱԼ ՀԱՆԴԵՐԶ (ԳԸԼ)
ԽԱՒՈՐԱԻՆ ԻԻՐԵԱ(ՆՅ)
ՂԵԻՈՆՏԻԻ. ԱՌ Ե(ՊԻՍ)
ԿՈՊՈՍԻՆ ԱԿԱԿԱ(Յ ԹՈ)
ՂՈՒ. ԵԻ ԻԻՐ ԱՌԵԱ(Լ Զ)

20 ՄԵՍՐՈՐ ԵԻ ԶՎԱՐ(ԴԱՆ)
ՏԱՅ ԵՊԻՍԿՈՊՈ(ՍՆ)

| | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |

1 Սահակ եպիսկոպոս Հայոց
2—3 զօրավարի Անատոլիայ
5 Աստուծոյ յաղագս զքեզ (glopgrs)
7 յապաւինութիւն փիւ. յապահովութիւն
9 դի ի հայթայթանս
12 զՄեսրոպ
12 և փր. ևւ
15 և աղաչեմ
19—20 դայս տեսեալ Անատոլիայ.

2 հնչեցեալ էի զնմանէ.
3 ոչ փոքր ինչ արար
5 մինչև
6 զքով
6—7 զպացուցեալ կայսերն
8 ն-ն լրացնում ենք ինքնեքս
12 Մելիտինէ
15—16—17 զլիսուորաւն նոցա Ղևնդիւ
20 զՄեսրոպ (delf)
21 ցեպիսկոպոսն

Պատահիկ № 1411

Էջ 2բ, 1-ին սյունակ

Էջ 2բ, 2-րդ սյունակ

(ԲԱՐԵ)

- (Փ)ԱՌՈՒԹԵԱՄԲ ԶԸ
- (Ն)ՈՍԱ ՅՈՒՂԱՐԿԷ ՈՐ
- (Ո)Վ ՄՏԻՆ Ի ԲԻԻԶԱՆԴԻ
- (Ո)Ն. ԵՒ ՅԱՆԴԻՄԱՆ
- 5 (Ե)ՂԵԱԼ ՄԵԾԻ ԹԱԳԱԻ
- (Ո)ՐԻՆ ԹԵՈՂՈՍԻ. ԵՒ
- (Ա)ՌԻՆ ԶՈՐ ՅՈՒՍԱՅ
- (Ի)ՆՆ ԵՒ ԶՈՐ ՈԶՆ ՅՈՒ
- (Ս)ԱՅԻՆ. ԵՒ ԴԱՐԶ
- 10 (Ա)Ն ԹՂԹՈՎ ԱՅՍՊԻ
- (Ս)ԵԱԻ. ԹՈՒՂԹ ԹԵՈՂՈՍԻ
- ԱՌ ՍԱՀԱԿ:
- (Ի)ՆՔՆԱԿԱԼ ԹԵՈՂ
- (Ո)Ս ԵՒ ԿԱՅՍՐ ՀՌՈՎ
- 15 (Մ)ԱՅԵՅԻՈՅ. ՄԵԾԻ
- (ՍԱ)ՀԱԿԱ ԵՊԻՍԿՈ
- (ՊՈ)ՍԱՊԵՏԻ ԽՆԴԱԼ.
- (ՀՐ)ԱՄԱՅԵԱԼ ՄԵՐ ՏԵ
- (ՍԱ)ՆԵԼ ԶԹՈՒՂԹՆ
- 20 (ՎԵ)ՐԱՀԱՍՈՒ ԵՂԵԱՔ
- (ԳՐԵ)ՆՅՍ ԱՌ Ի ՔԷՆ. ԵՒ

- ԶԻ ԱՄԵՆԱՅՆ ՍՐՏԻԻ
- ՄԻԱՄՏԵՑԱՔ ԶԶԵՏ ՀԵ
- ԹԱՆՈՍ ԹԱԳԱԻՈՐԻ.
- ԵՒ ՄԵԶ ԵՒ ՈԶ ԹՈՂԹ
- 5 ՈՎ ԲԱԻԱԿԱՆԱՅԱՐ ԾԱ
- ՆԱԻԹԱՆԱԼ. ԵՒ ԱՌԱԻ
- ԵԼ ՅԱՅՍՄ ՄԵՂԱԴՐԵ
- ՄՔ. ԶԻ ԱՐՀԱՄԱՐՀ
- ԵԱԼ ՃԱՐՏԱՐՈՎՔՍ
- 10 ՈՐ Ի ՄԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԻՍ.
- ՅԱՍՈՐՈՅ ՈՄԱՆՅ ԽՆ
- ԴՐԵԻՐ ԶԻՄԱՍՏԻՅ ԳԻ
- ԻՏՍ. ՎԱՍՆ ՈՐՈՅ ՀԱ
- ՃԵԱԼ ԵԱՔ ԸՆԴ ՄԵՐՈՅՍ
- 15 ՈՒՍՈՒՄՆ. ԵՒ ԶԵՐ ԱՐ
- ՀԱՄԱՐՀԵԱԼ ԶԱՅՍՊԻ
- ՍԻ ՈՒՍՈՒՄՆ. ԲԱՅՅ
- ՅԵՏՈՅ ՊԱՏՄԵԱՅ
- ՄԵՍՐՈՔ ԹԵ ԿԱՏԱ
- 20 ՐՈՒՄՆ ԱՐՈՒԵՍՏԻՅՆ
- Ի ՇՆՈՐՀԱՅ ՎԵՐՆՈՅՆ .

| | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |

6 չիբ՝ Թեոդոսի
 10-11 հանդերձ թղթով փխ. և. դարձան
 թղթով
 11 Թեոդոսի
 13-14 Թեոդոսի
 14 Ա.գոստոս և կայսր
 14-15 Համայնաց
 16-17 Կախակոստի Հայոց (Տ չիբ Հայոց)
 19 ղթուղթս
 20 Կղաք

2 միակցար
 3 թագաւորաց (Տի)
 4-5 թղթով
 5-6 ծանօթանալ
 7-8 մեղադիր ևմք (opgrs)
 9 զհարտարօքս
 11 յմտորեաց
 11-12 խնդրեցիր (ԱՏ խնդրէիր)
 14 էար (ge)
 14-15 մերոց ծառայեց փխ. մերոցս ուսումն
 15 չիբ՝ և. ձեր
 15-16 արհամարհել (Կ արհամարհեալ)
 16-17 զայդպիսի (ԽՎ զայսպիսի)
 17-18 բայց զի յետոյ
 18-19 պատմեաց մեզ
 19 Մերոս ևթէ (deil Մերոս) (Տի թէ)
 20 արուեստիդ

№ 9324 ձեռագրի պահպանակ



(Խորենացու գիտ. հրատ. երրորդ գիրք, գլ. ԿԸ, էջ 359—361)

էջ 2ա, 1-ին սյունակ

էջ 2ա, 2-րդ սյունակ

ԿԵՐԱԻՆ ԳՈՐԾԱԿ
 ՅԱԻ, ԸՆԴ ՔԻ ԼԱԻ ԷՐ
 ՆՈՅԱ. ԲՆԱԿԵԼ. ԵԻ
 ՅԱԲՐԱ. ՀԱՄԵԱՆՆ
 5 ՀԱՆԳՉԵԼ Ի ԳՈԳՍ.
 ԵԻ ՀՐԵՇՏԱԿԱՅՆ
 ՏԵՍԱՆԵԼ ԶՊԱՐԱԻ
 ՈՐՈՒԹԻԻՆՍ. ԲԱՅՅ
 ԱՆՀՈԳԱԻՂ ԴՈՒ ԱՅ
 10 ՐԻՈՒԹԵԱՄԲ. ԵԻ
 ԵՂԿԵԼԻՔ ՄԵՔ ՈՐՔ ԶՐ
 ԿԵԱԼ Ի ՀԱՅՐԵՆԻ ՎԵ
 ՐԱԿԱՅՈՒԹԵՆԷՆ.
 ԶԻ ՈՉ ՈՐՊԷՍ Ի ՀՆ
 15 ՈՒՄՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ
 ԱՅՂ ԱՌԱԻԵԼ ՄԵՐ ՎԱ
 ՏԹԱՐՈՒԹԻԻՆՍ.
 ՎԱՄՆ ԶԻ ՄՈՎՍԷՍ
 (Բ)ԱՐՉԵԱԼ ԼԻՆԻ Ի ՆՈ
 20 (Յ)ԱՆԷ. ԵԻ ՅԵՍՈՒ ՈՉ
 (Ա)ՌԱՋՆՈՐԴԵԱ(Յ)

ՌՈՐՈՎԱՄ ՄԵՐԺ (Ե)
 ՅԱԻ Ի ՄԵՐՄԷ ԺՈՂՈ
 ՎՐԴԵՆԷՆ. ԵԻ ՓՈ(Խ)
 ԱՆՈՐԴԵԱՅ ՈՐԴԻՆ (ՆԱ)
 5 ԲԱՏԱ. ԵԻ ԶԱՅՐՆ (ԱՅ)
 ԾԱԽԵԱՅ ՈՉ ԱՌԵԻ(Ծ)
 ԱՅՂ ԿԱՏԱՐՈՒՄ(Ն)
 ԺԱՄԱՆԱԿԻ.
 ԵՂԻԱ ՀԱՄԲԱՐՉԱ(Ի)
 10 ԵԻ ԵՂԻՍԷ ՈՉ ՄՆԱՅ
 ԿՐԿԻՆ ՈԳՈՎՆ
 ԱԻԾԱՆԵԼ. ԶՅԵՈՒ
 ԱՅՂ ԵԻ ԱԶԱՅԷԼ ՀՐ
 ԱԻԻՐԵՅԱԻ ԿՈՏՈՐ
 15 ԵԼ ԶԻԷՂ. Ի ԳԵՐՈՒ
 ԹԻԻՆ ՎԱՐԵՅԱԻ ՍԵ
 ԴԵԿԻԱ. ԵԻ ԶՈՐԱ
 ԲԱՐԷԼ ՈՉ ՈՒՐԵՔ ԳՈ(Յ)
 ՈՐ ՆՈՐՈԳԷ ԶՊԵՏ
 20 ՈՒԹԻԻՆՆ. ԱՆՏԻՈ
 ՔՈՍ ԲՌՆԱԴԱՏԷ



1—2 և գործակցաւն
 2 լաւ է (նման է մասամբ Խ.)
 6 գհրեշտակացն
 9 անհոգող (c)
 9—10 այրիութեամբ
 11—12 որ դրկեալք եմք ի
 15 ժողովուրդն այն
 16—17 այլ առաւել մերս է թշուառութիւն.
 19—20 չիք՝ նոցանէ
 20—21 ոչ յաջորդէ առաջնորդել

2—3 յիւրմէ ժողովրդեանէն
 6 առիւծ (ՏԽ)
 7 այլ
 10 եղիսէէ
 11 ողւով
 12 օծանելի զՅէու
 14—15 ի կոտորելի զխորայէլ (al)
 16—18 Սեղեկիայ և Զօրաբարէլ
 18 չիք՝ զայ.

N 3924 ձեռագիր պահպանակ, էջ 2ր

էջ 2ր, 1-ին սյունակ

էջ 2ր, 2-րդ սյունակ

(2) ԱՅՐԵՆԻՍ. ԵՒ
 (Մ) ԱՏԱԹԻԱ ՈԶ ԸՆԴ
 (Դ) ԻՄԱԿՅԷ. ՊԱՏԵՐ
 (Ա) ԶՄ ԶՄԵԶ ՇՈՒՐԶ
 5 (Պ) ԱՇԱՐԵԱՅ. ԵՒ ՄԱԿ
 (ԱՐ) Է ՈԶ ՓՐԿԷ. ԱՅԺՄ
 ՄԱՐՏՔ Ի ՆԵՐՔՈՒՍՏ.
 (Ա) ՐԶԱԻՐՔ ԶԵԹԱՆ
 ՈՍԱՅ. ԵՒ ՄԱՐՏՔ
 10 (2) ԵՐԶՈՒԱԾՈՂԱՅ.
 ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
 ԶԷ Ի ՄԻՋԻ ՈՐ ԽՐԱ
 ՏԷ ԵՒ ՅԱԻՐԻՆԷ Ի
 ՊԱՏԵՐԱԶՄ. ԱԻԱՂ
 15 ԶՐԿԱՆԱՅՍ. ԱԻԱՂ
 ԹՇՈՒԱՌԱԿԱՆ ՊԱ
 ՏՄՈՒԹԵԱՆՅՍ.
 (Ո) ՐՊԷՍ ԶԱԽՏՍ ԶԱՆ
 (Դ) ՈՒՐԺԵՅԻՏ ԲԵՐԵԼ.
 20 ԶԻԱՐԴ ԶԻՄ ՄԻՏՍ
 (Ե) Ի ԶԼԵԶՈՒՍ ՊՆԴԵ
 | | | | | | | | | | |

ԶԲԱՆՆ ԶԱՐՅՆ ՓՈ
 ԽԱՆԱԿ ԾՆՆԴԵԱՆՆ
 ԵՒ ՍՆՆԴԵԱՆՆ. ՔԱՆ
 ԶԻ ԾՆԱԻ ԶԻՍ ԻԻՐԵԱ
 5 ՆՅ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՐ
 ԵՒ ՍՆՈՒՅԻՆ ԶԻՍ ԱՌ
 ԱՅՂՍ ԱՌԱՔԵԼՈՎ Ա
 ՃԵՅՈՒՅԱՆԵԼ ԵՒ
 ՄԻՆԶ ՆՈՔԱ ԶՄԵՐՆ
 10 ՅՈՒՍԱՅԻՆ ԴԱՐԶ.
 ԵՒ ՊԱՏՈՒԱՍԻՐԵԼ Ի
 ՄՈՎ ԱՄԵՆԻՄԱՍՏ
 ԱՐՈՒԵՍՏԻՍ. ԵՒ
 ԿԱՏԱՐԵԼԱԳՈՅՆ
 15 ՅԱՐՄԱՐՈՒԹԵԱՄԲ.
 ԶԱՄԱՅՆ ԵՒ ՄԵՔ ՓՈԻ
 ԹԱՊԷՍ ԴԻՄԵՅԱՔ
 Ի ԲԻԻԶԱՆԴԻՈՆ ՅՈՒ
 ՍԱՅԵԱԼՔ ԶԱՐՍԱՆ
 20 ԵԱՅ ՊԱՐԵԼ. ԱՆՎԵ(ԶԵՐ)
 ԵՐԱԳՈՒԹԵԱՄԲ Կ(ՐԹԵԱԼՔ)
 | | | | | | | | | | |

2—3 Մատթիայ ոչ ընդդիմակայէ
 (4² bde)
 5 պաշարէ (bde)
 8—9 արհաւիրք ի հեթանոսաց
 9—10 և մարտք ի հերձուածողաց
 11 և խորհրդականն
 12—13 խրատէր և յարմարէր
 16—17 պատմութեանս
 20 դմիտս իմ

1 զբանս (b)
 4 ծնան զիս
 5 վարդապետութեամբն
 6—7 առ այլս
 10 զղարձ
 15 յարմարութեամբս (bade)
 17 զիմեալք
 18 ի Բիւզանդիոյ (degkn)
 18—19 յուսայար (b4142de)

Ինչպես կարելի է տեսնել, Մովսես Խորենացու Պատմության վերը բերված պատառիկում կան հատվածներ առաջին դրքի Գ և Դ գլուխներից և Դանիելյան նշանագրերի, պատմությունից ինչպես նաև Սահակ Պարթևի կողմից Անատոլիոս զորավարին, Թեոդոս կայսրի կողմից Անատոլիոս զորավարին, և Թեոդոս կայսրի կողմից Սահակ Պարթևին գրված նամակներից, նաև մի հատված Ողբից:

Մենք այստեղ տեղի սղության պատաճոտվ կանգ ենք առնում միայն պատառիկի առանձնապես հետաքրքրություն ներկայացնող այն հատվածի վրա, որը վերաբերում է Դանիելյան նշանագրերին:

Դեռ շատ վաղուց է, որ Դանիելյան նշանագրերի գործածման ժամանակի հարցը հուշել է մեր մի շարք գիտնականներին:

Ինչպես հայտնի է, Մեսրոպ Մաշտոցի կենսագիր և նրա ավագ աշակերտ Կորյունը իր «Վարք Մաշտոցի» գրքում ասում է այն մասին, որ Վռամշապուհի թագավորության հինգերորդ տարին Գանիելյան նշանագրերը բերվեցին Հայաստան. «Ի հինգերորդ ամի թագաւորութեան նորա (Վռամշապուհ) ի նա հասուցանէր»¹: Ապա Կորյունը հաղորդում է, որ այդ գրերով Մեսրոպը երկու տարի դասավանդել է.

«Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելին հասանէր, և իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր և նովին նշանագրովք տանէր»²:

Ապա Կորյունը շարունակության մեջ ասում է այն մասին, որ երբ տեսան, թե հնարավոր չէ այդ նշանագրերով հայերեն լեզվի «զսիւղորայս»՝ կապերն ամբողջությամբ արտահայտել, դարձյալ հոգսի մեջ ընկան, մինչև, որ Մեսրոպ Մաշտոցը Վռամշապուհ հայոց թագավորի հրամանով և Սահակ Պարթև կաթողիկոսի համաձայնությամբ ճանապարհ ընկավ նոր սրտնումների. դարձյալ Վռամշապուհի հինգերորդ տարում:

«Իսկ իբրև ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն ողջ ածել զսիւղորայս զկապս հայերէն լեզույն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ:

Վասն որոյ առեալ երանելոյն Մաշտոցի դաս մի մանկատոյ հրամանաւ արբայի և միարանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր, զնայր ի հինգերորդ ամի Վռամշապուհոյ արբային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորոց՝ որոց առաջինն Եղեսիս կոչի, և երկրորդին Ամիդ անուն»³:

Կորյունի վերոհիշյալ պարբերություններից երևում է, որ բնագրում լուրջ հակասություն կա: Երբեք չէր կարող, որ Վռամշապուհի հինգերորդ տարում Գանիելյան նշանագրերը բերվեին և հետո երկու տարի նրանցով ուսուցվեին և ապա անհաջողության մատնվելով դարձյալ Վռամշապուհի հինգերորդ տարում Մեսրոպը նոր սրտնումների գնար: Անկասկած ինչպես պարզ երևում է կամ երկու հնգերից մեկն է սխալ և կամ փորձարկման երկու տարին պետք է լինի ավելի կարճ մի ժամանակ, հավանաբար երկու ամիս:

Կորյունի հեանքրդ մեր մատենագիրքների մոտ ևս ուսուցման ժամանակաշրջանի հարցը հակասական ձևով է դրված: Պատմահայր Մովսես Խորենացին ըստ գիտական հրատարակության, այդ փորձարկման տարիները կոչում է «զամս սակաւս»⁴:

Ղազար Փարպեցու մոտ ինչպես հաստատել է Գ. Տեր-Մկրտչյանը, Գանիելյան նշանագրերի վերաբերյալ հատվածի մեծ մասը ընդմիջարկություն է

¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը ձեռագրասկան այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթություններով ի ձեռն պրոֆ.-դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941, էջ 44:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 46:

⁴ «Մովսեսի Խորենացու Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Աբեղյան և Ս. Յարութիւնեան, Տիգրիս, 1913, էջ 326:

հանդիսանում *Մ. Խորենացուց*¹: Փարպեցու մնացյալ մասերում էլ հիշատակված շեն այդ երկու հինգ տարիները և ոչ էլ Դանիելյան նշանագրերով ուսուցանելու ժամանակի տևողությունը:

Ստեփաննոս Տարոնեցի Ասողիկը, Դանիելյան նշանագրերի Հայաստան հասնելը դարձյալ Վոամշապուհի հինգերորդ տարում է հիշատակում, իսկ նրա վեցերորդ տարումն էլ հայ գրերի վերջնական գյուտն է համարում²:

Վարդան պատմիչը ևս գրում է, որ Վոամշապուհի հինգերորդ տարում է հորինում Մեսրոպ Մաշտոցը նշանագրերը³:

Սամվել Անեցին իր ժամանակագրության մեջ անդրադառնում է Դանիելյան նշանագրերի ուսուցման տևողության հարցին և ի տարբերություն Կորյունի, ասում է, որ միայն մեկ տարի է ուսուցվել այդ տառերով:

«ՆԻԱ: Պարսից Արտաշիր՝ ամս Գ: Սկիզբն դպրութեանս Հայոց, Մաշտոց՝ որ է Մեսրոպ երանելի՝ և մեծն Իսահակ զԴանիէլի նշանագիրսն յօրինէին ընկերօք հանդերձ: Եւ յետ միոյ ամի դարձեալ աստուածատուր նշանագրօք զնոյն յեղանակեալ, որով և դպրութիւնք և գիրք աստուածայինք ուղղեալ թարգմանէին»⁴:

Կիրակոս Գանձակեցին գրում է, որ թեև շատ ուրախ եղան ստանալով դանիելյան նշանագրերը և սկսան հայերեն թարգմանել Աստվածաշունչը, բայց տեսան, որ հնարավոր չէ «զամենայն սիղորայսն ողջ ածել, և զշաղկապս և զբառս, սկսան դարձեալ ի հոգս մտանել վասն այնորիկ...»⁵ Այստեղ արդեն բնավ խոսք չկա ուսուցման տևողության մասին:

Դանիելյան նշանագրերի ուսուցման տևողության հարցը, շուրջ հարյուր ութսուն տարի է ինչ, էլ ավելի հակասական ու խճճված վիճակում է գտնվում մեր հայտնի պատմաբանների ու բանասերների երկերում: Դեռևս Միքայել Զամչյանից սկսած ու նրանից հետո, մեր գիտնականները այս հարցում երկու խմբի են բաժանվել, մի մասը հակված է ուղղել Վոամշապուհի թագավորության հինգերորդ տարիներից մեկը և անգամ վեցերորդ տարին. իսկ երկրորդ խումբը ճիշտ համարելով այդ հնգերը, կողմնակից է «ամս երկու»-ն դարձնել ամիսս երկու և կամ բոլորովին ընդմիջարկություն համարելով մեկդի վանել այդ պարբերությունը:

Այսպես, դեռ Միքայել Զամչյանը գրում էր, որ Կորյունի մոտի այդ հակասությունը արդյունք է գրիչների թույլ տված սխալին. նա ենթադրում էր թե երկրորդ հինգերորդը պետք է լիներ յոթերորդ, իսկ Մեսրոպի վերադարձը անհրաժեշտ էր զնել ոչ թե վեցերորդ, այլ Վոամշապուհի ութերորդ տարում, թեև Զամչյանը այս էլ ճիշտ չհամարելով առաջարկում է ուղղել այն: Նա

¹ «Ղաղարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տիգրիս, 1904, էջ 15 (ժանոթ. 3):

² «Տիեզերական Պատմութիւն Ստեփաննոս վարդապետի Տարօնեցույ», Փարբիզ, 1859, էջ 74—75:

³ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 49:

⁴ «Սամուէլի քահանայի Անեցույ հաւաքմունք ի գրոց պատմագրաց յազազս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս», հրատ. Աբշակ Տէր-Միքայելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 68:

⁵ «Պատմութիւն Հայոց արարեալ կիրակոսի վարդապետի Գանձակեցույ», Թիֆլիս, 1909, Ղուկասյան Մատենադարան, էջ 29:

գանում էր, որ Կորյունի հիշատակած հինգերորդը իբր ոչ թե Գանիելյան նշանագրերի Հայաստան բերվելուն էր վերաբերվում, այլ Մեսրոպ Մաշտոցի Հայաստան գալուն և քարոզություն սկսելուն, ապա Չամչյանը նշում է, որ երկրորդ հինգերորդը պետք է լիներ տասնևհինգերորդ, իսկ վեցերորդն էլ տասնևվեցերորդ¹:

Մաղաքիա արք. Օրմանյանը ևս խոսում է Կորյունի մոտ գտնվող այս հակասական տեղեկության մասին, սակայն ոչինչ չի առաջարկում և ասում է, որ «թվականներու հարմարությանց համար ավելի երկարելը ձանձրալի կրնա դառնալ»²:

Բանասեր Գալուսա Տեր-Մկրտչյանը առաջին հինգերորդը համարում է ուղիղ, երկրորդը, շկողմնորոշվելով, գրում է «հի... երրորդ», իսկ վեցերորդը դարձնում է ԺԶ (16)³:

Ակադեմիկոս Հր. Աճառյանը մի նոր ուղղում էր առաջարկում, գրելով հետևյալը. «Անփոփոխ պահում եմ Կորյունի վեցերորդը, երկու ամսը և երկրորդ հինգերորդը, իսկ առաջին հինգերորդը ուղղում եմ երրորդ: Մխալն առաջացել է հետևյալ ձևով: Կորյունի ձեռագրում գրված է եղել երդ (համառոտագրված և առաջին տառի վրա պատվի նշանով), որ բնականաբար պիտի կարդացվեր «երրորդ»: Մի խեղճ գրիչ, վրան պատիվ դրած ե-ը թվանշան համարելով՝ կարդացել է հինգերորդ: Մնացյալը պահել է ճիշտ նախկին ձևով, առանց անդրադառնալու թե 5+2 չի տալ 5»⁴:

Ավելի ուշ, մի այլ տեղում, դարձյալ ակադ. Աճառյանը վերստին անդրադառնալով այս հարցին գտնում է, որ փորձի երկու տարիները Մաշտոցի համար խիստ անհրաժեշտ էին. և մեծ պատիվ են բերում իրեն քանի որ պարսիկները, թուրքերը ևն. միայն հազարամյա գործածությունից հետո նորերս միայն զգացին իրենց այբուբենի պակասավորությունը և դարմանելու կարիքը...⁵:

Բանասեր Գառնիկ Ֆնտզլյանը նկատում է Կորյունի մոտ սպրդած սխալը և առաջարկում է ուղղել երկրորդ հինգերորդը, քան թե առաջինը, «...զի Գանիելյան նշանագիրներուն հանկարծագրուտ հասնիլը ավելի տպավորիչ ըլլալով՝ ժամանակը ավելի ճշտիվ պահված ըլլալու է»⁶: Թեև վեցերորդ բառը անփոփոխ պահպանում է:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը, ինչպես նաև պրոֆ. Ն. Ադոնցն ու Ն. Ակինյանը ընդունում են, որ Կորյունի բնագիրը հարազատորեն մեզ չի հասել, այլ ժամանակի ընթացքում բազմաթիվ ընդմիջարկություններ է ունեցել: Ակադ. Մանանդյանը նկատի ունենալով «ամս երկու»-ն «ամիսս երկու» ուղղողներին և ակադ. Աճառյանի մտցրած ուղղումը, գրում է հետևյալը.

¹ Մ ի ք ա յ ե լ Վ. Չ ա մ շ յ ա ն, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, հատ. Ա, 1784, էջ 763—764 (ժանոթութիւն Բ գրոց):

² Մ ա ղ ա ք ի ա ար ք. Օ Ր մ ա ն յ ա ն, Ազգապատում Ա, էջ 277, Կ. Պոլիս, 1912:

³ Գ ա լ ու ս ա Տ եր-Մ կր տ շ յ ա ն, Հայ գրերի 1500-ամյակի առթիվ պատասխան Լեոյի բաց նամակին, «Արարատ», 1912, 5—6, էջ 508—511:

⁴ Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Երկու ուղղում Կորյունի մեջ, «Տեղեկագիր» Գիտ. ակադ. Հայ-կական ֆիլ., 1941, № 1(6), էջ 169:

⁵ Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Մեսրոպ Մաշտոց, «Էջմիածին», 2, 1955, էջ 14:

⁶ Կ ո Ր Ւ Ն, Վարք Մաշթոցի, ուղղեալ և լուսարանեալ ի Գառնիկ Ֆնտզլեանէ, Երուսաղէմ, 1930, էջ 18:

«Ըստ իս բոլոր այս ուղղումներն էլ հնարավոր են և միանգամայն հավանական կարելի է համարել, որ վերոհիշյալ երկու «հինգերորդ»-ներից անփոփոխ պետք է պահել երկրորդը»¹:

Իսահակ Հարությունյանցը իր «Հայոց զիրը» աշխատության մեջ բուրբովին նոր ուղղում է առաջարկել մտցնել: Նա անփոփոխ թողնելով երկու հինգերորդ առաջարկում է «ամս երկու»-ն դարձնել «ամիսս երկու»: Իս. Հարությունյանցը այս մասին գրում է.

«Սակայն ցայժմ ամենքն էլ վերջին «ի հինգերորդ» ամին ուղղել են «ի տասն և հինգերորդ» առարկելով որ բառի առաջին մասը թողված է արտագրողների շնորհիվ: Այս բացատրությունը գուցե անհավանական չլիներ, եթե Կորյունի հաջորդ էջի վերա՝ Մեսրոպի ձեռքով տառի գյուտի ժամանակը նշանակված չլիներ «ի վեցերորդ» ամի վրամշապհոյ: Պատահական սխալ չենք կարող ընդունել նույնպես «ի վեցերորդը»: Մեզ ավելի հավանական է թվում արտագրողների արած մի այլ սխալ, որ եթե ուղղվի, այդ տարիները ճիշտ դուրս կգան. փոխանակ կարդալու «և իբրև ամս երկու» պետք է կարդալ «իբրև ամիսս երկու»²:

Անհրաժեշտ ենք գտնում մեր կողմից այստեղ ավելացնելու, որ հեշտ էր ամն ու ամիսը շփոթվել զրիշների կողմից, բանի որ մի այլ տարեթվի կապակցությամբ դարձյալ տարակարծություն կա Կորյունի մոտ: Կորյունը գրում է, «յետ ամաց երից անցելոց յաջողեցաւ Վահանայ Ամատունւոյ քրիստոսաւք փութով խորան սքանչելի կանգնել տաշած վիմօք»: Այսպես է գրված Կորյունի բոլոր ձեռագրերում, բացի մեկից՝ Փարիզի ազգ. Մատենադարանի № 178 ձեռագրից, որը ԺԲ—ԺԳ զգ. գրչություն ունի և որտեղ փոխանակ «յետ ամաց երից»-ի գրված է «յետ ամսոց երից»: Ակինյանը Կորյունի իր հրատարակած բնագրում այս վերջի վկայությունն է ընդունել, բանի որ ինքը, ինչպես ճիշտ կերպով նկատում է, մի խորան կառուցելու համար կարիք չկար երեք տարի աշխատելու, այլ երեք ամիսը բավական էր³:

Գերմանացի հայագետ Մարկվարտը, նկատելով Կորյունի մեջ մուտք դրած սխալը, «և իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր» բառերը համարում է ուշ շրջանի լուսանցադրություն և չնշում է, պահպանելով երկու հինգերորդները, համարելով, որ փորձի համար շատ կարճ ժամանակ է պետք եղել⁴:

Ակադեմիկոս Մանուկ Արեղյանը իր «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու դրականություն սկիզբը» հոդվածում գրում է, որ «Մաշտոցը գտնում է վարդապետ, այսինքն ուսուցիչ, և մտտ երկու տարի (կամ երկու ամիս) մանուկներին սովորեցնում է դրանցով»:

Դարձյալ ակադ. Մ. Արեղյանը իր հրատարակած Կորյունի վարք Մաշտո-

¹ Հ ա կ ո Ր Մ ա ն ա ն զ յ ա ն, Գննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Արշակունիների հաստատումից Հայաստանում մինչև Մարզպանություն շրջանը (1—5-րդ զգ.), Երևան, 1957, էջ 253:

² Ի ս ա հ ա կ Հ ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Յ ա ն ջ, Հայոց զիրը, Թիֆլիս, 1892, էջ 170, ան՝ սողառակի ծանոթությունը (10):

³ Ն. Ա. Կ ի ն յ ա ն, Պատմութիւն վարուց..., էջ 197 և 180:

⁴ Պրոֆ.-դոկտ. Հ. Մ ա Ր Կ Վ ա Ր ա, Պատմություն հայերեն նշանագրերու և վարուց Ս. Մաշտոցի, գերմաներեն թարգմանեց Հ. Ա. Վարդանյան, Վիեննա, 1913, էջ 26—27:

⁵ «Սովետական գրականություն», Երևան, 1941, № 1, էջ 49:

ցի բնագրում, վերևում թողնելով «ամս երկու» բառերը, տողատակի ծանոթության մեջ գրել է «թերևս ուղղելի ամիսս երկու»¹:

Այս մեջբերումներից երևում է, որ ահագ. Արեղյանը հատուկ կողմնորոշում չի ունեցել այս հարցում, բայց հավանական է համարել նաև դեռևս Խ. Հարությունյանցից առաջարկված ուղղումը:

Ն. Ակինյանը ևս այն կարծիքին է, որ Դանիելյան նշանագրերի ուսուցման համար կարիք չկար «անոնց անբավական ըլլալուն համար 2 տարի փորձի ենթարկելու»: Ակինյանը «Հանդէս ամսօրեայ»-ում հրատարակած Կորյունի բնագրում պահպանում է հիշատակված երկու հինգ տարիները, սակայն երկու տարի ուսուցանելու պարբերությունը դուրս է թողնում²:

Մեր բոլոր մեջբերումներից պարզ երևում է, որ հայագետներից առաջին խումբը, որը ձգտելով պահպանել Դանիելյան նշանագրերով ուսուցանելու երկու տարիները, գրչագրական սխալ է համարել երկու անգամ հիշատակված հինգ տարիներից առաջինը և կամ երկրորդը և երբեմն էլ նույնիսկ վեցերորդ տարին և առաջարկել են զանազան ուղղումներ (Չամչյան, Աճառյան, Ֆնտղըլյան, Գ. Տեր-Մկրտչյան ևն), հայագետների մյուս խմբի ներկայացուցիչները կամ գրչագրական սխալ են համարել «ամս երկու»-ն և դարձրել են այն «ամիսս երկու» (Խ. Հարությունյանց), իսկ ոմանք էլ այն ընդմիջարկություն համարելով իսպառ դուրս են վանել Կորյունի բնագրից (Մարկվարտ, Ակինյան), ոմանք էլ դժվարացել են կողմնորոշվել և մնացել են երկու կարծիքի (Արեղյան, մասամբ նաև Մանանդյան):

Այս հարցի լուծմանը մեծ շահով նպաստում է մեր հրատարակած Խորենացու Պատմության նորահայտ երկաթագիր պատառիկը:

Ինչպես հայտնի է, Մովսես Խորենացու գիտական հրատարակության մեջ էլ է պահպանվել Դանիելյան նշանագրերի մասին Կորյունին մոտ կանգնած նման մի պարբերություն: Դանիելյան նշանագրերը Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին հանձնվելու մասին, պատմահոր գիտական հրատարակության մեջ մենք կարդում ենք. «Որոց ուսեալ, և թեաժելով ընդ նոսա տղայոց զամս սակաւս, տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք...»³:

Խորենացու Պատմության մեր հրատարակած երկաթագիր պատառիկը (№ 1411, էջ 1բ, 2-րդ սյունակ) այս հարցում բոլորովին տարբերվում է Մովսես Խորենացու Պատմության գիտական հրատարակությունից: Պատառիկում պարզ կարդացվում են հետևյալ տողերը. «Որոց առեալ եւ թեաժելով ընդ նոսա եւ տղայս զամանս սակաւս, տեղեկացեալ գիտացին ոչ լինել (այստեղ պատառիկը կանգ է առնում, քանի որ շարունակությունը կտրված է, հաջորդ բառերը մենք լրացնում ենք գիտ. հրատարակությունից—Ս. Ք.) բաւական այնու նշանագրօք...»:

Խորենացու գիտական հրատարակության մեջ, որտեղ օգտագործվել են մի քանի տասնյակ ձեռագրեր և տպագրություններ, ոչ մի տարբերակվածքում չենք գտնում նման մի պարբերություն: Այս արժեքավեր պատառիկը մայր

¹ Կ ո Ր Յ ու ն, Վարք Մաշտոցի... Երևան, 1941, էջ 44:

² Ն. Ա կ ի ն յ ա ն, Պատմութիւն վարուց Ս. Մաշտոց վարդապետի՝ բնութիւն և բնագիր. «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1949, 4—12, էջ 203 և 225—226:

³ «Մովսէսի Խորենացու Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Արեղեան և Ս. Յարութիւնեան, Տփլիս, 1913, էջ 326:

ձեռագրից ընկնելուց հետո, ինչպես վերևում տեսանք, գործ է ածվել որպես մի ձեռագրի պահպանակ, նրա ներքևի մասից մեկ տող կտրված է (կազմարարը այն կտրել է իր կազմած ձեռագրի մեծությամբ):

Խորենացու Պատմության սույն հնագարյան պատառիկի, (որը 300—400 տարով ավելի հին է, քան գիտական հրատարակությունում օգտագործված Խորենացու հնագույն ձեռագրերը) տված «տղայս զոմանս սակաւս», ուշագրավ ընթերցվածքի հիման վրա, պետք է հետևենք, որ Կորյունի մոտ մուտք գտած «ամս երկու» արտահայտությունը հետագա դարերի աղավաղման արդյունք է, և նրա հիման վրա է, որ ուշ շրջանի գրիչների կողմից փոփոխման են ենթարկվել նաև Խորենացու ձեռագրերը «զամս սակաւս» ձևով: Հնագույն մեր պատառիկը արտագրված լինելով իրենից ավելի հին մի այլ երկաթագիր ձեռագրից, պահպանել է փոխանակ «զամս սակաւս»-ի, «տղայս զոմանս սակաւս» ձևը: Պատառիկի այս նորահայտ ընթերցվածքը ոչ միայն ուղղում է մտցնում Խորենացու մեր գիտական համահավաք բնագրում, այլև մեզ հետևենք է տալիս այն, որ Խորենացու հնագույն ձեռագրերի գրման ժամանակ, երբ գոյություն են ունեցել նաև Կորյունի հարադատ ձեռագրերը, այդ օրինակներում խոսք չի եղել Դանիելյան նշանագրերով «ամս երկու» դասավանդելու մասին, այլ այդ ժամանակաշրջանը շատ կարճ միջոց է ընդգրկած եղել (երկու ամիս): Դարձյալ այդ է եղել պատճառը, որ Խորենացին բնավ իսկ կանգ չի առել Դանիելյան նշանագրերի ուսուցման տևողության վրա: Միայն ավելի ուշ է, որ աղավաղված Կորյունի բնագրի հետևանքով, Մովսես Խորենացու Պատմության հետագա ընդօրինակողները, «տղայս զոմանս սակաւս» պարբերությունը, որը վերաբերում է Մեսրոպ Մաշտոցի կողմից մի քանի տղաների այդ գրերով ուսուցանելուն, փոխել են, մի կերպ հարմարեցնելով աղավաղված Կորյունի մեջ մուտք գտած «ամս երկու» ձևին, Դանիելյան նշանագրերի ուսուցման վերաբերող Խորենացու բնագրում ավելացնելով «զամս սակաւս» պարբերությունը: Այդ պարբերության սրբագրման գործին, ինչպես տեսանք, մեծապես նպաստում է վերոհիշյալ հնագույն սրատառիկը: Նրա օժանդակությամբ պետք է ուղղել նաև Կորյունի՝ մեծ բանավեճերի տեղիք տված Դանիելյան նշանագրերի օգտագործման ժամանակին վերաբերող հատվածը:

Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱԶՄԵՐԻ ԶԱՐԴԱՐՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գրքի ձեավորման մեջ կարևոր տեղ է բռնում նաև նրա կազմը:

Շատ հնում գրքերը պահպանվում էին փաթեթներով, որոնք ծածկվում էին գործվածքներով կամ կաշվով և դրվում փայտյա, մետաղյա կամ փղոսկրյա տուփերի մեջ: Իսկ միջին դարերից մեզ հասած գրքերը կազմված են. կազմի համար օգտագործվել են տարբեր մետաղներ (սևի, արծաթ) և, մանավանդ, կաշի: Գիրք կազմելը պահանջում էր հատուկ հմտություն և, ինչպես կտեսնենք, երբև տեխնիկական մի շարք միջոցների գործադրություն, նրանով ամեն մարդ չէր կարող զբաղվել, ուստի առնվազն 10-րդ դարից կազմարարությունը Հայաստանում սկսում է դառնալ առանձին մի արհեստ:

Միջին դարերի համար բնորոշ է, որ միևնույն արհեստավորը սովորում էր մեկից ավելի մասնագիտություններ, որոնք նրան պետք էին արտագրանքի տվյալ տեսակը պատրաստելու համար, այդ է պատճառը, որ 10—13-րդ և հետագա դարերում էլ գրիչը, հաճախ, միաժամանակ ծաղկում կամ նկարազարդում և կազմում էր իր իսկ ընդօրինակած մատյանը: Սակայն ձեռագրերում թողնված հիշատակարաններից քաջ հայտնի է, որ կային շատ գրիչներ, ծաղկողներ և կազմողներ, որոնք բանեցրել են միայն իրենց նեղ արհեստը:

Հնագույն հայ կազմարարը, որն իր մասին որոշակի հիշատակություն է թողել՝ Գեորգ կրոնավորն է: Մատենադարանի № 5547 ձեռագրում, որն ընդօրինակվել է 10-րդ դարում, Գեորգը գրել է. «Աղաչեմ յիշել զմեղսամակարդ և զյետին կրանաւորս զԳէորգ՝ զկազմիչ գրոցս...» (ձեռ. № 5547, էջ 7ա):

11-րդ դարի առաջին կեսին Անիում գործել է Գեորգ կազմողը, որը միաժամանակ գրիչ է եղել¹:

11-րդ դարի երկրորդ կեսում հիշատակվում են Գրիգոր կազմողը², Հակոբ կազմարարը, որն իր արհեստով զբաղվել է Այրիվանքում և հիշատակված է 1191 թվականին³, երբ նույն վանքում գործել են նաև Աղբայրիկ և Գորգիոս կազմարար եղբայրները⁴ (սրանց հայր Փիլիպոսը գրիչ էր):

13-րդ դարի հիշատակարանները ավելի մեծ թվով կազմարարների անուններ են պահպանել, դրանց թվում էր Հոռմկլայեցի նշանավոր կազմարար Առաքել Հնազանդենցը, որից հասել են մեզ 1260—1278 թթ. կազմված 5 փառակազմ

¹ Մատենադարանի ձեռագիր № 988:

² Մատենադարանի ձեռագիր № 275:

³ «Շողակաթ», գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 197:

⁴ Մատենադարանի ձեռագիր, № 3795:

ձեռագրեր: 1260 թ. կազմված մի ձեռագրում Առաքելը հիշատակում է իր ուսուցիչ Սարգիս քահանա կազմարարին¹:

14-րդ դարում Սյունիքում անվանի կազմարար էր համարվում Մարգարե վարդապետը («որ կազմող էր գրոց»): 1332 թ. 45 օրվա ընթացքում նա կազմեց Գլաձորում ընդօրինակված մի շքեղ Աստվածաշունչ²: Ձեռագրերի հիշատակարանները պահպանել են տասնյակ նշանավոր կազմարարների անուններ:

Կազմարար կոչվել են գիրքը կարող, կապող և սովորաբար կաշվով կազմող վարպետները, իսկ ոսկե և արծաթե կազմերը առանձին պատրաստվում էին ոսկերիչների կողմից և հանձնվում կազմարարին, որոնք մետաղի զարդարուն տուփը ամրացնում էին գրքի վրա, թեև պարզ երևում է, որ ոսկերիչ-կազմարարներ ևս կային:

Կազմի հիմնական նյութը կաշին էր: Միջնադարյան Հայաստանում գրքի կազմի համար արտագրվում էր հատուկ, լավ դարազած բարձրորակ կաշի, որը բավականաչափ հաստ էր սովորական երեսացուփց, բայց միանգամայն ողորկ էր և սովորաբար ներկված էր լինում շագանակագույն, բաց շագանակագույն, կարմրին տվող շագանակագույն, սակավ հանդիպում են նաև կարմիր և նոսր գույնի կազմեր:

Կազմարարները, որոնք ձեռագրերում հայտնի էին մեծ մասամբ կազմող անունով, նախ պետք է ամուր թելերով կարեին և իրար միացնեին գրքի քառածալ, ավելի հաճախ վեցածալ կամ ութածալ սրակները: Գիրքը կարել, կպցնելը կազմարարության մեջ շատ կարևոր աշխատանք էր, այդ է պատճառը, որ կազմողները իրենց անվանում էին նաև գրակապ, օր. Գրիգոր գրակապ, Սիմեոն գրակապ³: Կապված գրքի յուրաքանչյուր սրակի կարի թելերը փաթաթվում կամ հյուսվում էին գրքի մեջքի վրա հարմարեցված հաստ թելե կապերի հետ, որոնք անցկացվելով կազմի տախտակի մեջ արվող անցքերով՝ ամուր կապվում էին նրա հետ, իսկ կարի թելերի երկու ծայրերը հյուսվում էին գրքի մեջքի երկու եզրերին դրված հաստ թելերի հետ, ապա նրանց ազատ մնացած ծայրերը խրձիկով միացվում էին կազմի եզերքների մոտ, այնքան ամուր, որ միջին մեծության գրքերի կազմերը երկար դարերի ընթացքում չեն պոկվել գրքից: Մատենադարանի ձեռագրերի վրա մեր կատարած դիտողություններից երևում է, որ առավելապես մեծ ու ծանր գրքերի կազմերի մեծ մասն է պոկվել և վերանորոգվել կամ բոլորովին փոխվել, մյուսները շատ դեպքերում պահպանվել են մինչև այսօր անփոփոխ:

Կազմի կաշին թրջվում և քաշվում էր հատկապես կազմերի համար պատրաստված հատուկ տախտակի վրա, որն ունենում էր 3—4 մմ (խոշոր կազմերի վրա մինչև 5—6 մմ) հաստություն: Տախտակի վրա արվում էին անցքեր, որոնց միջից անցկացնելով ամրացնում էին սրակները իրար հետ կապող հաստ թելերը: Ներսից տախտակը պատում էին զանազան գործվածքներով, որոնք կպցվում էին սոսինձով: Ամենից ավելի գործածվել են կտավե գործվածքներ, ապա մետաքսը և բամբակը: Գրքի էջերը կազմի հետ շփվելուց և գործածության ժամանակ վնասվելուց պաշտպանելու համար կազմի տակ, գրքի սկզբից և վերջից, սովորաբար, դրվում էր հին մագաղաթյա ձեռագրերից վերցրած մեկա-

¹ Ղ. Ա. Ի շ ա ն, Հայագատում Բ, Վենետիկ, 1901, էջ 489:

² Ն ու յ ն տեղում, էջ 545 և հետ.:

³ Գ ա ր ե գ ի ն Ա. կ ա թ ո ղ ի կ ո ս, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 820:

կան կամ երկուական թերթ պահպանակ: Հայտնի է, որ դրա շնորհիվ պահպանվելով մեզ են հասել շատ հին ձեռագրերի բնույթը նմուշներ թե՛ հայերեն, և թե՛ օտար լեզուներով:

Կաշվի կազմը փոխարինում էր մետաղի տուփին, և այդ է պատճառը, որ նրան արվում էր տուփի տեսք (երկու կող, կռնակ և գոնակ), ավելին, կաշվի կողերի զարգարումը կատարվում էր ոսկեբշուձյան համար բնորոշ տեխնիկայով:

Կազմի կաշին դեռևս կիսաթաց վիճակում հղկվում-կոփվում էր և զարգարվում գեղեցիկ օրնամենաներով՝ մի քանի եղանակով: Ամենից ավելի գործադրված է սրածայր, բայց շկտրող գործիքով սեղմելով գծագրելու տեխնիկան: Ուղիղ գծեր տանելու համար օգտագործվել է քանոնը, իսկ աղեղներ և շրջագրվածքներ քաշելու համար՝ կարկինը:

Վերին աստիճանի տարածված է եղել նաև կազմերի զարգարումը բազմազան մետաղե մանր դրոշմների (նկատների) օգնությամբ: Վերջապես, գործածվել է նաև մետաղե զարդավոր տախտակով ճնշելու եղանակով զարգր կաշվի վրա տպելու տեխնիկան՝ առատակը: Շատ հաճախ գծագիրը, նկատով դրվող զարգր, մասամբ և առատակումը զուգակցվել են իրար:

Ուսումնասիրելով Մատենադարանի ձեռագրերի կազմերը կարելի է որոշել, թե դրանցից որո՞նք են հասակակից հին ձեռագրերին և որո՞նք նորոգված կամ փոխված: Վերջին գեպրում, հաճախ գրքի թերթերը եզրերից կտրում էին, մեկ մեկ էլ վնասելով լուսանցազարդերը: Սակավ սլատահում են ձեռագրեր, որոնց վրա դրված է լինում ավելի հին ձեռագրերի կազմեր (օր. ձեռ. № 2948, որը համեմատաբար բարակ է, բայց դրված է հաստ գրքի ավելի հին կազմի մեջ):

Կազմի հնությունը և ժամանակը որոշել կարելի է մի շարք հատկանիշներով, դրանք են՝ կաշվի մշակման եղանակն ու սրակը, գույնը, փայլը, բայց ամենից ավելի որոշիչ են կազմի վրայի զարդերը, դրանց ոճական և կատարման տեխնիկայի առանձնահատկությունները:

Մեզ հասած հնագույն կազմերը պատկանում են 11-րդ դարին (ձեռ. № 4804, 3793, 275): Դրանք զարգարված են թաց կաշվի վրա սեղմելով գծելու և միայն մի տիպի նկատով գծագրի ներսում մանր համատարած գծիկներ սեղմելու եղանակով: Կազմի եզրերից տարված են երկու կամ երեք զուգահեռ գծեր, որոնք կազմում են քիչ աչքի բնկնող ուղղանկյուն շրջանակ: Սրա ներսից և անմիջապես նրան կից կարկինով գծված աղեղիկների օգնությամբ կազմվում է հյուսածո ժապավենի տեսք ունեցող դարձյալ ուղղանկյուն շրջանակ: Այս շրջանակը ավելի ցայտուն դարձնելու համար հյուսվող ժապավենների մակերեսը համատարած կերպով ծածկված է լինում սուր, քիչ ինչ լայնացող ծայր ունեցող մետաղե նկատի սեղմումով դրված համատարած գծիկներով: Վերին աստիճանի ջանադիր ու համբերատար կազմողները կազմի ամեն մի երեսի վրա դրել են հազարավոր այդպիսի գծիկներ:

Այս ձևով կազմված հյուսածո շրջանակների մեջ գրքի կազմի առաջին կամ վերին երեսի կենտրոնական մասում նույն տեխնիկայով գծագրվում էր հյուսածո խաչ, որը նույնպես զարգարված է լինում սեղմումով դրվող մանր համատարած գծիկներով: Խաչի երեք թևերը առնված են լինում ուղղանկյուն խաչաձև կամ հաճախ շեղանկյուն գծագրի մեջ: Խաչը հենվում է եռանկյունաձև կամ աստիճանավոր, նույնպես հյուսածո և գծիկավոր, պատվանդանի վրա (նկ. 1):



Նկ. 1. Հեռագրի կազմ՝ դարդարված հյուսածո խաչով, կազմերի հյուսածո շրջանակներն ու խաչերը նման են 10—11-րդ դարերի հյուսածո քանդակ ունեցող խաչքարերին: Հետաքրքրական է, որ 10—11-րդ դարերի կազմերի վրա արված խաչերին ճիշտ և ճիշտ նման հյուսածո խաչի մանրանրկար, կատարված ներկերով հանդիպում է էջմիածնի 986 թ. ավետարանում (ձեռ. 7445), 10-րդ դարի № 7735 ձեռագրում (էջ 14), ինչպես և 1033 թվականի № 283 ձեռագրում (նկ. 2):




Նկ. 2. Կազմերի համար շատ սովորական հյուսածո խաչի պատկեր
№ 283 ձեռագրի 172ր էջի վրա:

Գրքի կազմի ներքևի (վերջին) կողք զարդարվում է նույն զուգահեռ գծերով կազմվող պարզ շրջանակով, հյուսածո մանր գծիկավոր շրջանակով և երեսի կենտրոնում լինում է երկարուկ ուղղանկյուն քառանկյունի, նույնպես հյուսածո զարդերով գծագրի վրա դրվող մանր գծիկներով:


Մանր գծիկներով հյուսածո խաչի և քառանկյունի շրջանակի մոտիվը կազմերի զարդարման հնագույն մոտիվներն են, որոնք սկիզբ են առնում 10—11-րդ դդ., հետագայում կրկնվում են տարբեր վարիանտներով, (նկ. 3) մինչև ուշ միջնադար:

11-րդ, մանավանդ 12-րդ դարի ձեռագրերի կազմերի վրա երևան են գալիս



Նկ. 3. Կաղճ՝ զարդարված հյուսածո խաչի և այլ պատկերների համադրությամբ (ձև. № 4804):

Նաև ուրիշ զարդաձևեր՝ միահյուսվող և աղեղներով իրար հատող շրջագծեր, կամ առանձին շրջագծեր, որոնք աղեղներով հատվելով կաղճում են աստղաձև, կամ վարդյակի տեսք ունեցող զարդեր (նկ. 4): Այս միահյուսվող շրջանակներն ու նրանց հատող աղեղները զծագրությամբ կրկնագիծ են և հյուսածո շրջանակների ու խաչերի նման զարդարված են սեղմումով զրվող մանր գծիկներով (նկ. 5): Այս վարդաձև զարդը մեծ փոփոխակներով ու բարդացումներով կրկն-




Նկ. 4. Կազմ՝ զարդարված հյուսածո շքանակով և իրար հատող աղեղներով ու շքանակներով (ձև. № 5076):

վում է դարեր շարունակ: Ուշագրավ է, որ նույն այս զարդաձևը գտնում ենք Սևանի եկեղեցու 1176 թ. փորագրված փայտե դռան վրա:

10—11-րդ դարերին բնորոշ հյուսածո դժադրի և սեղմումով դրվող մանր գծիկներով զարդերի կողքին 12-րդ դարում հանդես է գալիս կազմերը նկատ-
ներով զարդարելու տեխնիկան, որն ավելի մեծ շափերով կիրառվում է 13-րդ
դարում և հետագայում:


Նկատը մի մետաղե (մեծ մասամբ բրոնզե) դլանաձև, քառանիստ կամ
ձվաձիր կտրվածքով ձող է, սլատրաստված կաղապարի մեջ ձուլելու եղանա-



Նկ. 5. Կազմ՝ զարդարված հյուսածո շրջանակով և իրար հատող աղեղներով ու շրջագծերով (ձևա. № 5647, Կիլիկիա):

կով, որի մի ծայրին լինում է սելեֆ կամ փոս ընկած դարդ: Նկատի զարդավոր ծայրը գրվում էր կաշվի վրա և մուրճիկի հարվածով զարդը դրոշմվում կազմին: Հանդիպում են կազմեր, որոնք զարդարված են մինչև ութ տարրեր նկատների օգնությամբ: 12—17-րդ դարերի կազմերի վրա հանդիպում են մի քանի տասնյակ, իրարից տարրեր նկատների զարդեր: Գրանցվից ամենատարածվածներն են տարրեր ձևի ու մեծության վարդյակները, որոնք ունեն շորս, հինդ, վեց, մանավանդ ութ պսակաթերթ, երկու փոքրիկ և ձգված, իրար հետ միահյուսվող էլիպսների ձևի զարդը, ոտմբիկները, միագիծ, կրկնագիծ և եռագիծ օվալները, դանազան դիրքի խաչաձև զարդերը, միագիծ ու կրկնագիծ մանրիկ շրջագծերը, սելեֆ կամ փոս ընկնող կետերը, մանրիկ աստղաձև զարդերը, բուսական օրնամենտները և այլն: Այլ խոսքով, դրանք զարդեր են, որոնց մեկը հանդիպում ենք նույն ձևադրերի մանրանկարներում:

Կազմող վարպետները մեծ ճաշակով, շնորհքով ու հնարամտությամբ, զուգակցելով տարրեր նկատներ իրար և նկատի դրոշմները օգտագործելով դժադրի հետ միասին, ստեղծել են զարդերի վերին աստիճանի մեծ բազմազանու-




Նկ. 6. Կազմ՝ զարդարված գծիկավոր շրջանակով և երկու նկատի օգնությամբ (ձև. № 751):

Քյում: Անգամ երկու-երեք նկատների դրոշմները տարբեր ձևով ու դիրքով դնելով և հնարամտորեն համադրելով կարողացել են ստեղծել բավականաչափ շքեղ զարդարված կազմեր: 12-րդ դարի սկզբի կազմերի մեջ հանդիպում են նույնիսկ այնպիսիները, որոնք վարպետորեն ու ճաշակով զարդարվել են ընդամենը 1—2 նկատով: Երբեմն նկատներով դրվող ինքնուրույն զարդը զուգակցվում է դարձյալ նկատով, բայց համատարած գծիկներով արված զարդի հետ (նկ. 6):

Շատ սովորական էր վարդյակի զարդը կրող նկատի կրկնությամբ կազմի կերբներով անցնող քառանկյունի շրջանակ դրոշմելը: Այս շրջանակի ներսում հյուսածո գծադրությամբ և դարձյալ նկատների օգնությամբ դրվում էին խաչեր, քառանկյունիներ և այլ երկրաչափական պատկերներ (նկ. 7):

12-րդ դարում և 13-րդ դարի առաջին կեսում նկատների դրոշմը օգտագործվում էր շափավոր, որոշակի մոնումենտալ պատկերներ ստանալու հա-



Նկ. 7. Կաղձ՝ զարդարված գծերով և 4 նկատի օգնութեամբ (ձև. № 193):

մար: Հաճախ գրքերի կաղձերի վրա նկատով դրոշմվող զարդերը զուգակցվում էին սեղմված միապիծ շրջանակների հետ, որոնց անկյուններից քառանկյունի շրջանակի կողմերի մեջտեղից դեպի դուրս տարվող գծիկներով միացվում էին կաղձի եզերքի հիմնական շրջանակին: Նկատի դրոշմները դրվում էին այս անկյունագծերի և կենտրոնական առանցքից տարվող գծերի վրա՝ առաջացնելով խաչաձև և այլ պատկերներ: Երբեմն անկյունագծերը և կենտրոնական



Նկ. 8. Կազմ՝ զարդարված զծերով և 4 նկատների օգնությամբ զբոլոզ զարդերով (ձևա. № 995):

առանցքով տարվող զծերը անցկացվում էին կազմի ամբողջ մակերեսով, որը բաժանվում էր եռանկյունիների, շեղանկյունիների և նկատի զարդերը զետեղում էին դրանց կողերի վրա (նկ. 8):

13-րդ դարի կեսերից սկսում են նկատների դրոշմները շոալել, ցրելով դրանք կազմի ամբողջ մակերեսի վրա, ծածկելով կազմի կողերի ամեն մի ազատ մնացած տեղ: Նույն դարի երկրորդ կեսում և 14-րդ դարում նկատների զարդերը դրոշմվել են անգամ զծաղիք պատկերների փոքր ինչ ազատ մնացած մակերեսների վրա և բանն այնտեղ է հասել, որ նկատներով դրոշմներ են դրել նույնիսկ վարդյակների, պսակաթերթերի և թևերի վրա, նրանց կենտրոնում և այլ մասերում:

Հետագայում գծադրութեամբ կազմվող, հյուսածո և մանր գծիկավոր շքջանակները, խաղերը, միահյուսվող շքջագծերը և իրար հատող աղեղները, որոնցով կազմում էին աստղեր և վարդյակներ, շարունակում են սլահականվել և զարդանալ: Երևան են գալիս շքջագծի մեջ կամ նրա հետ զուգակցված երկու, երեք, չորս իրար հատող եռանկյունիների, երկու իրար հատող քառակուսիների միջոցով կազմվող վեցից — տասներկու թևանի աստղերը, որոնց թևերի ծայրերի կամ նրանց միջև տարվող աղեղների օգնությամբ, ստացվում է աստղի զուգակցությունը վարդյակի հետ, շքջագծի ներսում տարվող փոքր աղեղներով ստացվում է փոքր վարդյակ աստղի կենտրոնում, մեծ վարդյակի ներսում, իսկ եռանկյունիների և քառանկյունիների կողերը կազմում են շքջագծի մեջ առնված խաչաձև հատումներ և պատկերներ (նկ. 9):

Նման համադրություններով ստացվել են աստղերի և վարդյակների միահյուսման բազմաթիվ բարձրարվեստ վարիանտներ: Պահպանվում են նաև գծագիրը, հյուսածո շքջանակն ու խաչը, որոնք նույնպես զարդանում և ձևափոխվում են: Կազմերի եզրերով անցնող ուղղանկյուն շքջանակի ներսի կողմից տարվում են ծայրերով իրար մոտեցող կրկնագիծ երկարով փակագծեր, իսկ եթե սրանք դրվում են նաև շքջանակի դրսի կողմից, և փակագծերի ծայրերն էլ միացվում են իրար, ապա ստացվում է, այսպես կոչված, «սելջուկյան շղթան», որը առանձին ձևագրերի վրա փոխարինում է հյուսածո շքջանակին: Հաճախ հյուսածո շքջանակի անկյուններում (մանավանդ վերին անկյունում) ներսից գծվում են ճառագայթներ կամ հովհարաձև զարդեր, որոնք եզրվում են կրկնագիծ աղեղով, իսկ կիսաշքջան և երեք քառորդ շքջան կազմող աղեղների մեջ առնվում են հյուսածո խաչի երեք թևերը, իսկ խաչի թևերի հատման անկյուններից դեպի արտաքին շքջանակի ներքևի անկյունները հաճախ տարվում են անկյունագծեր: 13-րդ դարում նման անկյունագծեր տարվում են նաև դեպի շքջանակի վերին անկյունները, անկյունագծերի վրա նկատով դրոշմվում են զանազան զարդեր: 13-րդ դարի երկրորդ կեսից սկսած այս անկյունների և խաչերի թևերն իրենց մեջ առնող կիսաշքջանակների ու երեք քառորդ շքջանների վրա ևս ամենուրեք նկատով զարդեր էին դրվում:

Նկատով դրոշմվող զարդը ուղի հարթեց նաև սելեֆի և ավելի հաճախ խառքանդակ զարդեր ունեցող մետաղե ձուլածո թիթեղով ճնշելու եղանակով զարդեր առատապելուն, որը երևան է գալիս 13-րդ դարում, բայց համեմատաբար լայն կիրառություն չի գտնում: Մետաղե տախտակով ճնշելով զարդարում էին կազմի կենտրոնական մասը, նաև կազմը եզրող շքջանակի անկյունները (այս դեպքում ավելի փոքր եռանկյունի տախտակով սեղմելով): Կազմի ամբողջ մակերեսի շափի մեծ տախտակներով ճնշված զարդ մինչև 17-րդ դարը գեղես չի հանդիպում: Դրանից կարելի է եզրակացնել, որ մետաղե տախտակով ճնշելիս մամուլ չեն օգտագործել, այլ բավարարվել են համեմատաբար փոքր շափի մետաղե տախտակների վրա փայտե տախտակ դնելով և մուրճի հարվածով զարդը առատապելու տեխնիկայով: Առատապված զարդերը, ինչպես և պետք էր սպասել, ավելի ամբողջական են և ներկայացնում են առավելապես ոճավորված բուսական զարդեր՝ նման ձևագրերում մշտապես հանդիպող լուսանցազարդերին:

Ուսումնասիրելով բուն Հայաստանում դրված և կազմված ձևագրերի կազմերը դժվար չէ նկատել, որ դրանց զարդերը մշակվել են իբրև ժողովրդա-



Նկ. 9. Կազմ՝ զարգարված քառանկյունների և աղեղների կապված պատկերներիով, կենտրոնում մեծ վարդյակ (ձեռ. № 5709):

կան զարգարվեստի մի ճյուղ, սերտորեն կապված լինելով մանրանկարների ու քարի և փայտի քանդակների զարգարվեստի հետ: Մի շարք զարդեր, ինչպես, օրինակ, ութ և ամբի պսակաթերթ ունեցող վարդյակները, աստղերը, բուսական և երկրաչափական մոտիվները Հայաստանում շատ լայն տարածում են ունեցել և զարգարել են ոչ միայն ձեռագրերն ու ճարտարապետական հուշարձանները, խաչքարերը, այլև կենցաղաչին իրերն ու առարկաները, լինեն դրանք պատրաստված մետաղից, կավից, թե փայտից: Որոշ զարդաձևեր, օրինակ

վարդյակները, հանդիպում են Անիի և Գվինի ջնարակած խեցեղենի և հախճապակու վրա:

Բուն Հայաստանի արվեստի հետ կապված մշակվել են ու կատարելության հասել գրքերի կազմերը զարդարելու Կիլիկյան Հայաստանին հատուկ տեխնիկական եղանակները: Կիլիկյան վարպետները կազմարարության արհեստի և կազմերը զարդարելու արվեստի մեջ աշակերտելով բուն Հայաստանի վարպետներին, զարգացրել են այդ գործը, մտցնելով նրա մեջ իրենց ինքնուրույնությունը:

Հին, մանավանդ խոշոր գրքերի մեծ մասի կազմերը նորոգվել են հետագա դարերում: Նորոգելիս սովորաբար գիրքը նորից են կազմել և դրա հետ միաժամանակ փոփոխել են կազմի տակի գործվածքը, երբեմն նաև պահպանակ թերթերը: Նորոգելիս կազմի կաշին միշտ չէ, որ փոխվել է: Նորոգողները երբեմն հին կազմի վրա փակցրել են խաչեր, դրվագված մետաղե եռանկյունաձև տախտակներ՝ ավետարանիչների պատկերներով (սովորաբար կազմի անկյուններում), ինչպես և խաչելության և այլ ձուլածո ու լեֆ սրբապատկերներ:


Մի շարք գրքերի հին կազմերը հետագայում կոստղել են, այսինքն պատել են գամերով, որոնք ունեն լայն շրջաձև ուռուցիկ գլխարկ և սովորաբար պատրաստված են լինում արծաթից (հանդիպում են նաև արծաթի, պղնձի և այլ մետաղների համաձուլվածքից պատրաստված կոստղեր): Կոստղերի զուգորդությամբ կազմերի վրա երբեմն պատկերվում են ուղղանկյուն կամ կամարավոր խորանաձև շրջանակներ, երբեմն խաչեր և այլ երկրաչափական պատկերներ, քիչ չեն և այն դեպքերը, երբ կոստղերով համատարած կերպով ծածկված է գրքի ամբողջ երեսը: Գրքերի կազմերը գամերով կոստղելու սովորությունը, ըստ երևույթին, առաջացել է ոչ վաղ քան 15-րդ դարում և ավելի լայն տարածում է գտել 16—17-րդ դարերում: Երբեմն պատկերներով թիթեղներ փակցնելը և կոստղելը զուգորդվում են (նկ. 10):

Այսպիսով պարզվում է, որ մշակվել են գրքերի կազմերը զարդարելու ոչ միայն տեխնիկական տարրեր եղանակներ, այլև տարրեր ոճի զարդեր, որոնք ժամանակի ընթացքում զարգացել, փոփոխվել են: Կազմերի զարդերի ոճական առանձնահատկությունները նկատելի են ոչ միայն ժամանակագրական, այլև տերիտորիալ իմաստով: Իրենց խոշոր ընդհանրություններով հանդերձ, տարրեր դարերի և տարրեր նահանգների ձեռագրերի կազմերի զարդերը իրարից տարրերվում են, ուստի կազմերի և նրանց զարդերի, դրանց համար գործավող նկատների մանրակրկիտ ուսումնասիրությունը կարող է ձեռագրերի ժամանակը, տեղը, երբեմն նույնիսկ դպրոցները որոշող կարևորագույն կոլաններից մեկը լինել:

Վերին աստիճանի կարևոր է նաև կազմերի տակ փակցված գործվածքների և պահպանակների ուսումնասիրությունը, որը պետք է կատարել ձեռագրերի և նրանց կազմերի ուսումնասիրության հետ միասին:

Երևում է, որ առանձին արհեստավորներ, մանավանդ առանձին վանքերին կից գոյություն ունեցող արհեստանոցները ունեցել են գրքերը կազմելու և զարդարելու իրենց տրադիցիան, ճաշակը, այլև նկատների սեփական կոմպլեքսը:

Մատենադարանի № № 7534, 7535 և 7570 ձեռագրերը գրվել են 13-րդ դարում, տարրեր վայրերում (Այրիձորի վանք, Հոսմկլա և մեկի տեղը հայտնի չէ):



Նկ. 10. Հին կազմ՝ հետադաշուժ կազմած և անկյուններում ավետարանիչների պատկերներով թիթեղներ փակցրած (ձև. № 5194):

Մրանց կազմերը վերանորոգվել են 1582, 1583 և 1586 թվականներին, մեկը ինչ որ սբ. Ստեփանոս եկեղեցու, մյուսը՝ սբ. Հովհաննես եկեղեցու համար («որ մականունն Կուլում կոչեն»), մյուսը անհայտ է: Կողք կողքի դնելով այդ ձևազրերը, իսկույն կարելի է նկատել, որ դրանք կազմված են նույն արհեստանոցում, նույնիսկ միևնույն վարպետի ձեռքով: Եվ իրոք նրանց հիշատակարանները տալիս են երկրորդ անգամ կազմող Գրիգորի անունը՝ № 7534 և 7570 ձևազրերի համար, իսկ № 7535 ձևազրի կազմողի անունը հեշտությամբ վերականգնվում է առաջին երկուսի օգնությամբ: Այս ձևազրի կազմը զարդարելու համար վարպետ Գրիգորը օգտագործել է 4 նկատ, աշխատանքը կատարել է 1582 թվականին: Մի տարի անց, երկրորդ ձևազրերը կազմելիս նա օգտագործել է միայն 3 նկատ, բայց ճիշտ նույն խմբավորումով և ոճով, իսկ շրջորդ նկատը չի օգտագործել, որովհետև դա նույն վարդյակն է, որի ավելի մեծադիր օրինակի օգտագործումը ավելորդ է դարձրել առաջինի կրկնությունը, մանավանդ առաջին ձևազրի վրա էլ դա օգտագործվել է ոչ տեղին: Երրորդ ձևազրերը զարդարված է նույն 3 նկատներով և ճիշտ նույն ոճով, որը բնորոշ է Ղրիմի համար:

Կազմարարական տարրեր դպրոցները ցայտուն կերպով երևան են գալիս, երբ իրար հետ ենք համեմատում տարրեր վայրերի առավել մեծ խումբ կազմող ձեռագրերի (օրինակ՝ Արիմի, Ջուղայի և Կ. Պոլսի ձեռագրերի) կազմերը: Արիմի առավել հին ձեռագրերի կազմերի դարդերը բուն Հայաստանի հյուսածո խաչածե, շրջանածե, աստղածե և նկատներով գրվող դարդերի կրկնութունն են հանդիսանում: Բայց, հետզհետե Արիմի կազմողները ավելի մեծ ուշադրութուն են դարձնում զծագիր դարդի վրա, որը զուգակցում են նկատներով արվող դարդի հետ: Դեռևս 14—15-րդ դարերում երևան են գալիս նոր ոճի զծագիր դարդեր նորատիպ նկատների զուգակցությամբ (նկ. 11): Գծագիրը ավելի է շեշտվում 16—17-րդ դարերում, օր. 1604 թ. № 7477 ձեռագրի կազմը (նկ. 12):

17-րդ դարի երկրորդ կեսից երևան են գալիս մամուլի օգնությամբ ճնշված դարդեր, որոնք գրվում էին կազմի կենտրոնում մեծ ձվածիր պատկերի կամ շրջանակի ձևով կամ բունում էին կազմի ամբողջ մակերեսը: Դրանք զարդարվում էին ոճավորված օրնամենտներով:

Արիմի ձեռագրերի կազմերի տակ փակցված են միայն կանաչ կամ կապտավուն կտավի գործվածքներ, իսկ դրոշմազարդ (դաճազարդ) գործվածքը իսպառ բացակայում է:


Նոր-Ջուղայի ձեռագրերի կազմերի վաղ օրինակները ևս կրկնում են բուն Հայաստանի կազմերի դարդերը: Մանավանդ, այստեղ աշխատել են երկանի դպրոցի մի շարք վարպետներ, օրինակ՝ Վարպետաց վարպետ Տեր Մարտիրոսը, ծագկող և կազմող Մեսրոպը, որը առաջինի աշակերտն էր և դիրք է ծագկել ու կազմել Ջուղայում 1621 թվականին: 17-րդ դարում, մանավանդ նույն դարի երկրորդ կեսում, մշակվում է Նոր-Ջուղայի բնորոշ ոճը, որի լավագույն կիրառողներն է Ջուղայացի գիտնական, տոմարագետ Ազարիան (նկ. 13): Հնատիպ դարդերով նկատների կողքին երևան են գալիս ծագկածե, մեծ վահանածե և այլ դարդեր (ձեռ. № 3598): Կազմերի եզերքները զարդարվում են բուսական օրնամենտներով, որի համար օգտագործվում են իր լայնքից կրկնակի երկար նկատը, բայց շուտով երևան են գալիս նաև երկար մետաղաթերթերով կամ ամբողջական շրջանակներով ճնշված դարդերը՝ Ջուղայի համար բնորոշ բուսական օրնամենտներով: Կազմի վրա երբեմն ճնշումով գրվում են տիրամոր և խաչելության պատկերներ և այլն:

Ջուղային է բնորոշ նաև կազմի վրա ճնշումով արված արձանագրութունը, բայց որում ամեն տառի համար օգտագործվել է մի նկատ (նկ. 14):


Կ. Պոլսում կազմված ձեռագրերի վաղ օրինակներն ևս կրկնում են բուն Հայաստանի կազմերի հին դարդերը և նրանց տեխնիկան:

Ավելի ուշ Կ. Պոլսի գրքերի կազմերը հեռանում են բուն Հայաստանի կազմերի ձևերից, առավել շփերով քան նույնիսկ Արիմի գրքերի կազմերը: 17-րդ դարի երկրորդ կեսից հանդես է գալիս ճնշումով արված եռակի ժապավեններով ամբողջական շրջանակներ կազմող դարդը, որը բունում է կազմի եզերքի մեծ մասը (նկ. 15): Այս քառանկյունածե կամ շեղանկյունածե համատարած շրջանակների դարդը, նմանվելով եվրոպական Վերածնության (իսկ ավելի ուշ բարոկկոյի) համար բնորոշ, բուսական օրնամենտին, համարյա կապ չունի հայկական զարդարվեստի հետ:

Կարելի է խոսել կազմարարական այլ դպրոցների մասին ևս, սակայն ներկա հոդվածի համեստ նպատակն է առաջ քաշել կազմերի ժողովրդական



Նկ. 11. Կազմ՝ քնորոշ Ղրիմի հայոց կազմարարական դպրոցին (ձեռ. № 5353):



Նկ. 12. Կազմ՝ քնորոշ Ղրիմի հայոց կազմարարական գաղտնիքն (ձեռ. № 7477):




Նկ. 13. Կազմ՝ բնորոշ Զուղայի հայոց կազմարարական դպրոցին
(ձեռ. № 3194, կազմարար՝ տոմարադեա Աղարիա Զուղայեցի):



Նկ. 14. Կազմ՝ բնորոշ Զուգայի հայոց կազմարարական դպրոցին (ձեռ. № 200):

ստեղծագործության մի բնագավառ լինելու և ձեռագրերի ուսումնասիրության մեջ նրանց կարևոր դերի հարցը միայն: Այստեղ մենք շինք անդրադառնում ձեռագրերի և տպագիր գրքերի վաղ օրինակների վրա հանդիպող արժաթե կազմերին, որոնք նույնպես երևան են բերում սակերչության տարրեր դպրոցներ և ուրիշ ժողովուրդների արվեստի հետ հայկականի ունեցած կապերն ու աղերսները՝ 17—18-րդ դարերում: Առանձնապես ուշագրավ են Ղրիմի և Գալիցիայի ձեռագրերի արժաթյա կազմերը, որոնք հնարավորություն են տալիս



Նկ. 15. Կազմ՝ բնորոշ Կ. Պոլսի հայոց կազմարարական դպրոցին (ձեռ. № 1456):

լրացնելու մեր գիտելիքները՝ հայկական գաղթավայրերի կուլտուրական կապերի մասին: Աննշան չէ այն ձեռագրերի թիվը, որոնք ունեն ուսական արժաթյա և արժնապատ զարդեր, դրանց նմանվող դրվագված գծագիր և ձուլածո սրբապատկերներ, օրնամենաներ, իսկ կազմերի տակ իբրև սահմանակ առանձին զեպրերում դրված են ուսական ձեռագրերից պոկված թերթեր:

Մատենադարանի արժաթյա կազմերը նույնպես սպասում են իրենց ուսումնասիրողներին:

Ս. ԿՄՈՅԱՆ

«ՔՆՆՈՒԹԻՒՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅՍ ԵՒ ՆՈՐԻՆ ԶԱՆԱԶԱՆ
ԿՐԻՑ ԵՒ ՊԱՏՃԱՌԱՆԱՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ»
ԶԵՌԱԳԻՐ ԲԺՇԿԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայ բժշկության բազմադարյան պատմության խորն ու մանրակրկիտ ուսումնասիրության համար անհրաժեշտ է մասնագիտորեն քննարկել և ըստ արժանիության գնահատել Պետ. Մատենադարանի բոլոր այն ձեռագիր բժշկաբանները, որոնք, շնայած իրենց հարուստ բուխանդակությանն ու մեծ արժեքին, առ այսօր բավարար չափով չեն ուսումնասիրված: Այդ կարգի ձեռագրերի շարքում իր ուրույն և առաջատար տեղն ունի 415 համարի տակ գրանցված ընդարձակ բժշկարանը, որի համառոտ նկարագիրը տրվում է ստորև.

ԹԵՐԹԵՐ՝ 233 (466 էջ), ՄԵՄՈՒԹՅՈՒՆ՝ 25×18×5,5, ՆՅՈՒԹ՝ թուղթ, ԿԱԶՄ՝ դրոշմազարդ կաշեպատ տախտակ (ներսից ծաղկավոր կտավ), ՏՈՂԵՐ՝ 25—26, ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն, ԳԻՐ՝ բոլորագիր, վերնագրերն ու գլխատառերը գրված են կարմիր թանաքով, ԳՐԻՉ՝ Մարտիանի որդի տեր Յակոբ, ԺԱՄԱՆԱԿ՝ 1465—1473 թթ. (Արիստակես կաթողիկոսի աթոռակալության տարիներին), ԳՐՉՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ՝ Սամցխու երկիր, ՍՏԱՅՈՂ՝ Սամցխու երկրի բժիշկ Խոջայ էվաչ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

1. էջ՝ 1ա—54բ (սկզբից և վերջից թերի): Դեղագիտարան, բաղկացած 20 ենթադրույթներից, որոնցում տրվում են բուսական, կենդանական ու հանքային ծագում ունեցող դեղանյութերի զուգորդումով 330 դեղեր պատրաստելու եղանակներ: Ամեն դեպքում հեղինակը նշում է թե տվյալ դեղատոմսը ինչ հիվանդությունների բուժման համար կարող է օգտակար լինել: Նշված դեղանյութերի զգալի մասը լայնորեն օգտագործվում է նաև արդիական բժշկականության մեջ (օրինակ՝ օսլում, կամֆորա, ծծումբ, սնդիկ, պղնձարջասպ, արծաթ, ոսկի և այլն): Դեղատոմսերի տերմինոլոգիան մեծ մասով արարերեն է (հայերեն տառադարձությամբ), սակայն օգտագործված են նաև հայերեն, իսկ սակավ դեպքերում նաև հունարեն ու լատիներեն տերմիններ:

Դեղատոմսերը շարադասված են ըստ իրենց զուգորդման ձևի և մարդու օրգանիզմի վրա ներգործելու սկզբունքի: Դեղանյութերի գոգիրովկան տրված է ողջ արևելքում տարածված արարական բժշկականության շափի ու կշռի տերմիններով (դրամ, մթխալ, դանկ, լիտր, նուկի և այլն):

Անտարակույս, սույն դեղագիտարանի ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել ոչ միայն դեղագիտության պատմության, այլև արդի կիրա-

ուսկան բժշկականութեան համար: Սույն հողվածի մեջ, սակայն, այդ հարցերին անդրադառնալու հնարավորութիւն չպետք է ունենանք:

2. էջ՝ 55ա—215 բ՝ բժշկական քննարձակ աշխատութիւն, որի խորագիրը, դատելով հիշատակարանից, պետք է լինի, «Քննութիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և սրտաճառանաց հիւանդութեան»:

Աշխատութիւնը նվիրված է մարդու բոլոր օրգան-սխտեմների պաթոլոգիայի հարցերի լուսաբանմանը: Բաժանված է երկու մասի՝ առաջինը 58 ենթագլխով, երկրորդը՝ 14 ենթագլխով:

Ստորև տալիս ենք ենթագլուխների վերնագրերը, պարզ սրտակերացում կազմելու համար այս մեծարժեք բնագրի կառուցվածքի ու բովանդակութեան մասին:

[ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ]

1. Նեղէր որ ի լեզուն լինի ի յիւր մասունսն և ի բերանին մասունսն (էջ 55ա—56ա).
2. Վասն բերանին նեղերոյն պատճառքն և նշանն (56ա—58ա).
3. Վասն շնչողականին անդամոցն և իւր նեղերոյն... (58ա—59բ).
4. Վասն նշանացն նեղերոյն, որ պատեալ է զխոշակն, մաշկն և կամ թոքին եղևնան մաշկն (59բ—60բ).
5. Վասն թոքին նեղերոյն (60բ—69ա).
6. Վասն կրծոցն նեղերոյն, որ լինի ի տափակ շէրոյն մաշկն, որ զկողն է պատեալ (69ա—71ա):
7. Վասն սրտին առաջաստին ցաւերոյն (71ա—72ա).
8. Վասն սրտին նեղերոյն (72ա—74բ).
9. Վասն կերակրողական անդամոց (74բ—81բ).
10. Վասն ստամոքսացն յատկին ցաւերոյն (81բ—85բ).
11. Վասն աղեացն նեղերոյն (86ա—88բ).
12. Յաղագս կողրնջին նեղերոյն (87բ—89բ).
13. Վասն ճիճին և խղթային և դղմի կտին (89ա—90ա).
14. Վասն որովայնին ցաւոցն (90ա—91բ).
15. Վասն լերդին ցաւերոյն (92ա—93բ).
16. Վասն ըստըսխային և արծրվեաց (93բ—96բ).
17. Վասն փածղանն ցաւերոյն (96բ—97բ).
18. Վասն լեղոյն ցաւերոյն (97բ—98բ).
19. Վասն երիկամացն նեղերոյն (98բ—102ա).
20. Վասն փաղայրշտին նեղերոյն (102ա—103բ).
21. Վասն փորոյն ներքին մաշկին նեղերոյն (103բ—105ա).
22. Վասն ծնրնդականին անդամոցն ցաւոցն (105ա—112ա).
23. Վասն պոճկոռաց ցաւերոյն և ծնկներոյն և ոտներոյն (112ա—114ա).
24. Վասն յայն ցաւոց նշանացն, որ զեռ լինելոց է, որ կայ ի յաջողն մարդկացն ի մարմինն և ոչ յիմանայ (114ա).
25. Արողջին դուռն, զոր ճանանչեն բժիշկք ի յարողջն (114ա—118բ).
26. Վասն նշանացն նեղերոյն, որ ցուցանէ զամէնայն ցաւն (118բ—123բ).
27. Յաղակս ցուցանելոյ զաման տկարութեան (123բ—125բ).

28. Դուռն վասն սուր և երկար նեղերոյն (125բ—127ա).
29. Դուռն, որ ճանանչեն գրու[ն]րանն և զիւր պատճառսն (127ա—127բ).
30. Դուռն, որ յիմանաս զայն իրքն, որ բուհրանն իւրով լինի (127բ—129ա).
31. Դուռն վասն ճանանչելոյ գրուհրանին արերն (129ա—132բ).
32. Դուռն որ ցուցանէ զկենաց նշանն և զմահոյն (132բ—135բ).
- 33—37. Դուռն ճանանչելոյ, զոր ի մարմնոյն ելնէ (նշանք գոգին, նշանք վերարեբութեան, նշանք թրին, նշանք քրտանցն) (135բ—137ա).
38. Դուռն որ ցուցանէ զվատն և զաղեկն, որ ի քթէն իջանէ (137ա—139ա).
39. Դուռն վասն շարժողական երակաց նշանի, որ ցուցանեն զնեղութիւն մարմնոյն (139ա—141բ).
40. Դուռն որ ցուցանէ զ[ար]կերական և զկերպն վասն տաքութեան շրջողական անդամոցն (141բ—144ա).
41. Դուռն վասն պատմութեան ջերմանցն, զոր ասացին առաջին իմաստունքն և բժշկայտեաքն (144ա—145ա).
42. Դուռն, յորում յիշենք զպատճառ ջերմանցն և զնոցին նշանսն, զոր ճանանչեն յիմաստունքն (145ա—147ա).
43. Դուռն երկրորդ վասն ջերմանցն, որ ընծայի ի բորբոս մաղձերոյն և նշանաց նոցայ (147ա—151բ).
44. Դուռն որ ցուցանէ զբորբոս ջերմանցն զնշան և զբաժանումն սեռից նոցայ (151բ—155ա).
45. Դուռն որ ցուցանէ զնշանս ջերմացն զուզաւորաց, որ ունին խառնվածս (155ա—156բ).
46. Դուռն վասն այտոցացն... (156բ—157ա).
47. Դուռն որ ցուցանէ զնշանն ականջնայցաւին և զպատճառն (157ա—160ա).
48. Այլ դուռն վասն այտոցացն, զոր ճանանչեն (160ա—160բ).
49. Այլ դուռն վասն այտոցացն, որ ի սլլզամէ լինին, զոր ճանանչեն բժ[իշ]կքն և զիտ[ն]ականքն (160բ—162ա).
50. Դուռն վասն սև մաղձին ուռիցիւն և իւր նշանացն (162ա—162բ).
51. Դուռն որ ցուցանէ զարտաքոյ մարմնոյն զազգի ազգի ելունդնին և զանուանս նոցա և զնշանսն (162բ—164ա).
52. Դուռն, որ ցուցանէ զնշանսն գողութեան և զպատճառն (164ա—165բ).
53. Դուռն վասն պիտանիւն պատճառացն և նշանացն (165բ—166ա).
54. Այս է դուռն վասն քոսի և քերոյ, որ լինի ի կեղել մարմնոյն և վասն ջրի և վասն պալարի և վասն վարդ ցաւոցն, որ ասեն բարիք, և վասն մանր շտերու և վասն կոծծի, և կանգր և ապուրմմայ, որ է ուռից, որ լինի ի յարենէ և քամոյ, որ ասի առաք երակին վաթել, որ է շուրիան այրածի կրակոյ (166ա—168ա).
55. Դուռն վասն նշանացն, որ մի մի յանդամ լինի արտաքոյ մարմնոյն ազգ և ազգ նեղեր (168բ—171ա).
56. Դուռն որ ցուցանէ զեկամուտ նեղերն, որ են արտաքուստ (171ա—173ա).
57. Դուռն վասն աւցից խայթելոյն նշանացն (173ա—174ա).
58. Դուռն վասն խայթող ժժմանցն (174ա—175բ).

[ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ]

Սկիզբն երկրորդ գրոցս, որ ցուցանէ զներսի անդամոցն զնեղսն և զպատճառսն և զնշանս նոցայ.

1. [Եւ յառաջն յիշենք զգլուխն և զիւր ցաւան] (175բ—178բ).
2. Դուռն վասն սարսամին և իւր նշանացն և վասն պրսամին և վասն յղեղին ուտիցին (179ա—180ա):
3. Դուռն վասն նշանաց և պատճառաց ցաւուն զոր նսիան ասեն, որ է մոռացութիւն (180ա—182բ).
4. Դուռն վասն սքթէին և վասն սարային և վասն քապուսին (182բ—185բ).
5. Դուռն վասն մալայխուրին և վասն խոտրութին և վասն սիրոտրին (185բ—188ա).
6. Դուռն որ ցուցանէ զնշանս աւղնայշարին և ըղեղին (188ա—191բ).
7. Դուռն որ ցուցանէ զթրշանայճն, որ է կարճել ջլացն (191բ—192բ).
8. Դուռն որ ցուցանէ զթլընըճն, որ ի լուծմանէ լինի (192բ—194ա).
9. Դուռն վասն սաշային, որ ասի զողալ մարմնոյն ըղթրշաճին, որ է խաղալ մարմնոյն (194ա—194բ).
10. Դուռն որ ցուցանէ զկղանալն և զիւր պատճառն և զնշանն (194բ—195բ).
11. Դուռն որ ցուցանէ զհինգ զսղայարանաց զցաւան (195բ—206բ).
12. Դուռն վասն հոտոտելեացն նեղերոյն (206բ—208բ).
13. Դուռն վասն լեզուին և իւր նեղերոյն և բերանին և իւր նեղերոյն (208բ—212ա).
14. Դուռն վասն բարի նշանացն, զոր տեսանեն բժիշկ[ք]ն և իմանան զորպիսութիւն հիւանդին (212ա—215ա).

Աշխատութեան վերջում (էջ 215ա—215բ) ձեռագրի ընդօրինակող Մարգարիտի որդի տեր Հակոբի հիշատակարանն է, որի հետ առիթ կունենանք ծանոթանալու ստորև, իսկ հաջորդ (216—232) թերթերի վրա, տարբեր մարդկանց կողմից և տարբեր ժամանակներում ընդօրինակված են զանազան գուշակողական-ախթարական հոգվածներ, որոնք Բժշկարանի հետ առնչություն չունեն, ուստի չեն զբաղեցնելու մեզ:

Բժշկարանի ենթադրութիւնների այս թվարկումն իսկ ցույց է տալիս, որ հեղինակը, որոշակի սկզբունքով, կանգ է առել մարդու բոլոր օրգան-սխտեմներում նորմալ վիճակից կատարված պաթոլոգիական պրոցեսների լուսարանման վրա: Նա, ամենից առաջ, աշխատել է պարզել տվյալ հիվանդությունն առաջացնող պատճառներն ու մարդու օրգանիզմի վրա նրա ներգործման մեխանիզմ-էտիոպաթոգենեզը, և տվել է այդ հիվանդության կլինիկական պատկերը բնորոշող ախտաբանական նկարագրությունները: Հիվանդ օրգանի անատոմիայի և նրա հետ առնչության մեջ գտնվող հարևան օրգան-սխտեմների տպօգրաֆիկ անատոմիայի մասին հեղինակի հաղորդած տվյալները, ըստ մեծի մասին, ճիշտ են ու գնահատելի: Հիվանդությունների հետազոտման-դիագնոզի և հիվանդության հնարավոր կլին-պրոգնոզի մասին խոսելիս, մեր հեղինակն աշխատում է վեր հանել տվյալ հիվանդության պաթոֆիզիոլոգիական և պաթոանատոմիական հիմքերը, արտահայտելով վերին աստիճանի ուշադրով հա-

յացքներ հիվանդութեան, որպէս ողջ օրգանիզմի տառապանք՝ բնութագրման հարցում:

Աշխատութեանը գրեթէ զերծ է միատիկո-մոզակեան դատողութեաններից: Հեղինակին մեծ շափով հաշտովել է ազատվել միջնագարջան սխտրաստիկայից ու դոզմատիզմից:

Աշխատելով պարզարանել հիվանդութեանների առաջացման պատճառները մեր հեղինակը, ելնելով հումորալ պաթոլոգիայի սկզբունքից (որը, ինչպէս հայանի է, բժշկագիտութեան մեջ պահպանվեց մինչև 19-րդ դարի սկզբները), միաժամանակ առաջադիմական մեծ քայլ կատարելով, հատուկ ուշադրութեան է դարձնում արտաքին միջավայրի ազդակների վրա:

Նրա կարծիքով հիվանդութեանների առաջացման գործում կարևոր ազդակներ են նաև երկրի աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները (ցուրտ, շոգ, զանազան քամիներ), մարդկանց կյանքի ու աշխատանքի պայմանները (ծուխ, փոշի, վատորակ ջրի ու սննդամթերքի գործածութեան), ալկոհոլիզմ և այլ պատճառներ:

Որպէս օրինակ ծանոթանանք Բժշկարանի այն հատվածին, որտեղ հեղինակը աշխատում է պարզել խոշակի և շնչափողերի (բրոնխների) բորբոքումների պատճառները. «Եւ պատճառն այս են,— գրում է նա,— որ լինի ի խիստ տարութենէ, որ շերմն բերէ և կամ լինի պաղութենէ ի յայն ժամն յերբ հիւստային հողմն շնչէ և պաղ... և ի դրուցէ պատահմունքն փոշին է և կանչելն և մուխն. լինի ի յայլ պատճառացն, որ խոշորութիւն հասանէ, և պարտ է քեզ իմանալ, զի այս խոշորութիւնս և հազս ի ծերոցն ոչ հատանին, այլ միշտ ունենան...» (ձեռագիր N 415, էջ 60ա—60բ):

Այս ոչ քնդարձակ մեջբերումն իսկ բավական է ցույց տալու համար հեղինակի տեսական մեծ պատրաստութեաններն ու փորձառութեանը: Կլինիկական մեծ դիպացուն ունեցող բժիշկը միայն կարող էր գիտենալ, որ տենդային հիվանդութեանների («ջերմերի») դեպքում ևս՝ առաջանում են խոշակի և շնչափողերի հիվանդութեաններ: Հեղինակը նկարագրում է այդ հիվանդութեանների շոր և թաց կլինիկական ձևերը: Նրա կարծիքով դրանց պաթո-անատոմիական հիմքը կազմում են խոշակի և շնչափողերի լորձաթաղանթի բորբոքային պրոցեսները, լորձաթաղանթի բորբոքմամբ՝ այն ուռչում, հաստանում և անհարթանում է: Բորբոքային պրոցեսի արդասիք հանդիսացող հեղուկը, կուտակվելով շնչափողերի մեջ, նեղացնում է նրանց անցքը, որի պատճառով էլ դժվարանում է հիվանդի շնչառութեանը: Համաձայն մեր հեղինակի նկարագրութեան, այդ հիվանդութեան (բրոնխիտների) բնորոշ ախտանիշներն են տարութեանը, հազը, գլխացավը, կոկորդի բորբ, խզոցներն ու ծակոցները կրծքում, ձայնի խոստումնային, իսկ բրոնխիտների թաց կլինիկական ձևի դեպքում՝ նաև խուխարտագրութեանը, շնչառութեան դժվարացումը և այլն (տե՛ս ձեռագիր N 415, էջ 59բ—60բ):

Ընդհանուր բժշկապատմութեան տեսակետից մեծ հետաքրքրութեան է ներկայացնում այն հանգամանքը, որ մեր հեղինակը նույն գլխում փորձում է նաև բացատրել բրոնխիտների ժամանակ խզոցների առաջացման պաթոֆիզիոլոգիական մեխանիզմը: Այս կապակցութեամբ նա գրում է. «...և այլ լինի խորոզոտիլ ձայնին և բորբոս գիշութենէն, որ լցուի ի խոշայլուխն և թոքին եղեզն և ծանրացնէ և գիճացնէ. և երի շունչն ի թոքէն ելնէ և ի յիւր ճանապարհն ըն-

թանայ՝ նայ ձայնն խոզոտ լինի վասն այն գիշուխան, որ լցեալ է շնչերակն...» (ձեռագիր № 415, էջ 60բ):

Ինչպես ակներև է խոզոցների առաջացումը հեղինակը բացատրում է նրանով, որ բորբոսային հեղուկը լցվելով շնչափողերի մեջ «ժանրացնում», այսինքն, դժվարացնում է շնչառությունը և երբ հիվանդը արտաշնչում է, թոքերից դուրս եկող օդը իր ճանապարհին առաջ է բերում խոզոցներ: Եթե ի նկատի ունենանք, որ շնչառության «դժվարացումը» հեղինակը բացատրում է շնչափողերի լորձաթաղանթի բորբոսային պրոցեսով, ապա դժվար չի լինի եզրակացնել, որ խոզոցների առաջացմանը տված նրա մեկնաբանությունը միանգամայն գիտական է և գրեթե չի տարբերվում արդիական ըմբռնումներից:

Ներքին պաթոլոգիային նվիրված ընդարձակ բաժնում մեր հեղինակը, մի շարք առիթներով, մերժում է այսպես կոչված՝ լուկալ պաթոլոգիայի ոչ գիտական տեսակետը, ըստ որի որևէ օրգանի տառապանքը դիտվում է մեկուսացված ամբողջ օրգանիզմից: Մեծ պատրաստությունների տեր հեղինակը կուսում է, որ մարդու մարմնի բոլոր օրգանները, իրենց ֆիզիոլոգիական ֆունկցիաների և պաթոլոգիական պրոցեսների մեջ անբաժանելի միասնություն են կազմում:

Պլեվրիտների առաջացման պատճառներին և նրանց կլինիկական սրտակերն արտահայտող սիմպտոմատոլոգիային նվիրված գլխում նա գրում է. «այն անգամն, որ տկար է՝ ի սրտին ի դրացնութիւն է, և երակքն դէպի սիրտն և ամենայն մարմինն վշտանայ (ձեռագրում՝ վշկանայ — Ա. Կ.), որպէս դրաց[ի]ներ զիրար սիրեն, պիտի միոյն տրամութիւնն միւսոյն լինի» (ձեռագիր № 415, էջ 69բ):

Դեռ անտիկ շրջանի բժիշկներն էին կարծում, որ սիրտը հանդիսանում է ջերմության կենտրոն և կենսականորեն ամհրաժեշտ ջերմությունը սրտից երակների միջոցով, տարածվում է դեպի մարմնի բոլոր օրգան-սիստեմները: Մեր հեղինակը ընդունելով այդ, համարձակորեն հայտնում է այն տեսակետը, որի համաձայն որևէ օրգանի պաթոլոգիական փոփոխության հետևանքով առաջացած հիվանդությունը տարածվում և անդրադառնում է մարմնի մյուս օրգան-սիստեմների վրա:

Կարևոր ու առաջադիմական այս տեսակետը արտահայտված է բժշկարանում բազմիցս, այլևայլ առիթներով. այսպես՝ «Վասն կերակրողական անդամոց» ենթագլխում հեղինակը մարսողական տրակտի ֆիզիոլոգիական ֆունկցիաները և պաթոլոգիական պրոցեսները քննում է մարմնի մյուս օրգան-սիստեմների դործունեության հետ սերտորեն շաղկապված: Նա գտնում է, որ կերակրափողի, ստամոքսի, մարսողական ապարատի ստորին հատվածների (բարակ և հաստ աղիքների), լերդի, փայծաղի, հրիկամների և մյուս կողմից սրտի ու գլխուղեղի ֆունկցիաների միջև գոյություն ունեն ընդհանուր շաղկապվածություն ու փոխազդեցություն: Այս առթիվ գրում է. «Զի (ստամոքսացն վերին կողմն) ի սրտին դրացնութիւն է և յղեղին դրացնութիւն և այն նեղն, որ ի ստամոք բերնին գայ և այն տեղոյն, որ այլ ցած է քան զստամոք բերանն՝ և այլ անդամոց մասունքն գայ, բայց այսորն աւելի է, զի դրացին է և ընկեր ըղեղին, և այն են նեղերն, զոր յառաջն յիշեցար՝ մաղձերն և ուռիցն և բաժանումն մասանց ի միմեանց: Եւ նեղէր որ ի ընկերութեամբ լինի ստամոքացն հետ սրտին և հետ ը[ղ]ղանն՝ այն այս են, զոր ասեն առաջինքն, թէ ստամո-

բաց նեղերն հետ սրտին և հետ ըզդին (ձեռագրում՝ նեղին — Ա. Կ.) ընկերութիւն՝ տքնութիւն է և խելացն կորսնելն, և տաքութեններն, և սոսուս, որ է պղտորումն մտաց, և անդոհումն, և ազգի ազգի երազ և ընդ այլ զրուցել և յանկարծակի ընկնիլ և կծկիլ մարմնոյն և սպաթ, որ է քուն, որ շիմանայ երբ ձայնես, զի ասէ Գաղիանոս թէ տեսեալ եմ մարդ, ոչ պատահեցաւ հետ շերմանն կծկիլ մարմնոյն, և շատեայ ի նմայ նշան կծկելոյ, և պատահեցաւ հետ կծկելոյն վերայբերութիւն ի խարտէշ մաղձէ նայ ողջացաւ կծկելն ի յայն պահն: Եւ շատ ուտելոյն, որ շամարսէ և լինի վնասակար՝ նայ պատահի երենջկտալ և հեծկտալ և երկ սիրան շարժի և ձգէ գայն, որ ստամոքն է կամաւ և կամ յոշ կամաւ՝ նայ երբնջկտալն և հեծկտուկն կտրի, և այս նեղերս, զոր ասացաք, նայ ի ստամոքացն ի յղեղին ընկերութիւն լինի, իսկ նեղեր, որ ի ստամոքացն ի սրտին յնկերութիւն լինին՝ են թալնալն և տրապիւլն և այլ զանազ[ան] նեղեր...» (ձեռագիր № 415, էջ 75բ—76ա):

Այս հատվածից պարզ է դառնում, որ մարսողական տրակտի, սրտի, զըլխուղեղի և այլ օրգան-սխտեմների «դրացիության», «հարեանության» տերմինների տակ մեր հեղինակը հասկացել է ամբողջական օրգանիզմի մի շարք ընդհանուր ֆիզիոլոգիական ֆունկցիաները և այնպիսի պաթոլոգիական երկվուլթների հանդես գալը ինչպիսիք են՝ մարմնի տաքության բարձրացում, դիտակցության մթաղնում, դիտակցության կորուստ, տեսակ տեսակ երազներ, դառանցանք, հանկարծակի վայր ընկնել, մարմնի կծկումներ, քուն, փսխումներ և այլն: Շատ ուտելուց հետո մարդու մոտ հանդես են գալիս, — դրում է նա, — հորանջոց, զկոտոցներ և շնչառության խանգարում, բայց երբ մարդու մոտ հանդես են գալիս սրտի խփոցներ, այդ դեպքում հորանջանքը, զկոտոցները և շնչառության խանգարման երևույթներն անցնում են հետին պլանի վրա:

Մեր հեղինակը կարողացել է կռահել, որ մարդու ողջ օրգանիզմի նորմալ ֆունկցիաների և պաթոլոգիական շեղումների գեղջում, ներվային սխտեմը և զլխուղեղը հանդիսանում են այդ պրոցեսները զլխավորող և կանոնավորող օրգանները: Աշխատության «զներսի անդամոցն զնեղսն և զպատճառսն և զնշանս նոցայ» խորագիրը կրող բաժինը, որտեղ նա խոսում է զլխի հիվանդությունների մասին, սկսվում է այսպես. «Եւ յառաջն յիշենք զզլուխն և զիւր ցալսն, զի զլուխն թագաւոր է ամենայն մարմնոյն» (ձեռագիր № 415, էջ 175բ), կամ՝ «Վասն շարժողական երակաց նշանի, որ ցուցանեն զնեղութիւն մարմնոյն» հատվածում հեղինակը, ցանկանալով շեշտել զլխուղեղի բացառիկ դերը մարդու օրգանիզմում, «զգայարանաց զգայարան» է կոչում նրան, և հայտնում է այն միտքը, որ զլխի տարրեր հիվանդությունների կլինիկական երևույթների զարգացման համեմատ՝ փոփոխության է ենթարկվում նաև հիվանդի զարկերակի հաճախականությունը:

Մարդու կենսական պաթոլոգիական պրոցեսներում զլխուղեղի և ողնուղեղի ունեցած դերի մասին խոսվում է նաև «Դուռն որ ցուցանէ զնշանս աւղնաշարին և յղեղին» խորագիրը կրող ենթազլխի մեջ: Հեղինակը գտնում է, որ ինչպես վերին և ստորին անդամների, այնպես էլ ներքին օրգանների պարեզները և անդամալուծները (պարալիչները) առաջանում են ներվային սխտեմի վնասումներից: Նրա պատկերացմամբ վերին և ստորին ծայրանդամների, դեմքի, բերանի պարեզները և պարալիչները, ինչպես նաև անդամների թմրությունը, զգացողության կորուստը և այլ առաապանքները առաջանում են զըլ-

խավորապես գլխուղեղի փորսկների մեջ և այլ տեղերում հումորների կուտակումից:

Ներքին օրգանների ֆունկցիաների խափանումներին անդրադառնալով նա գրում է. «...Եթէ այն ջիւն գլուխն ընուի, որ ի խոշակն գայ՝ նայ մարդոյն ձայնն կարի: Եթէ այն ջիւն լցուի, որ ի կրծոց յոսկորն հասանէ՝ նայ նահանջ առնէ: Եթէ այն ջեղն ընուի, որ ի փաղաչքուշտն կու հասնի՝ նայ դողն առանց կամայ ելնէ ի մարդոյն: Եթէ այն ջիւն լինի (իմա՝ ընուի), որ ի յորովայն լինի և կու հասնի՝ նայ աղբն ելնէ առանց կամայ: Եւ այսպէս ի յոր անդամ և եթէ լցուի պղզամն՝ խարանէ դամենայն անդամսն ի յիւր գործոյն: Եւ այս, զոր յիշեցաք վասն ջլերոյն, նայ յԲ (2) իրաց լինի. կայ որ ընուի ջեղն հաստ պղզամն և կալնու դինքն, և կայ որ ձգէ զղեղն նայ կալնու ի ձգելն: Իսկ ձգել անդամոցն Բ (2) իրաց լինի Ա (առաջին)՝ անդից, որ կապեն զոր անդամ և է՝ նայ ի կապելն ձգի, և կամ ձգի անդամն ի յուրիցն, երբ ողնայշարին ու յղեղին լինենայ, որ ուռենայ և կամ թէ ոսկորն ի տեղացն խախտի, նայ ջիւն ձգի, յերբ ջեղն կարի՝ նայ այն անդամն, որ ի յայն անդամն ջեղն ի յարենէ թուլանայ, և յերբ ջեղն ջարդի և տրորի կամ ի լայնքն կարի՝ նայ շարողջի, իսկ թէ յերկանքն կարի՝ ողջանայ. և այս զոր ասացաք վասն ջլերոյն և վասն ողնաշարին և յղեղին...» (ձեռագիր № 415, էջ 189ա):

Այս կարգի ուսուցումնալ դատողություններ և ուշադրով մտքեր կարելի է դանել աշխատութեան քաղմաթիւ հատվածներում: Նրանք աներկբայորեն վկայում են այն մասին, որ մեր հեղինակը մարդու օրգանիզմի, ինչպես նորմալ ֆիզիոլոգիական, այնպես էլ պաթոլոգիական պրոցեսներում ներվային համակարգին խոշոր դեր է հատկացրել: Նա նույնիսկ փորձել է ըմբռնել, թե ինչ ուղիներով է գլխուղեղը, կամ, ինչպես ինքն է ասում, «զգայարանաց զգայարանը» իրագործել իր «թագավորությունը» ողջ մարմնի նկատմամբ: Վերին աստիճանի հետաքրքրական է նրա կուսումը, ըստ որի ներքին օրգանների և ստորին և վերին ծայրանդամների ֆունկցիաները կապված են ողնուղեղից դուրս եկող լարերի գործունեության հետ:

Ուշադրով է նաև ներվային «լարի» զանազան վնասվածքների մասին հեղինակի հայտնած կարծիքը: Նա, անշուշտ բաղմամբա փորձի հիման վրա, հանդի է այն համոզման, որ երբ ներվային լարը իր լայնքով է կտրվում կամ ամբողջապես տրորվում է, այլևս չի առողջանում, ուստի և չի վերականգնվում նրանով ներվավորվող օրգանի ֆունկցիան, իսկ երբ ներվային լարը կտրվում է իր երկայնքով, այն առողջանում է և, դրան համապատասխան, վերականգնվում իրենով ներվավորվող օրգանի գործունեությունը:

Մեր հեղինակը, կատարելով առաջադիմական խոշոր քայլ, հիվանդության պրոցեսը դիտում է որպես մակրոօրգանիզմի (այսինքն մարդու մարմնի) և նրա մեջ զանազան ուղիներով թափանցող և հիվանդություն առաջացնող ազդակի միջև տեղի ունեցող պայքար: Աշխատութեան մեջ որոշակի արտահայտված է նաև առաջադիմական այն միտքը, որ հիվանդության դեմ տարբեր օրգանիզմներ տարբեր աստիճանի դիմադրողականություն են հանդես բերում, այլ խոսքով զարգացված է հիվանդության դեմ օրգանիզմի պայքարի անհատականության սկզբունքը: Մանոթանանք այդ միտքը պարունակող մի շարք հատվածներից մեկին: Խոսելով ջերմերի տեղություն մասին մեր հեղինակը գրում է. «... Եւ երկրորդ պատճառն ուժն է հիւանդին, զի հիւանդն յերբ

ուժով լինի, որ դմադձն քրտնաւք հանէ՝ նայ ջերման ժամքն կարճ լինին. և թէ հիւանդն վատուժ լինի՝ նայ ջերմն <վատուժ լինի>՝ յերկարէ: Եւ երբորդն՝ կազմութիւն մարմնոյն, զի թէ մարմին նաւ[ս]ր լինի և երակքն հաստ և մարմինն քրքիր և մսամն, որ են շնչոյհանք մարմնոյն, որ են ելք մազերոյն արձակ լինին՝ նայ ջերմն կարճ ժամանակ լինի» (ձեռագիր № 415, էջ 150ա—150բ):

Ուշադրութեան արժանի է նաև այն հանգամանքը, որ խոսելով թոքերի պալարախաի (տուբերկուլյոզի) առաջացման մասին մեր հեղինակը գտնում է, որ այդ ցավով ալիւի շուտ հիվանդանում են 18-ից մինչև 35 տարեկան մարդիկ, որոնց կրծքավանդակը «նեղ է», թոքերն ու նրա անոթները «փափուկ են և վատուժ», այսինքն թույլ: Նա նշանակութուն է տալիս նաև ժառանգականութեան ֆակտորին: Գտնում է, որ շնչական ուղիների մի շարք բանալ հիվանդութուններ (քրոնխիտ, թոքաբորբ, թոքերի թարախակույտ, սլեմփիտ) կարող են փոխվել թոքերի պալարախաի, եթե թոքերը թույլ են և հիվանդի դիմադրողական բնական ուժերը ընկած (տե՛ս ձեռագիր № 415, էջ 60բ—69ա):

Իր էպոխայի բժշկականութեան զարգացման աստիճանի համեմատ մեր հեղինակի ունեցած առաջադեմ և մեծ հետաքրքրություն ներկայացնող հայացքների ու մտքերի հանդիպում ենք քննարկվող բժշկարանի գրեթե բոլոր հատվածներում: Բժշկի առաջնահերթ խնդիրը աշխատութեան հեղինակը համարում է պրոֆիլակտիկան: «Եւ պարտ է բժշկին, — գրում է նա, — որ երբ իմանայ զնեղոյն զպատճառն՝ ջանայ և արդիլէ զվնասայկար պատճառն, որ շներգործէ ի մարմինն, որ մնայ մարմինն ի կարգի առողջութեան, զի բժշկին իմաստութիւն և ջանքն ի յայն երևնայ, որ պահէ զառողջ մարմինն ի յիւր սահմանն և զհիւանդն զեղով խնամէ...» (ձեռագիր № 415, էջ 114ա):

Մեջ բերված հատվածի իմաստն այս է. բժիշկը, որոշելով հիվանդութեան պատճառը, պարտավոր է ջանալ վերացնել այն, որպեսզի այդ պատճառը շարունակի ներգործել մարմնի վրա և մարմինը մնա առողջ վիճակում: Բժշկի խելամտութիւնը երևում է հենց նրանով, որ նա ջանում է պահպանել առողջ մարմինը առողջ վիճակում, այսինքն մեծ ուշադրութիւն է դարձնում պրոֆիլակտիկային:

Ընդհանուր բժշկագիտութեան պատմութեան համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի ունեցած պատկերացումը վարակիչ հիվանդութունների ժամանակ վարակի փոխանցման ուղիների մասին: Այդ կապակցութեամբ, գոգութեան մասին խոսելիս, նա գրում է. «նոյն և այս նեղս անույանկարծակի զմարդն զայն, որ մերձ առ գողին <նստին> նստի՝ նայ շուտով փոխի և պատճառն այս է փոխելոյն, զի մարդն, որ հետ գողացն նստի կամ գրուցել և կամ հաց ուտել, մանաւանդ երբ տեղն նեղ լինի, զի նեղ տեղն շունչ մարդկանց ի յաւոն խառնի և աւոն մարդկացն տուր և առ է շնչոյն և խառնի աւոն ի շունչն և շունչն ի հողին և ի մարմին» (ձեռագիր № 415, էջ 165ա):

Մեջ բերված տողերը կարոտ չեն մեկնաբանութեան. նրանք ակնհերե վկայում են այն մասին, որ քննարկվող բժշկարանի հեղինակը մի շարք հարցերում կարողացել է կանխել բժշկագիտութեան հետադա նվաճումները՝ խորիմաստ կոահումներով, գործնական բժշկութիւնից արված ուսուցիչնալ եզրահանգումներով:

Հասկանալի է, որ սույն համառոտ հաղորդումով մենք անկարող էինք անդրադառնալ, թեկուզ և թուուցիկ կերպով, քննութեան ենթակա բժշկարանի

ուշագրավ բոլոր կողմերին, ծանոթանալ նրա հեղինակի արտահայտած առաջադիմական, հաճախ անսպասելի խիզախ ու խորիմաստ դադափարներին ու կուսակցություններին: Այնուամենայնիվ համառոտ այս ակնարկն իսկ բավարար էր համոզվելու համար այն բանում, որ «Քննութիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանաց հրանդութեան» խորագիրը կրող Բժշկարանը միջնադարյան հայ կուլտուրայի պատմության այն հուշարձանների թվին է պատկանում, որի նշանակությունը դուրս է գալիս հայագիտության շրջանակներից: Այն արժանի է հրատարակության ինչպես բնագրով, այնպես էլ ուսեթիւն թարգմանությամբ:

Մեր այս հազորդման երկրորդ բաժինը նվիրում ենք մեծարժեք այս Բժշկարանի հեղինակի ու գրության ժամանակի որոշման հարցերին:

* * *

Մինչև այժմ քննության ենթակա Բժշկարանով հետաքրքրվել են պրոֆ. Լ. Հովհաննիսյանն ու հանգուցյալ բժիշկ Գ. Հարությունյանը: Լ. Հովհաննիսյանը իր «Բժշկության պատմությունը Հայաստանում» ուսեթիւն լեզվով գրած աշխատության երրորդ գրքում, անդրադառնալով մեզ հետաքրքրող Բժշկարանի հեղինակի հարցին, գրում է. «Անկասկած այս բավականին ծանրակշիռ աշխատության հեղինակի հարցը դեռևս պետք է ամփոփել համարել: Եվ այս ավելորդ անգամ գալիս է հաստատելու բժշկագիտության պատմության տեսակետից Մատենադարանի ցարդ շհետազոտված ձեռագիր երկերի ունեցած նշանակությունը»¹:

Գ. Հարությունյանը ավելի հանդամանորեն է անդրադարձել այս ձեռագրին: Իր «Մանկաբարձությունը և գինեկոլոգիան Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև սովետական ժամանակաշրջանը» դոկտորական դիսերտացիոն աշխատության մեջ, մանրամասնորեն ուսումնասիրելով բժշկարանի «Վասրն ծնընդկանին անդամոցն ցաւոցն պատճառացն և նշանացն» (էջ 105ա—112ա) խորագիրը կրող ընդարձակ բաժինը, նա եկել է այն համոզման, որ բժշկարանի հեղինակը կատարել է կանանց սեռական օրգանների ներքին վննում: Հիվանդ կանանց օրյեկտիվ քննություն կատարելու մեթոդը հնարավորություն է ընձեռել բժշկարանի հեղինակին մանրամասնորեն նկարագրել կանանց միզասեռական օրգանների մի շարք հիվանդությունների կլինիկական ճիշտ պատկերը: Գ. Հարությունյանը հարուստ փաստերով ցույց է տվել, որ Հայաստանում 12—14-րդ դարերում մանկաբարձության բնագավառում կատարել են այնպիսի բարդ վիրահատումներ, ինչպիսիք են՝ պտղաշրջումը, պտղահատումը, կեսարյան հատումը և զանազան ուռուցքների հեռացումը: Այդպիսի օպերացիաներ, — նշել է Հարությունյանը, — եվրոպայում առաջին անգամ սկսեցին կատարել միայն 16-րդ դարում՝ երեք հարյուր տարի ավելի ուշ քան Հայաստանում²:

Մեզ գրադեցնող աշխատության հեղինակի ապրած ժամանակաշրջանը մերձավորապես որոշելու նպատակով Գ. Հարությունյանը քննարկել է Բժշկա-

¹ Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. III, Ереван, 1946, стр. 98.

² Г. Г. Арутюнян, К истории операции акушерского поворота (см. журнал «Акушерство и гинекология», 1951, № 1, стр. 56).

բանի ոճն ու լեզվական տվյալները. ուշադրութիւն է դարձրել այն հանգամանքի վրա, որ Բժշկարանում համեմատաբար սակավ են օգտագործված արարական բժշկական տերմինները, հիշատակված են Հիպոկրատն ու Գալենը, ընդհանրութիւններ կան սույն Բժշկարանի և Մխ. Հերացու «Ձերմանց մխիթարութիւն» աշխատութեան շարադրութեան և լեզվի միջև և այլն: Վերոհիշյալ տվյալների հիման վրա նա եզրակացրել է, որ Մատենադարանի № 415 ձեռագիր Բժշկարանը գրվել է 12-րդ դարի վերջերին կամ 13-րդ դարի սկզբներին, անունն հայ բժշկի կողմից:

Հեղինակի ու նրա ապրած ժամանակաշրջանի որոշման հարցում նախորդ ուսումնասիրողները (Լ. Հովհաննիսյան, Գ. Հարութիւնյան) գծվարացել են վերջնական խոսք ասել, որովհետև քննարկվող ձեռագիր Բժշկարանը թերի է իր սկզբի մասով:

Միջնադարյան հայ նշանավոր բժիշկները իրենց աշխատութիւններն սկսել են համառոտ առաջաբաններով, որտեղ անհրաժեշտ տեղեկութիւններ են տրվել աշխատութեան բովանդակութեան, նպատակների ու գրութեան հանգամանքների մասին: Այդպես է վարվել Մխիթար Հերացին «Ձերմանց մխիթարութեան» առաջաբանում, Ամիրդովլաթ Ամասիացին «Անգիտաց անպէտ»-ի և այլ գործերի առաջաբաններում և այլն:

Եթե, դիցուկ, պահպանված չլինէր Մխիթար Հերացու հանրահայտ առաջաբանը և աշխատութիւնը սկսվէր Ա. զլխից, ապա մենք նրա հեղինակի որոշման համար ստիպված պետք է լինեինք բնասիրական երկար պրպտումներ կատարել:

Եվ ահա, գժրախտաբար, մեր Բժշկարանը թերի է իր հենց այն մասով, որտեղ, բոլոր տվյալներից դատելով, գտնվել է հեղինակի առաջաբան-հիշատակարանը ու թերևս նաև աշխատութեան ցանկը:

Բարեբախտաբար հեղինակի նախագաղափար օրինակի հիշատակարաններից որոշ տվյալներ օգտագործել է իր հիշատակարանում № 415 ձեռագրի ընդօրինակող գրիչը՝ Ծարպիանի որդի տեր Հակոբը, ուստի ծանոթանանք նախ նրա հիշատակարանին:

«...Ձշահավէտ և զուժ աւգտակար գիրքս այս, որ է Քննութիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանաց հիւանդութեան ցաւոց, զոր գրեալ էր համայնիբակ եղբայրն մեր Մարգարէ վարդապետն, աշխատութեամբ թարգմանողի Գրիգորիսի: Արդ, որք հանդիպիք սմայ կարգալով կամ աւրինակելով կենդանութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ Խոջայ էվաչին, որ է բժիշկ Սամցխու երկրիս կարողութեամբն աստուծոյ, և որդոյ իւրոյ Մուրատբախչին, զոր տեր աստուած պահեսցէ խաղաղութեամբ և ընդ երկայն աւուրս արասցէ, ամէն:

Արդ գրեցաւ գիրքս այս, որ է անուանալ Մաղբայսպատինս, որ թարգմանի ի հայ բառս Բժշկարան ի դուռս միջի վանաց սուրբ Աստվածածնիս, ի հայրապետութեան տէր Ընքատաքիսի, ի թագաւորութեան պարոն Ղաւրդաւրին, ի էպիցկոպոսութեան տէր Գրիգորի, որ է առաջնորդ Սլամցխու երկրիս, ի տանուտէրութիւն պարոն Ազրղին և պարոն Վարձելին: Այլ ես գրեցի գիրքս՝ Ծարպիանի որդիս տէր Յակոբս, որ յայսմ ամի ձեռնայդրէցայ: Այլ թողութիւն արարէք սրդալանաց գրքիս, զի յառաջի գիրն էր և գժարայդարձ, զի զամէն մարդոյ զօրութեան քննէ ի յարապ լեզուէն ի հայսն: Եւ որք յիշման արժանի աննէք զմեզ՝

յիշեցէ և զձեզ Քրիստոս, յորժամ գայ դատողական յաթոն իւր. և թողութիւն շնորհեցէք մեր և ձեր ննջեցելոցն ի Քրիստոսէ, ամէն» (ձեռագիր № 415, էջ 215ա—215բ):

Հիշատակարանն իր մեծ մասով պարզ է ու անկարող մեկնութեան: Մարտիրոսի որդի տեր Հակոբը Արիստակես կաթողիկոսի աթոռակալութեան տարիներին, այսինքն 1465—1473 թթ., ընդօրինակել է այս ձեռագիր Բժշկարանը Սամցխեի աթարեկութեան բժիշկ խոջա Էվաչի պատվերով:

Մեր կարծիքով հեղինակի մասին ակնարկ կա հիշատակարանի այն հատվածում, որտեղ ասված է. «Ձշահավէտ և զուժ ազտակար գիրքս այս, որ է Բնութիւն բնութեան մարդոյս և նորին զանազան կրից և սլատճառանաց հիւանդութեան ցաւոց, զոր գրեալ էր համայնիւրակ եղբայրն մեր Մարգարէ վարդայպետն, աշխատութեամբ քարգմանողի Գրիգորիսի»:

Այս արժեքավոր հատվածը ճիշտ մեկնարանելու համար կրկին դիմենք Մխ. Հերացու և Ամիրզոյլյաթի առաջարանների օգնութեանը:

«Ձերմանց մխիթարութեան» առաջարան-հիշատակարանում իր կատարած աշխատանքի մասին Մխ. Հերացին գրում է. «Ձրովանդակն որ վասն արուեստի բժշկութեանս իմաստութիւն՝ թողի և զերեք ազգ ջերմանցս միայն հաւաքեցի և թարգմանեցի ի հայ բառ» և ապա՝ «Եւ յազազս այսորիկ յօժարեցի... ասնել զգիրքս զայս ի հոռոմ և յարապիկ և ի պարսիկ գրեանաց, ըստ իմոյ կարողութեանս և շնորհի»¹:

Պարզ տեսնում ենք, որ տաղանդավոր հեղինակը, որի աշխատությունը վաղուց ի վեր արժանի տեղ է գրավել բժշկագիտութեան պատմութեան մեջ, իր կատարած գործը համեատորեն «թարգմանություն» է կոչում:

Այդպես է վարվել նաև Ամիրզոյլյաթը: Բարձր գնահատելով Ամիրզոյլյաթի կատարած տաժանակիր աշխատանքը «Անգիտաց անպետի» նման էնցիկլոպեդիկ գործ ստեղծելու ժամանակ, այդ գործի հրատարակիչ Կ. Բասմաջյանը գրել է. «Եվ սակայն Ամասիացին անպատվություն չի համարեր իրեն՝ ինքզինքն համեատորեն անվանել հասարակ «թարգմանող» մը, «ժողովող» մը, պարզ «գրող» մը, և կամ «չինող» մը»²:

Ավելին, Ամիրզոյլյաթի ժամանակակիցներից ոմանք ևս նրան «թարգմանող» կոչումն էին տալիս, այդ բառի տակ, անշուշտ, զնելով ավելի խոր («մեկնարանող», «պարզարանող» են) բովանդակություն: Այսպես, «Անգիտաց անպետի» լոնդոնյան ձեռագրի վերջում կա 1496 թ. կատարված համառոտ մի գրանցում. «Փոխեցաւ ի Քրիստոս Ամիրտովյաթ բժիշկն քարգմանող գրոցս, ի թվ. Ջևե (=1496), զեկ[տեմբերի] Ը. (8), արն հինգշաբթի»:

Այս պարզարանումից հետո զգալի շափով հեշտանում է № 415 ձեռագրի հիշատակարանից վերը մեջբերված հատվածի մեկնարանումը: Անդրադառնալով նրան, գալիս ենք այն եզրակացության, որ հիշատակարանում «թարգմանող» կոչված Գրիգորիսը եղել է հենց մեծարժեք Բժշկարանի հեղինակը, իսկ Մարգարե վարդապետը՝ հեղինակի ցուցմունքներով արտագրել է Բժշկարանի այն օրինակը, որը եղել է № 415 ձեռագրի գրիչ տեր Հակոբի ձեռքի տակ:

Իր գաղափարի ընդօրինակող Մարգարե վարդապետին տեր Հակոբը կոչում է «համայնիւրակ եղբայրն մեր»: Եթե բառացի հասկանանք այդ արտահայտու-

¹ «Մխիթարայ բժշկապետի Հերացույ, Ձերմանց մխիթարութիւն», Վենետիկ, 1832:

² «Ամիրզոյլյաթի Ամասիացույ Անգիտաց անպետ կամ բառարան բժշկական նիւթոց», ի լոյս էած Կ. Յ. Բասմաջյան, Վիեննա, 1927, Յառաջարան հրատարակչին, էջ ԺԵ.

Յյունը («Համշիրակ»—նշանակում է սննդակից), պետք է կարծենք, որ Մարդարե վարդապետը, ուստի և Բժշկարանի հեղինակ Գրիգորիսը, գրիչ տեր Հակոբի հասակակից կամ դոնե ավագ ժամանակակից մարդիկ են եղել: Մենք, սակայն, դժվարանում ենք տեր Հակոբի բոլոր խոսքերին մեծ արժեք վերագրել, նկատի ունենալով նրա գրադիտութեան ոչ բարձր աստիճանը, ուստի մեծ վերապահութեամբ միայն Բժշկարանի հեղինակին 15-րդ դարի գործիչ համարելով, հույս ունենք, որ հետագայում կհայտնաբերվեն նոր տվյալներ նրա ապրած ժամանակաշրջանը ճշտելու համար:

Որ № 415 ձեռագրի Բժշկարանը հայ հեղինակի գործ է և ո՛չ թարգմանություն, այդ պարզվում է նաև Բժշկարանի մանրագնին և ուշագիր քննութեամբ:

Հեղինակն իր աշխատութեան 144ա—158բ էջերում քննութեան է առնում սուր-վարակիչ հիվանդությունների («չերմերի») առաջացման պատճառները և տալիս նրանց կլինիկական պատկերը բնորոշող սիմպտոմատոլոգիայի նկարագրությունները:

Աշխատութեան այդ բաժինը, հեղինակի իսկ վկայութեամբ, շարադրված է այնպես, ինչպես «ասացին առաջին իմաստունքն և բժշկապետքն»: Արդ մեզ հաջողվեց պարզել, որ մեր հեղինակի ակնարկած իմաստունների ու բժշկապետների աշխատություններից ամենակարևորը եղել է հայ բժշկապետ Մխիթար Հերացու «Չերմանց Մխիթարութիւն»-ը: Առանց վարանման կարելի է ասել, որ Բժշկարանի այս բաժինը մասամբ կազմված է Հերացու աշխատություններից արված գրեթե բառացի քաղվածքներով, մասամբ էլ վերաշարադրություն է Հերացու աշխատութեան համապատասխան մասերի:

Համոզվելու համար այս բանում դուրահեռար ծանոթանանք Մխ. Հերացու աշխատութեան և քննարկվող Բժշկարանի միմյանց համապատասխանող հատվածներից մի քանիսին.

Մե. Հերացի, Պատմութիւն նախագիտութեան վասն ամենայն ցեղ բորբոսային շերմերոյն ուրիշ, ուրիշ», (գլ. ԻԳ, էջ 57—58):

«...Եւ այլ գիտացիր՝ որ ամէն մէկ ի յայս շորիցս բաժանին և այլ ցեղ շերմեր. զերդ որ արեան շերմն բաժանի ի յերեք ցեղ: Մէկն այն է՝ որ իւր տաքութիւն հանապաղ միացեղ լինի յառաջմէ մինչև ի վճարն և դայդ շերմդ անուանեալ են հաւասար, զի այն՝ որ բորբոսած լինի յարենէն, և այն՝ որ չէ բորբոսած, հաւասար լինին և միաշար:

...Ապա այն շերմն, որ ի յայլ նիւթերոյն ի բորբոսելոյն լինի, բաժանին ընդ երկու ցեղ: Մէկն այն է՝ որ ի յար լինի տաքութիւն և առանց նոպայի, և մէկայլն այն է՝ որ նուպայ ունի և ժամանակ, զերդ որ յառաջդ ասացար. և երբ այն նիւթն՝ որ ի ներքս ի յերակսն լինի,

Պետ. Մատենադարան, Ձեռ. № 415, էջ 148ա—148բ («Գուուն երկրորդ, վասն շերմանցն, որ բնծայի ի բորբոս մաղձերոյն և նշանաց նոցա»):

«...Եւ ամէն ազգի յայս Գ. (4) շերմանցս բաժանին և յայլ ազգերսն, զոր ասացար ի յառաջն վասն շերմանցն, որ ի բորբոս արենէ լինի. և ինքն երեք ազգ է, և կայ ազգ մի ի յայս շերմանցս, որ ի դալ շերմանն յառաջին պահէն մինչև ի վերջն Ա. (մէկ) կերպիւ կենայ, և ասեն իւր հաւ[ա]սար, զի այս շերմս, որչափ և բորբոսն է այն շարն հատնի, զի որչափ, որ արիւն բորբոսեալ է հատնի՝ նայ շերմն հատաւ:

...Եւ այլ շերմք, որ են ի յայս մաղձերու բորբոսէս ամէն Ա. (մէկն) ի նոցանէ բաժանի յերկու ազգ և մինն ի յերկուդ է և միշտ լինի անհանդարտ: Եւ երկրորդն

և բորբոսի, նա ընծայի իւրմէն այն ջերմն, որ ի յար լինի՝ իւր տաքութիւն և առանց նոպայի: Ապա թէ այն նիւթն որ ցղրուց երակացն լինի՝ բորբոսի, նա ընծայի իւրմէն ջերմն՝ որ նոպայ ունի և ժամ:

Եւ վասն այդ պատճառանացդ եղաւ, որ յարեան ջերմն ի յար և առանց նոպայի լինի. զի արիւնն ցփերքսէ երակացըն լինի: Եւ երբ ի յարենէն մասն ինչ բորբոսի, նա իւր տաքութիւնն հաւասար ի յամէնն հասանի. ապա մնայ այն ջերմըն ի յար մինչև վճարի այնչաքսն՝ որ բորբոսած լինի, և կամ եփի, և կամ երկուքն հասանին՝ որ եփի և վճարի...»:

Մխ. Հեռացի, էջ 90—91

«Մէկն այն իրուին են՝ որ բնութեամբ լինին, զերդ հիւանդինը խառնուածն՝ որ տաք և շոր լինի, և մաղձն իւր խառնուածոցն յաղթեալ լինի, և տարօքն մանուկ լինի, և ժամն ամառն լինի, և օդն տաք և շորային լինի:

Եւ երկրորդ նշաննին այն իրուին լինին՝ որ շէն բնութեամբ. զերդ որ հիւանդն ի յառաջն կերակրեալ լինի տաք և շորային կերակուր, նոյնպէս և ըմպելիքն տաք և շորային լինի խմել, և շատ հոգս լինի տարել կամ տքնութիւն, կամ դատել լինի շատ, կամ շատ ժամանակ ի պաք է կեցել, և ընդ ցերեկոյ, և որոյ արուեստն զերդ դարբնութիւն լինի և կամ ապիկեզործութիւն, կամ այլ արուեստ՝ որ ի կրակի մօտ լինի. զի այս ամէնայն իրուիս և իւրեանց նմանիքն տաքցենն զմարմինն և շորացնեն, և խարտեշ մաղձն ընծային:

Իսկ երրորդ նշաննին այն իրուին լինի՝ որ ի դուրս են ի բնութենէն, զերդ որ հետ ջերմանն խիստ դող լինի և խոցտիլ մարմնոյն զերդ ասղամբ, և այդ խոցտելոյդ պատճառն մաղձին սրութիւնն լինի»:

Սահմանափակվենք մեջ բերածով, նշելով որ Թժշկարանում կան նաև այլ էջեր ու հատվածներ, որոնք բովանդակության, նյութի հաշորդականության և

կայ, որ զկասնի և կայ ժամ որ հատնի, որպէս յառաջդ յիշեցաք: Իսկ մաղձ որ ի յերակքն լինի և շարժողականան և կամ ի յանշարժսն, և բորբոսէ՝ նայ իւր մէջն ջերմն ընծայի անխափան: Եւ թէ արտաքոյ երակացն բորբոսէ, նայ ընծայի ջերմն որ ի ժմէ ի ժամ դայ:

Եւ վասն այս պատճառացն է արիւնին ջերմն հանապազ, զի արիւնն ի ներսէ երակացն է, որ են շարժողականք և անշարժք, նայ երբ ի յարենէն բաժանին մի բորբոսէ՝ իւր բորբոսին տաքցնէ զայլ արիւնն և բովանդակ հաւասարի ի վերայ ամէն արեանն, և բորբոսէ զմարմինն հաւասար վասն այն, որ անուանի տայիմէ, որ անուանի հաւասար հանապազ և մինչ ի յայն կենայ տաքութիւն, մինչ որ հատցնէ զբորբոսեալ արիւնն և կամ եփէ, և կամ յխտկէ...»:

№ 415, ձեռ. Թժշկարան, էջ 152ա

«...որ բնութենէ լինի այս է, որ լինի հիւանդն տաք բնութեան և շոր, և իւր ընծայիլն ի խարտեշ մաղձէ լինի, և լինի մանկութեան ժամանակին, և յեղանակս ամառային և հողմն լինի տաք և շոր, և կամ հասնի մարդոյն տրամութիւն, կամ տքնութիւն, կամ աշխատանք յոլով, և կամ ի յոլով պահոց լինի, իւր արուեստն հուր, զերդ դարբին կամ խարազ (հացագործ), վասն զի այս պատճառնիս տաքցնեն զմարմինն և ցամաքեցնեն և տան ընծայիլ խարտեշ մաղձին: Եւ կան որ լինին ի յայն պատճառոցն, որ արտաքոյ մարմնոյն են և ի բնութենէ և այս են, որ ի հետ ջերմանն շարժումն լինի մարմինն և սարսափէ, և լինի որ խոթխոթի մարմինն, զերդ որ փշով խոթթեն և ասխով, և ունենայ այրեաց վասն մաղձին սրութեան և տաքութեան...»:

շարագրման ձևի տեսակետից մեծ ընդհանրություններ ունեն Մխ. Հերացու աշխատության հետ: Արդ, ինչո՞ւ են բացատրվում այդ ընդհանրությունները: Մեր հեղինակները միմյանցից անկախ օգտվել են մի այլ — արաբերեն աղբյուրի՞ց, թե՞ նրանցից մեկն օգտվել է մյուսից: Այս հարցի պատասխանը տրրվում է առանց մեծ դժվարության:

Մի շարք ուսումնասիրողներ (Թորգոմյան, Ferren, Seidel, Հովհաննիսյան, Մելիք-Փարսազանյան) հանդել են այն եզրակացության, որ Մխ. Հերացին ջերմերի էտիոլոգիայի հարցում առաջ է քաշել նոր ու օրիգինալ տեսություն: Ըստ այդ տեսության, ջերմերն առաջանում են արյան, լորձի և օրգանիզմի այլ հեղուկների բորբոսումից, որի հետևանքով մարմնի մեջ առաջանում է բնական տարությունից զատ օտար ու հիվանդագին տարություն:

Մանրամասնորեն անդրադառնալով Հերացու ուսուցիչին այս կոնցեպցիային պրոֆ. Լ. Հովհաննիսյանը գրել է. «Եթե Զայդելը կանգ առնելով այս հարցի վրա, ասաց որ ինքը չի ցանկանում մեծարել Մխիթարին համարելով նրան բակտերիոլոգիայի նախակարապետը, ապա օրյեկտիվ ու անվիճելի փաստ է այն, որ մինչ-բակտերիոլոգիական էրայի բժիշկներից և ոչ մեկը ինֆեկցիոն պրոցեսի արտահայտման համար չի օգտագործել ճշմարտությանն այնքան մոտ տերմին, ինչպես այդ արել է Մխիթար Հերացին»¹:

Զուգահեռաբար մեջ բերված հատվածներից և ամբողջ Բժշկարանի ուսումնասիրությունից պարզվում է, որ մեր հեղինակը իր գործունեության ընթացքում առաջնորդվել է Հերացու բորբոսային ջերմերի կոնցեպցիայով և առանց վերապահության ընդունել է այն:

Որ քննարկվող Բժշկարանի հեղինակը եղել է հայ՝ ապացուցվում է նաև այլ փաստերով: Ծանոթանանք դրանցից կարևորների հետ:

Հանգուցյալ Գ. Հարությունյանը իր գոկտորական դիսերտացիայում եկել է այն եզրակացության, որ «Նա (աշխատության հեղինակը) փորթի խոռոչի և կանանց միզասեռական օրգանների անատոմիայի վերաբերյալ հանդես է բերել ծանրակշիռ գիտելիքներ, որոնք հատուկ չէին արաբական բժիշկներին, քանի որ մահմեդական նամազքամ կրոնական օրենքը արգելում էր տղամարդ բժիշկներին մոտենալ կնոջը, քննել նրան, ինչպես նաև կատարել դիահերձումներ»²:

Այդ իսկ պատճառով, նշել է Գ. Հարությունյանը, արաբական բժշկագիտությունը, ինչպես մանկաբարձության ու գինեկոլոգիայի, այնպես էլ անատոմիայի ու ֆիզիոլոգիայի բնագավառում չկարողացավ հասնել հին աշխարհի բժշկագիտության մակարդակին: Հայ բժիշկները, տվյալ դեպքում քննության ենթակա բժշկարանի հեղինակը, անատոմիայի ու ֆիզիոլոգիայի բնագավառում ավելի լայն մտահորիզոն են ունեցել, արտահայտել են շատ ավելի ուսուցիչնալ ու առաջադիմական հայացքներ, քան նույն էպոխայի արաբ բժիշկները: Եվ այդ բացատրվում է այն իրողությամբ, որ ինչպես ապացուցվեց վերջերս³ հայ բժիշկները կատարում էին մահվան դատապարտված ոճրագործների

¹ Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. II, Ереван, 1946, стр. 121.

² Г. Г. Арутюнян, Акушерство и гинекология в Армении с древних времен до советского периода (докторская диссертация), 1952, стр. 179 (машиннопись).

³ Լ. Խաչիկյան, Գիահերձումները հին Հայաստանում (Հայկ. ՍՍՏ ԳԱ հասարակական բաժանմունքի «Տեղեկագիր», 1947, № 4, էջ 83—90):

կենդանահատումներ (viviseclio), սուտի ավելի լայն հնարավորություն ունենն ուսումնասիրելու մարդու անատոմիան ու ֆիզիոլոգիան¹:

Հայտնի է, որ արարերին և արարերենից թարգմանված բժշկարաններում բժշկական բառ-տերմինները անխտիր լինում են արարերին. նույնիսկ հունական ծագում ունեցող բառ-տերմինները և անտիկ շրջանի նշանավոր բժիշկների անունները վերոհիշյալ աղբյուրներում տառադարձված են լինում արարերին: հատուկ հնչյունափոխությամբ ու աղավաղումներով:

Մեր բժշկարանի հեղինակը, սակայն, տասնյակ բառ-տերմիններ է գործածում հունարենին և լատիներենին հարադատ տառադարձությամբ: Այս հանգամանքը կարևոր մի կողմն է հօդուտ այն ենթադրության, որ նա տեղյակ է եղել այդ լեզուներով գոյություն ունեցող բժշկական դրականությանը և լայնորեն օգտագործել է անտիկ շրջանի նշանավոր բժիշկների աշխատությունները:

Հունարենից ու լատիներենից փոխառնված բառ-տերմիններից նշենք հետևյալները՝ անկիկն, ապուլլիսպայ, ատալրոս, դիապետիս, դիսենթերիա, էֆրայտիս, իլայուս, լիթրուզաւս, կաթաստեր, կամայ, պասդիլուս, պուլիմուս, ռամատիս, սիրոտրին, ֆիխուսիուս, ֆոանիտիս և այլն:

Մեր հեղինակը գրում է շարունակ՝ Գալիանոս, Դիոսկորոս, Պալլոս, Ռուփէս (տե՛ս, օրինակ, ձեռագիր № 415, էջ 172բ, 173ա, 178բ, 190ա) և ոչ Ճալիանուս կամ Գեղինոս, Ֆլուս և Ըոուֆուս, ինչպես գրում էին արարները և արարական տերմինները պահպանող այլազգի բժիշկները:

Այս կարգի փաստերը, որոնց թիվը կարելի է բազմապատկել, անտարակույս, վկայում են այն մասին, որ քննարկման ենթակա Բժշկարանը թարգմանություն չէ արարերենից. ավելին՝ նրա հայ հեղինակը ձգտել է ամենուրեք գործածել զուտ հայկական բառ-տերմիններ, դրանով իսկ տարբերվելով միջնադարյան հայ բժշկության մի շարք այլ ներկայացուցիչներից, որոնք հետևելով իրենց ժամանակի տրադիցիային, առատորեն օգտվել են արարական տերմինոլոգիայից, արարերենի միջնորդությամբ օգտագործելով նաև հունարեն ու լատիներեն ծագում ունեցող բառ-տերմինները:

Ավարտելով մեր հաղորդումը Պետ. Մատենադարանի № 415 ձեռագիր Բժշկարանի մասին, ամփոփում ենք ստացված արդյունքները այսպես՝

1. «Քննութիւն քնութեան մարդոյս և նորին զանազան կրից և պատճառանաց հիւանդութեան» բազմարժանդակ ու մեծարժեք Բժշկարանը հայ հեղինակի գործ է:

2. Հավանարար նրա հեղինակին է ձեռագրի հիշատակարանի մեջ «Թարգմանող» կոչված Գրիգորիսը, սրն իր արժանի տեղն է գրավելու հայ միջնադարյան մշակույթի պատմության մեջ:

3. Գրիգորիսն ապրել է Մխիթար Հերացուց հետո (օգտագործել է «Ձերմանց մխիթարութիւն»-ը) և Արիստակես կաթողիկոսից (1465 — 1473) առաջ (ձեռագիրն ընդօրինակված է Արիստակեսի կաթողիկոսության տարիներին), դուրս 14-րդ դարի վերջերին:

¹ А. С. К ц о я н, Физиологические воззрения армян-врачей в эпоху расцвета феодальных отношений (отдельный оттиск из „Известий“ АН АрмССР, биолог. и сельскохозяйств. науки, том X, № 5, 1957),

Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ
ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Արարել ենք դարեր շարունակ եղել է իսլամական շրջանի պարսկական պատմագրության լեզուն: Գեղարվեստական գրականության մեջ և հատկապես շափածո ստեղծագործություններում պարսից լեզուն մուտք գործեց և լայն տարածում ստացավ սկսած թ դարից, երբ միջին Ասիայում կաղմավորվեց Սամանյանների պետությունը: Նույնիսկ այդ ժամանակ, երբ Սամանյան պետության սահմաններում և նրա սահմաններից դուրս ծաղկում էր նոր՝ «դարի» պարսկերենով գրվող գրականությունը, երբ հրապարակ էին իշել խոշոր քնարերգուներ՝ Ռուզաբին, Դակիկին, Ֆարրուխին և անմահ գյուցազներգու Ֆիրդուսին, պատմական, ինչպես նաև փիլիսոփայական, աստվածաբանական և ընդհանրապես գիտական ստեղծագործությունները գրվում էին միայն ու միայն արաբերենով:

Ինչպես այդ դարաշրջանում, այնպես նաև հետագա մի քանի դարերում արաբերենը շարունակում էր մնալ որպես ոչ միայն Իրանի, այլ ամբողջ մուսուլմանական աշխարհի գիտության լեզու: Սամանյան շրջանի նշանավոր պատմիչներ՝ Իբն-Կութեյբայի, Դինվարիի, Համզա Իսֆահանիի, Մուհամմադ-Ջարիր Բարարիի, Մուհամմադ Նարշախիի, աշխարհագիր Իբն-Ֆակիհ Համադանիի և ուրիշների հռչակավոր երկերը գրված են արաբերեն, և հետագա դարերում միայն դրանց մի մասը թարգմանվել է պարսկերենի:

Պատմագրության բնագավառում պարսից լեզուն սկսեց կիրառվել Սելջուկյան դինաստիաների տիրապետության շրջանում: Այդ շրջանից հայտնի են մի քանի պարսկալեզու պատմիչներ, ինչպես օրինակ «Ջեյն-ուլ-ախբար»-ի հեղինակ Աբու-Սաիդ Արդ-ուլ-Հայյ իբն-Ջահակ իբն-Մուհամմադ Գյարդիզին, որ ապրել և ստեղծագործել է սուլթան Արդ-ուլ-Ռաշիդ Ղազնավիի օրոք, Ղազնավիների պալատական պատմիչ Աբուլֆազլ Բեյհակին, որ արքունի դիվանատան ղլխավոր քարտուղարն էր և հանդես եկավ 30 հատորանոց ընդարձակ երկատիրությամբ, որի սակայն շնչին հատվածներն են մեզ հասել և վերաբերում են միայն սուլթան Մաս'ուդի թագավորության շրջանին, Աբուլ-Հասան Ալի իբն-Ջեյդ-ի Բեյհակին, որ գրել է Բեյհակ նահանգի պատմությունը և վերջապես սելջուկյան տիրապետության ամբողջ շրջանի մանրամասն պատմությունն ընդգրկող լավագույն սկզբնաղբյուրներից «Ռահաթ-ուլ-սուլուր»-ի հեղինակ Աբուբարր Մուհամմադ Ռավանդին, որ իր աշխատությունն ավարտել է 1206 թ. և նվիրել Ռումի սելջուկյան սուլթան Քեյխոսրով իբն-Ղլիշ-Ասլանին:

Այս շրջանին են վերաբերում նաև թեև ոչ պատմագրական, սակայն տվյալ ժամանակաշրջանի պատմության տարրեր հարցերի լուսաբանման համար կա-

բևոր սկզբնաղբյուրներ հանդիսացող այլ արժեքավոր երկեր, որոնցից հիշատակության արժանի են Մելիքշահի վեղիր Աբու-Ալի Հասան իբն-Ալի Նիզամուլ-Մուլքի «Սիասեթնամե» աշխատությունը, որտեղ հեղինակը մեծ շափով անդրադարձել է ինչպես իր ժամանակ, այնպես նաև նախորդ դարերի ընթացքում հանդես եկած ազանդավորական-սոցիալական շարժումների պատմությանը, Զիարյան դինաստիայի թագավորներից Ամիր Քեյխոսրով իբն-Իսքանդար իբն-Կարուս Վոշմեկիրի «Կարունամե» խորագիրը կրող հանրահայտ խրատագիրքը, Աբուլ-Հասան Ահմադ Սամարղանդիի կամ Նիզամի Աբուլի «Չհարմակալե» ծավալուն երկասիրությունը, ինչպես նաև մի քանի այլ մեծ ու փոքր բարոյախոսական ու առակադրական ժանրի գրական հուշարձաններ:

Պարսկալեզու պատմագրությունը զգալի վերելք ապրեց հատկապես մոնղոլական Իլխանության օրոք: Մի ժամանակ էր դա, երբ պարսից գրական լեզուն լայն տարածում ստանալով դարձավ ոչ միայն ամբողջ Իրանի, այլ նաև հարևան մի շարք երկրների՝ Հնդկաստանի, Միջին Ասիայի, Ադրբեջանի և Թուրքիայի մատենագրության, այդ թվում նաև պատմագրության հիմնական լեզուն:

Այս շրջանի նշանավոր պատմագիրների մեծ մասը միաժամանակ հանդիսանում էին Իլխանական պետության և արքունիքի խոշոր գործիչներ, որոնք ծագումով պարսիկներ լինելով հանդերձ կարողացել էին իրենց ձեռքը վերցնել պետության դեկոր: Հուլաղու խանի և հատկապես նրա հաջորդների օրոք, թեև լայնածավալ պետությունը գտնվում էր Զինգիլխանի սերունդների ձեռքում, սակայն պետության ընդհանուր փաստական ղեկավարությունը և հատկապես ֆինանսական գործերի տնօրինությունը վերապահված էր տեղական ծագում ունեցող մեծահարուստ և ազդեցիկ անձնավորությունների, որոնցից իրենց պատմական երկերով առավել հայտնի դարձան Զուվեյնի հղբայրներ խոջա Շամս-էդ-դինն ու Ալա-էդ-դին Աթամեկիքը և խոջա Ռաշիդ-էդ-դին Ֆաղլուլլահ Համադանին:

Ռաշիդ-էդ-դինը ոչ միայն հեղինակն է Իլխանության շրջանի խոշորագույն սկզբնաղբյուր «Զամե-ուլ-թավարիխ» երկասիրության, այլ միաժամանակ նրա հանձնարարությամբ էր, որ մեծահամբավ մատենագիր Շահար-էդ-դին Աբդուլլահ Շիրազին գրեց «Թարիխ-ե վասսաֆ» խորագիրը կրող և Աթամեկիք Զուվեյնի «Թարիխ-ե ջհանգուշա» աշխատության շարունակությունը հանդիսացող նշանավոր պատմագրական աշխատությունը:

Իլխանության շրջանի վերջին խոշոր պատմագիրն է բարձր ֆինանսական պաշտոններ զբաղեցնող և մի քանի պատմագրական ու աշխարհագրական աշխատությունների հեղինակ Համդուլլահ Մուսթովֆի Ղազվինին: Նրա գրչին են պատկանում «Թարիխ-ե գոզիդե», «Զաֆարնամե» (շափածո) և «Նուզհաթ-ուլ-կուլուբ» կապիտալ աշխատությունները:

Պարսկական պատմագրության մեջ այս ընթացքում սկսեց դարդանալ նաև ընդհանուր պատմության ուսումնասիրությունը: Ռաշիդ-էդ-դինի վերոհիշյալ «Զամե-ուլ-թավարիխ» (ժամանակագրությունների ժողովածու) խորագիրը կրող աշխատությունը այդպիսի մի համահավաք պատմության լավագույն նմուշներից կարելի է համարել: Հայտնի են նաև այլ աշխատություններ, ինչպես օրինակ՝ Աբու-օմար Օսման Մինհաջ-էդ-դին իբն-Մուհամմադ Սիրաջ-էդ-դինի «Թաբակաթ-ե նասերի» աշխատությունը, որն ընդգրկում է Հնդկաստանի,

Իրանի և հարևան մյուս երկրների պատմությունը սկսած աշխարհի արարչագործությունից մինչև հիշրեթի 658 (1260) թվականը:

Ընդհանուր պատմագրության այս ձևը այնուհետև լայն տարածում ստացավ և հետագա պատմիչներից շատերը սկսեցին հանդես գալ ավելի խոշոր և ծավալուն երկերով: Լանկ Թեմուրի և նրա հաջորդների օրով ևս գրվեցին, ինչպես նույն ժամանակաշրջանի պատմությունը նվիրված առանձին գործեր, այնպես նաև այդ կարգի համահավաք ընդհանուր պատմություններ, ինչպես օրինակ խոշա նուր-էդ-դին Լուսվուլահ շահեդի շորս հատորանոց «Զուրդաթ-ուլ-թավարիխ» և Ֆասիհի Խաֆիի «Մաշմալ-ե ֆասիհի» աշխատությունները և հատկապես Մուհամմադ իրն-Խավանդշահի կամ Միրխոնդի «Ռովդաթ-ու-սաֆա» 7 հատորանոց ընդարձակ պատմագրությունը, որ նա գրել է Ալիշեր Նավայի հանձնարարությամբ և նվիրել է նրան:

Լանկ Թեմուրի նվաճումների պատմության երկու հիմնական սկզբնաղբյուրներ կան, որոնք երկուսն էլ կրում են «Զաֆարնամե» (հաղթությունների գիրքը) վերնագիրը: Դրանցից առաջինը երկու հատորանոց ընդարձակ ժամանակագրություն է, որի հեղինակն է Շարաֆ-էդ-դին Ալի Յազդին, իսկ երկրորդը գրել է պալատական պատմիչ Նիզամ-էդ-դին Շամին Լանկ Թեմուրի անմիջական հսկողության ներքո: Թեմուրյան ամբողջ շրջանի լավագույն աղբյուրներից է նաև Արդ-ուլ-Ռազզակ Սամարղանդիի «Մաթլա' -ու-սաադեյն»-ը որ ընդգրկում է 1304—1571 թթ. շուրջ 250-ամյա շրջանի պատմությունը, հանդիսանալով Ռաշիդ-էդ-դինի պատմության շարունակությունը:

Վ. Վ. Բարտոլդը, խոսելով Թեմուրյան շրջանի պատմական սկզբնաղբյուրների մասին շեշտում է, որ այս շրջանը ուսումնասիրողը «դժվարություններ է կրում ոչ թե նյութի սակավությունից, այլ առատությունից, նյութեր որոնք ցրված են բազմաթիվ գրադարաններում և պահանջում են քննական ուսումնասիրություն և առաջին հերթին քննական հրատարակություն»: Մեջ բերելով Բարտոլդի այս խոսքերը պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկին միանգամայն իրավացի կերպով գտնում է, որ նույն դնահատականը ավելի քան վերաբերում է նաև ԺԶ—ԺԸ դդ. պարսկալեզու պատմագրությունը¹: Նվիրոք, ինչպես ԺԶ—ԺԷ դդ. սեֆյան տիրապետության շրջանում, այնպես նաև ԺԸ դարում Իրանում, ինչպես նաև Հնդկաստանում, Միջին Ասիայում, Ադրբեջանում և Թուրքիայում հրապարակ իջան մեծ թվով պատմիչներ, որոնք թողին չափազանց հարուստ և պատկառելի քանակությամբ պատմական մեծարժեք երկասիրություններ:

Սակայն, եթե Թեմուրյան կամ գուրգանիների ժամանակաշրջանի պատմագրական երկերի լեզուն համեմատաբար ավելի պարզ էր ու զգալի չափով զերծ նախորդ շրջանի որոշ հեղինակների մոտ լայնորեն օգտագործվող արարական խրթնարանությունից, ապա նրան հաջորդող սեֆյան շրջանի հարուստ պատմագրությունը, ընդհանրապես վերցրած, աչքի է ընկնում իր աննախընթաց խրթնարանությամբ և պալատական պատմագրությանը հատուկ արտակարգ ներբողադրական ոճով:

Այս շրջանի մի քանի հեղինակներից քացի (Հասան-բեկ Ռումլու, Շարաֆ խան Բիթլիսի, Շահ Թահմազ Ա. և ուրիշներ) մյուս բոլոր պատմիչները, սկսած

¹ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI нач. XIX вв. Л., 1949, стр. 19.

և ուսուցիչ «Հարիր-ուս-սիար»-ի հեղինակ Ղիաս-էղ-զին Խանդամիրից և վերջացրած Ղաջարյան առաջին թագավորների պատմիչ Աբդ-ուլ-Ռազզակ բեկ իրն-Նաշաֆիուլի խանով, հանդիսանում են պատմագրության այդ ժանրի ներկայացուցիչներ, որոնց երկերը հազեցված են ամենաբարդ այլաբանություններով և հարյուրավոր էջեր զբաղեցնող արձակ ու շափածո ներբողներով:

Իրենց ծավալուն և բազմահատոր գործերով այս շրջանում հայտնի դարձան Ղիաս-էղ-զին իրն-Հուսամ-էղ-զին Խանդամիրը, Հասան-բեկ Ռուսլուն, Մուլլա Իզրիս Բիթլիսին, Յահյա իրն-Աբդ-ուլ-Հաթիֆ Ղազվինին, Աբուբարք Թեհրանին, Շարաֆ խան Բիթլիսին, Շահ Աբրահա Ա-ի պալատական պատմիչ, եռահատոր «Թարիխ-ե ալամարա-յե արբասի»-ի (Աբրահայան աշխարհարար պատմություն) հեղինակ Իսքանդար բեկ Թորքեմանը, Ղազի Ահմադ Ղաֆիարին, Մուհամմադ-Թահեր վահիդը, Մուհամմադ-Յուսուֆը, Նադիր շահի գլխավոր քարտուղար Միրզա-Մեհդի խան Աստարաբադին, «Թարիխ-ե ալամարա-յե նադերի»-ի հեղինակ մեծ վեզիր Մուհամմադ-Քյազիմը, Ջենդ Քյարիմ խանի և նրա հաջորդների պատմության հեղինակ Ալի-Ռզա իրն-Աբդ-ուլ-Քյարիմ Շիրազին, Ղաջարյան շրջանի 15 հատորանոց պատմության՝ «Նասեխ-ուլ-թավարիխ»-ի հեղինակներ Միրզա-Թազի խան Սփեհերին և Աբրահակուլի խանը, որ նույնպես ճանաչված է Սփեհերի անունով, եռահատոր «Թարիխ-ե մունթաղամ-ե նասերի»-ի հեղինակ Մուհամմադ Հասան խան Սանի-ուլ-դովլեն, Մուհամմադ-Միրզան, Ֆազլուլահ Մունշին, Աբդ-ուլ-Ռազզակ իրն-Նաշաֆիուլի խան Գուսթուլին և բազմաթիվ այլ մեծ ու փոքր պատմագիրներ:

Ուշագրության արժանի է նաև այս շրջանի Հնդկաստանի Մեծ մոնղոլի պետության պալատական պատմագրությունը: Աբբար շահի, Շահ Ջհանի և մյուս թագավորների օրոք պատմագրությունը Հնդկաստանում արտակարգ ծաղկում ապրեց: Ստեղծվեցին այնպիսի հռչակավոր երկեր, ինչպիսիք են օրինակ Ահմադ իրն-Նասրուլլահի «Թարիխ-ե ալֆի»-ն, Մուհամմադ-Յուսուֆ իրն-Շեյխի «Մունթախար-ուլ-թավարիխ» ընդարձակ ընդհանուր պատմությունը, նույն վերնագիրը կրող Աբդ-ուլ-Կադիր Բաղավունիի Աբբար շահի թագավորության 50 տարիների ընդարձակ պատմությունը (1556—1605), Մուհամմադ-Ղասեմ Հնդուշահի «Գուլշան-ե իբրահիմի»-ն, Աբբար շահի հռչակավոր վեզիր Շեյխ Աբուլֆազլի «Աբրարնամե»-ն, ինչպես նաև «Ռուվղաթ-ուլ-թահերին», «Միր'աթ-ուլ-ալամ», «Միր'աթ-ուլ-սաֆա», «Թարախաթ-ե արբարշահի» և այլ հայտնի ու անհայտ պատմական երկեր:

Պատմագրության այս էտապին բնորոշ են ոչ միայն ընդհանուր պատմություններ և կամ առանձին թագավորական գինաստիանների պատմությունը նվիրված գործեր, այլ նաև տեղական ֆեոդալների կամ առանձին ֆեոդալական ընտանիքների ազգաբանությունը ու նրանց իշխանության պատմությունը նվիրված ուշագրավ և որոշ իմաստով ավելի արժեքավոր աշխատություններ, որոնցից մի քանիսին ստորև առիթ կունենանք անդրադառնալու:

Այսպիսին է խիստ համառոտակի ուրվագծված շուրջ 1000-ամյա պատմություն ունեցող պարսկալեզու պատմագրության անցած ուղին:

* * *

Այժմ տեսնենք թե այս ճոխ և հարուստ պատմագրությունից ի՞նչ արժեքավոր ձեռագրեր կան Պետական Մատենադարանում:

Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի թիվը 350-ից չի անցնում: Ինք-

նին հասկանալի է, որ այս փոքրիկ հավաքածուի մեջ առկա պատմագրական բովանդակություն ունեցող ձեռագրերը ևս մեծ թիվ չեն կարող կազմել:

Իլխանական շրջանի պատմագրությունից Մատենադարանում կա միայն Շահար-էդ-դին Արդուլլահ Շիրազի «Թարիխ-ե վասսաֆ—تاریخ و صاف»-ի (Գրք-վատոդ պատմություն) Ա հատորի մեկ ձեռագիր, որն ընդօրինակված է հիշ-րեթի 1268 թ. (1852 թ.) Թավրիզում: Բնագիրը գրված է միասյուն, խոշոր նասի գրությամբ, յուրաքանչյուր էջում 15 տող: Նախապես ազատ թողած լայն լուսանցքներում և տողատակի ազատ մասերում մանր շիքասթե գրությամբ տրքված են մանրամասն ծանոթագրություններ և խրթին բառերի ու տերմինների բացատրություններ:

«Թարիխ-ե վասսաֆ»-ը, որ ընդգրկում է Հուլադյանների պատմությունը սկսած Բաղդադի գրավումից (1258 թ.) մինչև Աբու-Սաիդ Իլխանի թագավորության ժամանակները (1328 թ.), խրթնարանության տեսակետից իր ժամանակի դասական հուշարձաններից է և դարեր շարունակ դարձնում օգտագործվել է, որպես շարագրության, ոճարանության և դասական ճարտասանության ձեռնարկ: № 15-ի տակ գրանցված Մատենադարանի սույն ձեռագիրը ևս, որ ինչպես պարզվում է վերջին էջի հիշատակարանից, ընդօրինակված է Թավրիզի Մադրասեի ուսուցիչ Ալի իբն-Ջեյն-ու-Աբդինի ձեռքով, ամենայն հավանականությամբ նույն դարոցում օգտագործվել է որպես դասագիրք: Լուսանցքների ծանոթագրություններն ու բացատրությունները մեծ մասամբ ուսուցողական բնույթի են և օգնում են բնագրի ճշգրիտ ընթերցմանն ու ըմբռնմանը: «Թարիխ-ե վասսաֆ»-ի լրիվ բնագիրը վիճատիպ հրատարակությամբ լույս է տեսել 1853 թ. Բոմբեյում:

Իլխանության շրջանին է վերաբերում նաև № 561 ձեռագիրը: Դա Շահ-նամեի շափով գրված մի ընդարձակ շափածո ստեղծագործության միայն առաջին հատորն է և կրում է «Հումայուննամե—همایون نامه» վերնագիրը: Գրքի ներածական մասից իմանում ենք, որ հեղինակը այն գրել է Աբադա խանի օրոք, նրա մեծ վեզիր, սահիրդիվան, Բաղդադի, Իրաքի ու մերձակա նահանգների կառավարիչ Ալա-էդ-դին Աթամելիք Ջուվեյնիի պատվերով և ձոնել է նրան: Անանուն հեղինակը հավանաբար գրել է մի քանի հատորներից բաղկացած շափածո պատմություն, որ սկսում է Մուհամմեդ մարգարեի ծնունդով և հասնում է մինչև իր ժամանակները: Վերջին շրջանի համար որպես հիմնական սկզբնաղբյուր նա հիշատակում է նույն Աթամելիք Ջուվեյնիի «Թարիխ-ե շահանգոշա»-ն: Սույն հատորը պարունակում է միայն Մուհամմեդի հանդես գալու և նրա կենդանության օրոք մղված նվաճողական պատերազմների (դավաթ) պատմությունը:

Մատենադարանի սույն ձեռագիրը շափազանց հին է: Թեև սկզբի էջերը պահպանված են, սակայն դրանք խիստ քայքայված են եղել և նորոգվել են միայն վերջերս: Բնագիրը գրված է շորս սյունակում, ոչ շատ հաջող, սակայն բավական պարզ նասի գրությամբ: Ձեռագրի վերջին էջերը չեն պահպանվել, ուստի և գրչության վայրն ու ճշգրիտ ժամանակը մնում է անհայտ: Հնագրական որոշ տվյալներ, ինչպես օրինակ առաջին երկու էջերի դարդանկարները և մանավանդ «բուֆի» գրության օգտագործումը որպես լուսանցազարդեր, ինչպես նաև մի քանի հնչյունային և տառադարձային օրինաչափություններ, թույլ են տալիս ասելու, որ ձեռագիրը գրված է ԺԴ դարից ոչ ուշ:

Հայտնի է, որ Համդուլլահ Մուսթովֆի Ղազվինին Ռաշիդ-էդ-դինի սահիր

դիվանության օրոք, նույնպես Շահնամեի շափուվ գրել է «Ջաֆարնամե — ظفر نامه» խորագիրը կրող 150.000 տողանոց մի ընդարձակ պատմություն, սկսած իսլամի հանդես գալուց մինչև Իլխանության ժամանակները: Ղազվինին իր այդ նոր աշխատությունը, որ փաստորեն նրա «Թարիխ-ե Գոզիդե»-ի շափածո վարիանտը կարելի է համարել, ավարտել է հիշրեթի 735 (1334—1335) թ. և վերջին շրջանի պատմության համար հիմք է ունեցել Ռաշիդ-էդ-դինի և Վասսաֆի գործերը:

«Հումայուննամե»-ի այս հետաքրքիր ձեռագիրը գալիս է վկայելու, որ Ռաշիդ-էդ-դինը այս դեպքում հետևել է Ջուլիջնիի օրինակին և ցանկացել է իր ժամանակը ևս հավերժացնել Շահնամեի նման մի բազմահատոր շափածո հուշարձանով, այդ գործը հանձնարարելով գրչի մեծ վարպետ և ժամանակի նշանավոր մատենագիր Համթուլլահ Մուսթուֆի Ղազվինին:

Այս ձեռագիրը արժանի է լուրջ և բազմակողմանի ուսումնասիրության, որը հնարավորություն կտա թերևս հետազոտում գտնելու աշխատության մյուս հատորները, որոնք անշուշտ պատմության համար ավելի մեծ արժեք են ներկայացնում:

Մատենագրարանի պատմագրական ձեռագրերի մի զգալի մասը վերաբերում է թեմուրյան շրջանին:

№ 286-ի տակ գրանցված է Նիզամ-էդ-դին Շամիի «Ջաֆարնամե — ظفر نامه»-ի (Հազթուլլանի գիրք) մի բավական ընտիր ձեռագիր, որը հիշրեթի 1097 (1686) թ. ընդօրինակություն է, բազկացած է 528 թերթից (33×15 սմ) և գրված է պարզ նասախավիդ գրությամբ:

Նիզամ-էդ-դին Շամին «Ջաֆարնամե»-ն սկսել է գրել հիշրեթի 804 (1401—1402) թվականին: Հեղինակի վկայությամբ, Թեմուրը մեծ ուշադրություն է նվիրել այս գրքի խմբագրմանը և փաստորեն անձամբ է խմբագրել այն: Նա հրաման է արձակել, որպեսզի կայսրության բոլոր կողմերից հավաքեն և Սամարղանդի իր արքունիքը բերեն այդ կողմերում իր կատարած արշավանքների ժամանակ գրված բոլոր ժամանակագրություններն ու հիշատակարանները, ապա հավաքել է տարրեր լեզուներ տիրապետող անձանց, որպեսզի մասնակցեն գրքի խմբագրման աշխատանքներին:

Թե ինչպիսին կարող էր լինել կանկ Թեմուրի նման արյունակալ բռնակալի անմիջական հսկողության ներքո, նրա կատարած արշավանքների պատմության այդ «կուլեկախիվ» խմբագրությունը, այդ մասին կարելի է եզրակացնել գրքի ներածության հետևյալ հատվածից.

«Այն ժամանակ աստոծ սովերը, — գրում է Նիզամ-էդ-դին Շամին, — իր արքունիքը հրավիրեց ճարտասան թուրքագետներ և պարսկագետ լեզվագետներ, որոնք այդ մատյանները կարդում էին և յուրաքանչյուր առանձին դեպքի վերաբերյալ երկրի տարրեր մասերից հրավիրվում էին տվյալ դեպքին մասնակից և ականատես անձինք, որոնք պատմում էին այն ինչ իրենց աչքով տեսել էին, և այդ բոլոր տարեգրությունների տվյալները ու լավատեղյակ անձանց վկայությունները ի մի բերելուց և միմյանց լրացնելուց հետո, այն ինչ որ նորին սրբությանը ավելի ճշմարտացի էր թվում, և ինքն իր մարգարտաշաղ լեզվով թելադրում էր, գրագիրները անմիջապես գրի էին առնում» (ձեռ. № 286, էջ 71բ—72ա):

Այսօրինակ «խմբագրությունից» չի կարողացել խուսափել պալատական պատմագիրներից և ոչ մեկը. նրանք բոլորն էլ առավել կամ նվազ շափուվ են-

թարկվել են բունակալի թելադրանքներին: Այս բուլրով հանդերձ «Ձաֆարնամե»-ն համարվում է Լանկ Թեմուրի արքայապետության շրջանի լավագույն սկզբնաղբյուրներից մեկը, հետևաբար և Մատենադարանի սույն ձեռագիրը անտարակույս մեծ արժեք է ներկայացնում և կարող է օգտագործվել թեմուրյան շրջանի պատմագրության այս կարևոր հուշարձանի բնական բնագիրը հրատարակության պատրաստելու ժամանակ:

Մեզնա Ղաթեթի «Թեյմուրնամե — تیمورنامه» շափածո պատմության երկու ձեռագրեր գրանցված են արաբատառ ֆոնդի № № 242 և 369-ի տակ: Լանկ Թեմուրի արշավանքների շափածո նկարագրությունը պարունակող այս ձեռագրերը, որոնք գրված են երկսյուն նասթալիզ գրությամբ, երկուսն էլ վերջից թերի են:

Գատելով հնագրական տվյալներով, երկու ձեռագրերն էլ ժէ դարի ընդօրինակություններ պետք է լինեն:

Նշված ձեռագրերի ուշագիր համեմատությունը Նիզամ-էդ-դին Շամիի «Ձաֆարնամե»-ի հետ թույլ է տալիս ենթադրելու, որ «Թեյմուրնամե»-ի հեղինակը մեծ չափով օգտվել է «Ձաֆարնամե»-ից և փաստորեն Լանկ Թեմուրի արշավանքների և կատարած նվաճումների արձակ նկարագրությունները վերածել է շափածոյի: Գեպերի ժամանակագրական կարգը, ինչպես նաև առանձին հատվածների և գլուխների վերնագրերը տառացիորեն համընկնում են: Այդ է պատճառը, որ այս հուշարձանը հայտնի է նաև «Ձաֆարնամե-յե հաթեթի — ظفرنامه هاتفی» անունով:

«Թողուքաթ-ե թեյմուրի — تزو کات تیموری» խորագիրը կրող և Լանկ Թեմուրի կենսագրությանն ու նրա կատարած բարեկարգություններին վերաբերող, և ըստ որոշ տվյալների իր իսկ Թեմուրի գրչին պատկանող արժեքավոր գործից Մատենադարանում կա մի բավական ընտիր ձեռագիր (№ 579), որ ընդօրինակված է 1847 թ. Թեհրանի մոտ գտնվող Գուհակ ամառանոցում: Ընդօրինակությունը կատարված է Բրիտանական գեսպանի տեղակալ Մանի պատվերով, նրա դասատու Միրզա Ֆուսուֆի ձեռքով:

«Թողուքաթ-ե թեյմուրի»-ի այս վարիանտը պարունակում է միայն բարեկարգություններին վերաբերող հատվածը և բաղկացած է երկու մասից (مقالت), որոնցից առաջինը Թեմուրի խորհուրդներն ու դատողություններն են (تدبیرات و کنگاشها), իսկ երկրորդը՝ նրա ձեռք առած միջոցառումներն ու սահմանած կարգերը երկրի կառավարման և բանակի վերաբերյալ (تزوک و توره): Մատենադարանի ձեռագրում ևս բացակայում է այն նախաբանը, որ գոյություն ունի Բրիտանական թանգարանի որոշ ձեռագրերում և գրված է հավանաբար ընդօրինակողներից մեկի՝ Աբութալիբ ալ-Հուսեյնի ալ-Արիդիի ձեռքով: Վերջինիս սխալմամբ համարում են սույն սկզբնաղբյուրի հեղինակը և ելնելով այդ փաստից կասկած են հայտնում այս աշխատության հարազատության վերաբերյալ: Մատենադարանի հիշյալ ձեռագիրը մի անգամ ևս գալիս է հաստատելու այդ ենթադրությունների անհիմն լինելը:

Մուհամմադ իբն-Խավանդզահ՝ Միրխոնդի «Ռովգաթ-ու-սաֆա — روضة الصفا» (Ուրախ պարտեզ) ընդհանուր պատմությունը համարվում է թեմուրյան շրջանի խոշորագույն պատմական երկը, որ բաղկացած է 7 հատորից: Առաջին երեք հատորները ընդգրկում են իսլամական աշխարհի պատմությունը մինչև Աբրասյան խալիֆների շրջանը ներառյալ: Զորքորդ հատորը նվիրված է Աբրասյանների ժամանակակից մյուս մուսուլման թագավորների պատմությանը: Հինգե-

բորզը Չինգիզի և նրա սերունդների պատմությունն է, վեցերորդը Լանկ Քեմուրի և նրա հաջորդների՝ իսկ յոթերորդը, որ նա չհասցրեց գրել և նրա մահվանից հետո գրեց և ավարտեց նրա թուղ (գստեր որդին) Ղիաս-էդ-գին իրն-Հումամ-էդ-գին Խանդամիրը, Հերաթի թեմուրյան սուլթան Հուսեյն Բալլրայի թագավորության շրջանի պատմությունն է մինչև նրա մահը (1506 թ.)¹:

Մատենադարանում կան «Ռովղաթ-ու-սաֆա»-ի չորս հատորների հինգ ձեռագրեր, որոնցից № 9-ի տակ գրանցված Ա հատորը ԺԶ դարի ընդօրինակություն է, որի սկզբից 3, վերջից 12 և միջին մի քանի վնասված կամ թափված էջեր ԺԷ դարում փոխարինվել են նոր արտագրված էջերով:

Բ հատորից, որ ընդգրկում է Մուհամմեդի և առաջին խալիֆների նվաճողական պատերազմների պատմությունը, ունենք երկու ձեռագիր (№ № 1, և 555), որոնցից առաջինը չափազանց ընտիր ձեռագիր է, գրված զեզեցիկ նասթաալիզ գրությամբ, հիշրեթի 1004 (1556) թվականին Բասրայում, իսկ երկրորդը, որ նույնպես բավական լավ պահպանված ձեռագիր է, ընդօրինակված է հիշրեթի 1090 (1679) թվականին Կենտրոնական Իրանի Քյամարեի շրջանում:

№ 24-ի տակ գրանցված «Ռովղաթ-ու-սաֆա»-ի Դ հատորը ԺԷ դարի ընդօրինակություն է, կատարված նուրբ նասթաալիզ գրությամբ, որը սակայն խիստ քայքայված է եղել և նորոգվել ու թափված թերթերը լրացվել է ԺԹ դարի սկզբներին:

Ուշագրության արժանի ձեռագիր է Ե հատորը (№ 337), որ ընդօրինակված է հիշրեթի 1041 (1632) թվականին Սպահանում, պարզ նասթաալիզ գրությամբ: Ձեռագրի գրիչն է Ալի խանի որդի Ալի բեկ Արդաբիլցին, որ հավանաբար սեֆյան Շահ Սաֆիի արքունի դիվանատան քարտուղարներից է եղել: Ձեռագրի վերջին էջի վրա նա թողել է հետևյալ համառոտ հիշատակարանը.

تمت الكتاب شريف بعون الله الملك اللطيف في تاريخ يازدهم شهر شعبان المعظم سنة ١٠٤١ احد و اربعين و الف على يد اضعف عبادالله عليخان بن علي بيك ساكن اردبيل در حالتى كه همراه اردوى معلى ازدار السلام بغداد متوجه دار السلطنه اصفهان شد بعد از چند گاه بجهت رفع آزر د گى بنوشتن اين تاريخ مشغول گشت و در اندك زمانى و بلطف حضرت سبعتى سمت تحرير يافت.

«Աստժո ողորմածությամբ ավարտվեց սրբազան հատորիս ընդօրինակությունը 1041 թվականի շաբաթն ամսի 11-ին (1632 թ. մարտ 4), աստժո նվաստագույն ծառա Արդաբիլցի Ալի խանի որդի Ալի բեկի ձեռքով: Այն ժամանակ, երբ արքունի բանակի հետ միասին ապահով քաղաք Բաղդադից վերադարձա թագավորանիստ Սպահան քաղաքը, միառժամանակ հետո, հոգնածությունս փարատելու նպատակով ձեռնարկեցի սույն պատմության ընդօրինակմանը և կարճ ժամանակում, տիրոջ բարեխնամության շնորհիվ ավարտեցի»:

«Ռովղաթ-ու-սաֆա»-ի քննական բնագիրը դեռևս լույս չի տեսել: Հայտնի են միայն 1854 և 1858 թթ. Քեհրանի վիմատիպ հրատարակությունները, ինչպես նաև սելջուկյան շրջանին և աթաբեկներին վերաբերող առանձին հատվածների ԺԹ դարի առաջին կեսի եվրոպական մի քանի հրատարակություններ: Այս տեսակետից էլ նրա առանձին հատորների լավագույն ձեռագրերը, այդ

¹ Ղաջարյան շրջանի պատմիչ Ռզակուլի խան Հիդայաթը գրել է «Ռովղաթ-ու-սաֆա»-ի հաջորդ երեք հատորները, հասցնելով մինչև Նասր-էդ-գին շահի թագավորության ժամանակները:

թվում նաև Մատենադարանի հիշյալ 5 ձեռագրերը, աղբյուրագիտական որոշակի արժեք են ներկայացնում և արժանի են մասնագիտական ուսումնասիրության:

Ախաս-էդ-դին իբն-Հումամ էդ-դին Խանդամիրը հայտնի է ոչ միայն որպես «Ռոզգաթ-ու-սաֆա»-ի է հատորի հեղինակ, այլ նրա գրչին են պատկանում նաև մի քանի այլ ծավալուն պատմագրական երկեր: Նա մեկն էր այն երջանիկ մատենագիրներից, որոնք վայելում էին սուլթան Հուսեյն Բայկրայի իմաստուն վեզիր, մեծանուն բանաստեղծ Ալիշեր Նավայի անմիջական հովանավորությունը: Վերջինիս հանձնարարությամբ էր, որ նա գրեց «Խուլասաթ-ու-ախբար — خلاصه الاخبار» (Տեղեկությունների համառոտագրություն) կոմպիլատիվ ժամանակագրական աշխատությունը: 1507 թվականին, երբ ուզբեկ Շեյրանիները վերջ տվին Թեմուրյանների տիրապետությանը, Խանդամիրը մնաց Հերաթում մինչև 1526 թվականը, որից հետո անցավ Հնդկաստան և հյուրընկալվեց Բարուրի արքունիքում, ուր և վախճանվեց հիշրեթի 941 (1535) թվականին: 1524 թ. նա Հերաթում ավարտեց իր երեք հատորանոց ընդհանուր պատմությունը, որ ի պատիվ իր մեկենաս, վեզիր խոջա Հարիրուլլահ Սավոշի, վերնագրեց «Հարիր-ու-սիար — حبيب السیر» (Վարքերի սիրելին):

Ի տարրերություն իր նախորդների Խանդամիրը առաջինն է, որ իր աշխատությունը սկսում է նախախաղամական շրջանի թագավորների պատմությամբ, ընդգրկելով ոչ միայն Իրանի, այլ նաև Հոմի, Հունաստանի և Արարիայի պատմությունը, որին և նվիրել է իր աշխատության Ա հատորը: Բ հատորում շարադրված է խալիֆայի պատմությունը, իսկ Գ հատորը նվիրված է խալիֆայի անկումից հետո ընկած ժամանակաշրջանի պատմությանը մինչև ժՁ դարի սկիզբը:

Մատենադարանի արաբատառ ֆոնդի № 558-ի տակ գրանցված է «Հարիր-ու-սիար»-ի Ա հատորի մի բավական ընտիր օրինակ: Ձեռագիրն ընդօրինակված է հիշրեթի 1026 (1617) թ., պարզ նասիաալիդ գրությամբ, Մազանդարանի Նուրի կոչվող վայրում, հավանաբար նույն վայրի բնակիչ Խոջա Մուհամմադ-Քադիի պատվերով: Ձեռագրի պահպանակի վրա անհայտ անձնավորության կողմից կատարված է հետևյալ մակագրությունը.

ازمرحوم خواجه محمد تقی نوری من توابع مازندرانی بهشت نشان بمبلغ

یکتومان تبریزی ابتیاع شد. تحریرا بتاریخ شهر شعبان سنه ۱۰۷۰

«Դրախտագեղ Մազանդարանի վայրերից՝ Նուրիեցի հանգուցյալ Խոջա Մուհամմադ-Քադիից գնեցի Քավրիզի մեկ թումանով. գրվեց 1070 (1660) թվականի շաարան ամսին»¹:

Բաղեշի քրդական Ռոժակ մեծ ցեղի առաջնորդների ընտանիքը հայտնի է իր երկու խոշոր պատմիչներով, որոնցից առաջինը մեծ մատենագիր և պետական գործիչ Մուլլա Իզրիան է, որ հանդես եկավ ժՁ դարի սկզբներին, իսկ երկրորդը՝ Շարաֆ խան Բիբլիսին է, որ հայտնի դարձավ նույն դարի վերջերին իր հանրահայտ «Շարաֆնամե» աշխատությամբ:

Մուլլա Իզրիա Բիբլիսին հեղինակն է Օսմանյան պետության առաջին 8 սուլթանների պատմությանը նվիրված «Հաշթ բեհեշթ — هشت بهشت» (Ութը

¹ Չաքարիա Ազուլեցու ավյայներով ժէ դարի վաթսուներկու թվականներին մեկ թումանով կարելի էր գնել մոտավորապես մեկ տոննա ցորեն («Չաքարիա Ազուլեցու օրագրությունը», Երևան, 1938, էջ 114, 133, 155):

դրախտաներ) կամ «Քարիխ-ե ալ-ե օսման — تاریخ آل عثمان» (Պատմություն Օսմանյան պետության) խորագիրը կրող աշխատության, որ նա գրել է ուլիսորդ սուլթան՝ Բայազիդ Բ-ի (1481—1512) պատվերով:

«Հաշիբ բեհեշի»-ի սկզբի հինգ գլուխներն ընդգրկող Մատենադարանի № 509 ձեռագիրը նույնպես շափազանց լավ պահպանված և արտակարգ գեղեցիկ, մանր նասխ գրությամբ գրված լավագույն ձեռագրերից է: Ձեռագրի վերջում ոչ մի հիշատակություն չկա գրչության ժամանակի և վայրի մասին, որը և հավանաբար հիմք է ծառայել արարատառ ֆոնդի ձեռագրաց ցուցակները կազմողներին, սխալ կերպով պնդելու, թե այն հեղինակի ինքնագիրն է: Մի կողմ թողած այն փաստը, որ հնագրական ավյալները միանգամայն բացասում են այդ, բավական է կարգալ երրորդ գլխի վերջին տողերը լիովին համոզվելու համար, որ այդ պնդումը զուրկ է սրեկ հիմքից: Երրորդ գլուխն ավարտվում է հետևյալ տողերով.

آخر ا لجز و الثالث من تاريخ آل عثمان الذي الفه المولى الفاضل المرحوم
مولانا ادريس المنشى البديلى و يتلوه دفتر الرابع فى بيان اخبار السلطان
يلدرم بايزيد

«Ավարտվեց Օսմանյան պատմության երրորդ մասը, որի հեղինակն է մեծ իմաստուն հանգուցյալ մուլլա Իդրիս Բիբլիսցի մատենագիրը և այժմ անցնում ենք չորրորդ մասին, որտեղ պատմվում է սուլթան Իլդըրըմ Բայազիդի կյանքը» (էջ 188բ):

Մեր կարծիքով ձեռագիրը գրված է ԺՔ դարի սկզբներին Արևմտյան Հայաստանի քաղաքներից մեկում: Երկրորդ էջի լուսանցքի հիշերթի 1239 (1823—1824) թվականի նվիրարերման ակտը, ըստ որի ոմն Արզուլուահման փաշայի որդի Հասան փաշա ձեռագիրը նվիրում է (վակֆ է անում) քաղաքի մզկիթին, գրված է նույն թանաքով, նույնպիսի նասխ գրությամբ: Պետք է կարծել, որ ձեռագիրը ևս ընդօրինակվել է նույն անձնավորության ձեռքով, նույն թվականներին:

Սեֆյան ամբողջ շրջանի հարուստ պատմագրության խոշորագույն ներկայացուցիչն է Շահ Աբրաս Ա-ի պալատական պատմիչ, արքունի դիվանատան գլխավոր քարտուղար Իսքանդար բեկ Քորբեմանը, որ հայտնի է Իսքանդար Մունշի (քարտուղար) անունով: Նա գրել է երկու խոշոր հատորներից բաղկացած Շահ Աբրաս Ա-ի պատմությունը, որ վերնագրված է «Քարիխ-ե ալամարա-յե արբասի — تاریخ عالم آرای عباسی» (Աբրասյան աշխարհարար պատմություն): Աշխատության առաջին հատորը նվիրված է Սեֆյան դինաստիայի պատմությանը, մինչև Շահ Աբրասի գահակալությունը: Իսկ երկրորդ հատորը բաժանված է երկու մասի, որոնցից առաջինում պատմվում են Շահ Աբրասի թագավորության առաջին երեսուն տարիների անցքերը (1587—1616), իսկ երկրորդում, շարունակելով դեպքերի նկարագրությունը, շարագրությունը հասցրվում է մինչև Շահ Աբրասի մահը (19 հունվարի 1629 թ.):

«Քարիխ-ե ալամարա-յե արբասի»-ն համարվում է սեֆյան շրջանի պատմության հիմնական սկզբնաղբյուրը, որը մյուս պատմագրական աղբյուրներից տարբերվում է սոցիալ-տնտեսական կյանքի և Սեֆեհների պետական-վարչական սիստեմի մասին պարունակող նյութերի անհամեմատ ավելի անմիջականությամբ և առատությամբ: Ցավոք, պետք է նշել, որ այս մեծարժեք սկզբնաղբյուրը ևս դեռ մինչև օրս չունի քննական հրատարակություն: Հայտնի է միայն

հիշրեթի 1314 (1896—1897) թ. Միրզա Մահմուդ Խանսարիի վիճատիպ հրատարակությունը: Այդ է պատճառը, որ ուսումնասիրողների մեծ մասը հիշյալ հրատարակության հետ զուգահեռ օգտվում են նաև «Թարիխ-ե ալամարա»-ի մեծ թվով ձեռագրերից, որոնք ցրված են աշխարհի տարբեր ձեռագրատներում:

Ուրախությունը պետք է նշել, որ «Թարիխ-ե ալամարա»-ի Մատենադարանի ձեռագրերը ևս ուշադրության արժանի և բավական հին ընդօրինակություններ են: № 11-ի տակ գրանցված Ա հատորի 345 թերթերից, սկզբի 291 թերթը ժէ դարի ընդօրինակություն է, գրված պարզ նասթաալիզ գրությամբ, իսկ վերջին 54 թերթերը լրացվել են հիշրեթի 1284 (1867—1868) թվականին համատարար ավելի նուրբ նասթաալիզով:

Նույնպիսի ընտիր ձեռագիր է նաև № 2-ի տակ գրանցված Բ հատորի Ա մասը, որ դեղեցիկ նասթաալիզ գրությամբ ընդօրինակված է գրիչ Հաջի Մուլա Հուսեյն Ալիաբադիի ձեռքով հիշրեթի 1094 (1683) թվականին: Նշված երկու ձեռագրերի լուսանցքներում կան բավական լրացումներ և ուղղումներ, որոնք գալիս են վկայելու, որ դրանք համեմատված են այլ ձեռագրերի հետ:

Ա հատորի մյուս երկու ձեռագրերից № 575-ը հիշրեթի 1212 (1797) թվականի ընդօրինակություն է: Այս ձեռագիրը պարունակում է նաև Բ հատորի սկզբի որոշ մասը (էջ 306բ—339բ):

Ուշադրության արժանի է № 34 ձեռագիրը, որի սկզբի և վերջի թերթերը շեն պահպանվել: Սա փաստորեն «Թարիխ-ե ալամարա»-ի Ա հատորի համառոտագրության փորձ է, կատարված ԺԸ դարում, ոչ այնքան գրագետ անձնավորության ձեռքով: Այս ձեռագրի առաջին էջի լուսանցքում կատարված է հետևյալ արարերեն մակագրությունը.

تاریخ عالم آرا ۱۱ شهر شوال المکرم سنه ۱۲۵۸ دخل من نوری فی دار الخلافه طهران
«Սուլեյմ Թարիխ-ե ալամարան 1258 թ. շավվալ ամսի 11-ին (1842 նոյ. 15) նուրիից բերվեց արքայանիստ Թեհրան քաղաքը».

Գոյություն ունի Դաղստանի պատմության մի բավական հանրածանոթ սկզբնաղբյուր, որ հայտնի է «Դարբանդնամե — در بندنامه» անունով: Այս գրքի խմբագրման ճշգրիտ ժամանակը բանասիրության կողմից դեռևս չի պարզված: Դա ծավալով ոչ շատ մեծ գիրք է, որտեղ մեծ մասամբ վաղ շրջանի արաբական աղբյուրներից քաղելով փորձ է արված շարադրելու Դերբենդի ամրությունների կառուցման, Դաղստանի հարավային շրջաններում իրանական գաղթականության, Սասանյան Կուրադի և նրա որդու Անուշիրվանի անվան հետ կապված լեգենդախառն պատմությունը, որին հաջորդում են լեռնական ժողովուրդների արարների կողմից նվաճման և բունի մահմեդականացման պատմության առանձին գրվածքներ, ինչպես նաև արարների տիրապետության շրջանի Դերբենդի կամ Բար-ուլ-արվարի մի շարք արար կուսակալների տիրապետության պատմությունը վերաբերող հետաքրքիր մանրամասնություններ:

Հույս են տեսել «Դարբանդնամե»-ի թուրքերեն բնագրեր, ինչպես նաև անգլերեն և այլ լեզուներով թարգմանություններ: Պարսկերեն բնագիրը սակայն դեռևս լայնորեն հայտնի չէ արևելագիտությանը և կարոտ է ուսումնասիրության: Այս տեսակետից էլ Մատենադարանի պարսկական վարիանտները որոշակի արժեք են ներկայացնում: Դրանցից հատկապես մեկը (№ 252) ամենայն հավանականությամբ այն բնագիրն է, որից կատարվել են թուրքերեն և աղբյուրաներեն թարգմանությունները:

Մատենադարանում կան «Դարբանդնամե»-ի նաև այլ լեզուներով ևս 5 ձե-

ազրեր, որոնցից երկուսը ազրբեջաններն են, երկուսը արաբներն, իսկ մեկը մի էջը լակերեն՝ մյուսը ազրբեջաններն:

Հիշյալ բոլոր ձեռագրերը, բացի մեկից (№ 490-ը) պատկանել են իշխան Դավիթ Լազարյանցի որդի Հակոբ Լազարյանցին, որ 1848—1856 թթ., որպես կնյազ Վարշավսկու հետևակ գնդի շտաբս-կապիտան մասնակցել է լեռնականների դեմ մղվող կռիվներին: Նրա ձեռքով կատարված բազմաթիվ հայերեն ու ռուսերեն նշումներից զփվար չէ ենթադրել, որ նա հատկապես զբաղվել է այդ սկզբնազրյուրի ուսումնասիրությունում և գնդի միրզայի և ուրիշների ձեռքով ընդօրինակել է Կազի-կումուխում, Դեմիր-խան-շուրայում և Դաղստանի այլ վայրերում տարբեր անձնավորությունների ձեռքում գտնվող հին ձեռագրերից: Այսպես, № 252 ձեռագրի սկզբում, որտեղ ամփոփված են «Դարբանդնամե»-ի պարսկերեն, արաբերեն և ազրբեջաներեն երեք տարբեր վարիանտների ընդօրինակություններ, կարդում ենք. «Здесь записываются три древнейшие Дербендиаты и три вернейшие выписки», ստորագրված է՝ «Яков Лазарев». Այնուհետև առանձին վարիանտների լուսանցքներում նրա կողմից կատարված են նշումներ այն մասին, թե տվյալ վարիանտը ինչ առավելություններ ունի մյուսների նկատմամբ, և կամ դրանցից որի մեջ ավելի հետաքրքիր տվյալներ կան Դաղստանում գտնվող ամբողջությունների կամ բնակչության կողմից Շամ-խալին վճարվող հարկերի քանակի մասին:

Հատուկ ուշադրության արժանի է № 239 ձեռագիրը, որ բաղկացած է 12 թերթից և գրված է մանր շիքասթե գրությամբ: Դա փաստորեն տարբեր ձեռագրերի հիման վրա կազմված «Դարբանդնամե»-ի պարսկերեն նոր խմբագրություն է, կատարված 1856 թ. Հակոբ Լազարյանցի պատվերով ժԹ դարի գրական-հասարակական գործիչ Միրզա Յուսուֆ Ներսեսովի կողմից: Այդ պարզ երևում է ոչ միայն ձեռագրի վերջում գրված պարսկերեն համառոտ հիշատակարանից¹, այլ նաև առաջին էջի վրայի 2. Լազարյանցի հետևյալ մակագրությունից. «Извлечение из разных летописей Дагестана, собранных мною в течение восьми лет. Як. Лазарев. 1856 года марта 22 дня, укр. Тимирхан-шура».

Այս ձեռագիրը պարունակում է նաև որոշ մանրամասնություններ Շամ-խալների տիրապետության շրջանի և բնակչության կողմից նրանց հատուցվող հարկերի, տուրքերի և տուգանքների վերաբերյալ: Այսպես, ձեռագրի վերջին էջի վրայի մի հավելյալ հարկային ցուցակից պարզվում է, որ ուսաց տիրապետությանը նախորդող շրջանում յուրաքանչյուր տուն պարտավոր է եղել վճարել տարեկան երեք արծաթ գրամ երգահարկ, երկու քիլո հացահատիկ, հարյուր ուշխարից մեկ ուշխար, հարյուր տուն մեկ կով, այգի ունեցողը մեկ դամբյուղ խաղող, վաճառականները մետաքս և մեկ թանկարժեք կերպաս, ամեն դյուզից հինգ աղվես մեկը սև, շորսը կարմիր, գյուղի մեկիքը փոխվելիս պարտավոր էին տալ հինգ ուշխար, անմեղ մարդ սպանողը տուգանվում էր հարյուր ուշխարով², ուրիշին մարմնական վերք հասցնողը պետք է տար մեկ կով, ուրիշի ապրանքը գողացողը նույնպես մեկ կով և այլն:

¹ تمام شد در بند نامها از قرار نوشتجات متعدده فی تاریخ مارت سنه ۱۸۵۶ حرره میرزا یوسف.

² Պետք է նկատի ունենալ, որ արյան փոխ վրեժը ենթակա չէր տուգանման:

Նազիր շահի պալատական քարտուղար Միրզա-Մեհդի խան Աստարաբադի «Քարիխ-ե նազերի»-ն (تاریخ ناصری) համարվում է Նազիր շահի ժամանակաշրջանի գլխավոր սկզբնաղբյուրներից մեկը, որը վաղուց ծանոթ է արևելագիտությանը, թարգմանվել է մի քանի և՛րոպական ու արևելյան լեզուների, ունի ավելի քան 11 վիճառիս հրատարակություններ (Քեհրան, Քավրիզ, Կալիաթա, Քոմբեյ, Լահոր և այլն), սակայն քննական հրատարակության գեռես չի արժանացել:

Միրզա-Մեհդի խանի այս երկը հատկապես աչքի է ընկնում իր արտակարգ ներբողագրությամբ և իր ժամանակին հատուկ վերամբարձ ոճով: Այսուհանդերձ «Քարիխ-ե նազերի»-ն մեծ ժողովրդականություն վայելող գիրք է և կարելի է ասել, որ քիչ պատմագրական գործեր կան, որ նրա շափ լայն ժողովրդական ընթերցանության էն արժանացել: Դրանով պետք է բացատրել այդքան շատ հրատարակությունների, ինչպես նաև տարբեր ձեռագրատներում և մասնավոր անձանց մոտ մեծ թվով ձեռագրերի առկայության փաստը:

«Քարիխ-ե նազերի»-ից Մատենադարանում կա 5 ձեռագիր, որոնք ԺԸ դարի և ԺԹ-ի առաջին կեսի ընդօրինակություններ են: Դրանցից առավել ուշադրության արժանի է № 23-ի տակ գրանցված ձեռագիրը, որ 1905 թ. հունիսի 1-ին Արզար Հովհաննիսյանցի ընտանիքի կողմից նվիրվել է էջմիածնի Մատենադարանին: Ձեռագրի ընդօրինակությունը կատարվել է խոշոր նասթաալիդ գրությամբ, բավական խնամքով, ունի Նազիրի մղած խոշոր ճակատամարտերը, այդ թվում նաև 1736 թ. Նզվարդի ճակատամարտը (էջ 167 բ) պատկերող հետաքրքիր մանրանկարներ: Ձեռագրի վերջին էջի բացակայության պատճառով ընդօրինակման ճշգրիտ թվականը հնարավոր չէ պարզել:

Հավանաբար ԺԸ դարի վերջերի ընդօրինակություն է նաչիկ Դադյանի ձեռագրերի խմբին պատկանող № 293 ձեռագիրը, որը բավական թերի է և քայքայված: Ետևի մասից ձեռագիրը ծակված է հրացանի գնդակով:

Մանր շիքասթե-նասթաալիդ գրությամբ գրված № 33 ձեռագիրը ընդօրինակված է 1805 թվականին և նախապես պատկանել է Աստարաբադի ցարական հյուպատոսի քարտուղար թավրիզեցի Հաջի Դուլամ-Ալիի որդի Մուհամմադ-Քադիին:

№ 567 ձեռագիրը, որ գրված է գեղեցիկ շիքասթե գրությամբ, ընդօրինակված է 1826 թ. Աստրախանում, ուշաեցի վաճառական Հաջի Մուհամմադ-Ալիի պատվերով: Ընդօրինակությունը կատարված է արտակարգ խնամքով: Ձեռագիրն այժմ գտնվում է չափազանց բարվոք վիճակում:

№ 590-ի տակ գրանցված է «Քարիխ-ե նազերի»-ի ԺԹ դարի մի անավարտ ընդօրինակություն, որ 1853 թ. թավրիզեցի Մարզար Աղաբեկյանցը նվիրել է Լազարյան ձեմարանին:

Հայտնի է նույն Միրզա-Մեհդի խանի գրչին պատկանող Նազիր շահի պատմության մի այլ միհատորյակ, որ վերնագրված է «Դուռե-յե նազերիյե — دوار ناصری» (Նազիրյան գոհարներ): Աստարաբադիի այս աշխատությունը իր խրթին լեզվով և հույժ ներբողագրական ոճով մրցում է Շհար-էգ-դին Արզուլահ Շիրազի «Քարիխ-ե վասսաֆ»-ի հետ, և նույնպես մինչև վերջին ժամանակներս դպրոցներում օգտագործվում էր որպես դասական ճարտասանության և ոճարանության ձեռնարկ: Դրանով պետք է բացատրել նրա բազմաթիվ վիճառիս հրատարակությունների և մեծաքանակ ձեռագրերի գոյությունը:

Ձեռագրերի մեծ մասը ընդօրինակված են հատուկ ձևով, բնագրի շուրջը լայն լուսանցքներ և տողերի արանքները մեծ տարածություն թողնելով, հիմնականում խոշոր նասխ գրով և մանր շիքասթե գրությամբ գրված տողընդմեջ բացատրություններով:

Այդպիսի ձեռագրեր են Մատենադարանի 1816 թ. № 7 և 1856 թ. № 16 ձեռագրերը, № 268 ձեռագիրը, որ ընդօրինակված է 1842 թ. Երևանում, գրիչ մուլլա Հասան Երևանցու ձեռքով, և վերջապես № 22-ի տակ գրանցված ձեռագիրը, որ ընդօրինակված է 1819 թվականին էջմիածնում, վանքի դիվանատան քարտուղար, Յազգանբախշի որդի Միրզա-Թաթուսի ձեռքով:

Յաթհ-Ալի շահ Ղազարի (1797—1834) թագավորության շրջանում է գրված Մատենադարանի № 547 «Ձինաթ-ուլ-թավարիխ — زینت التواریح» (Պատմությունների զարդը) խորագիրը կրող ընդհանուր պատմության Ա հատորը, որը պարսից միջնագարյան պատմագրության տրագիցիոն ձևով շարադրված կոմպիլացիոն աշխատություն է: Գրքի ներածական մասից տեղեկանում ենք, որ ամբողջ աշխատությունը բաղկացած է երկու հատորից, որոնցից սույն Ա հատորը պարունակում է աշխարհի ստեղծագործությունից մինչև խալիֆաթի շրջանի պատմությունը, մեծ տեղ հատկացնելով նաև գիտության և գրականության գործիչների կենսագրությունը: Իսկ Բ հատորը հետագա շրջանի պատմությունն է մինչև Յաթհ-Ալի շահի ժամանակները:

Գրքի հեղինակի անունը սույն ձեռագրի մեջ չի հիշված, անհայտ է նաև գրչության վայրն ու ժամանակը: Հավանաբար այն պետք է գրված լինի թագաժառանգ Աբբաս-Միրզայի պատվերով՝ Թավրիզում:

Ձեռագիրը գրված է միասյուն գեղեցիկ նասթաալիզով, ունի մանրանկար խորաններ (ունվան): Պահպանակի վրայի հայերեն և ռուսերեն մակագրությունից իմանում ենք, որ այն 1853 թ. նոյ. 15-ին Ալեքսանդրապոլցի Կարապետ Սաֆարյանցի կողմից նվիրվել է Լազարյան ձեռարանին:

Ղազարյան շրջանի նշանավոր պատմիչներից է, ծագումով քուրդ Աբդ-ուլ-Ռազզակ բեկ իրն-Նաջաֆկուլի խանը: Նա Խոյի խան, քրդական Դումբուլի ցեղի առաջնորդ՝ Նաջաֆկուլիի որդին էր, թագաժառանգ Աբբաս-Միրզայի մտերիմը, որ երկար ժամանակ վարում էր Թավրիզի բեղլարբեկության բարձր պաշտոնը: Աբբաս-Միրզայի պատվերով նա գրեց Աղա-Մուհամմադ խանի և Յաթհ-Ալի շահի մինչև 1814 թ. ներառյալ պատմությունը, որ կրում է «Մուասիր-և սուլթանիյե — مائثر سلطانیه» (Աբբասյական հիշատակներ) վերնագիրը: Այդ գիրքը լույս տեսավ հեղինակի կենդանության օրոք, 1825 թ. Թավրիզում, հանդիսանալով պարսկերեն առաջին տպագիր գրքերից մեկը:

Աբդ-ուլ-Ռազզակ բեկը գրել է նաև Դումբուլիների ընտանիքի, այսինքն իր նախնիների պատմությունը նվիրված մի ավելի արժեքավոր աշխատություն, որ հայտնի է «Թարիխ-և դանարիլե — تاریخ دناپله» (Դումբուլիների պատմություն) անունով: Այս աշխատությունը սակայն դեռևս լույս չի տեսել. ձեռագիր ընդօրինակությունները նույնպես խիստ սակավ են:

Ուրախությամբ պետք է նշել, որ Աբդ-ուլ-Ռազզակ բեկի այս աշխատության Սովետական Միության միակ օրինակը գտնում ենք ընդօրինակված Պետական Մատենադարանի ձեռագրատան հայկական ֆոնդի № 7938 ձեռագրի #եջ (էջ էջ 222բ—249բ):

Հիշյալ ձեռագիրը, որ Մատենադարանին է նվիրել պրոֆ. Ա. Զովհաննիս-

յանը պարունակում է ոչ միայն Արդ-ուլ-Ռազզակի այս գործը, այլ նրա սկզբի 220 թերթերը երկու նորահայտ և ունիկալ բնագրեր են, որոնք աղբյուրագիտական բացառիկ արժեք են ներկայացնում: Դրանցից առաջինը (էջ էջ 1ա—173բ) դարձյալ Դումբուլիների մի ավելի ընդարձակ պատմություն է, որ վերնագրված է «Իշարաթ-ուլ-մազահիր—اشارات المذاهب» (Ակնարկներ հավատքների մասին) և որի հեղինակն է խոյի Ահմադ խան Դումբուլիի որդի Ռուսթամ խանը: Աշխատությունը հիմնականում նվիրված է Դումբուլի քրդերի պատմությանը, որոնց ծագումը կասկած է Արբասյան խալիֆների արքունիքում բարձր դիրքի և պաշտոնի արժանացած Բարմաքյանների հետ: Ապա բավական մանրամասն խոսվում է Դումբուլի քրդերի եղիդիական հավատալիքների մասին, անվանելով նրանց «յազգանիներ» և կասկելով դրադաշտականության հետ:

Երկրորդ բնագիրը (էջ էջ 178բ—220բ) նույն հեղինակի «Իշարաթ-ուլ-ադյան—اشارات الاديان» (Ակնարկներ կրոնների մասին) խորագիրը կրող մի այլ գավանարանական աշխատությունն է, որ բացառապես նվիրված է յազգանիների կրոնա-գավանարանական սկզբունքների ուսումնասիրությանը:

Երկու բնագրերի առաջին էջի վերին մասում համարյա նույն բովանդակությունը ունեցող արձանագրություններով գրքի հեղինակ Ռուսթամ-իրն-Ահմադ խանը հիշրեթի 1266 թ. գիկաադա ամսին (1850 թ. սեպտ.-հոկտ.) սույն ձեռագիրը կտակում է (վակիֆ է անում) իր ժառանգներին, շեշտելով, որ շվահառեն և գրավ շղենն, իսկ եթե որևէ մեկը ուզենա ընդօրինակել, ապա այդ պետք է կատարվի իրենց տանը և ձեռագիրը տնից դուրս չպետք է տարվի: Այնուհետև հորդորում է իր ժառանգներին, որ նրանցից առավել կրթվածներն ու գրագետները գրազվեն գրքի խմբագրությամբ, սրբագրեն ու շտկեն այն և շարունակեն պատմությունը մինչև այնքան ժամանակ, քանի դեռ այդ ընտանիքի մարդիկ կշարունակեն ապրել և իշխանություն վայելել:

Անցյալի պատմության ուսումնասիրության համար առավել արժեքավոր սկզբնաղբյուրներ են հանդիսանում նաև պաշտոնական գրադրությունների հրովարտականների և հրամանագրերի գասական օրինակների ժողովածուները: Այդպիսի հայտնի ժողովածուներից է Նադիր շահի պալատական քարտուղար Միրզա-Մեհդի խանի գրչին պատկանող և բազմաթիվ վիճատիպ հրատարակությունների արժանացած «Մունշաթ-ե նադերի—منشآت نادری»-ն (Նադիրյան գրագրություններ), որ մինչև մեր օրերը ծառայում է որպես նման գրագրությունների ուսուցման լավագույն ձեռնարկ: Մատենադարանում կան այս գրքի հինգ տարբեր ընդօրինակություններ, որոնցից առավել ուշագրության արժանի է № 333-ի տակ գրանցված ձեռագիրը, որի բովանդակությունը որոշ չափով տարբերվում է «Մունշաթի» հայտնի վարիանտներից:

Մատենադարանում կան նաև մի քանի այլ նամականիներ և պաշտոնական գրագրությունների ժողովածուներ, որոնցից առանձին հետաքրքրություն է ներկայացնում հիշրեթի 1033 (1624) թ. ընդօրինակված և մեծ հավանականությամբ Հնդկաստանի Մեծ Մոնղոլի արքունի գրագիրներից մեկի գրչին պատկանող նամակների, զեկուցագրերի և այլ պաշտոնական գրությունների ժողովածուն, որտեղ բավական արժեքավոր տվյալներ կան Ջալիուրի, Լահորի և մերձակա մյուս նահանգների նույն ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ:

Հատուկ ուշագրության արժանի է № 233-ի տակ գրանցված Երևանի Հուսեյն-Ալի խան Ղազարի (1764—1783) և նրա որդի Մուհամմադ խանի (1784—

1805) գլխավոր քարտուղարի (մունշիրաշի) գրած շուրջ 200 պաշտոնական նամակների և խանական հրովարտականների ժողովածուն: Այս վավերագրերը հանդիսանում են շափաղանց կարևոր սկզբնաղբյուր ժԸ դարի երկրորդ կեսի Երևանի խանության, ինչպես ներքին կյանքի, այնպես նաև հարևան խանությունների ու փաշայությունների և հատկապես Վրաստանի հետ նրա հարաբերությունների և վարած արտաքին քաղաքականության պատմության ուսումնասիրության համար:

Նման արժեքավոր վավերագրերի ժողովածուներից հիշատակության արժանի են նաև Ֆաթհ-Ալի շահի թագաժառանգ Արբաս-Միրզայի նամակների և այլ գրությունների պատճենները պարունակող № 103 ձեռագիրը, որտեղ կան հետաքրքիր տեղեկություններ ժԹ դարի առաջին քառորդի քաղաքական անցուկարձերի, ինչպես նաև ռուս-իրանական հարաբերությունների վերաբերյալ և № 75 ձեռագիրը, որտեղ ամփոփված են հիշերեթի 1275 (1859) թ. Իրանի դեսպան Ամին-ուդ-դովլեի զեկուցագրերը, որոնք վերաբերում են թուրք-իրանական սահմանային վեճերի և փոխհարաբերությունների կարգավորմանը:

* * *

Այս բոլորից բացի Մատենադարանի մյուս պարսկերեն ձեռագրերում ևս անշուշտ կան մասնակի հիշատակություններ ու բազմաթիվ պատասխիկներ, որոնք հետաքրքիր տվյալներ են պարունակում Իրանի, Անդրկովկասի և հարևան մյուս երկրների հասարակական-տնտեսական կյանքի վերաբերյալ:

Ի վերջո, ավելորդ չենք համարում նշել, որ Մատենադարանի արխիվում պահվում են ժՆ—ժԹ դդ. վերաբերյալ ավելի քան 1500 պարսկերեն վավերագրեր (Ֆերմաններ, հոքմեր, ֆաթվաներ, թաալիղաներ, դարալեններ, վակֆնամաներ, իջարենամաներ, սնուրնամաներ, հոջաթնամաներ և նոտարական այլևայլ արձանագրություններ), որոնց համառոտակի նկարագրությունը տրված է մեր կազմած «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» ժողովածուի Ա սրահի առաջարանում:

Մատենադարանը արդեն ձեռնարկել է այդ վավերագրերի հրատարակությանը: Լույս է տեսել այդ մատենաշարի առաջին պրակը (ժՆ—ժԶ դդ. հրովարտակները), պատրաստ է հրատարակության Բ պրակը, որն ընդգրկում է ժԷ դարի առաջին կեսի հրովարտակները, տրված Շահ Արբաս Ա-ի, Շահ Սաֆիի և Շահ Արբաս Բ-ի կողմից:

Շարունակվում են աշխատանքները հրովարտակների հաջորդ պրակի, ինչպես նաև կալվածագրերի սերիայի Ա պրակի հրատարակության պատրաստելու ուղղությամբ:

Մեզ բերված օրինակներով, ինչպես ասվեց, չի սպառվում Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի պատմագրական ամբողջ հարստությունը: «Բանբեր»-ի սուղ էջերում հնարավոր չէ տալ բոլոր ձեռագրերի մանրամասն բնութագիրը: Մենք բավարարվեցինք միայն նրանցից ամենից կարևորների խիստ համառոտ և թուուցիկ նկարագրությամբ: Սակայն այս համառոտ բնութագրումը ևս դալիս է ապացուցելու, որ Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի այս փոքրիկ հավաքածուն արժանի է ավելի մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրության:

Ս. ԿԱՎԹՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 6774 ՁԵՌԱԳՐԻ
ԱՍԵՂՆԱԳՈՐԾ ՇԱՊԻԿԸ

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանում պահպանվել են հին ասեղնագործության փոքրաթիվ, բայց շատ ուշագրավ նմուշներ: Նրանց մի մասը, որպես կաղմի պարագա, փակցված է կաղմի ներքին կողմին, բայց կան նաև ձեռագրեր փաթաթելու համար պատրաստված ասեղնագործ քսակներ կամ շապիկներ:

Ձեռարվեստի այս կարգի նմուշներից զգալի հետաքրքրություն է ներկայացնում Մատենադարանի № 6774 ձեռագիր ավետարանի ասեղնագործ շապիկը:

Ձեռագիրն ընդօրինակված է 1684 թվականին Սպահանում: Ունի ոչ բարձրարվեստ 17 անօրինական նկար, 14 խորան և բազմաթիվ լուսանցադարձեր, ձեռագրի ծաղկոզն է վարպետ Հայրապետը:

Ձեռագրի կաղմին հազցված ասեղնագործ շապիկը ամենայն հավանականությամբ պատրաստված է ոչ այս ձեռագրի համար: Որպեսզի համոզվենք այս բանում, բավական է համադրել շապիկի և ձեռագրի շափերը միմյանց:

Ձեռագրի վերին և ներքին կաղմերի շափերն են $13,6 \times 9,5$ սմ, իսկ շապիկի համապատասխան շափերը՝ $17 \times 10,5$: Երկարության զգալի տարբերության հետևանքով շապիկի վերին ու ստորին եզրերը կաղմից դուրս գալով՝ ծալվել են: Ձեռագրի մեջքի լայնքը 5,4 սմ է, իսկ շապիկի մեջքի լայնքը՝ 33 սմ է: Այս անհամաչափության հետևանքով շապիկի վերին և ներքին կաղմերին հարմարեցված կողերի պատկերների շրջանակները (մեկ դեպքում ձախ, մյուս դեպքում աջ կողմից) ծալվել են կաղմի մեջքին, դրանով իսկ վնասելով գրաշապիկի պատկերների ամբողջական գիտմանը: Չպետք է տարակուսել, որ շապիկը, եթե պատրաստված լիներ այս ձեռագրի համար, իր շափերով այսբան զգալի տարբերություն կաղմի նկատմամբ չէր ունենա: Ուստի պետք է կարծել, որ այն եղել է այլ ձեռագրի շապիկ և հետագայում միայն հարմարեցվել է 1684 թ. ընդօրինակված այս ձեռագրին:

Գրաշապիկը կարված է սև մետաքսյա փայլուն կտորից (ատլասից) և ասեղնագործված է ոսկյա ու արծաթյա սիմերով, մետաքսյա գույնզգույն թելերով ու մարգարիտներով:

Բացի այդ, բանեցված է կլապիտոնը, այսինքն արծաթյա և մետաքսյա թելերը միասին ոլորած, այն հաշվով, որ միայն մետաղյա թելը երևա, կամ ընդհակառակը, այնպես ոլորած, որ ավելի շատ մետաքսաթելն է երևում, իսկ մետաղյա թելը հազիվ նշմարվում է, որոշ փայլ տալով թելին:

Ասեղնագործությունը կատարված է երկու, երեք տակ հարթակարով, թե-

լիքը դրված են կտորին միմյանց վրա և կողքերից ամրացված մանր զարդերով կտորին, այդ ուռուցիկ կարերը ընդելուզված են մարգարիտներով, և գուլերով բաժանված մի քանի մասի:

Շապիկի վրա կազմի երեսին Քրիստոսի խաչելության տեսարանն է, իսկ դրա հակադիր կողմի վրա ասեղնագործված է մի բարձրաստիճան հոգևորական, հավանաբար Գրիգոր Լուսավորիչը (տե՛ս գրաշապիկի լուսանկարը՝ բացված դիրքով): Խաչելության տեսարանում Քրիստոսը մեխված է խաչափայտին, ներքևում գետնի վրա կանգնած են մայրը և Մարիամ Մազթաղենացին: Նկարի ամբողջ դաշտը (ֆոնը) ասեղնագործված է արծաթյա բարակ սիմով, որը դրված է կտորի վրա, և մետաքսյա սպիտակ գույնի բարակ թելով, որը վիզ-զազ դծերով մանր կարերով ամրացված է կտորին:

Արծաթյա դաշտի վրա խաչափայտը կարված է ոսկեգույն սիմով, սա էլ կտորին ամրացված է մետաքսյա դեղին ամուր թելով:


Քրիստոսի մարմինը ասեղնագործված է կլապիտոնով, որի միջի մետաքսյա թելը նարնջագույն է: Սև երկար մազերի, միրուքի ու բեխերի մեջ հաղիվ նշմարվում են արծաթաթելի հետքեր: Աչքերը փակ են, ունքերը, արտևանունքները գործած են սև թելով: Քրիստոսի գլխին, կանաչագույն թելերի վրայից, փշե պսակն է, ձեռքերը տարածված, ոտքերը կողք կողքի մեխված են խաչափայտին: Նա մերկ է, միայն մեջքին կապած է կանաչ և ոսկեգույն թելերից գործած դոտի: Գոտու ծայրերը ծածանվում են:

Քրիստոսի մարմնի եզրագծերը կարված են ոսկյա բարակ քուղով. ճակատից պսակի փշերի տակից, աչ կողքից, ձեռքերի և ոտքերի դամված տեղերից հոսում է արյուն, որը ասեղնագործության մեջ արտահայտված է մետաքսյա արնագույն թելի մանր կարերով: Այդ կարերը ուղիղ, թեք ուղղություն ունեն, ոտքի վրա խաչածե են, թելերի կարերը այնպես են արված, որ թվում է, թե արյան կաթիլներ են թափվում ցած:

Կանանց գեմքերն ու հագուստը ասեղնագործված են ոսկյա, իսկ ձեռքերն ու ոտքերը արծաթյա սիմով: Աստվածամոր մազերը շեն երևում, գլուխը փաթաթած է քողերով, որոնց վրա կրկնակի կոր գծերով պատկերված է լուսապսակը (նիմբոս): Գեմքը եզրակարած է ոլորած ոսկեթելով, իսկ հագուստն ու լուսապսակը՝ արծաթյա բարակ ոլորած քուղով: Քուղի մեջ կա արծաթի հեռ մեկտեղ, կարմիր մետաքսաթել, որը երևում է մաշված մասում:

Մարիամ Մազթաղենացու մազերը սև գույնի թելով են կարված, դրանց մեջ փալլում են արծաթյա գծեր, գլխին լուսապսակ չկա: Որպեսզի հագուստի ծալքերը լավ երևան՝ հարթակարի թելերը դասավորված են տարբեր ուղղություններով՝ թեք, ուղիղ: Թելերի շերտերը ամրացված են կտորին մանր զարդակարերով, շախմատային կարգով, կամ զիզզազ գծերով: Այս ամբողջ տեսարանը ունի բուսական շրջանակ — 1,5 սմ լայնությամբ: Սև դաշտի վրա հինգ կլոր թերթիկներով ծաղիկներ են, որոնց կողքից կան երկու ձևի տերևներ: Ծաղկաձևը շատ հին ծագում ունի և նման է Կարմիր բլուրից ու Անիից պեղած որոշ իրերի ծաղկաձևերին: Ծաղիկների թերթիկները արծաթագույն են, իսկ միջուկը և տերևները ոսկեգույն:

Կազմի շապիկի մյուս երեսին, ինչպես ասացինք, ասեղնագործված է հավանաբար Գրիգոր Լուսավորիչի պատկերը՝ ամբողջ հասակով: Գլխին խուչր է, մի ձեռքին երկու օձազլխով վերջացող գավազան, մյուս ձեռքին երկար շղթաներով բուրվառ, որի ոտմբաձև գլուխը վերջանում է հայկական խաչով:



Մատենադարանի № 6774 ձևագրի ասեղնագործ շապիկը:

Հագած է կենդեցական արծաթաթել շապիկ, վրայից փորուրար կամ եմփ-փորոն, և ապա ոսկեթել շուրջառ: Փորուրարը զարդարված է մարգարիտներով ու գույնզգույն շհղկված քարերով (հակինթ, գմբուխա), որոնք դրված են արծաթյա ոսկեջրած շրջանակների մեջ:

Խույրը մարգարտահուռ է, կենտրոնական մասում (ճակատին) երեք քարով զարդարված (սահալանվել է միայն մեկը):

Լուսավորչի դեմքը ասեղնագործված է մետաքսյա թելերով, փոքր ինչ կուպիտ ձևով, քան արված է Քրիստոսի դեմքը, սակայն սա ավելի կենդանի է ու արտահայտիչ: Աչքերը խոշոր են, ունքերը, արտևանոնքները, բխերը և դանդուր մորուքը կարված են մետաքսյա սև գույնի թելով:

Շապիկի ու շուրջառի խոշոր ծալքերը ստացվել են հարթակարի ժամանակ թելերը տարբեր ուղղությամբ դասավորելուց:

Ծալքերը եզրակարած են ոսկյա քուղով. այս դեպքում էլ արծաթաթել ասեղնագործությունը եզրակարած է ոսկյա, իսկ ոսկեթելը՝ արծաթյա քուղով:

Հագուստի թևերը վերջանում են նարնջագույն մարգարտազարդ բաղադաններով: Հագուստի շքեղությունը, խույրը, գավազանի ձևը ապացուցում են, որ պատկերված է ամենարարձր աստիճան ունեցող մի հոգևորական: Լուսավորչի շուրջը բաց մնացած տարածության վրա, կարված են հաստ թիթեղից պատրաստած փայլուններ, որոնք խաչաձև դժերով բաժանվում են շորս մասի և նման են շորս թերթիկանի ծաղիկների:

Այս պատկերն էլ ունի առաջին երեսի նման ծաղկազարդ շրջանակ: Վերոհիշյալ երկու նկարների արանքում, կազմի մեջքի ու բերանի ուղղությամբ ասեղնագործված են 3,3 սմ լայնության զոլեր, որոնք արծաթաթել միջնասյուներով բաժանված են վեց ուղղանկյունիների:

Ամեն մի ուղղանկյան մեջ մի ծաղկեփունջ է պատկերված, կազմված հինգ թերթիկանի ծաղիկներից, զամբեղներից ու կակաչներից:

Ծաղիկների կենտրոնական մասն ու թերթիկները կարված են կարմրագույն, իսկ տերևները՝ կանաչավուն մետաքսաթելով և եզրավորված՝ բարակ ոլորուն ոսկեթել քուղով:

Բոլոր ուղղանկյունիները ունեն ծաղկազարդ շրջանակներ:

Բացի այդ, ձեռագրի կազմի շապիկին հատուկ փայլ ու շքեղություն տալու համար, տեղ-տեղ ամրացված են շորս թերթիկանի փայլուններ:

Շապիկը ունի մետաքսյա ալ զոլավոր աստառ, որի վրա ամրացված են երկու զրպանիկներ, կազմի ծայրերը մեջը հազցնելու համար: Գրպանիկները պատրաստված են նույն սև առլասից, ինչ որ բանեցված է ասեղնագործության համար: Շապիկը կազմի վրա ամուր պահելու համար մի կողմից կարել են բոժոժի ձև ունեցող երեք արծաթյա ոսկեջրած կոճակներ, իսկ մյուս կողմից՝ արծաթաթել քուղից երեք օղ: Ամբողջ զարդարանքը եզրակարած է սև մետաքսյա և արծաթյա ոլորած կրկնակի քուղով:

Նկարագրված գրաշապիկը, որ պատրաստված է ամենայն հավանականությամբ 17-րդ դարից շատ առաջ, այսօր էլ գրավում է դիտողին պատկերների ճշմարտացիությամբ, արծաթյա ու ոսկյա քուղերի և մետաքսաթելերի շխամբած փայլով և ասեղնագործության կատարելությամբ:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑՈՒ ՄԻ ԶԱՓԱԾՈ ԱՆԵԾՔԻ ՄԱՍԻՆ

17-րդ դարի հայ տաղասաց-երգիծարան, քաղաքական ու եկեղեցական գործիչ Մարտիրոս Ղրիմեցու ստեղծագործության ձևազարային նմուշները հաճախ մեր ուշագրությունը գրավեց մի հետաքրքիր շափածո անեծք, որը կարևոր է իր գրական և պատմական արժեքով:

Անեծքը պահպանվել է Հայաստանի Պետական Մատենադարանի № 3860 (Ա) և 8908 (Բ) ձևազրկում: Ա ձևազրկում անեծքն ունի հետևյալ խորագիրը. «Ղրիմցի թաթար Մարտիրոս վարդապետին շինած ոտանաւորն է», իսկ Բ ձևազրկում արտադրված է առանց խորագրի ու հեղինակի անվան հիշատակության: Երկու ձևազրկում էլ այդ բնագիրն ընդօրինակված է Մարտիրոս Ղրիմեցուն պատկանող ստեղծագործությունների շարքում: Մատենադարանի աշխատակիցների կողմից կազմված տաղերգուների ձևազրկ ցուցակի մեջ ևս այն գրված է Մարտիրոս Ղրիմեցու անվան տակ:

Անեծքը, որպես հայ միջնադարյան երգիծանքի առանձին տեսակ, ուշադրության գրեթե չի արժանացել, այնինչ նա ունի որոշ ճանաչողական նշանակություն և բավական լայն կիրառում է ստացել ժողովրդական ստեղծագործության ու գրավոր պոետիայի մեջ: Հիշենք Արտաշեսի և Դավթի անեծքները, անեծք-հայրեններ, Ներսես Շնորհալու անեծքը «Ողբ Եղեսիոյ»-ի մեջ և այլն:

Ժողովուրդը միջնադարում հավատ է ունեցել անեծքի հրաշագործ ուժի նկատմամբ:

Բնության և մարդկային կյանքի մեջ արտահայտվող շար կամ բարի երևույթները հասկանալու, դրանք կանխելու կամ հօգուտ մարդու օգտագործելու համար հավատացել են, թե անհրաժեշտ է դանել այն խորհրդավոր բանաձևը, որով հնարավոր է իբր զսպել այդ ուժերը և փրկապետել նրանց: Ժողովրդական բազմաթիվ հեքիաթներում հերոսները շնչում են այնպիսի կախարդական խոսքեր, որով շարը հաղթահարվում է, հրեշք տապալվում, բացվում են փակ դռներ ու դարբասներ և այլն: Այս հիմքի վրա ստեղծվել է հատուկ աղթարական գրականություն, որն իր մեջ պարունակում է զանազան հրաշագործ բանաձևեր, խորհրդավոր ու տարօրինակ աղոթքներ, որոնց միջոցով հավատացել են թե կարելի է դեերին հալածել կամ ոգեկոչել, շարը խափանել կամ արձակել և այլն:

Հնագույն ըմբռնումների հիման վրա խարսխված այդ հավատալիքի տարածված լինելու օգտին են խոսում հայ ժողովրդի տարբեր հատվածների կենցաղում կիրառվող այս կարգի բազմաթիվ արտահայտություններ՝ մեղքի ու անեծքի տակ մի ընկնիր, շար անեծքը շար օձի թույն է, անիծյալ լինիս, մոր անեծքը չի բռնի, անիծից արմատ, շար անեծքի հանդիպիս, անեծքի բուն դառանք և այլն:

Այն հավատը թե անեծքը կրոնի, ստիպել է մարդկանց դիմելու նրան իբրև ազդու գեներ թշնամու դեմ, երբ պայքարի ուրիշ միջոց չի եղել, նույն հավատով՝ ժողովրդի գլխին եկած դժբախտություններից շատերը վերագրվել են որևէ շար անեծքի և այլն:

Մ. Ղրիմեցու մեր ուշադրությունը գրաված անեծքը մի հետաքրքրական նմուշ է, գրված տների այբբենական հաջորդականությամբ՝ Ա-ից մինչև Օ: Յուրաքանչյուր տառով սկսվող տունը վեց կարճ հնգավանկ տողից է բազկացած: Այսպես՝

Արբանեակ շարին,	Աչքըդ կուրասցին,
Անիծեալ կուրին,	Ականջըդ խլցին,
Այս անուն պրդծին,	Ազգդ ջընջեսցին:

Բանաստեղծության այս ձևը հեղինակի համար ստեղծել է ակնհայտ դժվարություն: Որոշ տառերով սկսվող համապատասխան քանակությամբ բառեր, որոնք բացասական իմաստ արտահայտեին՝ հայերենում հազվագյուտ են: Դրա համար հեղինակը ստիպված է եղել գործածելու օտարազգի կամ դժվարամատչելի բառեր, որոնք սակայն, գրեթե առանց բացատրության, կան նրիմիա վարդապետի բառարանում (կազմվել է 17-րդ դարում և իր մեջ հազվագյուտ բառեր է պարունակում): Ղրիմեցին անշուշտ ձեռքի տակ է ունեցել այդ բառարանը և շատ հաճախ դիմել նրան: Մեր միջնադարյան բանաստեղծության մեջ այդպիսի մի ուրիշ օրինակ ևս կա: 18-րդ դարի սկզբի պատրիարք-բանաստեղծ Գրիգոր Շղթայակրից պահպանվել են երեք ոտանավորներ՝ գրված նրիմիայի բառերով: Դրանք բոլորն էլ դժվարընթեռնելի և հանելուկային բնույթ ունեն: Շղթայակրիցը հենց այդպիսի նպատակ է հետապնդել: Բայց Մարտիրոս Ղրիմեցին նրիմիային դիմում է ոչ թե խրթնարանություններ հորինելու համար, այլ սոսկ անհրաժեշտությունից: Օրինակ «Փ»-ով սկսվող շարքը նա լրացնում է այսպես.

Փարաք կատաղի,	Փաթուր փանաքի,
Փաղաղ յօժարի,	Փառքդ կորնչի,
Փիծ ապաւառի,	Փաղփինդ խաւարի:

Այնտեղ, ուր Ղրիմեցին չի դիմում բառարանի օգնության, ժողովրդական շունչն ավելի է զգալի:

Չնայած արհեստական բառերի առկայության, անեծքն ունի գեղարվեստական որոշ արժանիք:

Բերենք նմուշի համար մի երկու օրինակ, առանց նկատի ունենալու տների հաջորդականությունը.

Խլուրդ դարշելի,	Մնունդ կայէնի,
Խանդարիչ երկրի,	Մոցածին որդի,
Խելագար շորի,	Մուռվիդ անթափ ձի,
Խորհուրդդ ցըրուփ	Մառըդ շորասցի,
Խելքդ ցնորի,	Մաղիկդ թօթափի,
Խաղք լիցիս յերկրի:	Մունկդ կտրատի:

¹ Հ. Անասյան, Գրական նմուշներ Գրիգոր Շղթայակրից, «Էջմիածին», 1950, էջ 39—46:

Պտուղ գարշելի	Պիղծ լեզուդ համրի,
Պղծոյն Յուդայի	Պապանձեալ կարկի,
Պատժակից որդի.	Պապակեալ այրի: Եվ այլն:

Յուրաքանչյուր տուն իր նույնահունչ բառերի կարճ, հատու և զորեղ հատվածներով ազդու է դարձնում անեծքի ուժը, և երբ տները, որոնց հետ և հնչականութունը, փոխվում է, ավելի է ծանրանում անեծքի տպավորութունը: Կարծես հոգուց բխում է մի անվերջ հորդացող լավա, որը որպես մաղձ, թույն և խանձող խորշակ թափվում է մեղավորի գլխին: Որքան շարունակվում է անեծքը, այնքան բուռն և հորդուն է դառնում շարության զգացումը շարի գեմ, և անեծքի, այսինքն անընդհատ հաջորդվող հարվածների տեսականութունը ոչ թե հոգնեցնում, ձանձրացնում է, այլ ավելի է առաջ մղում:

Անեծքը վերջացնելուց հետո մարդ տոգորվում է այն հավատով, թե շարը հաղթահարված է:

Ինչպես երևում է Ղրիմեցու անեծքը ուժեղ տպավորութուն է թողել մարդկանց վրա և լայն տարածում գտել: Կարճ ժամանակում գրիչների մոտ տարբերակները շուտով վարիանտների բնույթ են ստացել և ներկայացնում են բավականաչափ հետաքրքիր պատկեր: Ահա մի օրինակ.

Ճաղար ծակամուտ,	Ճիւղղ յայտնի,
Ճրճուողական սուտ,	Ճեռտ ախտալի,
Ճրն[ճ]ղուկ վալաշուտ,	Ճակաճան լիտի,
Ճոխարան լեզուդ,	Ճաճանչղ նուաղի,
Ճոռոմ բերանուդ,	Ճեպով կործանի,
Ճանկրդ քո որդնուտ:	Ճակատդ ի հողի:
(Չեռագիր Ա.)	(Չեռագիր Բ.)

Բ ձեռագրում կա նույն անեծքի համառոտումը (յուրաքանչյուր տնից վերցված մի տող) և ուրիշ անեծքներ ու ոտանավորներ նրա նմանությամբ գրված:

Բայց անեծքի լայն տարածումը դրանով չի սահմանափակվում: Նա ծառայել է իր նպատակին: Ղրիմեցին անեծքը գրել էր ընդհանուր դործածության համար, առանց գեմքի նշման¹, այնպես որ յուրաքանչյուր ոք կարող էր այն ուղղել հասարակական կամ անձնական իր թշնամուն: Որ այդ անեծքի սկզբնօրինակը չի հասցեագրված եղել որևէ մեկին կարելի է ենթադրել Բ ձեռագրի բնագրի հիման վրա: Անեծքը սկսվում է այսպես.

Արբանեակ շարին,
Անիծեալ լրբին,
Այս անուն պղծին:

¹ Կարելի է կարծել նաև, որ Ղրիմեցին իր անեծքն ուղղել է պատմական անձնավորության՝ մի ոմն Արբահամ Այնթափցու, որը 1680 թվականին հիշվում է իբրև Երուսաղեմի միարան և Ս. Հարություն տաճարի պաշտոնյա, իսկ հետո վերագրվել է Արբահամ Այնթափցի Մովսիսին:

«Այս անունն պղծին» տողը ցույց է տալիս, որ հեղինակը կամ մեզ հասած ձեռագրերի նախագաղափար օրինակի գրիչը որևէ մեկին նկատի չունի և յուրաքանչյուր ոք կարող է մուծել այնտեղ իր ցանկացած անունը: Այդպես էլ վարվել են: Ա. ձեռագրի օրինակն այսպիսի այլընթերցում է տալիս.

Արրանեակ շարին,
Անիծեալ կուրին,
Ազրահամ պղծին:

Ազրահամը Արրահամ անվան միտումնավոր աղավաղումն է, որը կատարված է վիրավորական իմաստ տալու համար այդ անվանը: Դա պարզ երևում է նաև հետևյալ ծանոթությունից, որը գրված է Ա. ձեռագրի բնագրի տակ.

Զի մինչև ցաստ բանք որ գրբին	Պիղծ, գարշելի նէքսէթ ժանդին.
էր ի վերայ Արրահամին,	Արդ սակաւուկ բանքս լիցին
Որ էր նա գիւտ ամեն շարին,	Յանդիմանօղբ նորա շարին:

Ուրեմն անեծքը ուղղված է մի ոմն Արրահամի, որը համարվում է ամեն շարի գյուտ: Բայց ո՞վ է այդ անձնավորությունը: Բ. ձեռագրում անեծքների «Մ»-ով սկսվող շարքի մեջ ասված է «Մուռ վիզ Անթափցի», որից և պարզվում է, թե դա կաթոլիկ գործիչ Արրահամ Այնթափցի Մովսիսյանը կամ Արծիվյանն է, որն իրեն կաթողիկոս հռչակեց 1740 թվականին:

Այնթափցին ծնվել է 1679 թվականին, իսկ Մարտիրոս Ղրիմեցին մահացել 1683 թվականին: Եթե նույնիսկ բնղուծենք, որ նա իր շափածո անեծքը գրել է մահվան տարին, ապա այդ ժամանակ Արրահամ Այնթափցին հաղիվ չորս տարեկան էր: Պարզ է, որ Մարտիրոս Ղրիմեցին ոչ մի աննշում չէր կարող ունենալ կաթնակեր մանկան հետ և նրան չէր ուղղի այդ երկարաշունչ և թունոտ անեծքը:

Անեծքը կոնկրետ բնույթ է ստացել և իրրե դենք ծառայել կաթոլիկական եկեղեցու սանձգությունների դեմ, հավանաբար 18-րդ դարի 20-ական թվականներին, երբ սկսվում է Արրահամ Արծիվյանի եռանդուն գործունեությունը կաթոլիկ եպիսկոպոսներ օծելու, քարոզիչներ առաքելու և հակաթոռ կաթողիկոսություն ստեղծելու ուղղությամբ: Արծիվյանն այսպիսով քառատում էր հայ ժողովրդի և եկեղեցու միասնությունը: Արծիվյանի գործունեությունը լիակատար համահնչուն էր արևելյան բրիտանական թեմերի նկատմամբ պապական շահերի հետ: Ահա թե ինչու Բենեդիկտոս ԺԳ պապը այնքան մեծ հետաքրքրություն է ցուցաբերում և ամեն կերպ խրախուսում նրան: Արրահամ Արծիվյանը փաստորեն պապի գործակալն էր Արևմտյան Հայաստանում:

Պարզ է, որ նրա դեմ պետք է բարձրանար բողոքի և հակառակություն ալիք: Մովսիսյանն է ուժեղ պայքար Արծիվյանի վտանգավոր միտումներին դիմակայելու համար: Նրա մոլեգին գործունեությունը շափազանց է համարվում նույնիսկ կաթոլիկական պրոպագանդայի տեսակետից: Ֆրանսիայի դեսպան Բոնակը իր մի նամակում գրում է. «Եթե Հալեպի միսիոնարներից մի քանիսը Արրահամ եպիսկոպոսին մղած շիննին անխորհուրդ քայլերի... այսօրվա գրություն հասած չէինք լինի»¹: Նույն դեսպանը Ֆրանսիայի թագավորին

¹ Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient (XVII—XIX siècles), par le P. Antoine Rabbath, Paris, 1907, էջ 557:

ուղղած իր նամակում նշում է, որ Աբրահամը և Սայդայի մի հույն կաթողիկե կախկոպոս իրեն անհասկանալի մնացած ղիտումներով ղրիմեցին այնպիսի քայլերի, որոնք վերարժարժեցին գրեթե հանգած կրակը¹:

Արժիվյանն ուղղակի շեղաբացվում է և նրա գործունեությունը ամփոփվում է համախոհների նեղ շրջանակի մեջ: 1740 թվականին նրա կաթողիկոսանալը փաստորեն տիկնիկախաղ էր (նա ինքը նախօրոք օժում է մի քանի կախկոպոսների և նրանց ձեռքով օժվում կաթողիկոս)²: Չնայած այդ բանին, նրա շուրջը կաթողիկե գործիչների կողմից ստեղծվել է մի ամբողջ գրականություն, որտեղ նա ներկայացվում է իբրև բարձր գաղափարների համար անխոնջ պայքարող հերոս, որը վայելել է իբր ժողովրդի համակրանքը և այլն³:

Պատմական ճշմարտությունը սլարգելու տեսակետից այս անեծքը պերճախոս է: Տարակույս չի մնում, որ ժամանակակիցներից շատերը անհուն ատելություն ու արգահատանք են տածել Արժիվյանի նկատմամբ: Բացի քննության ենթակա անեծքից Պետ. Մատենադարանի № 8908 (Բ) ձեռագրում կան երկու այլ ոտանավորներ, որոնք նույնպես գրված են Աբրահամի դեմ ոմն Սիմեոն արեղայի կողմից և մի անանուն անեծք (Ղրիմեցու անեծքի նմանողությամբ), որը դարձյալ ամենայն հավանականությամբ ուղղված է Աբրահամ Արժիվյանի դեմ⁴:

Այն բանից հետո, երբ Մարտիրոս Ղրիմեցու այս անեծքը հարմարեցվել է Աբրահամ Այնթափցուն՝ բնագրի մեջ մտել են որոշ փոփոխություններ: Այսպես, «Ծ»-ով սկսվող շարքի մեջ «ծուռ վիզ Անթափցի» արտահայտությունը⁵, ինչպես և նման մի քանի այլ արտահայտություններ՝ նորմոծություն են, իսկ անեծքի դավանական բնույթը դալիս է Ղրիմեցուց:

Կաթողիկե միսիոնարներին խժոժությունները Հայաստանում և հայկական գաղթավայրերում 17-րդ դարում արդեն լայն ծավալ էին ստացել: Այդ վնասակար գործունեությունը ազգային գործիչների կողմից համարվում էր հասարակական շարիք: Անեծքն էլ ուղղված է հենց այդ շարիքի դեմ: Անեծքի մեջ արտահայտվում է Մարտիրոս Ղրիմեցու խիստ բացասական վերաբերմունքը և անհաշտ պայքարը կաթողիկոսության նկատմամբ:

Հայանի է, որ Ղրիմեցին Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի համախոհներից էր: Զուղայեցին, երբ 1679 թվականին եկավ Կ. Պոլիս քաղաքական առաքելու-

¹ Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient (XVII—XIX siècles), par le P. Antoine Rabbath, Paris, 1907, էջ 56 3:

² Օրմանյան, Ազգապատում հատ. 2, էջ 2009:

³ Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա. (մամուլի տակ): Չնայած իրեն հայտնի եղող աղբյուրների միակողմանիությանը՝ Հ. Անասյանը ճիշտ է տվել Աբրահամի հասարակական գործունեության բնութագրերը:

⁴ Սիմեոն արեղայի ոտանավորներից մեկը «Սիմեոն Արեղայի ստացեալ վասն Անթափցի Աղբահամին» խորագրով հետաքրքիր բովանդակություն ունի:

Ի յԱնթափու եկեղեցին՝ Աստուածածնի սուրբ տաճարին

Մկրտեցար յաւազանին, ով նգովեալ պիղծ աղբահամ.

Սուրբ մեռնաւուն մեր օծար և Աբրահամ անուանեցար

Չմեր սուրբ օրէնքն մուսցար, ով ուրացող պիղծ աղբահամ:

Այսպես է սկսվում Սիմեոնի երկարաշունչ ոտանավորը, որի յուրաքանչյուր երկրորդ և չորրորդ տողի վերջում կրկնվում է «աղբահամ»-ը մի որևէ մակդրի հետ միասին: Բայց զա անեծք չէ, այլ մի երգիծական շափածո ղրիմանկար:

⁵ Այս արտահայտությունը մյուս բնագրում սրամիտ բառախաղի բնույթ է ստացել՝ ծուռ վիզ անթափ ձի, այսինքն թափ չունեցող ձի:

թյան (որի պատվիրակության մեջ մտնում էր նաև երիտասարդ Իսրայել Օրին), անմիջապես սկսեց գործակցել Ղրիմեցու հետ, մի մարդու, որը, անշուշտ, ճանաչված էր իբրև կաթոլիկ նկրտումների անհաշտ հակառակորդ¹։ Դա արդեն խոսում է այն կեղծ վարկածի դեմ, թե Ջուղայեցու առաքելության նպատակըն է եղել ընդունել կաթոլիկ դավանանք։

Այսպիսով, Մարտիրոս Ղրիմեցու շափածո անեծքը իր փոփոխակով հանդերձ հետաքրքրական է որպես գրական երկ և արժեքավոր՝ պատմական բովանդակությամբ։

¹ Ղրիմեցին ամենուր հալածել և բանազրել է կաթոլիկացած տարրերին։ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը իր «Օրագրության» մեջ այսպիսի վկայություն ունի. «Ի սուրբ Աստուածածին գնացի և Մարտիրոս վարդապետն բարոզ ասաց և դաս բաշեց ըզֆրանկսն և զհաւանողսն նորին» (Երեմիա Քէոմուրճեան, Օրագրութիւն, Երուսաղէմ, 1939, էջ 178)։

Ռ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ԵՐԿՈՒ ՆՈՐ ՎԱՎԵՐԱԳԻՐ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ
ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1955 թ. մայիս ամսին Պետ. Մատենադարանի դիրեկցիայի կողմից հայերեն ձեռագրեր և վավերագրեր ձեռք բերելու նպատակով Դոնի-Ռոստով գործուղված ժամանակ մեզ հաջողվեց ձեռք բերել Ն. Նախիջևանի հայ համայնքի վերաբերյալ մի քանի հարյուր վավերագրեր: Այս վավերագրերի մի զգալի մասը կապված է Մ. Բաբաջանի կտակի գործով Մ. Նալբանդյանից հետո Հնդկաստան գործուղված Հ. Բեդելյանի Հնդկաստանում կատարած աշխատանքների հետ: Այստեղ են Նոր-Նախիջևանի հասարակության տված լիազորագրերը, Բեդելյանի դիմումներն ու նամակները, Կալիաթայի դատարանի որոշումները և այլ վավերագրեր: Այդ նյութերից հրատարակվել են միայն («Էույս» շաբաթաթերթի 1913 թ. համարներում, «Նամակներ Կալիաթահեն» վերնագրի տակ) Հ. Բեդելյանի զեկուցագրերը: Մյուս փաստաթղթերը և ձեռագիր նյութերը չեն հրատարակված, բայց նրանց մեջ ևս կան ուշագրավ տվյալներ Բաբաջանի կտակի և կտակված գումարների ստացման գործում Մ. Նալբանդյանի կատարած դերի մասին:

Այս վավերագրերից երկուսը, որոնք լուսարանում են Նալբանդյանի գործունեության անհայտ էջեր, արժանի են հատուկ ուշադրության:

Դրանցից առաջինը մի ընդօրինակություն է «Բենգալիո ֆորա Ուելլամբի ծայրագույն դատարանի վճռաթղթի՝ 1861 թ. սեպտեմբերի 26-ի դատավարության, որի մեջ Միքայել Նալբանդյանը հանդիսանում է պահանջատեր և Չարլս Սվենուրսն Հազ և այլ ոմն պատասխանատու» խորագիրը կրող վավերագրի, որն արժեքավոր է այն տեսակետից, որ պարզ պատկերացում է տալիս Մ. Բաբաջանի կտակը հօգուտ Նոր-Նախիջևանի համայնքի տնօրինելու ուղղությամբ Մ. Նալբանդյանի գործադրած ջանքերի մասին:

Մինչև այժմ հայտնի չէր թե կոնկրետ ի՞նչ արդյունքների է հասել Նալբանդյանը, դատարանը ինչքա՞ն գումար է վճռել հօգուտ Ն. Նախիջևանի հասարակության, ինչքա՞ն կանխիկ դրամ է ստացել նա և այլն: Վերադառնալուց շատ շանցած, ինչպես հայտնի է, Նալբանդյանը ձերբակալվեց, չկարողանալով հաշվետվություն ներկայացնել իր գործունեության մասին:

Հնդկահայ վաճառական Աբդարին հասցեագրած նամակում Նալբանդյանը հայտնում է, որ «Ստացայ ի պարոն Հազէ զվաթսուն հազար (60.000) կումպանու ոստիխ, զորմէ ետու նմա զանդորրագիր՝ իմով ձեռագրով և վկայութեամբ»¹:

¹ Եր. Շ ա հ ա զ ի զ, Դիվան Մ. Նալբանդյանի, էջ 188, եր. 822:

Օգտվելով Նալբանդյանի ձերբակալությունից, նրա դադափարական հակառակորդները զրպարտչական լուրեր էին տարածում այն մասին, որ իբր Նալբանդյանը յուրացրել է բերած գումարի կեսը, որ նրա եղբայրը հարստացել է Հնդկաստանից բերած գումարներով և այլն:

Նոր ձեռք բերված վավերագիրը հնարավորություն է տալիս վերջնականորեն լուծելու այս հարցը և Նալբանդյանին ազատելու շարանենգ զրպարտություններից:

Պարզվում է, որ Բարաջանի կտակած շարժական գույքի վաճառքից գույքած գումարը կազմել է 70.000 ուսիփ: Սակայն դատարանը օրինական չհամարելով կտակին 1795 թ. ապրիլի 1-ին կցած հավելվածը (ըստ որի պետք է ծախվեր Մ. Բարաջանի 10. 464 ուսիփ արժեքով տունը և գումարը բարգվեր Ն. Նախիջևանի համայնքին հասանելիք գումարի վրա)՝ Նալբանդյանին որպես Ն. Նախիջևանի լիազորի և պահանջատերի, որոշել է տալ 60.000 կոմալ. ուսիփ՝ այսինքն ճիշտ այնքան, ինչքան ճշմարտացի կերպով գրել է Մ. Նալբանդյանը իր նամակում:

Բացի դատարանի վճռից, այս փաստաթղթում տեղեկություններ կան Մասեհ Բարաջանի կտակի առթիվ Նալբանդյանի հայցով Կալկաթայում տարվող դատի մանրամասնությունների մասին, դրանք են.

1. Նալբանդյանը սեպտեմբերի 4-ին իր դատապաշտպանների ներկայությամբ, ծանուցագիր է ներկայացրել դատարանին և ավել է իր համաձայնությունը «որ այս դատը մտցվի օրակարգի մեջ և լավի ու քննվի ներկա նիստին»:

2. Սեպտեմբերի 5-ին Նալբանդյանը դատարանին գրավոր երդում է ավել: Այս մասին, երկու փաստաթղթերը սեպտեմբերի 5-ին կցվել են դատավարության գործին:

3. Սեպտեմբերի 6-ին Նալբանդյանը դատարանին ավել է իր գրավոր համաձայնությունը այն մասին, որ «դատը առաջ պետք է տարվի և գրվի դատական խորհրդի վճռական մատյաններում»: Այս փաստաթուղթը ևս սեպտեմբերի 7-ին կցվել է գործին:

Փաստաթղթից երևում է, որ Նալբանդյանի հարուցած դատական գործը առաջին անգամ լավել է սեպտեմբերի 18-ին: Երկրորդ անգամ նույն գործը լավել է սեպտեմբերի 25-ին: Երկու անգամ էլ քննությանը մասնակցել է Մ. Նալբանդյանը անձամբ: Դատավարության այս երկու նիստերի ժամանակ էլ կարգացվել են թե Նալբանդյանի և թե նրա հակառակորդ Հագի 1861 թ. սեպտեմբերի 4-ին, 5-ին և 6-ին ներկայացրած վերոհիշյալ փաստաթղթերը:

Դատարանը գրավոր վկայությունների ընթերցումից հետո լսել է Մ. Նալբանդյանի, Կալկաթահայ հասարակական գործիչներ Գևորգ Ավետի, Հովհաննես Ավետի, Հարություն Մալեյի բերանացի վկայությունները գործի առթիվ՝ հօգուտ պահանջատիրոջ, այսինքն՝ Մ. Նալբանդյանի:

Այս բոլորից հետո դատարանը կայացրել է իր որոշումը.

«Դատարանը հայտարարում է, որ կտակող Մասեհ Բարաջանի, նույն և Մարտիրոս, 1794 թ. մայիսի 30-ին կազմած կտակը պետք է հաստատվի և գործադրվի նրա կամքին համեմատ...» և այլն¹:

¹ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, անհատական արխ., թղթ. 233, վ. 256:

* * *

Հ. Բեդելյանը 1912 թ. Ն. Նախիջևանի հասարակութայն կողմից ընտրվելով լիազոր ներկայացուցիչ Մ. Բարաջանի կտակի գործով, մեկնում է Հնդկաստան: Տեղ հասնելով, նա անմիջապես սկսում է հետաքրքրվել Նալբանդյանի կատարած աշխատանքով: Փնտրում և գտնում է մի քանի ծերունիների, որոնք ժամանակին օգնած են եղել Մ. Նալբանդյանին և պատրաստակամություն են հայտնում օգնելու իրեն: Այդ երևում է նրա զեկուցագրերից, որոնք պարբերաբար ուղարկվել են Նոր-Նախիջևանի հայ համայնքի ղեկավարությանը:

1913 թ. հունվարի 30-ին Բեդելյանը Ն. Նախիջևանի համայնքի հոգաբարձությանն հղած զեկուցագրի հետ միասին ուղարկել է նաև 6 զանազան լուսանկարներ, որոնք այս կամ այն շափով առնչվում են կտակի կամ կտակարարի հիշատակի հետ: Այդ լուսանկարների մեջ է նաև Մասեհ Բարաջանի տապանաքարի լուսանկարը:

Բացի լուսանկարից Հ. Բեդելյանը ուղարկել է նաև տապանաքարի վրահղած հայերեն և անգլերեն արձանագրությունների ընդօրինակությունը:

Տապանաքարի վրա գրված է

«Ի Յիշատակ

Արժանապատիւ ազգասերի Մասեհ Բարաջանի
Որ կոչիւր նաև Աղբըլ Մսեհ Մարտիրոսեան.
Սա կտակաւ աւանդեաց զղրամս յուլիս վասն
Մտաւորութեան լուսաւորութեան պարմանեացն
Հայոց և ի պէտս հայ ազգատաց, որբոց, բանտարգելոց
Եւ կարօտաւոր ճանապարհորդ պանդխտաց:
Այս յիշատակարան կառուցաւ ի հասարակութենէ
Հայոց Նորոյս Նախիջևանի ի ցոյց յաւերժական
Շնորհակալութեան և երախտագիտութեան նոցին
Ի Կալկաթա»:

Որ տապանաքարը Մ. Բարաջանի գերեզմանի վրա ձգել է տվել Նոր-Նախիջևանի համայնքը երևում է արձանագրությունից: Բայց ո՞վ է եղել այդ տեքստի կազմողը: Փաստերը ցույց են տալիս, որ դա կատարել է ինքը՝ Մ. Նալբանդյանը: Այդ մասին Հ. Բեդելյանը իր զեկուցագրում նշում է. «Տապանաքարը ձգել է տվել, ինչքան ևս գիտեմ, Միքայել Նալբանդյանը 1861 թ. Նախիջևանցոց պատվերով»¹:

Այս տեղեկությունը հաստատվում է նաև մի այլ փաստաթղթով: 1861 թ. օգոստոսի 17(29)-ին Կալկաթայում Նալբանդյանը մի երկտողով Կ. Վրթանեսյանից տեղեկություն է խնդրել Մ. Բարաջանի թաղման վայրի մասին: Ըստ երևույթին, Նալբանդյանը սպասել է այնքան ժամանակ, մինչև դատը վճռվել է հօդուտ Ն. Նախիջևանի, ապա ձեռնամուխ է եղել գերեզմանաքար դրելուն:

Չնոք բերված փաստաթղթերի մեջ կան նաև այլ տվյալներ Մ. Նալբանդյանի և Մ. Բարաջանի կտակի մասին, ուստի կարծում ենք, որ այդ փաստաթղթերը կգրավեն Նալբանդյանագետների ուշադրությունը:

¹ Պետ. Մատենադարանի արխիվ, անհատական արխիվ, թղթ. 233, վավ. 252:

Ա. ԱԴԱՄՅԱՆ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Նշանավոր վիպասան Պերճ Պոռշյանի (1837—1907) գրական ու հասարակական գործունեության այս կամ այն շրջանի մութ էջերը լուսարանելու համար կարևոր են արխիվներում պահպանված և դեռևս չհրատարակված նրա նամակները, դիմումները, հայտարարությունները, ինչպես նաև նրա մասին եղած պաշտոնական գրադրություններն ու ժամանակակիցների նամակներում եղած տեղեկությունները: Այդ կարգի նյութերի հրատարակումը մեծապես կնպաստի Պոռշյանի գիտական կենսագրության ստեղծման գործին:

Նկատի ունենալով այդ, ստորև քաղվածաբար հրատարակում ենք Պետ. Մատենադարանում պահվող բոլոր այն կարևոր անտիպ նյութերը, որոնք վերաբերում են Պերճ Պոռշյանի կյանքին, ուսուցչական ու գրական գործունեությանը:

Մեզ հայտնի հնագույն փաստաթուղթը Պ. Պոռշյանի 1864 թվականի մարտի 18-ին Շուշիից Մեսրոպ վարդապետ Սմբատյանին գրած նամակն է: Այդ ժամանակ, ինչպես հայտնի է, Պոռշյանն աշխատում էր Շուշիում, Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի տեսչի օգնականի պաշտոնով: Դպրոցի տեսուչն էր անվանի մանկավարժ Պետրոս Շանշյանցը, որն իր շուրջն էր համախմբել կրթված ու լայն զարգացում ունեցող ուսուցիչների, այդ թվում նաև Պ. Պոռշյանին (բացի տեսչի օգնականը լինելուց Պոռշյանը երկրորդ ու երրորդ դասարաններում դասավանդում էր հայոց լեզու և ազգային պատմություն): Հիշատակված նամակից երևում է, որ Պ. Պոռշյանը 1864 թ. ուսումնական տարվա ամառային արձակուրդը մտադրվել է անցկացնել Շուշիում: Նամակից պարզվում է նաև, որ նա ունեցել է իր սեփական լուսանկարչական ապարատը և գրադվել է լուսանկարչությամբ:

Պ. Պոռշյանը գրում է. «...Եթե իմանաք որքան ձեզանից բարձր տեղ է մեր տեղը, կը զարմանաք. մի Մասիսի շափ սարի գլխի մի քաղաք է, քիչ է մնում աստուծուն հասնինք:

Իմ սիրելի եղբայր Հարություն Ղոնդուրալյանցը, որ ուղարկեց ձեզ դեղերը¹, նա էլ ուղարկում է այս նամակը Ձեզ, և կարծեմ իր նամակի մեջ գրած կը լինի երեք հատ ժամացույցի ժապավեն գերապատիվ Սարգիս հայր սուրբի համար...:

Էլ ի՞նչ գրեմ, քեփս լավ է, ամառը էս հով տեղիցը դժվել հո չեմ, որ գամ էդ շոքը. խալխը սարերն են քաշվում, իսկ ես պետք է սարից իջնե՞մ, չէ. չէ. բայց ո՞վ գիտե, քամի է, մտավ գլուխս, վեր կը կենամ, կը վազեմ:

¹ Խոսքը լուսանկարչությամբ գրադվելու համար անհրաժեշտ դեղանյութերի մասին է:

խնդրեմ նոր լուր հաղորդեք ինձ, էդտեղ ասում են սինոդականաց մեջ փոփոխություններ է եղել, իրա՞վ է թե սուտ:

Բաս մոմապա՞տս:

Ձեր միշտ բարեկամ և հավատարիմ սիրով Պերճ Պոռշյանց:

Եղբորս խնդրեմ լավ նայել, մորս մխիթարել ուրախ կենալու ինձ համար և մերայնոց ու բոլոր բարեկամաց ողջունել: Չմոռանաք ֆոտոգրաֆիայն, հա՛...» (Հայկական ՍՍՌ՝ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, անհատական արխիվների ֆոնդ, թղթ. № 185, վավ. 2):

Ղարաբաղի հոգևոր դպրոցի տեսչի օգնականի պաշտոնում Պոռշյանը երկար չի մնում: Էջմիածնի հոգևոր Սինոդի 1864 թ. դեկտեմբերի 9-ի արձանագրությունից տեղեկանում ենք այն մասին, որ նույն թվականի հուլիսի վերջերին Պոռշյանն ազատվել է այդ պաշտոնից (Տե՛ս Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Սինոդի օրագրություններ, թղթ. № 63, վավ. № 267):

Ժամանակով հաջորդ փաստաթուղթը Պոռշյանի մասին Պետ. Մատենադարանի արխիվում պահպանվել է 1868 թվականից: Հայտնի է, որ 1867 թ. նա նշանակվել է Ազուլիսի հոգևոր դպրոցի տեսուչ. այստեղ Պոռշյանի ձեռնբեցությունը բացվել է աղջկանց դպրոցը և նա կարճ ժամանակում մեծ հեղինակություն է ձեռք բերել ու արժանացել ժողովրդի համակրանքին: Սակայն նրա արդյունավետ աշխատանքը Ազուլիսում երկար չի տևում:

1867 թ. աշնանը Ազուլիս է այցելում Մեսրոպ վարդապետ Սմբատյանը և լսելով Պոռշյանի դասերը Ազուլիսի հոգևոր դպրոցում, ընդարձակ մի ամբաստանագիր է հղում Էջմիածնի Սինոդին, մեղադրելով Պոռշյանին որպես «ներհակ ըստ ամենայնի ողջամիտ քարոզութեանց աւետարանական ճշմարտութեանց»: Մ. Սմբատյանը հայտնում է, որ Պոռշյանը «ի հրապարակս և ի տունս բնակչացն» առանց քաշվելու պախարակում է մեր եկեղեցու ձեռքերը, արարողություններն ու դավանանքը և հայտնում, որ «մեր ընկերութեան գիտաւորութիւնն այն է, զի բազմացուցանելով զաշակերտս՝ կարասցում բառնալ յաշխարհէ զհոգևորականութիւնն իսպառ» (ընդգծումը մերն է — Ա.Ա.):

Քննարկելով Մեսրոպ վարդապետ Սմբատյանի ամբաստանագիրը Էջմիածնի Սինոդը 1868 թ. հունվարի 20-ի իր նիստում որոշում է առանց հատադման վճռել Պ. Պոռշյանին Ազուլիսի դպրոցից: Սինոդականները անհրաժեշտ են դտնում հատուկ նշել, որ եթե Պոռշյանը շենթարկվի սինոդի որոշմանը, ապա նրան վճռելու գործը կիրականացվի «ի ձեռն քաղաքական իշխանութեան»: Նկատի ունենալով Սինոդի արձանագրության կարևորությունը, ստորև մեջ ենք բերում այն առանց կրճատումների.

«Ի 20 յունվարի 1868 ամի, ըստ հրամանի նորին Կայսերական Մեծութեան ի Սինոդիս սրբոյ էջմիածնի լուան զյայտարարութիւն նախկին յաջորդի թեմին հայոց նախիջևանու Մեսրովր վարդապետի Սմբատեանց ի 1 դեկտեմբերի անցեալ ամի համարաւ 27, յորում գրի թէ համաձայն հրամանագրութեան Կոնսիստորիային նրեանայ ի 10 յուլիսի անցեալ ամի համարաւ 814 հիմնեցելոյ ի վերայ հրամանագրութեան Սինոդիս ի 23 մայիսի նոյն ամի համարաւ 813, մինչ շրջագայէի ի վանորայս թէմին նախիջևանու սակս ստորագրութեան շինուածոց, գրութեանց նոցին և արձանագրութեանց, ի թիւս որոց զնացի նաև ի վանս սրբոյն Թովմայի առաքելոյ, որ յԱզուլիս գեղջ Գողթան գաւառակի, ուր յետ զհարկաւորսն եղբրելոյն՝ ապա ըստ սեպուհ պարտաւորութեանս և կոշմանս՝ հարկ եղև ինձ ելանել յայցելութիւն նորահաստատ հոգևոր դպրոցի տեղ-

ւոյն, որ ի պարսպի վանիցս և ի վերանկատելն իմ դարտաքին և զներքին կարգ
 գալրոցին՝ դարտաքինն միայն տեսի շքեղ զձև շինուածոցն, այլ թէ զինչ զներ-
 քին գործոց նորին՝ ասացից, գործք՝ որք գործէին յանբարոյական ունակութենէ
 տեսչի գալրոցին այնմիկ ի Պոռչեանցէ, ասեմ Աշտարակեցւոյ, էին ներհակ ըստ
 ամենայնի ողջամիտ քարոզութեանց աւետարանական ճշմարտութեանց, որպէս
 ևս տեսի ի ժամ դասախօսութեան ի կրօնական մասունս: Սրբազան Տեարք,
 միթէ՞ հնար է, որոց միտք և կամք մշակեալ են շար և վատթար սովորու-
 թեամբք զբարեբեր սերմունս սերմանել յանդաստանս մտաց տղայ աշակեր-
 տելոց, մանաւանդ՝ երբ կամք է տեսչին պատրել և հրապուրել զազանաբարոյ
 մանկտիս ի զգալի հեշտութիւնս փափկութեանց (ազատութիւն վերածայնելով)
 և ընդ նմին վերընծիւղեցուցանել զարմատն անիծից՝ զազանդն ասեմ Շան-
 շիական, որ իրոք երբեմն վերընծիւղեցաւ անդ ի Ղարաբաղ, և աճեցուցանելով
 զնոյն ի ժամանակի՝ կարիցէ յառաջ մղել զխաւարային կամս իւր ընդ համա-
 նմանեացն իւրոց՝ առ խաւարային շար դիտմունս, զորոյ զկարծեցեալ փորձն
 տեսի հաւաստեաւ, զի ի հրապարակս և ի տունս բնակչացն յայտնապէս պա-
 խարակէր զծէսս և զարարողութիւնս ողջամիտ դաւանութեանց մերս Հայաս-
 տանեայց սուրբ եկեղեցւոյ, և զզուխ և զանդամս նորին, որք են Հայրապետն
 և համայն լրութիւն հոգևորականութեանս, աւանց խնայելոյ պատուոյ մեծի
 և փոքու անդուն բերանով անգոսնէր առաջի պարզամիտ ժողովրդոց տեղւոյն,
 նաև արատաւորելով զփառաւոր անուն տաճարին աստուծոյ Կաթուղիկէ մայր
 աթոռոյ սրբոյ էջմիածնի, սպառնայր անգամ չիմում ներկայութեան և բազմաց
 թէ «մեր ընկերութեան դիտաւորութիւնն այն է, զի բազմացուցանելով զաշա-
 կերտս կարասցուք բառնալ յաշխարհէ զհոգևորականութիւնն իսպառ»: Որպէս և
 արդէն իսկ խրատեալքն ի նմանէ ընդդիմանային տալ զնախնաւանդ հոգևոր
 տուրս յանուն սրբոյ էջմիածնի: Սրբազան Տեա՛րք, շեն զանխուլ ի Զէնչ բարո-
 յական ասացուածք իմաստանոց, թէ «Որ յառողջէն դիւրաւ չբժշկեսցի ախտա-
 ցեալն, բայց յախտացելոյն դիւրաւ ախտանայ առողջն»: Այսպէս ևս բնութիւնք
 տղայականք գոլով հակամէտ ի զգալի հեշտախտութիւնս աշխարհի, դիւրաւ ընդ
 նմին և տպաւորին ի չիշողականութեան իւրեանց զվնասառիթ ասացուածս շար
 խրատատուաց, և փութով խանդարել զբարոյականութիւնս, և առ ի արմատա-
 խիլ առնելոյ զայնս ի մտաց նոցին կրկին և շորեքկին տարօրինակ աշխա-
 տութեանց և հոգևոր մշակութեանց պէտք են անյուհետև: Վասն որոյ խնդրեմ
 ի բարձրագոյն Ատենէդ իրրև տէր և պաշտպան իրաւանց և փառաց ազգի և
 անդրդուելի եկեղեցւոյ Հայաստանեայց, այժմէն իսկ փութացուցանել զկարեկ-
 ցական և զհարկաւորն տնօրէնութիւն, առ ի զառաջս առնելոյ անկարգութեանց
 և բարբաջմանց յառաջացելոյ ի Պոռչեանցէ և ի հետևողաց նորին, զի մի ըստ
 առաքելոյն բանի դժոխային փոքր ինչ հրովն կարիցեն հրդեհել զամենայն ան-
 տառս բանաւոր տնկոցն՝ պարզամիտ հայ բնակչացն ասեմ զաւառակին Գողթ-
 նեաց, կամ խմորով շարութեան իւրեանց՝ խմորեալ յանդունդս թերահաւատու-
 թեան ընկղմեսցին, որպէս մերձ ընդ մերձ է արդէն:

Հրամայեցին. ի վերայ ամենայն ցանկութենէ հոգևոր տեսչութեան, զի
 զպրոցն վերին Ազուլեաց ըստ բարեմիտ նպատակի հաստատողացն և մատա-
 դատի մանկունք, ուսանողք ի նմին, զարգասցին ի դպրութիւն ի պարծանս
 լրութեան ազգիս և ի պայծառութիւն եկեղեցւոյն, ցաւալի է յոյժ ապաքէն լսել
 և տեսանել ի նմին զդաստիարակս զառածեալս մուրամիտ վարդապետու-
 թեամբ ընդդէմ սրբութեան ծիսից և արարողութեանց հայրենի եկեղեցւոյն մե-

րոյ և միանգամայն ի բանս ազատամիտ քարոզութեան, որոց զշարանիւթ խարդաւանանցն զհետ զակատեալ հարկաւ և մանկուտչն ընդ զեղեցիկ պատրուակօք հրահանգութեանն, խոտորեացին ի շարիս և ի մոլորութիւնս աններելիս ոչ միայն ի կրօնական, այլ և ի քաղաքականս: Յայս դարովելի գործ յանդիմանեալ գոլով բազմիցս ոչ միայն ըստ ականատես և ականջալուր բանից Մեսրոպ վարդապետի, այլ և հաւաստեօք բազմօք յուսումնարանի Ազուլեաց, ի Շուշի և յայլ տեղիս ի պաշտօնի վարժապետութեան Պոռշեանցն, զորմէ բողոքաւոր կայ վարդապետն, և կոնդակաւ հանգուցեալ կաթողիկոսին Մատթէոսի հրաժարեցուցեալն ի դպրոցէն Ղարաբաղայ, համարելով Սինոդիս անհնարին ունիլ ի դպրոցի անդ՝ հրաւիրել զբարեպաշտ հասարակութիւնն վաղ ընդ փոյթ հեռացուցանել զնա ի դպրոցէ անտի իբրև վտանգաւոր ոք և խարդախամիտ դաստիարակ, և փոխանակ նորա կարգեալ զայլ ոք, որ բարեբարոյութեամբ, քաջագէտ հմտութեամբ և ողջամիտ կրօնիւք զմանկտիս կրթեսցէ ի դպրութիւն, յաւելլով, թէ եթէ յառաջ դայցէ սմին առաջադրութեան անակնկալ իմն դիմադարձութիւն, յորոյ և իցէ կողմանէ, որում շուսայ բնաւ Սինոդս հանդիպիլ, իշխանութիւնն ստիպեալ դոցի յայլ միջոց խստութեան լինել ձեռներէց առ ի տարամեթել անտի զՊոռշեանցն ի ձեռն քաղաքական իշխանութեան» (Պետ. Մատենագարան, Սինոդի օրագրություններ, թղթ. № 73, վավ. 59):

Ազուլիսի դպրոցի տեսչի պաշտօնից Պոռշյանի հեռացման մասին Սինոդի որոշումը մեծ վրդովմունք է առաջացնում Ազուլիսում: Դպրոցի հոգաբարձութեան անգամները 1868 թ. մարտի 24-ին կաթողիկոսին դիմում են՝ ուղարկում, որի մեջ բարձր են գնահատում Ազուլիսի մանուկների դաստիարակման գծով Պոռշյանի կատարած աշխատանքը, Մեսրոպ Սմբատյանին համարում են զբնականաբար և խնդրում են Ազուլիս ուղարկել անկողմնակալ մի քննիչ, Պոռշյանի նկատմամբ արդարացի որոշում կայացնելու համար:

«Պոռշյանցն...,— գրում են հոգաբարձուները,— թե ինչքան օգտավետ է եղել մեր ուսումնարանացը և թե ինչ աշխատություններ է ունեցել, մենք արդեն սրանից հառաջ երկու խնդիրների մեջ՝ մեկը հոգաբարձուաց և վարժապետաց ընտրութեանն և մյուսն այս վերջինիս հետ հայտնել ենք, այլ այս նամակավսցանկանում ենք դարձյալ Ձեր հայրութեան քաղցր կարեկցութեանը դեպ ի մեզ և ինչպես ժողովրդյան խնդրի մեջ գրել ենք՝ խնդրել մի օրինավոր քննութեան այս բանի մասին...» (Պետ. Մատենագարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 206, վավ. 2043):

Ազուլիսի հայ հասարակութեան դիմումներն անհետևանք են մնում. կաթողիկոսը ուժի մեջ է թողնում Պոռշյանի նկատմամբ Սինոդի կայացրած որոշումը: 1868 թվականի սեպտեմբերի 2-ի իր նիստում Սինոդը հանում է Պոռշյանին «հոգևոր անաշուքութեան», այսինքն՝ գրկում է նրան պետական հարկերից որպես եկեղեցական ազատ լինելու արտօնութեանից և հրահանգում է Ռուսաստանի բոլոր եկեղեցական թեմերին շքանշանել Պոռշյանին հոգևոր որևէ դպրոցում ուսուցչութեան:

Սինոդի այդ որոշումը նույնպես առանց կրճատումների տալիս ենք ստորև.

«Ի յ2 սեպտեմբերի 1868 ամի,— գրում է Սինոդը,— ըստ հրամանի նորին Կայսերական մեծութեան ի Սինոդիս լուսն զգեկուցումն՝ ըստ հասեալ ի Սինոդս և առ վնհափառ կաթողիկոսն ամենայն Հայոց բողոքանաց զորդոյ շորս աստիճանաւորի Աշտարակեցի Տովհաննիսէ Պոռշեանց վասն ոչ պարապելոյ

նորա յեկեղեցական սպասարկութեամբ և խոտվարար բնաւորութեանց, որ ծառայելով ի հոգևոր ուսումնարանս ուսուցչութեամբ, յարուցանէ միշտ զվէճ և զազմուկ ևս և տարածանէ զանվայէլ լուրս ընդզէճ հոգևորականութեան հայոց, Սինոդս բարեհաճութեամբ Նորին Վեհափառութեան ենթադատի ի բաց հանեալ զյիշատակեալ Պոռշեանցն ի հոգևոր տեսչութենէ և դասել ընդ հարկատուս։ Ուստի և հրամայեցին՝ պատուիրել կոնսիստորիային Երևանայ ի պատճառս անվայել և անպատշաճ կենցաղավարութեանց Պոռշեանցի և ոչ պարապելոյ նորա յեկեղեցական սպասահարկութիւնս, իբրև աւելորդ ի հոգևորականութեան՝ հանել զնա ի հոգևոր տեսչութենէ և դասել ընդ հարկատուս, և զայսմանէ հրատարակել ընդ ամենայն թէմս Հայոց Ռուսաստանի շրջաբերական հրահանգութեամբք վասն ոչ ճանաչելոյ զնա հոգևորական և ոչ թոյլատրելոյ նմա պարապել ուսուցչութեամբ ուր և իցէ հոգևոր ուսումնարանս» (Պետ. Մատենադարան, Սինոդի օրագրութիւններ, թղթ. № 75, վավ. 3):

Մանկավարժության ասպարեզից իրեն հեռացնելու կապակցութեամբ կաթողիկոսին դիմել է նաև ինքը՝ Պ. Պոռշյանը։ 1870 թ. հունիսի 14-ին գրած դիմումի մեջ իր նկատմամբ Սինոդի հանած վճիռը համարելով անարդարացի Պոռշյանը խնդրում է բեկանել այն։ Նա գրում է. «Անցյալ տարվան Սինոդի վճիռը իմ դեմ հոգևորականութիւնից արձակելու մասին առանց իմ գիտակցության եթե իրավացի ևս լիներ իմ եկեղեցական սպասավորութիւն շանկուս պատճառով, դոնե նույն հրամանագրի այն խոսքերը, ուր գուրս է բերած ինձ բոլորովին իբրև մի վատ և խոտվասեր վարուց տեր և արգելվում է ինձ ուսուցչութիւն առնել որևիցև ազգային դպրոցներում, ստիպում են ինձ դիմել Ձեր վեհափառութեան բարեհաճ տնօրինութեանը և խնդրել հայրաբար ուշ դարձնել Սինոդի այն հրամանագրի դեմ։

Ես, Վեհափառ Տեր, շնայեցյալ որ ոչինչ պատճառ չեմ գտնում Սինոդի այն իմ դեմ հանկարծ հրատարակած շրջաբերականի մասին, սակայն և այնպես դիցուք թե արժան ևս լինեի այն հարվածին, այնուամենայնիվ թեթև պատժո ենթարկվելու էի սրբազան Ատենի կողմից և այն առանձնապես իմ անձին վերաբերյալ և ոչ թե այնպիսի դատապարտության, որով կտրվեր ինձպես մի երիտասարդի ընտանյաց ապագա ապրուստի ճանապարհը, երիտասարդի, որը բացի յուր գործունյա երկու ձեռքից և մտքից չունի յուր ընտանյաց պիտույքը հոգալու ո՛րքիչ հնարք, զորօրինակ հայրենական ժառանգութիւն, հարստութիւն և այլն...» (Պետ. Մատենադարան, Սինոդի կարգադրիչ մաս, թղթ. № 138, վավ. 125, էջ 1):

Ապարդյուն դիմումներ արվում են և հետագայում։

1872 թ. գեկտեմբերի 30-ին Թիֆլիսից Գևորգ Դ կաթողիկոսին ուղղած դիմումի մեջ Պոռշյանը գրում է.

«Յանկալով դասատվութիւն առնել Ռուսաստանի հայոց ազգային հոգևոր ուսումնարաններում և շունհնալով դորա համար առանձին արտոնութիւն, ամենախոնարհաբար խնդրում եմ Ձեր աստվածարյալ օծութիւնից, քաղցր ակնարկութեամբ հայիլ իմ այդ սուրբ պաշտոնի մեջ երկար ժամանակյա արած ծառայութեանցս, հայրաբար բարեհաճել տալ ինձ իրավունք այսուհետև ևս շարունակել ուսուցչական պաշտոն ամենայն ազգային հոգևոր ուսումնարաններում, ուր հարմարութիւն և հնարավորութիւն կլինի ինձ այդ մասին, որով սրբազնասուրբ Հայրութեանդ նվաստ ծառայն և որդին ստանալով յուր արդարադատ և զթասիրտ Հորից այդ իրավունքը իբրև վարձատրութիւն յուր

այս ճանապարհի մեջ կրած ամենայն գովարտությանցը, հավիտյանս պարտավոր կհամարի իրեն յուր ամենայն գործառնությունց մեջ անմոռաց ունենալ բարերար Հորդ այս արդար սխրագործությունը և օրհնել պատճառդ իրեն կրջանկություն» (Պետ. Մատենադարան, Սինոդի կարգադրիչ մաս, թղթ. № 138, վավ. № 125, էջ 2):

Պ. Պոռշյանի մանկավարժական իրավունքները վերականգնվում են մի քանի տարի ձգձգումներից հետո միայն: 1876 թ. վերջապես կաթողիկոսը տալիս է իր համաձայնությունը՝ Պ. Պոռշյանին Աստրախանի հոգևոր դպրոցում ուսուցիչ նշանակելու մասին:

Այդ առթիվ կաթողիկոսը 1878 թ. մարտի 27-ին Աստրախանի թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյանին գրում է.

«...Առ յայտարարութիւն ձեր յԳ-ն մարտի ընդ համարաւ 85, որ յաղագս թաղական հեռարնակ ժողովրդականաց՝ զմերս յայտնեմք զկատարեալ հաճութիւն և զսրտեռանդ գոհութիւն, իսկ առ գործոյն վաղ ընդ փոյթ յառաջատութիւն ձերումդ խոհական տնօրէնութեան յանձն առնեմք զբացումն և զկարգումն ի նմա Պերճն Պոռշեանցն կամ զայլ որ ի պաշտօն ուսուցչութեան, միայն զի դպրոցն այն յաւտ գտանիցի ընդ աշալուրջ հսկողութեամբ ձերով և առանձին բարեխնամ հովանաւորութեամբ...» (Պետ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 205, վավ. 1664):

1879 թ. կաթողիկոսի կարգադրությամբ Պ. Պոռշյանը նշանակվում է Երևանի թեմի երկսեռ դպրոցների տեսչի օգնական: Այդ մասին էջմիածնի Սինոդը 1879 թ. մայիսի 18-ին կայացրած որոշման մեջ արձանագրել է.

«Ի Սինօդիս լուան. վեհափառ կաթողիկոսն ամենայն հայոց առանձին կոնդակաւ բարեհաճեալ է նշանակել զՊերճն Պոռշեանցն օգնական թեմական տեսչի համայն երկսեռ դպրոցաց հայոց Երևանայ թեմի և ըստ որում վասն ոռճկի նորա հարկաւոր է առնել զկարգադրութիւն, վասնորոյ և հրամայեցին ի ոռճիկ օգնականի թեմական տեսչի պարոն Պոռշեանցի նշանակել հանդերձ ճանապարհածախուքն զ1200 բուրլի ի տարին, զորս մասնատրել այսպէս՝ ի հոգևոր երկսեռ դպրոցաց հայոց Ալեքսանդրապօլու պահանջել 200 ուրլի, և Ղփչաղու վանից 80 բուրլի, Սևանայ վանից 100 բուրլի, յերկուց յեկեղեցեաց Նոր Բայազետու 60 բուրլի, ի սուրբ Գէորգայ վանից Մոզնոյ 30 բուրլի, երկսեռ դպրոցաց Իգդիրու 50 բուրլի, ի թեմական դպրանոցէն Երևանայ 100 բուրլի, ի Գեղարդայ վանից 50 բուրլի, ի Խորվիրապայ վանից 50 բուրլի, յերկուց եկեղեցեաց Հին Նախիջևանայ 60 բուրլի, ի Կարմիր վանից 30 բուրլի, յԵրնջակու սուրբ Կարապետի վանից 60 բուրլի, յերկսեռ դպրոցաց Ագուլեաց 100 բուրլի, ի սուրբ Խաչի վանից Գարալագեաղու 30 բուրլի, ի Տաթևու վանից 100 բուրլի, ի ծխական դպրոցէն Նորքայ 25 բուրլի, ի ծխական դպրոցէն Ղարաքիլիսու, որ ի գաւառին Ալեքսանդրապօլու 25 բուրլի, յեկեղեցուցն Քանաքեռայ 15 բուրլի, յեկեղեցուցն Նորագաւթի 15 բուրլի և յեկեղեցուցն Ալափարսայ 20 բուրլի, որոյ վասն և հրամանագրել Հոգևոր կառավարութեանցն Ալեքսանդրապօլու, Նախիջևանայ, Տաթևու տեղական գործակալաց, վանահարց և կոնսիստորիային Երևանայ, զի առանց որոյ և եղէ պատճառաբերութեանց ընդ փոյթ պահանջեսցին զնշանակեալ գումարսն ի հոգաբարձուաց տեղական դպրոցաց, յեկեղեցեաց և վանահարք հանեալ ի տեսչութեան իրեանց գտանեցեալ վանքական արդեանց միանուագ և փութով մատուցին սինօդիս վասն պահպանելոյ ի գանձարանի Աթոռոյս և յամսոյ յամսի տալոյ ի գումարաց անտի զնշանակեալ

ոռճիկ օգնականի տեսչին, իսկ գանձապահի Աթոռոյս պատուիրելի ի 1-ն մա-
յիսի տալ օգնականի տեսչի յամսոյ ամիս զհարիւր բուրլի՝ գրելով ի ծախս վի-
ճակապատկան արդեանց ընդ ստորագրութեամբ նորա ի մատենին:

Երկրորդ՝ դնել պարտաւորութիւն ի վերայ օգնականի տեսչին, զի նա ան-
ձամբ շրջագայելով ի քաղաքս և ի գիւղօրայս, բարեկարգեացէ զերկսեռ հոգևոր
դպրոցսն Հայոց, և ուր ուրէք նկատեսցէ զանհրաժեշտ հարկաւորութիւն ծխա-
կան դպրոցաց՝ բացէ առ եկեղեցաւ տեղւոյն, և եթէ գացի ի տեղւոջն ընդունակ
քր ի քահանայից կամ ի դպրոցաց (սի՛ւ) եկեղեցւոյն նշանակեսցէ ուսուցիչ ի
տեղական դպրոցսն առանց տեղափոխելոյ, զմիւս ծխական քահանայս պար-
տաւորեսցէ հովուել զծուխս միւս քահանային, որ լինելոց է կամ պարապելոց
է ուսուցչական պարտաւորութեամբ, այնու զի ի գոյանալի տարեկան արդիւնք
ի ծխական ժողովրդոց դասատու քահանային բաժանեսցեն յերիս մասունս՝
երկուսն դասատու քահանային և մէկ մասն հովուող քահանային:

Երրորդ՝ ծախսարարի գիւանատան Սինօղիս պատուիրել տալ երեք ամսոյ
երեք ամիս վերոյիշեալ օգնականի թեմական տեսչի զպատուարժանաց (՞)
գործով ծառայութեան վասն անարգելք շրջագայելոյ նորա ի թէմին Երևանայ
և ի նահանգին Կարուց ըստ պարտուց պարտաւորութեան իւրոյ, իսկ ի նահան-
գապետէն Երևանայ խնդրել տալ նմա զբացարձակ գիր (ատկրիտիյ լիստ) առ
ի անվնաս և անարգելք երթեկելոյ նորա ի զանազան գիւղօրայս և ի քաղաքս
Երևանայ նահանգի գործով ծառայութեան: Զայսմ տալ տեղեկութիւն թեմական
տեսչի բարեշնորհ Կարապետ վարդապետի կոնսիստորիային Երևանայ և հո-
գևոր կառավարութեանց և գործակալաց վասն կարևորն գործակցութեանց և
ձեռնառութեան վերոյիշեալ օգնականի տեսչին և ի կատարման օրինաւոր պա-
հանջից նորին: Իսկ զբաղուած օրագրութեանս տալ ի հաշուարարական մասնդ
Սինօղի վասն պահանջելոյ ամ ըստ ամէ ի վերոյիշեալ տեղեաց զնշանակեալ
գումարս տարեկան ոռճիկ օգնական թեմական տեսչի և այնու բաւարարելոյ
զնա ըստ կարգին» (Պետ. Մատենադարան, Սինօղի հաշվարարական մաս,
թղթ. № 21, վավ. 26, էջ 1):

Մինչև 1880 թ. Պոռշյանը աշխատում է Երևանի թեմական տեսչի օգնա-
կանի պաշտոնում, իսկ 1881 թվականին նրան նշանակում են Երևանի և Կարսի
թեմական դպրոցների վերատեսուչ:

1881 թ. օգոստոսի 21-ին Պոռշյանը դիմում է կաթողիկոսին այսպիսի
գրութեամբ. «Ընդարձակութիւն վիճակիս և սակաւութիւն ստացեալ ոռճիկս ան-
հարինս կացուցանեն զիս օրինաւորապէս կատարել զպաշտօն թեմական
տեսչութեան: Ուստի այսու դիմեալ առ սրբազնասուրբ վեհափառութիւն Զեր
ամենախոնարհորէն խնդրեմ զանօրէնութիւն բարեհաճ կամացդ ի յաւելուլ
զնիւթական միջոց իմ, որպէսզի կարացից բարեխղճութեամբ ծառայել ազգա-
սէր նպատակի ուսումնասէր Զօրդ ազգիս...»: (Պետ. Մատենադարան, Սինօղի
ուսումնական մաս, թղթ. № 1, վավ. № 23ա):

Գյուղական դպրոցների ծանր տնտեսական վիճակը շատ է զբաղեցրել
Պոռշյանին: 1883 թ. մարտի 28-ին էջմիածնի Սինօղին նա ներկայացրել է մի
զեկուցագիր, որտեղ հենվելով Կարսի վիճակի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս
Ազվանյանցի հաղորդած տվյալների վրա՝ գրում է.

«Կարսի դպրոցների տխրալի լուրերի մասին պատասխանում ենք, որ
նորա ճշմարտապես վտանգավոր և հոգեվարք գրութեան մեջ են նյութական վի-
ճակի պակասութեան պատճառով, որովհետև նորա ոչ մի եկամտի աղբյուր չու-

նեն, նույնպես և ոչ տեղական եկեղեցին, որ կարողանա օգնել նրանց, մինչև այսօր նրանք կառավարվում էին, ճիշտ ասելով «բոշալուսթյունով»: Այդ օրինակ ձևին անպատճառ մի օր վերջ կուզար, որ ահա հասել է: Աշակերտք և անհրաժեշտ պետքերը հեղահետե ավելանում են, իսկ կառավարելու միջոցները պակասում: Տեղական ժողովուրդը, գովեստյուք ասելով, անտարբեր չէ դեպի յուր ազգային դպրոցները, բայց դժբախտաբար յուր նյութական վիճակը չի համապատասխանում յուր զգացմունքին, սրովհետև բոլորեքյան զանազան քաղաքներից գաղթած աղքատ ժողովուրդներ են: Եթե սկզբում օտար քաղաքացիք չօգնեն և կամ ուրիշ միջոց չլինի տեղվոցս ուսումնարանների պահպանության համար, կփակվեն նոքա: Բայց և Կարսում գոնե այժմու ձևով մի ուսումնարան չունենալը խիստ անպատվություն և վտանգավոր է ազգիս» (Պետ. Մատենադարան, Սինոդի անտեսական մաս, թղթ. № 20, էջ 195):

Շուրջ յոթն տարի վարելով Երևանի և Կարսի հոգևոր դպրոցների տեսչի պաշտոնը Պոռշյանը եռանդուն և անդադրում աշխատանք է տանում գյուղական դպրոցներ բացելու, կալվածքներով և այլ արդյունքներով այդ դպրոցների գոյությունը տեղական դարձնելու և բանխմաց-ուսումնասեր հոգաբարձուներ ընտրելով առկա դպրոցների վիճակը բարվոքելու ուղղությամբ:

Նրա գործունեության այս կողմը լուսարանող մի շարք փաստաթղթեր են պահվում Մատենադարանի արխիվային բաժնում: Դրանցից է, օրինակ, 1883 թ. մարտի 20-ին Սինոդին ուղղված հայտարարությունը, ուր ասված է. «Ժողովրդական ճաթղոսան գեղջ վիճակին Կոսէից յանցելում աշնան յորդորմամբ իմով վճռեցին ունել զծխական հոգևոր դպրոց և կազմեցին առ այս վախճան զհոգաբարձութիւն և ի մասնաւոր տան շարունակեն զուսումն՝ խնդրեալ չինէն զվարժապետ:

Արդիս նոքին իսկ ճաթղոսանցիք կամին կառուցանել աւրնթեր եկեղեցւոյն գտուն ուսումնարանական և ընդ ձեռն հոգաբարձութեան դիմեալ առ իս խընդրեն զբաւոր զմիջնորդութիւն իմ յազազս թոյլատրելոյ ինքեանց ի գործ դնել զերկու հարիւր մանէթ եկեղեցական դրամսն:

Պատիւ ունիմ յայտ առնել Ատենիդ, թէ ամենուրեք եկեղեցական դրամագլուխ գիւղօրէից գտանին յանապահով վիճակի առ զանազան անձինս և բազմիցս առ այնպիսիս՝ յորոց չէ հնար ստանալ և զոչինչ, յորմէ և յառաջ գայ ընդհանուր կորուստ դրամոց: Լաւ էր, ուրեմն, ըստ իմ կարծեաց, յայսպիսի յաջող դիպուածս օգտիլ տրամադրութեամբ ժողովրդականաց և առանց յետաձգութեան յուսումնակարօտ տեղիս թոյլ տալ ի գործադրութիւն, մանաւանդ յայնպիսի յետանկեալ գիւղօրայս, որպիսին է ճաթղոսան ի խուլ անկեան իրիք գաւառին՝ հարիւր և յիսուն տուն հայ բնակչօք թարթափեալ ի խաւարի տգիտութեան:

Խնդրեմ զփութանակին անօրէնութիւն ծայրագոյն հոգևոր իշխանութեանդ, մինչ եռանդ ուսումնասիրութեան վառեալն ի ճաթղոսանցիս չէ շիջուցեալ և մինչ լեռնային եղանակ տեղւոյն խոշընդակ կայ երկրագործական պարապմանց բնակչացն» (Պետ. Մատենադարան, Սինոդի անտեսական մաս, թղթ. № 114, վավ. № 20, էջ 189)¹:

¹ Գյուղական դպրոցների բացման, նրանց անտեսական վիճակի, հոգաբարձության ընտրության հարցերի մասին Պոռշյանի գրած հայտարարություններից նշենք նաև հետևյալները.

ա. 1883 թ. մայիսի 22-ին Ալեքսանդրապոլի շրջանի Ղբմզու գյուղի հասարակու-

Երևանի և Կարսի ծխական դպրոցների վիճակը ուսումնասիրելու համար զգալի հետաքրքրություն են ներկայացնում նաև Պոռշյանի կողմից իր տեսչության տարիներին էջմիածնի Սինոդին ներկայացված տեղեկագրերը: Հատուկ արժեք ունի 1883—1884 ուս. տարվա տեղեկագիրը, որտեղ ճշգրիտ ավյալներ կան Երևանի և Կարսի նահանգների բնակավայրերի, նրանցում եղած ծխական դպրոցների քանակի, նրանցում ուսանող արական և իգական աշակերտների թվի, ազգություն, սոցիալական կազմի, դպրոցների եկամուտների ու ծախսերի և ուսուցիչների (անուն-ազգանվան և ցենզի նշումով) մասին:

Հետ այդ տեղեկագրի Երևանի և Կարսի նահանգներում 1883/84 ուս. տարում եղել է 103 արական դպրոց՝ 5988 աշակերտով և 14 իգական դպրոց՝ 763 աշակերտով: Ուսուցիչների թիվը եղել է 186, ուսուցչուհիներինը՝ 26: Տեղեկագրի ընդարձակ ծավալը նկատի ունենալով հնարավոր չենք համարում մեջ բերել այն սույն համառոտ հաղորդման մեջ. հետաքրքրվողը կարող է դիմել ձեռագրին, որը պահվում է Մատենադարանի Արխիվային բաժնում (տե՛ս Պեա. Մատենադարան, Սինոդի ուսումնական մաս, թղթ. № 1, վավ. 46—48):

Նույն այս տարիներին Պոռշյանը զգալի աշխատանք է տարել նաև պատմական հուշարձանների պահպանության, վերանորոգման և նրանց կից դպրոցներ բացելու գծով: Հայտնի է, որ այդ կարգի աշխատանքները իրագործվում էին բարեգործական և կամավոր ընկերությունների ջանքերով ու միջոցներով: 1883 թ. մարտի 28-ին Պոռշյանը հատուկ գրությունը դիմում է էջմիածնի Սինոդին և խնդրում հաստատել Ալեքսանդրապոլում կազմակերպված «Մարմաշենի բարեգործական ընկերության» կանոնադրությունը: Նա հայտնում է, որ «Ընկերությանն շնորհիւ բաւականին վերանորոգութիւնք տեսանին յաւերակ վանս Մարմաշէնու և նորաբաց դպրոց տեղւոյն յառաջ ընթանայ ըստ կարելոյն» (Պեա. Մատենադարան, Սինոդի անտեսական մաս, թղթ. № 114, վավ. 20, էջ 215):

Պ. Պոռշյանի մասին Մատենադարանում պահվող փաստաթղթերից շատերում ուշադրով ավյալներ կան նշանավոր վիպասանի անտեսական ծանր կացության մասին: Լինելով մեծ ընտանիքի հայր Պոռշյանը տարիներ շարունակ խարխափել է չքավորության մեջ և ուժերի հսկայական լարումով միայն կարողացել է շարունակել գրական իր աշխատանքները:

Այն աստիճանի ծանր է եղել նրա վիճակը, որ նա մինչև 1884 թվականը չի կարողացել վճարել տարիներ առաջ Թիֆլիսի պետական հիվանդանոցում

թյանը ուղղած գրությունը նոր կառուցվելիք դպրոցի տեղի և կառուցման միջոցները հավաքելու համար ժողովինյալ ամսար տալու մասին (Պեա. Մատենադարան, Սինոդի ուսումնական մաս, թղթ. № 2, վավ. № 63):

բ. 1883 թ. հոկտեմբերի 2-ին Սինոդին ուղղած զեկուցագիրը Համաձայն գյուղի համայնքի կողմից գյուղի դպրոցին մի հովիտ նվիրաբերելու մասին (Պեա. Մատենադարան, Սինոդի անտեսական մաս, թղթ. № 114, վավ. № 20, էջ 214):

գ. 1884 թ. մարտի 23-ին Սինոդին ուղղած զեկուցագիրը, որով խնդրում է հաստատել Օշական և Քանաքեռ գյուղերում ընտրված դպրոցի հոգաբարձուներին (Պեա. Մատենադարան, Սինոդի ուսումնական մաս, թղթ. № 2, վավ. 63, ընդ և 63 ընդ):

դ. 1884 թ. հոկտեմբերի 22-ի զեկուցագիրը Բղզիբի երկսեռ դպրոցի հոգաբարձության ընտրության մասին (նույն տեղում, թղթ. № 1, վավ. 45 ժէ):

ե. 1884 թ. նոյեմբերի 24-ի զեկուցագիրը Ազուլիսի դպրոցի հոգաբարձության ընտրության մասին (նույն տեղում, թղթ. № 1, վավ. 45 ԼԲ) և այլն:

բուժվելու համար նրանից պահանջվող 26 ուրբի 40 կ. վճարը (այս մասին տես Պետ. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. № 235, վավ. 83):

Նդել են պահեր, երբ նա, այլ ելք չգտնելով, հաղթահարելով ինքնասիրությունը, խնդրագրեր է հղել կաթողիկոսին և նկարագրելով իր անտեսական վիճակը՝ խնդրել է նկատի ունենալ իր բազմամյա գրական ու ուսուցչական ծառայությունները և իրեն կենսաթոշակ նշանակել:

Այդ կարգի փաստաթղթերից կենսագրական հարուստ և արժեքավոր տվյալներ է պարունակում 1895 թ. հունվարի 28-ին Թիֆլիսից Խրիմյան հայրիկին ուղարկած դիմումը, որը աննշան կրճատումներով մեջ ենք բերում ստորև.

«Նկել, հասել է ժամանակը,— գրում է Պոռոշյանը,— երբ հարկ է ինձ լըրջորեն մտածել իմ մութն ապագայի վերա:

Վաղահաս ծերությունս և նրանից հառաչացած պարբերական հոգացավը, և որ գլխավորն է՝ բազմաթիվ գեռահաս և ուսումնատենչ դավալներս՝ անել են տալիս ինձ այդ քայլը:

Հասակս թեև դեռ չի հոլովվել դեպի խորին ծերությունը, բայց քառասնամյա անընդհատ մտավոր պարապմունքը գրականական և մանակավարժական աշխարհում, որոց անբաժան բնկեր է եղել և դառն քրտինքով ընտանիքիս օրականը հայթայթելու լարված գրությունը, ընկճել են անձս և խոնարհեցրել են դեպի դառամելություն:

Անգոհ շեմ ներկա վիճակիցս. ցայսօր ուսուցչական պաշտոն վարելով Ներսիսյան դպրոցում՝ գերդաստանս սովամահ չլինելու շափ հաց աշխատում եմ, բայց դժվար թե երկարատև լինի այս կացությունս: Մի օր վերոհիշյալ տկարությունը դետին կը տապալի ինձ և, ինչպես ասված է, դուռն երեսիս փակ կը թողու: Այն ժամանակ ոչ միայն նյութական ապրուստից զրկված կը մնան իմ անչափահաս դավալունքս, այլ և մտավոր սնունդից:

Որդիներիցս երեք ավագներն աղջիկ են. երեք կրտսերները՝ աղա: Անդրանիկ դուստրս հաջողությամբ անցնելով յուր ժամանակին Երևանում Գայանյան հայ միջնակարգ դպրոցի դասընթացը, շարունակեց ուսումը և փայլուն հառաչադիմությամբ ու շքանշանով ավարտեց Տիխիսի աղջկանց դիմնադիան, բայց ի մեծ ցավ հայրական սրտիս, մի տարուց ավել է հեծում է տկարության մեջ, երկու դստերքս վերջացնելով մինը՝ քաղաքիս Գայանյան և մյուսը՝ Հովնանյան դպրոցներում, այսօր ուսանում են նույնպես արքունի դիմնադիայում և առաջնակարգ աշակերտուհիք են, սոցանից մինը 15 և մյուսը 13 ամաց են. անդրանիկ արու դավալս՝ 11 տարեկան՝ ուսանում է արքունի դիմնադիայում հառաչադիմների շարքում, երկրորդ ուստրս՝ 9 տարեկան՝ Ներսիսյան դպրոցումն է, իսկ վերջինը՝ հինգ ամաց է¹:

Այս ցավերն են, որ քառասնամյա ազգային մշակիս իրավունք են տալիս ազգիս բազմահոգ հոր հոգսերի վերա մի հոգս ևս ավելացնելու: Չէի թույլ տալ ինձ այս ազգային մեծ ճգնաժամին ձանձրացնելու լայնասիրտ Հայրիկին, եթե դիտենայի, որ դո՛նե մոտիկ ապագայում ազգը կը կատարեր յուր բարեմիտ և շեղոք անձինքների ինձ արած բանավոր խոստումը: Քանի մի տարի է ահա, որ

¹ Պոռոշյանի երեխաներից անդրանիկը Պերճանուշն է, ապա ըստ տարիքի գալիս են Աշխենը, Շուշանիկը, Պոռոշը, էաչին ու Պապաբը (տե՛ս Պետ. Մատենադարան, անհատական արխիվներ, թղթ. № 128, վավ. 1):

ազնվախոհ և կարող ազգայիններից ոմանք մտադրվում են գնահատել իմ շքնչին անցյալը: Նորա կամենում էին մի փոքրիկ հորելյանով ծերության օրերում դադարեցնել ինձ հաց հայթայթելու զբաղմունքից և հնարավորություն տալու՝ մինչ գեռ մտավոր ուլժս ինձ չի դրժել՝ գրիչը ձեռքիցս վայր չը ձգել: Մտադիր են հարգո պարոնները, բայց այդ նպատակը մնում է միայն լսկ մտադրություն և կը մնա, քանի որ գոյություն ունեն մեր մեջ ազգավնաս պառակտիչ կուսակցությունները:

Թե ի՞նչ տնօրենություն կանե ազգիս հայր Հայրիկը, ի՞նչ կը մտածե կամ ի՞նչ դրական ելքի կը գա և կը գնահատե՞ արածս աննշան ծառայությունները, կամ կարհամարհե՞, այդ յուր սուրբ կամքն է, բայց ես նվաստս իրավունք տվի ինձ յուր հայրական դթալիր սրտի մտածության նյութ անելու իմ կացությունս:

Ավելորդ չեմ համարում թվել համառոտիվ անցյալ ծառայություններս և մատուցանել գրական երկասիրությանցս ցանկը:

1855 թվին, ավարտելով Ներսիսյան դպրոցը, ոտք դրի ուսուցչական ասպարեզն՝ երկու տարի գործելով իմ հայրենի Աշտարակ գյուղում շնչին ոռճիկով—120 ուրլի տարեկանով, որի քառորդ մասը հազիվ ստացա:

Նույն այդ թվերին՝ միաժամանակ կատարում էի Աբարանու, Կարբու և Թալինու կողմանց գյուղորեկից գործակալության քարտուղարի պաշտոնը՝ նույնպես անվարձ:

1859 թվին գալով Տփլիս՝ մի տարի ուսուցիչ եղա Ներսիսյան դպրոցում:

1860 թվից մինչև 1863 թ. աշխատակցում էի «Կոունկ» ամսագրին և վարում էի խմբագրի օգնականի և սրբագրչի պաշտոն:

Այդ ժամանակն էր, որ Տփլիսի հայերս բախտ ունեցանք սրաթուիչ Վասպուրական Արծվի սավառամարը սավառնիլ դեպի ազգային ինքնաճանաչության վեհ գաղափարը:

Նույն այդ տարիներում հիմնեցի Տփլիսի, որով և ամբողջ Կովկասի Հայոց անդրանիկ ազգականց դպրոցը Ս. Գայանյան անունով: Միաժամանակ երեք երիտասարդաց ընկերությամբ բացի տղայոց թաղական դպրոց:

Նույն տարիներն էին, որ նվաստիս նախաձեռնությամբ սկիզբը դրվեցավ Տփլիսում հայ բեմի հաստատությունը: Մինչև այդ ժամանակը մասնավոր աներում միայն տեղի էին ունեցել հատուկտոր հայերեն ներկայացումներ: 1863 թվի հունվարին էր, որ առաջին անգամը Տփլիսի հայր մայրենի լեզվով ներկայացումն տեսավ քաղաքային թատրոնում, որ և շարունակություն և հարատևություն ունեցավ:

1864 թվին հայ լեզվի ուսուցիչ և տեսչի օգնական եղա Շուշի քաղաքի հոգևոր դպրանոցում: Շուշվա առաջին ազգականց դպրոցը բացվեցավ նույն տարին՝ նմանապես իմ նախաձեռնությամբ և տիկին Մարիամ Հախումյանցի եռանդուն աջակցությամբ, թե և տպագրածս տետրակի մեջ ծածկել եմ համեստարար իմ մասնակցությունը:

1867 թվին կարգվեցա տեսուչ և ուսուցիչ Ազուլյաց դպրոցի և հիմնեցի տեղվույն ազգականց դպրոցը, որ շարունակվում է մինչև այսօր: Իմ խորհրդով և հսկողությամբ՝ շինվեցան այդ տարին Ազուլյաց Թովմա Առաքելովանքումը շորս ձեռք ուսուցչական բնակարաններ և դպրոցական շենքի պակաս սենյակները լրացվեցան:

1868 թվին ամառը մնալով Աշտարակում, բարեկարգեցի և հոգարարական կազմակերպության վերածեցի իմ ծննդավայրի խալֆայական դպրոցը:

1872 թվին եղա «Մշակ» լրագրի գործակիցը և հիմնադիր անդամներից մեկը:

1875 թվին բացի Աստրախանում տեղվույն առաջնորդի հրամանով թաղական ծխական երկսեռ դպրոց:

1877 թվից աշխատակից անդամ և սրբագրիչ էի «Փորձ» հանդիսին:

1879 թվից մինչև հայ դպրոցաց փակումը վարում էի Երևանի թեմի և Կարուց վիճակի թեմական տեսչության պաշտոնը: Մոտ յոթնամյա պաշտոնավարությանս միջոցին, համարձակ կարող եմ ասել, որ կրկնապատկեցի եղած ծխական ուսումնարանների թիվը:

Այդ նույն տարիներին՝ հոգելույս Գեորգ Գ. երջանկահիշատակ հայրապետի հրամանով՝ աշխարհարարի վերածնեցի սուրբ Ավետարանը և նորա մահից հետո հանձնեցի յուր հաշորդին, բայց թե ո՞ւր մնաց, ինչ անօրենություն եղավ, ցայսօր ևս չգիտեմ¹: Հաշող թարգմանությունս ի վարձատրություն արժանացա Գեորգ Գ. մեծագործ կաթողիկոսից Աստվածարանության մագիստրոսի կոչման և պարգև ստացա յուր 35 տարի գործ դրած արժաթի ջուր խմելու դավաթը, մի արծաթյա մատուցարանով:

1887 թվից ուսուցիչ եմ ներսիսյան դպրանոցում, ուր և կամ մինչև այս փայրկյանը:

1889 թվին «Մուրճ» ամսագրի բացմանը՝ հրավիրվեցի գործակից և խմբագրության անդամ:

Այդպիսով՝ ահա քառասուներորդ տարին է մանկավարժական ծառայությանս և երեսուն և վեցերորդ տարին՝ գրականական գործունեությանս:

Աշխատակցեի եմ «Մեղու Հայաստանի», «Կոտնի», «Մշակ», «Աղբյուր», «Նոր-Դար», «Արարատ», «Մուրճ», «Տարազ», «Արձագանք», «Հանդես գրական» և «Արաքս» պարբերական թերթերին, որոնց մեջ տպագրված բազմաթիվ ընդարձակ և հանդավոր հոդվածներիս որքանությունը կգժվարանամ հաշվի առնել:

Իմ սեպհական երկասիրությունս են.

Վեպեր՝ 1) Սոս և Վարդիթեր:

2) Կովածաղիկ:

3) Հացի խնդիր:

4) Շահեն:

5) Ցեցեր:

6) Բողև:

7) Սկիզբն երկանց:

Քատերգություն:

8 Աղասի՝ փոխադրություն Աբովյանի «Վերք Հայաստանից»:

Նկարագրական

9) Ղարաբաղի տիրամայր Մարիամյան աղջկանց դպրոցի բացումը:

10) Ագուլյաց երկսեռ դպրոցների բացումը:

11) Աղոթագիրք հայ զինվորների համար:

12) Հուշիկներ:

Թարգմանություն

¹ Թարգմանությունը կատարված է 1884 թվականին: Ձեռագիրը, բազմացած 119 էջից, պահվում է Պետ. Մատենադարանում (տե՛ս Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. № 59, ՎՊ. 68):

- 1) Երկու խոսք Համբարի վերա—Պետրոս Շանշյանցի:
- 2) Ներքին կյանք հին Հայաստանի—Եղյանցի:
- 3) Սուրբ Ավետարան:
- 4) Զինվորի առողջապահությունը:
- 5) 6) և 7) Երեք հատ տետրակներ գինվորական պարտավորությանց մասին¹:
- 8) Հարություն Արարատյանցի կյանքը:
- 9) Կովկասի գերին—Տոլստոյի, և
- 10) Նրան շահակացան — վեպ Մոնգոմերիի:

Վերջին երեք թարգմանությունքը կատարված են Տփլիսի Հայոց Հրատարակչական ընկերության հանձնարարությամբ: Երրորդ գիրքը գեռ չէ տպագրվել: Հետևաբար՝ իմ հատորներով աշխատասիրությանց և թարգմանությանց թիվը 22 են:

Բացի տպագրվածներից՝ ունեմ բավականին անտիպ երկեր և թարգմանություններ, որոնց մեջ առաջին տեղը բռնում է «Հուշիկների» շարունակությունը, որ հասցրած է մինչև 70-ական թվականների կեսը և եթե տեք հաջող, շարունակվելու է մինչև կյանքիս վերջը:

Դիտավորյալ եմ ի մի համախմբել պարբերական թերթերում գտնված բոլոր մեծ ու մանր հոդվածներս, դարձյալ եթե աստված կը հաջողե...» (Պետ. Մատենադարան, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. № 185, վավ. 9: Հմմտ. նաև թղթ. 185, վավ. 10):

Պետ. Մատենադարանում պահվող վերջին խումբ փաստաթղթերը, որոնք նպաստում են Պոռշյանի կյանքի ուսումնասիրությանը, վերաբերում են 40-ամյա գրական գործունեության հորելյանական հանդեսին, որը տեղի ունեցավ 1899 թվականի մայիսի 16-ին Թիֆլիսում:

Հորելյանի առթիվ Պոռշյանը ստացավ բազմաթիվ ողջույնի հեռագրեր, նամակներ ու նվերներ: Այդպիսիներից պահպանվել է Իգմիրլյանի ընդարձակ նամակը և Պոռշյանի շնորհակալական պատասխանը, գրված 1899 թ. մայիսի 26-ին Թիֆլիսից:

Նա գրում է. «Եթե գիրն ու գրականությունը մի ազգի գոյության էական պայմաններից մեկն է, ապաքեն բարեբախտ են և ապագա ունին այն ազգերը, որոնք արժանացած են այդ երկնապարզ և շնորհացր:

Տասն և չորս դար է հորմե հետև հայ ազգը համբերությամբ տանում է յուր զլխին եկած տառապանքներն ու նեղություններն և չէ հուսահատվում՝ շնորհիվ յուր ամենամեծ զավակի—անմահ Մեսրոպի արած անզնահատելի ծառայության: Մեսրոպյան նշանատառերն են ամեն ժամանակաշրջաններում հատու սրեր հանդիսացել հայ ազգի բնական ընդունակություններից սարսափող, հայ ազգը երկրի երեսից բնաջինջ և անհետ կորցնելու նպատակով ամենայն ջանք ու հնարքներ շինալող հզոր թշնամիների դեմ: Այդ բանը քաջ հասկացել է հայը, ուստի և յուր գրականության պաշտոնյաներին միշտ սիրել և պնահատել է. հայը թե և դարերով այլ ու բն ուսանելու հարմարություններից

¹ Ծանոթագրություն. — Զինվորական ազոթագիրքը և մյուս գրքերը թարգմանվեցան և լույս ընծայվեցան հայ գինվորների համար և հանձնվեցան Զինվորական վարչության ի գործադրություն՝ նախաձեռնությամբ և հրատարակությամբ հանգուցյալ զնդապետ Աղեքսանդր Մելիք-Հայկազյանցի: Ազոթագիրքը տպվեցավ Մակար կաթողիկոսի հրամանով: (Ծան.—Պ. Պոռշյանի):

և միջոցներից զուրկ է մնացել, բայց նա յուր սակավաթիվ գրական մշակներին միշտ սիրել և հարգել է:

Տարվույս մայիսի 16-ն այդ ճշմարտության անհերքելի փաստերից մինն էր. վստահանում եմ ասել, թե հայ գրի և գրականության հրաշափառ հաղթանակի օրն էր Տփխիսում ամսիս 16-ը:

Աշխարհիս երեսին տարագրված հայ գրասերները՝ ոմանք անձամբ, շատերը գրավոր, այլք հոգվով, սրտով ու մտքով համախմբվել էին մայիսի 16-ի կյուրակի օրը Տփխիսում ցույց տալ աշխարհին, թե հայոց գիրն անմեռ է, թե հայ լեզվի և գրականության վերա խեթ աչքով նայողները սխալված են յուրյանց հաշիվների մեջ:

Շատ շնչին են և էին սրբազան Հայր, ազգային գրականության ասպարեզում նվաստիս մատուցած ծառայությունները՝ այն մեծ շնորհաց համեմատությամբ, որ ցույց տվեց ազգիս հասուն և ինքնաճանաչ դասակարգը մայիսի 16-ին յուր խոնարհ գրական մշակին: Բաղմաթիվ ուղերձներ, նվերներ, գրություններ և հեռագիրներ տեղացին ամենայն կողմից...» և այլն: (Պետ. Մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, թղթ. № 13, վավ. 272, Գ):

Սրանք են հիմնականում Պետ. Մատենադարանի Արխիվային բաժնում Պ. Պոսշյանի կյանքի ու գործունեության մասին հայտնարերված փաստաթղթերը: Անտարակույս նրանք նպաստելու են մեր նշանավոր վիպասանի կյանքի ճշգրիտ ու գիտական տարեգրությունը կազմելու շնորհակալ գործին:

Բ Ն Ա Գ Ր Ե Ր

ԵՎ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լ. ԽԱԶԻԿՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԲԱՐՋՐԲԵՐԴՑՈՒ ԽՐԱՏԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ,
ԱՌԱՔՎԱԾ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ. 1251 ԹՎԱԿԱՆԻՆ

Կոստանդին կաթողիկոս Բարձրբերդյու (1221—1267) խրատական թղթի մեզ հայտնի միակ ձևագիրը պահվում է Լենինգրադի Մ. Ն. Սալտիկով-Շչեդրինի անվան Պետ. Հանրային գրադարանի ձևագրական բաժնի հայերեն ձևագրերի հավաքածուի մեջ:

1954 թվականի նոյեմբերին, գործուղվելով Լենինգրադ, հնարավորություն ունեցանք ընդօրինակելու 90 ամբողջական ձևագրերից բաղկացած այդ հավաքածուի ԺՆ. դարի ձևագրերի հիշատակարանները, ինչպես նաև, թուրքիկ կերպով, ծանոթացանք ձևագրերի բովանդակության հետ:

Հայերեն ձևագրերի այս հավաքածուն բաղկացած է երկու (հին և նոր) շարքերից, ըստ որում յուրաքանչյուր շարքում (серия) գրանցված են 45 ձևագրեր, 1-ից 45 ինքնուրույն համարակալությամբ:

Հին շարքի ձևագրերը (старая серия, № № 1—45) ստացվել են 1891 թվականին Կամենեց-Պոդոլսկից, սուրբ Նիկողայոսի անվան հայկական եկեղեցին և նրան կից արխիվը լուծարքի ենթարկելուց հետո: Հավաքածուի այս շարքի մասին համառոտ մի հաղորդում է հրատարակված գրադարանի 1891 թ. հաշվետվության մեջ (տե՛ս Отчет императорской публичной библиотеки за 1891 год, СПб, 1894, стр. 11—16), որտեղ թուրքիկ նկարագրված են ամենաարժեքավոր 13 ձևագրերը, ինչպես նաև ձևագրերի հետ մեկտեղ ստացված 54 հայերեն տպագիր գրքերը (նկարագրությունը կատարել է Ն. Մառը): Ձևագրերի մեծագույն մասն ընդօրինակված են Ուկրաինայի և Լեհաստանի հայկական գաղթավայրերում, ուստի օգտակար նյութ կարող են մատակարարել այդ գաղթավայրերի պատմության հարցերով հետաքրքրվող մասնագետներին:

Ավելի մեծ արժեք են ներկայացնում Հավաքածուի նոր շարքի ձևագրերը (новая серия, № № 1—45), որոնք ձևոք են բերվել գրադարանի կողմից աստիճանաբար, զնումների և այլ ճանապարհներով, 1891 թվականից հետո ընկած տասնամյակներում:

Այս ձևագրերը, եթե նկատի շտանենք նրանցից մի քանիսի հիշատակարանների հրատարակությունները «ԺՆ. դարի հայերեն ձևագրերի հիշատակարանները» ժողովածուի մեջ (տե՛ս էջ 651—661), մինչ այժմ անձանոթ են մնացել հայագետներին:

Դրանցից ուշագրության արժանի են, հատկապես, հետևյալները. ա) № 14, կրկնագիր ձևագիր, բաղկացած 255 մազադաթյա թերթերից, երկրորդ գիրը 1554 թվականից: Պարունակում է նաև Անանիա Շիրակացու թվաբանական աղյուսակները, բ) № 39, Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց և Ասորահովմեական դատաստանագիրք, ընդօրինակված Թովմա գրչի կողմից,

1404 թվականին, գ) № 31, Հարցմանց գիրք Գրիգորի Տաթևացույ, ընդօրինակված Հերմոնի վանքում, Գրիգոր Ախալցխացի գրչի կողմից (պատմական հարուստ բովանդակությամբ ու կենցաղագրական ուշադրով մանրամասնություններով լի հիշատակարանով), դ) № 15, Յայամաուրք, ընդօրինակված Կարապետ գրչի կողմից, 1427 թվականին և, վերջապես, ե) № 37, բաղմազան նյութերի ժողովածու, ընդօրինակված ԺՆ. դարում: Այս ձևագրի 208ա—214բ էջերի վրա ընդօրինակված է Կոստանդին Բարձրերդցու մեր ուշադրությունը գրաված «Խրատական թուղթը»¹:

Սահմանափակ ժամանակ ունենալով մեր տրամադրության տակ, 1954 թվականին կարողացանք միայն որոշ բաղվածքներ անել խրատական այդ թղթից: Հետագայում, մեր խնդրանքով, պատմական գիտությունների թեկնածու Հոփսիմե Ջաճփուլազյանը ընդօրինակեց ձևագրի մեկ հետաքրքրող էջերը, իսկ 1956 թվականին գրադարանի արտաքին սպասարկման բաժնից ստացանք «Խրատական թղթի» էջերի պարզ լուսանկարները, որոնք հնարավորություն են տալիս ծայրից-ծայր անսխալ վերծանել հրատարակության արժանի այդ բնագիրը:

* * *

Մեկ գրադեցնող թուղթն սկսում է այսպես. «Խրատական թուղթի ձեռնմեր վարդապետին Վարդանայ»:

Այս առաջին դեպքը չէր, երբ Կոստանդին կաթողիկոսը դիմում էր Արևելյան Հայաստանի հայերին «ի ձեռն» (նշանակում է՝ միջնորդությամբ, գործակցությամբ) Վարդան Արևելցու:

Հայանի է, որ դեռևս 1246 թվականին, կաթողիկոսը «իրրև ետևս զաւեր աշխարհիս Հայոց և զտառապանսն, զոր կրէին ի հարկահանացն և ի զօրաց թաթարին, և մտախոհ եղեալ իմացաւ՝ եթէ մեղք են այսմ ամենայնի պատճառ... փութացաւ գրել թուղթս շրջաբերականս և կանոնս համաշխարհականս» (Կիրակոս Գանձակեցի «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909, էջ 278—279):

Կիրակոս Գանձակեցին իր «Պատմութեան» մեջ ամբողջությամբ մեջ է բերում այդ շրջաբերական թուղթն ու «Սահմանք կանոնականքը» հայտնելով, որ դրանք Կիլիկիայից Արևելք է բերել նույն Վարդան Արևելցին, որը Երուսաղեմից հայրենիք վերադառնալու ճանապարհին, հինգ տարի մնալով Կիլիկիայում, սերտ կապեր էր հաստատել Հեթում թագավորի և Կոստանդին կաթողիկոսի հետ (նույն տեղում, էջ 279):

Այդ մասին շրջաբերական իր թղթի նախաբանում խոսում է նաև կաթողիկոսը: «Առաքեցի զարդինական վարդապետդ զՎարդան,— գրում է նա,— փոխանակ անձին իմոյ, զոր ետ ինձ նախախնամութիւնն աստուծոյ, ձգելով առ իս ի կողմանց ձերոց ի հինգ ամաց հետէ, զոր իրրև տեսի և ճանաչեցի ըստ կարի, կապեցի զզա միջնորդութեամբն աստուծոյ ընդ անձին իմոյ կենօք և մահու, մեծաւ հարկիւ և սիրով բեռեալ ընդ իս յաւիտեան» (նույն տեղում, էջ 282—283):

Գալով հայրենիք Վարդանը շրջում է «ընդ գաւառս Հայոց», ծանոթացնում եպիսկոպոսներին, վանականներին ու իշխաններին կաթողիկոսի կանոնական սահմանների հետ և վերցնում նրանցից «ձեռագիր հաւանութեան», այսինքն՝

¹ Ձեռագիրը մուտք է գործել Սալտիկով-Շչեգրինի անվան գրադարանի ձևագրական բաժին 1950 թվականի նոյեմբերի 30-ին:

կանոնական սահմանները կատարելու պարտավորություն: Հայտնի է նաև, որ հետագայում նա, Հաղբատում և Զազավանքում, գումարում է եկեղեցական ժողովներ ու մշակում կանոններ, որոնք շատ կետերով նմանվում են Կոստանդին կաթողիկոսի «Սահմանքի» կանոններին (տե՛ս Գարեգին վարդապետ, Զազավանից ժողովը, «Շողակաթ», էջ 22—46):

Վարդանի և Կոստանդին կաթողիկոսի միջև սերտ կապերի գոյության մասին փաստերը չեն սահմանափակվում սրանցով: Գիտենք, որ դեռևս Կիլիկիայում գտնված ժամանակ (1246 թ.) Վարդանը գործակցել է կաթողիկոսին, պատշաճ պատասխան գրելու համար Հոռոմի պապի կողմից Հեթում թագավորին ուղղված դավանաբանական գրությունը:

Պատասխան այդ թուղթը հայ դավանաբանական գրականության գլուխ գործոցը կարելի է համարել: Կաթողիկոսը, դարձյալ «ի ձեռն արդիւնական վարդապետին Վարդանայ», ոչ միայն վճռականորեն մերժում է կաթոլիկ եկեղեցու տեսակետն այն մասին, թե «Հոռոմայ աթոռն միայն ունի իշխանութիւն ի վերայ երկրի կապելոյ և արձակելոյ և ծառայութիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք», այլ և պապի գրություն մեջ գտնում է «հնգետասան սխալ և անընդունակ բան» և հայտարարում, որ «գիրեանց (կաթոլիկների) արուեստակեալ առասպելսն իսկի չընդունիմք, այլ և արհամարհեմք» և այլն¹:

Կոստանդին կաթողիկոսի պատվերով Վարդանը գրել է նաև «Դաւանութիւն հաւատոյ» խորագրով մի գրություն²:

Ուշագրավ է, որ Կոստանդին Բարձրերդցու նորահայտ խրատական թուղթը ևս, ինչպես տեսանք, գրված է «ի ձեռն մեր վարդապետին Վարդանայ»:

Արդ, ի՞նչ է նշանակում հաճախ կրկնվող այս «ի ձեռն» արտահայտությունը: Եվ Վարդան վարդապետը կաթողիկոսի կամքի ու մտքի լոկ թարգմանն է հանդես գալիս այս ու վերոհիշյալ դեպքերում, թե ինքը գործոն մասնակցություն ունի կաթողիկոսի ստորագրությամբ հրատարակված պաշտոնական այդ գրությունների շարագրմանը. այս մի հարց է, որի պատասխանը պետք է դրազեցնի հայ բանասիրությանը:

Ինչ և է. «Սահմանք կանոնականքից» ընդամենը 5 տարի հետո՝ «յեւթընհարիւր թուիս մերոյ տոմարիս և Լ. (30) հայրապետութեանս մերոյ», այսինքն 1251 թվականին, Կոստանդին կաթողիկոսը կրկին պահանջ է դրում շրջաբերական թղթով դիմելու Արևելյան Հայաստանի հայերին:

Խրատական այդ թուղթը բաղկացած է երկու բաժիններից. ա) նախաբան և բ) 18 կանոններ, ըստ որում 3-րդ կանոնը չի ընդօրինակված բնավ, իսկ 18-րդ կանոնը թերի է ընդօրինակված, ուստի դժվար է որոշել, որ հենց այդ կանոնով էլ ավարտվելիս է եղել բնագիրը:

Զեռագրի գրիչը, ընդօրինակելով 18-րդ կանոնի առաջին բառերը (2,5 տող), անգրել է թողել շուրջ 7 տողի շափ տարածություն: Կարելի է արդյոք այս փաստից եզրակացնել, որ բնագրի մեզ հասած միակ օրինակը թերի է ընդա-

¹ Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 503—509:

«Թուղթ Կոստանդեայ կաթողիկոսի Հայոց, զոր գրեաց առ Հեթում թագաւորն ի յաստուածապահ գղեկէս, ի հայրապետական աթոռոյս Հոռոմկլաէս, ի մայրաքաղաքն Սիս պատասխանի թղթին, որ ի պապէն Հոռոմայ բերաւ առ թագաւորն Հայոց Հեթում, ի ձեռն Լիկաթին որ կոչէր Տիմանչ, ի թուիս Հայոց ի ՈՂԵ. (1246), ի ձեռն արդիւնական վարդապետին Վարդանայ, յարմար իրիս»:

² Գ. Ս ր վ ա ն ձ ա յ ա ն, Թորոս աղբար, Բ. 395:

մենք 7 տողով, շգիտենք: Այնուամենայնիվ, ելնելով այն փաստից, որ Կոստանդինի «Սահմանք կանոնականքը» պարունակել է ընդամենը ԻԲ. (22) կանոն¹, կարելի է ենթադրել, որ մեր միակ բնագրի թերությունը մեծ չէ, և, թերևս, ձեռագրում ինչ-ինչ պատճառներով, չի ընդօրինակվել վերջից ընդամենը միերկու կանոն:

Նախաբանում, կաթողիկոսը մի քանի անգամ, նկատի ունենալով անշուշտ 1246 թվականին առաքած «Սահմանք կանոնականքը», ակնարկում է, որ ինքը նման թղթով դիմել է Արևելյան Հայաստանի բնակչությանը նաև տարիներ առաջ: Նա գրում է. «Եւ յառաջ զոր յղարկեցի առ ձեզ կարճ բանիւ զմեր սուրբ հարցն զխրատ և զուսումն, թէ որպէս պարտ է լինել քրիստովնին» (ձեռ. էջ 211ա), կամ «Մեք զհակառակն հասկացաք, թէ բնաւ չէք լսել աղաշանացս մեր, և չէք արարեալ. և բազմապատկեալ են և շատացեալ ամենայն շարիք և մեղաց տեսակք, զոր յառաջ սակաւ ունէիք» (էջ 208ա):

Այդ «մեղաց տեսակները» թվարկված են նախաբանի տարրեր էջերում, այսպես. «Ծուլացեալ էք ի յուսմանէ և յաղաթից և ի ժամատեղաց, և էք իբրև զանրան անասունք՝ շգիտելով զարէնս քրիստովնէից» (էջ 208ա), շունք «սահման խոստովանութեան և հաղորդութեան, և եկեղեցադարդութեան և քահանայասիրութեան և աստուծոյ պտղաբերութիւն» (էջ 208բ):

Եվ ահա, հայերի գործած այս «ծանր մեղքերով» է բացատրում կաթողիկոսը մոնղոլական հրոսակների Հայաստանում գործած անլուր խժոժությունները՝ պերություն, սպանություն, հարկաչին տաժանակիր լուծ և այլն:

Նախաբանի պատմական տեսակետից ամենաուշագրավ տողերը հենց նվիրված են մոնղոլական արշավանքներին հաջորդող տարիների քաղաքական աղետավոր անցուդարձերին: Այս առումով «նրատական թուղթը» լրացնում է հայ պատմագիրներին և իր ուրույն տեղը գրավում մոնղոլական արշավանքների ու տիրապետության առաջին տասնամյակների աղբյուրների շարքում:

Կրկին դիմելով Արևելյան Հայաստանի հայերին Կոստանդին Բարձրբերդցին, իր զարմանքն է հայտնում այն քանի կապակցությամբ, որ նրանք, չնայած ճաշակած են եղել արդեն աստուծո ցասման դավազանի դեր ստանձնած մոնղոլների հարվածների սաստկությունը, սակայն ճիշտ ճանապարհի շեն եկել և շարունակում են մեղսասեր իրենց առօրյան:

Արժե ծանոթանալ նախաբանի այդ հատվածին: «Եւ այդ ևս առաւել հիացումն և մեծ զարմանք, — գրում է կաթողիկոսը, — որ այդպէս մոռացայք զպատուհասն զոր կրեցիք՝ հարուածեալք և գանեալք դաւադանաւ ցասմանն աստուծոյ, և տեսանէք աշաւք ձերովք զլերինս և զղաշտս ձեր, որ սակաւ մի յառաջ լի էին դիակոյտ ոսկերաւք սպանելոցն, և զայրս և զխորածորս, որ լցեալ էին փախստականաւք, և ուտէք և ըմպէք զհաց և զգինի ի գետնոյդ զոր տեսէք առողեալ արեամբ սիրելեաց ձերոց, դուք որ ծովացուցէք զաշխարհդ ձեր մեղաւք և տեսէք զդա լցեալ արեամբ և արտասուաւք: Եւ զի լոյս պատուիրանին տեսան և արէնք եկեղեցւոյ ոչ ծագէին ի սիրտս ձեր՝ վասն այնորիկ տեսէք զխարումն եկեղեցւոյ և զկոխումն և կողոպուտ սպասուց և պաշտելի և ահաւոր

¹ Նկատի ունենք Կ. Գանձակեցու «Պատմութեան» Ոսկան Երևանցու 1858 թ. Մոսկվայի հրատարակութեան բնագիրը: Վ. Պալեյանի հրատարակութեան մեջ (տե՛ս Պատմ. կաթողիկէ վարդապետութեան ի հայս և միութեան նորա բնդ հոսմեական եկեղեցւոյ, է՝ Փլորինտեան Սիւնհոգոսի, Վիեննա 1878, Հովելիված է, էջ 267—272) «Սահմանք»-ը բաժնւրված է ԻԴ (24) կանոնների:

նշանից և աստուածային գրոց: Եւ ոչ սնուցանէիք զտղայս ձեր աստուածապաշտութեամբ և ուսմամբ տեառն՝ առին զնոսա ի տանց և ի գրկաց ձերոց, այլ և ի ծոցոյ սուրբ եկեղեցւոյ՝ զգնեալս արեամբ Քրիստոսի գառինսն, և տարեալ վաճառեցին յազգս և յաշխարհս հեռաւորս, իբրև զանբան անասուն» (էջ 209ա—209բ):

Շարունակութեան մեջ Բարձրբերդցին արձանագրում է, որ ողորմածն աստված «էարկ ի բարի կամս մեծազար զանին և իւր խաղաղասէր զաւրազըլխացն և զաւրացն, և արարին խաղաղութիւն մնացորդացդ ի ձեռն քրիստոսէր և ազքատասէր պարոնին Աւագին» (էջ 209բ): Այս հատվածից սլարզ է դառնում, որ մեջ բերված նկարագրությունը վերաբերում է 1236 թվականի դեպքերին, որովհետև, ինչպես հայտնի է, Ավագն այդ թվին անձնատուր եղավ Չարմաղանին (Ջուրմաղուն) և կրկին վերահաստատվեց իր կալվածքներում, հարկատու դառնալով մոնղոլներին և պարտավորվելով մասնակցել նրանց հետագա արշավանքներին: Հաջորդ տարին Ավագը մեկնեց մեծ զանի արքունիքը և սիրով ընդունվելով՝ հետ ուղարկվեց Հայաստան: Չարմաղան զորավարը հրաման ստացավ երկրի իշխանությունը հանձնել Ավագին և նրա աջակցությամբ հնազանդեցնել մյուս իշխաններին (տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Գ, Երևան, 1952, էջ 203—206):

Հայ ժողովուրդը, այսպիսով, ընկավ կուլտուրական ցածր աստիճանի վրա կանգնած քոչվոր մոնղոլների ծանր ու զարհուրելի տիրապետության տակ: Հայ ֆեոդալները ընդունելով մոնղոլների գերիշխանությունը սկսեցին գործակցել նրանց «ի նեղելոցն և ի սահանջելն վասն իւրեանց շահելոյ» (Կ. Գանձ., էջ 349) և առաջվա նման «զրկէին և կողոպտէին զաղքատս, և ի զրկանաց անտի գնէին հանդերձս մեծագինս և ազանէին, ուտէին և ըմպէին և մեծամեծս փրանային» (նույն տեղում, էջ 303):

Այն բանից հետո, երբ մոնղոլները իրենց սուրբ պատյանի մեջ գրին, Բարձրբերդցու կարծիքով Արևելյան Հայաստանի բնակչության համար ստեղծվեցին կյանքի մխիթարական պայմաններ. «Եւ զարձեալ կարկատեցայք և արմատ արձակեցիք և շինեցայք: Եւ մեք լսեցաք և մխիթարեցաք և արհնեցաք զաստուած և զզանին և զիւր հեծելին բարեմտութիւնն որ առ մեզ» (էջ 209բ—210ա): Պետք է կարծել, որ նա իր տեղեկությունները քաղում էր այնպիսի ինֆորմատորներից, որոնք հայ ֆեոդալների բարօրությունը նույնացնում էին ժողովրդի բարօրության հետ:

Կաթողիկոսը, անշուշտ, գիտեր, որ մոնղոլները անասելի ծանր հարկեր էին բարդել ժողովրդի վրա, «հարկդ ծանր է և խիստ» գրում էր նա: Սակայն այդ ևս բացատրում էր ժողովրդի մեղքերի բազմությամբ. «և այլ վասն մեղաց է, զի կարկաիւ և երաշտով և խորշակով և մարախով պակասութիւն է ի լինել երկրիդ պողաբերացդ, ուստի զհարկն ձեր վճարէք», ասում էր նա խրատական իր թղթում, հավաստիացնելով, որ ժողովրդի վիճակը կբարվորվի ոչ թե մոնղոլների դեմ զենք վերցնելով, այլ պարկեշտ վարքով աստծու պատվիրաններին հետևելով և մոնղոլական զանի ու իր զորքերի կենդանության ու հաջողության համար ազոթելով:

Ժողովուրդը, սակայն, կաթողիկոսի նման չէր մտածում: Եվ 1249 թվականին Հյուսիսային Հայաստանի շրջաններում ու Վրաստանում մոնղոլական տիրապետության դեմ բռնկվում է ապստամբություն:

Ժամանակակից հայ և վրաց աղբյուրները ամեն կերպ աշխատում են

օքոզել այդ ապստամբությանը ժողովրդական խավերի մասնակցության փաստը: Գրիգոր Ակներցին նույնիսկ դեպքը պատմում է այնպես, որ իբր ապստամբություն չի էլ եղել, այլ Դավիթ թագավորի արքունիքում հավաքված իշխանները, կեր ու խումի ժամանակ, երբ բավականի գինովցած էին, մտածել են միայն այն մասին, որ միասնական ուժերով մոնղոլների դեմ դուրս գալու դեպքում իրենք կարող են հաղթանակող լինել. («յորժամ հաշուեցան և համար արարին զօրացն հայոց և վրաց ասացին զիրեանցն յաղթող լինել ի վերայ զօրաց տաթարին»): Սակայն պատմիչի հավաստիացումներով այդ «ոչ թէ ուղորդ խորհեցան կամ խօսեցան, այլ առ կատականս» կամ «ոչ ուղորդ, այլ ընդ խաղս և ընդ կատակս»¹:

Վրաց և հայ իշխանները բանտարկվում և հազիվ ազատվում են մահվանից՝ մեծ փրկանք վճարելով. իսկ Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի շրջանները կրկին անգամ ասպարեզ են դառնում մոնղոլական զորքերի խժոժությունների:

«Եւ ինքեանք (մոնղոլները) յարձակեցան ի կողմանս Վրաց, ի վերայ բազում գաւառաց, որք ապստամբ, և որք ոչ, և զբազումս կոտորեցին, և զևս բազմագոյնս գերի վարեցին, զարս և զկանայս և զմանկունսն գետամոյն անէին անթիւ ի բազմութենէ. և այս գործեցաւ ի ՈՂԸ. (1249) թուականին Հայոց», — գրում է Կիրակոս Գանձակեցին (էջ 305):

«Անթիւս կոտորեցին և գերեցին զեօզս և ազարակս և գործեցին խայտառականս ի կանայս ի Հայս և աւելի յաշխարհն Վրաց» — լրացնում է նրան Վարդան Արևելցին (էջ 148):

«...Ի գերելոյ և յաւարելոյ զաշխարհն ոչ դադարէին» — ասում է Գրիգոր Ակներցին (էջ 21) և այլն:

Շատ արժեքավոր է նաև Կոստանդին կաթողիկոսի «Խրատական թղթի» տվյալը այս ապստամբության անշուքամբ մոնղոլների գործած վայրագությունների մասին: Նա գրում է. «Դարձեալ զայրացոյց աստուած զբարս զաւրացդ որ առ ձեզ, և հանին զսուսերս ի պատենից և լարեցին զաղեղունս իւրեանց, և ծայրաքաղ արարին ի բազում տեղիս՝ զմարդ և զանասուն և զստացուածս, որպէս առ մեզ էհաս համբան» (էջ 210ա):

Բայց իր հոգևոր հոտի գործած մեղքերը կաթողիկոսի աչքին այնքան խոշոր են երևում, որ նրան թվում է թե «դեռ ոչ արար ողորմածն աստուած ըստ մեղաց մերոց, և ոչ հատոյց զամենայն շարիսն մեր, և հաշտեցան ընդ մեզ դարձեալ ի տեառնէ յաջողեալ զաւրքն զանին, և կայք ի տունս և ի վանորայս և ի հայրենիս ձեր» (էջ 210ա):

Բավարարվեք ձեր ունեցածով, աղերսում է Բարձրբերդցին, «մի անէք զմեզ ամաւթով... և մի մատնէք զանձինս ձեր աստէն կենաւք ի մեծամեծ փորձութիւն, և յետ աստի կենացս անշիջանելի զեհենին և աններելի տանջանացն, այլ զգաստացարուք և ի յուշ և ի խելս եկէք...» (էջ 211ա):

¹ Մ ա զ ա բ ի ա յ ի ա բ ե զ ա յ ի (Գրիգոր Ակներցի), Պատմութիւն վասն ազգին նեաողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 20—21: Այդ ապստամբության մասին տե՛ս նաև շահաբուլմի պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 148, Կիրակոս Գանձակեցի, էջ 303—305, Մի ի թ ա բ Այբ ի վ ա ն ե ց ի, էջ 67, «Մանր ժամանակագրություններ», 1, էջ 42 (Ստեփանոս Կախիկոպոսի Տարեգրությունը), «Մանր ժամանակագրություններ», 11, էջ 140 (Անանիա Սեբաստացու ժամանակագրությունը), Մ ե լ ի ք ս ե թ - բ ե կ, Վրաց ազրյուրներ, էջ 57 ևն:

Այդ ճանապարհով միայն, և ոչ անհնազանդությամբ ու ապստամբությամբ, կարծում է Բարձրերդցին, ժողովուրդը, մոնղոլ տիրապետողների բարյացկամությամբ, կարող է նաև թեթևացնել տնտեսական իր ծանր վիճակը:

«Արդ դուք մեզ լսեցէք, — գրում է նա, — և ի բարին դարձիք, և ի ձեր պարկեշտ վարքն ըստ պատուիրանին աստուծոյ, և մեք երաշխաւոր եմք, որ ամենայն ճշմարտութեամբ աստուած առ ձեզ դառնայ՝ գթութեամբ և ողորմութեամբ յազոց և յեղանակաց տարույ... և երկիր առատութեամբ տացէ ձեզ զպտուղ իւր, և զանին կամքն արձականայ և թեթևացուցանէ զմալն, զի սիրտ թագաւորաց ի ձեռին աստուծոյ են, և նա է տուեալ զամենայն աշխարհս զանին և այլ է տալոց նմա, շպակասէ ոչինչ զձեր մալն թեթևացնելով: Ապա դուք զառաջի աղաւթք նմա և իւր զաւրացն արարէք, զի այն է մեր արէնքն, որ զոր աստուած մեզ տէր և թագաւոր տացէ՝ յառաջին աղաւթքն մեր զնմա կենդանութիւնն և զաջողումն խնդրեմք, և այսաւր զնա է տուեալ և թող հանապաղ զնա տա» (էջ 210բ):

Կոստանդին Բարձրերդցու այս խրատները թելադրված չէին միայն քրիստոնեական բարեպաշտության ու աստծո կողմից առաքված տերերին հնազանդորեն ծառայելու սկզբունքով: Չպետք է մոռանալ, որ ապստամբությունը բռնկվելուց մի տարի առաջ, 1248 թվականին, Հեթում թագավորը իր եղբայր Սմբատ Սպարապետին ուղարկել էր մոնղոլական մեծ զանի՝ Գույուկի մոտ, հայտնելու համար իր հպատակությունը, հույս ունենալով, որ մոնղոլների օգնությամբ Կիլիկիան կկարողանա հաջողությամբ դիմադրել եգիպտական սուլթանությանը: Եվ բնականաբար, Կիլիկյան արքունիքը և նրա քաղաքական շահերի ջատագով հայ կաթողիկոսությունը մոնղոլների հետ շահավետ դաշինք կնքելու մտադրությամբ, ամեն կերպ պետք է ձգտեին շահել նրանց սիրտը հայերի նկատմամբ, ցույց տալ, որ հայ ժողովուրդը ամենուրեք՝ և՛ բուն երկրում, և՛ Կիլիկիայում, մոնղոլների հնազանդ հպատակներն են ու նրանց տիրակալության ջերմ կողմնակիցները:

Հայտնի է միաժամանակ, որ սկսած 1245 թվականից եվրոպական մի շարք թագավալներ, Հռոմի պապի գլխավորությամբ, առաքելություններ էին հղում մոնղոլական զաների մոտ, փայտիայելով նրանց քրիստոնյա դարձնելու և նրանց դինական անպարտելի ուժը Եգիպտոսի, Պաղեստինի ու Սիրիայի դեմ ծրագրվող խաչակրաց արշավաքին ի նպաստ օգտագործելու անիրականանալի հույսեր¹: Կիլիկյան հայկական թագավորությունը, իր սեփական քաղաքական ու տնտեսական շահերն ունենալով, շահագրգռված էր այդ ծրագրերի իրականացմամբ և, իր հերթին, ջանքեր էր գործադրում այդ ուղղությամբ: Արևելյան Հայաստանի բնակչության անհնազանդությունը մոնղոլներին, հասկանալի պատճառներով, կարող էր վնաս բերել Կիլիկիայի և նրա եվրոպական դաշնակիցների քաղաքական ու տնտեսական շահերին:

Այս պատմական հանգամանքներն ի նկատի ունենալով միայն հնարավոր է լինում բացահայտել Կոստանդին կաթողիկոսի խրատների քաղաքական դրրդապատճառները:

Բայց հայոց կաթողիկոսը, որպես եկեղեցու գլուխ, ուներ նաև իր հաշիվները:

¹ Տե՛ս Հ. Բ. Հ ա կ ո ս յ ա ն, Ուղեգրություններ, հատոր Ա, Երևան, 1932, էջ 1—3:

Հայ ժողովրդի կրած բոլոր տառապանքները բացառելով ժողովրդի իսկ «գործած» աններելի հանցանքներով՝ քրիստոնեական պատվիրանների խախտումով, կաթողիկոսը ձգտում էր ամրապնդել ժողովրդի հավատը, բարձրացնել եկեղեցու հեղինակությունը, վերականգնել քրիստոնեական բարոյականության ու աստվածավախության խախտված սկզբունքները, մի խոսքով «դարձի բերել» աստծու ճանապարհից շեղված իր հողերը հոտին:

Հենց այս նպատակին են ուղղված «Խրատական թղթի» կանոնները, որոնք պատմական, ազգագրական ու կենցաղագրական զգալի հետաքրքրություն են ներկայացնում:

Կանոններից մի քանիսը 1246 թվականին Հայաստան առաքված «Սահմանք կանոնականք»-ից են բաղված ու վերաշարադրված փոքր ինչ համառոտվելով: Դրանք են Ա, է, ԺԱ, ԺԳ, ԺԷ կանոնները, որոնք նույն հերթականությամբ համապատասխանում են «Սահմանք կանոնականք»-ի է, ԺԵ, ԺԹ, ԺԴ, ԺԸ կանոններին:

Այդ կանոնների նմանություններն ու տարբերությունները պարզ ցույց տալու մտադրությամբ՝ ստորև զուգահեռաբար մեջ ենք բերում դրանք ամբողջությամբ կամ հատվածաբար:

«Խրատական թուղթ»

«Սահմանք կանոնականք»

(Կենինգրադի Հանր. գրադարան, ձեռագր. բաժին, հայերեն ձեռ. ֆոնդ, Նոր շարք, № 37, էջ 211բ—214բ):

(Կ. Գանձակեցի, Պատմութիւն, էջ 288—294

1) Եւ առաջին այս եղիցի ուսումն որ ամուսնաւորքն հինգ ազգաւք հեռի լինին յարեան ազգակցութենէ, և ի վեցերորդին պսակին, քան զԺԳ. տարին պակաս չինի հարսն և փեսայն՝ քան զԺԴ... (էջ 211բ):

է. Զպսակն բնորութեամբ արասցեն՝ վեց ծննդովք հեռացեալ յազգակցութենէ արեան. փեսայն մի պակաս քան զշորեքտասան ամն և հարսն քան զերկուտասան (էջ 289—290):

2) է. Յիշոցաւագ զնել յամենայն տեղիս ի մեծ և ի փոքր՝ անողորմ տուգանով և խրատով, և առաւել որ հաւատ կամ բերան կամ երես անարգէ, կամ քահանայ, կամ գերեզման՝ զլեզուն ծակեն և լար անցուցանեն և ի շուրջ ածին ծեծելով և տուգանք առնուն և բնդ աղքատացն ի մալն տան (էջ 213ա):

ԺԵ. ...և յամենայն տեղիս՝ ի մեծ և ի փոքր յիշոց աւագ զնեն՝ ի դարպաս, ի քաղաք, ի գիւղս և յազարակս, և զանօրէն յիշոցասացսն, զբարկութիւնն աստուծոյ շարժողսն և զաններելի անօրէնս, որ անարգեն զհաւատսրն, զստեղծող, զկնունք, զհրեշտակ, զքահանայ, զբերան, զերես, զգերեզման և զայլ այսպիսիս զնոր բուսեալ շարիսդ՝ զայնպիսեացն զլեզուսն հատցեն և կամ ծակեցցեն և լար ի ներս ածեցեն, և նախատանօք ի շուրջ ածցեն օր մի, և ըստ գոյին տուգանս առցեն և յաղքատս տայցեն (էջ 292):

3) ԺԱ. ...Պսակին և թաղմանն և մատաղին զինչ արէնքն է տացեն ժողովուրդքն երիցուն, և խաշահամբոյր և յամենայն արդեանց պտուղ՝ բաժին աս-

ԺԹ. Ժողովրդականքն յօժարութեամբ և ազաշանօք տացեն զհասս քահանայիցն յամենայն արմատոց պտուղս և զկարգեալ բաժին մատա-

տուժոյ, որ այլ ամենայն ստացուածքն
աւրհնութեամբ լցցին... (էջ 213բ):

4) ԺԳ. Կախարդ և գող և պոռնիկ և
բող և յիշոցասաց կամ դառնան ի շա-
րէն, կամ հալածին անողորմ, զի մի
յանմեղացն վերայ ածցին զբարկու-
թիւնն աստուծոյ (էջ 214ա):

5) ԺԵ. Գ. անգամ ժողովէ ի տա-
րին երէցն յեկեղեցին որիշ որիշ զարս
և զկանայս և զկուսան աղջկունս և
զկուսան կտրճերն, և հարմար հասա-
կացն և վարուցն իրատ տացէ, զի
ամէն հասակի և վարուց և բարուց
խրատ որիշ է (էջ 214ա):

դին, և պսակին ընծայիւք, և թաղ-
մանն հանդերձ, և ժամու դրամ՝ ոչ
զին պատարագին, այլ երիցուն հան-
դերձի և կերակուրի, որ աղօթից և
պատարագի պարապի յեկեղեցին
(էջ 292—293):

ԺԴ. Առաւել ջան տարցեն եպիսկո-
պոսք և բորեպիսկոպոսք զպոռնիկան
և զշնացողսն, զհմայս և զամենայն
յանցաւորսն զեհենին երկիրդիւ ի
դարձ ածել: Իսկ զանդարձսն մար-
մնաւոր պատուհասիւ և հողեորաւ
խրատել և տուգանել... (էջ 291):

ԺԸ. Քահանայն ի տարուջն յեկեղե-
ցին ժողովեսցէ զարսն առանձինն, և
զկանայսն առանձինն, և որիշ զկու-
սան աղջկունսն, և որիշ զտղայսն
զմանրէրսն, և ըստ իւրաքանչիւր
պատշաճի խրատեսցէ աղաչանօք և
սաստիւ, և իմացի իւրաքանչիւրոցն
զվարքն, և դիտեսցէ հանապազ. և թէ
ինքն չէ բաւական՝ ի ձեռն այլ կա-
տարելոյ արասցէ, որպէս ասէ սուր-
բն Աթանաս յիւր կանոնքն (էջ 292):

Նման կանոնների այս համադրությունը ցույց է տալիս, որ «Խրատական
թուղթը» գրված է ավելի դյուրերմբունելի, ժողովրդական-խոսակցական լեզվով
և, բացի այդ, կանոններն այստեղ փոքր ինչ համառոտված են և դարձված
ավելի պարզ ու նախատակասլաց:

Իմաստի տեսակետից էական տարբերություններ «Սահմանք կանոնա-
կանքի» և «Խրատական թղթի» համադրված կանոնների միջև չկան, ի բաց առյալ
2-րդ օրինակի վերջավորության: Ինչպես տեսանք «Սահմանքի» 15-րդ կանոնով
առաջարկվում է հիշոցնատուններին տուգանել և ստացված դրամը բաժանել աղ-
քատներին («և ըստ դոչին տուգանս առցեն և յաղքատս տայցեն»), իսկ «Խրա-
տական թղթի» համապատմասխան 7-րդ կանոնով սահմանված է՝ գանձվող
տուգանքը տալ մոնղոլներին, ի դիմաց աղքատների եկամտահարկի—մալի («և
տուգանք առնուն և ընդ աղքատացն ի մալն տան»): Ուշագրավ այս տարբերու-
թյունը, ինքնին վկայում է մոնղոլների կողմից գանձվող հիմնական հարկի
ժանրության մասին: 1251 թվականին մալը գանձվում էր այնպիսի բարձր շա-
փերով ու վճարել անկարող շքավորները ենթարկվում էին այնպիսի պատիժ-
ների, որ նրանց փոխարեն մալը վճարելն ու նրանց մոնղոլական հարկահան-
ների ձեռքից ազատելն ինքնին համարվում էր բարեգործություն, ճիշտ այն-
պես, ինչպես մի քանի տարի առաջ ողորմություն բաշխելը:

«Խրատական թղթի» մյուս 13 կանոնները (Բ, Գ, Ե, Զ, Ը, Ժ, ԺԲ, ԺԴ, ԺԶ,
ԺԷ, ԺԸ) նվիրված են այնպիսի հարցերի, որոնք «Սահմանք կանոնականք»-ում

կամ բնավ չեն շոշափվել, կամ հատուկ կանոնի նյութ չեն դարձել: Դրանք են. իրատ՝ նորածին մանկանց սնուցանելու և աստիճանաբար, քրիստոնեական հավատքի սկզբունքներն ու ազոթքները նրանց ուսուցանելու մասին (Ք), կնունքի (Դ), խոստովանության (Ե), հաղորդության (Զ) և պահքի մասին (Ը), դյուրության, երազահանության ու գուշակությունների, նրանցից հետո կենալու անհրաժեշտության մասին, «զի այսպիսիքս աւտար են ի կրանից քրիստովնէից» (Ժ, ԺԱ): Մեռածների թաղման ժամանակ մազ կտրելու, երես ու ձեռք կեղեքելու, լալական վարձելու և նման սովորությունները, որպես «հեթանոսաց և ոչ քրիստովնէից» սովորություններ՝ մերժելու մասին (ԺԲ): Շարաթ և կիրակի օրերը եկեղեցի գնալու անհրաժեշտության, և այնտեղ «լուծեամբ և երկիւղիւ» ազոթելու (ԺԴ) և այն մասին, որ կարողներն և ունեւորները՝ տկարներին շպեռք է բռնադատեն, «զի մի տրամեցուսցեն զարարիչն նոցա» և այլն, (ԺԶ). միմյանց զրկելուց, խաբելուց և նման ախտերից զերժ մնալու անհրաժեշտության (ԺԷ), և, վերջապես, քահանաների բնտրության մասին (ԺԸ, թերի):

Թվարկված կանոններից պատմական ու ազդագրական առումով հատուկ հետաքրքրություն են ներկայացնում՝ Թ, Ժ, ԺԲ և ԺԷ կանոնները, որոնք արժանի են ավելի մանրամասն ծանոթացման:

Թ. և Ժ. կանոնները հնարավորություն են տալիս ծանոթանալու հայ ժողովրդական հավատալիքների և սնահավատությունների մի բնագավառի հետ, որը բավարար չափով չի լուսաբանվում միջնադարյան հայտնի սկզբնաղբյուրների միջոցով: Ստորև մեջ ենք բերում այդ կանոնների բնագրերը.

«Թ. Գարի և ալիւր և աւազ և ուլուն և ջուր մի դիւթեսցեն, և խտրութիւն հաւատոց (ուզղելի է՝ հաւոց) թոշման և կոշման, և մարմնոյ խաղալոյ, և երազոյ և ձայնի կրակոյ և դրան, և սողնոյ ինչ երեւելոյ ի տանն, զի այսպիսիքս աւտար են ի կրանից քրիստովնէից, և մի ոք իշխեսցէ առնել, զի մեծ մեղք են» (էջ 213բ):

Այսպիսով, պարզվում է, որ հայ ժողովրդի մեջ տարածված են եղել գուշակման ու երազների մեկնության զանազան եղանակներ: Գուշակություններ են արել զարու, ալյուրի, ավազի հատիկների, ինչպես նաև ուլունքների միջոցով, ցրելով դրանք և իմաստավորելով հատիկների պատահական դասավորությունը: Հմայություններ են արել նաև թռչունների թռիչքի ու ձայների միջոցով, մարմնախաղությամբ, կրակի և դրան արձակած ձայներից, որևէ սողունի երեւուց և այլն:

Ժ. կանոնում ասված է. «Թ քաջախաւս և յերազահան մի ոք երթիցէ և լեկրոտի մատն (իմա՝ մաւտն, մօտն) աղի մի իշխեսցեն ածել և մի ի բանից նոցա խաբեսցին և մի հաւատասցին բնաւ» (էջ 213բ):

ՆՀԲ-ի հեղինակներին, հայտնի են «քաջախոս» բառի հետևյալ իմաստները. «քաջարան, քաջալեզու, համարձակախօս, քաղցրախօս». դրանցից և ոչ մեկը, սակայն, չի հարմարվում կանոնի բովանդակությանը: Ուատի, պետք է ենթադրել, որ «քաջախօս» բառը հնում ունեցել է նաև «ուգիների, քաջքերի կամ դեերի հետ խոսող, կախարդ, պատգամախոս» նշանակությունը, ելնելով այն բանից, որ քաջ կամ քաջք բառն իրոք ունի «դիք, ցնորք, ոգի, այս, դև» նշանակությունները (հմմ. նաև «երազախօս» և այլն):

«Լեկրոտ» բառը ցարդ հայտնի էր միայն Կիրակոս Գանձակեցու «Պատմությունից»: «Վասն Գաւթի մոլորեցուցչի» զլխում նա պատմում է, որ «Եւ լեկրոտք (Մոսկվայի և Թիֆլիզի հրատարակության մեջ սխալմամբ՝ լեկրորդք), որ

երթային առ նա, ասէր թէ խաղացէք առաջի իմ և պարեցէք, և նոքա առնէին այս յօժարութեամբ, քանզի այս ազգ դիւաց ախորժեն զխաղ և զպար» (Կ. Գանձակեցի, Վենետիկ, էջ 183, Թիֆլիս, էջ 309): Ը. Աճառյանը ձեռքի տակ ունենալով միակ այս վկայութիւնը իր «Արմատական բառարանում» (III, էջ 187) լեկրոտ բառին տվել է այսպիսի բացատրութիւն — «մի տեսակ դիվահար, որ միշտ ուզում է պարել»:

«Խրատական թղթի» քննարկվող կանոնը հնարավորութիւն է տալիս ճշտելու այս բառի իմաստը. բոտ այդմ «լեկրոտ» էին կոչվում այն գուշակները, որոնք երաժշտութեան տակ հափշտակութեամբ պարում էին մինչ ուշաթափութեան աստիճան և ապա, ինքնամոռացութեան մեջ սկսում պատգամախոսել: «Լեկրոտ» բառին այսպիսի իմաստ վերագրելուց հետո միայն հասկանալի կդառնա կանոնի վերջավորութիւնը, որտեղ ասված է՝ «մի ի բանից նոցա խաբեցին և մի հաւատացեն բնա»:

ԺԲ. կանոնով կաթողիկոսը պատվիրում է. «Ի վերայ մեռելոյ մազ մի կրտրեացեն, և սեաւ մի արասցեն, և զերեսս մի կեղեքեացեն և զձեռս, և լալական մի վարձեացեն, և խաւարարգել մի լիցին, զի մի զինքեանս և զմեռելոյս վնասցեն և ամաթով լինին յաստուծոյ» (էջ 214ա):

Հեթանոսական ժամանակներից պահպանված թաղման ծեսերի ու արարողութիւնների մասին ուշագրավ վկայութիւններ են պահպանված հայկական մի շարք աղբյուրներում¹:

Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում «խաւարարգել» լինելու սովորույթը, որն արտահայտութիւն է գտել նաև «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսի լավագույն պատումներից մեկում (Շատախեցի Մանուշակ Զաղոյանի պատում): Մհերի կինը, ամուսնու սպանութիւնից հետո, ուխտում է «չուր մաշ եմ օջիսին եմ տրդեն շիւնի, հոր հեֆ առնի, ևս արեվալոս չկամ» և իրոք «արեվալոս» չի դուրս գալիս, «խաւարարգել» է լինում, մինչև իր Գավթի օրդին կոտորում է թշնամիներին ու բերում է իր հոր սպանող Վրհարի գլուխը. այնժամ միայն «անու մեր նոր հանոր տնեն էլավ տուա» (Սասնա Ծռեր, Ա. հատոր, Երևան, 1936, էջ 707—720):

«Խրատական թղթի» կանոնների շարքում պատմական ու ազգագրական իր նշանակութեամբ հատուկ տեղ է բռնում նախավերջին կանոնը: Նախ ծանոթանանք նրա բնագրին.

«Ի զրկանաց և ի խաբելոյ պատրաստ կայցեն քրիստովնեայքն և ի նենդելոյ զիրեարս՝ արք և կանայք, հազկիցք և խապկիցք, և զինուորակիցք, և արուեստակիցք, զնաւք և վաճառաւք, զի որ մարմնական իրաւք զրկէ բռնութեամբ կամ խաբելով՝ զինքն հոգեով զրկէ և յաւիտենական կենաւքն» (էջ 214բ):

Կանոնի իմաստը մեկնութեան կարոտ չէ: Կաթողիկոսը զգուշացնում է հոգևոր իր հօտին, որ հանդերձ յալ կյանքում կպատժվեն բոլոր անձինք, լինեն նրանք ամուսիններ, զինվորականներ, զնոզներ, արվեստակիցներ (համքարներ), վաճառողներ կամ զնոզներ, «հազկիցք ու խապկիցք», ովքեր փոխադարձաբար կխաբեն ու կնենդեն միմյանց:

¹ Հմմտ. Փափստոս, IV, գլուխ ԺԵ, «Կանոնգիրք Հայոց», Գր. Լուսաւորչի կանոն ԺԷ, Աթանասի I, Սահակի I, Շահապիւլանի ԺԱ և այլն կանոնները (տե՛ս ձեռագիր № 6409, էջ 48բ, 54բ, 58ա, 70բ, 79բ և այլն):

Բացատրության կարոտ են միայն կանոնի «հաղկիցք և խափիցք» տերմինները:

Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան»-ում կա կոտու բարբառից վերցված «հախկ» բառը՝ «ընկերակից գութանավորների ամեն մեկի վարելիք հողը» նշանակությամբ (էջ 383): Ուստի դժվար չէ եզրակացնել, որ Հայաստանի որոշ շրջաններում «հաղկից» էին կոչվում հարակաշները, այսինքն այն գյուղացիները, որոնք շունենալով համապատասխան քանակությամբ քաշող սնասուն ու գյուղաանտեսական գործիքներ՝ միավորվում էին, կազմում ընկերակիցների խմբեր, և միասնական ուժերով ու միջոցներով վար ու ցանք անում:

Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում «խափիցք» տերմինը: Գյուղական այն ընտանիքները, որոնք փոքր քանակությամբ կաթնատու անասուններ ունեին, օրվա ընթացքում իրենց ստացած շնչին կաթով անկարող էին յուղ ու պանիր պատրաստել: Դարերի գործունեության փորձով ժողովուրդը գտել էր այդ դրությունից դուրս գալու եղանակը: Նույն վիճակի մեջ գտնվող գյուղական մի քանի ընտանիքներ փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում էին օրվա ընթացքում ստացած իրենց կաթը, որոշյալ շափ-ամանով, հերթականությամբ, տալ ընտանիքներից մեկին: Ամանը, որով փոխ էին տալիս կաթը, կոչվում էր դար կամ խար, խապ (տաճկ. զան—աման բառից), որից և ընկերակցության անդամները՝ «խափիցք»: Հայ ժողովրդական առակներից մեկը նվիրված է հենց նենգող «խափիցներին»: Ընդամենը տասը այժ ունեցող այրի մի կին, լինելով խափից «յամեն օր շերեփ մի շուր լնոյր ի կաթն և ի խափ (տարբերակ՝ խապ, խար) տայր»: Իր այժարած որդու «է՛ր առնես զայդ վնասդ» հարցին մայրը տալիս է այսպիսի պատասխան. «Որդի, մեր կաթնս քիչ է՝ այնոր համար առնեմ, թէ քիչ մի աւելի լինի մեր կաթն, որ մեզ ձմռանս թացան լինի» (Ն. Մառ, Ժողովածույք առակաց Վարդանայ, մասն Բ., Ա. Պետերբուրգ, 1894, էջ 238—239):

Վերահիշյալով, անշուշտ, չի սպառվում Կոստանդին կաթողիկոսի «Խրատական թղթի» պատմական և ազգագրական նշանակությունը: Այն գրված էր Արևելյան Հայաստանի բոլոր բնակավայրերում ընթերցվելու համար, ուստի թղթի լեզուն չէր կարող ժողովրդական լայն մասսաներին անհասկանալի գրաբարը լինել: Լեզվաբաններին թողնելով թղթի լեզվի մասնագիտական քննությունը, նշենք միայն, որ միջնադարյան աշխարհարարի տարրերը գերակշռում են այնտեղ: Կարելի է մեջ բերել բազմաթիվ նախադասություններ ու դարձվածքներ, որոնք ուղղակի գրված են միջնադարյան աշխարհարարով: Օրինակ. «Արդ, պատե՛հ է, որ այսպիսի ազգն և անրիժ և անարատ հաւատն և ամենևին մաքուր ի հերձուածոյ այնպէս ծուլացեալ լինի և ազիտացեալ որ շգիտենա զիւր պատիւն և շունենա սահման խոստովանութեան, և հաղորդութեան և եկեղեցազարդութեան, և քահանայասիրութեան, և աստուծոյ պողարերութիւն, զոր աստուածապահ թաղաւորն մեր և կաթողիկոսն և թաղաւորութիւն՝ ամենայն եպիսկոպոսաւր և մեծամեծաւր յառնում են և այլ մերձակայ քրիստովնեայքս ուր մեր եպիսկոպոսերս ի հասանել են՝ ունին աստուածոյ շնորհաւրն և դուր, ուր այն ամենայն աստուածազորժ նշանքն եղեն՝ շունիք» (էջ 208բ—209ա) և այլն:

«Խրատական թղթի» բնագիրը հրատարակում ենք Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանի հայերեն ձեռագրերի Նոր շարքի № 37 ձեռագրի համապատասխան էջերի լուսանկարների հիման վրա, օգտագործելով նաև Հ. Զանփուղայանի կատարած ընդօրինակությունը:

[ԽՐԱՏԱԿԱՆ ԹՈՒՂԹ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ]

208^ա Խրատական թուղթ ի ձեռն մեր վարդապետին Վարդանայ, որպէս թէ ես եմ եկեալ և ձեզ առաջի գերեսս ի գետինն եղեալ աղաչեմ արտասուաւք զմի մի իւրաքանչիւր ի ձէնջ և զանձն իմ փոխան ասեմ, որ զայդ շափաւոր և զիւրազօրծ արէնքդ առնէք յամենայն կարողութենէ շանացեալ, վասն ձեր հողոյ և մարմնոյ աւգտի և շահու և փրկանաց ի պատուհասէ փորձանաց, և մեզ՝ ի պարծանաս և յանգատապարտութիւն, որ ընդ ձեր համարս պարտիմք տալ աստուծոյ: Եւ արդ, ի յեթնհարիւր թուիս մերոյ տումարիս և յէ. (30) հայրապետութեանս մերոյ, յորում ակնունէաք ողորմութիւն ինչ գտանել յաստուծոյ և բարի համբաւ լսել զձէնջ, մեք զհակառակն հասկացաք, թէ բնաւ չէք լսել աղաչանացս մեր և չէք արարեալ. և բազմապատկեալ են և շատացեալ ամենայն շարիք և մեզաց տեսակք, զոր յառաջ սակաւ ունէիք: Այլ ծուլացեալ էք ի յուսմանէ և յազաւթից և ի ժամատեղաց, և էք իրբև զանբան անասունք՝ չգիտելով զարէնս քրիստովնէից, զպատիւ հաւատոյս Հայաստանեայց զարեգակնափայլ և զճառագայթաւէտ կրաւնս սուրբ վաստակաւորին Գրիգորի: Եւ զայս ցեղ մեծ և զպարծելի և զնշանաւոր տղգս Հայոց, զոր Քրիստոս աստուած || յառաջ քան զխաչիլն ողջունեաց և արհնութեան թուղթ գրեաց, և Ե. (5) առաքեալ ի սուրբ աշակերտաց իւրոց ի Հայք առաքեաց, և ապա զսուրբ տիկնայնս զսուրբ Հուսիսիմեանքն յԱրևմտից յարկեաց՝ սուրբ Աստուածածնին միջնորդիւ խաւսեցեալ, և Վիրապին սքանչելեաւքն դարձոյց զՀայք առ ինքն: Եւ ինքն իսկ՝ թագաւորն փառաց Քրիստոս իջեալ ի բարձանց և ոսկի ուռամբ շարդէր զգլուխ բանսարկուին և բացեալ զանդունդս արկանէր ի տարտարոսան զայն, ոչ շկամէր թողուլ զՀայք ի ձեռաց: Եւ հրեղէն աջովն իւրով ի վէմս քանդակեալ տար գիր Հայոց, մեծարելով քան զաղգս ամենայն: Եւ այսպէս ինքնածագ է հիմնարկու հաւատոյս Հայաստանեայց և ոչ մարդ որ:

Արդ, պատե՞հ է, որ այսպիսի ազգն և անբիծ և անարատ հաւատն և ամենեին մաքուր ի հերձուածոյ այնպէս ծուլացեալ լինի և տգիտացեալ, որ չգիտենա զիւր պատիւն և շունենա սահման խոստովանութեան և հաղորդութեան և եկեղեցազարդութեան և քահանայասիրութեան, և աստուծոյ պտղայրերութիւն, զոր աստուածապահ թագաւորն մեր և կաթողիկոսն 209^ա և թագաւորութիւն՝ ամենայն եպիսկոպոսաւք և մեծամեծաւք յառ || նում են, և այլ մերձակայ քրիստովնեայքս, ուր մեր եպիսկոպոսերս ի հասանել են՝ ունին աստուծոյ շնորհաւքն և դուք, ուր այն ամենայն աստուածագործ նշանքն եղեն՝ շունիք: Եւ այդ ես առաւել հիացումն և մեծ զարմանք, որ այդպէս մոռացայք զպատուհասն զոր կրեցիք՝ հարուածեալք և զաննալք զաւազանաւ ցասմանն աստուծոյ. և տեսանէք աշաւք ձերովք զլերինս և զզաշտս ձեր, որ սակաւ մի յառաջ լի էին զիակոյտ ոսկերաւք սպանելոցն, և զայրս և զխորաձորս, որ լցեալ էին փախստականաւք, և ուտէք և ըմպէք զհաց և զգինի ի գետնոյդ, զոր տեսէք առգեալ արեամբ սիրելեաց ձերոց: Դուք, որ ծովացուցէք զաշխարհդ ձեր մեղաւք և տեսէք զզա լցեալ արեամբ և արտասուաւք, և զի լոյս պատուիրանին տեսն և արէնք եկեղեցւոյ ոչ ծագէին ի սիրտս ձեր՝ վասն այնորիկ տեսէք զխարումն եկեղեցւոյ և զկոխումն և կողոպտտ սպասուց և պաշ-

տելի և ահաւոր նշանից և աստուածային գրոց: Եւ ոչ սնուցանէիք
 զտղայս ձեր աստուածապաշտութեամբ և ուսմամբ տեառն՝ առին զնոսա ի
 տանց և ի գրկաց ձերոց, ալլ և ի ծոցոյ սուրբ եկեղեցւոյ՝ զգնեալս ա-
 209 րեամբն Քրիստոսի զգառինսն, և տա||րեալ վաճառեցին յազգս և յաշխարհս
 հեռաւորս, իրրև զանբան անասուն: Եւ շատ ևս այն էին, որ ոչ գիտէին
 զչար և զբարի և ոչ զայն եթէ ու՞մ որդիք իցեն և կամ յորմէ՞ ազգէ և աշ-
 խարհէ: Եւ որք գիտենն և յիշեն՝ ևս ողորմելի, զի կարաւտին ծնաւդաց և
 ազգայնոց, տանից և բարեկենդանաց և արբինաց քրիստոնէութեան,
 եկեղեցւոյ և հաղորդութեան. և ի խորոց սրտէ հառաչեն դառնագոյն հե-
 ծեծանաւք և ոչ հասանեն վասն իմ մեղացն առաւել քան զձեր, որ վար-
 դապետութեամբ այսպիսի սուրոց գիպեցայ և ժամանակի դառնագունի՝
 տեսանել և լսել զկսկիծ և զաղէտ իմոցդ աղեաց և անդամոց:

Եւ ի վերայ այսորիկ, զի զաւրացաւ ողորմութիւնն աստուծոյ մեծին
 ի վերայ մեր, և էարկ ի բարի կամս մեծագաւր զանին և իւր խաղաղա-
 սէր զաւրազլիացն և զաւրացն, և արարին խաղաղութիւն մնացորդացդ
 ի ձեռն քրիստոսասէր և աղքատասէր պարոնին Աւագին, որ զիւր կեանքն
 ձեզ փոխան երեւ: Եւ դարձեալ կարկատեցայք և արմատ արծակեցիք
 և շինեցայք: Եւ մեք լսեցաք և մխիթարեցաք և արհնեցաք զաստուած և
 210ա զզանին և զիւր || հեծելին բարեմտութիւնն որ առ մեզ:

Եւ վասն զի որպէս արժանն էր շեթող յամենայն որ զիւր ճանապարհն
 շար և մեղաց սովորութիւնն, դարձեալ զայրացոյց աստուած զբարս զաւ-
 րացդ որ առ ձեզ, և հանին զսուսերս ի պատենից և լարեցին զաղեղունս
 իւրեանց, և ծայրաքաղ արարին ի բազում տեղիս զմարդ և զանասուն և
 զստացուածս, որպէս առ մեզ էհաս համբաւն: Եւ ընդ կապանս և եռանդն
 մահու անցուցին եկիւղիւ զիշխանս երկրիդ, և մեծաւ հայրենի և զթասիրտ
 պարոն Աւագն յետ այնորիկ վախճանեցաւ և շիջաւ ճրագն վառ: Բայց
 զիս ոչ արար ողորմածն աստուած ըստ մեղաց մերոց և ոչ հատոյց զա-
 մենայն շարիսն մեր, և հաշտեցան ընդ մեզ դարձեալ ի տեառնէ յաջո-
 դեալ զաւրքն զանին, և կայք ի տունս ի և վանորայս և ի հայրենիս ձեր,
 և եկեղեցիք են ի ձեզ տեղիք ազաւթից և պատարագաց ի յիշատակս մե-
 210ա ուելոց և ի սնունդ և ի փրկութիւն կենդանեացդ: Ի վերայ այսորիկ
 արհնութիւն և զոհութիւն, պատիւ և փառք անձառ սիրոյն և զթութեանցն
 Քրիստոսի աստուծոյ մերոյ յաւիտեանս յաւիտենից:

Եւ թէ հարկդ ծանր է և խիստ՝ և ալլ վասն մեղաց է, զի կարկառի և
 210բ երաշտով և խորշակով և մարախով պակասութիւն || է ի լինել երկրիդ
 պողարերացդ, ուստի զհարկն ձեր վճարէք: Արդ, դուք մեզ լսեցէք և ի բա-
 րին դարձիք և ի ձեր պարկեշտ վարքն ըստ պատուիրանին աստուծոյ՝ և մեք
 երաշխաւոր եմք, որ ամենայն ճշմարտութեամբ աստուած առ ձեզ դառ-
 նայ զթութեամբ և ողորմութեամբ շաւղոց և յեղանակաց տարւոյ, բարե-
 խառնութեամբ երկինք երկնաւորաւքն տացէ զքաղցրութիւն իւր ի վերա
 ձեր, և երկիր առատութեամբ տացէ ձեզ զպտուղ իւր, և զանին կամքն
 արձականայ և թեթեացուցանէ զմայն, զի սիրտ թագաւորաց ի ձեռին
 աստուծոյ են և նա է տուեալ զամենայն աշխարհս զանին և ալլ է տա-
 լոց նմա, չպակասէ ոչինչ զձեր մայն թեթեացնելով: Ապա դուք զառաջի

¹ Բնագրում՝ «շթեթեացնելով»:

աղաթք նմա և իւր դարացն արարէր, զի այն է մեր արէնքն, որ զոր
աստուած մեզ տէր և թագաւոր տացէ՝ յառաջին աղաթքն մեր զնմա
կենդանութիւնն և զաջողումն խնդրեմք, և այսաւր զնա է տուեալ և թող
հանապազ զնա տա: Զի ուստի՝ այնպիսի շարատեաց և մեղսատեաց իշ-

խորատուական թուղթի շեռնմեր վարդա
պէտսինս վարդաձայ. որպէս թէ տեմեկեալ
և ձեղատուաջի զէրեախի տինն եղեալ աղա
քէմարտապտաւար պմի մի իւրապաւնց ի-րի ձե
նջ. և պաւնէն ի մեծի տեսն ասեմ: որպայց զսափ
ասոր և զիւրապոր ծարերք զատնէր յասմկա
րողոս թէնէ ջանապեալ: զասան ձեր հարցոյ
և մարմնոյ ասպատի և շաւհոս: և փրկանս ասց
իւրատուա հասե փոր ձանսայ: և ձեղիւրա քծ
անս և յանդաւատա պարատու թի: որ ընդ ձեր
հասմարապարտ իմք տալայ: Եւ արդի յե
թնէ հարեւր թուի մեղոյ ատմարիս և յ. Լ
հայրապետու թեմեմերոյ յորումակնու
նեաք ողորմու թի ինչ պատան էլ յայ. և բա
րի հասմբաւ լաէ լի ձեռք: Լէք զհասկա տա
կն հասկապար թեքն աս չեք լաէ լաղա
չանսայ մեր: և չեք արարեալ. և բազմա
պատկեալ էն և շատապեալ ան չարիք. և
մեղսոյ տեղակք զոր յատա շատկա տնտ
իք: Լ Լ թուղթեալ էր ի յորումանէ և յա
ղաւ թից և թմանա տեղայ: և էր ի բր և
զանս բանս անս աստաճք. չպիտ է լոյ պարեկե
քրիստոս զն էնց. զպատիւ հաստոր յա
աստանէ տայ զարեղա կն ասիայ և զճատ
ապայ թատեա և զս ասմեա և զ պատտա և յա
որինս պրիպորի. և զպայ յեղմեմ և զպարծ
է ի և զն շանս ասոր ասպա հայոց. զոր քանս

Նկ. 1. «Իրատական թղթի» բնագրի առաջին էջի լուսանկարը:

խանութիւն և բարեսէր և լուսաէր, զի մեր արէնքն այլ այն է, որ յիշոց
բնաւ չգիտեն, և զգողութիւն և պոռնկութիւն մարդոյ և զբողութիւն
211ա || արամբի կնոջ ատեն, և զենկութիւն և զստախաւսութիւն և զկեղծաւո
րութիւն և զամենայն շարարարութիւն մարդոյ:

Նւ արդ, ես հազկոր հայրս ձեր և հայրապետս, որպէս թէ ի ծունկս
իջեալ առաջի ձեր՝ մեծի և փոքու, մաղթեմ արտասուաւր, բարեխաւս
ունելով առ ձեզ զարիւն և զբրտունս և զվարս և զվաստակ առաջին հայ
րապետացն սրբոց և քաջ նահատակացն, և զիմ ծերացեալ հասակ և

զալիս առաջի ձեր ընկենում և այնպես աղաչեմ՝ մի առնէք զմեզ ամաթով և դատապարտ առաջի ստենին աստուծոյ, որ պահանջելոք է յինէն և յայլ առաջնորդացն ձերոց՝ զհամարս կենաց և վարուց՝ ձերոց, և մի մատնէք զանձինս ձեր աստէն կենաւք ի մեծամեծ փորձութիւն և յնա աստի կենացս անշիջանելի գեհնին և աններելի տանջանացն, այլ զգաստացարուք և ի յուշ և ի խելս եկէք և ի գիտութիւն ճշմարտութեան, և ի բաց հանէք զամենայն բիծ և զարատ յանձանց ձերոց և զտեսակ մեղաց, որ արտաքս պատուիրանին մտեալ է ի ձեզ:

211բ Եւ յառաջ զոր յղարկեցի առ ձեզ կարճ բանիւ զմեր սուրբ հարցն զխրատ և զուսումն, թէ որպէս պարտ է լինել քրիստով լինին, զոր մինչ ի մեզ պահեալ է մեր ազգս, և ի մեր ժամանակս լսեմք թէ ի մոռացմունս եղեալ յաղքատութենէ և յանպարտապութենէ և առաւել ի մեր ծուլութենէ, որ շինք զգուշացուցել և շինք ասացել և ամաթով ենք յաստուծոյ և ի ձեզանէ: Արդ, զարձեալ յուշ առնենք ձեզ, զոր վերստին գրեցաքն, որ ով գիտէ՝ հաստատի և ով չգիտէ՝ ուսանի, զի յառաջ գիտելն է և ասպա ասնելն:

(Ա.) Եւ առաջին այս եղիցի ուսումն, որ ամուսնաւորքն հինգ ազգաւք հեռի լինին յարեան ազգակցութենէ, և ի վեցերորդին պսակին: Քան զԺԳ. (13) տարին պակաս շինի հարսն և փեսայն՝ քան զԺԳ. (14), և յեկեղեցին զպսակն և նաւթի և հաղորդին արժանիքն, և Ը. (8) աւր սուրբ կենան մինչ ի վերանալ պսակին: Եւ աղուհացիցն և յինունքն և յամենայն արքայահար և շարաթապահար և յամենայն կիրակէի և ի խաչին և յայտնութեան ութարէքն ոչ արհնեն պսակ, զի ոչ է հրամանք հեշտանալ անկողնաւք: Եւ երբ յգի է կինն՝ ի բաց կան, որպէս և անասնոց անգամ արէն է, և ի ժամ արձակման արեանն՝ նոյնպէս:

212ա Բ. Երբ ծնանի մանուկն շառնեն ինչ հմայութիւն և կապեն յորորոցն կամ ը ի բազուկ տղային, այլ խաչին կնքեն յառնուլն և ի դնելն և ի գիացուցանելն կաթն կամ ջամբ: Եւ երբ զձեռն շարժել կարէ տղայն ուսցնեն, որ ինքն կնքէ զխաչն, նախ ի գլուխն, ապա յոտսն, որ լինի բուն խաչին, ապա ի ձախ թեւն, ապա յաջն բերէ, որ լինի խոտորնակ թեւն, և երբ լեզուն արձակի՝ յառաջ զաստուծոյ անունն տան խաւսել՝ աստուած, տէր Յիսուս Քրիստոս, հայր և որդի և սուրբ հոգի, արհնեալ է աստուած, արհնեալ Քրիստոս աստուած, արհնեալ հայր և որդի և սուրբ հոգի, փառք հայր և որդոյ և սուրբ հոգոյն, արհնեալ սուրբ երրորդութիւնն այժմ և միշտ, ապա զսուրբ աստուածն, ապա զհայր մեր որ յերկինս: Զայս բաներս արդ ուսուցանեն քահա[նա]յքն տղայոց, մինչ ի ծերս և ի պառաւունս: Եւ յարն Գ. (3) անգամ ասեն՝ ի ժամ քնոյն և առաւաւտոյն և ի հացին ժամն, ԺԲ. (12) ծնրով, մեծաւ փութով²:

Գ. Մին շարաթ կնքեն զտղայն, երէցն նաւթի և երկեղիւ և անզրոյց, բայց թէ մահու երկեղ լինի՝ յամէն ժամ կնքեն: Այլազգոյ և կնոշ շտան սան զտղայս քրիստոնէից:

¹ Գրված է եղել «հաստատի», սակայն լուսանցքի վրա, հատուկ նշանով, ցույց է տրված, որ պետք է կարդալ «արձակի»:

² Գ. կանոնը կամ վրիպել է ընդօրինակողի ուշադրութեամբ և չի արտազրվել կամ էլ Բ. կանոնից հետո սխալմամբ նշանակելով Գ. (միջանցելով Գ-ն), ընդօրինակողը խախտել է կանոնների նախնական համարակալութեանը:

Ե. Յամենայն կիրակէի առնու քահանայն զխոստովանութիւնն ի ժողովրդենէն՝ ի Գ. (4) ամէն ի վեր՝ յառնէ և ի կնոջէ: Եւ թէ շատ է ժողովուրդն ի ԻԱ. (21) ||աւրն անպատճառ ճանաչէ զիւր ժողովուրդն երէցն, թէ որպէս է կացեալ. և ի մտի պահեն զյանցանքն՝ մինչ որ աւեն իրիցուն: Եւ թէ մեծ ինչ մեղք է՝ յաւրն յորում դիպեցաւ խոստովանի, և մի հանգիստ անձինն մինչ որ խոստովանի, և խոստովանի ի վաղիւն մի ելցէ քրիստովնէին: Եւ խոստովանութեան խրատ վայելչական զեկուցանեմք: Գ. (3) ծունր դնէ ընդ արևելս և ասէ՝ Հաւատամ ի քեզ հայր և որդի և սուրբ հոգի, երրորդութիւն և մի աստուածութիւն, անոխակալ և անչիշաշար, որ քննես զսիրտս մեր և քննես զամենայն գործս մեր, հաւատամ ի քեզ Քրիստոս աստուած, որ եկիր և զալոց եւ դատել զաշխարհս ըստ իւրաքանչիւր գործոց: Եւ ի ծունկս իջանէ առաջի քահանային մարդն զլիսիրաց և կինն ծածկով և ասէ՝ մեղայ աստուծոյ, մեղայ սուրբ պատուիրանի նորա, մեղայ առաջի աստուծոյ և հրեշտակին, որ պահէ զիս, մեղայ իմոյ անձինս և ամենայն մերձաւորաց իմոց, մեղայ խորհրդով, բանիւ և գործով, աշարք, ականջարք, լեզուարք, ձեռարք, ոտարք և ամենայն անգամարքս, առաւել կամարք և գիտութեամբ, քան թէ ակամա և անգիտութեամբ, մեղայ և քեզ ||տէր երէց և իմ հոգևոր հայր, մեղայ քո սուրբ խրատուն և աւրինացն, զոր պատուիրեցէր ինձ: Եւ ասա սկսանի որպէս և լեալ է և զաւրինակ մեղացն, պարսաւելով զինքն և արտասուարք, և այնպէս ջանայ, որ աւելի ասէ քան զայն, որ լեալ են իրքն:

Զ. Յամէն Խ. (40) աւր հաղորդեսցին արժանաւորքն ահիւ և զողութեամբ և մեծաւ յուսով և չի հաւատով, որպէս ի ճշմարիտ մարմին և յարիւն աստուծոյ մերձեցեալք: Գ. (3) աւր սուրբ կացցեն յանկողնոյ աւրինաւոր՝ յառաջ քան զհաղորդիլն և յետոյ: Զգուշանան և սուրբ պահեն զրեւանն ի չիշոցաց, և յամենայն շար խաւսից, ի մատնութենէ, ի դուր ասելոյ և սուտ, ի բանրասանաց, յանբարտաւան խաւսից, ի խարելոյ, յաւելի ստելոյ, ի խմելոյ և յանսուրբ կերակրոյ. որպէս զաստուծոյ դուռն մտից պահել զրեւանն:

Է. Յիշոցաւագ գնել յամենայն տեղիս՝ ի մեծ և ի փոքր, անողորմ տուգանով և խրատով, և առաւել որ հաւատ, կամ բերան, կամ երես անարգէ, կամ քահանայ, կամ գերեզման՝ զլեզուն ծակին և լար անցուցանեն և ի շուրջ ածեն ծեծելով, և տուգանք առնուն և ընդ աղքատացն ի մալն տան:

Ը. Ամէն պահք անձու||կն և անգինի և անամուսնութիւն լիցի, և ամենայն զգայութեանցն պահպանութիւն յամենայն մեղաց և ոչ միայն յուտելոյ և յըմպելոյ, զի պահք է անունն:

Թ. Գարի և ալիւր և աւաղ և ուլուն և ջուր մի դիւթեսցեն, և խտրութիւն հաւոց՝ թռչման և կոշման, և մարմնոյ խաղալոյ, և երազոց, և ձայնի կրակոյ և դրան, և սողնոյ ինչ երևելոյ ի տանն, զի այսպիսիքս աւտար են ի կրանից քրիստովնէից, և մի որ իշխեսցէ առնել, զի մեծ մեղք են:

Ճ. Ի քաշախաւս և յերազահան մի որ երթիցէ և լեկրոտի մալան աղի մի իշխեսցեն ածել, և մի ի բանից նոցա խարեսցին և մի հաւատացեն բնաւ:

1 Բնագրում, անշուշտ վրիպակով, զրված է՝ «հաւատոց»:

ԺԱ. Կնքոյն և խոստովանութեանն և հաղորդին գրամ մի տացեն և ոչ երիցունքն առցեն, այլ ձրի լիցի ամենևին, զի պարզե աստուծոյ է և ոչ մարդոյ: Որպէս և մեք անարժաթ ձեռն դնեմք ի վերայ եպիսկոպոսացն և եպիսկոպոսքն ի վերայ քահանայից՝ նոյնպէս և քահանայքն իւրեանց արասցեն անպատճառ: Ապա պսակին և թաղմանն և մատաղին զինչ արէնքն է տացեն ժողովուրդքն երիցուն, և խաշահամբոյր, և յամենայն արդեանց պատու՝ բաժին աստուծոյ, որ այլ ամենայն ստացուածքն 214ա արհնութեամբ լցցին և աստուած բաժնակից լիցի ըրրիստովնէից և պահէ զպատուս տարւոյն յամենայն վնասուէ:

ԺԲ. Ի վերայ մեռելոյ մազ մի կտրեսցեն, և սեաւ մի արասցեն, և զերեսս մի կեղեքեսցեն և զձեռս, և լալական մի վարձեսցեն, և խաւարարդել մի լիցին, զի մի զինքեանս և զմեռելալս վնասցեն և ամաթով լինին յաստուծոյ անյուսարար կոծ զնելով, զի հեթանոսաց [է] և ոչ քրիստովնէից այդպիսի արէնք:

ԺԳ. Կախարդ և զող և պունիկ և բող և յիշոցասաց կամ դառնան ի շարէն, կամ հալածին անողորմ, զի մի յանմեղացն վերայ ածցեն զբարկութիւնն աստուծոյ:

ԺԴ. Շարաթ կիրակէքն ամէն մեծ և փոքր ի ժամատեղն երթան և ազուհացքն՝ յամէն ար. և զրոյց մի տացեն ի ժամատեղն, այլ լութեամբ և երկեղիւ յազաթս կացցեն, որպէս յառաջի աստուծոյ համարելով զինքեանս:

ԺԵ. Գ. (3) անգամ ժողովէ ի տարին երէցն յեկեղեցին որիշ որիշ՝ զարս և զկանայս և զկուսան ազջկունս և զկուսան կտրձերն և յարմար հասակացն և վարուցն խրատ տացէ, զի ամէն հասակի և վարուց և բարուց խրատ որիշ է:

ԺԶ. Կարողք և ունկորք զիւրեանց թիկունք մի արասցեն և ազասնացին¹ և զոյժ հարկին ի տկարսն և յազբատսն թողցեն, զի մի տըրտմեցուացեն զարարիչն նոցա, և ընոցա պսակ զուզեսցեն ի հանդերձեալն և զիւրեանցն զրկեսցեն, զի մեղք նոցա սրբի, որ յայս ժամանակս իրք մի ոյժ հասանէ², զի վասն մեղաց է պատուհասն:

ԺԷ. Ի զրկանաց և ի խաբելոյ պատրաստ կայցեն քրիստովնեայքն և ի նենգելոյ զիրեարս՝ աչք և կանայք, հաղկիցք և խապկիցք, և զինուորակիցք, և արուեստակիցք, զնաւք և վաճառաւք, զի որ մարմնական իբաւք զրկէ բնութեամբ կամ խաբելով՝ զինքն հողով զրկէ և յախտենական կենաւքն:

ԺԸ. Արժանաւորացն և ուսելոցն և լաւ քահանայիցն լիցին եկեղեցիք և ժողովուրդք³:

¹ Ազճատված բառ է, թերևս պետք է կարդալ՝ «նոցին» կամ «նստին»:

² Կարելի է կարդալ նաև «հասանի»:

³ Այսբանով ավարտվում է: Շարունակութունը չի ընդօրինակված ձևազրուծ:

2. ԲԱՐՔԻԿՅԱՆ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1

Հույն գիտնական Պատարագուր-Կերամեար 1884 թվականին հրատարակեց բյուզանդական կայսր Իսահակ Անգելոսի մի նամակը ուղղված Կիլիկիայի կաթողիկոսին¹: Ինչպես պարզվում է նամակից, դա Հայոց կաթողիկոսի կայսեր ուղղած նամակի պատասխանն է: Պատասխանն անթվակիր է, ինչպես և հասցեատերը չի հիշված: Հրատարակիչը ելնելով նրա մեջ հիշատակված Հայոց կաթողիկոսի բյուզանդական կայսեր ուղղած շնորհավորանքներից, նրա կայսր դառնալու առթիվ, ենթադրում է, որ պատասխան նամակը գրված է Իսահակ Անգելոսի թագավորության հենց սկզբին՝ 1185—1186 թվականներին: Հետևաբար այդ պատասխան նամակը ուղղված է Հայոց Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին (1173—1193):

Նամակը վերաբերում է հայ և հույն եկեղեցիների միության հարցին, մի հարց, որ շատ էր հուզել Գրիգոր Դ-ի նախորդ ներսես Շնորհալույն (1166—1173), ինչպես և բյուզանդական կայսր Մանվել Կոմնենոսին (1143—1180): «Թուղթ Ընդհանրականի» մեջ մենք կարդում ենք.—«Մեծ արքայն հոռոմոց (Մանվել Կոմնենոսը—Հ. Բ.) ի սկիզբն աւուրց աթոռակալութեան մերոյ առաքելական աթոռոյս առաքեաց առ մեզ արս պատուաւորս հանդերձ արքունական նամակօք, միանգամ և երկիցս և երիցս յազազս սիրոյ և միաւորութեան եկեղեցոյ ըստ նախնեացն ժամանակի, և բառնալոյ զեկամուտ պատճառս երկպառակութեան ի միշոյ երկաքանչ իւրոց ազգաց»²:

Ինչպես հայտնի է, Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը ներսես Շնորհալույ մահից հետո շարունակեց բանակցութիւնները Մանվել կայսեր հետ, ինչպես և պատրիարք Միքայելի, որոնց ուղարկել է մի քանի նամակներ³:

Առաջին հայացքից հայ և հույն եկեղեցիների միության հարցը զուտ կրոնական հարց է և քաղաքական պատմության տեսակետից հետաքրքրութիւն չի ներկայացնում: Բայց իրականության մեջ այդպես չէ: Միջին դարերում հայ ժողովուրդը դավանաբանական տեսակետից անշատվելով հույն եկեղեցուց դրանով ոչ միայն ուզում էր պաշտպանել հայ եկեղեցու ինքնուրույնութիւնը

¹ Ο ἐν Κωνσταντινουπόλει Ἑλληνικὸς Φιλολογικὸς Σύλλογος. Ἀνεκδότα ἑλληνικά συγγραμμάτια ἐγγραφῆ τε καὶ ἄλλα κείμενα κατ' ἐκλογὴν συλλεγόμενα ἐκ τῶν ἐν τῇ „Μαυρογορδάτειῳ Βιβλιοθήκῃ“ ἀναγραφόμενων χειρογράφων καὶ νῦν πρῶτον ἐκτιθέμενα ὑπὸ Παπαδοπούλου τοῦ Κεραμέως, Ἐν Κωνσταντινουπόλει, 1884, σελ. 59—63.

² Ներսիս Շնորհալույ Թուղթ Ընդհանրական, Էջմիածին, 1865, էջ 291:

³ Նույն տեղում, էջ 229—280:

հույն եկեղեցուց, այլ մասնավորապես իր քաղաքական ինքնուրույնությունը, որը շարունակ ստանձնությունների էր ենթարկվում Բյուզանդիայի կողմից: 12-րդ և 14-րդ դարերում էլ, երբ հայ-հույն դավանարանական հարցերը օրակարգի նյութ են դառնում, դրա դրդասպաստճառները նույնպես զուտ կրոնական չէին, այլ մասնավորապես քաղաքական¹: Կիլիկիայի հայկական պետությունը շրջապատված էր թշնամի հարևաններով, որոնք չէին դադարում նրան նեղելուց: Այդպիսի պայմաններում Կիլիկիայի հայկական պետության համար առաջնահերթ խնդիր էր բարելավել հարաբերությունները Բյուզանդիայի հետ, որպեսզի գոնե հյուսիսում դաշնակից ունենա ընդդեմ ընդհանուր թշնամի Բյուզանդիայի սուլթանության ինչպես և Անտիոքի խաչակիրների: Մտավորապես նույնպիսի դրություն մեջ էր և Բյուզանդիան: Նրա համար էլ ցանկալի էր, որպեսզի Բյուզանդիայի սուլթանություն, ինչպես և խաչակիրների թիկունքում ունենա դաշնակից ուժ ի դեմս հայկական պետության: Հայաստանի և Բյուզանդիայի փոխհարաբերությունների բարելավման համար առաջին քայլը դա եկեղեցիների մերձեցումն էր, դավանարանական հարցերում եզած վիճելի կետերի վերացումը: Դրան էլ դիմեցին երկու պետությունները: Սակայն Բյուզանդիան ուներ հեռուները դնացող նպատակներ: Նա եկեղեցական միության հարցի տակ տեսնում էր նաև Կիլիկյան Հայաստանի քաղաքական ենթարկումը իրեն: Ընդհատ է, Իսահակ Անգելյոսի նամակից դա բացահայտ կերպով չի դրսևորվում, այնուամենայնիվ նրա այն խոսքերից, թե «Տերը այն աստիճան մեծացրեց մեզ, որ ամեն օր ժողովուրդներ և ազգեր է ենթարկվում մեր ոտքերի տակ» և նրանով, որ հույն եկեղեցին նա համարում է մայր, իսկ հայ եկեղեցին էլ որդի, կարելի է տեսնել Բյուզանդիայի իսկական նպատակները «եկեղեցական միության» քողի տակ:

Այդ հանգամանքը հազիվ թե վրիպեր Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու եկեղեցական գործիչների ուշադրությունից: Բանակցությունները վերջացան ապարդյուն և Գրիգոր Դ Տղան շնչաց Բյուզանդիա, ինչպես որ նա խոստացել էր իր նամակներում Իսահակ Անգելյոս կաշսեր:

Մեզ հայտնի չէր, որ Գրիգոր Դ-ը Մանվել կաշսեր մահից հետո շարունակել է բանակցությունները Իսահակ Բ Անգելյոսի հետ: Վերջինիս պատասխան նամակից պարզվում է, որ Գրիգոր Դ կաթողիկոսը նամակ է գրել Իսահակ կաշսեր եկեղեցիների միության հարցով, սակայն այդ նամակը հայ մատենագրության մեջ չի պահպանվել: Հայ մատենագրության մեջ արձանագրված է միայն այն փաստը, որ Իսահակ Բ Անգելյոսը հալածանք է սկսել հայազավանների դեմ, ստիպելով նրանց դառնալ քաղկեդոնական, այսինքն կատարում էր առաջին քայլը հույների հետ նրանց ձուլման: Դրա դեմ բողոքել է կաթողիկոս Գրիգորը: Վարդան Արևելցին գրում է, որ հայոց 635 թվականին, այսինքն 1186 թվականին «ի վերայ Յունաց թագաւորեաց Փիսիկն, որ և Սահակ և յարոյց հալածանս և շարշարանս ի վերայ հայազաւան ազգաց, զի դարձցին յազանդ նոցա: Վասն որոյ գրէ առ նա աղէրսանս պատրիարքն Գրիգոր եղբորորդի տեան Ներսեսի և Գրիգորի կաթողիկոսացն Հայոց, խաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ: Եւ ոչ լուաւ նմա, այլ դյուրովս դարձոյց ի կրօն իւր և վայլ յալածանս արար»²:

¹ См. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 136—137.

² «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 133:

Այս փաստից ելնելով հայ եկեղեցու պատմության գիտակ Մ. Օրմանյանը գրում է, որ Մանվել կայսեր մահից հետո, որ տեղի է ունեցել 1180 թվականին, «հույներու հետ միութենական բանակցությունները վերջնականապես փակվեցան: Ալեքսիոս Մանուկ (1180—1183) և Անդրոնիկոս Բունակալ (1183—1185) կայսրերը կարող իսկ չէին այսպիսի խնդիրներով զբաղիլ, Իսահակ Անգեղոսն ալ 1185-ին գահակալելով, բոլորովին տարբեր ուղղություն բռնեց, ոչ ևս բանակցելով և համաձայնելով, այլ բռնությամբ և ուժգնությամբ հայերը փաղկեղոնականության հպատակեցնելով»¹:

Սակայն իրականությունն այլ է: Իսահակ Անգելոսի այս պատասխան նամակը, որը վրիպել է ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հայոց եկեղեցու պատմության մասնագետների ուշադրությունից, շատ պարզ ու հստակ վկայում է, որ հայ և հույն եկեղեցիների միության խնդիրը ուժի մեջ էր նաև Իսահակ Անգելոսի ժամանակ: Այդ նամակը հաստատում է Վարդան Արևելցու վկայությունները այդ կայսեր կողմից հայերի դեմ սանձադերժված հալածանքների մասին, ինչպես և Գրիգոր Գ. կաթողիկոսի բողոքը այդ առթիվ: Բայց ինչքան էլ այդ կայսրը ճգնում է ցույց տալ, որ Ֆիլիպպուպոլիս քաղաքի հայ բնակչությունը սեփական ցանկությամբ ու կամավոր է դիմում քաղկեդոնականությանը, իրականում այդպիսի բան չի եղել: Այդ նամակի գրվելուց շատ շէր անցել, ընդամենը 3—4 տարի, երբ սկսվեց խաչակիրների երրորդ արշավանքը: Բյուզանդիան թշնամարար էր վերաբերում այդ արշավանքին: Խաչակիրների զորամասերից մեկը Փրեզերիկ Շիկամորուսի գլխավորությամբ մտնում է Թրակիայի Ֆիլիպպուպոլիս քաղաքը: Նվ ի՞նչ է տեսնում գերմանական կայսրը Ֆիլիպպուպոլիսում: Խոսքը տանք դեպքերին ժամանակակից պատմիչ Նիկետաս Խոնիատեսին. «Մտնելով Ֆիլիպպուպոլիս, — ասում է Նիկետասը, — (Փրեզերիկ Շիկամորուսը) դատարկված գտավ այն բնակչության մեծ մասից և երևելիներից: Եթե որևէ մեկն էլ մնացել էր, նա աղքատ հայ էր: Բոլորից միայն նրանք գերմանացիների արշավանքը համարում էին բարեկամների ներկայություն»²:

Բյուզանդական պատմիչը հայերի այդ վերաբերմունքը աշխատում է բացատրել հայերի և արշավող գերմանացիների միջև իրեն կարծիքով գոյություն ունեցող ինչ որ դավանաբանական մոտիկությամբ և ոչ իրական պատճառներով, այն է բյուզանդական իշխանությունների կողմից իրենց կրած հալածանքներից հայերի ազատվելու ցանկությամբ:

Այդ ժամանակվա միջազգային հարաբերություններից նշենք մի հետաքրքրական փաստ, որին մենք հանդիպում ենք Իսահակ Անգելոսի նամակի մեջ: Այնտեղ հիշատակվում է, որ Հայոց կաթողիկոսի ուղարկած երկու նամակից մեկը գրված էր արաբերեն: Հույն հասցեատիրոջը հայերի կողմից գրված նամակը արաբերեն (և ոչ հունարեն) լինելը քստինքյան մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Ստորև թարգմանաբար տալիս ենք Իսահակ Բ. Անգելոս կայսեր Հայոց Գրիգոր Գ. Տղա կաթողիկոսին ուղղած պատասխան նամակը, դանց առնելով դուռ դավանաբանական հարցերին վերաբերող մասերը:

¹ Մ. Օրմանյան, Ազգապատում, Կոնստանդնուպոլիս, 1912, հատ. 1, սյուն. 1482, (ընդգծումները մերն են—Ն. Բ.): Նույն կարծիքին է նաև Գ. Միքայելյանը. տե՛ս նույն տեղում, էջ 138:

² Nicetae Choniatae, Historiae, Bonnae, 1835, p. 527.

«Գիր շարադրված պրոտասեկրետ տե՛ր նիկեաա Վալանիտեսի կողմից, աղարկված Հայոց կաթողիկոսին տե՛ր Իսահակ Անգելոս կայսեր կողմից:

Իսահակ ի Քրիստոս Աստված հավատարիմ թագավոր, աստվածապաակյալ, արքա հզոր, միշտ օգոստոս, ինքնակալ հոռոմոց Անգելոս, Հայոց պատվական կաթողիկոսին, նրա շնորհքը և բարի կամքը:

...Դու ուղարկեցիր թագավորությանս երկու նամակ, մեկը գրված քո՝ հայերեն լեզվով, իսկ մյուսը արաբերեն: Այդ երկու նամակով մի բան հայտնեցիր, որ վառվում է քո սիրտը մեզ հետ միանալու սիրով, որի համար այնքան ուրախացել ես: Քո սիրո, խաղաղասիրության և միաբանության մասին վկայում է նախ և առաջ այն, որ դու քո վրա վերցնում ես այնքան ճանապարհ կտրելով մեզ մոտ գալու հոգնությունը, ավետելով խաղաղություն և բանակցությունների մեջ մտնել մեզ հետ, խոսակցել մեզ հետ և այստեղ մասամբ հանգստանալուց հետո վերադառնալ...: Դեռ ավելին: Դու գրել էիր նաև, որ եթե նույնիսկ կարող է ճանապարհին հոգնությունից վախճանվես, այդ դեպքում ևս շեռ վարանի կյանքից զրկվելու գնով քեզ ենթակա ժողովրդին փրկել և նրան մեզ հետ միացնել, որպես բարի հովիվ...: Մաղթում եմ հաջողվի քո նախաձեռնությունը և ճանապարհվես անմիջապես, առաջնորդվելով աստուծո կողմից և երկուսս միասին վերացնենք մեր և ձեր միջև գոյություն ունեցող վիհը, և մի մտքով և մեկ լեզվով խոսատվանենք աստծուն... որ այլևս մենք չենք արոհում մի հովվի հոտը, և որ այլևս երկու ժողովուրդ չենք, այլ մեկը և ընտրյալը, ...մենք այժմ կազմում ենք մեկ ոգի, մեկ հոգի, մեկ բան ենք ճանաչում, սրտով հավատում և շրթներով հայտարարում փրկության համար՝ արգարությունը, որը և ուսուցանում ենք ուրիշներին: Իսկ եթե ուրախ է պատվականությունդ թագավորությանս մասին ավետիաներով (նա ուրախ է ի հարկե, ինչպես նա այդ մասին գրեց և թագավորությունս համոզվեց գրանում...) անհամեմատ շատ է ուրախանալու նա լինելով մեզ մոտ, երբ այն, ինչ լսել է տեսնի իր աչքերով: Երկու կողմերի համար էլ ուրախությունը կատարյալ կլինի, եթե վերացվի ամեն մի գայթակղություն...: Թագավորությունս իր տոնախմբության ժամանակ գոչում է այն, ինչ Դավիթն ասեց, թե «Չնայած իմ եղբայրները շատ են և բարի, բայց տերը հաճոյացավ ոչ թե նրանց, այլ ինձ՝ կրտսերիս: Եվ դուրս գալով հանդիպելու համար բռնակալի արյունարբու պաշտպանին, որը գալիս էր գոռոզարար և հարվածելով նրան մահացու հարվածով, վերացրեցի բռնակալության ամոթը Իսրայելի որդիների վրայից»¹: Դեռ ավելին: Տերը այն աստիճան մեծացրեց մեզ, որ ամեն օր ժողովուրդներ և ազգեր է ենթարկում մեր ոտքերի տակ: ...Երկրի վրա մեր դեմ պատրաստվում էր գիր դատապարտության, իսկ վերևում (երկնքում) հանվում էր որոշում բարձրացման: Այստեղ մեր դեմ կոփվում էր երկաթ, մեկը աչքերը հանելու, իսկ մյուսը՝ ձեռքերի և ոտքերի օղակների համար և բանտ, նման անլույս տարտարոսի, դրանից էլ վատ: Իսկ աստրժուց թագ թագավորական և ինքնակալական պայծառափայլություն, աղբատության և բանտի կապանքների մեջ կապյալների ազատագրում, առաջնորդում դեպի պատրաստի լիություն, դեպի առատ լույսը, և ուրիշ շատերը, որոնք իմ մեջ են կուտակված տիրոջ կողմից մեր ազոթքներով: Արյան և նենդության այն մարդիկը այն շափով որ շափում էին, նրանով էլ հատուցում ստացան, տրվեց նրանց փոխհատուցում Քրիստոսի արդար կշռաքարերով, իսկ մենք

¹ Նամակի հեղինակը ամենայն հավանականությամբ ակնաբեկում է իր նախորդի՝ Անդրոնիկոս Ա Կոմնինոսի սպանությունը և իր գահ բարձրանալը:

փրկվեցինք և ուրիշներին պատմում ենք մեզ հետ կատարված հրաշալի անցքերը¹:

...Դու տես, թե ինչպիսին է օգուտը քո ճանապարհորդությունից դեպի մեզ: Եթե առաքելական ասացվածքն ասում է թե փոքրը մեծից է օրհնվում, ապա եթե ոչ ուրիշը, համենայն դեպս դու կգնահատես եկեղեցիների մոր՝ նոր Աիոնի օրհնությունը նրան արժանանալու դեպքում, վերադառնալով մոր մոտ այնքան երկար ժամանակից հետո, որը վաղուց ցանականում էր քո վերադարձը...: Նա հրճվելու է քո ուրախությամբ, որ այլևս օտարացած չես, այլ նրա հարազատ որդին ես, նրանից հոգեպես ծնված:

...Միարանությունը դուրս բերելու համար թաղավորությունս կարծում է թե շատ ճիղեր չեն պահանջվի և դժվարությունների չենք հանդիպի, այլ դա շատ դյուրին և հեշտ է և ես ամբողջ հոգով ցանկանում եմ այդ: Սկսենք: Ինչքան սովորություններ որ կան մեզ մոտ և որոնք հայրերի սուրբ սյունողոսներին կամ սուրբ կանոններին ակնհայտ հակասում են, տեղի ենք տալու և հնարավոր է որ նրանք ուղղենք²: Աստծո շնորհքը այդ արագությունը կատարողներին: Որովհետև փոքրերը չնայած փոքր են և դրա համար արհամարհելի, սակայն դրանք պետք է որ ուղղվեն, որովհետև այդ փոքրից մեծ բաներ են առաջանում: Թեև ուղ մի փոքր քար շարժվելով մի ամբողջ գետ դառնվայր գնա, և մի խիճ հանելը պատճառ է դառնում մի ամբողջ շենքի ավերման. մորեխն ու մարախը և այլ նման փոքր միջատներ մարդկանց մեծ դժբախտությունների պատճառ են դառնում, իսկ ամենից վատը դա այրուձին է, որ ավերում է բերքը: ...Դրա համար, համաձայն թաղավորությանս վերևում ասածին, պետք է անտեսել անկարևորները կարևորների համար, անհրաժեշտ է մի քիչ զիջել, որպեսզի մեծ դործը դուրս գա: ...Պատվականությունը դրեց նաև, որ Ֆիլիպպուպոլսի շրջանում ապրող հայերին իրենց կամքին հակառակ այնտեղի եպիսկոպոսը թաղավորությանս հրամանին համաձայն հավատափոխ է անում: Բայց դա այդպես չէ, այդ մասին պատվականությանդ իրականությունը չի հաղորդվի: Ծիշտ է, ասված է, որ «արքայութիւն երկնից բռնադատի» (Մատթ. ԺԱ, 12), սակայն պետք չէ, որ մտնենք այնտեղ (արքայություն) ուրիշների բռնությանը առաջնորդվելով դեպի նա, այլ անհրաժեշտ է, որ բոլորովին կամավոր կերպով ստիպեն իրենց և անցնեն այդ նեղ (ճամբից): Քո պատվականությունը չկարծես, որ բռնությամբ ենք նրանց բերում մեր կողմը: Եթե մեր քարոզչությունը նրանց ձգում է և համոզում և կամ նրանք սեփական ձգտմամբ անցնում են մեր կողմը, ապա մեզ չի կարելի մեղադրել բռնության մեջ, այլ պետք է որ նրանց զովել, ովքեր նախընտրում են ավելի լավը և ամենից առաջ պետք է որ երախտագիտություն հայտնենք նրանց ձգողին...: Այսպիսի դործերում մարդկային բռնության համար տեղ չկա: Բայց ինչպե՞ս ես դու անվանում մեր դավանությունը այլ, որին բռնի դարձնում ենք մեզ մոտ ապրող հայերին, երբ մեր

¹ Իսահակ Անդեկոսը այստեղ ևս նկատի ունի իր գահ բարձրանալու ժամանակաշրջանի ղեկավարը: Իր նախորդը ուղում էր Իսահակին ձերբակալել, բանտարկել և սպանել: Սակայն ղեկավարն այնպես ընթացան, որ, ընդհակառակը, սպանվեց Անդրոնիկոսը, իսկ Իսահակ Անդեկոսը գահ բարձրացավ: *St'u Nicetae Choniatae, Historiae, Bonnae 1835, p. 144* և հաջորդ:

² Համեմատի՛ր Մանվել կայսեր առաջին նամակի հետ, ուղղված Հայոց կաթողիկոսներին Ենոք հայուն. «Զի թէ գտանիցի աւանդութիւն ինչ ի միջի մերում արտաքոյ աստուածազիր կանոնաց՝ բարձուք յերկոցունց կողմանց» (Ներսէսի Ենոքհալւոյ Թուղթ Հնդհանրական, էջմիածին, 1865, էջ 159):

հավատքը ինչպես որ դու ես վկայում, նույնն է...: Դրա համար, որպեսզի գայթակղության ամեն մի պատճառ վերացվի, քո պատվականությունը թող շտապ կարգով դա մեզ մոտ քեզ ենթակա ընտրյալ մարդկանց հետ միասին, որպեսզի այդ բարի գործը հանկարծ անավարտ չմնա մահվան կամ որևէ այլ արգելքի պատճառով և երկուսով էլ զրկվենք այդ գործի վարձից: Թագավորությունս պատվականությանդ ճանապարհը մաքրել է ամեն մի խոչընդոտից և հայտնել է ազնվագույն սուլթաններին թե՛ Իկոնիայի, և թե՛ Եգիպտոսի, որպեսզի քեզ ենթակա երկիրը անվնաս պահպանվի և դու դյուրություն մը անցնես քո մարդկանց հետ միասին, ճանապարհվելով դեպի իմ թագավորությունը: Այդ բանի համար իմ ներկա վեստիարիտես Կոստանդին Ամասիացուն ուղարկեցի քո պատվականությանը, կարգավորելու համար այդ հաջողությամբ և քեզ հետ միասին դալու դեպի իմ թագավորությունը...»:

2

Իսահակ Անգելոսի պատասխանի շեշտը, շնայած իր զուտ բյուզանդական ճոռոմարանություններին, ինչ խոսք որ զուպ է: Կայսրը պատրաստ է զիջումների դիմել, ինչպես ինքն է ասում, փոքր զիջումների, բաժանվածությունը վերացնելու համար: Եվ դա զարմանալի չէ, եթե նկատի առնենք, որ Բյուզանդիան տվյալ ժամանակաշրջանում գտնվում էր ծայրահեղ վատ վիճակում, իսկ Կիլիկյան Հայաստանը Լևոն Բ-ի ժամանակ իր հզորության գագաթնակետին էր հասել: Գրիգոր Գ Տղա կաթողիկոսը ամեն կերպ աշխատում էր Կիլիկյան իշխանությունը վերածել թագավորության և նրա ձգտումը բարելավել հարաբերությունները, բացի սկզբում նշած պատճառներից մի նախապայման էր նաև իր ձեռնարկած գործի հաջողության համար: Բյուզանդական կայսեր այդ մեղմ շեշտին մենք չենք հանդիպում Կոստանդնուպոլիսի պատրիարք Սասյասի (1323—1334) նույնպես դավանաբանական հարցեր շոշափող պատասխան նամակների մեջ, ուղղված Կիլիկիայի Հայոց կաթողիկոսին և թագավորին:

Այդ նամակները նույնպես անթվակիր են, հասցեատերը նույնպես չի հիշված, բայց նրանք առարված են 1323—1334 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում, Սասյասի պատրիարքության տարիներին: Նամակներից մեկն ուղարկված է Կոստանդին Գ կաթողիկոս Լամբրոնացուն, իսկ մյուսը Լևոն Ե թագավորին:

Հիշյալ տասնամյակը Կիլիկիայի հայկական պետության համար մղձավանջային էր: Մեկ կողմից սելջուկ-կարամանները Թիմուրգաշի, մյուս կողմից մամլուկները սուլթան Մելիք-Նասիրի գլխավորությամբ անընդհատ արշավանքներ էին կատարում Կիլիկիայի վրա: Հայկական զորքերը պարտությունից պարտության էին մատնվում այդ անհավասար պայքարում: Գիմումները Արևմուտք ոչ մի օգուտ չէին կարող բերել, բացի նրանից, որ նրանք ավելի էս սրում էին հայերի և նրանց հարևանների փոխհարաբերությունները: 1323 թվականին Կիլիկիայի հայկական պետության և Մելիք-Նասիրի միջև կնքված հաշտությունը կայուն չէր և հաճախ խախտվում էր մամլուկների կողմից: 1330 թվականին եգիպտական սուլթանը նորից մի քանի հարձակումներ է գործում Կիլիկիայի վրա, ծանրացնելով վերջինիս վիճակը: Սասյաս պատրիարքի պատասխան նամակի մի նախադասությունից, ըստ որի «արքունի սենեկապետը (Միքայել Կալիկրիսիտեսը—Հ. Բ.) պիտի գնա նախ սուլթանի (Մելիք—Նասիրի—Հ. Բ.) մոտ այն գործի համար, որ անհրաժեշտ գտան ձեր (հայոց կա-

թողիկոսի և թագավորի—Հ. Բ.) կողմից ուղարկված դեսպանները»՝ կարելի է ենթադրել, որ լատինասեր հոսանքի պարագլուխ կաթողիկոս Կոստանդին Գ Կեսարացու մահից հետո, որը տեղի ունեցավ 1322 թվականին, նրա հաջորդ Կոստանդին Գ կաթողիկոսը և թագավորը ամենայն հավանականությամբ հուսալքված Արևմուտքից սպասվող օգնությունից, հատուկ դեսպանություն է ուղարկել Բյուզանդիա, մտադիր լինելով բարելավել երկու պետությունների փոխհարաբերությունները:

Եսայաս պատրիարքի պատասխան նամակներից էլ շատ պարզ երևում է Կիլիկիան պետության անելանելի դրությունը, այլապես Հայոց կաթողիկոսը չէր գրի բյուզանդական պատրիարքին, որ խոստանում է համամիտ լինել բյուզանդացիների հետ բոլոր հարցերում: Սակայն Բյուզանդիան անտարբեր էր Կիլիկիայի այդ օրահասական վիճակի հանդեպ: Այլ կերպ չի կարելի բացատրել Եսայասի նամակների այնքան մեծամիտ, վիրավորական, նույնիսկ լիախ շեշտը, որը կարող էր միայն բացասաբար անդրադառնալ երկու պետությունների փոխհարաբերությունների բարելավման վրա¹:

Եսայասի նամակներից սրբովում է, որ բյուզանդական իշխանությունների հալածանքները հայազավանների դեմ, մի բան որ մենք տեսանք դեռևս Խահակ Անգելյոսի ժամանակ, շարունակվում էին նաև մոտ մեկ և կես հարյուրամյակ հետո:

Այս նամակները նույնպես վրիպել են հայազետների ուշադրությունից, չնայած, որքան մեզ հայտնի է, հրատարակվել են երկու անգամ²:

Ստորև թարգմանաբար տալիս ենք այդ երկու պատասխան նամակների լրիվ տեքստը:

1. «Ամենահարգելի, ամենապատվավոր և ամենաբարեպաշտ կաթողիկոս Հայոց եկեղեցվո: Մեր խոնարհությունը հոգու խորքից մաղթում է, որպեսզի բո մեծապատվության և նրան ենթակա ժողովրդի սրտին հասնի խաղաղություն պարզևող աստծո շնորհքը, որպեսզի ավելի ուժգին ու ավելի կատարյալ կերպով ուզեք և դուրս բերեք միությունը մեզ հետ, ինչպես որ մենք էլ ուզում ենք այդ, սիրով, մաղթանքներով ու հաճույքով ցանկանում: Ձեր կողմից ուղարկված դեսպանները ժամանելով բերեցին այստեղ և մեզ հանձնեցին ձեր բարեպաշտության կողմից ուղարկված նամակները: Մեր խոնարհությունը այդ առթիվ հրավիրեց ներկա եղող բարձր հոգևորականներին և ժողով գումարեց, որին ներկա էր նաև իմ ամենահզոր և սուրբ կայսրը (Անդրոնիկոս Բ 1282—1328 կամ Գ 1328—1341) նրան ենթակա սինկղետոսի և թիկնապահների հետ, որը և կարգադրեց ընթերցել այդ գրությունները: Բոլորին լսելի կերպով ընթերցելուց հետո ճշգրիտ իմացանք ձեր դարձի մասին, որ մեծ ջերմությամբ և անկեղծ արամադրությամբ ցանկացաք աստուծո մղումով: Կարիք կա՞ արդյոք ասել, թե այդ առթիվ ինչքան երանությամբ և գոհությամբ լցվեցինք, ինչպիսի հոգեկան հրճվանք ստացանք: Միայն ասենք, որ Տերը այցելեց իր ժառանգությունը, շթողեց, որ իր սեփական ժողովուրդը, որին նա իր արյունով փրկեց, մնա

¹ Այդ նշել էր դեռևս հայանի հույն պատմաբան Կ. Պապարբիզոպուլուն: *Տե՛ս Իστορία του ἑλληνικοῦ ἔθνους, ἔκδ. ἑκτα, Ἀθήναι, τόμ. Ε, μέρ. Α' σελ. 192.*

² *Acta et diplomata graeca medii aevi sacra et profana collecta ediderunt Franciscus Miklosich et Josephus Müller, vol. I, Acta Patriarchatus Constantinopolitani MCCCXV—MCCCII, Vindobonae, 1860, p. 158—164; Migne, Patr. graeca, t. 152, col. 1207—1211.*

անջատված և բաժանված: Ինչպես որ նախապես հոր և աստուծո դեպի մեզ տածած կարեկցությամբ նա անմեղ կերպով մարդ դարձավ և քանդեց բաժանող միջնորմը և վերացրեց հին թշնամությունը և հաշտեցրեց մեզ աստուծո և հոր հետ, այնպես էլ այժմ կրկին, տեսնելով որ դուք հասարակաց թշնամու կողմից ընդունել եք շար սերմեր և ուրիշ բաժանում եք կրել շատ ու շատ տարիներից ի վեր եկեղեցիների ընդհանուր մորից, խղճաց և քավեց և շթողեց որ այդ թշնամին մինչև վերջ ծիծաղի իր ժառանգության կործանման վրա: Եվ այսպես, նա լինելով մեր հոգիների իմաստուն բժիշկը և խոհեմորեն տնօրինելով մեր (գործերը), շատ բավ տեսավ, թե հասել է ձեր բուժման ժամանակը, ինչպես նաև թե ինչ դեղերով է բուժվելու տանջող հիվանդությունը և արմատախիլ է արվելու բույն դրած կիրքը: Չնայած, նա մինչև այժմ երկայնամտացավ, սակայն երբ տեսավ, որ դուք իսկապես մտադիր եք ընդունելու բուժումը, նա գործեց խոհեմությամբ, և դադանի կերպով խոսելով ձեր սրտերի հետ հոգեպարար և փրկիչ (խոսքերով), առաջնորդեց ձեզ որ դիմեք հարազատ մտք՝ տիեզերական եկեղեցուն, քանդի մոր խոսքը մենք ենք մատուցանում բոլոր նրանց, ովքեր ցանկանում են լինել քրիստոնյաներ և կրել (քրիստոնյայի) անունը, իհարկե ձեզ ևս, որ իսկապես այդպիսին եք: Մեզանից են ամբողջ աշխարհով մեկ տարածվում բարեպաշտության սրբազան գողմաները, կարծես մի աղբյուրից հոսում եկեղեցվո կազմի վրա սուրբ հայրերի վարդապետությունները և սուրբ սյունհողների աստվածաշունչ օրենսդրությունները: Այժմ աստված հավից ձեր սրտերին և հաղիվ այդքան ժամանակից հետո ճանաչեցիք ընդհանուր մտք՝ եկեղեցուն, որից այսքան ժամանակե ի վեր բաժանվել էիք: Այժմ դուք արհամարհում եք¹, խորշում եք և բոլորովին դեն եք դցում այն ինչ վատաբար ընդունում էին ձեր հայրերը՝ ի խորտակումն եկեղեցու ուղիղ գողմաների, պախարակում եք նրանց անմտությունն ու անիմացությունը և բացարձակորեն խոստովանում եք ճշմարտությունը և խնդրում եք ու աղաչում ջերմ եռանդով ու ցանկությամբ ընդունել ձեզ ի փառս ամեն ինչի արարիչ և հոր աստուծո: Մեզ էլ ի՞նչ էր մնում անել բացի բացելուց ձեր ասաց մեր խղճացող սիրտը և ընդունել ձեզ ինչպես որդիների, որոնք ճանաչել են իրենց հորը, անշափ ուրախանալ և հայտարարել, որ նրանց, որոնց կարծում էինք մեռած, այժմ տեսնում ենք թե ողջ են, նրանց, որոնց համարում էինք կորած գտնում ենք նրանց փրկված մեր մաղթանքների համաձայն: Եթե այն ավետարանական հարսանիքի ժամանակ փողոցներից հրավիրում էին մարդկանց ընթրիքի, լցվելու համար հոգեկան բավարարությամբ, մենք ձեզ, որոնք մի ժամանակ բարեկամ էիք մեզ և եղբայրներ, հաղորդակից էիք մեր ընդհանուր սեղանին, շե՞նք ընդունի, երբ դուք զղջացել եք, շե՞նք ընդունելու ձեզ, երբ խոստանում եք ուղղվել այն բանից, ինչ ձեր հայրերը անդիտանալով ընդունել էին: Էլ ի՞նչպես պիտի նմանվենք Քրիստոսին, որ ընդունեց Պետրոսին, որ ջերմորեն և անշափ հուզված արտասովեց ուրանալուց հետո, ավազակին համաժառանգ ընդունեց զբախտում մեկ խոսքի համար: Եթե երկնքում ուրախություն է լինում մի մեղավորի զղջման համար, և մի դրամի գտնելը անասելի ուրախություն է պատճառում, ինչպես ասում են աստվածային խոսքերը, ապա մենք ձեզ շե՞նք միացնի մեզ, շե՞նք դուրդուրի ձեզ որպես մեր հարազատ յուրայինների, որոնց բաժանումից բզկավում էինք, երբ դուք՝ ամբողջ ժողովրդով, որ մեծ է ու բազմամարդ և ամենուրեք հոշակ-

¹ Բառացի՝ «թքում եք»:

ված վերադառնում եք դեպի մեզ, խոստանում եք մեզ հետ ամեն ինչում համամիտ լինել և համահավատ: Դա օրենք չէ, սիրելիներ, բարի, խոնարհ և խաղաղասեր հոգու: Այժմ մենք ձեզ առաջ բացում ենք զղջման դուռը և հրավիրում որպես հարազատ զավակների, որոնք ուզում են մեր կողքը կանգնել և միասին փառավորել երրորդությունը, բայց միայն առողջ դատողությամբ, մաքուր մտքով և անբիծ սրտով: Ընդունեք միությունը մեզ հետ և ինչպես խոսքով, այնպես էլ սրտով խոստովանեք և հայտարարեք զողմանների ճշմարտությունը, քանի որ դուք կամավոր կերպով եք վերադառնում դեպի մեզ, այդ գործին ձեզ դրսից ճնշում չի մղում, ոչ ոք չի ստիպում, այլ միայն աստված, որ ուզում է, որ բոլորը փրկվեն և ճշմարտության դիտության գան: Անհրաժեշտ է, որ ձեր սերը և՛ ընդունի, և՛ խոստովանի ուղղափառության զողմաները և ամեն ինչում հար և նման լինի մեզ: Ձեր այս՝ աստծուն հաճելի և փրկիչ գործի համար մենք ընտրեցինք և ձեզ ուղարկեցինք տեր Միքայել Կալլիկրինիանսին¹, ամենահարգելի սերաստոսին, իմ ամենահզոր և սուրբ կայսեր բարեկամին, որը կառավարում է նրա սուրբ Թագավորության աստծո կողմից պահվող պալատը, ամենապատվավոր վանական տեր Գարրիելին, այլև այստեղի հայերի մեծահարգո եպիսկոպոսին: Արքունի սենեկապետը պիտի գնա նախ սուլթանի մոտ, այն գործի համար, որ անհրաժեշտ դասն ձեր կողմից ուղարկված դեսպանները: Նրա հետ ուղարկվողները պիտի ձեզ բերեն իմ ամենահզոր ու սուրբ կայսեր հարգո հրամանը, ինչպես և մեր ներկա գրությունը, որոնցից կհասկանաք, թե ինչպիսի ուրախությամբ և հոգեկան մեծ սիրով ընդունեցինք ձեր դարձը դեպի լավը և ինչպես ընդունում ենք բավարարել ձեզ այն ամենով ինչ ձեզանից պակասում է, այդ ձեզ կհաղորդենք այնտեղ ուղևորվողների միջոցով: Ինչ վերաբերում է այստեղի այն հայերին, որոնք հարեցին մեր սուրբ և տիեզերական եկեղեցուն, հաստատ իմացեք, որ նրանք այդ կատարեցին ոչ թե որևէ բռնության կամ ստիպման հետևանքով, ինչպես որ դուք իմացել եք, այլ սեփական կամքով, սեփական նախաձեռնությամբ և ցանկությամբ: Հենց մենք երբեք էլ չէինք ընդունի նրանց հաղորդակցման, եթե նրանք գային ակամա: Հավատքի և զողմանների ճշգրտության հարցը համոզմունքի հարց է և ոչ բռնության: Ով ուզում է թող նա հետևի ինձ, ասում է մեր Տերը և տիրակալը, սուրբ ավետարանների մեջ: Մենք ինչպե՞ս կարող էինք հավատքի հաղորդակից ունենալ նրանց, որոնց գիտենք թե պարտազրված և վախից են եկել, իսկ սրտում այնպես են մնացել ինչպես որ էին նախապես: Դուք այս էլ նկատի ունեցեք, որ հարցը այնպես է ինչպես որ մենք գրում ենք ձեզ և տեղեկացնում: Ինչ վերաբերում է նրանց կառավարմանն ու անդորրությանը, ասլա այժմվանից իսկ մենք այդ սկսելու ենք, եթե դա ձեզ համար ընդունելի է: Մնում է, որ մեր կողմից այնտեղ ուղարկված մարդկանցից մենք վերջնական տեղեկություն ստանանք ձեր ճշմարիտ դարձի մասին, ձեր ուղղման մասին: Եվ այդպես, ընդունելով ձեզ առանց տատանման և տարակուսանքի, լինենք մի մարմին և մի հոգի ի փառս մեզ ի խաղաղություն կոչած մեր Տիրոջ, աստծու և փրկիչ Հիսուսի Քրիստոսի: Ողջ լիք ի Տեր, սիրելի կաթողիկոս, այր ամենապատիվ»:

¹ Միքայել Կալլիկրինիանսին հիշատակում է ժամանակակից պատմիչ Հովհան Կանտակուզիանոսը իր պատմության մեջ: *St'a Migne. Patrologia graeca*, t. 153, col. 161 ὁ τοῦ κοιτῶνος προκαθήμενος Καλλικρυίτης, col. 128, ὁ Καλλικρυίτης Μιχαήλ ἐκτομίας.

2. «Կիլիկիայի, Իսաւրիայի և ամբողջ Հայաստանի մեծ թագավոր¹, իմ ամենահզոր և սուրբ կայսեր ցանկալի եղբայր: Մեր խոնարհութիւնը ամբողջ սրտով աղոթում է և խնդրում աստծուն, որպեսզի նա կայուն պահի զո թագավորական իշխանութիւնը, նրան ենթակա ամբողջ ժողովրդին, օժանդակի ձեր բարի ձգտմանն ու ցանկութեանը և հնարավորին շափ ավելի պատրաստակամ անի ձեզ ձեր այդ գովելի գործին, ավարտման հասցնի ձեր ցանկութեանն ու փափազը, որ և մեր ցանկութեանն է և որի հաջողութեան համար աղոթում ենք: Քո թագավորական իշխանութեան այստեղ ուղարկված դեսպանից ստացանք զո գրութիւնը: Մեր խոնարհութիւնը, ինչպես ներկա եղող բարձր հոգևորականները, նրա ընթերցումից իմացանք այն ինչ հայտնում էր և ցանկանում զո թագավորական իշխանութիւնը այդ հարցի առթիւ, որ մեզ դիմեց Հայոց եկեղեցւոյ ամենահարգելի և ամենապատվաւոր կաթողիկոսը, հաստատելով նաև զո համաձայնութիւնը այդ հարցում: Քո թագավորական իշխանութիւնը իր կողմից ևս խոստանում է պաշտպանել միաբանութեան խնդիրը, ինչպես նաև քեզ ենթակա հայ ժողովուրդը: Թող իմանա զո թագավորական իշխանութիւնը, որ սիրով ընդունեցինք ինչպես Քո թագավորական իշխանութեան, այնպես էլ ամենահարգելի և ամենապատվաւոր կաթողիկոսի այդ խնդիրքը, որովհետև ամենաողորմած աստուծո շնորհքով մենք խաղաղասեր, բարի և ճշմարիտ հովիւ աշակերտներ ենք, հովիւ, որը միայն այն բանի համար եկավ երկիր, որպեսզի համախմբի բաժանվածներին, բոլորին փրկի: Չեր դարձի առթիւ՝ դեպի մեր սուրբ և տիեզերական եկեղեցին, որի համար դա մեծ ավելացում է, մենք մեծապես շնորհակալ եղանք և խոստովանեցինք աստուծո սուրբ ողորմածութեան, որ նա ի վերջո շթողեց, որ այնչափ ժողովուրդը հարի սխալ դոգմաների և բաժանված լինի նրա եկեղեցուց: Այդ առթիւ մեր զգացմունքների մասին գրեցինք և հայտնեցինք ամենահարգելի կաթողիկոսին, գրում ենք նաև զո թագավորական իշխանութեանը, որ մեծ հաճույքով ընդունում ենք, որ դուք մեզ հաղորդակից դառնաք, այդ հարցի, ինչքան որ հնարավոր է, հաջող ավարտումից և դուրս բերելուց հետո: Աստծուն այնքան հաճելի և փրկարար ձեր խնդիրքի համար ընտրեցինք և ուղարկեցինք ձեզ մոտ ամենահարգելի սերաստոս Միքայիլ Կալիկրինիտեսին՝ իմ ամենահզոր և սուրբ կայսեր բարեկամին, որը գլխավորում է նրա սուրբ թագավորութեան աստուծո կողմից պահվող պալատը նաև ամենապատվաւոր վանական տեր Գարրիելին, այլև այստեղի հայոց ամենապատվաւոր եպիսկոպոսին: Արքունի սենեկապետը պետք է նախ գնա սուլթանի մոտ այն գործի համար, որ անհրաժեշտ գտան ձեր մոտից եկած դեսպանները: Նրա հետ ուղարկվածները պետք է բերեն զո թագավորական իշխանութեանը իմ ամենահզոր և սուրբ կայսեր խրիստովուրդ, ինչպես նաև մեր այս գրութիւնը, որից կհասկանաք, թե ինչպիսի ուրախութեամբ և մեծ հոգեկան սիրով ընդունեցինք ձեր դարձր դեպի լավը, և ինչպես համաձայն ենք բավարարելու ձեզ ինչով որ ձեզանից պահասում է: Այդ մասին ձեզ կհաղորդեն, ինչպես ասացինք, այդտեղ ուղևորվողները: Այստեղի հայերի մասին, որոնք հարեցին մեր սուրբ և տիեզերական եկեղեցուն, թող իմանա զո թագավորական իշխանութիւնը, որ նրանք այդ կատարեցին ոչ թե որևէ բռնութեան կամ ստիպման հետևանքով, այլ սե-

¹ Թագավոր բառը նամակում արտահայտված է ոչ թե βασιλεύς տերմինով, այլ βασιλεւս լատիներեն տեղ. ինչպես բյուզանդացիք անվանում էին ոչ բյուզանդական թագավորներին և կայսրներին, վերադասելով βασιλεύς-ը միայն բյուզանդական կայսրերի համար:

փական մտադրությամբ, նախաձեռնությամբ և կամքով: Եթե դա այդպես չլի-
ներ, ապա մենք ինչպե՞ս պետք է որ ընդունեինք հաղորդակցման մարդկանց,
որոնք ահամա հարեցին հավատին, իսկ իրականության մեջ մնում էին այն,
ինչ որ և նախապես էին: Ինչ որ դուք իմացել եք այդտեղ, իրականության շի
համապատասխանում: Իրականությունն այնպես է, ինչպես որ մենք հայտնում
ենք ձեզ, և այժմվանից կձեռնարկենք նրանց կառավարումը, եթե դա ընդունե-
լի լինի քո թագավորական իշխանությանը: Իսկ մենք մաղթում ենք, որպեսզի
հաճոյանա խաղաղության աստվածը և տեղի ունենա այդպիսի միությունը և
ձեր անցնելը մեր կողմը աստուծո հաճոյությամբ, ինչպես նաև մեր հիմունք-
ների և ցանկության համաձայն, ինչպես նաև այնպես, ինչպես ցանկանում է
և ուզում, ինչպես որ հաճելի է քո թագավորական իշխանությանը, պաշտպա-
նում է աստուծո շնորհքը, անձառ կերպով նրան բերող ամենաանարատ Տի-
րուհու և աստվածամոր միջնորդությամբ»:

Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ
ԱՆՀԱՅՏ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Պետական Մատենադարանի № 6670 ձեռագրում Հովհաննես Երզնկացու անվամբ պահպանված «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» աշխատությունը, ինչպես և Մատենադարանի բազմաթիվ այլ փիլիսոփայական ձեռագրեր, գեոևս չի ուսումնասիրված ու հրատարակված: Իմաստասիրական բովանդակությամբ այս բնագրի գոյության մասին իրազեկ են եղել Մատենադարանի փիլիսոփայական ձեռագրերի ցուցակի կազմողները¹, որոնք և հրավիրել են մասնագետների ուշադրությունը սույն գործի վրա: Սակայն ցուցակում այս ձեռագրի մասին եղած համառոտ ծանոթության մեջ հնարավոր չէր լուծել, նույնիսկ դնել այն հարցերը, որոնք անհրաժեշտ էին նրա գնահատման և մեր մատենագրության պատմության մեջ նրա տեղի որոշման համար:

Նախ, ո՞ր Հովհաննես Երզնկացուն է պատկանում «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» աշխատությունը: Հայանի է, որ հայ մատենագրության մեջ կան բազմաթիվ, մեկ տասնյակից ավելի Երզնկացի Հովհաննեսներ², որոնցից առնվազն երկուսը՝ Հովհաննես Պլուզ և Հովհաննես Ծործորեցի Երզնկացիները³ կարող են լինել ներկա աշխատության հեղինակը:

Հրապարակվող աշխատության վերնագիրը հնարավորություն չի տալիս այն Պլուզին կամ Ծործորեցուն վերագրելու: Վերնագրում ուղղակի ասված է,

¹ Տե՛ս «Յուցակ Մատենադարանի փիլիսոփայական նյութեր պարունակող ձեռագրերի», «Բանբեր Մատենադարանի», հատ. 3, Երևան, 1956, էջ 428:

² Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1946: Լ. Խաչիկյան, ԺԵ գրքի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, (անձնանունների ցանկ), Երևան, 1955:

³ Երկար ժամանակ բանասերները նույնացրել են այդ երկու՝ իրարից որոշակիորեն տարբերվող հեղինակներին: Ղ. Ալիշանը, Գ. Զարգանալյանը, Մ. Արեղյանը և Հ. Աճառյանը սխալմամբ կամ էլ փաստերի սղություն պատճառով չեն տարբերել իրարից մեծ բանաստեղծ, բարոյիչ և գիտնական, հայ լուսավորչական գաղանանքի հետևորդ և պաշտպան Հովհաննես Պլուզ Երզնկացուն և հայանի մատենագիր, գրիչ և թարգմանիչ, ունիթորական շարժման մասնակից Հովհաննես Ծործորեցի Երզնկացուն: Առաջին անգամ այդ երկու գեղեցիկ տարբերակման մասին խոսել է Լ. Խաչիկյանը. տե՛ս նրա «ԺՂ գրքի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 649 (ծանոթագրություն): Վերջերս այդ հարցին հանդամանորեն անդրադարձել է բանասեր Արմենուհի Մրադյանը (տե՛ս նրա հոդվածը՝ «Պլուզ և Ծործորեցի Հովհաննես Երզնկացիները», ՀՍՄԻ ԳԱ «Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, Երևան, 1957, № 5), որը հետաքրքիր փաստերի հիման վրա ազայցուցել է այդ երկու նույնանուն Երզնկացիների տարբերությունը: Մեր կարծիքով, ճիշտ է որչե՛ղ նա Հովհ. Պլուզի և մահվան ժամանակը՝ 1293 թվ., մինչդեռ Հովհ. Ծործորեցին եղել է Պլուզի կրտսեր ժամանակակիցը և մահացել է 1326-ից հետո:

որ գործի հեղինակն է Հովհաննես Երզնկացին: Թեև նման փաստից դժվար է եզրակացնել, թե վերոհիշյալ երկու Երզնկացիներից ո՞րն է սրա հեղինակը, բայց մենք, այնուամենայնիվ, հավանական ենք համարում աշխատությունը վերագրել Հովհաննես Պլուզ Երզնկացուն:

13-րդ դարի երկրորդ կեսի անվանի բանաստեղծ և գիտնական Հովհաննես Պլուզը իր կյանքի ընթացքում ճանապարհորդություններ է կատարել Արևմելյան Հայաստանից գեպի Պաղեստին, Կիլիկիա, ապա Վրաստան, որտեղ տարբեր առիթներով բազմաթիվ փիլիսոփայական և աստվածաբանական քարոզներ ու ճառեր է կարդացել: Շուրջ երեք տարի, 1281—1284 թթ. ճանապարհորդելով Մերձավոր Արևելքում, նա հնարավորություն է ունեցել մոտիկից ծանոթանալու մահմեդական, առանձնապես արաբական աշխարհի գիտությունը: Ամենայն հավանականությամբ, հենց այդ ժամանակաշրջանում, Կիլիկիայի՝ արաբական աշխարհի հետ կուլտուրական շփում ունեցող մտավորականներից որևէ մեկի օգնությամբ, նա շարագրել է սույն՝ «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» գործը, որը, ինչպես երևում է աշխատության և՛ բովանդակությունից և՛ կառուցվածքից, արաբ և պարսիկ փիլիսոփաների ասույթների և աշխատությունների հիման վրա կազմված իմաստասիրական մի կոմպենդիում է, այսինքն, միջնադարում շատ տարածված, համառոտ, բայց ինքնուրույն շարագրանք որևէ ուսմունքի կամ ուսմունքների: Նման տիպի աշխատանք է նաև «Բանբերի» նախորդ հատորում հրատարակված Հովհան Որոտնեցու «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց»-ը¹: Հնարավոր է, որ Պլուզը կատարել է այս գործը իր հետագա գիտական զբաղմունքների համար: Իսկ որ Պլուզի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկել է այժմ հրատարակվող բնագրում արժարժված հարցերը, հաստատվում է նրան անվերապահորեն պատկանող իմաստասիրական-տիեզերագիտական աշխատությունների և ներկա տեքստի ընդհանուր բաղդատությունը: Լինելով բազմակողմանի զարգացած, հանրագիտակ քարոզիչ, Պլուզ Երզնկացին քաջ ծանոթ է եղել Մերձավոր Արևելքի հարևան ժողովուրդների մշակույթին: Այդ են վկայում նրա և գեղարվեստական, և գիտական գրվածքները:

Վերագրանալով իր՝ գեպի Մերձավոր Արևելք կատարած եռամյա ուղևորությունից, Պլուզը 1284 թվականին Տփլիսում գրում է «Յաղագս երկնային շարժմանն» և «Յաղագս երկնային զարդուց» աշխատությունները², որոնք իրենց բովանդակությամբ որոշակի նմանություն ունեն ներկա բնագրի հետ: Առանձնապես հետաքրքիր են արժարժված տիեզերագիտական և տարրաբանական գաղափարների համընկնումները: Սակայն ներկա «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» տեքստը, վերոհիշյալ երկու գործերի համեմատությամբ, ավելի համառոտ է և միաժամանակ ծանրաբեռնված է այլալեզու տերմիններով: Որոշ հատվածներում այդ օտարաբանությունը դժվարացնում է ընթերցումը,

¹ Տե՛ս С. Арешатян, С. Лалафарян, Сочинение Иоанна Воротнеци «Об элементах», «Բանբեր Մատենադարանի», հատ. 3, 1956, էջ 343—386:

² Տե՛ս «Տեարակ համառոտ և լի իմաստասիրո՞ւ բանիւք, արարեալ հոգելից և իմաստուն վարդապետին Յ ո վ հ ա ն ն ի ս ի Երզնկացւոյ, որ և ասի Մորձորեցի, սակս սրանչն չարուեստ արարչագործութեանցն ասուածոյ և յաղագս թուոյ երկնից, շարժման յուսուորաց, կարգի տարբաց, եզանակաց տարւոյ և այլոց իրաց բնականաց», Նոր-Նախիջևան, 1792:

քայց քիչ շեն նաև հարթ և մաքուր՝ Պլուզին հատուկ միջին հայերենով գրված հատվածները:

Հովհաննես Պլուզի խոշոր գրվածքները՝ «Մեկնութիւն քերականի», «Յաղագս երկնային շարժմանն», ինչպես և բազմաթիվ տաղերը դեռ միջնադարում բազմիցս արտագրվել ու տարածվել են, իսկ նոր ժամանակներում տպագրվել և ուսումնասիրվել տարբեր առիթներով: Սակայն, Պլուզի կյանքին ու ստեղծագործական ժառանգությանը նվիրված որևէ մենագրական ու սուլառիչ աշխատություն, ցավոք սրտի, դեռևս հրատարակի վրա չկա: Բացի այդ, Պլուզի բազմաթիվ ատենախոսություններից ու քարոզներից շատերը դեռևս բավարար չափով չեն ուսումնասիրվել, նրա կենսագրության մեջ կան չպարզված հարցեր:

«Ի տանկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք» աշխատությունն ուշագրության արժանի գործ է ոչ միայն այն տեսակետից, որ այն Պլուզի դեռևս շուտումնասիրված գրվածքներից մեկն է, այլ նաև այն պատճառով, որ այստեղ Երզնկացին համառոտակի ի մի է հավաքել միջնադարյան արար և պարսիկ փիլիսոփաների այն ասույթներն ու դադափարները, որոնց համամիտ է և ինքը: Այնպես որ այս աշխատությունը, անտարակույս, կարող է աղբյուր ծառայել նրա փիլիսոփայական հայացքների ուսումնասիրման և բնութագրման համար:

Հրատարակվող բնագիրը բաժանված է հետևյալ ենթադրուկների. ա) «Յաղագս ապացուցի», բ) «Վասն նիւթի և տեսակի», գ) «Յաղագս լինելութեան և ապականութեան», դ) «Խստալոյս իմաստասիրի Յովհաննէս Երզնկացոյ»¹:

Հովհաննես Պլուզի գրվածքը, որը հիմնականում նվիրված է բնափիլիսոփայական հարցերին, պարունակում է հետաքրքիր դիտողություններ ու մտքեր տարբերի մասին, տեղեկություններ դանազան հանքերի, հեղուկների, դազերի, բույսերի, կենդանիների, ինչպես նաև երկնային մարմինների և նրանց հետ կապված երկրային երևույթների վերաբերյալ: Միջնադարին հատուկ սին ալքիմիական դատողությունների հետ մեկտեղ Երզնկացին հայտնում է բազմաթիվ ուշագրավ մտքեր տարբեր նյութերի՝ հանքերի, աղերի, թթուների, գազերի միավորման կամ բաժանման հետևանքով ստացվող նոր նյութերի մասին: Այդ հատվածները, որոնց հետազոտումը թողնում ենք մասնագետներին, հետաքրքիր աղբյուր են հանդիսանում բնագիտության պատմության համար:

Մեզ, որպես հայ փիլիսոփայական մտքի պատմությամբ հետաքրքրվողի, առանձնապես գրավում են այն հատվածները, որոնք կարող են լրացնել մեր պատկերացումը Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքների և առհասարակ աշխարհայացքի մասին: Այս գրվածքը երևան է բերում Երզնկացու էմպիրիկ, ողջամիտ մտանցումը դեպի բնությունը, նրա՝ աստվածաբա-

¹ Վերջինս նոր աշխատության վերնագիրը չէ, ինչպես կարծել են Մատենադարանի փիլիսոփայական ձեռագրերի ցուցակի կազմողները (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, էջ 428): Բովանդակությունից երևում է, որ այդ վերնագրից առաջ և հետո արտագրված բնագրերը բառ էության չեն տարբերվում միմյանցից, իսկ այդ երկրորդ վերնագրերը, ավելնայն հավանականությամբ, ավելացվել է գրչի կողմից: «Խստալոյս իմաստասիրի Յովհաննէս Երզնկացոյ» ենթավերնագրից հետո կիող տեքստը փաստորեն կրթորդ՝ «Յաղագս լինելութեան և ապականութեան» ենթադրի շարունակությունն է:

նական մեկնարանություններից խուսափելու ձգտումը: Այդ ձգտման մեջ դժվար չէ տեսնել և որոշ մասերիալիստական տենդենցներ:

Այսպես, օրինակ, Երզնկացին համեմատում է բնությունն արհեստավորի հետ, որը ստեղծում է այն ամենը, ինչ որ գոյություն ունի: «Արգ՝ բնութիւն ի նմանութիւն հիւսան, Ֆալաքն (երկինքն) որպէս ձեռք, տարերքն որպէս փայտ և երկաթ, և որ ինչ ի նոցանէ լինի՝ աթոռ և թուր, այսպէս կենդանիք, որ բոյսք ու մայտանն» (հանք, միներալ՝ անօրգանական աշխարհ) (105ա): Հետաքրքիրն այն է, որ բնությունն, ըստ Երզնկացու, գործում է աստծուց անկախ և ստեղծում ամեն ինչ՝ անկենդան (անօրգանական), բուսական և կենդանական աշխարհը: Երկինքը (Ֆալաք), որը Երզնկացին նմանեցնում է հյուանի, այսինքն բնության ձեռքերի, դա ոչ աստծո, ոչ էլ նախախնամության խորհրդանիշն է. երկինքն իր գոտիներով, մոլորակներով ու համաստեղություններով բնության բաղկացուցիչ մասն է, և այն էլ ամենաակտիվ մասը, որի անդադրում շարժումը անթիվ-անհամար գոյերի առաջացման աղբյուրն է, «Ֆալաքն է յաշխարհս շարժող հոգին»:

Հասկանալի է, որ Երզնկացին շսկաք է ժխտի աստծո դերը աշխարհի գոյության հարցում: Միջնադարյան մտածելակերպը չէր կարող շվերցնել աստծո գաղափարը որպես կրակետ կամ հենարան փիլիսոփայական հայացքների դարգացման համար: Եթե բնությունը հյուան է և ինքնուրույն ստեղծում է իրեր, ապա ինքը՝ հյուանը՝ բնությունը, ըստ Երզնկացու, «աստուածային արարչութեան արուեստին գործ» է (101ա):

Սակայն չափազանց հետաքրքրական է այն փաստը, որ բնության գոյության, իրերի առաջացման ու բայքայման, երկինքի շարժման և այլ՝ փիլիսոփայության տեսակետից կարևորագույն հարցերի բացատրման ժամանակ Երզնկացին չի դիմում աստծո գաղափարին և բացատրում է երևույթները հենց իրենց հատկանիշների և օրինաչափությունների բացահայտմամբ: Այսպես, օրինակ, նա գրում է «բոյսքն չերկու պատճառէ լինին, կամ ի սերմէ, կամ ինքնարոյս՝ ի ջրէն և ի հողէն և յԱրեգական շարժմանէն է. և ընկերութենէ աստեղացն և Ֆալաքին և տարերացն լինի ամենայն կենդանիք և բոյսք և մատաննին. նոյնպէս և փոփոխումն լինի, որ է ապականութիւն» (96ա): Այստեղ, ինչպես տեսնում ենք, բնությունն առանց աստծո միջամտության հանդես է գալիս որպես բոլոր ենթալուանյա գոյերի արարիչ, ինքն ըստ ինքյան գործելով որպես իրերի «լինելութեան և ապականութեան», գոյացման և ոչնչացման պատճառ:

Երզնկացին գտնում է, որ բնության հիմքում ընկած է նյութը, որն հավիտենական է իր բնույթով, այսինքն, ի տարբերություն իրերի և առանձին գոյերի, չի ենթարկվում ոչնչացման: «Իսկ պարզ ճօհարին և նիւթոյն ոչ լինի բնաւ ապականութիւն» (96ա—96բ):

Բաժանելով նյութը շորս տեսակի, Երզնկացին ամենից բարձր է դասում «առաջին նյութը», որը չի ենթարկվում զգայական ընկալման, բայց «ուստի և սկիզբն ամենայն իրաց» (94ա): Այս հատվածը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն Երզնկացու աշխարհայացքի բնութագրման տեսակետից, այլև նյութի մասին եղած միջնադարյան պատկերացումների գնահատման տեսակետից: Բերենք լրիվ Երզնկացու՝ նյութի ստորաբաժանմանը նվիրված տողերը. «Եւ նիւթն շորս ազգք լինին: Առաջին, նիւթ արհեստից, որպէս փայտ հիւսան և երկաթն դարբնի: Երկրորդն, նիւթ բնութեան կոչի, որպէս շորս տարերքդ և դամենայն ինչ, որ ի ներքոյ լուանիս են: Յայս նիւթէս տեսականան մինչ ի

մարդազ գեանոյս մայտայնինն և բոյսքն և կենդանիքն, և որ ի նոցունցն լինին և յապականիլ խառնուածոյն, այլ ի նոյն տարերսն դառնան՝ հուրն առ հուր և յայլան ամենայն: Եւ այն զօրութիւն պարզ ճօհար է, որ է առաջին շարժումն: Երրորդն, նիւթ ընթանուր կոչին. այսպէս, ֆալարնին և աստեղք և որ ինչ ի նոսա կան, ուստի ամենայն աշխարհի շարախառնութիւն և հաւասարութիւն: Զորրորդն, զոր նիւթ առաջին կոչեն, որ ճօհար պարզ իմանալի, յոր ոչ հասնի զգայութիւն, ուստի և սկիզբն ամենայն իրաց ի նմանէ է և ինքն տեսակ է գոյացութեան, որ է ճօհարն...» (93բ—94ա):

Նյութի գոյութեամբ է պայմանավորված բոլոր գոյերի և արարածների գոյությունը: Ամեն ինչի հիմքում նյութն է ընկած: Նա գրում է. «Եւ դարձեալ, ամենայն գոյացութիւն շորս սահմանով է. պատճառն և նիւթն, ներգործութիւն և գործօղն: Եւ թէ չէր նիւթն, ուստի՞ լինէր գոյացութիւնսն. և թէ չէր գոյացութիւն, ուստի՞ էր զօրութիւն. և թէ ոչ էր զօրութիւն, ուստի՞ էր ներգործութիւն. վասն որոյ սօքօք գոյացան ամենայն արարածք» (106բ):

Մարդն, բառ Երզնկացու, ճանաչում է աշխարհը շորս ձևով՝ «խելացն իմացմամբ, և փորձելով, և զգայութեամբ, և հաւատալով» (92բ): Ռացիոնալ ճանաչողությունը, «խելացն իմացումը» ճանաչման բարձր ձևն է. նա հենվում է զգայական ճանաչողության վրա, բայց ոչ անմիջականորեն. խելքի և զգայության միջև գտնվում է փորձը: Վերջինն իր մեջ պարունակում է զգայության և բանական ճանաչողության որոշ հատկանիշներ, որոնց միջոցով և կարողանում է կամրջի և միջնորդի դեր կատարել զգայական ընկալումների և վերացական մտածողության միջև:

Երզնկացին, ինչպես և միջնադարի շատ մտածողներ, ճանաչողության ձևվերի և աստիճանների մեջ է մտցնում նաև հավատը, որը սակայն գրադվում է ոչ թե բնական երևույթների ընկալումով, այլ գերբնական, աստվածային երևույթներով, որոնց կարելի է միայն հավատալ: Սակայն այլ տեղում, խոսելով ճանաչողության տեսակների մասին, Երզնկացին չի հիշատակում հավատը, նա գրում է. «Երեք են գիտութիւն մարդկան. առաջին՝ զգալիքն և զգայութեամբն, զոր կատարեալքն և աղաքն և այլք կենդանեաց ընկերութիւն ունին... (երկրորդն) խելացն իմացումն, որ կատարելոց միայն է. երրորդն՝ ապացուցականն, որ իմաստնոցն է գործ» (100բ):

Ինչպես տեսնում ենք, Երզնկացու դիրքն այս հարցում կրում է որոշ անհետևողականության կնիք, որովհետև մի դեպքում, խոսելով ճանաչողության մասին, նա մտցնում է հավատը աշխարհի ճանաչման ձևերի մեջ, իսկ մյուս դեպքում, խոսելով մարդկային գիտության մասին, նա հավատին տեղ չի տալիս: Այս հակասությունը սակայն խոսում է Երզնկացու օգտին:

Հովհաննես Պլուզի, միջնադարյան այդ ուշադրավ գիտնականի և բանաստեղծի աշխարհայացքի բացահայտման տեսակետից, հրապարակվող այս բնագիրը ոչ միայն մի լրացուցիչ աղբյուր է, այլև ապացույց այն բանի, որ մեր միջնադարի փիլիսոփաները, գիտնականներն ու գրողները չեն սահմանափակվել գիտության ազգային շրջանակներով և միշտ ձգտել են հարստացնել հայ մշակույթը հարևան ժողովուրդների կուլտուրական նվաճումներով: Այդ մասին է վկայում նաև Հովհաննես Պլուզի կողմից 1280 թվականին Երզնկայի նորաստեղծ «Նորայրության» համար գրված կանոնագրության՝ «Սահմանքի» հոդվածներից մեկում արտահայտված միտքը՝ հարևան ժողովուրդների հետ հաշտ ու խաղաղ գործակցելու, նրանց մշակույթը ճանաչելու

մասին. «Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մէջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցին զասել և զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցին և յիմաստութենէն շահեսցին՝ առանց հակառակութեան»¹: Պլուզը ձգտում էր աճող սերնդի սեփականութիւնը դարձնել ոչ միայն հայրենի գիտութեան շահմարանը, այլև արևելյան ու արևմտյան քաղաքակիրթ ազգերի նպաստ արժեքները:

* * *

«Ի տաճկաց իմաստասիրաց դրոց քաղեալ բանք Յովհաննէս Երզնկացին» աշխատութիւնը պահպանվել է միայն մեկ ընդօրինակութեամբ, Պետ. Մատենադարանի № 6670 ձեռագրի 91ա—111ա էջերում:

Այդ ձեռագիրը, դժբախտաբար, ընդօրինակված է 17-րդ դարում, անվարժ գրչի ձեռքով, լեզվական աղավաղումներով և տառասխալներով, որոնք մենք չենք ուղղում, բացառութեամբ մի քանի անհրաժեշտ տեղերի: Բնագրի լեզուն ծանրաբեռնված է օտար՝ մեծ մասամբ արաբերեն տերմիններով: Այլալեզու բառերի և տերմինների մեծ մասը վերծանված է մեր կողմից². բնագրի վերջում տրված է օտար բառերի բառարան: Չփոխելով ձեռագրի ուղղագրութիւնը, մենք կիրառել ենք սեփական կետադրութիւն: Դա մի կողմից հնարավորութիւն կտա ընթերցողին ճշգրիտ պատկերացում ունենալու աշխատութեան մասին և, մյուս կողմից, ավելի հեշտ ընկալելու նրա փիլիսոփայական իմաստը, որը դժվարութեամբ է հասկացվում արտագրող գրչի կողմից կիրառված սխալ ու պատահական կետադրութեան պահանջման դեպքում: Ելնելով բովանդակութեանից, հստակութիւն մտցնելու նպատակով, մենք լրացուցիչ կերպով բաժանել ենք տեքստը պարբերութիւնների: Մեր կողմից կատարված անհրաժեշտ ուղղումներն ու լրացումները վերցված են ուղղանկյուն փակագծերի մեջ:

Ի ՏԱՃԿԱՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ ԳՐՈՑ ՔԱՂԵԱՂ ԲԱՆՔ ՅՈՎԱՆՆԷՍ ԵՐԶՂՆԿԱՅԻՆ

Յաղագս ապացուցի

91բ Ապացոյցն ի ֆրբելոյն լինի, և ֆրբելն է՝ դիասն, ի որ է խոկալն. և սեռ ապացուցին ֆրբելն է: Ու դիասն այն է, որ զսեռն բաժանէ մինչ յանհասն, որ է արձակիլ:

Եւ է այսպէս, որ ասէ՝ այս իրքս յերկուս բաժանի՝ կամ կենդանի է կամ անշունչ, և տալ որ է՝ զայն քակտէ:

Արինակ յանշնչից ոսկին, որ ասեն այս սպիրայս այնչափ ոսկի է, այնչափ արծաթ է, այսչափ պղինձ: Ոսկոյն մարմինն զիւր գիճութիւն³ և զիւր տահնիաթն և զգորութիւն ի հողոյն առեալ է, և մատանին տաքութիւն զինքն ի լրման եփեալ է՝ զջրին և զհողին յաւելուածն առեալ, որ այլ ոչ կարօտի բաժանման. հրոյն եփեալ է և արծաթն, բայց գիճութիւնն և զեանոյն յաւելուածն հաստել չէ: Եւ պղղընձին եփն միջնակն է, զի

¹ Տե՛ս Լ. Պաշիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբարցութիւնը», ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Հասարակական գիտութիւններ, 1981, № 12, էջ 78:

² Այդ գործում մեզ սիրալիք կերպով օգնել են Ղ. Փափազյանը և Օ. Եղանյանը. օգտվելով առիթից, հայանում ենք նրանց մեր շնորհակալութիւնը:

³ Բնագրում սխալմամբ գրված է «գիտութիւն»:

92ա ժանդ է, որ ետեւումն առեալ է. այլ յիշել է գիճութիւնն և սև է դարձել ի քանին տաքութենէն, ապա հուրն զնա|| այրէ և ցրուէ, որ այլ շրմնա գիճութիւն ջրային և տահնիաթն հողային:

Իսկ ոսկին, որ հաստատեալ է, բնաւ ոչ այրի. և այն է արձակիլն խիասին, յորժամ ասեն ամենայն մարմին մասւոր արեւ է, և մարմին ջրխառնած ի ճօհարէն: Մարմին երկայնութիւն և խորութիւն և բարձրութիւն է, տարերք է և պարզ ճօհար է: Այսպէս իմացիր զամենայն մարմին ֆալաքնոյն, որ է տեսակացեալ ի նիւթոյ: Եւ նիւթն բնաւ բնութիւն շունի, զի թէ ունէր՝ կամ սրակասէր կ[ամ] աւիրէր (^): է այս, զոր մեք կու տեսանենք, օգն է, չէ ֆալաքն. զի մեր զգայարանքս քան զհինգ կամ զտաս ֆարսախա աւելի շտեանու, ապա յայտ է, որ խելացն ֆրքելովն զտանի ֆալաքն, որ է իմացականին և ոչ զգայարանօք: Եւ թէ ասես՝ թէ աստեղքն ընդէ՞ր երևին. վասն առաւել մեծութեան իւրեանց և նրբութեան օգոյն ի մեր տեսութեանս անկանի, որպէս Զոհալն ի եւթն || երկինքն ի վայր զիւր լոյսն ի պաղ գիճութիւն աշաց մեր հասուցանէ որպէս պատկեր մի, որ ի ջուրն երևի:

Եւ ֆրքիլն շորս իրօք լինի՝ խելացն իմացմամբ, և փորձելով, և զգայութեամբ, և հաւատալով:

Խելացն արդարութեամբ, յորժամ ասեմք, հինգ ի հինգ՝ քսանհինգ է, և կամ քսան անգամ ի հինգ՝ հարիւր, կամ յորժամ ասեմք՝ արեգակն լուսաւոր է, կամ ասեմք եռանկիւն՝ եռանկիւն լինի կամ սուր կամ կանկնած:

Իսկ փորձելն ի մէջ խելացն և զգայութիւն (իմա՛ զգայութեան) լինի, որպէս վարօղն սաւֆրային, սակամոնին և սաւդային զարիկոնն, զոր զիտէ խելքն, որ ոչ է պատահմամբ, այլ բնութեամբ, զի թէ պատահմամբ էր, լինէր ժամ մի, և ժամ մի ոչ լինէր:

Իսկ զգայութեամբ է, որպէս այրելն հրոյն և կտրելն թրին, երկայնութիւն և լայնութիւն մարմնոյն, զորդութիւն և ծոութիւն գրոյն, յաւելուլն՝ և պակասիլն տուրնջեան և գիշերոյն:

93ա Իսկ հաւատալն, որպէս շինուածն Երուսաղէմի և կամ մարգարէիցն և թագաւորացն թուականքն և սոցին նմանեաց, որ շկենայ կարծիք ի հաւատալն: Եւ յայս շորիցս ոչ մնայ ինչ արտաքոյ ի ֆրքելն:

Վասն որոյ գիտելի է, որ ամենայն տեսակ սկիզբն ունի, զոր խելքն իմանայ, որպէս ասացաք զճանապարհ քակելոյն անշնչին, այսպէս և զամենայն իր ի սահմանս գտցես: Երբ անունըն սեռ լինի, վայրէ ի տեսակ և զտեսակն՝ յանհատն, զի այս երեքովս լինի եղիասն:

Վասն նիւթի և տեսակի

93բ Գոյացութիւն, քանակն² և որակն նիւթ և տեսակ լինին միմեանց, քանակն՝ տեսակ, և որակն՝ նիւթ. օրինակ, շապիկն՝ տեսակ և կտան՝ նիւթ: Եւ կտան՝ տեսակ և մանածն՝ նիւթ, մանածն՝ տեսակ և բամբակն՝ նիւթ, բամբակն՝ տեսակ և բոյսն՝ նիւթ, բոյսն՝ տեսակ և տարերքն՝ նիւթ, տարերքն՝ տեսակ և մարմին իւր՝||նիւթ, մարմին՝ տեսակ առ գոյացութիւնն որ է ճահար, և գոյացութիւնն իւր՝ նիւթ. և ճօհարն պարզ պատկեր է

1 Բնագրու՝ «յաւելովն»: 2 Բնագրու՝ «քանակին»:

ամենայնի. և այսպէս սկսեալ յօտիցն մինչ ի բարձրութիւն և ըստ այլում օրինակի:

Զինչ ձև որ ի գոյութիւնն ի տես գայ, որ է ճօհարն, անտեսակ կոչի, և տեսակովն լինի բաժանումն էակացս: Եւ տեսակն, որ ի միոյ նիւթոյ լինի, բազում են, և նիւթն մի, որպէս յերկաթոյ և՛ թուր, և՛ դանակ, և՛ այլ բազում իրս:

Եւ նիւթն շորս ազգք լինին: Առաջին, նիւթ արհեստից, որպէս փայտ հիւսան և երկաթն դարբնի:

Երկրորդն, նիւթ բնութեան կոչի, որպէս շորս տարերքդ և զամենայն ինչ, որ ի ներքոյ լուսնիս են: Յայս նիւթէս տեսականան մինչ ի մարգաղ¹ գեանոյս մայտայնինն և բոյսքն և կենդանիքն, և որ ի նոցունցն լինին և յապականիլ խառնուածոյ, այլ ի նոյն տարերսն գառնան՝ հուրն առ հուր և յայլսն ամենայն: Եւ այն || զօրութիւն պարզ ճօհար է, որ է առաջին շարժումն:

Երրորդն, նիւթ բնթանուր կոչին. այսպէս, ֆալաքնին և աստեղք և որ ինչ ի նոսա կան, ուստի ամենայն աշխարհի շարախառնութիւն¹ և հաւասարութիւն:

Չորրորդն, զոր նիւթ առաջին կոչեն, որ ճօհար պարզ իմանալի, յոր ոչ հասանի զգայութիւն, ուստի և սկիզբն ամենայն իրաց ի նմանէ է և ինքն տեսակ է գոյացութեան, որ է ճօհարն, և ի նմայ քանակ և որակ ոչ երևի, այլ քանակն և որակն պատկերնի են պարզ, այսինքն տեսակ, որպէս ասացաւ:

Եւ առցուր օրինակ զոսկին կամ զտարպն², կամ զաճն և զյակունդն, որ ոսկոյն գիճութիւն, որ ի հողոյն և ի սնդկէն, որ ժիպակն հաստատեալ է, զոր հուրն ոչ կարէ բաժանել և հողն և զավրն ժամանակիս ոչ ապականէ:

Իսկ զտարպն ապականէ և զիւր տաճնիաթն չիր մարգաղն հասցնէ, և մասունք սնդկին, որ ի հողոյն է, զիւր դարձնի հողն տայ, զոր մարտասանք կոչեն: Նոյն յիմացիր զյակունդն և զաճն: Բայց բարի է այն ճօհարն³, որ զավրն զիւր տեսակն ի նիւթէն շկարէ փոխել, որպէս բուսականքն և կենդանիքն. զի յայրելն ծառին և յապականելն կենդանոյն գառնայ իւր նիւթսն և հուրն զհուրն ոչ այրէ, բայց երբ անցնի չիր մարգաղն, երթայ ի յեթերն. և այս մաթալս (՛) զգայութեամբ է:

Յաղագս լինելութեան և ապականութեան

Եօթն են մարմինք, որ ի ներքոյ լուսնին երկնիցն են, շորս տարերք և կենդանիք, բոյսք և մատանին. և առաջին սոցա է հուրն, որ իւր երկրորդ շկա և սեռ է արեգակն: Չորս տարերքս սեռ խաս կոչին, և կենդանիք և բոյս և մայտանինն մասնաւորք կոչին, և այս եօթն մայրեր կոչին և խառնուածն սոցա ի նիւթոյ և ի տեսակէ և եօթս նոցայ մարմին:

Շառաւիղն է լուսոյն պատկեր, ջերմութիւնն՝ հրոյն, և գիճութիւն՝ ջրոյն, և տաքութիւն և հովութիւնն և շարժումն՝ օդոյն, հովութիւն և շորու-

¹ Բնագրում՝ «գարախառնութիւն»: ² Բնագրում՝ «գտարպ»: ³ Բնագրում՝ «ճօհար է»:

թիւն՝ հողն. և սոցա տարերքս պատահամք տեսակ ընդունին և ոչ մնացական, այլ փոփոխական, որպէս ջուրն, որ ջերմանայ, և հողն տաքանայ և այլ այսպիսիք. օդն ցրտանայ: Եւ այսպէս լինի երկու տեսակ՝ մինն հաստատուն և մին ոչ. և հաստատունն այն լինի, որ թէ խափանի՝ մարմին խափանի. և այն պարզ ճօհար կոչի մարմնոյն, որ ճօհարն, որ ջրախառնած է, հետ մարմնոյն զինքն հաստատուն կու պահէ:

95բ

Ապա կատարե[ա]լ տեսակն այն է, որ երկայնութիւն և լայնութիւն և խորութիւն ունի, մարմինն գոյն և հոտ և համ, և որ թապաղ լինի տեսակին, որպէս հրոյն շարժիլն և տաքութիւն թապաղ է շարժելոյն և շորութիւն տաքութեանն նոյնպէս և այլ տարերացն: Ապա լինելութիւն տարերացն նիւթ է և տեսակ լինի, որպէս լինելութիւն հրոյն ի ֆալաքին շարժելոյն, և օդն իւր նիւթոյն լինի. և շարժումն ֆալաքին պատճառք է հրոյ գործոյն. յանցանել հրոյն իւր հաստատուն տեսակն պատլի և օդ լինի: Եւ յորժամ օդն վասն հեռանալոյ արեգական փոփոխումն ընդունի՝ ջուր լինի և ի ջրին մարքազն դայ: Եւ ջուրն յորժամ փոխի յիւր կերպէն, որ է դէջն, յերկար ժամանակ պլօր լինի կամ յակունդ և յաւելնալոյ գետնոյս զիջութեան՝ սնդիկ լինի, աղ, զած ու շ[ի]ւ պ լինի և յայսմի նման. և ի դաշտն, ուր արեգակն ի վերայ անցանի ժամանակ՝ յիւրմէ յակունդ դայ, և թէ Հրատին՝ զըլուխն ընկեր լինի՝ պեճատա դայ, և թէ Հրատին թարպեղ հայեցք ունենայ՝ կարմիր աղ դայ, թէ ի Լուսարերն լինի՝ պլօր դայ, թէ ի Լուսնթագն՝ զլուխսն ամթ լինի և Երևակն թաթլիթ և թասդիս լինի, նա ալմասն դայ. թէ սամթուասին ընկեր լինի, լլզմրութ դայ: Եւ այսպէս ամենայն ինչ, որ ի զօրութենէ ի գործ դայ, յաստեղաց շարժմանէն լինին:

96ա

Նոյնպէս և բոյսքն յերկու պատճառէ լինին՝ կամ ի սերմէ, կամ ինքնարոյս՝ ի ջրէն և ի հողէն և յարեգական շարժմանէն է. և յընկերութենէ աստեղացն և ֆալաքին և տարերացն լինի ամենայն կենդանիք և բոյսք և մատանին. նոյնպէս և փոփոխումն լինի, որ է ապականութիւն, որ ապականի տեսակն, որպէս աղն ի հողոյն և ի ջրէն է, յորժամ փոխի ի տեսակէն, զոր ապականութիւն կոչեն, իր զիջութիւն յօգիցն մարքազն կլնէ, և օդն այլ պատուական է քան զաղն:

Եւ հողոյն յաւելուածն ի հողմն մնա և այս աչաց տեսեալ եղև, որ աղն, յորժամ զհրոյն տաքութիւն տեսանէ, օդ լինի: Այսպէս լինին և այլ մարմնոցն ապականումն յիւր տեսակէն:

96բ

Իսկ պարզ ճօհարին և նիւթոյն ոչ լինի բնաւ լլ ապականութիւնն: Այսչափ վասն լինելութեան և ապականութեան:

Գիտացիր որ ապականութիւնքն, որ ի ներքոյ լուսնին ֆալաքին են, եւթն ազգ են, մին ի փոփոխմանէ տարերացն է՝ ի հրոյն յօդն, յօդոյն ի մեղ, ի մեղանէ ի հողն: Եւ այսպէս դարձեալ կրկնի ի հողոյն ի մեղ, ի մեղնէ յօդն, յօդոյն ի հուրն: Եւ երկրորդն այն է, որ յօդն ի տես դայ, որ ի վերին առդմանէն ասացար:

Երրորդն՝ բոյսքն և տունկքն և ամենայն մարմին, որ աղպէտ տա:

Չորրորդ կենդանիքն են և ամենայն ինչ, որ ի ներքոյ լուսնիս ֆալա-

¹ Այս նախադասութեան մեջ մուտքակներ զբնութեանն և զազգաբարբարոյ:

քին են, որ ի լինելութիւն դայ, երեք պատճառաւ լինի: Առաջին պատճառն՝ գործնականն, երկրորդ պատճառք՝ տարերքն, երրորդ՝ տեսակքն:

97ա Արդ պատճառքն տեսականին և ապա պատճառք գործնականին, որ դորդ մայտաննոյն բնութեան ճօհարն է, յառաջի || շարժմանէն ի պարզ ճօհարէն, որն աֆիտն է:

Սւ բազում են ճօհարք մատաննուն են, որ հալին ի հրոյ, որպէս ոսկի և արծաթ և այլն. և են, որ ոչ հալի, որպէս արմասն, յակունդն, յալեղն. են, որ վասն թուլութեան հալին և բուխար լինին, որպէս աղերն. և են, որ լոսին և բուխար լինին, բաժին մի մնան, որպէս արջասպն: Սւ որ չլինին հուրն, ի նոսա շքանի տալղն. և են փախշին՝ քարիթն. ու և են, որ բոյս են, որպէս մարջանն ի ծովն, և են ի կենդանոյ, որպէս մարգարիտն: Սւ են, որ յալքիւրէ գան, որպէս յամսարն և նաֆտն, զի տսնն՝ թէ ամբարն ի վերայ ջրին դայ ի ծովեզերն, նոյնպէս լակն և լատանն ու մոմիայն, իսկ ընտիր ճօհարնին ջուրքն, որ ի մէջ երկրին, և քարանց, և լերանց, և քարայրնոյն ծալուելէ ի բուխարնոյն, և յարեզականն շողոյն կու եփի և բուխար լինի, զի ձմեռն ի ջերմութիւն ի ներ||քոյ երկրի կու մտանէ ի ցրտոյն ուժէն և ամառն ցրտութիւն ի ներքոյ գետնիս իջնու ի շողէն ուժուն, որպէս ի տիւն և ի դիշերն տեսանես, որ ցերեկն ջերմանայ օդն յարեզական ջերմութենէն և դիշերն ցրտանայ: Նա վասն այն ջերմութեան, որ ի քարայրնին և ի մէջ լերանցն և քարանցն դադարեալ լինի, յորժամ նեղէ, ջերմութիւնն ելանէ ի դուրս և ի ցրտանալն ի տեղին նստի ի գետնոյն յաւելուածէն և յերկար ամօք ծանրա[նայ] և սնդիկ լինի, քարիթ ու զոնեխ լինի, քարիթ կարմիր կամ սպիտակ, զըոնեխ կարմիր կամ դեղին:

98ա Սւ յորժամ քարիթն ու զոնեխն յայլ պաղլա լինին և ժիպակն այլ պաղլայ, նայ յիւրեանց կերպն կենան և շելնէ ճուհարն, ապա թէ երկուքն ի մէկ պաղլայ լինին և ի ժամ յղանալոյն և սերմանն և այլվար ի տեղն նստելն մէկ առ մէկ գան տարպա||ն ի տաքութիւն՝ մաղտանին զնոսա եփէ յէլմով մինչև ճօհար լինի, և թէ մասն քարիթն սաֆի լինի և մասն սնդիկն ի պղտորութեան է և ի հեռութենէ եփումէն մաղտայնին միջակութիւն լինի՝ նա անտի ոսկի լինի, և թէ ցուրտն ի յայն տեղին շմտանէ ի ժամանակ մի, և թէ քարիթն և ժիպակն սուրբ լինին և նիսպաթն դրուատ լինի, նայ ի մէջ եփմանն ցուրտն յինքն տեղի գտանէ, արծաթ լինի, և թէ սնդիկն և քարիթն և նսպաթն ի բնութեան վերև լինի, ապա տաքութիւն մաղտնոյն աւելի լինի, ոսկին այրի և պղինձ լինի:

98բ Սւ թէ ժիպակն դուլպա լինի և քարիթն մասն հողոյն՝ դրուատ լինի և ցուրտն ի քանն զօրանայ՝ ի նմանէ կլայեկ դայ, և թէ սնդիկն ուժով լինի և քարիթն ի լրման յըստակ և լինի, ապա սակաւ և քարին կերպն թոյլ և աւաղ լինի և ցուրտն զօր||անայ, անտի տարպ լինի:

Սւ թէ մասն ժիպակին ծանր լինի և քարիթն սպրկիկ չլինի և ի մաղտանն ժամ մի տաքութիւն և ժամ մի ցրտութիւն զօրանայ, անտի երկաթ դայ:

Սւ թէ քարիթն ի վերայ ժիպակին զօրանայ և տաքութիւն աւելի լինի՝ անտի սուրմայ դայ և լինի որ մաղնիսիա դայ:

Սւ այսպէս է դիասն ամենայն մայտաննոյնիս՝ յակունդն, պլորն և յաղեղն և որ յայսմի նման յանձրեին ջրէն լինի և ի լատիֆ բուխարէն:

որ ի մէջ լերանցն նստի և քարայրնոյն զլուխն, որ ի բաց լինին և ծագ, իսկ զմարդարիտն էութիւն, որ ի ծովէն սատաֆնին ի միմեանց ծնանին:

Եւ ոմանք ասեն, թէ ի թանձր գիճութենէն ելանէ, որ ի մէջ ծովուն ժողովել: Երբ սատաֆն մեծանա ու ինքն ի ներս թանձրանա, իր մէջն կենդանի մի երևնայ, որպէս կտոր մի միս սպիտակ ի ձգան միսն ի նման և յինքն տահնիաթն սաֆիլատիֆ լինի:

99ա Եւ այս սատաֆս || այն կենդանոյն ուժովն կենդանանայ և շարժումն առնու, ապա ամենեին զբերան իւր ոչ բանայ, զի թէ բանա՝ լեզի ջուր ծովուն մտանէ և սպանանէ զնա. ապա երբ զիւր շարժումն ի լման առնու, ի միջոյ ծովուն ի վերայ երեսանց կընէ և զբերանն բանա, որ յայն գորշեացն, որ ի ծովէն ելեալ լինի, յիւր վերա նստի, որպէս ցօղն ի վերա խոտին և յեմէ մինչև այն կենդանին ժողովն լընուի, ապա սատաֆն զբերանն յիւր ուր ածէ և ի վայր երթայ ի մէջ ծովուն: Եւ այն կենդանոյն բնական տարութիւն զցօղն, որ էառ սնուցանէ ժամանակ մի, նայ լինի որպէս սնդիկք. ապա այն կենդանին այլ ուժածանրութեան նա յիւրմէ ի դուրս հանէ, որպէս զծնունդ մարդոյ, ապա այն սնդիկքէն ի վերա սատաֆին գայ, լինի որ մէկ կտոր մնայ. լինի որ բազում լինի և ժամանակաւ պնդանա և մարդարիտ լինի պատուական քան զայլ ճօհարին: Ասեն

99բ իմաստունքն, || թէ կլայեկն մօտ է յարծաթն, կլայեկն ի զըռնեխէն է և ի սրնդկէն չէ, ի քարթէն սարպն լաւ է քան զկլայեկն և քան զայլ մաղտայննին մարդաշիթան, տահնաճն և լազուարն, փիրուզա, սէճատա և յամբարին քարն և խնդամանդն և որ յայս նման:

Գիտելի է, զի ի բնութենէն, որ ընթանուր հոգի է, ընդ ամենայն պարունակսն երկնի մինչ ի գետնիս մարքազն իջանէ և զամենայն շարժէ ի գոյութիւն և ի դործ. զի ասեն, թէ լեզին շէր ի մարդն և յայլ կենդանիսն, զսաֆրայն յաղեցն շառնոյր, նայ զաղիքն այրէր, և զի ստամոքն նորա ուժովն զկերակուրն հալէ ու զխլտն, որ ի ստամոքացն վերա կու վայթի, որ թէ շէր՝ հում մնայր կերակուրն և խլտն և ապականէր, և թէ շէր Զօհալն՝ նայ շէր փայծաղն, որ զչոր սաւտայն յաղեցն ի դուրս կու քաշէ, որ թէ

100ա շինէր այս, աղիքն ի շոր սաւտային զօրու||թենէն շորնայր և կենդանութիւն շմնար: Եւ այսպէս, թէ Երևակն շկարէ, հետ ծերութեան մահ շկայր:

Եւ մատաննին փոքրերն պատուականն յակունդն է և ի կենդանիքն փոքր ճճիքն ժրժմունքն, և ի կենդանիսն պատուական մարդն, ի բոյսերն փոքր ինքնարոյսք են և մեծ և պատուական ամբրաւենին՝ բուսոցն տեսակն, որպէս կենդանի է, որ է զզլուխն կտրես՝ մեռանի, և թէ բեւո մի ի սիրտն զարկնեն՝ մեռանի, և ամենայն վերջնոցն առաջի յաստիճանէն իջանի, սկսեալ ի վերնական դասուց հրեշտակացն:

Առաջին իմաստութիւն է մարդուն ճանաչելն զինքն, որ լինի ինն իրոր: Առաջին՝ հայել ի կերպ մարմնոյն և որ ի նմայ: Երկրորդ՝ հայել ի կերպ հոգոյն և ի դործն: Երրորդն՝ յերկուցն միութիւն, և որ յերկուք են, մարմնոյն հայելն այն է՝ յանդամքն ի յամենայն ի մորթի միսն, յուկորսն և յայլսն և զգործ ամենայն իմանալ, զդրուցին և զներքին: Եւ

100բ ||ապա զիտել, թէ մարդն աշխարհ է, շորս տարերքն և նմանամ[ա]սունքն և այլ ամենայն: Եւ ի մարդն ինն ճօհար կայ. ոսկրն, դեղն, երակն, ճրագուն, արիւն, միսն, մորթն, դունկն, մազն: Տասն բնութիւն կայ ի մարդն, ի զլուխն ու զշինքն, կուրծքն վերի և ներքի, փորն, պորտն, անդամն,

ծունկքն, ջիղքն, ոտքն, որ սոյն է ամենայն անգամոցն, զոսկրն, զչրերն, զկապերն: Տասն չամու կայ ի մարդն՝ զուզն յիշողականն, լուսոյ երակ աշացն, երիկամն, աղիքն, փայծեղն, սիրտն, լեղին. այլն կայ յայլ տեղ գրած, որ ասէ թէ ժԲ ծակ կայ ի մարդն:

Երեք են գիտութիւն մարդկան. առաջին՝ զգալիքն և զգայութեամբն, զոր կատարելաքն և տղաքն և այլք կենդանեաց ընկերութիւն ունին զգալն. [երկրորդն՝] խելացն իմացումն, որ կատարելոցն միայն է. երրորդն՝ ապացուցականն, որ իմաստանոցն է գործ:

101ա Կենդանիքն յաղէկն և ի վատն||ներհակարար ունին. զերթիսն ի վարդին հոտն մեռանի և յաղբէն կենդանանայ: Սաֆրատոն ի մշկին հոտոյն հիւանդանայ, ի վարդին առողջի և այլ այսպիսիք կան:

Յերրորդին գործն բնութեամբ կոչի և զեղեղանն իմանալի գործն, որպէս աստուածային արարչութեան արուեստին գործ բնութեան, զոր ի մարմին ներգործէ, նմա հոգի կոչեն. և զոր յաշխարհս խելք և ի բուսականքն հոգի բուսոց կոչեն. և զոր առ մարդիկ՝ հոգի մարդկան կոչեն, վասն որոյ զնա հոգի բնդհանուր կոչեն:

Գիտել պարտ է, զի առաջին շարժումն ֆալաքին և աստեղացն ազդելով յերկիր ընդհանուր հոգոյն զօրութենէ զամենայն որ ի տեսակ բերէ, նմա հոգի մասնաւոր կոչեն և այս կերպս, որ ի տես երեկ կամ ի մայտանէ է, կամ ի բուսոց, կամ ի կենդանեաց և զէտոց զգանազանութիւն. ասացաք յառաջդ և մայտաննոյն և բուսոցն և կենդանեացն ամենայնի ժամանակ || կայ, որ դարած սկիզբն ամենայն բարեաց, որպէս միակն ամենայն համարոց, նոյնպէս և խելքն սկիզբն և պատճառ է այլ իրոյն, որպէս միակն թուոցն: Եւ որպէս համարն երեքին յետոյ է երկուքին, նոյնպէս հոգին հետ խելացն է:

Չորրորդն՝ որպէս նիւթն, հինգերորդն՝ որպէս բնութիւն, վեցերորդն՝ որպէս պարզ մարմինն, եւթներորդն՝ որպէս ֆալաքնին, ութներորդն՝ որպէս տարերքն, իններորդն՝ որպէս ծնունդքն, ինն վերջք է միակացն և ծնունդն էութեան: Եւ մայտաննին որպէս տասներորդն, բոյսքն որպէս հարիւրերորդն, կենդանիքն որպէս հազրնին: Համարն զուգ լինի և ֆարտ, զորդ ու քուր, բնութիւն հոգևոր կենացն ֆարտն և մարմնաւորին զուգն, զորդն ըստ բնութեան հոգևոր բարեացն, քուրն մարմնաւորիս. ի ֆալաքնոյն յաւելուլ ու պակասել լինելութիւն ու ապականութիւն:

Մարմինն ամենայն յերկուց է՝ ի նիւթոյ և ի տեսակէ. նիւթն տեսակին ընդունօղ է: Եւ առաջին տեսակն, որ ի նիւթոյ է, երկայնութիւն և լայնութիւն և || խորութիւն ունի, որ և զայլ տեսակքն ընդունի և զմարմինն զեռանգիւն, զքառանգիւնն և զայլն: Նիւթն առաջին պատճառ է հոգոյն և խելքն առաջին ճօհար է յաստուծոյ, և խելքն զնալսն ի տես երեք, և նալսն ճօհար մի ի տես երեք, որ երկայնութեամբ և լայնութեամբ և խորութեամբ լինի. խելքն գործ յաստուծոյ, նաֆան գործի գործոցն աստուծոյ, որպէս կէտն, որ մասն շունի. այսպէս իմացիս անզօրինակն աստուած, ի կիտէն գիծն երկայնի, որպէս նաֆան ի խելացն և որպէս ի գծէն մարմինն է, որպէս նիւթն ի նաֆսէն և օրինակ բոլոր հաստատ մարմնոյն, որպէս կերպն և հետ մուշախ մարմնոյն պարունակօղ ֆալաքն և անտի ի վերուստ հաստատութիւնն աստեղացն և ի մինչ ի գետն ի սա մարքազն բեր. և ապա ի մայտանին, ի բոյսքն, ի կենդանիքն:

102բ Զինչ առ մարդիկ իջեալ է, յընթանուր հոգւոյն ճօհար մի լինի, և ի հոգոյն ճօհարէն||զօրութիւն մի լինի ի խելացն ի զօրութենէն, որ ի ցայտմանէ խելացն է, որ ի հոգոյն իջեալ է:

Արինակ այսպէս, բոլոր մի ի պլօրէ ի գետինն դիր և կթղայ մի բօլորէ յիւր վերա և բոլոր կթղային կրակ արա. հուրն ի կթղայն տես ցուցանէ և կթղայն ի պլօրն, ապա ի կթղայն երկու զօրութիւն լինի, զոր էառ ի լուսոյ հրոյն և մին՝ զոր անցոյց ի պլօրն, և պլօրն բոլոր վերկու զօրութիւն ընդունին: Եւ արդ է հուրն՝ խելքն, կթղայն՝ յընթանուր հոգին, պլօրն՝ մարդիկ. և զի պլօրն երկու զօրութիւն ունի, մարդիկ երկու զօրութիւն՝ զխելքն և զհոգին. խելքն ի հոգին է, որպէս լոյսն ի հրոյն: Այլ օրինակ, արեգակն յապակէ կուպայ մի ցայթէ շաղսն ի մէջ կուպային, լինի արեգակ ի խելացն ի մանդիլն կուպայն յընթանուր հոգոյն շաղսն մարդկան. ապա մարդիկ երկու ընկալան զօրութիւն, մին զարեգակն ի մէջ կուպային և մին || վասն ապակոյն, զոր վասն ապակոյն՝ այն օրինակ հոգոյն և լոյս արեգականն օրինակ խելացն: Եւ է խելքն անուն մի և բազում այլ իրաց պատճառ, որպէս սահմանեն խելքն զօրութիւն մի է, որ նովաւ բաժինք առնեն և ընտրեն զբարին և [փախչին] ի շարէն. խելքն զօրութիւն է, որ զառաջագրե[ա]լն իր մեկնէ, որ ի տարակուսանացն ելնէ, որ զօգտակարն ի ձեռն բերէ: Եւ այլ ասեն խելքն էութիւն է ի մարդիկ հաճելի, որ նովաւ [սօս[ի]] և շարժի և ընտրէ. բաժանի խելքն յերկու՝ ի տեսական և ի գործական տեսակն, ի զօրութիւն, ի հոգին, որպիսութեամբ զընթանրականն իմանալ և գործն կատարումն է հոգւոյն, որ կերպ որ ուղէ ի գործ բերէ: Եւ այլ ասեն խելքն գործաւոր ճօհար է և ամենայն իրաց կերպ յինքն է: Սահման նաֆսին անուն է ընկերութեամբ, յոր մարդ և կենդանիք և բոյսք ընկերք են. և այլ մարդիկ և հրեշտակք-ընկերք են:

103բ Այլ նաֆս ճօհար է յետ մարմնոյն և շարժող է մարմնոյն և տա բանաւորութիւն, ընտրողութիւն և կամ գործով, կամ զօրութեամբ. զխելքն և զնաֆսն յընթանուր կոչեն, զի այն հասիցն թապրօղ են:

Կարգ ուսումնականին նախ պարտ է զհամարողականն ուսանիլ, զի թուլթն է իմաստութիւն: Եւ ապա զեղլիտիսն, որ կերպարան և դիրքն է աշխարհիս: Եւ երկինքն թաղուիս յերկրաշափութիւն ունի: Եւ ապա զաստեղարաշխականն, որով զվերին աշխարհն ճանաչէ:

Ապա զբանաւորութեան ուսումն, որով զխօսիցն իմանայ զզօրութիւն և զարուեստ, որ տաանց խոկալոյ, խօսիլ շկարէ: Եւ ապա զընութեան և զբժշկութեան ուսումն ուսանի՝ զմարմնոց մարդկան բաժանումն և զդեղերն կազմել և զցաւերուն պատճառնին: Եւ ապա մտանէ յընթ[ան]րական ուսումն և ապա յապացուցականն:

104ա Ապա ի մուճառ||ատ ճօհարնին և յասլն նիւթոցն, և ապա զմուճառատ հոգին ու զխելքն ճանաչէ և ելանէ սօքօք ի սրբութիւն աստուծոյ զյարութիւն և զնոր աշխարհն գիտել. և այս են գիտութիւն ուսմանցն:

Առաջին ուստաթն է, որ է շորս արհեստն՝ համարողականն, երկրաշափականն, աստղարաշխականն, երաժշտականն, երկրորդ՝ բանաւորութիւն, երրորդ՝ բնարանականն: Երրորդ՝ աստուածարանականն, և բազում և մեծ իմաստութիւն կայր առ գոտղն համարողականին, որ եզիտ զիւր խասիաթնին մեծ Ծիթաղորոս հաքիմն:

Ասեն թե աշխարհ որպէս մեծ կենդանի է, և թէ որպէս բազում զօ-

բուժիւն կայ ի կենդանին, նոյնպէս և յաշխարհս քարշողական, ըմբռնող, ալլալլող և այլն: Եւ ըմբռնողն է այսպէս. իրք որ կարէ պատկեր առնուլ և ըմբռնել, որպէս ջուրն ոչ կարէ պատկեր առնուլ, մինչ ի հող խառնի և
 104բ բնութիւն է բուսոցն, որ ի վայրացն զգիճութիւն յինքն||քարշէ: Նոյնպէս օգն զիւր նման օգն զհաւան ի միջոյ լերանցն քարշէ: Որ թէ լերանց զլուխն ի ծածոկ շէր, հողմն ի դուս ելանէր: Որպէս ստամոքն զկերակուրն քարշէ և ըմբռնէ, և տունկք և բոյսք՝ զջուր, նոյնպէս և երկիր լինի. ի մայտաննին քարշէ և շինէ: Եւ է աշխարհս մեծ կենդանի և գետինս ի միջոցի որպէս սիրտ, և գետք և ջուրք որպէս երակքն և ալլ մանր կենդանիքն յայս մեծ կենդանոյ փորս կան անբաւք:

Աշխարհս կենդանի է մի մեծ, և թն աստեղքն յինքն եւթն անգամ է, որ սիրտ ու աղիք, ստամոք, տամաղն, փայծեղն, թոքն, երիկամունքն և գետինս ի մէջ այս կենդանոյս. և կենդանիք, որ ի գետինս են և զեռունք, որպէս խլտ, որ ի կենդանին լինի, և ազդումն որպէս ի վերուստ ի ֆալաքն լինի, ապա ի տարերքն, ապա ի բոյսքն, ապա ի
 105ա մազտանին. ամէն աստղ յերկինս իւրն բաժին կայ, որպէս յալլ տեղ||յիշած է, և շորս տարերացս թտպրող բնութիւն է, որ սկիզբն է առաջին շարժմանն: Եւ երկնիւ և աստեղօքն յայս շորս տարերքս հասցնէ:

Արդ՝ բնութիւն ի նմանութիւն հիւսան, ֆալաքն որպէս ձեռք, տարերքն որպէս փայտ և երկաթ, և որ ինչ ի նոցանէ լինի՝ աթոռ և թուր, այսպէս կենդանիք, ու՛ բոյսք ու մայտանն: Եւ որպէս ֆալաքն է յաշխարհս շարժող հողին և ըստ շորից տարերացն, շորս խլտն, և որպէս ի գետինս բոյսք և մատան՝ ի մարդն տեսանի ամենայն, որպէս ասացած է: Եւ այսպէս զգլխոյն փորուածքն զգայրանացն զիրքն, որ պատեհուոր է ամենայն և կամ շորս որպէս վրան մի երկնին ու շարժաննին և ոսկրտին որպէս սին է: Եւ խար կայ ի փայտերն և բանաւոր հողին տէր և բնակիչ: Եւ երեք զօրութիւն կայ ի մարդն բանականն. ի լերդն և յաղիքն կենդանականն, ի սիրտն բանական, յուղեղն, ուր և հոտոտելիքն և բանական:
 105բ Եւթն է քարշողականն և||այլն. քարշողն այն է, որ կերակրոյն որ ի սոսորդն ի վայր անցնիլն քարշէ զիւր յինքն երկու պահօղն, որ յիջանկն ի ստամոքն պահէ մինչ ամենայն տեղն զիւր քաշէ. երեք հալօղն, որ հալի և արիւն դառնայ, շորս բաժանականն յամենայն մարմին սփռելով, որ ամէն անգամ յինքն դարձնէ, և թն յաղթութիւն, որ մայտայնն յաղթէ ի վերա ամենայնի, վեց ծնընդականն, որ յաղեցն յամենայն մարմին, որ մարմին լինի և թն, շկայրէ յիստակ բան վասն և թնեանս:

Ապա հոգևոր զօրութիւնն երեք է. առաջին՝ զգայութիւն, այլ շկայ ի սիրտն, Արեգակն զօրութիւն կուտայ յաղիքն, Մուշթարին ի սողն, Լուսին ի ստամոքն, և յերիկամն՝ Զօհրայն, ի տամաղն՝ Յօտարիտն, ի լեղին՝ Մառխին: Եւ այսպէս մարդն փոքր աշխարհ է. ոսկորքն, լերունքն և գետին՝ երկնին, ի ծովէ գետերն, տամաղն ու կուրծքն՝ ֆալաքնին:

Խստալոյս իմաստասիրի Յովհաննէս Եզրնացոյ

106ա Երևելի արարածքս մեծ աշխարհ ասի և մարդ փոքր աշխարհ, և որպէս մարդ հոգի է և մարմին, նոյնպէս աշխարհ. և զոր ինչ կայ ի մեծ

աշխարհս՝ մարմնեղէն և հոգեղէն, կայուն և զնայուն, գոյացութիւն և պատահումն, շոր և դալար, ամենայն կայ և ի փոքր աշխարհ և փոքրովս մեծն իմանին: Եւ ամենայն որ յաշխարհի կայ՝ սկիզբն ունի և վախճան. սկիզբն գոյութիւն է ամենայնի և վախճանն քակտումն է մասանցն: Եւ գոյութեամբ մի են և մասամբ բազումք, և բաժանումն ի մարմնոյն մասուն անկան և միաւորութիւն ի հոգիսն, զի հոգիքն նուրբ են, նոյնպէս և խառնուածն նրբաբար, և մարմինն թանձր է: Նոյնպէս և մասանցն խառնուածն. թէպէտ խառնուածն թանձր է, այլ մասանցն ժող[ով]ումն նրբագոյն է զօրութեամբ. և կազմութեան գոյութեան յերկու պատճառաց է: Առաջին է նիւթն: Երկրորդն՝ որպէս ոսկէզ[որ]ծին նիւթ է ոսկին կամ արծաթն, և նիւթին պատճառ արուեստն, որ առնէ||մայտանի և թէ վասն որոյ վասն մատին: Եւ դարձեալ, ամենայն գոյացութիւն շորս սահմանով է. պատճառն և նիւթն, ներգործութիւն և գործօղն: Եւ թէ չէր նիւթն, ուստի՞ չինէր գոյացութիւնսն. և թէ չէր գոյ[աց]ութիւն, ուստի էր զօրութիւն. և թէ ոչ էր զօրութիւն, ուստի էր ներգործութիւն. վասն որոյ սօքօք գոյացան ամենայն արարածք:

106բ

Գարձեալ, սկիզբն ամենայն իրաց գործաւորն է, և գործաւորն յայտնէ զներգործելն, և ներգործելն՝ <զներգործելն> զներգործելոյն գոհութիւնն, և գոհութիւն յայտնէ զորակութիւն: Եւ գործն շարժիլ ասէ, և շարժելն շերմային է և շերմն արոյ է և գործքն անշարժ է, և անշարժն պաղ է, և պաղն իգական, և պաղութիւն և շերմութիւն ծնաւ զշորութիւն և զգիճութիւն, զի ծնաւ շորութիւն զպաղութիւն և զիջութիւն զտաքութիւն. և եղեն շորս տարերք և մայր, որ ծնան զմեծ աշխարհս և զփոքր, մեծ||աշխարհիս մարմին է երկինք և երկիր, զլուխ է երկինքն և ոտք է երկիրս. և են կազմե[ա]լ ի շորից տարերաց և եւթն մոլորականք. և երկոտասան կենդանակերպքն խառնեն զօրութեամբ և բաժանին ներգործութեամբ: Եւ վերին երկինքն զլուխ է, և ի զլխոյն բաժանին երակքն, որ տան զօրութիւն հոգւոյն, և երկոտասան կենդանակերպքն և կուրծքն և փորն, ուստի ելանեն այլ զօրութիւնք և սիրեն յանդամսն որպէս մոլորականքն, որ յազդեն յաշխարհս որպէս երակօք մարմնոյ. և այսպէս ի վերին երկինիցն ի զլխոյ և ի փորոյն կենդանակերպիցն և ի մոլորականացն ազդեն զօրութիւն իբր յանդամս:

107ա

Եւ մարդ, որ է փոքր աշխարհ, զգայական զօրութեամբքն առնու, որ են աչք երկու, ականջք երկու, քթափողք բերանի, ի սոցանէ սիրտին զօրութիւնն յամենայն յանդամսն: Նախ ի կուրծսն, ուր սրտմըտական է. անտի ի սիրտն և ի ստամոքն, ի թոքն և ի լերթն, և յերկամունսն երկու ||և ի փայծեղն և յայլ մարմին, և զօրութիւնքս այս երկու են. նաւարն ի վեր բարձրանայ և թանձր ի վայր իջանէ և զօրութիւն նախախնամական է, որ բաժանի յամենայն անդամսն: Եւ են երկոտասան կենդանակերպքն ըստ շորից տարերցս — Խոյն, Առիճն, Աղեղնաւորն հրային, Տուլն, Կոյսն, Այծեղջիւրն հողային, Եկաւորն, Կշեռն, Զրհոսն օդային, Խեցղետինն, Կարիճն, Զուկն ջրային: Եւ են սոքայ թուրօղ եւթն մոլորականացն: Երեք են, միջակ են, հաւասար են կենդանակերպիցն բնութեան, և շորս ոչ, այլ աւելի և պակաս: Եւ միջակք և հաւասարք են Արեղակն, Լուսին, Լուսնթագն: Եւ որ աւելի և պակաս են. Զօհայն, Մառեխն, Զօհրայն,

107բ

Օտարիտն: Երևակն հողային, Հրատն հրային, Լուսաբերն հողմային, Փայլածուն ջրային և Լուանթագն:

108ա Այս հինգս ամէն երկու տուն ունին, իսկ Արեգակն և Լուսին մի տուն ունին և բարձրութիւն և ցածութիւն: Խոյն հրային և Կարիճն ջրային և են տուն Հրատին, Յուլն և Կշեռն հողային և հողմային՝ տուն Լուսաբերին, Սկաւորն և Կոյսն հողմային և հողային՝ տուն Փայլածունին, Խեցգետինն ջրային՝ տուն Լուանին: Ասիւծն հրային՝ տուն Արեգական, Աղեղնաւորն և Զուկն հրային և ջրային՝ տուն Լուանթագին: Այծեղջիրն և Զրհոսն հողային և հողմային՝ տուն Երևակին, Վիշապն հակառակ է եւթն մոլորականացն և զօրաւոր ի վերա եւթնեանցն: Եւ իւր փառաւորութիւն և բարձրութիւն և ցածրութիւն ի կենդանակերպսն գրած է:

Եւ այսպէս նմանութիւն մեծ աշխարհի և փոքրին:

108բ Գլուխն է Խոյն, Յուլն՝ աչքն, ուսք և ձեռեր՝ Սկաւորն, կուրծքն և կողն՝ Խեցգետին, փորն՝ Ասիւծն, պորտն և մասնքն՝ Կոյսն, երկու բոմբքն և ծածուկ անդամքն՝ Կարիճն, երկու բարձքն՝ Աղեղնաւորին, երկու ծունկն՝ Այծեղջիրին, երկու սրունքն՝ Զրհոսին, երկու թաղ ոտիցն՝ Զուկն: Այսպէս համեմատին անդամք մեծ աշխարհիս ընդ փոքուն, որ է մարդն: Նոյնպէս ունի փոքր աշխարհ՝ զմեծին բնութիւնն՝ զաաքութիւն և զպաղութիւն, զչորութիւն և զգիճութիւն, ջերմ է հուրն, որ է խարտեղ մաղցն, գիճութիւն օդն ի պաղութենէ, որ է ջուրն, պղղամն ի շորութենէն, որ է հողն, սաւտայն, որ է սև մաղցն և ի գիճութենէն, որ օդն արիւնն:

Եւ մոլորականքն ի զգայականսն նմանին այսպէս:

109ա Աջ ականջն Զօհալն է, ձախն՝ Մուշթարին, աջ ակն՝ Շամս, ձախն՝ Ղամեր: Աջ բրթափողն՝ Օտարիտ, ձախն՝ Զօհրէ, բերանն՝ Մառխա: Եւ այս զգայականքս ի գլուխն է, որ նման է բարձր երկնիցն, և են մոլորականքս իբր զօրութիւն հողոյն: Նոյն զօրութիւն են և ի կուրծսն և ի փորոտիսն, և ևն որպէս երկոտասան կենդանակերպքն ի մէջ երկնի և երկրի: Այսպէս կուրծքն և փորն՝ ի մէջ գլխոյն և ոտիցն: Եւ են նման եւթն մոլորականացն զուղն, լեարդն, թոքն, փայծեղն, երկու երիկամունքն և լեղին, գլուխն է Խոյն, յորում փառաւորութիւն Արեգական, նոյնպէս զուղն կայարանք Արեգակն է: Պարանոցն Յուլն, ի նմայ փառաւորի Լուսին, նոյնպէս հոշակն և թոքն ճանապարհ շնչոյն է Լուսինն, կուրծքն Խեցգետին, յոր փառաւորի Լուանթագն: Նոյնպէս սիրտն, որ ի մէջ կրծիցն կայ, Լուանթագին զօրութիւն հոգէկան: Եւ սորայ են միջակ բնութեամբ, լեարդն Հրատին և հրային, լեղին Փայլածուն և ջրային, երիկամունքն Լուսաբերին և հողմային, փայծեղն Երևակին և հողային: Ասէ մտացն և խելացն հոգիք արեգակ է և է յուղեղն և անուն սուրբ Թօրոս, թափանցիկ հոգին և շունչն անուանի պրմտու, որ է ի թոքն և ի թոշափողն: Եւ հոգի հեղութեան և խելաց և՛ուաման և մըտացն անուանի իմատրուա, որ է Լուանթագին և է ի սիրտն: Սրտմըտականն և պատերազմի հոգիքն անուանին հեմատուա, որ է ի մասին Հրատին, և կայարան լեարդն: Հոգիք նախանձու և խափէութեան, կեղծաւորութեան և շար խորհրդոց անուանին պրմատուա և են ի Փայլածուն և կայարան լեղին, հոգիք տրամութեան և սզոյ և ցնորից անուանին պատմոս և են յԵրևակէն և կայարանք փայծեղն: Իսկ հոգիք ցանկու-

թեան և զգայութեան և ստամոքաց անուանին քինատուս և են ի Լուսարերէն և կայարանք երիկամունքն: Եւ սորա խառնուած ունին ընդ միմեանս: Եւ են եւթն երակ յուղեղն, որովք Արեգական հոգիք տարածին ընդ մարմին, ի սիրտն եւթն երակ, որ ունի ի Լուսնթագէն, հոգի
 110ա զօրութեան և սիւռն ի լեարդն, եւթն երակ ի Հրատէն զհոգոյ զօրութիւնն ունին և բղխեն ի լեղին, եւթն երակ զօրութիւն հոգոյ ի Փայլածուէն ունին և բղխեն և զօրացուցանեն: Եւ յերիկամունսն եւթն և զօրութիւն ի Լուսարերէն, որ բխեն և ի փայծեղն, եւթն ունին յերեակէն հոգոյ զօրութիւն և այլ զրեալ էր այս երակաց անուանք:

Եւ այս երակս յայլ բազումս բաժանին և սօքօք Հանաչի առողջութիւն և տկարութիւն և արտաժութիւն և ուրախութիւն. և այս ի կենդանակերպիցն և ի մոլորականացն ունի զազդումն զօրութեան. ի մարդն ԳՃԿ. (360) ոսկր է, ի Լուսնթագէն է, եւթնհարիւր շիլ է, և է Լուսարերին, եւթնհարիւր երակ է և է զօրութիւն ի Հրատէն, ՇՂ. (590) կաթ արիւն, կաթն մթխալ մի և հոգի զօրութեան ի Փայլածուէն, իննսուն վեց հազար մաղ է ի մարմինն և զօրութիւն յերեակէն, ՊԻ. (820) մթղալ ճրագուն է և
 110բ հոգի զօրութեան յԱրեգակնէն, ՅԿ. (360) մղթալ զուղն զօրութեան || և հոգի [ի] Լուսնէն: Եւ այսպէս այս անդամքս ունին զօրութիւն ի կենդանակերպիցն և մոլորականացն և որպէս լոյս արեգական զաշխարհս լուստորէ սորա զանդամս մարմնոյ փոքր աշխարհի:

Արար աստուած զսիրտն, որպէս երկոտանի. զլերթն, որպէս շորքոտ[ա]նի. թօքն, որպէս թռչուն. փայծեղն, որպէս ջրային կենդանիք. զերիկամունսն որպէս ցամաքային սողունս: Եւ զարձեալ մարմին մարդուն նման է հոգոյն: Արտասունքն ի շուրն, երակքն ի քարանցն, երակսն, ոսկերքն ի լերինս, մաղն բուսոց և տնկից, լերկ տեղիսն, որ ի մարմինն՝ լերկ գեանոցն և զաշտաց. ջանք մարդոյն նման Հրատին, երեսն՝ արեւելք, ծոծորակն՝ արեւմուտք: Աջ ձեռն՝ հարաւ, ձախն հիւսիս: Եւ այսպէս փոքր աշխարհ ունի զմեծին և՛ զզօրութիւն, և՛ զբնութիւն, և՛ զներգործութիւն, և՛ զիմացականութիւն:

111ա Այլ շրջագայութիւն երկնից և կենդանակերպքն և որպէս մոլորականքն, երբ են հաւասար՝ ընթանան, և եղի հակա[ռակ]: Նոյնպես երբեմն փառօք և իմաստութեամբ և զեղեցկութեամբ յաջողի մարմնոյն յանդամոց և եղի տառապանօք, ցաւօք, հեծութեամբ: Եւ կենդանիք, որ մեծ աշխարհիս կան և ի փոքրս ի մարդն, որք յորպիսութենէ կենդանակերպիցքն և մոլորականացն պէսպէս շարժմանէն ի պղտոր նիւթոյ յաջ և ի ձախ, ցած և բարձր և ի տառապանաց շարժմանէն, որք նոյնպէս են. և անասունքն խոնարհ գլխով և ոչ որպէս բանականքս ի շնորհս, ի խելքս և յիմաստս և ի զեղեցկութիւնս, այլ կենդանիք, զազանք և անասունք:

[Եւ Քրիստոսի՝ ավօղին ամենայն իմաստնոյ՝ փառք: Եւ զանպիտան գրչակս յիշեայ]:

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

- Աղպետ (արար.)—վերջ, վախճան, ելք.
 Ան—տե՛ս Զաճ.
 Ամբրաբենի—արժավենի.
 Ամբ—տե՛ս Ամբրաթ.
 Ամիար (հուն.)—կվարցի բաղադրութիւն ունեցող մանուշակագույն քար, որին վերագրվել է հարբեցողութիւնից դերժ պահելու հատկութիւն. ամեախոս.
 Աֆիա—տե՛ս Աֆիթ.
 Բախար (արար.)—շողի, գոլորշի.
 Դավր (արար.)—ընթացք, շրջան, փոխանցում.
 Եղիաս—տե՛ս Ղիսա.
 Եղիտիս (արար.)—երկրաշափութիւն (եփկիդեսի անունից).
 Զան (արար.)—արջասող, ծծումբ.
 Զմբուր (հուն.)—զմբուխտ, կանաչ գույնի թանկարժէք բյուրեղաքար.
 Զոնեխ (պրս., տաճ.-ից)—սնդիկի սուղածո, սնդիկի ծծմբիտ.
 Զոնալ (արար.)—Երեակ, օդատարածում է նաև որպէս արձնի գաղանանուններից մեկը.
 Զօնրայ (արար.)—Արուսյակ, օդատարածում է նաև որպէս պղնձի գաղանանուններից մեկը.
 Թարլիք (արար.)—կոյակ.
 Թաղուլս (արար.)—պատկանելիութիւն, վերարկութիւն, կախում.
 Թապազ (արար.)—ենթակա.
 Թասդիս (արար.)—վեցյակ.
 Թարպեղ (գուցե թաթպեղ)—համեմատ, համապատասխան.
 Թապրօղ (արար.)—կարգազրոյ, կարգավորող, խորհուրդ տվող.
 Թուլք (արար.)—մեկ երրորդ, երրորդական մաս.
 Լագուար(դ) (պրս.)—կապուտաքար, լատ. Lapis lazuri.
 Լատանն (պրս., արար.)—հոտավետ խեժ, լատ. Ladanum.
 Լատիֆ (արար.)—վայելուչ, նուրբ, փափուկ.
 Խասիար (արար., տաճկ.-ից)—հատկութիւն, բնութիւն, բնավորութիւն.
 Խիաս—տե՛ս Ղիսա.
 Խլտ (արար.)—խառնուրդ, բաղադրութիւն, բաղկացութիւն.
 Խնդամանդ—տե՛ս Մխնատիս.
 Կրդայ (արար.)—զավաթ, սրվակ.
 Կուպայ (արար.)—զմբեթ.
 Ղամեր (արար.)—Լուսին, նաև արծաթի գաղանանուններից մեկը.
 Ղարիկոն (արար. հուն.-ից)—ծառի վրա բուսող սունկ, ազարիկոն.
 Ղիաս (արար.)—բաղադրում, դատողութիւն, կանոն.
 Ղուլպա (արար.)—անոթ, երկարավիղ աման.
 Ճօնար (արար.)—գոհար, հանածո, հյութ, էսթիւն, բնութիւն.
 Մաղնիսիայ (արար., լատ.-ից)—մազնեղիում.
 Մաղտան—տե՛ս Մատան.
 Մայտան—տե՛ս Մատան.
 Մանգիլ (արար., տաճկ.-ից)—ճանապարհի տարածութիւն՝ իջևանից իջևան, գիտասնցիտ.
 Մատան (արար.)—հանք, հանածո, հանքաքար.
 Մարգագ (արար., տաճկ.-ից)—կենտրոն, վայր, գանձելու տեղ.
 Մարդաշիրա (լատ.)—լուստ քար.
 Մարտասանք (արար.)—արճնի շլակ.
 Մրխալ (արար.)—կշռաչափ, 1/10 ունցիտ, 4,26 գրամ.
 Մխնատիս (արար.)—մազնեղիտ, մազնիտ, երկաթ ձգող.
 Մոմիայ—տե՛ս Մումիայ.
 Մուհառաս (արար.)—միայնակ, առանձին, գիտ.
 Մումիայ (արար.)—բխում, բնական բխում մային ասֆալտ.
 Մուշարի (արար.)—Լուսնթագ, նաև անաղի գաղանանուններից մեկը.
 Մառնիս (արար.)—չրատ, նաև երկաթի գաղանանուններից մեկը.
 Մուսլիս (գուցե մուսլահ)—սուղջարար.
 Յակուեղ (արար., հուն.-ից)—հակինթ, թանկագին քար.
 Յալեղ—տե՛ս Յաղեղ.
 Յաղեղ—սարդիոն.
 Յամպար (արար.)—անուշահոտ յուղ.
 Յասլ (արար.)—ստացում, բաղադրում.

- Նալիս (արար.)—հողի, շունչ, անձ. բարբա-
ռային՝ ցանկութուն.
- Նիսպար (արար.)—առնչութուն, հարարե-
րութուն, կապ.
- Նսպար—տե՛ս նիսպար.
- Նազու (արար.)—անձ, անձնագորութուն.
- Նամս (արար.)—Արեգակ, նաև ոսկու գաղա-
նանուններից մեկը.
- Պազլա—պազլեզ, շիպ.
- Պատլի (արար.)—փոխվել, փոխակերպվել.
- Պենատա (պրս., արար.)—անբաժան.
- Պիլոս—տե՛ս Պլոր.
- Պլզամ (արար.)—մաղաս, խուխ.
- Պլոր (արար.)—բյուրեղ.
- Ռատար (արար.)—բաժանում.
- Սակաման (արար. հուն.-ից)—բուժիչ խոտ
(Convolvulus scommonia), նաև նրանից
պատրաստված դեղ.
- Սամրասու—(արար. պրս.)—աջակողմյան, աջ
կողմը.
- Սատաֆ (արար.)—զազտակուր, պեւլամուար.
- Սարպ (գուցե՛ Սուրպ)—արճճի գաղտնանուն-
ներից մեկը.
- Սաղայ (արար.)—մաղձ.
- Սաֆրայ—տե՛ս Սաֆրայ.
- Սաֆի (արար.)—հտակ, վճիտ, անեղծ.
- Սաֆի լատիֆ (արար.)—վճիտ և նուրբ.
- Սաֆրայ (արար.)—մաղձ.
- Սպիրայ (տաճկ.)—ոսկու ձուլվածք.
- Ստարպ—տե՛ս Տարպ.
- Սֆիք (պրկ.)—սպիտակ.
- Տալզ (արար.)—փայլար.
- Տահնան(՝)—տե՛ս տահնիաթ.
- Տաննիար (արար.)—ձեթ, ճարպ.
- Տամաղ (արար., պրս.)—ջիճք, ճաշակելիք,
ուղեղ.
- Տարպ (արար.)—մետաղ, երկաթ.
- Տարպայ (արար.)—բազմապատկում, անդամ.
- Փիրուզա (պրս.)—թանկագին կապույտ բար,
լուրթ.
- Քան (արար.)—հանք, հանքախորշ.
- Քպրիք (պրս.)—ծծումք, լուցիկ.
- Քսուր (արար.)—կոտորակներ, մնաղորդներ.
- Ստարիտ (արար.)—Փայլածու, նաև սնդիկի
ծածկանուններից մեկը.
- Ֆալար (արար.)—երկինք, երկնային շրջան,
ճակատագիր, բախտ.
- Ֆարտ (արար.)—կենտ, միայնակ.
- Ֆարսախ (պահլ. պրս. արար.-ից)—փարսախ,
երկայնության շափ—մոտավորապես 5 կմ.,
կամ 30 ասպարեղի.
- Ֆիրք (արար., տաճ.-ից) միաք, մտածողու-
թյուն, խոհ, դատողութուն.
- Ֆրնել—մտածել, խորհել, մտատանջվել.

Р. АБРАМЯН

АРМЯНСКИЙ ПУТЕВОДИТЕЛЬ ПО ИНДИИ XII ВЕКА

Известно, что между армянским и индийским народами существовали экономические связи как в древний период, так и в средние века. Эти связи в той или иной степени нашли отражение в армянской средневековой литературе. Интересные сведения об армяно-индийских отношениях имеются у Агафангела (V век), Анания Ширакаци (VII век), Гетума (XIII век) и в трудах других армянских авторов. Большинство из них известно в востоковедении и опубликовано.

Интересные материалы об армяно-индийских отношениях сохранились и в армянских рукописных памятниках, которые или вовсе не были опубликованы, или же публиковались давно и забыты.

Одним из подобных памятников и является публикуемый ныне текст географического содержания, носящий заглавие «Наименования городов индийских и персидских».

Этот текст сохранился в семи рукописях Гос. Матенадарана Армянской ССР. Шесть из них относятся к одной группе и берут начало из одного протографа. Последний скопирован в более поздний период и содержит множество ошибок.

Наиболее древняя рукопись Матенадарана, заключающая в себе текст «Наименования городов индийских и персидских», зарегистрирована под номером 1898. Сборник относится к XIII веку. Написан он на пергаменте. Вид письма — болорагир.

Другие рукописи Гос. Матенадарана, содержащие этот текст, следующие: № 1770 (переписан в 1589 г. каллиграфом Асатуром), № 7993 (переписан в 1672 г., каллиграф Алексан), № 1864 (переписан в 1676 г., каллиграф Григор Ереванци), № 3691 (переписан в XVII веке, переписчик неизвестен), № 5950 (переписан в XVIII веке), № 9071 (переписан в XVIII веке).

Точные данные об авторе интересующей нас статьи и о времени ее составления не имеются. Маленький намек дает нам возможность уточнить время написания текста. Автор статьи, говоря о Лахоре, пишет: «Султан Махмуд шестьсот (по рукописи № 5950 «сто») лет тому назад подчинил его себе и сделал своим данником».

В истории известно несколько Махмудов, совершавших нашествия на Индию. Но среди них наиболее известным и к тому же султаном был Махмуд Султан Газневид (998—1030 гг.), который завоевал Северную

Индию и занял город Лахор в 1006 году. В тексте речь идет об этом султанине. Если прибавить к году завоевания Лахора шестьсот лет, то получится, что текст написан в 1606 году, что невозможно, ибо, как мы уже сказали, наиболее древняя рукопись относится к XIII веку. Упомянутые же в тексте некоторые города в XVII веке в основном уже потеряли свое значение как политические и торговые центры, другие изменили свои названия, а многие и вовсе перестали существовать. Ясно, что в тексте при переписке произошла ошибка. Переписчик вместо 100, переписал 600, что означает 600. Эту ошибку повторили также остальные пять переписчиков. Точная дата сохранилась только в одном варианте, в рукописи № 5950. В нескольких местах своего сочинения автор говорит об индийских городах и областях, которые были подвластны Газневидам. Так, например, он пишет: «Земли Панианские заселены индийцами, однако ж подвластны они Газневидам», «Тигнаво — большой город и тоже подвластен Газневидам», «Нахруала и Молтан — очень большие и великолепные города.... И подвластны они Газневидам» и т. д.

Государство Газневидов, как известно, пало в 1161 году. Из этих данных явствует, что наш автор жил и писал свое сочинение через сто лет после завоевания Лахора Султаном Махмудом и до падения династии Газневидов, то есть между 1106—1161 гг.

Интересен тот факт, что как в рукописи № 1898, так и в других рукописях этот текст помещен в сборниках географического и исторического содержания. Во всех сборниках переписчики вначале помещали «Географию» Анания Ширакаци и другие географические труды, а затем — этот текст. По-видимому, составители этих текстов имели целью создать географические сборники — путеводители по Индии и соседним странам для едущих туда армянских купцов.

Как явствует из текста, автор данного путеводителя хорошо знаком с Индией и лично бывал там. Свое описание он начинает с Севера Индии — рассказывает о городах Лахор, Кашмир, Панклар, Нахруала, Млепар и др. и заканчивает описанием самой южной части Индии — острова Цейлон. Кратко описывает он пути, ведущие в эти города, указывает расстояние между ними, мимоходом сообщает сведения о быте и нравах индийцев, обстоятельно говорит об экономической жизни этих городов и их торговых взаимоотношениях. Он дает также интересные сведения о том, какие товары можно приобрести в этих городах. Например, говоря об области Ремизар (Золотая земля), он сообщает о добываемых там драгоценных камнях, об их стоимости и качествах.

Составленный армянином-купцом этот интересный путеводитель еще раз говорит о том большом интересе, который проявляли армяне к Индии еще в средние века.

Данный текст имел несколько изданий¹. Впервые он был напечатан в «Книге стран» (*Գրքը տշխարհայ*) в 1668 г. в гор. Амстердаме (стр. 77—

¹ Об издании этого текста мы узнали из неопубликованной работы научного сотрудника Института истории АН АрмССР тов. А. С. Анасяна «Армянская библиология». Пользуясь случаем, выражаем ему нашу благодарность.

78), потом был перепечатан в последних четырех изданиях этой книги: Марсель, 1683 г., стр. 72—82; Ливорно, 1683 г. стр. 73—83; Ливорно, 1698 г., стр. 47—87, и Венеция, 1752 г., стр. 57—83. Впоследствии данный текст переиздавался в журнале «Базмавеп» в 1882 г., стр. 311—313. В этом же номере напечатан его французский перевод под заглавием „Noms de quelques villes de l'India et la Persia“. Впоследствии этот текст печатался также в арменоведческом журнале „Zeitschrift für armenische philologie“ Marburg (Hessen) 1902, стр. 195—198. Издатель принял за основу текст рукописи № 1696, находившейся в Эчмиадзинском Матенадаране. Сейчас она является собственностью Гос. Матенадарана АрмССР (рукопись № 1898).

Принимая во внимание то обстоятельство, что наилучшей из семи вышеупомянутых манускриптов Матенадарана является рукопись № 1898 (XIII век), сохранившая особенности среднеармянского языка, мы положили ее в основу данной публикации с учетом лишь нескольких разночтений из других рукописей для исправления явных ошибок переписчика.

Русский перевод выполнен нами совместно с С. С. Аревшатыном.

ԱՆՈՒԱՆՔ ՔԱՂԱՔԱՅՆ ՀՆԴԿԱՅՆ ԵՎ ՊԱՐՍԻՑՆ

Պանիան քաղաք՝ ութ ատուրց ճանապարհ ընդ ցամաք պիտոյ է ընթանալ: Պանիանու գաւառքն Հնդիկք են, բայց ի Խազնոյ թեմն խաւսի, զի վաղնշուց հաւանեցուցեալ է Պարսիկն և առեալ, այլ երկրին բնակիչքն Հնդիկք են:

Տիգնաւոյ՝ քաղաքն է մեծ և ինքն ի Խազնոյ խաւսի: Եւ երկրին բնակիչքն Հնդիկք են, կան և ազգ մի պարսիկք: Վեց ատուր քան զԽազնայ ի վայր է:

Պոյստ քաղաք է մեծ, մեծագանձ և մեծահարկ: Եւ ունի թեմ ընդարձակ: Եւ ճանապարհք Դ (4) ատուր է ի Տգնաւէ ի Բոստ: Եւ այս երկրիս բնակիչքն Հնդիկք են և ի Խազնի խաւսին:

Պուրշայուր՝ մեծաշահ քաղաք և թեմ ընդարձակ: Ելանէ յիւրմէ շատ լեղակ և հինայ աղէկ: Ի Խազնոյ ի Պուրշայուր տասն և հինգ ատուր ճանապարհ է:

Քապուլէ է քաղաք մեծ և մեծաշահ և մեծահարկ: Ելանէ յիւրմէ հլէլիճ, և քապուլի և այլ ազատակար դեղեր: Քառասուն ֆարսախ է ի Պուրշայուրէ մինչև ի Տիգնաւէ:

Լահուր՝ քաղաք է մեծ և մեծագանձ, աշխարհ և երկիր ընդարձակ: Գեղեր ունի շորս հարիւր հազար: Մահմուտ սուլտանն է զիրենք հարկատու արարել և հաւանեցուցել, են ամբ հարիւր¹: է մեծաշնորհ քաղաք: Եւ զոր ինչ յամենաքն երկիր պատուական և հարկեր իրք լինին, ամէնն ի քաղաքն գտանի, զի անդ բերեն ծախեն վաճառականքն: Եւ ամենայն վաճառականքն անտի քաղեն զամենայն ինչ, զի ի վերայ ճանապարհին է քաղաքն և թագաւոր է մեծազար:

Խշմիր՝ քաղաք մեծ է և գաւառս ունի հարուստք և մեծաշահք: Ի Լահուրէն ի քառասուն արն երթան ի Խշմիր: Մուշկնիփալի ասեն՝ ցած մուշկ է՝ նա անդ շատ գտանի: Ելանէ սնֆուլ և զարաֆուլ և այլ զինչ պիտի մարդոյ դեղեր մարդկան համար: Քաղաքն լեռն է, և մորի, և կապրննի:

Պանկլար՝ քաղաք է մեծ: Եւ բնակիչք քաղաքին՝ Հնդիկք հարուստք և մեծաշահք: Եւ մայրին ի չինք ի մաւտ է, և մայրոյն փայտն ամէնն ծխանելիք է: Եւ բնակիչք երկրին գտանեն զաղէկ ծխանելին ի ցեխսն թաղած: Իրենց թագաւորն ութն հազար փեղ ունենա, մեծ թագաւոր է և հարուստ: Եւ ամենայն պատուական իրք գտանի ի չիւր քաղաքն:

¹ Ի ուրբ ձեռագրերը, բացի № 5950-ից, ունեն «11» կամ վեցհարյուր:

НАИМЕНОВАНИЯ ГОРОДОВ ИНДИЙСКИХ И ПЕРСИДСКИХ

До города Паниана¹ нужно ехать восемь дней по суше. Земли Панианские заселены индийцами, однако ж подвластны они Газневидам, ибо персы издавна подчинили и завоевали их, но население этой страны индийское.

Тигнаво¹ — большой город и тоже подвластен Газневидам. Население страны индийское, но имеется и одна народность персов. Находится в шести днях езды ниже Газны².

Пойст¹ является большим, очень богатым и славным городом. Он имеет обширную область. От Тигнаво до Пойста четыре дня пути. Жители этой земли — индийцы и подвластны они Газневидам.

Եւ արդ ես, յետինս և անարժանս ի կարգաւորաց Խաչատուր մեղուցեալ գրիչս, տեսի զտէր և զփափազ Բէկիխաթուն ասպաշխարհողին, զոր վաղուց հեռէ ունէր զփափազ սուրբ աւետարանիս, և իմ անընդունակ գոլով յարուեստ զըրշութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին, յանձն առի և բազում աշխատութեամբ և տառապանաւք գծագրեցի զսայ || մեղսամած մատամբ իմով ի կրկնահանգեա և ի գերահոշակ ուխտիս, որ կոչի Սանահին, ընդ հովանեաւ սուրբ աստուածածնիս և հրաշափառ կաթողիկէիս, ի յառաջնորդութեան տեառն Բարսեղ եպիսկոպոսի և այլ միաբանիցս, ի թուականութեանս հայոց ՋԼԳ [=1485], ի դառն և ի շար ժամանակիս, որով նեղիմք ի բռնութենէ անաւրինաց: Եւ արդ՝ երեսս անկեալ աղաշեմ զսրբազան դասս քահանայից, որք հանդիպիք սուրբ աւետարանիս ի ժամատեղ կամ պատարագի, յիշեցէք յաղաթս ձեր զիս՝ զԽաչատուր անարժան արեղայս, որ զանուն միայն ունիմ, և զբազմերախտ հարեղբայրն իմ զտէր Վարդան կուս/ակրան արեղայն և զուսուցիչն իմ զտէր Արիստակէսն, որ բազում աշխատութեամբ ծաղկազարդեաց զսուրբ աւետարանս, և զհամշիրակ

¹ Բաց է թողնված:

եղբայրն իմ գտէր Մկրտիչ կուսակրան արեղայն. նայ և զծնաւզան իմ՝ զհայրն իմ զՅովաննէս և զմայրն իմ զՀազրէվարդն, որ բազում աշխատանաւք ծառայեցին մեզ. ալլև աղաչեմ կրկին մաղթանաւք յիշեցէք ի Քրիստոս և զքոյրսն իմ զնիկարխաթունին, Աննախաթունին, Նոյիմզարին, հանգուցեալսն ի Քրիստոս: Դարձեալ եղիցի յիշատակ մասին արհնութեան ի սուրբ աւետարանս ստացաւ սորին զԲէկիխաթունն և զհայր... (Յերի)

սլրակ Զ, էջ 10ր:

Մեղսամած զծողիս ողորմեա տէր և Բէկիխաթուն սպաշխարողին, քստացող սուրբ աւետարանիս:

Հ ի շ ա տ ա կ ա գ ը ու թ յ ու ն ն ե ր

էջ 69ա (երկայուն)

Ըզվերջին ստացող սուրբ աւետարանիս, բարի և սրբամիտ Ոսկան էրեցիս, որ ստացաւ զսա ի հալնալ արգոց իւրոյ, որ ետ կազմել զսուրբ աւետարանս յիշատակ հոգւոյն իւրոյ և իւր ծնաւզացն՝ հաւրն Մըկըրտիչ երեցին և մարն Մարիանին և հանգ[ուցեալ] եղբայրն իմ Մխիթարն և կող[ակիցն] Նակահն և որդիք նորա Գրիգորն և կողակից Շահլամանն և որդիք Յակոբն, Դաւութն, ըՍտեփանոսն [ս]արկաւագն, Յոհան և զուտոր Պայսուլթանն, Խանսպէկին, Եթ[արէն] և եղբայր Յոհանէս և կող[ակից] Պայիկն և որդ[իք]...¹: Մկրտիչն...¹ եղբ[այր] Յոհանէս և որդ[իք] Յակոբ, Մկրտիչ, Խաթուն[ն]...¹, Խանդարն: Դարձեալ աղաչեմ զձեզ, ով սուրբ... հք, որ հանդիպէք ի սուրբ աւետարանիս, յիշեց[էք] սուրբ աւետարանս կազմո[ղ]... որ... կան... ձեր յիշէց... զմեր... որ ձեզ յիշողաց և մեզ յիշեցելոցս, առհասարակ ողորմեսցի. ամէն:

Ի Թվ[իւն] ՌԾ [=1601]. Հայր մ[եր]...

էջ 117բ (միասյուն) վրացերեն

Իստա Բլետա օցնիսիս յա սոտեւլս մարտյոցեսա ձլիճերա ցեց Բ՝ սաեա-
րեծա միցեմլաւ, ճոմելուց օյո յետիւլ մյոտնի մարտյոցելու յեր-օուցանց
ստամոջլատ

Թարգմանարար

Թվականութեանն 1891 (սխալմամբ՝ 1800+9+1) հունիսի 21 Մարտղոյի գյուղում [ցուցակա]զրվեց այս սուրբ ավետարանը նվիրատվութեամբ բարեկեցիկ Մարտղոյիցի տեր Հովհաննեսի ժառանգների:

Սրա ստորև հայերեն՝ տառասխալներով (ա-ի տեղ ւ-ով).

Ի փետրվարի 15-ին 1891 ամի տեառն, ողորմութեամբ և զօրութեամբ աստուծոյ կառուցար եկեղեցիս Մարտղոբի աւետեաց սուրբ աստուածածնայ, ի ժամանակի նորին կայսերական մեծութեան՝ բարեպաշտ Թագատրին Ռուսաց Ալեքսանդր Ալեքսանդրովիչի 3-ին և ի հայրապետութեան հայոց՝ ան Մակարայ Ա-նոյ, անխոնջ աշխատութեամբ և ջանիւք Թեյլաւա քաղաքացոց Ազէրսանդրի Պետրոսեան Եպիսկոպոսի և կամաւոր նուիրարեթութեամբ բարեպաշտօն ժողովրդականաց, վասն յիշատակի կենաց իմոց և յիշատակի կենաց ծնողաց հոգուց Թեյլաւեցուց Պատարկացին, որդուց նորայ Պետրոսին, Եպիսկոպոսին և Ելենին. ամէն.

Յամի 18¹⁰² [=1902] քստացայ զայս սուրբ աւետարան ի մարտի 10-ի անուանեալ գիւղ:

¹ Զնշված է:

№ 8 [=547]

ՊԱՐՉԱՏՕՄԱՐ

Թերթեր՝ 70 (սկիզբը և վերջը թերթ): Պրակներ՝ 5, յուրաքանչյուրում 14—16 թերթ, մեջը պակաս: Մեծուրյունը՝ $15,5 \times 10,5 \times 1$ (գրության 12×8): Նյութը՝ թուղթ: Կազմ չունի: Չնագրի վիճակը՝ վնասված և թերթի թե սկզբից և թե վերջից (մեջն էլ թերթերը պակաս): Գրուրյունը՝ միասյուն: Տողերը՝ 16: Գիրը՝ նոտրագիր: Զարդագրուրյուն՝ չունի: Գրիչը՝ անհայտ: Գրուրյան տեղը՝ Կարինի մոտ (*): Գրուրյան ժամանակը՝ 17-րդ դար: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

Հ ի շ ա տ ա կ ա գ ռ ու թ չ ու ն ն ե թ
էջ 28ա

Այս գիրք չիշատակ է քալաջժի տէր Գէորգին, որ չիւր ի ձեռնատու, որ էր ժամկոչ սուրբ աստուածածնի քաղաք... թ... և Արզրում ձեռնադրեցի քահանա թվին ՌՃԾ է [= 1708]-ին, որ է ձուկն տանուտէր:

էջ 27ա լուսանցքներում կողքից և ներքեից անիմաստ բառերի շարան.

Համշէն, սնոսն, մինչնայ գեղն, շինին, Եղիզարին, մեծ տանն Խաուր [= Խաչատուր] տղայ, մայրն Նաշխուկն, շալակն առի... սեպտեմբեր ի ժԱ, Համշէն... գեղջ տէր Առաքելին տղան Կարապետն, դուկնցի տէր Վարդան մկէրտեց միջ գեղն...

№ 9 [=548]

ԽՈՐՀՐԳԱՏԵՏՐ ՊԱՏԱՐԱԳԻ

Թերթեր՝ 21: Մեծուրյունը՝ $29 \times 22 \times 0,5$ (գրություն $23,5 \times 15$): Նյութը՝ թուղթ: Կազմ չունի: Չնագրի վիճակը՝ վնասված և թերթի: Գրուրյունը՝ երկսյուն: Գիրը՝ խոշոր բոլորագիր: Զարդագրուրյուն՝ 1 նկար (էջ 1 բ), 1 խորան (էջ 2ա) և 4 մանրանկարներ (էջ 4ա, 8ա, 9ա, 11ա, 13 դուրս կտրած): Գրիչը՝ անհայտ: Գրուրյան տեղը՝ անհայտ: Գրուրյան ժամանակը՝ 17-րդ դ. (*): Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

Հ ի շ ա տ ա կ ա գ ռ ու թ չ ու ն
էջ 21բ₂

Յիշատակ է Խորհրդատեարս պարոն Գորգինին և կողակցին Մարիամ խանումին և իւր որդին Փարսաղանին և Քայխոստրովին և որդին Գորգինին և ամենայն ազգականացն ողորմի, որ է արհնեալ յախտեանս. ամէն: Հայր մեր:

№ 10 [= 549]

Հիշատակարան կցված 1685 թ. վենետիկում տպված ավետարանին¹: Մեծուրյունը՝ $17,5 \times 13 \times 4,5$ ($13 \times 9,5$): Կազմը՝ կաշեպատ սախտակ, մեջը պատառիկներ: Դրսից «Խաչյալ Քրիստոսի»-ի երկաթե զարդ:

¹ Տե՛ս Գ. Զ ա ռ բ հ ա ն ա լ ե ա ն, Հայկական մատենագիտութիւն, վենետիկ, 1883, էջ 76:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն (վերջում)

Յիշատակ է այս սուրբ աւետարանս Կիրակոսին և կողակցին Գօգչախին և հան[գ]ուցեալ որդին Անանին և կողակցին Գուլինին և կենդանի որդին Ղազարին և կողակցին Հոռոմին: Արդ և ես, Կիրակոս, իմ որդի Ղազարս գնեցինք այս սուրբ աւետարանս վասն յիշատակ Անանի հոգոյն համար, հալալ ընչիւք և ապրանօք մերովս: Ով, սուրբ եղբայրք և ընթերցողք, յո՛րժամ ընթեռնուք կամ օրինակէ[ք], մէկ չի բերանով հոգոց հանգուցելոց և Քրիստոս որդի և հայր մեզայ ասացէք: Քրիստոս աստուած ըն[դ] ձեզ ողորմի իւր միւս անգամ գալըստեանն. ամէն. թվին ՌՃԿԳ [= 1714]:

Հայր մեր, որ յերկ[ինս ես...]:

№ 11 [=550]

Գ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն

Թերթերը՝ 199: Պրակները՝ 18, յուրաքանչյուրում 12 թերթ: Մեծուրյունը՝ 21×14,5×4 (գրության 15,5×10): Նյուրը՝ թուղթ: Կազմը՝ կաշեպատ տախտակ: Ձեռագրի վիճակը՝ սկզբից և միջից քայքայված, վերջը թերթ: Գրուրյունը՝ միասյուն: Տողերը՝ 22: Գիրը՝ բուրբաղիր: Զարդագրուրյուն՝ շունի, վերնագիրները և սկզբնատառերը կարմիր: Գրիչը՝ երկաթե: Գրուրյան տեղը՝ Ճիսէլ գյուղ: Գրուրյան ժամանակը՝ 1481 թ. (ՁԼ): Պատվիրատուն (ստացողը)՝ «Անտոն կրանաւոր, հայր վանաց Զուղու աստուածածնին»:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Վերջում (էջ 199ա)

...Գրեցաւ գանձարանս ձեռամբ երկաթե իրիցու փցուն և տխմար գրչի ի գիւղս, որ կոչի Ճիսէլ, ընդ հովանեաւ ծիրանաւոր աստուածածնիս, հրամանաւ և ծախիւք սրբասէր և գերալուր անձին Անտոն կրանաւորի՝ հայր վանաց Զուղու աստուածածնին, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ իւր և ծրնօղաց իւրոց: Ով գմեղ յիշէ, աստուած զինքն ի բարին յիշէ, և նմա փառք յափտեանս. ամէն: Գրեցաւ ի թվ[ին] հայոց ՁԼ [=1481]:

Ստորև վրացերեն փոքրատառ խուցուրի գրով.

ԵԱՐՈՇՈՆՏ ՅԵՄԵՆԸՅԵՆ (Յ՛Ն) ԼԹԵՂՈՏՄԱՆ (Լ՛Ն) ՅՄՈՆ (Յ՛Ն), ԱՅՄԻՆՔՆ՝
«Խարիտոնին աստված ողորմի, ամեն»:

էջ 199բ (եղծված)

[Փառք հաւր և] որդոյ և սուրբ հոգոյն... գրեցի զԳանձարանս յիշատակ ինձ և ծնողացն... Կիրակոսին և... Մխիթար և որդոյն իւր Գրիգոր, և աղաշեմք որք... կամ արինակէք ստուգաբանեալ... Գրիգոր... ննջեցեալսն ի սուրբ յաղաւթս ձեր յիշեցէք և [աստուած] զձեզ յիշէ յիւր սուրբ արքայութեան. ամէն:

Հ ի շ ա տ ա կ ա գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

էջ 3բ—5ա (ներքևի լուսանցքում)

Ես, Ռամանգիս, գնեցի Գանձտետրս յիշատակ ինձ և կողակցին իմոյ Խօշիարին և հօրս Մաղճթնի որդի Ալադադին, մօրս Անդալատին և դաւակացս (բնագրում՝ դօակացս) Լամադին, Մամուկին, եղբօրս Նուրվէրդին, գատերաց Յայգունդուն, Շամանդուխին, Ազրիմինդուխին, Լալգունալին, Խանսուլթանին,

քվերս Սայիփսուլթանին || և ամենայն արևան մերձաւորաց (բն. մերձօրաց) իմոց, և տվի յիշատակ ինձ և Կարապետ Կախկոպոսին. ով որ կարդայք [կամ] արինակէք, բերան մի ողորմի ասէք Ռօմանդուն և իւր ծնողացն, և || աստուած ձեզ ողորմի իւր ահեղ ատենին. ամէն:

էջ 6բ
Երազ է, կատարի:

էջ 45ա վրացերեն յյ ռձՅճՈԾՈՅ, այսինքն
«Այստեղ քունս տարավ»:

էջ 142ա
Վերջին ստալցողի գրոցս ողորմի աստուած Մրանաղին, Յիսայիսաթունին, Ամիրփաշային ու Նոյփոսին. աստուած ողորմի Սարգիսին: Ով որ մէ բերան կարդա... որ ասէ ստացուղի գրոց... լէր... յարքայութիւն. ամէն:

№ 12 [=551]
Մ Ա Շ Տ Ո Յ

Թերթեր՝ 55 (համարակալված է 2—56): Մեծուրյունը՝ $19 \times 13,5 \times 1$ (գրության 15×10): Նյութը՝ թուղթ: Կազմ չունի: Ձեռագրի վիճակը՝ սկզբից և վերջից վնասված և թերի: Գրուրյունը՝ միասյուն: Տողեր՝ 22: Գիրը՝ բոլորագիր: Զարդագրուրյուն՝ չունի: Գրիչը՝ անհայտ: Գրուրյան տեղը՝ «Ընդ հովանեաւ սուրբ Լուսավորիչի ի գաւղս Յարայմիշի, որ կոչի Յարրիկ»: Գրուրյան ժամանակը՝ 1510 թ. (ՂՄԹ): Պատվիրատուն (ստացողը)՝ Պարսեղ երէց:

Հ ի շ ա տ ա կ ա բ ա ն

էջ 35բ
...Ըստացաւ Մաշտոցս Պարսեղ երէցս յիշատակ իւր և ծնաւդաց իւրոց՝ հաւր իւրոյ տէր Ակոբին և մաւրն իւրոյ Յամամայ և կենակցին իր Կուզուին, եղբայրն իւր հանգուցեալն ի Քրիստոս Ս[ի]մեան և Յոյնանին. ամէն:

Ազաշեմ յիշել ի տէր և աստուած յիշողացդ ողորմեցի, որ և առատ անէ ի սուրս... ի ձեզ և մեզ, ողորմեցի, ամէն: Եղիցի, եղիցի. ի թվիս ՂՄԹ [=1510], ի սուլտանութեան տաճկաց շահին, հայրապետութեան տեառն Ըստակէսի, ընդ հովանեաւ սուրբ Լուսավորիչի, ի գաւղս Յարայմիշի, որ կոչի Յարրիկ...

էջ 27 (28)բ ներքևից
Այս երկու թուխտս գիշերով գրեցի... թողութիւն արէք:

Հ ի շ ա տ ա կ ա գ բ ու թ յ ու ն

էջ 36(37)բ ներքևից
...Զվերջի[ն] ըստացող Մաշտոցիս Պուտախ և կողակիցն իւր Հայկեթայ և որդին իւր Ղասամայ և էրեց որդին իւր տէր Դաւիթ ազաշեմ զձեզ, ընդերձողք տառիս, յիշեցէք ի մարբափայլ ազաթըս ձեր և յաստուած յիշողացդ ողորմեցի. ամէն: Տէր աստուած:

№ 13 [= 552]
Հ Ե Ք Ի Մ Ա Ր Ա Ն

Թերթեր՝ 220 (սկզբից 32 էջ պակաս), համարակալված 33—220 էջ: Պրակներ՝ խառնված: Մեծուրյունը՝ $21 \times 16 \times 1$ (գրության 17×12): Կազմը՝

կաշի: Նյուրը՝ թուղթ: Ձեռագրի վիճակը՝ վնասված, սկզբից և վերջից թերի: Գրությունը՝ միասյուն: Տողերը՝ 28: Գիրը նոտրագիր: Զարդագրություն՝ վերնագրերը և սկզբնատառերը կարմիր: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ անորոշ: Պատվիրատուն (ստացողը)՝ Ղարանցի Քասբարի որդի Սահակ: Բովանդակությունը՝ Բժշկարան. տերմիններ ա—ս (մնացածը չկա): 193—220 էջերում ցանկը:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

էջ 193

Յանկ Հէքիմարանիս բազում աշխատանք արարեալ ի վերայ այլբութենից պարզապէս ի վայելումն Ղարանցի Քասբարի որդի Սահակիս. և օվ ոչ հանդիպեացէ, միօվ կարմիրիվ (՛) յիշեացէ:

Հ ի շ ա տ ա կ ա գ ր ու թ յ ու ն (Կազմի ետևից)

Հայր Խաչատուր, եղբայր Սար[գիս], կողակից Յարինին և իւր մերձաւորացն ամէն. ով որ կար[գաթ], մէկ բերան ողորմի ասէք, տէր ձեզ ողորմի:

№ 14 [= 553]

Ը ն Թ Ե Բ Յ Ո Ի Ա Ծ Ք

(Պ ա տ ա ո ի կ)

Թերք 1: Մեծությունը՝ 26(13)×18 (գրության 17(8,5)×13): Նյուրը՝ մագաղաթ: Կազմ չունի: Ձեռագրի վիճակը՝ թերթը ծալած (կիսով), վերևը պատռած: Գրությունը՝ երկսյուն: Տողերը՝ 22 յուրաքանչյուր սյունակում, որոնք տալիս են չորս ընթերցվածք՝ յուրաքանչյուրը 11 տող: Գիրը՝ երկաթագիր: Զարդագրություն՝ չկա: Թերթի ներքեում գրված է՝ ԽԱԶ: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ մոտավորապես 10—11 դդ.: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ք

1. (11 տող)... զաշ[խարհ ստեղծ եւ] զանարատ բազուկս քո ի վերայ փրկավետ խաչին եւ/նեղեր զսուրբ զա/րիւնդ կեցուցա/նել զվտարանդե/ալսն ի ծառայու/թենէ մահու եւ մե/ղացդ ունայնի...

2. (11 տող)... այ/ժմ եւ միշտ եւ յաւ/[իտեանս]... դիր, տէր, զամենատուրբ /ձեռքն քո ի վերայ/ սորին նշանիս եւ /աւրհեա զխաչս / զայս եւ տուր յաղ/թանակ փրկել ժո/ղովրդեան քո պար/ծելոյս ի կենսա/բեր անուն քո. այժ/մ եւ միշտ եւ յաւիտեանս...]

3. (10 տող)... խաչին ի պահպա/նութիւն անձանց / մերոց եւ ի պատ/ճառք երկրպագու/թեան սրբոյ և զի/զական երրորդու/թեանդ եւ մի աստուած/ութեանդ, հար եւ / սրբուց եւ հոգոյ[ն] / սրբոյ. այժմ եւ մ/[իշտ եւ յաւիտեանս...]

4. (11 տող)... շարիս ընդ /մարտ թշնամուց. /զի քո է տէրութիւն / եւ զաւրութիւն եւ / փառք յաւիտեան: /Ապա այս կանոն կատարի. /սաղմոս Աէ պատմեցենեք/ ընթերցուած ի ձեռնդ¹: /«Եւ ել Յակոբ ի /չրհորոյ անտի/ երգման եւ զնաց/ [ի Խառան...]:»:

¹ Ընդգծվածը վերնագիր է:

№ 15 [=554]

Հ Մ Ա Յ Ի Լ

(Պ ա տ ա ո ի կ)

Թերթ 1: Մեծությունը՝ $47,5 \times 8$ (գրությանը 6): Նյութը՝ թուղթ: Կազմ շու-
նի: Ձեռագրի վիճակը՝ սկիզբն ու վերջը թերթի (պատռած): Գրությունը՝ միա-
սյուն շրջանակով: Տողերը՝ ամբողջը 55: Գիրը՝ բուրբակի: Զարգացումը՝
վերնագիրը կարմիր: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության
ժամանակը՝ անորոշ: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

Բ ո Վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ք

երկու ծիր, որոնց վերևից կարդացվում է. «զաշս իմ»:

ա. ծիր (8 տող). «Ի լերինս, ուստի / եկեսցէ ինձ օգնութիւն: / Օգնութիւն ինձ
ի տեսանէ եկես/ցէ, որ արար զերկինս և զերկիր: / Մուտ զօրութիւն ծառայիս /
քո, կեցոյ զորդի [աղա]խնո[յ] / քո և արա... նշ/ան... [փրկ]ութեան»:

բ. ծիր (8 տող). «Տեսցեն ատ/ելիք իմ և ամաշեսցեն: Դու, տէր,՝ աւան-
ցեր և / մաքրեցեր զիս: Փառք / հար և որդոյ և հոգոյն սրբոյ, / յայժմ և միշտ և
յաւիտե/անս յաւիտենից [ա]մէն»:

Ապա կարդացվում է «Տաղ խաչին» (Գր. Նարեկացու նմանությամբ). Ապա՝
«Գովեստ սուրբ խաչին»:

№ 16 [=555]

Ո Ի Բ Բ Ա Թ Ա Գ Ի Բ Ք

Թերթերը՝ 110: Մեծությունը՝ $15,5 \times 10,5 \times 1,5$ (գրության $10,5 \times 7$): Նյութը՝
թուղթ տարբեր որակի: Կազմը՝ կաշեսպատ տախտակ (մնացել է ա. մասը,
մյուսը՝ ո՛չ). մեջը փակցված է կտոր: Ձեռագրի վիճակը՝ քայքայված: Գրությունը՝
միասյուն: Տողերը՝ 16: Գիրը՝ բուրբակի: Զարգացումը՝ շունի: Գրիչը՝ ան-
հայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ 16—17-րդ դդ.: Պատ-
վիրատուն (ստացողը)՝ Ամիր-բէկ, Միրզա-բէկ և նրանց մայր Փարասը:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

էջ 77ա

...Գրեցաւ զիրս պահպանութեան և նախախնամութեան ծառային աստուծոյ
Ամիր-բէկին, Միրզայ-բէկի[ն] և իւր (բնագրում՝ ուր) մարն Փարասին և ամե-
նայն տանեացն մեծի և մեծայմեծացն ամենիցուն. ամէն. ի դէմ ծառայիս աս-
տուծոյ Ամիր-բէկէ, Միրզա-բէկէ:

Հ ի շ ա տ ա կ ա գ ր ու թ յ ու ն ն ք

էջ 70ա. Թէմուրազն, որ փախաւ, թիւն ՌՁԲ [=1633]:

էջ 72ա—բ

...ամենայն աղանդը և կախարդութիւնք ի ծառայիս աստուծոյ Ամիր-
բէկէ և Միրզա-բէկէ և իւր մարն Փարասին. ամէն: Ով եխբար, յամէն կիրակի
կարդալ տուր ի տան քում, և դուք ամէն խոնարհ ի ներքև նստէք և ամենայն
ստացուածքն ձեր յաւելնայ և ար ձեր յաջողի, և նիաթք և կախարդութիւնք / ոչ
մերձենար ի ծառայիս աստուծոյ Ամիր-բէկին, Միրզա-բէկի[ն] և ի իւր մարն
Փարասին. ամէն:

Հաստատվ խոստովան[իմ]ք...

էջ 74բ. աստուած մեր շատ վա...ատրին է:

էջ 75ա

Հարայպետին եղիցի պահայպան և ազ[ն]ական ծառային աստուծոյ Ամիր-բէկէ և Միրզա-բէկէ. ամէն եղիցի:

էջ 75ա (այլ գրով)

Ես, տէր Ար[է]լն, գ[ր]եցի. օվ որ կա[ր]դա, մի բերան օղորմի ասէ:

էջ 76բ

Փառք համագոյ սուրբ երրորդութեան, հաւր և որդոյ և հոգոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն...: Ես, Ամիրջանս, գնեցի զսուրբ գիրս յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ հայրն իմ Ասատուրին և մայ[ր]ն իմ Գաւրանդուխնին, որ հանդուցեալ է առ Քրիստոս. և վերջին (՝) մայ[ր]ն իմ Գուլգանն և կողակիցն իմ Թէթրոյին¹ և փեսայ զսուրբ գիրս ի ձեռն այլոց գերի ցանգացայ և առայ տի ի հալալ ընչից իմոց, տի ի ձեռն փի (՝) Գաւթին, որ կոչի Շումթայ² ի դուռն սուրբ նշանին. որ ով կարգաք կամ արինակէք, ա. բերան ողորմի ասէք. ձեզ ողորմեսցի [յ]իւր մի[ւ]ս անգամ գայրստե[ա]ն, ամէն:

էջ 76 բ (լուսանցքում)

...և ի թագաւորութեան պարոն Թէմուրազին³ և ի հայրապետութեան տէր Մովսէսին⁴:

№ 17[=556]

Յ Ա Յ Ս Մ Ա Ի Ո Ի Ր Ք

(Պ ա տ ա ո ի կ)

Թերերը՝ 2 (էջք 420ա-բ, 461ա-բ): Մեծուրյունը՝ 33×23 (գրության 28×19,5): Նյութը՝ հին թուղթ: Կազմ շունի: Չեռագրի վիճակը՝ քայքայված, պատառիկ եթ և մի այլ պրակից: Գրուրյուն՝ երկսյուն: Տողերը՝ 37: Գիրը՝ բոլորագիր: Չարգագրուրյուն՝ վերնագրերը և սկզբնատառերը կարմիր: Գրիչը՝ Յոհանէս: Գրուրյան տեղը՝ անհայտ: Գրուրյան ժամանակը՝ անորոշ: Պատվիրատուն (ստացողը)՝ Մերուն քահանա:

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ճ ր

էջ 420ա—բ. վերջ «Վկայարանութեան Յուլիտայի»:

էջ 420բ. սկիզբ նոր տեքստի (Հրատից ժ և Յուլիսի ժԶ):

«Վկայարանութիւն սուրբ ճգնաւորացն Կոպրի և Պաթերմութէոսի և Աղէքսանդրի»

¹ Թէթրո, իբրև հասարակ բառ, վրացերեն նշանակում է «սպիտակ»:

² Շում[ա]մթայ՝ վանքի անուն է Թելավի մոտ:

³ Թէմուրազ Ա. թագավոր՝ 1606—1616 (Կախեթի), 1623—1632 (Քարթլիի և Կախեթի), 1634—1648 (Կախեթի):

⁴ Ամենայն հայոց կաթողիկոս Մովսէս Գ Տաթևացի, 1629—1632:

էջ 461 ա. վերջ «Վկայաբանութեան Թէոդորա»:

էջ 461բ. սկիզբ նոր տերատի «Յայսմ աւուր յիշատակ Աշոտոյ Բագրատունւոյ Հայոց թագաւորի. Սա առաջին թագաւորեաց յազգէն Բագրատունեաց...»

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն ն ե ր

էջ 420բ.

Եւ յամս բարեպաշտ ինքնակալին Կոստանդիանոսի ազգամբ հրեշտակաց աստուծոյ յայտնեցան նշխարք սրբբոցս Կիրակոսի և մօրն նորին Յուդիտայի, որոց ազօթիւքն ողորմի Քրիստոս ստացողի գրոցս Մերուն քահանայի և ծնողացն նորին՝ Մկրտչին և Իմշա-խաթունին և կենակցին Սանդուխտին և զորանչին Զարմանդուխտին և աներոջն Մխիթարին և Յովանէս զծողիս:

էջ 461բ.

...և թագաւորէ Աշոտ որդին Աբասայ ամս Իէ ի թվին ԴՃ և Բ [= 953], որոց յիշատակն արհնութեամբ եղիցի և մեզ մասն ընդ լաւացն լիցի, մանաւանդ ստացողի գրոցս Մերուն քահանայի և ծնաւոց նորին Մկրտչին և Իմշա-խաթունին և կենակցին. ամէն:

№ 18 [=557ա]

Հ Մ Ա Յ Ի Լ

(Պ ա տ ա ո ի կ)

Թերթ 1: Մեծութունը՝ $225 \times 7,5$: Նյութը՝ թուղթ: Կազմ շունի: Ձեռագրի վիճակը՝ վնասված, այսինքն թերի սկզբից և վերջից: Գրությունը՝ միասյուն: Գիրը՝ բոլորագիր, նոտրագիր: Զարդագրություն՝ նկարներ, տեքստը տեղ-տեղ կարմիր: Գրիչը՝ Յակոբ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ 1774 (ՌԲՃԻԳ) 15/10: Պատվիրատուն (ստացողը)՝ Յակոբ: Բովանակությունը՝ կախարդական տեքստեր, սկզբից՝ «Զայս վրան պահէ, որ զասակն սղալ մնայ և ապրի. Սաղմոս Դավթի»...

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն ն ե ր

ա. ...զգիր բերան որ ոչ կարեն շար խօսիլ ի դէմ ծառայ[իս] աստուծոյ Յակոբայի. Տէր աստուած Յիսուս Քրիստոս. դիրն ես գրէմ և հրամանան աստուծոյ հալս... ի դէմ ծառայ աստուծոյ Յակոբայի. ամէն:

բ. Գիրս գրվեցա՞ցա թվին ՌԲՃԻԳ [=1774] հոգեկենդանի ժԵ-ին. ամէն:

№ 19 [=557բ]

Հ Մ Ա Յ Ի Լ

(Պ ա տ ա ո ի կ)

Թերթ 1: Մեծութունը՝ $88 \times 8,5$: Նյութը՝ թուղթ: Կազմ շունի: Ձեռագրի վիճակը՝ վնասված, թերի (պատասիկ): Գրությունը՝ միասյուն: Գիրը՝ բոլորագիր: Զարդագրություն չունի, վերնագրերը կարմիր: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ մոտավորապես 18-րդ դ.: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ: Բովանակությունը՝ կախարդական: Հիշատակարան չունի: Հիշատակագրություն չունի:

№ 20 [=557դ]

Հ Մ Ա Յ Ի Լ

Քերթ 1: Մեծուրյունը՝ 29×8 : Նյուրը՝ թուղթ: Կազմ շունի: Գրիչը՝ անհայտ: Գրուրյան տեղը՝ անհայտ: Գրուրյան ժամանակը՝ մոտավորապես 18-րդ դ.: Պատվիրատուն (ստացողը)՝ Մերզի: Բովանդակությունը՝ կախարդական, տեղ-տեղ հմայական նշաններ:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն (մեջտեղում)

«Եղիցի բժշկութիւն ծառայիս աստուծոյ Մերզին»:

№ 21 [=557դ]

Հ Մ Ա Յ Ի Լ

Քերթ՝ 3 կտոր: Մեծուրյունը՝ առաջինի $165 \times 7,5$ (8), երկրորդի $80 \times 7,5$, երրորդի՝ $170 \times 7,5$: Նյուրը՝ թուղթ: Կազմ շունի: Չեռագրի վիճակը՝ վնասված, բերի (պատասիկներ): Գրությունը՝ միասյուն (բոլորի): Գիրը՝ բոլորագիր: Զարգագրություն՝ շունի: Գրիչը՝ անհայտ: Գրուրյան տեղը՝ անհայտ: Գրուրյան ժամանակը՝ մոտավորապես 18-րդ դ.: Պատվիրատուն (ստացողը)՝ Կուլասա՞ր, թե՛ Մերցի: Բովանդակությունը՝ կախարդական:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

ա. Եղիցի բարեխոսութեամբ սրբոյն Նէրսէսի հայրայգետին, խափանեալ, եղիցին ամենայն կասկած և կախարդութիւնք և պատահմունք ի ծառայէս աստուծոյ Կուլասարէն և տանէն և ի յընտանեացն, ի զաւակէն, ի հնշիցն և ապրանացն և ամենայն ըստածացոցն և յազգականացն. ամէն:

բ. Եղիցի պաշ[տ]պան Մերցին:

№ 22 [=№ 558ա]

Ճ Ա Ռ Ը Ն Տ Ի Ր

(Պ ա տ ա ռ ի կ)

Քերթ 1 (էջ 283ա-բ): Պրակներից հասել է 32-ից մի թերթ: Մեծուրյունը՝ $34,5 \times 26$ (գրության $26,5 \times 18,5$): Նյուրը՝ թուղթ: Կազմ շունի: Չեռագրի վիճակը՝ պատասիկ: Գրությունը՝ երկսյուն: Գիրը՝ բոլորագիր: Զարգագրություն՝ զարդանկարներ լուսանցքներում, վերնագրերը և սկզբնատառերը կարմիր: Գրիչը՝ անհայտ: Գրուրյան տեղը՝ անհայտ: Գրուրյան ժամանակը՝ անորոշ: Պատվիրատուն (ստացողը)՝ պարոն Աբրահամ, ընտանեօր: Բովանդակությունը՝ «Առաջին ուրբաթին երանելոյն Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ ի փորձանս աբրինակի և ի պատասխանիս Քրիստոսի»:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն (Նախքան հիշյալ տեքստը)

«Պարոն Աբրահամին և կողակցուն Խաթէսն և որդւոցն Դաւութին, Կոստանդին և Ըսպանդիարին...»:

№ 23 [=558բ]

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Պ ա տ ա ո ի կ)

Թերթ 1: Մեծությունը՝ թերթ չորս կողմից պատաստած: Նյութը՝ թուղթ: Կազմ չունի: Ձեռագրի վիճակը՝ պատասխիկ թերթի: Գրությունը՝ երկսյուն: Գիրը՝ բուրբաղի: Զարդագրություն՝ խորան զարդարված: Գրիչը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ մոտավորապես 14—15-րդ դդ.: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ: Բովանդակությունը՝ աւետարան ըստ Ղուկասու (մի պատասխիկ): Հիշատակարան չունի: Հիշատակագրություն չունի:

№ 25 [=558դ]

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Պ ա տ ա ո ի կ)

Թերթ 1: Մեծությունը՝ 30×20: Նյութը՝ թուղթ: Կազմ չունի: Ձեռագրի վիճակը՝ պատասխիկ թերթի: Գրությունը՝ երկսյուն: Տողերը՝ 11: Գիրը՝ երկաթագիր: Զարդագրություն չունի: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ անորոշ: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ: Բովանդակությունը՝ աւետարան ըստ Մատթեոսի ԻԳ, 16—21: Հիշատակարան չունի: Հիշատակագրություն չունի:

№ 25 [= № 558դ]

ՅԻՇԱՏԱԿԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԻ

(Կ Ե Ղ Ճ Ի Բ)

Թերթ 1: Մեծությունը՝ 16×11: Նյութը՝ կապույտ թուղթ: Կազմ չունի: Ձեռագրի վիճակը՝ թերթի: Գրությունը՝ միասյուն: Տողերը՝ 20: Գիրը՝ նոտրագիր: Զարդագրություն չունի: Գրիչը՝ Աղաբէկ Ռուբէնեան, Սյունեաց իշխան (°): Գրության տեղը՝ նորավանք (°): Գրության կեղծ ժամանակը՝ 1503 թ. (ՋԾԲ): Պատվիրատուն (ստացողը)՝ (°): Բովանդակությունը՝ Կեղծ պատճեն մի ինչ որ աւետարանի հիշատակարանի, որին կցված են զանազան անիմաստ հիշատակագրություններ:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն ք

1ա. Շնորհօք ամենազօրին աստուծոյ և կամակցութեամբն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ևս, Ռուբէնեան Աղաբէկս, Սյունեաց իշխանս ի զարմէն Սմբատայ մեծ իշխանէն, ետու սուրբ աւետարանս յիշատակ նորավանից սուրբ եկեղեցոյն Սիունոյ, որ և կառուցեալ նախնեացն մերուց Ռուբէնեանց: է ս[ա] յիշատակ ծնողացս իմոց կալ(?) Դաւիթ-բէկին և պապուն իմոյ նազարէթ-բէկին և համայն ընդանեացն և ամենայն զարմից և զաւակաց իմոց՝ վարդանին և նահապետին աղունցն, ևս ապա որ և ձեռնամուխ լիցի սորա գրաւելու կամ ծախելու, եթէ մերայնոցն և եթէ այլոցն, անէծս կոէ... և Յուդա[յ]ի ընկալցի: Թւին հայոց ՋԾԲ-ին [= 1503]:

հախ է (°)

Հ ի շ ա տ ա կ ա գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր (անխմատ)

1բ. ա. պարտքագրություններ,

բ. «ձերս ընծայից պայծառ բարգև»,

դ. «... այց զԱզքանազեան զարմի բաշխեց»,

դ. «ո՛վ մահու» են:

№ 26 [=581]

Գ Ի Ր Ք Ա Ղ Օ Թ Ի Յ

(Ընդօրինակություն)

Քերբեր՝ 196 էջ համարակալված: Մեծությունը՝ $13,5 \times 9,5 \times 1,5$ (գրություն $10,5 \times 7$): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ կաշեպատ տախտակ: Չեռագրի վիճակը՝ լավ: Գրությունը՝ միասյուն: Տողերը՝ 14: Գիրը՝ նոտրագիր: Զարդագրություն՝ բոլոր սկզբնատառերը թռչնաձև կամ մանկաձև են. թռչնաձև զույգ ծիտ՝ էջ 51, 63, 88, 101, 109, 114, 122, 147, 158, մի ծիտ՝ էջ 13, 121, մանկաձև՝ զույգ տղաներ էջ 130, 166, մի տղա՝ 137, ինչ-որ կենդանի՝ էջ 152: Գրիչը՝ Յակոբ դպիր: Պատվիրատուն (ստացող)՝ Թադէոս վարդապետ: Գրության տեղը՝ Լիմ անապատ: Գրության ժամանակը՝ 1847 (ՌՄՂԶ):

Տ ի տ ղ ո ս ա թ Ե Ր Թ Ր

էջ 1ա (1բ մաքուր)

Գիրք աղօթից հաւաքեալ աստի և անդի ուրումն բանասիրի, ի վայելումն աղօթող հարցն և եղբարց, ի հայրապետութեան տեառն ներսէսի սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց, ի 1847 ՌՄՂԶ. գրեցաւ ի սուրբ անապատ Լիմ, ձեռամբ ուրումն:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

էջ 196

Շնորհիւ և ողորմութեամբ աստուծոյ և բարեխօսութեամբ սրբոյ Գէորգայ զօրավարին հանկ ելեալ աւարտեցաւ գիրքս ի վայելումն Թադէոս վարդապետին: Արդ, ով սիրելի հարք և եղբարք, յիշեցէք միով Հայր մերիւ գրող սորին նուաստ Յակոբ ապիրս. խնդրեմ սխալանացն մերոց ներել:

Վերջ:

Հ ի շ ա տ ա կ ա գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

էջ 2ա (2բ մաքուր)

Գիրքը պատկանում է Լևոն Գրիգորեան Խոջամիրեանցին. Թիֆլիս 1912 թ.: 22 յունիսի 1920 թ. վաճառեցի Կ[ովկասեան] Հ[այոց] Բ[արեգործական] Ընկերութեան գրադարանին. Լևոն Խոջամիրեանց:

էջ 196 ի վրա 2 հատ կնիքներ, որոնց մեջ կարդացվում է ՄՏԳ 1892:

№ 27 [= 582]

ՄԱՄՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ

Քերբեր՝ 3 կտոր (5 էջ) իրար կպցրած: Մեծությունը՝ առաջինի 30×10 (հմայիլի նման), 2 էջ, երկրորդի $24 \times 10,5$ (հմայիլի նման), 2 էջ, երրորդին $20,5 \times 10$, 1 էջ: Նյութը՝ թուղթ: Կազմ չունի: Չեռագրի վիճակը՝ թերի: Գրու-

բյունը՝ միասյուն: Տողերը տարրեր: Գիրը՝ հայերեն նոտրագիր և վրացերեն «մխեղրուլի»: Զարդագրություն չկա: Գրիչը (գրիչները) անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ 18-րդ դ.: Բովանդակությունը՝ քաղվածքներ աստվածաշնչից հետևյալ կարգով, աւ. Ղուկ. 12,48, աւ. Յովհ. 12,32, Մենդ. 39. 9, Կորնթ. 3, 22, Թուղթ Յովհ. 4, 6, աւ. Ղուկ. 19,5, Սաղմոս 31,4 Մենդ. 1, 26, Սաղմոս, 66,7, Եսայի 6,3 ևն:

№ 28 [=583]

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱԿԵԴՈՆԱՅԻՈՅ

Թերթեր՝ 124: Պրակներ 14, յուրաքանչյուրում 8—10 թերթ: Մեծությունը՝ 21×14,7×3 (գրության 18,5×11): Նյութը՝ հին թուղթ: Կազմը՝ կաշեպատ տախտակ: Ձեռագրի վիճակը՝ լավ պահպանված: Գրությունը՝ միասյուն: Տողերը՝ 21: Գիրը՝ բոլորագիր (տարրեր ձեռքով): Զարդագրություն չկա: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ 1606 (ՌԾԵ)-ից առաջ: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

Տ ի տ ղ ո ս ա թ ե ր թ ե ր ք

էջ 1ա. Պատմութիւն մեծի աշխարհակալին Աղէքսանդրու Մակեդոնացւոց. Կեանք վարուց քաջութեան և գործք արիականք...:

Այս է գիրքս, որ և տետրակ պատմութեան Աղէքսանդրու յաղթող թագաւորին, թվին ՌՃԿԹ-ին [= 1720]:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

էջ 124ա

Ով, սուրբ ընթերցողք, զսակաւ բանիս գրողս յիշման արժանի արարէք. գրեցաւ սայ ի մայիս ամսոյ Բ և ի թվականիս հայոց ՌԾԵ [= 1606]. անմեղագիր լերուք, զի կար մեր այս է, և աստուած յիշողացդ և յիշեցելոց ողորմեսցի. ամէն:

Վերստին ստացաւդ այս՝ Աղէկսանդրա՝ մեղայվոր և անարժան էթէսայցի Նիկողոս ի վայելումն անձին իւրում և իւր յարու ասկայտոհմին, ով ընթերցողք, տո (°) իշատակս ողորմեա ստացէք իմ հոր Այմիշտսի (°), Միյոնոսպին և իմ ծնողաց Այմիշտսի (°) վարթխաթուն. Յիսուս Քրիստոս:

Հ ի շ ա տ ա կ ա գ ր ու թ յ ու ն ն ե ր

էջ 1բ

Ով, սիրելիդ մեր պատվական,
 Եթէ հանգիպիք այսմ պայման,
 Զիս յիշեցէք ի ձեր յատեան
 Տէր Յոհանէս եմ ձեր ազգական:
 Յիշատակ տուեց մայրագիր իմայն,
 Կատարինա է, որ ևս որդի կոչիմ նորա.
 Թվական է օրհման ՌՃՀԴ-ին՝ այն
 Փետրվարի ԻԱ-ին այն:

¹ Այսինքն 1728:

էջ 1բ (ալլ ձևորով)

Չեռքս փթի և հող դառնայ,
Գրեալ գիրքս անջինջ մընայ:
Ով հանդիպի, թող զայս կարգայ,
Մէ հայր մեղաց ասէ սըմայ:
Ով որ ասէ տէր ողորմեայ,
Տէրն ողորմի ինձ և նորա:
Չեռքս փտի և հող դառնայ,
Գրեալ գիրքս անջինջ մընայ:

էջ 2ա (լուանցքում ներքև)

Ես, մեղաւոր անարժան Անտոն արեղայս, հանեցի այս՝ Աղեքսանդրիա. մեկնեց ինձ յառաջն ի ձեռն քաջ բարունապետին տէր Վասիլ վարդապետին, աստուած իւրեան երկար ժամանակ պատրաստէ. ամէն:

№ 29 [=584]

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թերթերը՝ 316 (վերջին 315—316 մաքուր): Պրակները՝ 25. յուրաքանչյուրում 12 թերթ: Մեծուրյունը՝ $13,5 \times 10,5 \times 6$ (գրության $9,5 \times 7$): Նյութը՝ մագաղաթ: Կազմը՝ տախտակ կարմիր թավշե կտորով պատած, մեջը կցված է մի թերթ թուղթ վրացերեն (անտապիա) և վարդագույն մետաքսե կտորներ: Չեռագրի վիճակը՝ լավ պահպանված: Վերջին թերթերի վերին ձախ անկյունը նորոգված: Գրուրյունը՝ երկայուն: Տողերը՝ 20: Գիրը՝ բուրբաղիք: Զարդագրություն՝ խորաններ, զարդանկարներ լուանցքներում, վերնագրերը և սկզբնատառերը կարմիր: Գրիչը՝ Մկրտիչ քահանա: Գրուրյան տեղը՝ «Կիւլիկեա» — «ի թագս Դուղուշի»: Գրուրյան ժամանակը՝ 1328 (22է): Պատվիրատուն (ստացողը)՝ Յովհաննէս եպիսկոպոս:

Հ ի Ղ ա տ ա կ ա ր ա ն ն և ր

էջ 240ա (միասյուն)

Փրկութիւն, թողութիւն, հանգիստ, ողորմութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ Մկրտիչ գրողի և ծնողաց մերոց, նաև զմեզ ի բարին Քրիստոս յիշողքդ տացէ տէր Յիսուս զբարին. ամէն:

էջ 312ա—312բ (սկիզբը և մեջը թերթի)

...Գրեցաւ տառս աստուածային այս աւելյտարանս ձեռամբ սուտանուն քահանայի Մկրտչի, ի թագս Դուղուշի, ընդ հովանեալ՝ սուրբ Գորգու և սուրբ Սարգսի, ի հայրապետութեան տեան Յակովբա և ի թաղաւորութեան Առնի: Արդ, աղաչեմ զձեզ, զասք քահանայից, ոյք հանդիպիք այսմ աստուածախաւս կտակիս արինակելով, կամ տեսանելով, կամ գաղափար դնելով, յիշեսցիք ի սուրբ աղաթս ձեր զգրող սորա և ծընաւդան իմ՝ զմայր, որ ի յաշխատելս առ աստուած փոխեցաւ, և զամենայն ազգատոհմ, և զուր յիշեալ լիջիք բարի աւերհնելոյն յաւետ և յանվախճան յաւիտեանս, ամէն:

Իղձ բաղձանաց մարդկային բնութեան ի տեսակս զանազանս անշատեալ լինի յիմանալիս և ի զգալիս, յաստուածայինս և ի մարդկայինս, և այսորիկ

¹ Այստեղ և ստորև աւ-ը գրված է օ-ով:

դարձեալ զանազանք և պէսպէսք շահաւորք և սնաշանք երկարաձգեալք և համառօտեալք, վասն զի ըստ խորհրդականին...

...Սրբազան և պատուելի բարունիս Յովհաննէս... եռափափազ սիրով աստուածային շարժեալ ի բարեգործութեան...

...Այսպէս և սա, կամելով բարի յիշատակ ինքեանց թողուլ յերկրի և ծնողաց իւրեանց և համօրեն ազգա[յ]նոց կենդանեաց և հանգուցելոց, զմեծագոյն և զհասարակաց ցանկալին ընտրեցին ստանալ, զաստուածապարզ և զանձս զլուսաւ[ո]ր և բարձրագոյն բանս աւետարտութեան փրկչին մերոյ Յիսուսի և ընծա յիշատակի մշտնջենաւոր պարզեւլ սրբոյ եկեղեցոյ և մանկանց նորա, զի որ ընթերցին և աւգտին, մեղաց թողութիւն հայցեն աստուծոյ Յովաննիսի՝ բանի սպասաւորի և ծնողաց իւր:

էջ 313ա (միասյուն)

...Նաև զեղկելի ոգիս՝ զյետնեալս զՄկրտիչ զրագիրս, որ բազում աշխատանօք և ջանիւք զրեցի զսա ի ստոյգ և յընտիր արինակէ, որ ի Կիւլիկեա յերկիրն արքայեղբայր անուն կոչեցեալ Յօհաննէս եպիսկոպոս, որ իւր ձեռօքն էր գրեալ լաւ և ընտիր արինակ, նաչ ևս յայն որ զրեցի զսայ, և որ յիշէքդ ի բարի, նոյն և դուք յիշեալ լիջիք ի բարի յօրհնելոյն, այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ որ զմեզ և զմեր ծնաւզան սրտիւ լի միոյ տէր ողորմայիւ յիշէ, նոյն ինքն յիշեալ լիցի:

Ի թվիս 22է [=1328] ի կատարելն մարտի ԺԵ՝:

Հիշատակագրություններ

էջ 313բ

Զվերջին ստացող սուրբ աւետարանիս զՂազարա քահանայս, որ զնեաց զսայ ի հալալ ընչից իւրոց ի վայելումն անձին իւրոյ, յիշատակ ծնողաց իւրոց՝ հաւրն Առաքելին և մաւրն իմ Ուլուին և ամենայն զարմից իմոց կենդանեաց և հանգուցելոց, և որք կարգայք կամ արինակէք, յիշեցէք ի մաքրայիայլ աղաւթս ձեր զմեզ և զմեր ծնաւզան, և յիշողքդ արհնեալ լիջիք յաստուծոյ, ամենայն սրբոց և ի մէնջ. ամէն:

Թվին] ՊՃԾԴ [=1504]:

էջ 314ա—բ

Ես, տէր Գրիգորս, և իմ եղբայր Աղաղաղս և մեր որդիքս ծախեցաք սուրբ աւետարանս վերայ Ճավի որդուցն Վարձիգուլիդ և ձեր ախբրացդ Սիմէոնիդ, Ամիրգուլիդ, Ղարիպշիդ և ձեր որդուցդ. առաք զգինն անպակաս, ոչով դավի շունի, ոչ հակառակ. մեր սրտի առատութեամբ ծախեցաք, այսոր վկայ է Մաթէոս էպիսկոպոս, տէր Անտոն, տէր Զաբարէ, տէր Գրիգոր, տէր Բարսեղ, Մլհամն, Շապանն:

Ես, Ճավի որդիքս Վարձիգուլս², Սիմէոն, Ամիրգուլս, Ղարիպշէս, Մղարաւէլս² զնեցաք սուրբ աւետարանս յիշատակ / մեզ և ծնողաց մերոց հաւր մերոյ

¹ Այս հիշատակարանները մի փոքր համառոտած օգտագործել է Լ. Խաչիկյանը (տե՛ս ԵՓԴ դարի հայերեն ձևադրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 210):

² Վրացական անուններ են:

Ճաւլին¹, մեր մարն թա[նկ] խաթունին, մեր որդոցն Ուլանէսին, Հէրապետին, Ջանուն, Խոցազեղին, Քարիմադինին, Մկրտչին, Գրիգորին, Կամիսգուլին¹, Գուլիսգուլին¹: Ով որ կարդէք կամ արինակէք, յիշեցէք ի մաքրափայլ աղաթս ձեր, և աստուած զձեզ յիշէ. ամէն:

Գրեցաւ ի թվարեութեանս հայոց ԶԻԹ [=1480] Հոռի Ին:

էջ 314բ.

Աստուած որորմի մահտեսի Յակոբի հոգոյ և իւր կողակից Աստանգարի հոգոյն, որ սուրբ աւետարան կազմել ետու Խ. Գալարնկից (°):

№ 30 [= 587]

ՄԱՏՅԱՆ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԱԽԱԼՅԻՆԵՅԻ ՀԱՅ ԵՎ ՎՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՆԵՐԻ

Թերերը՝ 86: Պրակները՝ 22, յուրաքանչյուրը 4 թերթ: Մեծուրյունը՝ 22×15×1,5: Նյութը՝ տարրեր որակի թուղթ: Կազմը՝ կաշեպատ տախտակ: Ձևագրի վիճակը՝ բավարար: Գրուրյունը՝ միասյուն: Տողերը՝ տարրեր: Գիրը՝ տարրեր, հայերեն և վրացերեն: Զարգագրուրյուն չկա, վերնագրերը կարմիր: Գրիչները՝ տարրեր ժամանակների կաթուղի հոգևորականներ: Գրուրյան տեղը՝ Ախալցխիս: Գրուրյան ժամանակը՝ հիմնականում 18-րդ դ. երկրորդ կես, մասամբ 19-րդ դ. (մեծ մասամբ 1762, 1763, 1764, 1771, 1773, 1779, 1780, 1781, 1782, 1783, 1789, 1790, 1791, 1792, այլև 1853, 1861 թթ.):

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու լ ն ք

էջ 2ա—11բ

Կարգ մկրտութեան տղոյն:

էջ 12ա—13ա

Օրհնութիւն պէսպէս իրաց:

էջ 14ա—15ա

Եկեղեցական հանդէս վասն կայսեր:

էջ 21ա

Գիրք մատենի սահմանեցեալ ըստ սովորութեան սրբոյ եկեղեցոյ վասն երկխայից, որք նարապէս զան ի մկրտութիւն:

էջ 39ա

Նիկողայոսի ինքնակալ կայսերն մեր և ամենայն զօրաց նոցին:

էջ 40

Պատվերներ հոգեհանգստյան պատարագ մատուցանելու: Մնացածը՝ մկրտվածների անունները, տեղը, ժամանակը, մկրտողը, հայերեն և վրացերեն:

էջ 61ա

1780 թ. ներքո հիշվում է տէր Գրիգոր Կրուխիճամիանթ Բարօի եկեղեցոյ սրբոյն Յօհաննու Մկրտչին տեղոյս Ախցխու ևն. նույնը վրացերեն՝

¹ Վրացական անուններ են:

Եր-գրիցողման շրջանում, շտրոսման շրջանում սեպուցիան և միսի կաթոլիկ շրջանում, ծարձման շրջանում ռուսաց նախկին մեծ լեզուներ (տե՛ր Գրիգոր Կրուսիճամիանթ [ալախնըն՝ թխականակեր], Ախալցխիսի և նրա կաթոլիկ թեմի ալախն ու հաջորդը, Հովհաննես Մկրտչի եկեղեցու միտրանը):

№ 31 [=588]

ՏՈՆԱԳՈՅՑ ՀԱՅ ԿԱԹՈՒԻԿԱՅ

Թերթեր՝ 11×12: Պրակներ՝ 2, մեկը մյուսի մեջ կարած: Մեծուրյունը 21,5×16×0,5 (գրույթյան 17,5×12,5 և 16,5×12): Նյութը՝ թուղթ սպիտակ (11 թերթ) և կապույտ (12 թերթ): Կազմը՝ կարտոնից, որի միջին կողմից փակ-ցրած է լատիներեն տպագիր թերթեր 3 սյուն, ուր կարգադրվում են Լատերանի եկեղեցական ժողովի [1512—1517 թթ.] և Հռոմի պապերի՝ Լեոն (Leo) 10-րդ [1513—1521], Ադրիանոս (Adrianos) 6-րդ [1522—1523] և Կլեմես (Clemen-tos) 7-րդ [1523—1534] որոշումները: Ձեռագրի վիճակը՝ թերթ: Գրույթյունը՝ տեղ-տեղ միասյուն, տեղ-տեղ երկսյուն: Տողեր՝ տարբեր: Գիրը՝ նոտրագիր: Ձարդագրույթյուն շունի: Գրիչը՝ անհայտ: Գրույթյան տեղը՝ անհայտ: Գրույթյան ժամանակը՝ մոտավորապես 18-րդ դ.:

Թ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ը

Տոնացույց՝ սկսած 21/11-ից (մինչ այդ թերթ է) մինչև ամուսն ամիսները: Ուշագրույթյուն են դրավում կաթոլիկ եկեղեցուն հատուկ տոները, օր. «չես տոնախմբութեան ամենասուրբ երրորդութեան հինգերորդ օր, որ է հինգշաբթի, տոն է ամենասուրբ մարմնոյ և արեան տեառն» (էջ 4ա):

«Կանոն ամենասուրբ մարմնոյ և արեան տեառն օրհնութիւն, որ երգի որ-պէս մեծահրաշ այս խորհուրդ» (էջ 01ա—04բ):

«Կանոն ի տոնի ամենասուրբ մարմնոյ և արեան» (4ա) ևն:

Հ ի շ ա տ ա կ ա դ ու թ յ ու ն ը

Վրացերեն

«Ես Միգնի թերթը մատչեցի յահողացուսա՞», ալախնըն՝ «Այս գիրքը Պետրոս Մաթիկեիչ Քաչառիան է»:

№ 32 [=589]

ՄԱՇՏՈՅ ՀԱՅ ԿԱԹՈՒԻԿԱՅ

Թերթեր՝ 280 (համարակալված)+7: Պրակներ՝ 17 (համարակալված), յուրաքանչյուրը 8 թերթ: Մեծուրյունը՝ 16×10,3×2,5 (գրույթյան 12×8): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ՝ խաշով զարդարված: Ձեռագրի վիճակը՝ բավարար: Գրույթյունը՝ միասյուն: Տողեր՝ 22: Գիրը՝ նոտրագիր: Ձարդագրույթյունը՝ նկարներ՝ «մկրտութեան» (էջ 3բ) և համապատասխան տեղըս-տերի դիմաց, ինչպիսիք են «յաղագս դրոշմի» (էջ 18բ), «կարգ օրհնելոյ դա-մուսնութիւն» (էջ 28բ), «կարգ օրհնելոյ զհիւանդն» (էջ 52բ): Վերնագրերը և սկզբնատառերը կարմիր: Գրիչը՝ անհայտ: Գրույթյան տեղը՝ «յԱխլցխայ»: Գրու-յթյան ժամանակը՝ 1823 թ. 6/II: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

Տ ի տ դ ո ս ա թ և բ թ ք

Մաշտոց հայոց ուղղափառաց, հրամանաւ գերապայծառ և ամենապատույ տեառն Յովհաննու Տօրիայ Ակուշտինովիչի արհիեպիսկոպոսի հայոց, սրբա- գրեալ և կարգաւորեալ ի Լէօպօլիս, յամի տեառն 1728: Գրեցաւ ի տեառնէ Անտօն քահանայէ ի յԱխլցխայ յամի տեառն 1823 փետր. 6:

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ք

Սովորական՝ կաթոլիկ եկեղեցու ծիսակատարութեան կարգը, տեղ-տեղ վրացատառ լատիներեն աղոթքներով (էջ 1ա—2ա):

№ 33 [=590]

Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

Թերթեր՝ 58: Պրակներ՝ 4 մաս տարբեր ծավալի: Մեծութունը՝ $15 \times 10 \times 0,5$ (գրութեան ա. 11×8 , բ. 13×8 , գ. $11,5 \times 6,5$, դ. $13,5 \times 10$): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ կարմիր կտորով պատած սովարաթուղթ: Չեռագրի վիճակը՝ բավարար: Գրութունը՝ միասյուն: Տողերը՝ տարբեր: Գիրը՝ նոտրագիր: Զարդա- գրութուն չունի: Գրիչը՝ Աւետիք [վարդապետ, տաղասաց]: Գրութեան տեղը՝ ան- հայտ: Գրութեան ժամանակը՝ 1698 (ՌՃԽԷ): Պատվիրատուն (ստացողը)՝ «Շու- շան գեղեցիկ պատվական թագուհի»:

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ք

Տաղեր՝ բաժանված 4 մասի.

ա) մասը (էջ 1ա—6բ)՝ 4 տաղեր նվիրված Մարիամ Մազդազենացուն, Ավետյաց տոնին, Հարութեան ևն, առանց հեղինակների անունը տալու:

բ) մասը (էջ 7ա—16բ)՝ 9 տաղ աստվածածնի, մարմնո, ապաշխարու- թեան, զղջման, Հովհան Կարապետի ևն, որոնցից առաջին երկուսը նվիրված աստվածածնին «ի Մելքոն քահանայէ Արղրումեցույ» ասացեալ:

գ) մասը (էջ 17ա—55բ)՝ այլևայլ տաղեր «Աւետիք վարդապետէ ասա- ցեալ», «Գալուստ վարդապետէ ասացեալ» և «Սուրիաս վարդապետէ ասացեալ»:

դ) մասը (էջ 56ա—57ա) այլ և այլ տաղեր:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

էջ 55ա—բ

Թվին ՌՃԽԷ [=1698] ի սկիզբի ապրիլի էր զուսումն և ի հայրապետու- թեան տեառն սրբազան Նահապետ կաթողիկոսի, ի վայելումն Շուշան գեղե- ցիկ պատվական թագուհոյն, չիշեսցէք զանարժան Աւետիք, որ և դուք չիշեալ լիշիք լուսեղէն զբրախտին աստծուն մերո, ամէն:

Այս գիրս շէյին թողուր, որ գրէյի. բան կու գրնէին իմ խաթուն ծառայ, իմ քեզ հրամանույդ լայնղ գիր չէ, հըմա մեղադիր մի լինիր, և դու ողջ լիք ի պար- ծանս իմ:

№ 34 [=622]

ՀԱՅ-ՎՐԱՅՅԵՐՆՆ ԲԱՌԱՐԱՆ

Թերթեր՝ 740 (744) էջ համարակալված, մեջումեջ հավելումներ առան- ձին թերթիկների վրա: Մեծութունը՝ $21 \times 17 \times 3,5$ (գրութեան $18 \times 15,5$): Նյութը՝

Յուզի: Կազմը՝ կարտոնի՝ կարմիր կաշվով պատած: Ձեռագրի վիճակը՝ բավարար: Գրությունը՝ երկայուն, յուրաքանչյուրը հայերեն և վրացերեն տարբեր թանաքով գրված (սև և քիմիական): Տողերը՝ 30: Գիրը՝ նոտրագիր և «մխեղրուլի»: Զարդագրություն չունի: Գրիչը՝ Պողոս Թաթևնով տիրացու, նույն Պողոս Թունաշվիլի քահանա: Գրության տեղը՝ «ի գիւղ Ուտէ», այսինքն Ուղե, Ախալցխի մոտ: Գրության ժամանակը՝ 1899 թ. 25/II: Պատվիրատուն՝ անհայտ, պատրաստված է եղել տպագրության և ցենզուրային ներկայացնելու համար: Բովանդակությունը՝ հայ-վրացերեն բառարան, կազմված ըստ Մխիթար Սեբաստացու գրարարի քերականությանը (1730) կցված բառացանկի (հմմ. № 35/627 և 40/639):

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

էջ 01.

Գրեալ է զայս բառարան ի ձեռն տիրացու Պողոս Թաթևնովին յամի փրկութեան մերոյ (1899) փետրվարի 25, իսկ ի թուականութեան հայոց ՌՂԹ (՝) ամի, ի գիւղ Ուտէ: Նույնը վրացերեն

აღიწერა ესე ლექსიკონი დიაკვანი პავლე თათუნოვის მიერ ცხოვრებისა ჩუენისა

էջ 740.

Ձ ե ո ա գ ր ի վ ի ը շ ու մ:

დასასრული ეს ლექსიკონი ეკუთვნის მღ. პავლს თუნაშვილს, რომელიცა აღწერილია თვისი დიაკვნობის დროს საკუთარი ხელით.

այսինքն՝ վախճան 18 $\frac{25}{11}$ 99: Այս բառարանը պատկանում է Պողոս (Պավլի) քահանա Թունաշվիլուն, որն այս գրեց իր սեփական ձեռքով իր տիրացու եղած պահին:

էջ (743)

երբ որ մայրը երկունքով
Յաշխարհ բերէ երեխայ,
Հայրը որդւոյն մի սրած
Պիտի տաղումն տայ ընծայ:

Հ ի շ ա տ ա կ ա գ ր ու թ յ ու ն ն ե ր

էջ 02, 740, [741], [742], [743], [744], այլև այլ բովանդակությամբ:

№ 35 [=627]

ՀԱՅ-ՎՐԱՑԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

Թերերը՝ 182: Պրակնները՝ 12, յուրաքանչյուրում 16 թերթ (երբեմն պակաս): Մեծությունը՝ 16,5×11×2,5 (գրություն 12,5×10,5): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ կաշեպատ տախտակ՝ կեսը շկա: Կազմի մյուս երեսին վրացերեն գիր: Ձեռագրի վիճակը՝ բավարար: Գրությունը՝ երկայուն (հայերեն և վրացերեն): Տողերը՝ 22: Գիրը՝ նոտրագիր և «մխեղրուլի»: Զարդագրություն չունի: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ 18-րդ դ.: Պատվիր-

բառուն (ստացողը)՝ անհայտ: Բովանդակությունը՝ հայ-վրացերեն բառարան կազմված ըստ Մխիթար Սեբաստացու դրաբարի քերականությանը կցված բառացանկի (հմմ. № 34/622, 40/639):

Տ ի տ ղ ո ս ա թ ե ր թ ր

էջ 1ա.

Գումարք անուանց և բայից և այլոց բառից, որք շարահիսին կարդու ալբուբենի կերպիւ ցանգի դիրութիւն գուման այնց ամէնից, որք հոլովեցան և լծորդեցան և առ պահանջեցեալ խնդիրս իրեանց բացորոշեցան յայսմիկ Քերականութեան¹:

Չնուազիրը մեկն է հայ-վրացերեն բառարան պարունակող այն ձեռագրերից, որոնք կազմված են Մխիթար Սեբաստացու «Քերականութիւն դրաբարի լեզուի հայկազան սեռի» (Վենետիկ, 1730) վերջում կցված (էջ 517—584) «ցանկի» բառասրահարի, որոշ հավելումներով: Առաջին բառերն են՝ արբայ, արգիսս (նույնը սկզբնադրյալում). վերջինը՝ ֆոսնգ, ֆիսեր, որ չկա սկզբնադրյալում:

Հ ի շ ա տ ա կ ա գ ր ու թ յ ու ն ն ե ր

էջ 1ա. վրացերեն.

წიგნთაგანი მღვდელ სერაპიმ სერაპაშვილისა,

«Ի գրոց Սերովրե քահանա Մերարաշվիլու»:

էջ 1ա

Այս բառարանս Իւլիտացի² Մուրադխան աիրացու Ակօբին է.

№ 36 [=633]

Ճ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ի

Թերերը՝ 110: Պրակները՝ խառն են, յուրաքանչյուրում 5 թերթ: Մեծաբյունը՝ 17×12,5×1,5 (գրության 13,5×9,5): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ թղթից: Չնուազրի վիճակը՝ թերի սկզբից և վերջից, թերթերը իրար մեջ խառն: Գումարյունը՝ միասյուն: Տողերը՝ 16: Գիրը՝ մանր նոսրագիր: Զարդագրություն չունի, վերնագրերը և սկզբնատառերը կարմիր: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ անորոշ: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ն ր

էջ 2բ. թուղթ Պօղոսի առ Հոսմայեցիս:

էջ 15բ. առ Կորնթացիս:

էջ 36բ. առ Գաղատացիս:

էջ 44բ. առ Նիսեսացիս:

էջ 53բ.

Նորին Գրիգորի [Տաթևացույն], աշակերտի եռամեծին Յոհաննու Որոտնեցոյ, արարեալ հաւաքումն բանից ի մեկնութենէ սաղմոսին աստուծոյ, հօրն Դաւթի մարգարէի ևն:

¹ Բառացի կրկնություն է Մխիթար Սեբաստացու «Քերականութիւն դրաբարի լեզուի հայկազան սեռի» բառացանկի վերնագրի (էջ 517):

² Իվլիաը դուռ է Ախալցխայի մաս:

Հիշատակագրություն (վրացերեն)

էջ 1ա

წიგნთავანი მღვდელ სერაბინ მერაბაშვილისა,
«*Ի գրոց Սերովրե քահանա Մերարաշվիլու*»:

№ 37 [= 634]

Գ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն

Թերթեր՝ 106 էջ. սկսած 9-ից (առաջին 8 էջը պակասում է), վերջին 2 էջը՝ վրացերեն: Պրակներ՝ 8 (համարակալված): Մեծությունը՝ $16,5 \times 11 \times 1$ (գրության $14 \times 8,5$): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ կարմիր կտորով պատած սովարաթուղթ: Չեռագրի վիճակը՝ թերի սկզբից: Գրությունը՝ միասյուն: Տողերը՝ 26—30 (հայերեն), 24 (վրացերեն): Գիրը՝ նոտրագիր: Զարդագրություն չունի: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ մոտավորապես 18-րդ դ.: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

Հիշատակագրություններ

էջ 1ա. վրացերեն.

Եր օոսեմ Խուցոցոցոցոցոցոցոցոցոց
օցոցոցոց օցոցոց օցոցոց օցոցոց.

այսինքն՝ «*Տեր Հովսեփի Խուցիցից նվիրաբերված է Իվլիտայի սուրբ Խաչ եկեղեցուն*»:

էջ 1ա. հայերեն.

Կազմեցաւ յինէն Յովսեփայ Խուցեանն:

№ 38 [= 635]

ՇԱՐԱԿՆՈՅ, ԱԻՆՏԱՐԱՆ

Թերթերը՝ 17 (սկիզբը և վերջը չկա): Պրակները՝ 2 (խառնված): Մեծությունը՝ $17,5 \times 11 \times 0,2$ (գրության 14×8): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ կաշեպատ սովարաթուղթ: Չեռագրի վիճակը՝ քայքայված և թերի: Գրությունը՝ միասյուն: Տողերը՝ 16—17: Գիրը՝ նոտրագիր: Զարդագրություն չունի: Գրիչը՝ Յովանջան Նիզաշով (~): Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ 1840 թ. 22/III: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

Հիշատակարան (վերջում)

Յամին տեան 1840 մարտի 22-ին գրավեցաւ այս գիր Նիզաշովէն Յովանջան:

№ 39 [= 636]

ՄԱՇՏՈՅ ԿԱՄ ԾԻՍԱՐԱՆ ՀԱՅ ՆԻ ՎՐԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ

Թերթերը՝ 183 էջ համարակալված: Պրակները՝ 16, յուրաքանչյուրում 8 թերթ (խախտված): Մեծությունը՝ $18 \times 13 \times 1,5$ (գրության $14 \times 10,5$): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ սովարաթուղթ: Չեռագրի վիճակը՝ սկզբից թերի, պակասում է 4 թերթ: էջերը խառնված են, օրինակ՝ 18—19 մեջ են կարված: Գրու-

բյունը՝ երկայուն: Տողերը՝ 25: Գիրը՝ նոտրագիր (հայերենը), «մխեղրուլի» (վրացերենը): Զարդագրություն չունի: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ 18-րդ դ.: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

№ 40 [=639]

ՀԱՅ-ՎՐԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

Թերթերը՝ 93: Պրակները՝ 11, յուրաքանչյուրում 8 թերթ: Մեծությունը՝ $21,5 \times 17,5 \times 1,5$ (գրության 20×15): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ սավարաթուղթ: Վիճակը՝ սկիզբը թերի: Գրությունը՝ երկայուն (հայերեն և վրացերեն): Տողերը՝ 20: Գիրը՝ նոտրագիր և «մխեղրուլի»: Զարդագրություն չունի: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ անորոշ: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ: Բովանդակությունը՝ հայ-վրացերեն բառարան, կազմված ըստ Մխիթար Սեբաստացու գրաբարի քերականությանը կցված բառացանկի (հմմ. № 34/622, 35/627): Բառարանը սկսվում է «անկ, անկողին, անկորուստ» թերի ընթերցվածքով, ապա «բաղնատեր — օծանոս Յօժրոնի»:

Վերջին բառն է «Ֆակեյ— լոյր»:

Հ ի շ ա տ ա կ ա դ ր ու թ յ ու ն (վրացերեն)

կազմի ետևից

Յոռոնեցեց, յղջալո, ոռնեծո Գյրոցյեռոցո,

այսինքն՝ «Հիշյա, տէր, Հովսեփ Փորսուղովին»:

№ 41 [=640]

ԳԱՆՁ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Թերթերը՝ 01+588+[3] (համարակարգված): Պրակները՝ 18 (ոչ լրիվ) յուրաքանչյուրում 20 թերթ: Մեծությունը՝ $21 \times 15,5 \times 4$ (գրության 17×11): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ տախտակ կաշեպատ: Զեռագրի վիճակը՝ բավարար: Գրությունը՝ միասյուն: Տողերը՝ 35: Գիրը՝ նոտրագիր: Զարդագրություն՝ վերնագրերը և սկզբնատառերը կարմիր: Գրիչը՝ վարզան դպիր: Գրության տեղը՝ Կ. Պոլիս, Պէկոզլու թաղ: Գրության ժամանակը՝ 1749 թ. հոկտ.: Պատվիրատուն (ստացողը)՝ Նզիա վարդապետ:

Հ ի շ ա տ ա կ ա դ ր ա ն ն ե ռ

էջ 576—577.

...Ի հնազանդութիւն հրամանաց առաջնորդիս իմոյ Մաթէոսին, այսր սպասաւորութեամբ մերոյ քարոզողացն կարգիս մի սէր եղբայրակցութեան ուսումնասիրաց, ի թվին մարմնեղևալ Բանին 1664 ՌՌԿԴ [=1664] մայիսի ԺԶ, ես, աններհուն Սեբաստիանոս աստուածաբան վարդապետ / կարգէն քարոզողաց, ազգաւ Ալամանցի, ի քաղաքէն Պամիրդայ, որ ի գաւառին Ֆռանկոնայ, ամուլ մտօք, զարիպ լեզուաւ, անհմուտ ձևօք զգիրս այս, որ կոչի Գանձ վարդապետութեան Քրիստոսի, ի բառառոյ Ֆռանկաց փոխակերտեցի ի հայս, ի գիւղաքաղաքին Ապարանէր, ի վանս ամենայն սրբոց: Արդ դու, ով մարդասէր ըն-

թերցող, զոր ինչ նուազութեամբ գտցես, ինձ մի մեղադիր լեր, այլ զամլութիւն մտաց վասն հարկաւորութեան նիւթոջն, զզարիպութիւն լեզուի վասն հրամանին առաջնորդին զանհմտութիւն ձեռաց վասն ուղիղ դիտաւորութեան իմոյ անմեղադրելի արա. և զոր ինչ օգտակար պատահեսցի ի բարութիւնդ քոյին և ընկերիդ՝ ընկալ, և զիս յազօթս քո յիշեա, ամէն:

էջ 589

Ով, անցաւորք մարդ այս ճանապարհի, ևս մտանելոց ևմ ներքոյ հողի, ի յերկրէն Շիպին-Ղարահիսարու, ծնեալ իմ ի գիւղէն Թամզարու, որ ևմ որդի Գրիգորի, իսկ անուամբ Վարդան կոչի, որ ևս, անարժան շնչին զպիրս վերոյ ասացեալ, յոյժ աշխատութեամբ ցանկանալով ցանկացա, օրինակելոյ օրինակեցի ձեռամբ իմով և աշակերտովքս և ստացա այս գանձս, և ի զորժածելն իմ տեսի, որ է շահաւէտ զայս փրկութեան հոգոյ զորժածողին, որ և ընթեանանիւն յուսամ որ է զէն փրկութեան, յետո հանդերձ ի շահ և ի օգուտ ուղղափառ ազգին մեր Հայոց և ճշմարտասիրաց, ի փառս ամենապատուական և անդին արեան փրկչին և մօր նորին միշտ կուսին Մարիամու և ընդհանրական և հոօմէական սուրբ հարսին նորա՝ եկեղեցւոյն, յամի տեառն 1749 և հոկտեմբերի, ի թագաւորանիս մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս, ի թաղն Պէկօղլու կոչեցեալ:

Վերապատուելի և յերշարգելի, ի ծովապարշի (՝) ի ջրբժըղախաղ տիեզերահոշակ աշխարհախոսմբ լի աստուածային շնորհիւ Եղիայ վարդապետին, ձեռամբ աշակերտին վերոյ ասացեալ: Այս մատներս դառնալոց է հող, փոքր ինչ գիրս մնա յիշատակող: Ով որ կարդայ և շահի իղձս հոգևորս, յիշեսցէ զիս և ծնողս իմ միով Հայր մերիւ, և դուք յիշեալ լիցիք ի զըպրութեան կենաց, ամէն:

էջ 590—591

...Նս անարժան և անպիտան, խեղճ, ողորմելի և բթամիտ, շնչին զպիր Վարդանս այս երկու խորհրդատետրէս առաջին մէկ քանի գրեանք օրինակեցի ևս, կամ աշակերտովքս, որ է գրքերն այս:

Այս գրքէս յետոյ գրված գրքերն այս են.

Լօճիքա, որ և կոչի տրամարանութիւն. Գիրք, որ կոչի սանդուղք մարիակական (՝). Քերականութիւն լէհացի Ստեֆան վարդապետեան. Գիրք, որ ի վերայ սուրբ աստիճանաց. Պարզապանութիւն, Համառօտութիւն. Կտակք ի վերայ սուրբ շարչարանացն Քրիստոսի. Մաշտոց հայոց. Գիրք քահանայից զարհուրելի. Գիրք անմեղ մանկանց. Գիրք ի վերայ ծննդեան Քրիստոսի. Գիրք վիճարանութեան և աւագ լրման լուանոյ. Գիրք Պէնետիկոս փափին. Պատմութիւն. Գիրք կերակուր քահանայից. Գիրք վիճարանութեան ի վերայ ծննդեան Քրիստոսի. Քարոզներ. Յիշատակարան. Քրիստոնական վարուց գիրք. մանաւանդ Ակունք քրիստոնէական վարդապետութեան. Գիրք զանազան աղօթից. Կերպկերպ վիճարանութիւնք. Գիրք մեկնութեան Կղէմէսի, առաջին հատոր...

Ամենայն օր և որքան ասես 300 ամաց ներողութիւն առցես:... Եղբայրք և բորք, երկիրպագանելով ազադակեմք և ապավինիմք ասելով, թէ հոգևոր և թէ մարմնաւոր վտանքի ի փորձութենէ պախէ զիս և մանաւանդ ի հոգիվարութիւն ի ժամանակս հողիս ի ձեռս քո աւանդեմ. ամէն:

քան զգառն աստուծոյ: Նախ յայսմ տետրակի արձանագրին բանք տետրակի հակադակորդաց և ապա լուծումն բանից նոցա արարեալ փիլիսոփայական մեթոդսիւ յումեմնէ տրուպ բանասիրէ, որոյ անունն ի վերջոյ տետրակի հոմերարանեալ լինի խորհրդաւոր ոտանաւորօք:

Գրեալ ի Կոստանդինուպոլիսի մայրաքաղաքն մեծ, յամի տեառն 1757 ղեկտեմբերի 25, ի փառս աստուծոյ և ի պատիւ սրբուհւոյ աստուծածնին:

Հ ի շ ա տ ա կ ա բ ա ն

էջ 36ա

Թուին հազար երկհարիւրի
 Եօթ ու տասան ըստ այս հաշուի.
 Նովաւ լիցի թիւ հաւասարի
 Յարեթական մեր տոմարի:
 Ընդ հովանեաւ Կարապետու,
 Որ ի նահանգն Կեսարու,
 Նոյն ինքն լինէր ինձ ձեռնտու
 Մինչ անցանէ կեանքն հատու:
 Զայնիկըս նուաստ՝
 Տիրան բարեբաստ՝
 Գրեցի զայս աստ
 Եղբարցս իմաստ:

№ 44 [=675]

Ձ Ա Ն Չ Ա Ր Ա Ն

Թերթերը՝ անորոշ: Պրակները՝ անորոշ: Մեծուքյունը՝ $26 \times 17,5 \times 11$ (գրության 19×11): Նյութը՝ հին թուղթ: Կազմ չունի: Չեռագրի վիճակը՝ վերին աստիճանի քայքայված, այրված, վնասված և փշացած, թերի սկզբից և վերջից (կրակից ազատված): Գրությունը՝ միասյուն: Տողերը՝ 21: Գիրը՝ բոլորագիր: Զարդագրություն՝ վերնագրերը և սկզբնատառերը կարմիր: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ անորոշ (14—15-րդ դդ.): Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

№ 45 [=676]

Տ Օ Ն Ա Ց Ո Յ Յ

Թերթերը՝ 199: Պրակները՝ 18, յուրաքանչյուրում 12 թերթ (երբեմն պակաս, երբեմն 14): Մեծուքյունը՝ $10 \times 7,5 \times 3,5$ (գրության $7,5 \times 5,5$): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ կաշեպատ տախտակ, ներսից կտոր: Չեռագրի վիճակը՝ մասամբ վնասված: Գրությունը՝ միասյուն: Տողերը՝ 16: Գիրը՝ բոլորագիր: Զարդագրություն՝ վերնագիրները և սկզբնատառերը կարմիր: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ անհայտ: Գրության ժամանակը՝ անորոշ: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

№ 46 [=677]

Ա Ղ Օ Թ Յ Գ Ի Բ Ք

Թերթերը՝ 106 էջ (համարակալված): Պրակները՝ 14 ոչ լրիվ, յուրաքանչյուրում 8 թերթ: Մեծուրյունը՝ $16 \times 10 \times 1$ (գրության $14,5 \times 8$): Նյուրը՝ թուղթ: Կազմը՝ սովորաթուղթ: Չեռագրի վիճակը՝ վնասված: Գրուրյունը՝ միասյուն: Տողերը՝ 22—24: Գիրը՝ նոտրագիր: Զարդագրուրյուն՝ 98 էջում դարչնագույն ներկով բեղավոր մարդիկ: Չեռագրի վերջում (105 էջ) խաչ, որի շուրջը արև, լուսին, աղավնի, խաչ և դույզ թռչուններ: Խաչի մեջ գրություն. «Յս քս ար մեր, ամէն»: Գրիչը՝ Մօսէս: Գրուրյան տեղը՝ անհայտ: Գրուրյան ժամանակը՝ 18-րդ դար: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ: Բովանդակուրյունը՝ աղոթքներ Եփրեմ Ասորու, Գրիգոր լուսավորչի, Աթանասի, Գրիգոր Աստվածաբանի, Գրիգոր Նարեկացու:

Հ ի Ղ ա տ ա կ ա բ ա ն

էջ 106.

Արդ, ով աստուածախօս աղօթողք, չիշեսչիք յարժանհաս մախթանս ձեր մահատեսի Յակոբին և որդի նորա՝ բազմամեղ զրշիս...¹ Մօսէսին, չիշեալ լիշիք յաստուծոյ մերմէ, ամէն:

№ 47 [=678]

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ի

Թերթերը՝ 218 էջ համարակալված: Պրակները՝ 26, յուրաքանչյուրում 8 թերթ: Մեծուրյունը՝ $15 \times 9,5 \times 1,5$ (գրության $13,5 \times 8$): Նյուրը՝ թուղթ: Կազմը՝ սովորաթուղթ: Չեռագրի վիճակը՝ բավարար: Գրուրյունը՝ միասյուն: Տողերը՝ 22—24: Գիրը՝ բուրրագիր: Զարդագրուրյուն՝ մի նկար 2-րդ էջում տպագիր գրքից՝ «Ճլաք մանկունքն ի բոց հնոցին և հրեշտակ տեառն ի մէջ հնոցին» բնարանով, էջ 175 այբուրենը (ա—ք) հնգատկան կարգով $\times 7 = 35$ և մի էլ, ք, էջ 196—203 համաստեղությունների դասակարգումը. 216 էջ «ցանկի» տակ վեղարավորներ թվով 4—5: Գրիչը՝ Մովսէս մահատեսի: Գրուրյան տեղը՝ Շուշի: Գրուրյան ժամանակը՝ 1840 թ.: Պատվիրատուն (ստացողը)՝ անհայտ:

Տ ի տ ո ղ ս ա թ ե բ թ ք

էջ 1

Գիրք պատմութեան վասն պղնձէ քաղաքին և Հարցմունք աղջկան և մանկան և Պատմութիւն Խիկարայ և Փահլուլ թագաւորին և Խրատք առաջնոց ասացեալ և այլ, որ է օրինակ աշխարհիս: Ի հայրապետութեան տեառն Յօհաննու Կարփեղուն սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց սրբոյ աթոռոյն էջմիածնի և ի յամի փրկչին 1840 թվին և հայոց ՌՄՁԹ. գրեցաւ ի Շուշի:

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

էջ 3—53.

Պատմութիւն վասն Պղնձէ քաղաքին, որ է օրինակ աշխարհիս:

¹ Այստեղ մի բառ ջնջված է:

էջ 54—78

Պատմութիւն աղջկան և մանկան և հարցմունք նոցա ընդ միմեանս:

էջ 79—112

Խրատք պիտանիք և օգտակարք, զոր ասացեալ է Խիկարայ իմաստնոյ:

էջ 112—121

Խրատք... օգտակարք արարեալ Զարմազան Թաղաւորին, որ Նուշրավան ասեն:

էջ 121—135

Վարք և պատմութիւն Ալեքսանոսի ճգնաւորին:

էջ 135—172

Պատմութիւն տէր Յուական և որդւոյ նորին Ստեփաննոսի:

էջ 172—195

Բանք պիտանիք և օգտակարք ասացել յառաջնոց:

էջ 196—203

[Համաստեղութիւնների դասակարգումը]:

էջ 204—215

Պատմութիւն յաղագս Փահլուլ Թաղաւորին:

էջ 216

Յանկ:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

էջ 217

Յիշատակարան գրչիս.

Շնորհիւ և ողորմութեամբն աստուծոյ ամենակալին և ամենազօրին հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, և բարեխօսութեամբ արագահաս վկային սրբոյ մեծին Մինասայ յանկ ելեալ աւարտեցաւ տպումն պատմութեան գրքոյս, որ կոչի Պղնձէ քաղաք:

Արդ՝ ով բարեմիտ ընթերցօղք սորին, ի հանդիպելն ձերայնոյ գրքեանս, յիշեալիք ի Քրիստոս յոյսն մեր բնաւիցս... Մովսիսին որ գրեցաւ զգիրս, յիշեալիք գործարանիս... Մօվսէսի մահտեսի, Յակոբին իմ հայր, և դուք յիշեալ լինիչիք յաստուծոյ մերմէ. ամէն:

№ 48 [=700]

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՅ (ԳԱՆՉԱՐԱՆ—ՉԲՕՍԱՐԱՆ)

Թերթեր՝ 288 էջ համարակալված, 32 էջից հետո 7 էջ մաքուր, տեղ-տեղ էջերը խառնված: Պրակներ՝ 22, յուրաքանչյուրում 8 թերթ: Մեծուրյունը՝ $22 \times 16,5 \times 2,5$ (գրություն $17,5 \times 13,5$): Նյութը՝ թուղթ: Կազմ շունի: Ձեռագրի վիճակը՝ բավարար: Գրությունը՝ միասյուն: Տողերը՝ 17—20: Գիրը՝ նոսրագիր: Զարդագրություն չունի: Գրիչը՝ անհայտ: Գրության տեղը՝ նոր նախիջևան:

Գրուրյան ժամանակը՝ 1790 թ. 4/X: Պատվիրատուն (ստացողը)՝ Յովսէփ արքեպիսկոպոս Արղուիսեան:

Տիտղոսաթերթը

էջ 1ա

Գանձարան ուխտականութեան աղօթամատոյց և Զրօսարան հոգևոր ի ժամ անմահ դառինն՝ անարիւն զենման և ի յառանձնութեան՝ ջերմեռանդ քրիստոնէից կենսառիթ խոկմունք և երանական զմայլեցուցիչք... Գրքոյի, որ կոչի աղօթամատոյց, արտագրեալ երանելի հօրն մերոյ Ազէքսանդր կաթողիկոսի Զուղայեցւոյ, ի պէտս լուսաւորչածին հասարակ ժողովրդեան, յորժամ սուրբ պատարագի խորհրդական արարողութիւնն սկսանի, ի յիշատակ շարշարանաց աշրականին Յիսուսի և ի քաւութիւն մեղաց մերոց, յամի տեառն 1687:

Տպագրեալ ի հայրապետութեան լուսանկար մօրն մերոյ սրբոյ [աթոռ]ոյն էջմիածնի՝ սրբազան Ղուկասու սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն հայոց, հրամանաւ և ծախիւք սուրբ աթոռոյն էջմիածնի ծայրագոյն նուիրակի և Ռուսաց երկրի ամենայն ազգիս հայոց առաքելաշաւիղ առաջնորդի՝ տեառն Յովսէփայ սրբազան արքեպիսկոպոսի Սանահնեցւոյ Արղուիսեանց, յամի տեառն 1790, ի նորին բարձր սրբազանութեան, ընդ հովանեաւ երկնահանգէտ սուրբ Խաչի վանիցն, որ ի Նոր-Նախիջևան¹:

Հիշատակագրութիւն

էջ 84

Վրացերեն լեզվով հայատառ՝

«Վիջմնի էջմակի», այսինքն՝ «հրաժարիմք ի սատանայէ» ևն:

էջ 98 և հետո Մօլլա Նար-էզդինի առակները:

№ 49 [=705]

ԳԷՈՐԳ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԵԱՆ ԽՈՒԲՈՎԻ «ԳԱԻԱԶԱՆԱԳԻՐՔԸ»

Թերթերը՝ 99, որոնցից 98—99 մաքուր: Պրակները՝ 10, յուրաքանչյուրում 10 թերթ: Մեծուրյունը՝ $37 \times 22,5 \times 2$ (գրութեան $34 \times 19,5$): Նյութը՝ թուղթ: Կազմը՝ ստվարաթուղթ: Վիճակը՝ լավ: Գրուրյունը՝ միասյուն: Տողերը՝ 30: Գիրը՝ նոտրագիր: Զարդագրուրյուն չունի: Գրիչը՝ Գէորգ Մելքիսեդեկեան Խուրով, Սիմէոն կաթողիկոսի Լեզօրորդին: Գրուրյան տեղը՝ Հյուսիսային Կովկաս՝ Մոզդոկ կամ Ղզլար: Գրուրյան ժամանակը՝ 1814 թ.: Պատվիրատուն (ստացողը)՝ Եփրեմ կաթողիկոս:

Տիտղոսաթերթը (նույնը և հիշատակարան)՝

Գաւազանագիրք, որ է Յուցակ ազգաբանութեան թագաւորացն Հայոց և նախարարաց և բոլոր պայազատ սպայպետաց և այլոց, սկսեալ ի Յարէթայ, որդւոյ Նոյի, երկրորդ հօրն աշխարհի, ի 2263 թուականէ աշխարհի մինչև ի 1184 թիւ փրկչին, որ պարունակէ զժամանակս իբրև 4750 ամաց, որոց ամենայնից յորմէ՝ ազգէ և յորո՞յ շառաւիղէ յառաջանալ և յորպի՞սի կառավարու-

¹ Տպագիր օրինակի տիտղոսաթերթը տե՛ս Գ. Զարբհանալեան, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, 1883, էջ 24:

² Մանրամասնութիւնները՝ Լ. Մելիքսեթ-բեկ, Գեորգ Մելքիսեդեկեան Խուրով (Նյութեր և նոթեր), «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ ԳԱ, 1950, № 2, էջ 55—84:

թեան և իշխանութեան գոլ և յորո՞ւմ ամի և յո՞ր ժամանակի և ցո՞րքան տեիլն իշխանութեան: Եւ ես զի՞նչ և զո՞րպիսի գործել և ո՞րով հաւատով կենցաղա-վարել իւրաքանչիւրոցն համառօտակի արձանացուցեալ: Նաև ո՞րքան կայսերք Հայկազանց և որքա՞ն նախարարութիւնք լեալ են և յո՞րոց սերեալ և անուանեալն, և զկարգ կայսերաց և թագաւորաց և այլոցն ուրոյն ուրոյն հատկացուցեալ և եօթնկարգեան բոլորակս ըստ կարգի աստիճանացն դասակարգեալ և այլ այսօրինակ քաջայաղթ ախոյեանց հայկազանց և այլազանց զանուանու ըստ մասին և զարարս ոմանց քաջարեաց՝ կարճառօտութեամբք յիշմամբ շարակարգեալ ցուցանէ:

Աշխատասիրութեամբ հարազատարիւն հայկազեան, հայրէնասէր, հաւատարիմ և փոյթեռանդուն, սրտացաւ, ջանադիր, մեղուաներկ Գէորգ Մելքիսեղեկեան ետուով Խաղբակեանց յօգնաշխատ իշխանի, և դրօրորդույ տեառն Սիմէօնի մեծի, ամենայն հայոց գերընտիր և բազմերախտ կաթողիկոսի Երևանցուոյ, ի զրօսանս ազգասիրաց:

Ի հայրապետութեանս (և բարձրագոյն հրամանաւ իսկ) լուսանկար աթոռոյն էջմիածնի՝ տեառն Եփրեմայ արժանընտիր և կայսերապսակ սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն հայոց և հոգեծնի մեծին Սիմէօնիս:

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ը

էջ 1ա—3բ

Առաջարան

էջ 4ա—6բ

Մաքուր թերթեր:

էջ 7ա—53ա

Հայաստանի ժամանակագրությունը սկսած «Նոյից» մինչև Կիլիկիայի թագաւորության անկումը:

էջ 53ա—56բ

Նույնը՝ Կիլիկիայի անկումից հետո, մելիքների պատմությունը, Դաւիթ-բէկի էպոպեան ևն:

էջ 57ա—58բ

Ուրացողների և դավաճանների ցուցակը:

էջ 59ա—60բ

Մանոթագրություններ:

էջ 61ա—65բ

Հայ և օտար գրողների հիշատակագրությունը:

էջ 65բ—66բ

«Ասկա կայսերական կոչմանն»:

էջ 67ա—90բ

Ցանկ («Առ ի դիւրաւ գտանելոյ զանուանս իւրաքանչիւրոցն այբուբենական ցանկով նշանակեցաք զամենայն կարգս և յառաջիկայդ»):

Բացի դրանից, ձեռագրի այլևայլ տեղերում Գ. Խուրովը մտցրել է 30-ի շափ տաղեր նվիրված հայոց նահապետներին, իշխաններին և թագավորներին,

Հ ի շ ա տ ա կ ա գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

էջ 56ա

1814 [Յվախան]. Գէորգ Մելիքսեղեկեկեան Խուրով Խաղրակեան Արշակունի (՝), որ սիրատու շանիւ, բայց սգապատեալ սրտիւ, լալագին աշօք, թախծեալ անձամբ և ցաւալի մատմբք գրեաց զայս յիշատակագրութիւնս զիւցազնացեալ տիրապետողացն Հայկազանց, որք իշխին և ոչ ևս երկին, ոչ թէ տեղիք միայն, այլ մինչ յիշատակք ևս այնպիսեաց վեհանձանց ևն:

էջ 56ա.

Լալով, սգալով և արտասուօք քան մելանս գրեա Գէորգ,
Գրեա, ողբա, մի զարհուրիր, զի սգալի է դարս այս, Գէորգ,
Յայնքան արեաց և յարարմանցն զո՞րն և կամ զի՞նչ գտանես,
Գէորգ,
Ձի ինքեանք ցնորք և փառքն շտապ, քան զշուք անցին, Գէորգ:

№ 50 [=715]

ԹՈՒՐՔԵՐԵՆ ԱՍՈՂ ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

Թերթեր՝ 78: Պրակներ՝ սովորական տեսք: Մեծուրյունը՝ 21×14,5×1: Նյութը՝ թուղթ վանդակավոր գծագրությամբ: Կազմ շունի: Ձեռագրի վիճակը՝ բավարար, տիտղոսասիւսերթը պոկված: Գրուրյունը՝ միասյուն: Գիրը՝ նոտրագիր (Արեղյանական ուղղագրությամբ): Զարգացրուրյուն շունի: Գրիչը՝ Գ[եղամ] Թ[արվերդյան] (էջ 61բ): Գրուրյան ժամանակը՝ 1921—1940 թթ. (Արեղյանական ուղղագրությամբ): Պատվիրատուն (ստացողը)՝ պատրաստվել է տպագրության համար: Բովանդակուրյունը՝ 90-ի շափ հայ աշուղների համառոտ կենսագրություններ և նրանց ադրբեջաներեն-թուրքերեն երգերը, թվով 152:

Ըստ ձեռագրի, «Թուրքերեն ասող հայ աշուղները» հեռեկալ գեմքերն են՝ այբբենական կարգով.

ԱԼԼԱՀՎԵՐԴԻ. Ծնվել է էջմիածնի գավառի Օշական գյուղում 1827 թ., մեռել է նույն տեղում 1881 թ., 5 երգ (էջ 1ա—2ա):

ԱԹԵՇ. Ծնվել է Բաշ-Գյաննի գյուղում. այլ բան հայտնի չէ. 1 երգ (2բ):

ԱՄԻՐ-ՕՂԼԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 2 երգ (3ա—բ):

ԱՍՄԱՐ. Ծնվել է Օրդուբաթում, 1874 թ. առևտրականի աղջիկ է եղել. ասել է միշտ թուրքերեն. հետագայում ամուսնու հետ գաղթել են Բաթում, ուր և մեռել է 1906 թ. 1 երգ (4ա):

ԱՐԱՂԻ-ՍԱՐԳԻՍ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (4բ):

ԲԱՆԳԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 2 երգ (5ա—բ):

ԲԱԴԱԼ. Ծնվել է Հին Նախիջևանի Նորս գյուղում 1810 թ. կույր է եղել. հետագայում տեղափոխվել և ապրել է Շուշի, մեռել է 1850 թ. 1 երգ [տպ. Գ. Լեոնյան, «Հայ աշուղներ»] (6ա):

ԲԱԴԱԼ (Գյամբեղցի). ծնվել է Երևանի գավառի Կոտայք շրջանի Գյամբեղ գյուղում 1830, մեռել է 1882 թ. 1 երգ (6բ):

ԲԱՂԴԱՍԱՐ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (7ա):

- ԲԱԶԱԶ-ՕՂԼԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (7ա):
- ԲԱԴԻ-ԱԼԼԱԶՎԵՐԴԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (8ա):
- ԲՈՒԴԱՂ-ՕՂԼԱՆ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (8բ):
- ԳՅԱՐԴԻՇ. Իսկական անունը ննոք. ծնվել է Երևանի գավառի Ղամարլվի շրջանի Թափա-բաշ գյուղում 1857 թ., կույր է եղել. մեռել է 1910 թ., 2 երգ (9ա—բ):
- ԴԱԼԼԱԳ-ՄՈՒՐԱԴ. Եղել է Երևանի գավառի Դավալու գյուղացի. այլ բան նրա մասին հայտնի չէ. 3 երգ (10ա—11ա):
- ԴԱՐԳՅԱԶԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (11բ):
- ԶԱԶՐԻ. Իսկական անունը Կարապետ. ծնվել է Վանի շրջ. Կեմ գյուղում 1818 թ., մեռել է Ալեքսանդրապոլում 1888 թ., 1 երգ (12ա):
- ԶԱԼԱԼԱԹ. Եղել է էրզրումցի, այլ բան հայտնի չէ. 1 երգ (12բ):
- ԶԱՎՂԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (13ա):
- ԶԱՔԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (13բ):
- ԶԱՐԳՅԱՐ. Իսկական անունը Արրահամ. ծնվել է Շամախում 1824 թ., տեղափոխվել է Բաքու 1868 թ., ուր պարապել է ոսկերչույթյամբ. այլ բան հայտնի չէ. 1 երգ [տպ. Գ. քահ. Գրիգորյան. «Զարգյարի քնարը»] (14ա):
- ԶԱԼԱԼ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (14 բ):
- ԶՈՒԲԵՅԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 4 երգ (15ա—բ):
- ԵՅԼԱԶ. Պարսկաստանի Սալմաստ գավառից է եղել. այլ բան հայտնի չէ, 1 երգ (16ա):
- ԹԻՅԻԼ-ՂԱԶԱՐ. Եղել է Երևանի գավառի Կոտայքի շրջ. Գյամբեզ գյուղացի. մեռել է 1730 թվականներին. այլ բան հայտնի չէ. 7 երգ (16բ—19ա):
- ԹՈՒԶԱՐ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (19բ):
- ԹՈՒՐԻՆՁ. Իսկական անունը Թորոս. ծնվել է Շամախու գավառի Քարհանջ գյուղում 1790 թ. մեռել է 1845 թ., 1 երգ (20ա):
- ԹԱԹՈՍ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (20բ):
- ԻՎԱՆ. Եղել է Թիֆլիսեցի. այլ բան հայտնի չէ. 1 երգ [տպ. «Սոխակ» Դ] (21ա):
- ԽԱՅԱԼԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (21բ):
- ԽՈՅԼԻ-ՎԱՐԴԱՆ. Եղել է Պարսկաստանի Խոյ գավառից. այլ բան հայտնի չէ. 1 երգ (22ա):
- ԽՈՒՄԱՐ-ՕՂԼԻ. Իսկական անունը Օհանես (Օհան). եղել է Երևանի գավառի Իմանշալու գյուղացի. այլ բան հայտնի չէ. 2 երգ (22բ—23ա):
- ՀԱՐԹԻՆ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (23բ):
- ՀԱՐԹԻՆ-ՕՂԼԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (24ա):
- ՀԻԶԱԲԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 2 երգ (24բ—25ա):
- ՂԱԶԱՐ. Եղել է Մշեցի. այլ բան հայտնի չէ. 1 երգ (25բ):
- ՂԱԶԱԶ-ՕՂԼԱՆ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (26ա):
- ՂԱՍԱԲ-ՕՂԼԻ. Իսկական անունը Ալեքսան. եղել է Հին-Քաջաղեացի. այլ բան հայտնի չէ. 2 երգ (26բ):
- ՂՈՒԼ-ՄԱՆՈՒԿ. Տաճկաստանի Արծափի շրջանից է եղել. այլ բան հայտնի չէ. 1 երգ (27ա):
- ՂՈՒԼ-ՀՈՒՆԱՆ. Ծնվել է Դարալագյազի շրջ. Չանախչի գյուղում 1730 թ. այլ բան հայտնի չէ. 1 երգ (27բ):
- ՄԱԴԱԹ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (28ա):

- ՄԱՀՁՈՒՔԻ. Իսկաական անունը Բաղալ. ծնվել է Սուրմարլվի շրջ. Կողբ գյուղում 1865 թ. ալլ բան հայտնի չէ. 1 երգ (28բ):
- ՄԱՐԴԻ-ՉԱՄԱՆ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (29ա):
- ՄԱՂՁՈՒՄ. Եղել է Երևանի գավառի Հրազդան շրջանի Թավադյուղացի, մեռել է 1880 թ. ալլ բան հայտնի չէ. 2 երգ (29բ—30ա):
- ՄԱՅԻՖ. Իսկաական անունը Հարություն. ծնվել է Պարսկաստանի Թեհրան գավառի Ղարախան գյուղում 1825 թ. հետո գաղթել է Լյանքարան, Շամախի, հետո Բաքու. մեռել է 1901 թ. կույր է եղել. 1 երգ (30բ):
- ՄԻՆԱՍ-ՕՂԼԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (31ա):
- ՄԻՍԿԻՆ-ԲՈՒՐՋԻ. Ծնվել է Գանջայում 1810 թ. ալլ բան հայտնի չէ. 2 երգ [սրանցից մեկը տպ. «Հայ քնար»] (31բ—32ա):
- ՄՈՒՍԵՍ-ՕՂԼԻ. Անունը Վարդան. ծնվել է Երևանի գավառի Ղամարլվի շրջանի Թափարաշ գյուղում 1825 թ. մեռել է 1889 թ., 2 երգ (32բ—33ա):
- ՅԱՂՈՒՔ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (33բ):
- ՅԱՂՈՒՔ-ՕՂԼԻ. Իսկաական անունը Կարապետ. եղել է Ալեքսանդրապոլի շրջանի Ղշլաղ գյուղացի, մեռել է 1847 թ. ալլ բան հայտնի չէ. 3 երգ (34ա—բ):
- ՅԵԴԳԱՐ. Եղել է Երևանի գավառի, Ղամարլվի շրջանի գյուղերից. ալլ բան հայտնի չէ. 1 երգ (35ա):
- ՆԱՐԻՆՋ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (35բ):
- ՆԱՂՇՔՅԱՐ-ՍԱՐԳԻՍ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (36ա):
- ՆԱԼԲԱՆԴ-ՕՂԼԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (36բ):
- ՇԻՐՄԱՋ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (37ա):
- ՇԻՐՎԱՆԼԻ-ԵԹԻՄ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (37բ):
- ՇՀԱԴԴԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (38ա):
- ՇՈՎՇԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (38բ):
- ՇԻՐԻՆ. Իսկաական անունը Հովհաննես. ծնվել է Սուրմարուի գավառի Կողբ գյուղում 1827 թ. կույր է եղել. մեռել է Վաղարշապատում 1884 թ. ալլ բան հայտնի չէ. 5 երգ (39ա—40ա):
- ՉՐԱՂԻ. Իսկաական անունը Մարտիրոս, եղել է Գարաշիշազի շրջանի Շահրեզ գյուղացի. ալլ բան հայտնի չէ. 6 երգ (40բ—43ա):
- ՉՐԱՂ-ՕՂԼԱՆ. Եղել է Թիֆլիսեցի. ալլ բան հայտնի չէ. 1 երգ (43բ):
- ՉԻՔԱՂՉԻ-ՕՂԼԻ. Իսկաական անունը Առաքել. ալլ բան հայտնի չէ. 1 երգ (44ա):
- ՉԱՆԱՂՉԻ-ՕՂԼԻ. Իսկաական անունը Իսրայել. Կոտայքի շրջանի գյուղերից է եղել. ալլ բան հայտնի չէ. 1 երգ (44բ):
- ՉԱՀՏԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (45ա):
- ՉԱՄԱԼԻ. Իսկաական անունը Մկրտիչ. ծնվել է Ալեքսանդրապոլում 1848 թ. 1 երգ (45բ):
- ՉՈՒԴԴԱՅԻ. Իսկաական անունը Դավիթ, եղել է Թիֆլիսեցի. ալլ բան հայտնի չէ. 1 երգ (46բ):
- ՉԵՅՁՈՒՆԻ. Եղել է Ալեքսանդրապոլի շրջանի Մեծ-Քյափանազ գյուղացի. կույր է եղել. ալլ բան հայտնի չէ. 1 երգ (47ա):
- ՌՈՒՍՍԱՄ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 երգ (47բ):
- ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ. Իսկաական անունը Հարություն. ծնվել է Թիֆլիսում 1719 թ. սկզբում, պարապել է ջուհակությունը. երգել է նախ վրացերեն, թուրքերեն, ապա շատ հետո՝ հայերեն. հայտնի է որ 17 տարի պարապել է

- աշուղությամբ. ծերության օրերում քաշվել է Հաղբատի վանքը և դառնել է վարդապետ. 3 հրդ (48ա—49բ):
- ՍԱՂԱՅԻ. Իսկական անունը Աղաջան. ծնվել է Նոր Բայազետի շրջ. Ղշլաղ գյուղում 1848 թ. մեռել է 1916 թ., 1 հրդ (49բ):
- ՍԱԼՄԱՍՏԻ-ՂՈՒԼ-ՉԱՐՈՒԹՅՈՒՆ. Պարսկաստանի Սալմաստի շրջանի Սավրա գյուղացի է եղել. ծնվել է 1700 թվականներին. ամենանշանավոր աշուղներից մեկն է եղել. ասել է մեծ մասամբ թուրքերեն և կրոնական բովանդակություն ունեցող հրդեր. մահվան թվականը հայտնի չէ, բայց հետագայում աշուղների կողմից ճանաչվել է որպես Փիր (սուրբ), աշուղ վարպետ, և նրա գերեզմանը դառել է աշուղների համար ուխտատեղի. 6 հրդ (50ա—52բ):
- ՍԱՆԱՄ-ՆՈՎԱ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 հրդ (53ա):
- ՍԱՐԳՍԻ-ՕՂԼԻ. Անունը Ավետիս. ծնվել է Երևանի գավառի Ղամարլվի շրջ. Չիղդամլու գյուղում. այլ բան հայտնի չէ. 2 հրդ (53բ—55ա):
- ՍԱՀԱԿ. Եղել է Սուրմարլի գավառի Խալֆալու գյուղից. այլ բան հայտնի չէ. 1 հրդ (55բ):
- ՍԵՅՐԱՆ. Թիֆլիսեցի է եղել. այլ բան հայտնի չէ. 1 հրդ (56ա):
- ՍԵՖԻԼ. Իսկական անունը Սահփան. եղել է Երևանի գավառի Ազատավան գյուղացի. կույր է եղել. այլ բան հայտնի չէ. 1 հրդ (56բ):
- ՎԱՂՈՒԹ. Կենսագրությունը հայտնի չէ. 7 հրդ (57ա—60ա):
- ՎԱՆԼԻ-ՔՅՈՉԱԿ. Կոշվել է նաև «Վանլի-չիշազ». վանեցի է եղել. այլ բան հայտնի չէ. 1 հրդ (60բ):
- ՈՍԿԱՆ-ՕՂԼԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 հրդ (61ա):
- ՎԵՐԴԻ. (Նույն ինքը՝ Գեղամ Թարվերդյան). Ծնվել է Երևանի գավառի Ղամարլվի շրջ. Ազատավան գյուղում 1884 թ., 1 հրդ (61բ):
- ՔՅԱՄԱԼԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 հրդ (62ա):
- ՔԻՉԻԿ-ՆՈՎԱ. Կենսագրությունը հայտնի չէ. 1 հրդ (62բ):
- ՔԵՇԻՇ-ՕՂԼԻ—ՄԿՐՏԻՉ. Եղել է Թիֆլիսեցի. կույր է եղել. երգել է մեծ մասամբ թուրքերեն. ամենանշանավոր աշուղներից մեկն է եղել. այլ բան հայտնի չէ. 11 հրդ (63ա—68ա):
- ՔԵՇԻՇ-ՕՂԼԻ—ՄԵԼՔՈՆ. Ծնվել է Մշո շրջանի Ծփնա գյուղում, 1880 թ. հետո գաղթել է Ռուսաստան. այլ բան հայտնի չէ. 1 հրդ (68բ):
- ՔԵՇԻՇ-ՕՂԼԻ—ՄԻՆԱՍ. Եղել է Երևանի գավառի Կոտայքի շրջ. Շահար գյուղացի. այլ բան հայտնի չէ. 3 հրդ (69ա—70ա):
- ՔՅՈՒՐԴ-ՕՂԼԻ. Անունը Վասակ. եղել է Երևանի գավառի Դարաչիշազի շրջ. Քարվանսարա գյուղացի, այլ բան հայտնի չէ. 1 հրդ (70բ):
- ՈՒԶՈՒՆ-ՕՂԼԱՆ. Անունը Տրդատ. եղել է Գանջայի կողմերից. այլ բան հայտնի չէ. 1 հրդ (71ա):
- ՈՒՌՅԱՆԻ. Կենսագրությունը հայտնի չէ. 2 հրդ (71բ—72ա):
- ՉՀԱՆ-ՕՂԼԻ. Անունը Իսրայել ծնվել է Երևանի գավառի Կոտայքի շրջ. Թեչրարակ գյուղում 1851 թ., մեռել է 1912 թ., 1 հրդ (72բ):
- ՅԻՔՐԻ. Իսկական անունը Օհանես. ծնվել է Երևանի գավառի Կոտայքի շրջ. Գյամրեղ գյուղում 1827 թ., մեռել է 1907 թ., 1 հրդ (73ա):

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ի Ր Տ Ա Խ Տ Ա Կ
ՎՐԱՍՏԱՆԻ ԿՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՆԱԳՐԵՐԻ

№	Նյութ	Մեծութուն	Գիր	Փամանակ	Գրիչ	Տեղ	Պատկերատու (ստացող)	Բովանդակութուն
1/540	Հին թուղթ	43×28×9	բոլորագիր	Տինչ 1771	Պողոս քահանա	անհայտ	Քոչա Ալափբաթի	Յայտմունքք
2/541	»	18,5×14×5,5	»	1471	անհայտ	Հափուց թառ	անհայտ	Աւետարան
3/542	Թուղթ	25×17,5×2	»	անորոշ	»	»	»	Աւետարան Չու- կասու (թերթի) և Յովհաննու
4/543	Հին թուղթ	16×12,5×3	»	»	»	»	Մանուէլ վրդ. (")	Մաշտոց
5/544	Տաղաղաթ	24×17×6	»	1474	»	Կիւրղի վանք	Սահակ երէց Քուո- նափիլու	Աւետարան
6/545	Հին թուղթ	18,5×13,5×5	»	1511	Յոհաննէս	Սուրբ Մաշտոց, «Տերձ առ զեղաբա- ղաբիս Սոթայ»	Մանուէլ քահանա	»
✓ 7/546	»	21×16×6	»	1485	Քաջատուր արեղա (Ծագողաղաբող աէր-Արխատակէս)	Սանահին	Բեկիթաթուն	»
8/547	Թուղթ	15,5×10,5×1	Նոսրագիր	անորոշ (17-րդ դ.)	անհայտ	Կարինի մոտ	անհայտ	Պարզատմար
9/548	»	29×22×0,5	բոլորագիր	անորոշ (17-րդ դ.)	»	անհայտ	»	Քոչի դատար պատարագի
10/549	»	17,5×13×4,5	Նոսրագիր	1714	Կիրակոս	»	Անան	Յիշատակարան տղաղիբ աւետա- րանին կցված
11/550	»	21×14,5×4	բոլորագիր	1481	Քաջատուր երէց	Շիրեկ գյուղ	Անտոն կրօնաւոր՝ «Նայր վանուց Ջուղու Աստվա- ծածնին»	Փանձարան
12/551	»	19×13,5×1	»	1510	անհայտ	«Փաւղոս Յարայթի- շի, որ կոչի Յար- րիկ»	Պարսեղ երէց	Մաշտոց

13/552	>	21×16×1	նոսրագիր	անորոշ	>	անհայտ	Ղաթանցի Քաթարի որդի Սահակ անհայտ	Հեթմաբան
14/553	ժողողաթ	26×18	երկաթագիր	(10-11-րդ դդ.)	>	>	>	Պատուակ ընթ- թերցվածք
15/554	թուղթ	47,5×8	բոլորագիր	անորոշ	>	>	>	Հմայիլ (պատուակ)
16/555	>	15,5×10,5×1,5	>	անորոշ (16-17-րդ դդ.)	>	>	Աճիրբեկ, Միրզա- բեկ և նրանց ճաթ փարաթ	Ուրբաթագիրք
17/556	հին թուղթ	33×23	>	անորոշ	Յոհանէս	>	Մերուտ քահանա	Յայմաւուրք (պատուակ)
18/557ա	թուղթ	225×7,5	բոլորագիր և նոսրագիր	1774	Յակոբ	>	անհայտ	Հմայիլ (պատուակ)
19/557բ	>	88×8,5	բոլորագիր	անորոշ (18-րդ դ.)	անհայտ	>	>	>
20/557գ	>	29×8	>	անորոշ	>	>	Մերզբ (°)	>
21/557դ	>	{ 165×7,5 80×7,5 170×7,5	>	>	>	>	Մերջբ (°)	>
22/558ա	>	34,5×26	>	>	>	>	Պարոն Աբրահամ ընտանեօք	Ճառքնտիր (պա- տուակ)
23/558բ	>	պատուոտած	>	անորոշ (14-15-րդ դդ.)	>	>	անհայտ	Աւետարան Ղուկա- սու (պատուակ)
24/558գ	>	30×20	երկաթագիր	անորոշ	>	>	>	Աւետարան Մատ- թէոսի (ԻԳ, 16-21)
25/558դ	կապույտ թուղթ	16×11	նոսրագիր	1503 (պատճենագործան) Կան Սյունյաց Էջ- իան	Ազարեկ Ռուբեն- Կան Սյունյաց Էջ- իան	նորագածք	>	Յիշատակարան աւետարանի
26/551	թուղթ	13,5×9,5×1,5	>	1847	Յակոբ դպիր	Այժ անպատ	Թաղէս վրդ.	Գիրք աղօթից (ընդօրինակ.)
27/552	>	{ 30×10 24×10,5 20,5×10,1	նոսրագիր և վրացերեն ճիւղերու վրէժ	անորոշ (18-րդ դ.)	անհայտ	անհայտ	Մատուտ ատ- ւածաշնչի	Մատուտ ատ- ւածաշնչի
28/553	հին թուղթ	21×14,7×3	բոլորագիր	1606-ից սուտջ	>	>	>	Աղեքսանդր Մակե- դոնացու պատ- մությունք Աւետարան
29/554	ժողողաթ	13,5×10,5×6	>	1328	Մկրտիչ քահանա	Կիլիկիա՝ Քիթազու Դուղուշիճ	Յովհանէս Կալիկոս- յան	Յովհանէս Կալիկոս- յան

№	Նյութ	Մեծութուն	Գիր	Ժամանակ	Գրիչ	Տեղ	Պատկերատու (ասացող)	Բովանդակութուն
30/587	տարբեր որակի թուղթ	22×15×1,5	նոսրագիր և զբացերեն «մխնչե 1851 թ.»	18-րդ դ. (սկսած 1762 թ.) և 19-րդ դ. (մինչև 1851 թ.)	ձկրտող քահանա- ներ	Ախալցխե (Նայ- կաթուղի և զբաց- կաթուղի համայնք)	—	Մատյան մկրտու- թյան հայ և զբաց կաթուղիներ Տոնացույց հայ կա- թուղիաց
31/588	Թուղթ սպի- տակ և կա- պույտ թուղթ	21,5×16×0,5	նոսրագիր	անորոշ (18-րդ դ.)	անհայտ	անհայտ	անհայտ	
32/589		16×10,3×2,5	>	1823	>	Ախալցխե	>	Մաշտոց հայ կա- թուղիաց Տաղարան
33/590	>	15×10×10,5	>	1698	Ա. Կաթ	անհայտ	>	
34/622	>	21×17×3,5	նոսրագիր և զբացերեն «մխնչե 1851 թ.»	1899	տիրացու Պողոս Քաթիկոս, հետա- դարձ Պողոս քահ. Քուռաշվիլի	«Ի զիւղ Ուտէ» Ախալցխեի մոտ	«Շուշան զեղեցիկ պատվական թա- ղուհի» Յենդուբական կո- միտեին ներկայաց- նելու համար	Հայ-զբացերեն բա- նարան (բոս Մխթար Ահարա- տացու գրադարի Քերականության ցանկի)
35/627	>	16,5×11×2,5	>	18-րդ դ.	անհայտ	անհայտ	անհայտ	>
36/633	>	17×12,5×1,5	նոսրագիր	անորոշ	>	>	>	Փոքրիվան (Փորձ առաջնից և Փրի- դոս Տաթևացի)
37/634	>	16,5×11×1	>	անորոշ (18-րդ դ.)	>	>	>	Փանձարան
38/635	>	17,5×11×0,2	>	1840	Յովաննիս Նիզաշուր(“)	>	>	Շարահնոց և ա. և. տարան (Թերի)
39/636	>	19×13×1,5	նոսրագիր և զբացերեն «մխնչե 1851 թ.»	անորոշ (18-րդ դ.)	անհայտ	>	>	Մաշտոց կամ ձի- տարան հայ և զբաց կաթուղիներ

40/639	>	21,5×17,5×1,5	>	18-րդ դ.	>	>	>	Հայ-վրացերեն բառարան (հմմ. №№ 34/622 և 35/627)
41/640	>	21×15,5×4	նոսրագիր	1749	4. Պոլեա՝ Պեկոզլու-թաղ	Սիբիա վրդ.	Փանձ վարդապետության ֆրեսկատուի (կաթոլիկական)	Փարոզգիրք
42/641	>	24×17,5×0,5	բուրդագիր	անորոշ	անհայտ	անհայտ	Վիճարանություն (կաթոլիկական)	Փանձարան
43/642	,	19×14×1	նոսրագիր	1768	Ս. Կարապետ Կեսարու	>	>	Տօնացոյց
44/675	հին թուղթ	26×17,5×11	բուրդագիր	անորոշ (14—15-րդ դդ.)	անհայտ	>	>	Ազոթագիրք
45/676	թուղթ	10×7,5×3,5	>	անորոշ	>	>	>	Փոքրօրհան (Պատմութիւն Պրնձէբագաբին ևն.)
46/677	>	16×10×1	նոսրագիր	18-րդ դ.	Մոսկու	>	>	Ազոթամատոյց (Փանձարան-Զբոսարան)
47/678	>	15×9,5×1,5	բուրդագիր	1840	Մովսէս Մանասի	Շուշի (Ղարաբաղ)	>	Փառապանագիրք
48/700	,	22×16,5×2,5	նոսրագիր	1790	անհայտ	անհայտ	Յովսէփ արքեպս. Արղու. թեան	
49/705	>	37×22,5×2	,	1814	Գէորգ Մելքիսեդէկեան Քուրդ, եղբորդի Սիմէոն կաթողիկոսի	Ն. Նախիջևան	Սոզոկ, թե՛ Ղարաբ	
50/715	նոր թուղթ վանդակավոր զծագրու- թյամբ	21×14,5×1	>	1921—1940 (Արեղ- յանական ուղղա- գրությամբ)	Պ[եղամ] թ[արգման] դյան	Սրեան	—	Քուրբերեն ասոց հայ աշուղներ

Շ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Մատենադարանի հնատիպ գրականության հավաքածուում պահվում է 1620 զիրք: Այդ զրքերից շատերը իրենց վաղեմի տեսքով, տպագրության և կազմարարության արվեստով, թղթի որակով, տառերի ձևով, քանդականկարչությամբ, տպագիր ու ձեռագիր հիշատակարաններով զգալի նյութ են պարունակում մատենագիտությամբ ու բանասիրությամբ զբաղվող գիտական աշխատողների համար: Այդ հավաքածուի մեջ կան բիրյիտգրաֆիական տեսակետից այնպիսի հազվագյուտ զրքեր, ինչպիսիք են առաջին հայտիպ զիրքը «Պարզայտումարը», տպագրված Վենետիկում, 1512 թվականին, հայ տպագրության նախահայր Հակոբ Մեղապարտի ջանքերով, և 1513 թվականին նույն տպարանից դուրս եկած «Ուրբաթագիրքը», «Տաղարանն» ու «Աղթարքը»: Մեծ արժեք է ներկայացնում նաև 1565 թ. Արզար դպրի ջանքերով Կ. Պոլսում իրեն իսկ հիմնադրած տպարանում, իրեն ձուլած տառերով տպագրած «Սաղմոսարանը», որից ինչպես կարծել է Թեոդիկը՝ միայն «մէկ օրինակ կը գտնուի Ամբրոսիոսեան մատենադարանը (Միլան)» («Տիպ ու տառ», էջ 40): Նույն տիպի զրքերից է «Տօմար Գրիգորեան»-ը, տպագրված Հոտմում, 1584 թ., Հովհաննես Տերզնցու ձեռքով, նույն Տերզնցու «Սաղմոսարանը» տպագրված Վենետիկում՝ 1587 թվականին, «Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» թարգմանական աշխատությունը, տպագրված Մարսելում, Ոսկան Երևանցու տպարանում՝ 1675 թվականին, Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների աշխատությամբ լույս տեսած «Բնարանութիւն իմաստասիրական կամ տարերարանութիւն» վերնագիրը կրող զիրքը, տպագրված Ամստերդամում՝ 1702 թվականին և այլն:

Բացի վերոհիշյալ և մի շարք այլ հազվագյուտ զրքերից Պետ. Մատենադարանի հայերեն հնատիպ զրքերի հավաքածուում կան նաև այնպիսիները, որոնք նորություն են հայկական մատենագիտության համար և դուրս են մնացել հայկական մատենագիտությանը նվիրված տպագիր աշխատություններից ու ցանկերից: Տե՛ս Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան նոր կեանքի» (Վենետիկ, 1909—12 թթ., հասցված է մինչև «ն» տառը), Գ. Զարպհանալյանի «Հայկական մատենագիտութիւն» (Վենետիկ, 1883 թ.) Թեոդիկի «Տիպ ու տառ» (Կ. Պոլիս, 1912 թ.), Գ. Լեոնյանի «Հայ զիրքը և տպագրության արվեստը» (Երևան, 1946 թ.):

Հայ մատենագիտության ամբողջական ցուցակ կազմելու գործին նպաստելու մտադրությամբ ստորև նկարագրում ենք Պետ. Մատենադարանի հայերեն հնատիպ զրքերի հավաքածուից մեզ հայտնի դարձած այն զրքերը, որոնք, ինչպես ասացինք, մինչև այժմ չեն նկարագրված մատենագիտական աշխա-

տուժյուններում: Նկարագրվող գրքերից մի քանիսը ունեն կարևոր նշանակու-
թյուն հայ տպարանների պատմության հետ կապված սովերտոս որոշ հարցեր
լուսարանելու տեսակետից: Այդ հարցերին թուուցիկ անդրադառնում ենք ծա-
նոթագրությունների մեջ:

1. ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ ՈՐ ՊԱՐՈՒ/ՆԱԿԷ ՅԻՆՔԵԱՆ ԶԱՅՍՈՍԻԿ/: Նախ
զկարգաւորութիւնս հասարակաց աղօթից Հա/յաստանեայց եկեղեցւոյ: Երկրորդ՝
զգիրս Սաղ/մոսաց Դաւթի մարգարէին: Երրորդ՝ զգիրս զՅուցակս Թո/նից Տէ-
րունականաց և ամենայն սրբոց ըստ պատշաճի աւուր /և Զորրորդ ըզհամառօտ
խրատս արարողութեանց ժամա/տեղեաց: Առ բնթերցօղսդ: /Վասն յամենայն
տեղիս/ ուր և գտանիցի եկեղեցի մերաղ/նեայց յոյժ ունելոյ ըզ/ հարկաւորութիւն
մատենիս այսորիկ տպուինեայ յօգնութիւն /յարախնամ արարչին, սկսաք/
ձեռնարկել ի տպումն սորին ի պայծառութիւն նորոյ/ Սիօնի և ի զսարճութիւն
եկեղեցական մանկանց. իսկ և ամե/նայն ի փառս մեծին աստուծոյ՝ Ուատի և
ձեր ընկալեալ /բարեսէր կամօք զհոգևոր զանձս զայս փառս վերընծա /եսչիք
ահաւոր աէրութեան ամենասուրբ երրորդութեան /որ է օրհնեալ յաւիտեանս
Ամէն/: Որ և բարեխօսութեամբ և աղօթիք սրբուհոյ աստուածածնին /և միշտ
կուսին Մարիամու և մաղթանօք և միջնորդութեամբ/ սրբոյն Սարգսի Զօրավա-
րին ևւ որդւոյն նորա Մար /տիրոսին ի հայրապետութեան ամենայն հայոց տե-
սան Արրահամու/ սրբազան կաթուղիկոսի: Եւ ի պատրիարքութեան սրբոյն
/Երուսաղէմի տեսան Գրիգորի բարերջանիկ եպիսկոպոսի/: Ի Կոստանդնուպօ-
լիս քաղաքի: Հրամանաւ նորին դի /տողի տեսան Յօհաննիսի արհիեպիսկո-
պոսի ի Բրւարե/րութեան հայոց. ՌՃՁԳ (1734) ի յամսեանն յունվարի ԻԳ:

64, ԿԵ—ՄԽԷ, ՃՁՁ, ՄԻԲ (=665) երկայուն էջեր: Դրոշմազարդ կաշե-
պատ տախտակե կազմ. կազմի տակ տպագրված գրքի թերթեր: Որպես պահ-
պանակ—մի կողմից՝ տպագիր գրքի թերթ: Վիճակ—բավարար: 27×17×5 սմ
չափի: Փորագրություններ 6, ՃԽԸ, ՃԿ, ՃՁԴ, ՄԴ, Ա,Գ էջերին: Ճակատա-
զարդեր յուրաքանչյուր հատվածի սկզբին: Բազմաթիվ զարդագրեր: Հիշա-
բառ չի գրված 5, 11, 13, 16, 31, ԿԵ, ԿԶ, Հ, ԶԱ, ՃԻԳ էջերին: Շարվածքի
չափը՝ 18×13 սմ:

Հրատարակություն — ժամանակագրական կարգով պետք է հաշվել
4-րդը:

Բովանդակություն. տրված է տիտղ. թերթի վրա:

Տպագրության պատմությունը. Տիտղոսաթերթի վրայի հիշատակարանից
իսկ իմացվում է, որ այդ ժամանակները ժամագրքի մեծ պահանջ է զգացվել
հայ եկեղեցիներում, որի համար Ղափանի Խոտանան գյուղի բնակիչ Հով-
հաննիսի որդի պ. մահտեսի Թումանը ցանկություն է հայտնել տպագրել գիր-
քը իր ծախքով «...ի վայելումն եկեղեցական մանկանց և ի փառս յիսուսի
քրիստոսի»... Ապա հիշատակարանում տաված է. «...Արդ որք բնթերցչիք զսա
հոգևոր բաղձանօք յիշեսչիք ի մարուր մաղթանս ձեր զվերոգրեցեալ բարե-
պաշտօն պատճառսն սորին ի աէր այսինքն մահտեսի Յօհաննչանն և զձեհան-
պաղան և զպարօն Կոստանտն և զպարօն Մովսէսն: ...Եւ յետոյ քան զամե-
նայն յիշեսչիք և զմատակարար տպման սորին զհող ոտից ձերոց և ծառայ
ամենեցուն զբազմամեղ տրուպ Արրահամ և զձնօղսն իմ: ...Այլ և յիշեսչիք

¹ Նոր տողերը ցույց ենք տալիս ուղղահայաց գծիկներով:

զաշխատաւորսն գործարանիս զշարող զազարարացն Ստեփաննոսի որդի տիրացու Յօհաննէսն և զցրողսն զազարարաց մահահաի Խաչերի որդի տիրացու Սարգիսն...» (Մատենագարան, հնատիպ գրքերի հավաքածու, № 1229):

2. ԳԵՐՔ /Աղօթից սրբոյն/ ԳԵՒԳՈՐԻ ՆԱՔՆ/կացույ Հոգեկիր/ Հահարի: /Տպեցեալ ի հայրապետութեան/ Սրբոյն էջմիածնի՝ Թէրրտաղ /ցի Տեառն Արքահամու Սրբազան/ Կաթողիկոսի: Եւ ի Պատրիար /դուքեան Սրբոյն Երուսաղէմի՝ /Տեառն Գրիգորի Մաքրազան/ Վեհի: Եւ յԱռաջնորդութեան /Պօլսոյս Կոստանդնու՝ Տեառն/ Յօհաննէսի Մեծի Աստուածաբան վարդապետի/ Թին Հայոց ՌՃՁԵ (1736) մայիսի ԺԸ:

ՇԿէ զարդափակ երկսյուն էջեր. կաշեպատ տախտակե կազմ. կազմի տակ սպիտակ թուղթ. երկու կողմից գրքի թղթից երկուական թերթ պահպանակ: Վիճակը՝ բավարար: 21×15,5×3,5 սմ չափի: Բ էջին Գրիգոր Լուսավորչի և Յեթ էջին Յիսուսի խաչելութեան-փորագրութիւնները: Ծակատազարդեր Գ, ՅեԳ, ՆՇԲ էջերին: Բազմաթիվ զարդագրեր: Շարագարդեր: Վերջազարդ «Ե» էջին: Հիշարատ շկա Ե, ԺԳ էջերին: Շարվածքի չափը 18×12 սմ:

Հրատարակւորչուն—ժամանակագրական կարգով պետք է հաշվել 4-րդը: Բովանդակւորչուն. Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի: Յիշատակարան Մատենիս գրութեան: Վարք և կրօնք սուրբ հօրս մերոյ Գրիգորի Նարեկացոյն: Լուծմունք և բացայայտութիւնք հոգելից բանից լուսափայլ սրբոյ մատենիս: Գրիգոր Տաթևացոյ բանս գովութեան ի վերայ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ: Հատվածներ շորս ավետարանիչներից: Յանկ գլխոյ Նարեկիս: Յիշատակարան սրբոց մատենիս տպեցման:

Ստորե բերում ենք հիշատակարանից համապատասխան հատվածներ, որոնք վերաբերում են գրքի տպագրութեան պատմութեանը: «...Տպեցաւ սուրբ գիրքս աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ՝ ...որ և էհաս ի կատարումն տպեցման ի Թին հայոց ՌՃՁԳ (1737) յունվարի ԻԲ: ...Յիշեսչիք վանցի տէր Ովասափի որդի Ասվատուրն, յուով օգտութիւն արար ընչիւք և այլ բանիւք: Յիշեսչիք իմ սիրելի եղբայր զարբին Օհանն որ ի պակասել գործարանէն երկաթեղէն իրքմի նա վաղէար առ նա և նա անարանջուք ոչ ձգեր յետն, այլ շուտով կատարէր թէ մի մնասցէ գործարանն դատարկ: ...Հուսկ յետոյ բան դամենեսին և զսրբագրող սրբոյ մատենիս... Ասլան, ...գրքակազմ Յարութիւն զպիրն յիշեսչիք ի տէրն... Յիշեսչիք աստանօր և զիս զմեղապարտ տպագրող գրքոյս թեքիրտաղցի Սարգիսի որդի Արքահամ ջընջին զպիրս... Յիշեսչիք և զշարող և ցրող զազարարացն...»¹:

Տիտղոսաթերթի, ինչպես նաև հիշատակարանների մեջ չի հիշված, թե որ քաղաքումն է տպագրվել գիրքը: Սակայն հայտնի է, որ թեքիրտաղցի Արքահամ զպրի (հետագայում կաթողիկոս) տպարանը գործել է Կոստանդնուպոլսում: (Պետ. Մատենագարանի հնատիպ գրքերի հավաքածու № 583):

¹ Այսպիսով, Թեքիրտաղցի Արքահամ Գպրի Տպարանը իր գործունեությունը կատանդնուպոլսում սկսել է 1734 թվականից և ոչ թե 1737 թվականից, ինչպես կարծել է Թեոդիկը (տե՛ս «Տիպ ու տառ», էջ 61): Այդ Տպարանի առաջին արդասիքը «Ժամագիրք աստենին» է տպագրված 1734 թվականին: Երկրորդը Գրիգոր Նարեկացու «Գիրք աղօթիցն» է տպագրված 1736 թվականին: Երրորդը՝ (Թեոդիկի կողմից առաջինը համարված) Մեսրոպ Երեցի «Պատմութիւն երջանիկ վարուց և մահուան Մեծին Ներսիսին» աշխատությունն է, տպագրված 1737 թվականին:



Նկ. 1. Խորհրդատեար սրբազան պատարագի, էջմիածին, 1788:

3. ԽՈՐՀՐԴԱՏԵՏԻ /ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ/: Ըստ Արարողութեան Սրբոյ Եկեղեցոյ Հայաստանեայց : /Տպագրեցեալ ի Քրիստոսահիմն և ի/ Լուսանկար Աթոռոջ Սրբոյ/ Էջմիածնի : /Հրամանաւ Տեղապարտ Սահակաւ Կաթողիկոսի ամենայն/ Հայոց : /Յամի մարդեղութեան փրկչին ՌՉԸ (1788): /Եւ ի թուականիս Հայոց ՌՄԼԷ:

Լե (35) երկայուն, զարդափակ էջեր. դրոշմազարդ կաշեպատ տախտակի կազմ. մեկ կողմից 1 թ. պահպանակ. վիճակը — հնացած, կեղտոտ, քայքայ-

ված, անհարթ — դեղնած թղթե թերթեր. 29×21,5×1,5 սմ չափի. տիպոգ. թ. շրջափակված խորանով, որի շրջանակի վրա Թագևոսի, Բարթողիմեոսի, Ս. Պարթևի, Ս. Մեսրոպի, տ. Գյուտի և Հոհան Մանգակունու նկարները. կիսախորան Ե. էջին, փորագրություն Գ. էջին, վերջադարդեր Գ, Ը, Լ, Դ էջերին. ունի լուսանցադարդեր, զարդագրեր: Շարվածքի չափը 23×16 սմ:



Նկ. 2. Բաղդասար դպիր, «Գիրք քերականության», Մաղրաս, 1791:

Հրատարակություն — 14-րդ:

Բովանդակություն. Խորհրդատևոր սրբազան պատարագի: Յիշատակարան:

Փորագրություն. «Զքանդակողն նոր գրոցս և ամենայն պարագայիցն՝ զվարպետ Յարութիւնն, և զտիրացու Խաչատուրն»:

Տպագրության պատմությունը. խորհրդատեսերը տպագրվել է Ղուկաս կաթողիկոսի հրամանով: Հիշատակարանի մեջ կարդում ենք. «...էսո զկատարումն նորոգ տպագրութեան սուրբ խորհրդատեսարիս... ի թուականիս մերում ՌՄԼԷ, և ի սեպտեմբերի վերջն ի... Աթոս սուրբ էջմիածին: ...յիշեսջիք զչուղայու երևանցի և ի Սուրաթ քաղաքի բնակեալ... պարոն Աւետիսն... վասն զի... Աւետիքի խնդրանօրն և արդեամբն տպագրեցաւ սուրբ մատեանս: ...Այլ և յիշեսջիք... և զգրաշար Մաղաքիայն, և... զայլ աշխատաւորս գործարանիս...» (Պետ. Մատենադարան, հնատիպ գրքերի հավաքածու, № 1306):

4. ԳԻՐՔ /ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ/ Շարագրեցեալ ի տիրացու Բաղդասար /զպէ կոստանդնուպօլսեցոյ: /Նւ ի նմանէ օրինակեցեալ ջանիւք և աշխատութեամբ Տէր Յարութիւն Շմաւոնի Շիրազցոյ: /Ի Հայրապետութեանն Տեառն /ՂՈՒԿԱՍՈՒ կաթողիկոսի/ ամենայն Հայոց որ ի Վաղարշապատ: /Նւ ի Յոռաչնորդութեան նոր Զուղայու/ Տեառն Յակոբայ Արք եպիսկոպոսին: /Նւ ի թագաւորութեան Յոգոստա/ փայլ Տեառն Երեւորդի ՀԵՐԱԿԱՍՉ ԱՐՔԱՅԻ ի Թիփլիս: /Յամի Մարգեղութեան Փրկչին մերոյ 1791: /Նւ ի թուականութեանն Հայոց 1240: /Նզև ի Հնդիկս ի Մայրաքաղաքն/ Մաղրաս: /Ի տպարանի Տէր Յարութիւն/ Շմաւոնեան Շիրազցոյ:

Տրագ. թերթ, 601, ՈԲ—ՈԺԹ (=619) էջեր. կաշեպատ տախտակե կազմ. առանց պահպանակի. կազմի առաջին կողք պոկված: Վիճակը բավարար. 14,5×10×4 սմ չափի: Փորագրություն տրագ. թ. հաշորդ էջին. ճակատագրող 306 էջին. նախագարդեր 1, 7, 13, 48, 110 էջերին. զարդագրեր: Շարվածքի չափը 10×6 սմ: Հիշարուեր շկան 2, 3, 4, 6, 301, 413, 420, 438 էջերին:

Հրատարակություն — 3-րդ:

Բովանդակություն. Գիրքը բաղկացած է երկու հատորից: Ա. հատորի տրագ. թ. «Պարզարանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց: Յոգագոս նոր եկելոց ի ուսումն գրոց պիտութեան...»: Հեղինակի նախարանը «Ուսումնասէր սիրելեաց իմոց յայտ լիցի» և «Ան մայրն իմ պանծալի սուրբ էջմիածին»: (7—304 էջ) Բ հատոր. տրագ. թ. «Հատոր երկրորդ քերականութեան. Կիրառութիւն մասանցն բանին: Որ է Շարամանումն ընդ իրեարս ըստ բերթողացն» (305—590): «Յոգագոս տաղից» (591—593): «Վերջարանութիւն զգրոյս առ բարեմիտ ընթերցողսդ» (594—600): «Յիշատակարան տպեցման»: «Յանկ և Յուցակ գլխաւոր բանից գրոյս»: (Յիշատակարան): (Վրիպակներ):

Տպագրութեան պատմությունը. Հարություն Շմավոնյանը գրքի տպագրութեան մասին հիշատակարանում գրում է. «...զգիրն քերականութեան Բաղդասար զպրի վերստին տպելով աւարտ հասուցի: ...Ի պատիւ... իմաստասէր, երջանիկ, սէզ և բարեջան երիտասարդացն Հայոց ի Մաղրաս բնակողաց: ...Արդ ի վախճանի բանիս յիշել մաղթեմ... Եփրեմ արքեպիսկոպոսն... զոր վասն նուիրակութեան եկեալ էր ի Մաղրաս, և եղև յատկապէս յորդորող, յառաջացուցանելոյ տպեցման գրոյս... Այլ և յիշեսջիք պարոն Յարութիւն Կարապետեանն... վասն առատաձեռնութեան և օգնական լինելոյ ծախուցն գործարանիս, նաև զձեռնասուն աշակերան իմ... զվաստակակիցն համայն գործոց տպարանիս զեաշիկ Մատուր Զարիֆեանն... Այլ և զարեանասուն իմ զԿիրակոս Կարապետեանն Շիրազցին, քրտնաջան զաշխատաւորն գործարանիս և զկապարաշարն գրոյս: Նաև Յակոբն ցրուող կապարեաց տպարանիս... Հուսկ յետոյ և ինձ արարէք յիշման արժանի զի աղօթիւք ձերովք բարձցէ տէր զհիւանդութիւնս հոգւոյս անքմբերելի դառնութեան կազմողի տպարանիս՝

Յարութիւն Քահանայիս որդւոյ Շմաւոնի ի... քաղաքէն Շիրազույ.. .և այսու զհինգ զիրս յառաջ ածի. ողորմութեամբն աստուծոյ...»:

Բաղդասար դպրի քերականութեան գիրքը ունեցել է երեք հրատարակութիւն: Առաջինը լույս է տեսել Կոստանդնուպոլսում 1736 թվականին Աստվածատուրի տպարանում: Երկրորդը՝ դարձյալ Կոստանդնուպոլսում 1771 թվականին, Աստվածատուրի որդի Հովհաննես դպրի տպարանում: Երրորդը մեր նկարագրած գիրքն է¹:

5. ԳՐԲՈՅԿՍ /ԿՈՉԵՅՅԱԼ ԸՈՒՆՇՍԱԼ/: Յերկուց ճառից՝ Սրբոյն Յօհաննու Ոսկերերա/նին յԱնդրիանդրեայ գրքոյ՝ յերրորդ և ի շոր/րորդ ճառիցն ոտանաւորեալ ի Յակօբայ Պատ/րիարքէ Կոստանդինուպօլսոյ. ի շահ և յօգուտ /կատարելութեան կենաց ցանկացողաց: /Յամի տեառն 1746: /Տպագրեալ ի վեհափառ Հայրապետութեան Լուսացն /ցուղ և Քրիստոսակերտ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի՝ Տեառն /ՂՈՒԿԱՍՈՒ երիցս երանեալ Սրբազնասուրբ Կա/թողիկոսի ամենայն Հայոց: /Հրամանաւ՝ սրբոյ Աթոռոյն էջմիածնի Մայրազոյն նուիրա/կի՝ և Հիւսիսային կողմանս եղեալ ազգիս Հայոց՝ Առաքելաշա/ւիղ Առաջնորդի, Սանահնեցի երկայնարագուկ Արղութեանց՝ /Իշխանազնեայ Տեառն Յովսեփայ Պսակազարդեալ Սրբազան Արք /Եպիսկոպոսի, Հիմնադրի նոր նախիջևանու և Գրիգորուպօլսու /Քաղաքացն Հայոց: /Արղեամբք և Մախիւք, ի Հնդիկս՝ ի Սէյտապատ /բնակեալ, նոր Զուղայու Բերկրցի բարեացապարտ /Պարոն Նիկողայոսին: /Յամի Տեառն 1794, փետրվարի 1: /Ի տպարանի նորին բարձր Սրբազնութեան: /Ընդ հովանեաւ Երկնահանգէտ Սուրբ Խաչ /Վանիցն, որ ի նորն/ նախիջևան/:


72 գծափակ էջեր. գունավոր թղթի շապիկով: Երկու կողմից մեկական թերթից պահպանակներ: Վիճակը՝ բավարար: 19×12×1 շափի: 6 և 7 էջերի միջև միջադիր թերթ ուր փորագրված է Հոհան Ոսկերերանը զրուցելիս մի խումբ ունկնդիրների հետ: Նկարի տակ 6 տողանոց բանաստեղծություն: Նախագարդեր 7, 35, 37 էջերին: Վերջագարդ 36, 72 էջերին: Զարգագրեր հատվածների սկզբներին: Հիշարտերի փոխարեն օգտագործված են քառյակների համարները: Շարվածքի շափը 16×9 սմ:

Հրատարակություն—2-րդ:

Բովանդակություն. Յակոբ Նալչանի նախաբանը: Հովհ. Ոսկերերանի երրորդ և շորրորդ ճառերի շափածո շարադրանքը: «Առ քնթերցողսն՝ պատճառ խրատական տետրակիս: Ոտանաւորեալ ի Յակոբ... պատրիարքէ...»: «Յիշատակարան տպեցուցանողի տետրակիս»:

Տպագրութեան պատմությունը. Հակոբ Նալչանը իր նախաբանի մեջ գրքի տպագրության կարևորությունը պատճառաբանում է հետևյալ կերպ. «Տեսանելով իմ ի գրեանս Սրբոյն Յօհաննու Ոսկերերանի յանդրիանդրեայ գրքոջ զերրորդ, զշորրորդ ճառսն գոլ բարոյական խրատք կատարելութեան, առաւել համեղագոյն և անուշահոտ քան զառակացն Սօղոմօնի և Սիրաքայ, վասն

¹ Հարություն Շմափոնյանը Բաղդասար դպրի «Գիրք քերականութեան» աշխատության հիշատակարանի վերջում գրում է. «... այսու հինգ զիրս յառաջ ածի...»: Ուրեմն 1771 թ. լույս տեսած այս քերականությունը նրա տպարանում լույս տեսած գրքերից հինգերորդն է: Մինչդեռ Գ. Լեոնյանը իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» (Երեւան, 1946, էջ 160) աշխատության մեջ և Թեոդիկը իր «Տիպ ու տառ»-ում (էջ 173) Հարություն Շմափոնյանի տպարանում լույս տեսած գրքերից հինգերորդը սխալմամբ համարում են Ներսես Շնորհալու «Յիսուս որդի»-ն, ապագրված 1772 թվականին:



Նկ. 3. Գիրք աղօթից, Ն. Նախիջևան, 1794:

որոյ կամեցայ ըստ մտաց երանելոյն զայնոսիկ ժողովել ի միասին, և փունջ մի գեղեցիկ յօրինել շափեալ ոտիւք, և պարզեալ դիտաւորութեամբ, և տալ ի ձեռս ամենայն բարւոյն հեշտասիրաց և ողջախոհ մոլեաց...»։ (Պետ. Մատենադարան, Հնատիպ գրքերի հավաքածու, № 109):

6. ԳԻՐՔ /ԱՂՕԹԻՅ/ Սակս ըստ արժանաւորն հանդիսիւ Տօնեցելոցն ի մէջ՝ Տօնից /Թագաւորականաց: /Կարգաւորեալ և շարադրեալ ի Մեծէ Հոգելոյս Հայրապետէ՝ Տեառն Սիմէօնէ /Արքայնայնայնը Կաթողիկոսէ ամենայն Հայոց. Արքայ և մեծի Աթոսոյն Էջմիածնի: /Յամբ Տեառն 1771. Յուլիսի 10: /Իսկ արդիս տպեալ՝ հրամանաւ նարդենական փեսային՝ Արքայ Աստուա-

ծախշի Գահոյն էջմիածնի՝ Տեառն ՂՈՒԿԱՍՈՒՒ |Սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն Հայոց: |Համահաճութեամբ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի Մայրագոյն նուիրակի և Հիւսիսային կողմանս եղեալ |ազգիս Հայոց՝ Առաքելաշաւիղ Առաջնորդի Սանահնեցոյ Երկայնարազուկ Արղութեանց՝ |Իշխանազնեայ Տեառն Յովսէփայ Պատկազգեաց Սրբազան Արք |Եպիսկոպոսի, և հիմնադրի նոր |նախիջկանու և Գրիգորուպօլու Քաղաքացն Հայոց: |Յամի Տեառն 1794. սեպտեմբերի 6: |Ի տպարանի նորին Բարձր Սրբազնութեան. Որոյ և արդեամբ տպեցաւ: |Ընդ հովանեաւ երկնահանգէտ Սուրբ Խաչ Վանիցն, որ ի նորն ՆԱԽԻՋԵՒԱՆ/:

13 զարդափակ երկայուն էջեր սովարաթղթի կազմով, 3 թերթ պահպանակ, վիճակը բավարար, $29 \times 20,5 \times 0,3$ չափի, կապտավուն թուղթ. ճակատազարդ 3 և 5-րդ էջերին, վերջազարդ 4-րդ էջին: Զարդագրերը՝ հատվածների սկզբներին: Շարվածքի չափը 24×18 սմ:

Հրատարակուրյուն — առաջին:

Բովանդակուրյուն. Յառաջարանութիւն հեղինակին. Յատկապէս երգեցմունք, գիրք, և Աւետարան, և աղօթք, յաւուր Տօնախմբութեան կենդանի թագաւորի, որ կատարի յետ աւարտումն գիշերային ժամուն կամ զկնի պատարագին:

Տպագրուրյան պատմուրյունը. Սիմեոն կաթողիկոս Երևանցին գրել է այս մաղթանքը, որպէս երախտագիտութեան արտահայտութիւն Եկատերինա Բ կայսրուհու 1768 թ. հրովարտակի առթիւ: Մաղթանքը պետք է կարդացվեր հայկական եկեղեցիներում, ուսական կայսերական տան հանդիսադրութեան տոնի օրը: Իր նախարանի մեջ Սիմեոն կաթողիկոսը գրում է. «...Արդ որովհետև այսքան գերազանց բարերարութեան ոչ ինչ կարէաք հատուցանել զփոխարէնն, վասն որոյ զայս քան բանս շարագրեցաք վասն մեծապայծառ Տօնախմբութեան նորին...»:

Հեղինակի ցանկութեամբ Ասլանյան Ստեփաննոս անունով մեկը 1775 թ. այս «Գիրք աղօթից»-ը թարգմանել է ուսերեն: Այդ թարգմանութիւնը Հովսէփ Արղութեանը 1780 թվականին մատուցել է Եկատերինա կայսրուհուն (Պետ. Մատենադարան, Հնատիպ գրքերի հավաքածու, № 559):

7. ԳԻՐԲ |Անուանեալ Ղեկաւար Մանկանց որ հասուցանէ ի դրունս կենաց Յաւիտենական: |Արարեալ իմաստասիրաց Երրայեցոց. | և ժողովեալ Տեսուայ որդոյ Սիրաքայ |ի Յանուն էկղէսիաստիկոս: |Եւ այժմ ի նոյն օրինակէ տպեցեալ ի ինդրոյ |և ծախիւրն, Պատուելի Շահմիրի որդոյ |Սուլթանումի ի պատիւ Արփիափայլ ԳԻ |ՕՐԳԻ ժառանգ որդոյ թագաւորութեան վրաց Բագրատունոյ: |Ի Հայրապետութեան Տեառն ՂՈՒԿԱՍՈՒՒ |Ամենայն Հայոց Սրբազան Կաթողիկոսին ի Վաղարշապատ: |Եւ ի Թագաւորութեանն Օգոստոսափայլ Տեառն |Երկրորդի ՀԵՐԱԿԼԱՅ Բագրատունոյ| ի Թիֆլիս: |Յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1797: |Եւ Թուիս թուականութեան Հայոց ՌԲՃԵԷ: |Ի Հնդկիս և ի Մայրաքաղաքն Մաղրաս: |Ի տպարանի Տէր Յարութիւն Շմալօնեան Շիրազեցոյ: |Ի սմանէ տպեցաւ հատ 300:

Տիտղ. թ. 4 էջ առանց էջագր. 285 էջ. կաշիպատ տախտակե կազմ, երկուական թ. սպիտակ թղթից պահպանակ. վիճակը բավարար, $15 \times 9 \times 1,5$ չափի: Փորագրութիւն 4-րդ (առանց էջագր.) էջի վրա: Ճակատազարդ 1-ին էջի վրա. ունի վերջազարդեր. զարդագրեր: Հիշարանը շկա 218, 254, 284 էջերին: Շարվածքի չափը՝ $10,5 \times 6,5$ սմ:

Հրատարակություն—Առաջին:

Բովանդակություն. Հարություն Շմավոնյանի նախաբանը. «Առ բարեմիտ ընթերցողս». «Էկլէսիաստիկոս»: Աղօթքներ: «Վերջաբանութիւն գրքոյս առ սիրելի մանկունան Հայոց»: Համառոտ հիշատակարան:

Տպագրութեան պատմությունը. Հարություն Շմավոնյանը իր նախաբանի մեջ գրքի տպագրութեան մասին գրում է. «...Քանզի այս գիրքս լի է ամենայն խմաստութեամբ և հանճարով, որ բանայ զայս մտաց... և լուսաւորէ զօրութիւն հոգւոյն... հարկաւոր համարեցի զայս էկլէսիաստիկ անուանեալ գրուածքն տպագրել... քստ համեմատութեան միևնույն օրինակին որպէս է տպագրեցեալ ի յԱստուածաշունչ գիրն. և յօրինել զնա յատուկ գրքոյկ՝ որ յաշողակ լինիցի մանկանց ունիլ ընդ իւրեանց...»:

Ինչպէս նշված է տիտղ. Թ. վրա. տպագրվել է 300 օրինակ: (Պետ. Մատենադարան, Հնատիպ գրքերի հավաքածու, № 675):

Տ. ՍԱՂՄՈՍ |Դաւթի: Որ և կոչի |ՍԱՂՄՈՍԱՐԱՆ |տպագրեցեալ ի Մեծի Աթոռոջ Սրբոյ էջմի/ածնի հրամանաւ Տեառն |Նփրեմի Սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց ի թուոջ մերում, ՌՄԿԸ (1819): ի տպարանի սուրբ Կուսաւորչին:

417 զարդափակ էջեր. կաշեպատ, դրոշմազարդ տախտակե կազմ. կազմի տակը գունավոր ծաղկազարդ թուղթ. պահպանակ—3 թ. սպիտակ թուղթ երկու կողմից. վիճակը—բավարար. 18,5×10,5×3,5 չափի: Տիտղ. թերթը շրջափակված խորանով. փորագրություն 2, 44, 90, 140, 184, 236, 280, 326 էջերին. ճակատազարդ. 3, 91, 141, 185, 237, 281, 327 էջերին. զարդագրեր. վերջազարդեր. լուսանցազարդեր. շարվածազարդեր: Հիշարտոք չկա 12, 30, 193, 324, 339 էջերին: Շարվածքի չափը 12×7 սմ:

Հրատարակություն—Փոքրագիր սաղմոսարանների մեջ ժամանակագրական կարգով պետք է լինի 12-րդը:

Բովանդակություն. Սաղմոսարան. Աղօթք Մանասէի թագաւորի. Գրիգոր Նարեկացի, Մաղթանք զօրաւորք ընդդէմ արհաւիրաց գիշերայնոց. Ներսէս Շնորհալի, Աղօթք իւրաքանչիւր անձին... Տօմարական աղիւսակք: Յիշատակարան:

Տպագրութեան պատմությունը. Սաղմոսարանի տպագրութեան մասին «Յիշատակարան»-ի մեջ կարդում ենք. «...Տպագրեալ աւարտեցաւ սուրբ Գիրքս Սաղմոսաց ի ՌՄԿԹ թուականութեան մերում և յամսեանս մայիսի, ի լուսակառոյց... կաթողիկէն էջմիածին... չիշնաչիք զՔանձակու գետաշէնցի Սարգիս Քէոյլսայեան... Յարութիւնի որդի Բարիլօն բնակեալ օրհնեալ պարոն Յակոբն... և այլ ազգականօք... Յակոբն մինչ եկեալ ի սուրբ գահս՝ ետես զձեռնարկութիւնս մեր ի նորոգութիւն տպարանիս, խնդրեաց յատկապէս՝ նախ զսաղմոսարանս զայս տպագրել արդարավաստակ արդեամբն իւրով ի չիշատակ ինքեան և համայն իւրայնոցն: ...Արժանի համարեսչիք չիշման... զսրբագրիչ Գրիգոր վարդապետն... նաև... պատուելի վարպետ Մարտիրոսն... գրաշար Գրիգորն... զմեկանահար Պետրոսն... զտպիչ տիրացու Յակոբն...» (Պետ. Մատենադարան, Հայերեն գրքերի հավաքածու, № 22136):

¹ Դուկաս կաթողիկոսի քրքր 1793 թ. լույս տեսած «Տաղարան փոքրիկ»-ից հետո էջմիածնի Գրիգոր Կուսաւորչի անվան տպարանը երկար ժամանակ զաղարել է գործելուց: Ըստ Թեոդիկի այդ զաղարը տեւել է մինչև 1842 թ., երբ լույս տեսավ Հ. Շահա-

9. ԳԻՐՔ / ՀԱՆԴԻՍԱԴՐՈՒԹԵԱՆՅ ՏՕՆԻՑ / ԿԱՅՍԵՐԱԿԱՆԱՅ, / Շարակարգեալ ի Սիմէօն կաթուղիկոսէ ամենայն հայոց Երևանցոյ՝ / յաւելուածովք նորահիւ շարականաց և աղօթից: / Յամի Տեառն 1771. յուլիսի 10/: Տպեալ Երրորդ անգամ: / Ի հայրապետութեան Տեառն Յովհաննու Սրբազնագոյն Կաթուղիկոսի / ամենայն հայոց: / Յամի Տեառն 1833. հոկտեմբերի 9: / Ի տպարանի սրբոյ կաթուղիկէ ԷՁՄԻԱՄՆԻ:

21 երկայուն, զարգափակ էջեր: Նորակազմ, սկզբից 2 թերթ սպիտակ հասարակ թուղթ. թերթերը կեղտոտած, հնացած. 33,5×21×0,5 շափի. ճակատազարդ 3-րդ էջին. վերջազարդեր 2, 4, 8 էջերին. շարվածքի շափը 23×16 սմ:

Հրատարակություն — 3-րդ¹:

Բովանդակություն. Յառաջարանութիւն հեղինակին: Շարական (Դ2), բնթերցուածս Առակաց: Ընթերցուածս յեսայեայ մարգարէէ. Պետրոսի, Պօղոսի առաքելոյն: Յուցակ թագաւորական Տօնից:

Տպագրության պատմությունը. Այս գրքի առաջին տպագրությունը լույս է տեսել «Գիրք աղօթից սակս ըստ արժանւոյն հանդիսին Տօնեցելոցն ի մէնջ՝ Տօնից թագաւորականաց»... վերնագրով: Երրորդ հրատարակութեամբ լույս է տեսնում «յաւելուածովք նորահիւ շարականաց և աղօթից» և փոփոխված վերնագրով: (Պետ. Մատենադարան, Հայերեն գրքերի հավաքածու, № 25365):

10. ՉԱՅՆԱՔԱՂ / ՇԱՐԱԿԱՆ / Յորում բովանդակին հոգնեալ պաշտօնը- / դութիւնք սուր եկեղեցոյ Հայաստանեայց / Ի փառարանութիւն Աստուծոյ և ի մեծարանս / սրբոց նորա: / Կարգաւորեալ ըստ պատշաճի իւրաքանչիւր աւուր հանդերձ խորհրդաւոր քաղո/ւածովք ի դիւրութիւն կրօնցողաց: / Ի Հայրապե-

թունյանի «Մտորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի» երկհատոր գիրքը («Տիպ ու տառ», էջ 177), ըստ Գ. Լեօնյանի՝ մինչև 1838 թ., կըր լույս տեսով «Հարիւր և չորս պատմութիւն հաւաքեալ ի Հին և Նոր կաակարանաց...» գիրքը («Հայ գիրքը և տպագր. արվեստը», Երևան, 1946, էջ 218):

1819 թվականին Էջմիածնում տպագրված Մաղժոսարանի հայտարարումով նոր ու արժեքավոր տվյալներ ենք ստանում քաղմարդյուն այդ տպարանի պատմության մասին: Այդ գրքի հիշատակարանում կարգում ենք. «Արդ որք յանդիման լինիք սովաւ Ասաջի Աստուծոյ՝ մի ձանձրասջիք յիշել զվերանորոգոցն տպարանիս զՏէր Եփրեմ յօգնավիշտ Սրբազան վեհապետն, որ ի նեղութեանս ժամանակի դերագոյն քան զսասջինն պայծառացոյց և զրեթէ ի հիմանէ նորոգեաց զտպարանն սրբոյ գահիս, ի լոյս մանկանց նորոյ Սիօնի՝ զխանդարեալն ի բազում ամաց հետէ» (էջ 415):

Էջմիածնի տպարանը սրոջ գաղարից հետո նորից գործի է գրվում Հովհաննես Կարբեցի կաթուղիկոսի օրոք: 1833 թվականին այստեղ լույս են տեսնում «Չայնաքաղ շարականը» և Սիմեոն Երևանցու «Գիրք հանդիսագրութեան» 3-րդ հրատարակությունը:

¹ Պետ. Մատենադարանի հայերեն գրքերի հավաքածուի № 14312-ի տակ պահվում է այս նույն գրքի մի այլ հրատարակության թերթի օրինակը: Նրա շաղիկի վրայի վերնագիրը ճիշտ նույն ձևով է, ինչ որ այս հրատարակության: Սկզբում է 9-րդ էջից: Գրքի մեջ չեն պահպանվել տվյալներ հրատարակության վայրի ու տարեթվի մասին: Սակայն արտաքին ձևավորումից և, մասնավորապես, շաղիկից կարելի է եզրակացնել, որ այն ևս ստված է Էջմիածնում: Ետո հավանական է, որ սա այդ գրքի երկրորդ հրատարակությունն է:

Այսպիսով, «Գիրք հանդիսագրութեանց տօնից կայսերականաց» գիրքը (եթե հաշվելու լինենք նաև թերթի օրինակը) ունեցել է, ըստ մեր տվյալների, ինը հրատարակություն, որից առաջինը Նոր-Նախիջևանինն է, տպագրված 1784 թվականին, իսկ մնացած ութը՝ (երկրորդ տպ. թվականն անհայտ), 1833, 1859, 1879, 1833, 1884, 1894, 1910 թթ. հրատարակությունները տպագրվել են Էջմիածնում:

տուֆեան Արարատեան մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ էջմիածնի: Տեառն և Տեառն 8 Յովհաննու Կարբեցոյ Աստուածընտիր Կաթուղիկոսի ամենայն Հայոց, և Ասպետի սրբոյն Աղէքսանդրի Նեվաջոյ՝ ՌՐՈՅ Նրամանան իսկ Տպագրեալ Ծախիւք Կարբեցի տէր Մարուքեանց Ասպետ Յովսէփ եպիսկոպոսի փեսային Սահակայ, և քեռն Եղիսարեթի հանգուցելոց, և մօրն Հոփսիմէի: Ի սուրբ Կաթուղիկէն ԷՋՄԻԱԾԻՆ. Յամի Տեառն 1833, և Հայոց ՌՄՁԲ:

562 երկսյուն, զարդափակ էջեր. կաշեպատ ստվարաթղթե կազմ. երկու կողմից մեկական թերթ թղթե պահպանակ. վիճակը—բավարար: 32,5×22,5×4,5 չափի: Փորագրութիւն 6-րդ էջին. ճակատազարդ 7, 230, 316, 367, 382, 396 էջերին: Ունի վերջազարդեր, նախազարդեր, զարդադրեր, շարազարդեր: Մի քանի տեսակի թուղթ: Շարվածքի չափը՝ 23×16,5 սմ:

Հրատարակութիւն—«Չայնաքաղ շարականների» մասին եղած մատենագիտական տվյալներից կշնկով 5-րդը պետք է լինի:

Բովանդակութիւն. Չայնաքաղ շարական: Յանկ քաղուածու շարականիս: Յիշատակարան տպագրողի:

Տպագրութեան պատմութիւնը. Շարականի տպագրութեան մասին «Յիշատակարան»-ի մեջ կարդում ենք. «...Յաւարտ եհաս տպագրութիւն երածշտական... Շարակնոցի՝ ընդ հովանեա... մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ էջմիածնի յամի տեառն 1835 և հայոց ՌՄՁԲ... Յիշեսջիք զնուիրողն ծախուց տպագրութեանս. զկարբեցի... Սահակն...: Ընդ որս յիշեսջիք զվերակացու և զսրբազրիչն տպարանիս զՅովհաննէս վարդապետան էջմիածնեցի...: Յիշեսջիք և զաշխատաւորսն տպարանիս Գէորգն Արարատեան և զՎլասիոսն Յակոբեան, զգրաշար Յովհաննէսն Տէր-Մկրտչեան և զԳրիգորն Ժամհարեան, զմրազարկ Կարապետն Գրիգորեան. և զտպիչ Աւետիսն Յօհաննիսեան և զՅանն Բալասանեան...»: (Պետ. Մատենադարան, Հայերեն գրքերի հավաքածու, № 8684):



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ ո դ վ ա ծ Ե Ե ր

Էջ

Լ. Խ ա շ ի կ յ ա ն — Մատենագարանը անցյալում և Սովետական իշխանության տարիներին	7
Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն — Հայկական առածների հնագույն գրավոր սկզբնաղբյուրները	25
Ի. Ա թ ու լ ա ձ և — 10-րդ դարի վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակագրութունները և նրանց նշանակութունը հայ բարբառագիտության համար	35
Ս. Բ ա թ խ ու դ ա թ յ ա ն — Վերջինների ավետարանի գրչության վայրը	43
Գ. Ա թ գ ա թ յ ա ն — Բանասիրական հետախուզումներ (1. Գիտագրություններ Սերեոսի պատմության մասին, 2. «Պատմագիրք հայոց»-ի հեղինակը Վարդան Բաղրշեցին չէ, 3. Է. դարում Զարեոս պատմիչ չի եղել)	61
Կ. Յ ու դ թ ա շ յ ա ն — Արիտակես Լաստիվերոսու «Պատմության» մեկ տարբերակը և «Վանդա» և ոչ «Վանդա»	77
Ն. Ա դ ա թ յ ա ն — 1173 թվականին ընդօրինակված Նարեկը և Սկևռայի մանրանկարչական գաղտնիքը	83
Բ. Զ ու դ ա ս ղ յ ա ն — Յրիկը պարսիկերեն քառյակի թարգմանիչ	111
Ս. Ա թ և շ ա տ յ ա ն — Տաթևի փլիխստիայական գաղտնիքը և Գրիգոր Տաթևացու աշխարհայցքը	121
Աս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն — 18-րդ դարում գրված հայ-ուսական գաղնաղբյուրները և նախագծերի գնահատման հարցի շուրջը	139

Հ ա դ ո թ դ ու լ լ Ե Ե ր

Ս. Ք ո լ ա ն ջ յ ա ն — Մովսես Խորենացու նորահայտ երկաթագիր պատասխին ու Գանիկյան նշանագրերի օգտագործման ժամանակի հարցը	163
Բ. Ա ա ջ և լ յ ա ն — Կազմերի զարգարման արվեստը միջնադարյան Հայաստանում	183
Ա. Կ ծ ո յ ա ն — Վերջինների մեծագույն մարդոյս և նորին դանազան կրից և պատճառանոց հիւանդութեան՝ ձեռագիր բժշկարանի մասին	205
Ն. Փ ա փ ա ղ յ ա ն — Մատենագարանի պարսիկերեն ձեռագրերի պատմագրական արժեքը	221
Ս. Դ ա վ թ յ ա ն — Մատենագարանի № 6774 ձեռագրի ասեղնագործ շաղիկը	237
Ա. Մ ա թ ա ի թ ո ս յ ա ն — Մարտիրոս Ղրիմեցու մի շափածո անեծքի մասին	241
Ի. Ա թ թ ա հ ա մ յ ա ն — Երկու նոր վավերագիր Մ. Նալբանդյանի Հնդկաստանում կատարած աշխատանքի մասին	247
Ա. Ա դ ա մ յ ա ն — Նոր նյութեր Պերճ Գոռյանի մասին	251

Բնագրեր և քարգմանություններ

Լ. Խ ա շ ի կ յ ա ն — Կաստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, առաջված Արևելյան Հայաստան, 1251 թվականին	267
Ն. Բ ա թ ի կ յ ա ն — Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերութունների մասին	285
Ս. Ա թ և շ ա տ յ ա ն — Հովհաննես Երզնկացու իմաստասիրական անհայտ աշխատութունը	297
Ի. Ա թ թ ա հ ա մ յ ա ն — Հնդկաստանի ուղեցույց, կազմված XII դարում հայ հեղինակի կողմից (հայերեն բնագիրը և սուսերեն թարգմանութունը)	317
Անսխիզ Սնախոքայ (ուսու. թարգմ. Ա. Պապովյանի)	329

Մ ա տ և Ե ա գ ի տ ու լ լ Ե Ե ր

Լ. Մ Ե լ ի թ ս Ե թ-թ և Է — Յուցակ հայերեն ձեռագրաց վրաստանի կենտրոնական պատմական արխիվի	377
Շ. Շ ա հ ն ա գ ա թ յ ա ն — Մատենագիտական նորություններ	425

О Г Л А В Л Е Н И Е

<i>Статьи</i>	Стр.
Л. Х а ч и к я н—Матенадаран в прошлом и в годы Советской власти	7
А. Г а н а л а н я н—Древнейшие письменные источники армянских пословиц	25
И. А б у л а д з е—Армянские приписки грузинской рукописи X века и их значение для армянской диалектологии	33
С. Б а р х у д а р я н—Где было переписано Эчмиадзинское евангелие	43
Г. А б г а р я н—Филологические изыскания (1. Заметки об „Истории“ Себеоса. 2. Автор „Армянской историографии“—не Вардан Багишеци. 3. В VII века не было историка Закхея)	61
К. Ю з б а ш я н—Об одном разночтении „Повествования“ Аристакееса Ластивертци—враги, а не франки	77
Л. А з а р я н—Рукопись „Нарека“ от 1173 г. и Скеврская школа миниатюры	83
Б. Ч у к а с з я н—Фрик—переводчик персидского четверостишья	111
С. А р е в ш а т я н—Татевская философская школа и мировоззрение Григора Татеваци	121
Ас. М и а ц а к а н я н—К оценке двух проектов армяно-русского договора XVIII в.	139
 <i>Сообщения</i> 	
С. К о л а н д ж я н—Неизвестный унциальный фрагмент „Армянской истории“ Мовсеса Хоренаци и длительность использования Данииловых писем	163
Б. А р а к е л я н—Переплетное искусство в средневековой Армении	183
А. К ц о я н—Рукописный учебник „Исследование о естестве человека, об испытываемых им воздействиях и о причинах его болезней“	205
А. П а п а з я н—Историографические сочинения среди персидских рукописей Матенадарана	221
С. Д а в т я н—Серебряное шитье чехла рукописи № 6774	237
А. М а р т и р о с я н—Стихотворное проклятие Мартироса Кримеци	241
Р. А б р а м я н—Два новых документа о деятельности М. Налбандяна в Индии	247
А. А д а м я н—Новые материалы о П. Прошяне	251
 <i>Тексты и переводы</i> 	
Л. Х а ч и к я н—Назидательное послание Костандина Бардзрбердци, отправленное в Восточную Армению в 1251 г.	267
Г. Б а р т и к я н—Новые материалы о взаимоотношениях между Киликийским армянским государством и Византией	285
С. А р е в ш а т я н—Неизвестное философское сочинение Иоаннеса Ерзынкаци	297
Р. А б р а м я н—Армянский путеводитель по Индии XII века (армянский текст и русск. пер.)	317
„Ассизы Антиохийские (русск. пер. А. Паповяна)	329
 <i>Библиология</i> 	
Л. М е л и к с е т - Б е к—Описание армянских рукописей Центрального исторического архива Грузии	377
Ш. Ш а х н а з а р я н—Библиологические заметки	425